

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
ԳԻՐՔ 1**

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԳ- 338(479.25):06
ԳՄԳ- 65.9(2Հ)30-1
Ս 783

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
տնտեսագիտության թեկնածու
տնտեսագիտության թեկնածու

**Յուրի Սուվարյան
Վարդան Բոստանջյան
Բենիամին Եղիազարյան
Ռոբերտ Մարինյան
Վիլեն Խաչատրյան
Ալվարդ Չատիկյան
Հայկ Մարկոսյան**

**Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**

ՎԱԿԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս 783

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի
նյութեր). գիրք 1 / Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012. 284 էջ:

Ժողովածուում ընդգրկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտում անցկացված «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապետական գիտաժողովի
մասնակիցների զեկուցումներն ու հոդվածները:

ՀՏԳ- 338(479.25):06
ԳՄԳ- 65.9(2Հ)30-1

ISBN 978-5-8080-0944-8

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2012

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Ա. ԱՍԼԱՆՅԱՆ	Բարձրագույն կրթության կազմակերպման և ֆինանսավորման համաշխարհային փորձը և զարգացման միտումները	6
Լ. ԱՎԴԱԼՅԱՆ	Վերագգային բանկերի զարգացման հիմնախնդիրները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում	9
Լ. ԱՎԴԱԼՅԱՆ	«Բազել-1», «Բազել-2» և «Բազել-3» համաձայնագրերը համառոտ վերլուծության արդյունքների հարցի շուրջ	12
Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	Հարկային բարեփոխումների իրականացման ռազմավարական ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում	16
Ք. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	Միջազգային ֆինանսական շուկան որպես միջազգային բիզնես միջավայրի գործոն	23
Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	Բյուջետային գործընթացի ծրագրային ապահովվածության առանձնահատկությունները	26
Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	Ծրագրային բյուջետավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում	29
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ	Աշխարհի ամենապարզ և ամենաբարդ հարկային համակարգերը ըստ «Հարկերի վճարում 2012» զեկույցի արդյունքների	32
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ	Հարկային քաղաքականություն: ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության ծրագիրը	38
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ	Հարկային վարչարարության սկզբունքները	44
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ	Հարկային ծառայության կազմակերպման և հարկային ծառայողների նյութական խթանման դերը հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման գործում	48
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Կ. ՍԱՐԳՍՅԱՆ	Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառները և դրա ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա	52
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Հարկային համակարգի զարգացման առանձնահատկությունների հարցի շուրջ ՀՀ-ում և արտերկրում	57
Ռ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ	Բանկերի դերը ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում	62
Լ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ	Հաստատագրված վճարով հարկվող օբյեկտների հարկման առանձնահատկությունները ՀՀ-ում	69
Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	ԼՂՀ վարկային համակարգի զարգացման միտումները	72
Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	Վարկի դերը շուկայական տնտեսության համակարգում	77
Ա. ՍԱՅԱԴՅԱՆ	Երևանյան բնակարանների հասանելիությունը	82
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ	Ֆինանսատնտեսական ճգնաժամը և պետության կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունը	85
Վ. ՍԱՐԳՍՅԱՆ	Պետական և շուկայական լծակների ցածր արդյունավետության պատճառները շրջակա միջավայրի պահպանության գործում	90
И. АКОПЯН	Государственные финансы в системе регулирования социальных проблем в РА	94

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հ. ԱՎԱԳՅԱՆ	Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը.....	99
Հ. ԱՎԱԳՅԱՆ	Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը.....	108
Վ. ԱԼԵԶՍԱՆՅԱՆ	Տեղեկատվական և խորհրդատվական համակարգի, գիտական ապահովման կառուցակարգերի և կադրերի պատրաստման համակարգի կառավարման կատարելագործման հիմնական ուղղությունները գյուղատնտեսությունում (ՀՀ Արագածոտնի մարզի օրինակով)	117
Ա. ԳԱՆԻԵԼՅԱՆ	Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և փոքր ու միջին ձեռնարկությունների աջակցության հիմնահարցերը	121
Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Գյուղատնտեսության սուբսիդավորման առանձնահատկությունները և դրանց կիրառման մոտեցումները ՀՀ լեռնային և բարձրլեռնային տարածաշրջաններում	124
Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Սուբսիդավորման անհրաժեշտությունը և հիմնախնդիրները գյուղատնտեսությունում	129
Հ. ԾՊՆԵՅՅԱՆ, Վ. ԻՎԱՆՅԱՆ	Հայաստանի Հանրապետությունում դաշտային կերարտադրությունում ստեղծված վիճակն ու արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները	133
Շ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, Լ. ԱԶԱՏՅԱՆ	Գյուղացիական տնտեսությունների խոշորացման ուղղությունները.....	139
Ե. ՀԱԿՈԲՅԱՆ	Հայաստանի ջրային ռեսուրսները և կառավարման հիմնախնդիրները....	144
Ե. ՀԱԿՈԲՅԱՆ	Ռոռզման ոլորտի սուբսիդավորման քաղաքականության ուղղությունները	148
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ	Բնական ռեսուրսների տնտեսական արժեքը	152
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ	Ագրոարդյունաբերական համալիրի էկոլոգացումը և արտադրական-սպառողական ոլորտի զարգացումը.....	156
Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Դիտողություններ ՀՀ արտահանման կառուցվածքի բարելավման սկզբունքների շուրջ	159
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Գյուղատնտեսական համայնքների զարգացման ֆինանսական ուղղությունները	165
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Ագրարային ոլորտում ինտեգրացիոն հարաբերությունների արդյունավետության ապահովման հարցեր	170
Մ. ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ	Կաթնամթերքի արտադրության արդյունավետության բարձրացման հնարավորությունները կաթի փոշիացման տեխնոլոգիայի կատարելագործման միջոցով.....	173
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Փոքր և միջին բիզնեսի ձևակերպումները մի շարք երկրներում և դրա զարգացմանը խոչընդոտող գործոնները	179
Է. ՂԱԶԱՐՅԱՆ, Հ. ԾՊՆԵՅՅԱՆ	Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության հիմնախնդիրները.....	183
Է. ՍԱՆԱՄՅԱՆ	Հայաստանի տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը ճգնաժամային և հետճգնաժամային զարգացումների համատեքստում ..	189
Լ. ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՀ տնտեսական աճի վրա արտահանման ազդեցության մեխանիզմի բացահայտումը՝ էկոնոմետրիկ մեթոդների կիրառությամբ	192

Т. БУТОВА, А. ЗАКАРЯН	Особенности зарубежного опыта взаимодействия власти и бизнеса 201
А. ДАНИЕЛЯН	Проблемы совершенствования финансового механизма развития малого и среднего предпринимательства 211
А. ЗАТИКЯН	Становление инновационной системы и развитие малого предпринимательства в РА 215
Т. ОГАНЯН	Стратегическое управление инновациями промышленных предприятий 219
И. ТАРАНЯН	Платные дороги как источник финансирования дорожного хозяйства Армении 225

**ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Բ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, Է. ԲԱԲԱՅԱՆ, Հ. ԹԵՐԶՅԱՆ	Անցումը «Կանաչ տնտեսությանը»՝ որպես մարդկային հասարակության կայուն զարգացման և բնակչության աղքատացման հաղթահարման կարևորագույն ուղղություն 235
Ա. ԴԱՎԹՅԱՆ	Կառավարման ապակենտրոնացումը և լիազորությունների փոխանցումը ՏԻՍ-երին 242
Ա. ԴԱՎԹՅԱՆ	Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ձևավորման գործընթացի հրապարակայնության ապահովման ուղիները ՀՀ-ում 246
Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Հ. ՍԱՐԿՈՍՅԱՆ	Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման եվրոպական փորձը..... 250
Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Էլեկտրոնային կառավարություն..... 255
Ա. ՄԱԿԱՐՅԱՆ	Ճգնաժամի սոցիալական ազդեցության գնահատումը գյուղական համայնքներում 259
Հ. ՍԱՐԿՈՍՅԱՆ, Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Ինտերնետի միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հարկման արդյունավետ համակարգի խոչընդոտները 263
Ս. ՊՈՂՈՍՅԱՆ, Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ	Ցանցային տնտեսության ֆինանսատնտեսական հրամայականը 268
Շ. ՊՈՂՈՍՅԱՆ	Ուղղակի մարքեթինգը կարգավորող իրավական ակտերի կատարելագործման ուղիները..... 272

**ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՄՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

Ն. ԱԳՈՆՅ	Գլոբալացումը որպես զարգացման ժամանակակից միտում..... 277
Հ. ԹԵՐԶՅԱՆ, Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Հարմարվողական սպասումներով (adaptive expactations) էկոնոմետրիկ մոդելների միջոցով ՀՀ իրական ՀՆԱ-ի և ներդրումների փոխկապվածության հետազոտումը 280

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ

ՏՊՏՏ Կ. Գ. Պ., պրոֆեսոր

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Բարձրագույն կրթության զարգացումը աշխարհի գրեթե բոլոր երկրներում համարվում է ազգային առաջնահերթ խնդիրներից մեկը, որով մեծապես պայմանավորված է ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացը: Մասնագետների դիտարկումներով զարգացած տեղեկատվական հասարակությունը ստեղծելու համար երկրի բնակչության կեսից ավելին պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն: Ազգային բարգավաճման, երկրի տնտեսական, քաղաքական բարեկեցության և կրթության անմիջական կապն ակնհայտ է: Այսպես, օրինակ՝ Կանադայում բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են աշխատունակ տարիքի բնակչության 30%-ը, Շվեյցարիայում՝ 24%-ը, Ճապոնիայում՝ 21%-ը, Ֆինլանդիայում՝ 18%-ը, Ֆրանսիայում՝ 15%-ը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանխատեսումներով քսանմեկերորդ դարում բարեկեցության առավել բարձր մակարդակի կհասնեն այն երկրները, որտեղ աշխատունակ բնակչության 40-60%-ը կունենա բարձրագույն մասնագիտական կրթություն¹: Ամերիկյան աշխատուժի շուրջ 60%-ն ունի բարձրագույն կրթություն, որն աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է²: Այստեղ գործում է զարգացած և ճկուն բարձրագույն կրթության համակարգ, որը համարվում է լավագույններից մեկը: Այն աշխարհում ամենաշերտավորվածն է և ապակենտրոնացվածը՝ ֆեդերալ կառավարությունը, համաձայն սահմանադրության, իրավունք չունի սահմանելու համընդհանուր կրթական համակարգ, որոշելու տարվող քաղաքականությունը կրթական բոլոր օղակների համար: Բոլոր որոշումներն այս հարցերի վերաբերյալ ընդունվում են տեղական իշխանությունների (հիմնականում նահանգային) կողմից: ԱՄՆ-ի բարձրագույն ուսումնական հաստատությունների համակարգում հիմնականը երկամյա, չորսամյա քոլեջներն են ու համալսարանները: Յուրաքանչյուր նշված օղակում գործում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ուսումնական հաստատություններ: Բուհերի կեսից ավելին (55%) մասնավոր է, սակայն քանի որ դրանք հիմնականում սակավաթիվ ուսանողներ ունեն (1000 մարդուց պակաս), նրանցում սովորողները կազմում են ուսանողների թվաքանակի 20%-ը, իսկ հիմնական մասը՝ շուրջ 80%-ը, սովորում է պետական բուհերում: Բուհական համակարգի մեջ մտնում են շուրջ 3638 համալսարաններ և քոլեջներ, այդ թվում՝ 1469 ուսուցման երկամյա ժամկետով, կազմում են 40%, առավել հայտնի համալսարանները, որոնք միաժամանակ խոշոր գիտական կենտրոններ են՝ 125, կազմելով ընդհանուր թվաքանակի 6%-ը³: Բարձրագույն կրթության համակարգի հիմքը կազմում են համալսարանները: Դրանց մեծամասնություն տարբեր տեսակի դպրոցների, քոլեջների, ինստիտուտների, գիտահետազոտական կենտրոնների ամբողջություն է, որտեղ կենտրոնացված է գիտահետազոտական աշխատանքների իրականացման և կադրերի պատրաստման հիմնական ծավալը: Ամենահայտնի համալսարաններն են Հարվարդի, որն ԱՄՆ-ի առաջին համալսարանն է, հիմնադրվել է 1636թ., Կոլումբիայի (1754թ.), Պրինստոնի (1746թ.), Պենսիլվանիայի (1740թ.), Նյու Յորքի (1831թ.) և այլն: Ամերիկյան համալսարանները համարվում են աշխարհում լավագույնները: Նրանք ձգտում են բավարարել պահանջները, ինչպես զուտ տեսական մշակումների ոլորտում, այնպես էլ գործնական հետազոտությունների բնագավառում: Այստեղ ուսումնական ծրագրերն ունեն լավագույն տեխնիկական հագեցվածություն, իսկ ուսանողները՝ լայն հնարավորություններ՝ ինքնուրույն գիտական, ստեղծագործական աշխատանք իրականացնելու համար, ինչն իր հերթին խրախուսում է հետաքրքրություն

¹ Бабкина О. В. Зачем реформировать высшую школу. // Зеркало недели. - М.: 2000, № 11(284), стр. 32.
² Супян В.В. Образование в США: состояние и приоритеты развития. // США и Канада. - М.: 2000, № 1, стр. 90.
³ Эймс Макгиннес Мл. Многообразие, открытость и гарантия качества. Политика в области высшего образования в США, http://www.ug.ru/ug_pril/az/96/08/05.html.

ընտրած մասնագիտության նկատմամբ: Բոլոր համալսարանները, այդ թվում՝ նաև մասնավոր, որպես շահույթի ստացման նպատակ չհետապնդող կազմակերպություններ ("non-profit organizations"), ամբողջությամբ ազատված են բոլոր տեսակի հարկերից, բացի աշխատավարձից կատարվող սոցիալական բնույթի վճարումներից և եկամտահարկից: Ամերիկյան համալսարաններին բնորոշ է միասնական կրթական ստանդարտների և հավատարմագրումների բացակայություն, իսկ ուսուցման որակի գրավականը հիմնականում տվյալ համալսարանի վարկանիշն է (համբավը):

Համալսարաններն ու քոլեջները եկամուտներ են ստանում ամենատարբեր աղբյուրներից: Այդ թվում՝ նահանգների, իշխանության տեղական մարմինների բյուջեներից, ուսանողներից զանձվող ուսման վարձից, տարբեր տեսակի ծառայությունների մատուցումից, ֆեդերալ կառավարության կողմից տրվող օգնություններից, տարբեր տեսակի հիմնադրամներից, մասնավոր կազմակերպություններից և այլն:

Պետական և մասնավոր բուհերի ֆինանսավորման միջև հիմնական տարբերությունն այն է, որ առաջիններն իրենց հիմնական միջոցները ստանում են նահանգի կառավարությունից, իսկ երկրորդները՝ զանձվող ուսման վարձերից: Մասնավոր բուհերում ուսման վարձը, որպես կանոն, ավելի բարձր է, սակայն այդ բուհերն ուսանողներին սովորաբար տրամադրում են զգալի ֆինանսական օգնություն: Ընդ որում՝ մասնավոր բուհերը կարող են ստանալ նպատակային ֆինանսական աջակցություն պետական աղբյուրներից: Ամերիկյան օրենսդրությամբ անապահով, ինչպես նաև բնակչության միջին խավերի պատկանող ուսանողներին նախատեսվում է զգալի օգնության տրամադրում ֆեդերալ բյուջեից: Այդ օգնությունը հիմնականում տրվում է տարբեր թոշակների, անհատույց երաշխավորված փոխառությունների, դրամաշնորհների և այլ ձևերով:

Բարձրագույն կրթության կազմակերպման և իրականացման կարևորագույն հարցերից մեկը ֆինանսավորման հիմնախնդիրն է: Գոյություն ունեն բարձրագույն կրթության ֆինանսավորման տարբեր համակարգեր, սակայն այդ հիմնախնդիրը կարելի է ասել ոչ մի երկրում չի գտել իր օպտիմալ ու վերջնական լուծումը և մշտապես վերանայվում է: Ներկայումս աշխարհում գործում է ֆինանսավորման աղբյուրների բազմաբնույթ համակարգ: Գոյություն ունեցող ֆինանսավորման հիմնական աղբյուրները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի՝ պետական, մասնավոր, կորպորատիվ: Այսպիսով, գոյություն ունի մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում: Ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման գործընթացը դիտվում է աշխարհի շատ երկրներում: Ամենուրեք այդ գործընթացին բնորոշ են մասնագիտական կրթության ծախսերի բյուջետային ֆինանսավորման կրճատումը և արտաբյուջետային աղբյուրների ընդլայնումը: Բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են դիտվում սովորողների միջոցները և գործատուների կողմից այդ ուղղությամբ կատարվող ծախսերը:

Ներկայումս գրեթե ամենուրեք բարձրագույն ուսումնական հաստատություններին իրավունք է վերապահվում հայթայթել ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ, և պետությունը նրանց ամեն կերպ աջակցում է: Ընդ որում՝ բոլոր երկրներին բնորոշ են ֆինանսավորման աղբյուրների բազմազանություն և բազմաքանակություն: Այն առավել բնորոշ է ԱՄՆ-ին, որտեղ ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում 16%-ը կազմում են հատկացումները ֆեդերալ կառավարությունից, 38%-ը՝ հատկացումները նահանգների կառավարություններից և տեղական իշխանության մարմիններից, 33%-ը՝ ուսանողների ուսման վարձից և 13%-ը՝ հատկացումները մասնավոր կազմակերպություններից, հիմնադրամներից և այլ աղբյուրներից: Հատկանշական է, որ պետական ուսումնական հաստատություններն իրենց ֆինանսավորման շուրջ կեսը (46%) ստանում են մասնավոր աղբյուրներից, մասնավորները՝ իրենց ֆինանսավորման քառորդը (25%) ստանում են պետական աղբյուրներից՝ հիմնականում ֆեդերալ դոտացիաների ձևով¹: Այսպես, որպես կանոն, ամերիկյան համալսարանի բյուջեն ձևավորվում է հետևյալ հիմնական աղբյուրներից՝

¹ Эймс Макгиннес, Мл. Многообразие, открытость и гарантия качества. Политика в области высшего образования в США \ http://www.ug.ru/ug_pril/az/96/08/05.html.

- նահանգային և մունիցիպալ կառույցներից ստացվող մուտքերից (տվյալ նահանգի համալսարանի համար),
- ուսման դիմաց վճարումներից,
- դրամաշնորհներ, գիտահետազոտական ծրագրեր, ընկերությունների պատվերներ,
- հովանավորչական օգնություն,
- եկամուտներ արժեթղթերից,
- մուտքեր համալսարանական բժշկական կենտրոններից, սպորտային քիմերից և այլն:

Ընդ որում, հատկանշականը նահանգային և մունիցիպալ կառույցների բաժնի մշտական կրճատումն է համալսարանների բյուջեների կազմում (90%-ից 20-րդ դարի 70-ական թթ. մինչև 20-22% ներկա դրությամբ): Միաժամանակ ուսման դիմաց վճարումները նույնիսկ մասնավոր բուհերի բյուջեներում չեն գերազանցում 50 %-ը¹:

Եվրամիության երկրները միջին հաշվով ներկայումս գիտության և կադրերի պատրաստման համար ծախսում են ՀՆԱ-ի շուրջ 5%-ը, ինչը համապատասխանում է ԱՄՆ-ի ծախսերի մակարդակին, սակայն ԱՄՆ-ում մասնավոր ներդրումները գրեթե վեց անգամ ավելին են, և մեկ ուսանողին ընկնող ծախսերը Եվրամիությունում երկու անգամ ավելի ցածր են, քան ԱՄՆ-ում²: Գերմանիայում, որտեղ ուսուցումը շարունակում է մնալ հիմնականում անվճար, բուհերն ունեն սահմանափակ հնարավորություններ արտաբյուջետային միջոցների ներգրավման համար: Լրացուցիչ ֆինանսական միջոցներ բուհերը ստանում են հիմնականում գիտահետազոտական աշխատանքների դիմաց՝ կատարված պատվերների հիման վրա: Սակայն այստեղ ամենայն սրությամբ կանգնած է վճարովի ուսուցման հարցը, ինչի հետ կապված բուհերն ակնկալում են իրենց բյուջեների զգալի համալրում: Ֆրանսիայում նույնպես բարձրագույն կրթության ֆինանսավորման գրեթե 90%-ը իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին³:

Մասնագիտական կրթության ֆինանսավորման տարբեր աղբյուրների օպտիմալ գույքակցումը կախված է բազմաթիվ գործոններից, մասնավորապես՝ տնտեսության զարգացման վիճակից, բյուջետային մուտքերից, գիտատեխնիկական զարգացման աստիճանից, երկրի դեկավարության կողմից խնդրի ընկալման աստիճանից և այլն, ուստի և տարբեր երկրներում այն լուծվում է տարբեր ձևերով: Ամենուրեք բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման հիմնական սկզբունքը նրա համատեղ՝ պետական և մասնավոր ֆինանսավորումն է և, այդ առումով, որոշակի հարաբերակցության մշակումը: Ընդ որում, թեև երկու դեպքում էլ տեղի է ունենում ներդրում «մարդկային կապիտալի» մեջ, սակայն վերջինիս ժամանակ դրա շնորհիվ բարձրանում են անհատական եկամուտները, հետևաբար անհատը պետք է մասնակցություն ցուցաբերի ուսուցման ֆինանսավորմանը: Միաժամանակ, գոյություն ունեն նաև սոցիալական բնույթի օգուտներ, որոնցով նույնպես պետք է պայմանավորված լինի ներդրումների իրականացումը, այստեղ «արտադրվում» է, վերջին հաշվով, ոչ թե այն, ինչը բավարարում է մարդու պահանջները, այլ ինքը՝ մարդը՝ որպես հասարակության անդամ, ուստի և կատարվող ներդրումները կարելի է համարել ոչ թե սպառողական բնույթի ծախսեր, այլ ազգային հարստության աճի կարևորագույն աղբյուր: Հատկանշական է, որ մասնավոր ֆինանսավորման բաժինը բարձրագույն կրթության ֆինանսավորման ոլորտում աճել է գրեթե բոլոր երկրներում (զարգացած երկրներում այն աճել է շուրջ 3%-ով), իսկ օրինակ՝ Ավստրալիայում, Անգլիայում, Իտալիայում՝ 9%-ից ավելին: Ընդհանուր առմամբ, բարձրագույն կրթության մասնավոր ֆինանսավորումն ըստ երկրների խիստ տարբեր է, այսպես, Դանիայում, Ֆինլանդիայում, Հունաստանում, Նորվեգիայում և Թուրքիայում այն կազմում է 5%, իսկ ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Ճապոնիայում 50%-ից ավելին է⁴:

Բարձրագույն կրթության ֆինանսավորման աղբյուրների կազմում տնտեսապես զարգացած երկրներում հատկապես կարևոր տեղ է հատկացվում ընկերությունների կողմից

¹ Аргучинцев А.В. Шесть американских университетов за девять дней.// Электронная газета. Иркутский университет, №8 (1609), 2005. <http://www.isu.ru/newspaper/0805/index.html>

² Лукичев Г., США и Европейский союз: конкуренция в образовании и исследованиях, «В мире науки», №10, 2003. http://www.slou-party.ru/ideology/party_posit/science/1072419259.html

³ Супян В.Б. Образование в США: состояние и приоритеты развития.// США и Канада.-М.:2000, №1, стр. 89.

⁴ Education at a Glance: OECD Indicators - 2006 Edition, OECD 2005 – A, B, C, D chapter.

կատարվող ներդրումներին: Ուստի և կարևոր խնդիր է այնպիսի մեխանիզմների ստեղծումը, որոնց միջոցով կխրախուսվեն այդ աղբյուրների ներգրավումը և ուղղումը նշված նպատակների ֆինանսավորմանը: Որպես կանոն, մասնագիտական կրթության ֆինանսավորումը մասնավոր ընկերությունների կողմից կարող է իրականացվել տարբեր եղանակներով՝

- ուսումնական հաստատությունների ֆինանսավորման միջոցով,
- սովորողների ֆինանսավորման միջոցով,
- աշխատողների՝ անմիջապես աշխատատեղերում կրթություն ստանալու ֆինանսավորման ճանապարհով:

Ժամանակակից պայմաններում մասնագիտական կրթության զարգացման կարևորագույն տնտեսական մեխանիզմներից է ֆինանսավորման հարկային խրախուսումը: Մի շարք զարգացած երկրներում ընկերությունների շահույթի հարկման ժամանակ խրախուսվում են կրթության, կադրերի մասնագիտական պատրաստման նպատակներով կատարվող ներդրումները, նախատեսվում են տարբեր հարկային արտոնություններ: Հատկապես կրթական նպատակների ֆինանսավորմանն ուղղվող միջոցների ազատումը հարկումից, կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերի ներառումը արտադրության և իրացման ծախսերի կազմ: Հարկային օրենսդրության օգնությամբ հնարավոր է նաև խրախուսել միջոցների ներգրավումը վճարովի ուսուցման համակարգի ընդլայնման համար:

ԼԻԼԻԹ ԱՎԴԱԼՅԱՆ

ՎՊՄԻ դասախոս

ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ազգային բանկերի ելքը արտասահմանյան ֆինանսական շուկա կապված է արտադրական և առևտրային կապիտալի միջազգայնացման հետ: Այլ խոսքով՝ բանկերը գործունեության իրականացման աշխարհագրական տեղադիրքը տեղափոխում են՝ հետևելով իրենց հաճախորդների ֆինանսական պահանջմունքներին: Ընդ որում, վերջիններիս համար հաճախորդների շահերի և վճարահաշվարկային աջակցության պահանջմունքների փոփոխություններին նպաստեցին 20-րդ դարի 1960-1970թթ. զարգացած երկրների բանկային բիզնեսի միջազգայնացման հիմնական գործոնները՝ միևնույն ժամանակ չանտեսելով բանկերի սեփական շահերի գործոնը: Հաճախ ընդունող երկրում հենց բանկերի ֆինանսավորման առավել էժան աղբյուրները, առանձին գործառույթների ավելի բարձր եկամտաբերությունը, ազգային տնտեսությունում «հնացած բանկային ծառայության» արտահանումը արտասահման, առանձին երկրների և տարածաշրջանների տնտեսական զարգացման միտումները, համաշխարհային ֆինանսական կենտրոնների գրավչությունը այն լրացուցիչ գործոններն են, որոնք նպաստում են բանկային կապիտալի և գործառնությունների միջազգայնացմանը: Այդ գործոնները հանգեցնում են աշխարհի խոշորագույն բանկերի գլոբալացմանը և դրանց ակտիվության բարձրացմանը: Հիմնական ցուցանիշները, որոնք օգտագործվում են վարկանիշներ կազմելու համար և վկայում են այդպիսի բանկերի մեծությունը, հանդիսանում են այդ բանկերի սեփական կապիտալի մեծությունը, ակտիվների ծավալը, շահույթի մեծությունը:

Այսպես, բանկի հուսալիության բարձրացման հիմնական գրավականներից է համարվում հեղինակավոր ռեյտինգների օգտագործումը՝ ցույց տալու միջազգային բանկերի շրջանակներում տվյալ բանկի վարկանիշը: Այսպես օրինակ, The Banker, Euromoney, Banker's Almanac ամսագրերի կողմից տրամադրված ռեյտինգները դիրքորոշում են աշխարհի խոշոր բանկերը դրանց հուսալիության ապահովման հիմնական ցուցանիշների համատեքստում:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին տեղի է ունենում ֆինանսական շուկաների գլոբալացման գործընթացը, ինչը նպաստում է բանկային բիզնեսի և տնտեսության իրական հատվածի սերտանման գործընթացին: Արդյունքում, ազգային տնտեսություններում աստի-

ճանաբար մեծանում է միջազգային բանկային բիզնեսի հիմնական սուբյեկտների՝ վերագ-
գային բանկերի դերը, որի գործունեությունն իրականացվում է արտասահմանյան բանկերի
ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և ստորաբաժանումների և այլ խոշոր ֆինանսա-
վարկային հաստատությունների միջոցով: 21-րդ դարի սկզբին աշխարհում հաշվարկվում են
ավելի քան երկու տասնյակ խոշոր ֆինանսական կենտրոններ, որոնք ներառում են առաջա-
տար զարգացած երկրների վերագգային բանկերի 1000-ից ավելի մասնաճյուղեր և ստորաբա-
ժանումներ: Այդ բանկերը միջազգային բիզնեսի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են¹:

Վերագգային բանկերի միջազգային գործունեությունը ձեռք է բերել մի շարք առանձ-
նահատկություններ.

- Վերագգային բանկերը գլխավոր և խոշոր միջնորդներ են ֆինանսական ռեսուրսներ
տնօրինողների և ներդրողների միջև, որոնք կապիտալ են փոխառում՝ միջազգային
բիզնես գործունեություն իրականացնելու համար:
- Վերագգային բանկերը տնօրինողներից դեպի փոխառուն ֆինանսական ռեսուրսների
միջազգային շարժի աղբյուրների ձևի և բաշխման հիմնական որոշողներն են:
- Վերագգային բանկերը ունիվերսալ ֆինանսական օղակ են միջազգային մեծա-
մասշտաբ վճարումներ իրականացնելու, ազատ դրամական միջոցներ ներգրավելու և
վերադարձնելու պայմաններով միջազգային ֆինանսական շուկաներում դրանք տեղա-
բաշխելու համար:
- Վերագգային բանկերը խոշորաձավալ ներդրումային միջոցների աղբյուր են, որոնք
ձեռք են բերում վստահության բարձր աստիճան ինչպես դրանց ծագման, այնպես էլ
դրանք տրամադրելու առումներով:

Վերագգային բանկերի տարբերությունը խոշոր ազգային բանկերից, առաջին հերթին,
արտասահմանում ինստիտուցիոնալ ցանցի առկայության մեջ է, ինչպես նաև տարբերությունն
այն է, որ վերագգային բանկերը արտասահման են տեղափոխում ոչ միայն ակտիվային
գործառնությունների մի մասը, այլև սեփական կապիտալի մի մասը, և արտասահմանում է
ձևավորվում դեպոզիտային բազայի մի մասը, ինչի հետ կապված էլ վերագգային բանկերի
արտասահմանյան ցանցը օգտագործվում է բանկային շահույթի ստեղծման համար: Այսպիսով,
վերագգային բանկերը դարձել են վարկային կապիտալի համաշխարհային շուկայի, արժույ-
թային գործառնությունների և ամբողջ միջազգային տնտեսական հարաբերությունների համա-
կարգի կարևոր տարրերից մեկը:

Բացի միջազգային բանկային գործունեության կարգավորման վարչարարական նորմերից,
ազգային բանկային գործունեության մեջ կարելի է թվարկել նաև տնտեսական գործիքների
կիրառությունը, ինչպիսիք են՝ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը,
հարկազանձումը, փոխանակային կուրսերը: Այսպես, վերաֆինանսավորման տոկոսա-
դրույքը յուրաքանչյուր երկրի Կենտրոնական բանկի կողմից, նախևառաջ, օգտագործվում է
երկրում դրամական զանգվածը և գնային քաղաքականությունը կարգավորելու համար:
Սակայն տոկոսադրույքի մակարդակը ուղղակիորեն ազդում է երկրում միջազգային վարկային
կապիտալի ներհոսքի կամ արտահոսքի վրա: Պատահական չէ, որ միջազգային ֆինանսական
ընկերությունները՝ բանկերը և ներդրողները, ուշադիր հետևում են առաջատար զարգացած
երկրներում տոկոսադրույքի «մրցավազքին»: Ընդ որում, նման ազդեցություն են թողնում նաև
արտարժույթային կուրսերի դինամիկան և բանկային գործունեության հարկազանձման
տարբերությունները:

Ներկայումս վերագգային բանկերի միջև խիստ մրցակցություն է ընթանում, որի
արդյունքում աշխարհի խոշորագույն բանկերի ցուցակը անընդհատ փոփոխվում է: Այսպես,
ըստ The Banker² բրիտանական ամսագրի տվյալների՝ 2010թ. աշխարհի 5 խոշորագույն
բանկերն են՝

1. Bank of America,
2. JP Morgan,
3. Citigroup,

¹ <http://www.bankir.am/params.php?lang=1&color=b&st=report134>

² <http://seekingalpha.com/article/187236-the-banker-top-500-banking-brands-of-2010>

4. Royal Bank of Scotland,
5. HSBC:

Ընդ որում, The Banker ամսագիրը բանկերը դասակարգում է՝ հիմք ընդունելով առաջին կարգի կապիտալի ցուցանիշը:

Մեկ այլ միջազգային բանկային գործի ռեյտինգավորման գերմանական ընկերության Banker's Almanac-ի¹ տվյալների ամենամեծ շուկայական կապիտալիզացիայով աշխարհի 10 խոշորագույն բանկերն են՝

1. ICBC (չինական),
2. China Construction Bank,
3. HSBC,
4. Wells Fargo,
5. JP Morgan,
6. Bank of China,
7. Citigroup,
8. Agricultural Bank of China,
9. Bank of America,
10. Itau Unibanco (բրազիլական):

Հիմք ընդունելով բանկերի ակտիվների ծավալները՝ ամերիկյան ռեյտինգավորման կազմակերպությունը՝ Bloomberg-ը, աշխարհի 10 խոշորագույն բանկերն է համարում (աղյուսակ 1)²

1. BNP Paribas (Ֆրանսիա),
2. HSBC,
3. Barclays,
4. Royal Bank of Scotland,
5. Bank of America,
6. Deutsche Bank,
7. Credit Agricole Group,
8. Mitsubishi UFJ,
9. JP Morgan,
10. Citigroup:

Աղյուսակ 1

Bloomberg-ի կողմից գնահատված աշխարհի 10 խոշոր բանկերի ակտիվների ծավալները 2010թ.²

Բանկ	Ակտիվները 2010թ. հունիսի դրությամբ, մլն ԱՄՆ դոլար	Աճը 2007թ. հունիսի համեմատ, %
BNP Paribas	2237034	34.47
HSBC	1976336	12.46
Barclays	1938203	37.03
Royal Bank of Scotland	1932161	56.44
Bank of America	1931737	54.06
Deutsche Bank	1925655	-0.65
Credit Agricole Group	1900600	-
Mitsubishi UFJ	1891838	6.26
JP Morgan	1645836	38.13
Citigroup	1583433	-12.75

Հայաստանի Հանրապետությունում գործում են 21 բանկեր, որոնց նկատմամբ վերահսկողության իրականացումը և նորմատիվների սահմանումը իրականացվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Հայաստանի 21 բանկերից մեկն է, որ արտասահմանյան

¹ <http://seekingalpha.com/article/168236-the-banker-top-500-banking-brands-of-2010>

² Նույն տեղում:

բանկի մասնաճյուղ է, այդ բանկն է Մելլաթ Բանկ ՓԲԸ-ն, որը Իրանական ԻԻՀ Մելլաթ պետական բանկի մասնաճյուղն է, 11 բանկեր հայկական, կամ ուղղակի արտասահմանյան կապիտալով բանկեր են, իսկ 9-ը բանկեր արտասահմանյան բանկերի դուստր բանկեր են, որոնք ցույց են տրված աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ՀՀ-ում գործող արտասահմանյան բանկերի կազմակերպչի րավական ձևերը¹

Հայաստանյան դուստր բանկեր	Մայր բանկ	Մասնաճյուղեր և դուստր ընկերություններ
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ	Կրեդիտ Ագրիկոլ բանկ	40 մասնաճյուղ և 2 դուստր ընկերություն
Անելիք բանկ	Credit S.A.L.	12 մասնաճյուղ և 1 դուստր ընկերություն
Առէկսիմբանկ Արմենիա	Գազպրոմբանկ	15 մասնաճյուղ
Բիբլոս բանկ Արմենիա	Բիբլոս բանկ Էս-Էյ-Էլ	3 մասնաճյուղ
ԲՏԱ բանկ Հայաստան	ԲՏԱ բանկ	5 մասնաճյուղ
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	Էյչ-Էս-Բի-Սի	6 մասնաճյուղ
Հայքիզնես բանկ	Ուկրպրոմբանկ	25 մասնաճյուղ
Պրոկրեդիտ բանկ	Պրոկրեդիտ հոլդինգ	9 մասնաճյուղ
ՎՏԲ Հայաստան	ՎՏԲ	68 մասնաճյուղ

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական գործոնների ազդեցությունն առավել զգալի է բանկային ոլորտում: Բանկային բիզնեսի բնույթի բարդացումը և նրա ծավալների աճը (այդ թվում՝ սպառողական վարկավորման) կապված են ռիսկերի կուտակման հետ: Բանկային ոլորտի զարգացման այս հատվածը գտնվում է կենտրոնական բանկերի և համապատասխան ծառայությունների կողմից իրականացվող վերահսկողական գործունեության կենտրոնում: Ավելին. զարգացած երկրների բանկային համակարգերի ուսումնասիրության արդյունքում կարևոր է նշել, որ բարենպաստ միտումների հետ մեկտեղ, որոնք մենք իրավունք չունենք գերազնահատելու, այս երկրների բանկային համակարգերում գոյություն ունեն թերևս չլուծված խնդիրներ: Բանկային հատվածին բնորոշող խնդիրները հիմնականում կրում են կառուցվածքային բնույթ և կապված են տնտեսության ընդհանուր վիճակի, դրամական հարաբերությունների զարգացման աստիճանի և իրավական բազայի հետ:

ԼԻԼԻԹ ԱՎԴԱԼՅԱՆ

ՎՊՄԻ դասասիրտս

«ԲԱԶԵԼ-1», «ԲԱԶԵԼ-2» ԵՎ «ԲԱԶԵԼ-3» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԸ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ

1975թ. Շվեյցարիայի Բազել քաղաքում տասը առաջատար զարգացած երկրների Կենտրոնական բանկերի կողմից ստեղծվեց բանկերի վերահսկողության բազելյան կոմիտեն: Դրա հիմնումը խոշոր արևմտագերմանական բանկի սնանկացման և ազգային կարգավորման մարմինների մոտ վերազգային բանկերի ցանցի գործունեության վերահսկման համար գործուն մեխանիզմների և գործիքների բացակայության պատասխան միջոցն է: Այդպիսի վերահսկողության խնդիրն այն է, որ գալով ազգային տնտեսություն՝ վերազգային բանկի մասնաճյուղը կարող է մեծամասշտաբ բանկային գործունեություն ծավալել և երկար ժամանակ ֆինանսապես առողջ երևալ, իր գործունեության մեջ ավելի ու ավելի մեծ թվով

¹ <http://www.bankir.am/parametrs.php?lang=1&color=b&st=report>

ընդունող երկրի ռեզիդենտներ ներգրավել: Սակայն վերազգային բանկի մասնաճյուղի կենսունակությունը կախված է ոչ այնքան տվյալ երկրի ազգային բանկային օրենսդրության նորմատիվներն իրականացնելուց, որքան ամբողջ վերազգային բանկային կառուցվածքի կենսունակությունից, որի մեծ մասը գտնվում է այդ երկրի սահմաններից դուրս: Իսկ բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության ազգային մարմինների լիազորությունները վերազգային բանկի մասնաճյուղի տեղաբաշխման երկրում սահմանափակվում են ազգային սահմաններով: Ուստի, անհրաժեշտություն առաջացավ ձևավորել, առաջին հերթին, տարբեր երկրներում միջազգային բանկային գործունեության նկատմամբ միասնական պահանջներ, և երկրորդ՝ համաձայնության գալ ամբողջ վերազգային բանկային ցանցի գործունեության նկատմամբ գործուն վերահսկողության սկզբունքների վերաբերյալ և վերացնել միջազգային գործառնությունների նկատմամբ հատվածավորված հսկողությունը:

1975թ. Բազելյան կոմիտեն պատրաստեց արտասահմանյան բանկային հաստատությունների նկատմամբ վերահսկողության Կոնկորդատը¹, որը պարունակում է հետևյալ դրույթները.

- Արտասահմանյան բանկային հաստատության գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում են բանկի ծագման երկրի և ընդունող երկրի մարմինները:
- Ոչ մի բանկային հաստատություն չպետք է խուսափի վերահսկողությունից:
- Իրացվելիության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են ընդունող երկրի մարմինները:
- Վճարունակության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ծագման երկրի մարմինը, եթե երկրում գործում է արտասահմանյան բանկի մասնաճյուղ, և վերահսկողությունն իրականացնում է ընդունող երկիրը, եթե ստեղծվել է դուստր բանկ:
- Անընդհատ իրականացվում է տեղեկատվության փոխանակություն ծագման երկրի և ընդունող երկրի վերահսկող մարմինների միջև:

1988 թվականի Բազելյան համաձայնագրի հիմնական նպատակն է՝ որոշել կապիտալի բավարարության հաշվարկի միջազգային ընդունված չափանիշը, որպեսզի տարբեր երկրների բանկերը կարողանան համադրվել միջազգային չափորոշիչներով պատրաստված հաշվետվությունների հիման վրա:

Բազել-1-ի հիմնական պահանջը հաշվարկային կապիտալի առկայությունն է շուկայական և վարկային ռիսկի որոշված մակարդակի ծածկման ուղղությամբ: Տվյալ մակարդակը սահմանվել է բանկի ակտիվների հաշվարկային ցուցանիշների 8%-ից ոչ պակաս²:

Բազել-2 համակարգը հիմնականում բացահայտում է ռիսկերի կառավարման, բանկերի կողմից կորպորատիվ կառավարման իրականացման, նաև բանկային վերահսկողության կատարելագործման և թափանցիկության ավելացման հիմնախնդիրները: Բազել-2-ում քննարկվում են գլոբալ ֆինանսական համակարգի կայունության բարձրացման խնդիրները: Կապիտալի չափորոշիչների նոր համակարգը (Բազել-2) փորձում է հասնել այդ նպատակներին 3 փոխլրացնող տարրերի միջոցով: Բազել-2-ի կողմից առաջարկվող նոր փիլիսոփայության հիմնախնդիրն է յուրաքանչյուր առանձին ձախողման կանխատեսումը, քանի որ անհաջողության որոշ դեպքերում շուկայից վտարվում են վատ կառավարվող բանկերը, որոնք մյուս բանկերին խրախուսում են բարձրացնելու կառավարման որակը:

Հետևաբար Բազել-2 ներկայացնում է բանկերում ռիսկերի կառավարման ընդունակությունների գնահատում: Վերահսկողության մարմինները պետք է կարողանան հասցնել բանկերի ղեկավարությանը «հորիզոնում» ձևավորվող ռիսկերը³: Մեր կարծիքով, բանկային վերահսկողության մարմիններն իրենց ուժերը պետք է կենտրոնացնեն ոչ միայն վարկային կազմակերպությունների ներկա ֆինանսական դրության գնահատման վրա, այլև ավելի

¹ Синки Дж.-мл., “Управление финансами в коммерческом банке”, 1994, стр. 458.

² Basle Committee of on Banking Supervision “Lehman Brothers” July, 2003. Basle, Switzerland. 15-19p.

³ Basle Committee of on Banking Supervision “Lehman Brothers” July, 2003. Basle, Switzerland. 12-16p.

շատ՝ ներքին պրոցեսների և վերահսկողության կառուցվածքների որակի գնահատման վրա, որոնք կարող են պահպանել ապագա կորուստներից:

Բազել-1-ի վերանայման նպատակը հետևյալն է՝ մշակել կապիտալի չափման մեթոդիկան, որը ներառում է՝

- Նոր համակարգը ավելի զգայուն պետք է լինի ռիսկերի նկատմամբ, քան հիմը (Բազել-1):
- Ավելի հստակ պետք է արտահայտի միջազգային շուկայում գործող բանկերի գործունեության ուղղվածությունը:
- Պետք է ընդունակ լինի հարմարվելու շուկայի և ծառայությունների զարգացման պրոցեսներին:
- Պետք է կարողանա բարձրացնել շուկայում տիրող կարգապահությունը տեղեկատվության թափանցիկության կատարելագործման միջոցով:
- Պետք է կարողանա կապակցել կապիտալին ներկայացվող պահանջները ռիսկերի կառավարման ժամանակակից մեթոդների հետ:

Կապիտալի բավարարության վերաբերյալ նոր համաձայնագիրը (Բազել-2)¹ հիմնվում է 3 տարրերի միասնության վրա՝

- կապիտալին ներկայացվող նվազագույն պահանջները,
- հսկողության գործընթացը,
- շուկայական կարգապահության պահպանման նպատակով տեղեկատվության բացահայտումը:

Այնուամենայնիվ, և՛ Բազել-1-ում, և՛ Բազել-2-ում բացակայում է հստակեցված մեթոդաբանական բազան: Մեր կարծիքով, ներքին վերահսկողության ծառայությունների հիմնական խնդիրը կարելի է ձևակերպել 2 մակարդակով.

- ստուգումների անցկացման մեթոդների և ձևերի մշակում,
- ստուգումների ժամանակ օգտագործվող փաստաթղթերի ցանկի որոշում:

Քանի որ սկսվող ճգնաժամը բավականին ուժեղ հարված հասցրեց բանկային համակարգին, ապա նման իրավիճակը հնարավոր չէր թողնել առանց ուշադրության, որին հետևեց համապատասխան արձագանքը:

Բանկային հսկողության Բազելյան կոմիտեն 2010թ. սեպտեմբերի 12-ին հավանության արժանացրեց համաշխարհային բանկային հատվածի գլոբալ բարեփոխումը, որը կոչվեց «Բազել-3»: Այս ծրագրի հեղինակները հույս ունեն, որ այն շեշտակի կբարձրացնի համաշխարհային բանկային համակարգի (նաև ամբողջ ֆինանսական համակարգի) կայունությունը՝ առաջին հերթին իրացվելի ակտիվների ավելացման և նրանց որակի բարելավման հաշվին: Բանկերի կապիտալի և ակտիվների կառուցվածքի նկատմամբ նոր պահանջների սահմանման գործընթացը կսկսվի 2013թ. հունվարի 1-ից և կավարտվի 2019թ. սկզբին: Մասնավորապես, էականորեն կաճի բանկի սեփական կապիտալի մեծությունը մինչև իրացվելի պահուստի նվազագույն շեմի 4,5%-ը (նախկինում այն կազմում էր 2%)²:

Նախկին 4,5%-ի փոխարեն մինչև 6% կբարձրանա նաև բանկի առաջին մակարդակի կապիտալի շեմը (այն է՝ առավել իրացվելի ակտիվները): Բացի այդ՝ Բազելյան կոմիտեի կողմից ընդունված որոշումների համաձայն՝ յուրաքանչյուր բանկ պետք է ձևավորի հատուկ պահուստային կապիտալ 2,5%-ի չափով:

Ամբողջ բանկային համակարգի կայունացման նպատակով ընդունվել է որոշում, համաձայն որի համակարգային ճգնաժամի դեպքում բանկերը պարտավոր են հատկացնել հատուկ կայունացման ֆոնդին կապիտալի 2,5%-ը՝ կախված բանկի մեծությունից և խոցելիությունից: Բացի այդ՝ ընդունվել է պայմանավորվածություն, համաձայն որի պետությունները մասնավոր բանկերին կարող են տրամադրել նոր կապիտալ մինչև 2018թ. հունվարի 1-ը³:

«Լեման Բրադերզ» ամերիկյան բանկի սնանկացումից 2 տարի անց, երբ առաջացավ

¹ Basle Committee of on Banking Supervision “Lehman Brothers” July, 2003. Basle, Switzerland. 27-29p.

² Basel III: “Making Banks Stronger or Not?”. ATCA. London, UK - 25th January 2010. 15-20p.

³ Basel III: “Making Banks Stronger or Not?”. ATCA. London, UK - 25th January 2010. 32p.

համաշխարհային ֆինանսական և բանկային համակարգերի փլուզման վտանգը¹, «Բազել-3»-ի ընդունումը հանդիսացավ վճռական քայլ այդ համակարգի ամրապնդման գործում²:

Մեր կարծիքով, բանկային ակտիվների կառուցվածքի և որակի նկատմամբ նոր նորմերի և չափանիշների սահմանումը ոչ միայն պայմաններ կստեղծի բանկերի կայունության և հուսալիության շեշտակի բարձրացման համար, այլ նաև կբարձրացնի նրանց ընդունակությունը նոր ֆինանսական ցնցումներին դիմակայելու համար:

«Բազել-3» համաձայնագիրը ուղղված է բանկային ստանդարտների հիմնավոր ամրապնդմանը: Նշենք, որ համաշխարհային շուկաները դրականորեն արձագանքեցին «Բազել-3»-ի նորություններին:

Բանկային ստանդարտների կոշտացումը կարելի է դիտել որպես կարևոր տարր նոր ֆինանսական ճգնաժամերի կանխարգելման գործում:

«Բազել-3»-ի գլխավոր նպատակն էր ֆինանսական կորուստների ծածկման նպատակով բանկերի մոտ ազատ կապիտալի ավելացումը: Բանկային մասնագետների կարծիքով նոր ֆինանսական ցնցումների դեպքում որպես բանկերի հիմնական պաշտպանություն պետք է ծառայեն առաջին մակարդակի հիմնական կապիտալի իրացվելի պահուստը և կայունացնող պահուստը, որոնք միասին կազմում են բանկային կապիտալի 7%-ը: Ընդ որում 2016-2019թթ. ժամանակահատվածում բանկերը պետք է ձևավորեն բուֆերային պահուստային կապիտալ³:

Որոշ բանկերի համար «Բազել-3»-ի ընդունումը ենթադրում է նոր իրացվելի միջոցների ներգրավման անհրաժեշտություն՝ առաջին հերթին բաժնետոմսերի թողարկման հաշվին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սեփական կապիտալի վերաբերյալ առավել կոշտ կանոնների սահմանումը արդյունավետ միջոց է ֆինանսական համակարգի կայունացման գործում, պետք է նշել, որ «Բազել-3»-ի ընդունումը կարող է ունենալ իր ծանր հետևանքները մանավանդ փոքր բանկերի համար: Կապված սեփական կապիտալի նկատմամբ պահանջների բարձրացման հետ, մի խումբ բանկեր կարող են դառնալ կլանման և միաձուլման գոհ կամ կարող են ընդհանրապես անհետանալ:

Մի շարք վերլուծաբանների կարծիքով «Բազել-3»-ում իրացվելիության նկատմամբ սահմանված կանոնները կարող են հանգեցնել նրան, որ բանկերը հակված կլինեն հիմնականում տրամադրելու կարճաժամկետ վարկեր, ինչը մեծ հարված կհասցնի միջին և փոքր ձեռնարկություններին:

Բազելյան կոմիտեի կողմից ընդունված որոշման համաձայն, այն բանկերը, որոնք չեն կարող կիրառել հաստատված նորմերը սահմանված ժամկետներում, ստիպված կլինեն կրճատել բաժնետոմսերի դիմաց դիվիդենդների վճարումը:

Բանկերը փորձում են պայքարել, որպեսզի նոր համակարգին անցնելու համար տրամադրվի բավականաչափ ժամանակահատված, հակառակ դեպքում նրանք ստիպված կլինեն հրաժարվել մեծ քանակի վարկերից, ինչը կարող է խոչընդոտել տնտեսական աճը: Բավականին երկար անցումային շրջանի սահմանումը կնպաստի, որպեսզի բանկերը կարողանան անհրաժեշտ լրացուցիչ կապիտալը: Նրանց կարծիքով այդ գործընթացի համար նպատակահարմար է համարվում 10-12 տարի ժամանակահատվածը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերլուծությունների հիման վրա կարելի է պնդել, որ բանկերը, որպեսզի կարողանան խուսափել ռիսկերից, պետք է ապահովված լինեն բավականաչափ սեփական կապիտալով: Իսկ ամերիկացի վերլուծաբանների կարծիքով որոշ բանկեր ոչ միայն չեն կարողանում պահպանել բաժնետիրական և փոխառու կապիտալի միջև հարաբերակցության մակարդակը, այլ նաև թաքցնում են ռիսկերի իրական ծավալը:

¹ Basle Committee of on Banking Supervision “Lehman Brothers” July, 2003. Basle, Switzerland. 5-6p.

² Basel III: “Making Banks Stronger or Not?”. ATCA. London, UK - 25th January 2010. 16-18p.

³ <http://www.km.ru/biznes-i-finansy/obzory/bankovskii-sektor/12860>

Հետևաբար, սեփական կապիտալի վերաբերյալ կոշտ կանոնների սահմանումը կարող է հանդիսանալ իրական միջոց ֆինանսական համակարգի կայունության բարձրացման գործում:

Չնայած համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամը հաստատեց համաշխարհային ֆինանսական համակարգի թույլ կողմերը, նախատեսվող բարեփոխումներն անխուսափելի են: Բավականին վճռական է տրամադրված նաև Եվրահանձնաժողովը, որը հաստատեց, որ բանկերի սրբես-թեսթավորման գործընթացը պետք է կրի մշտական բնույթ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Բազել-3»-ի ընդունումը էականորեն կբարձրացնի բանկերի հուսալիության աստիճանը անկայուն ֆինանսական պայմաններում:

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

*ՆԳԱՎԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ.*

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ՃՂՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայաստանը անցումային ժամանակաշրջանում գտնվող բազմաթիվ այլ երկրների շարքում կանգնած է կայուն զարգացման ապահովման լրջագույն խնդրի իրականացման առջև, որի լուծումը թույլ կտա առաջիկա տարիների ընթացքում հասնել «ոսկե միլիարդ» որակվող երկրների մակարդակին՝ բնակչության բարեկեցության, տեխնոլոգիական զարգացման, շրջակա միջավայրի պահպանման և այլ բնագավառներում:

Հարկային քաղաքականության իրականացման ներկայիս ձևը իրական ձևախեղումներ է առաջացնում հիմնարար ինստիտուտների գործունեության մեջ՝ պայմանագրերի կատարում, սեփականության իրավունքի, հավասար հնարավորությունների վերաբերյալ օրենքների կիրառում, ինչը, բազմիցս ուսումնասիրվել և վերլուծվել է հայ և արտերկրի բազմաթիվ տնտեսագետ-հետազոտողների կողմից ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային տարբեր ֆորումներում:

Ուստի, մենք գտնում ենք, որ Հայաստանի ներկա պայմաններում հենց հարկային քաղաքականությունն է համակարգի ձևախեղման հիմնական տարրը և պահանջում է կտրուկ բարեփոխումների իրականացում, որի հիմքում ընկած պետք է լինի հետևյալ սկզբունքը. հարկային համակարգի ֆիսկալ դերը պետք է փոխարինվի ծառայություն մատուցողի դերով, որն, իր հերթին, կապահովի ֆորմալ ինստիտուտի՝ օրենքի պահանջների կատարումը:

Տնտեսագիտական գրականության մեջ հարկային խնդիրներից առավել ուշադրություն է հատկացվում հարկային բեռի օպտիմալացմանը, հարկի դրույքաչափերին, հարկային արտոնություններին, հարկային պարտավորություններին և հարկային ոլորտին վերաբերող այլ հարցերի: Մակայն, կարծում ենք, որոշակի բացթողումներ, թերացումներ գոյություն ունեն տարբեր հարկատեսակների հաշվարկման մեխանիզմների լուսաբանման առումով: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հարկային բարեփոխումների իրականացման ռազմավարական ուղիներին, մասնավորապես առանձին հարկատեսակների հաշվառման մեխանիզմների պարզեցման հիմնահարցերին:

Իհարկե, տվյալ հիմնախնդիրը չունի միանշանակ և բացարձակ մոտեցում հարկային քաղաքականության արդյունավետության աստիճանը գնահատելու հարցում: Բացի այդ, ՀՀ բարենպաստ բիզնես միջավայր ձևավորելու համար առանցքային նշանակություն են ստանում հարկային քաղաքականության հիմնական գործիքի՝ հարկային բեռի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, որն, ի վերջո, հարկ վճարողների հարկային բեռի հավասարաչափ բաշխման ու հարկային մուտքերի արդյունավետության բարձրացման հիմքն է կազմում:

Չնայած վերջին տարիներին հանրապետության հարկաբյուջետային ոլորտում իրականացված բարեփոխումներն էականորեն նպաստեցին հանրապետության հարկաբյուջետային համակարգի կայացմանը, այնուհանդերձ ներկայումս այդ ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք նվազեցնում են համակարգի արդյունավետությունը, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Ըստ էության, հանրապետության հարկային քաղաքականության վրա ազդող օբյեկտիվ գործոններն են.

- օրենսդրությամբ սահմանված ծավալով եկամտուների հավաքագրման գործում հարկային համակարգի ցածր հնարավորությունները,
- հարկային բեռի ծավալը ՀՆԱ-ում,
- հարկային բեռի բաշխումը հարկատուների առավել նեղ շրջանակի վրա, որի արդյունքում մեծանում է վերջիններիս վրա հարկային ճնշումը, և բարձրանում է հարկային բեռը,
- հարկային համակարգի վերափոխումը՝ որպես տնտեսական աճին խանգարող, ներդրումային ակտիվությունը նվազեցնող գործոն,
- տնտեսության իրական հատվածի՝ որպես գլխավոր հարկ վճարողի հնարավորությունների նվազումը, որը կազմակերպությունների վնասով աշխատելու և շահութաբերության անկման արդյունք է,
- տնտեսության «անօրինականացումը» կամ «հանցավոր խմբավորումների ձևավորումը», որի արդյունքում մեծանում է հարկումից խուսափողների բանակը,
- գործարար ակտիվության ուղղությամբ հարկային մեխանիզմի կարգավորիչ և խթանիչ լծակների թուլացումը:

Հարկային քաղաքականության վրա ազդող սուբյեկտիվ գործոններից կարելի է առանձնացնել՝

- հարկային քաղաքականության մշակման և իրականացման հարցում տնտեսապես չհիմնավորված քայլերը, սխալները և բացթողումները,
- ֆինանսատնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների (մասնավորապես հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների) միջև չհամաձայնեցված քայլերի առկայությունը,
- արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության համար օրենսդրության գնահատման և փորձաքննության մեխանիզմների և պրակտիկայի բացակայությունը,
- լրբբիստական գործունեությունից հարկային քաղաքականության ապահովագրման մեխանիզմների բացակայությունը,
- օրենսդրական դաշտի անկայությունը և անկատարությունը,
- հարկային վարչարարության ցածր աստիճանը, հարկային մարմիններում ընդգրկված աշխատակիցների ոչ բավարար մասնագիտական մակարդակը:

Ակնհայտորեն վերը թվարկված գործոնների ազդեցությունը խիստ բացասաբար է անդրադառնում երկրի տնտեսության և ֆինանսական համակարգի վրա՝ հանգեցնելով պետական բյուջեի եկամտային մասի կրճատմանը, պետության ֆունկցիաների իրականացման ֆինանսական ապահովվածության աստիճանի նվազմանը: Այդ առումով երկրում ֆինանսական կայունացմանն ուղղված միջոցառումները չեն կարող լինել արդյունավետ, քանի դեռ որակական տեղաշարժեր չեն արձանագրվում հարկերի հավաքելիության և բյուջեի կատարման գործում:

Բացի այդ, հարկման ոլորտի որոշ ցուցանիշներ, կարող են անուղղակի պատկերացում տալ տնտեսության տարբեր ճյուղերում հարկային բեռի ծանրության մասին: Պաշտոնական շատ աղբյուրներում չեն հերքում հանրապետությունում հարկային բեռի ծանր լինելու հանգամանքը, որը ձեռնարկատիրության ընդլայնմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը խոչընդոտող գործոն է: Այդ առումով, պետք է նշել, որ հարկային քաղաքականության գլխավոր խնդիրը պետք է հանդիսանա հարկային բեռի հավասարաչափ բաշխումը՝ հաշվի առնելով սոցիալական արդարության ապահովման և տնտեսության զարգացման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության տնտեսության իրական հատվածի տարբեր ոլորտներում հարկային բեռը բավականաչափ ծանր է, և հարկերը կա-

տարում են իրենց ոչ բնորոշ, այն է՝ տնտեսվարող սուբյեկտների միջոցների բռնագանձման կամ ֆիսկալ գործառույթը, խիստ անհրաժեշտություն է դառնում ավելացված արժեքի հարկի դիֆերենցված դրույքաչափի կիրառումը, հատկապես այն ոլորտներում, որոնք օբյեկտիվ պատճառներով ունեն շահութաբերության ցածր մակարդակ: Անհրաժեշտ է նաև արտադրական տեխնոլոգիական շղթայի որոշ տեղամասերի համար նվազեցնել ավելացված արժեքի հարկի դրույքաչափը, իսկ առավել ցածր շահութաբերությամբ և վնասով աշխատող ոլորտներում կիրառել գրոյական դրույքաչափ:

Հարկման տեսությունների հիմնական մոտեցումներից հետևում է, որ հարկման արդյունավետության մակարդակի վերաբերյալ հետազոտող տնտեսագետների շրջանում միասնական մոտեցում գոյություն չունի և, դեռ ավելին, այն տարբեր դիրքերից է մեկնաբանվում տարբեր հեղինակների կողմից: Սակայն, բոլորը կարևորում են հարկման արդյունավետության բարձրացումը, և տարակարծությունները հիմնականում դրա իրացման միջոցների և ուղղությունների հետ կապված հարցերի շուրջ են: Դա բնական է, քանի որ հարկման արդյունավետության մակարդակը մեծապես պայմանավորված են. մի կողմից՝ ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկով և մյուս կողմից՝ հարկ վճարողների վճարունակությամբ: Հետևաբար, «հարկման արդյունավետություն» հասկացությունը որոշակի հակասություն է պարունակում. որքան մեծ լինի հարկ վճարողների հարկային բեռը, այնքան ամուր կլինի պետության ֆինանսական վիճակը, ու քիչ կլինեն բյուջեի հաշվեկշռման խնդիրները և ընդհակառակը: Սակայն, շուկայական տնտեսություն ունեցող երկրների հարկային քաղաքականության իրականացման փորձը հիմնավորել է, որ հարկային բեռի մեծացումը նոր հարկատեսակների սահմանման ու ներդրման, հարկի դրույքաչափի բարձրացման և հարկային արտոնությունների կրճատման միջոցով սկզբնական շրջանում ապահովում է հարկային եկամուտների որոշակի բարձր ցուցանիշներ: Սակայն հաջորդող տարիներին այդ դրական ցուցանիշներին հաջորդում են արտադրության ծավալների կտրուկ անկման և, միաժամանակ, անվերականգնելի տնտեսական այնպիսի գործընթացներ, որոնք ուղղակիորեն հանգեցնում են բյուջեում եկամուտների ծավալների կրճատմանը: Այսինքն՝ արդարացի է այն կարգախոսը, որ «մեծ հարկը սպանում է հարկին»¹: Մյուս կողմից կատեսակետ այն մասին, որ հարկային բեռի նվազեցումը երկրի տնտեսությանը լուրջ վնասներ պատճառելու նախադրյալներ է ստեղծում, կամ դա կիրառում են շատ վատ ու թույլ կառավարություն ունեցող երկրները: Որպես վերջինիս օրինակ՝ հեղինակներ Ա.Վասիլևան և ուրիշներ² փաստարկում են, որ Վրաստանում և Տաջիկստանում, որտեղ հետագայում տեղի ունեցան հեղափոխություններ, և որտեղ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից հարկային բեռը ամենացածրն էր (Վրաստան 13.1% և Տաջիկստան 11.7%)³:

Այսպիսով, կարծես հիմնավորվում է մեր կողմից առաջ քաշված տեսակետը, համաձայն որի, որքան կարևոր և նույնքան էլ բարդ է «հարկային բեռի» սահմանաչափի ճիշտ որոշումը, քանի որ դրա միջոցով է հնարավորություն է ընձեռվում տալ հետևյալ հարցերի սպառնիչ պատասխանները.

- արդյունավետ է արդյոք պետության հարկային համակարգը,
- որքանով է այն բավարարում պետության ֆինանսական պահանջները,
- նպաստում է արդյոք հարկ վճարողների տնտեսական ակտիվությանը,
- տնտեսվարման ի՞նչ ուղիներ են առաջարկվում ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման նպատակով:

Վերոհիշյալ հիմնահարցերի լուծման տարբեր մոտեցումներով են պայմանավորված «հարկային բեռի» սահմանաչափի շուրջ գոյություն ունեցող տարակարծությունները:

Հարկային բեռի սահմանման համար կիրառվում է նաև «*հարկերի առաձգականության գործակիցը*», որը բնութագրում է տնտեսական գործոնների (համախառն ներքին արդյունքի, ազգաբնակչության եկամուտների, մանրածախ կամ սպառողական զնի մակարդակի) ազդեցությունը հարկերի ծավալների փոփոխությունների վրա: Այսպես, որպես հարկային

¹ Дорнбуш Г., Фишер С., “Основы макроэкономики”. М.: Инфра-М, 1997, стр. 79-80 (784 с.).

² А. Васильева, Е. Гурвич, В. Субботин, “Экономический анализ налоговой реформы” М.: ГУ-ВШЭ, 2003, стр. 31-33.

³ <http://doingbusiness.org/data/exploretopics/paying-taxes>

քաղաքականության իրականացման հիմնական մակրոտնտեսական չափանիշ կիրառվում է հարկային բյուջանիսի (k)¹ կամ հարկային էլաստիկությունն արտահայտող ցուցանիշը: Այն որոշվում է հարկային եկամուտների տոկոսային փոփոխության և ՀՆԱ-ի տոկոսային փոփոխության հարաբերության միջոցով:

Այսպես, 2000-2010թթ. ՀՀ-ում հարկային բյուջանիսի (k=1.1) մեծությունը մեկից բարձր է: Սակայն հարկային եկամուտների էլաստիկության գործակիցը, ԱՊՀ մյուս երկրների համեմատությամբ, խիստ ցածր է: Օրինակ, 2000-2007 թթ. հարկեր/ՀՆԱ ցուցանիշը հանրապետությունում բարելավվել է շուրջ 2 անգամ, և 2010 թ. այն կազմել է 17.7% (աղյուսակ 1):

Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ է դառնում, որ հանրապետության հարկային եկամուտներում գերակշռող մասնաբաժին ունեն անուղղակի հարկերը (2010թ. դրանց մեծությունը կազմել է 349.8 մլրդ ՀՀ դրամ), որոնց ուղղությամբ փաստացի վճարումները «ծանրացած են», հիմնականում, ցածր կենսամակարդակ ունեցող ազգաբնակչության, ինչպես նաև փոքր ու միջին գործարարների վրա, քանի որ խոշոր հարկատուները «վարպետորեն» խուսափում են իրենց հասանելիք հարկերի վճարումներից:

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեում հարկային եկամուտների և անվանական ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի դինամիկան 2000-2010 թթ. (մլրդ ՀՀ դրամ)²

Հարկային ցուցանիշներ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	172.1	193.6	228.3	292.0	302.2	374.7	441.5	588.0	800.8	711.7	804.3
Հարկային եկամուտներ տուրքեր	152.6	168.8	198.6	227.4	267.0	321.5	385.1	505.0	634.5	539.9	613.0
Ավելացված արժեքի հարկ	66.8	79.5	95.0	107.8	117.9	146.8	165.9	248.0	318.3	254.2	301.7
Ակցիզային հարկ	26.1	31.0	35.3	39.1	40.7	38.6	39.9	41.5	48.9	42.7	48.1
Եկամտահարկ	13.4	11.2	12.5	16.8	20.4	26.6	35.5	46.8	53.7	60.2	74.0
Շահութահարկ	20.4	16.3	17.4	17.6	32.0	46.6	65.3	75.5	86.2	81.8	77.8
Գույքահարկ	0.1	0.2	0.1	0.1	-0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Հողի հարկ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Մաքսատուրք	8.7	9.8	9.7	10.7	12.5	16.5	18.3	24.0	37.3	25.1	29.4
Հաստատագրված վճար	4.0	4.4	6.4	8.0	11.7	13.0	15.1	17.9	20.3	22.8	22.0
Այլ հարկային եկամուտներ	4.1	2.4	9.1	12.1	15.0	16.2	26.2	29.9	48.9	48.2	12.0
Պետական տուրք	8.9	13.9	13.2	15.2	16.9	17.3	18.9	21.9	24.0	21.3	23.1
Անվանական ՀՆԱ	1031.3	1175.9	1362.5	1624.6	1907.9	2242.9	2657.1	3139.4	3568.2	3141.7	3461.9

Թերևս այդ հանգամանքով է պայմանավորված այն, որ ՀՀ կառավարության առաջնահերթ նպատակներից է եկամուտների մոբիլիզացումը: Ուստի, այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հարկային վարչարարության բարեփոխումներ:

ՀՀ տնտեսության ընդլայնման և հարկային եկամուտների աճի միջև կապը թույլ է արտահայտված: Այսինքն՝ հարկային եկամուտների էլաստիկության գործակցի մեկից փոքր լինելը նշանակում է, որ ՀՆԱ-ի աճը չի ուղեկցվում հարկային եկամուտների համարժեք աճով: Արդյունքում տեղի է ունենում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աստիճանական նվազում: Բացի այդ, ավելի փոքր է ուղղակի հարկերի էլաստիկության գործակիցը. ՀՆԱ-ի 1% աճին համապատասխանում է ուղղակի հարկեր/ՀՆԱ հարկային եկամուտների ցածր հարաբերական մակարդակ:

Հարկային եկամուտների ցածր հարաբերական մակարդակը չի կարելի միարժեքորեն պայմանավորել այն հանգամանքով, որ հանրապետությունը գտնվում է ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումների փուլում, և հարկային համակարգի կազմավորման և կայացման աշխատանքները դեռևս շարունակվում են: Այդ գործընթացը բնորոշ է նաև ԱՊՀ մյուս պետություններին: Իսկ ՀՀ հարկային համակարգի բարեփոխումները սկսվել են շատ

¹ William Beach, “Why Taxes Affect Economic Growth?” Heritage Foundation, 1998, 6 p.

² www.taxinfo.am/reports.ph

ավելի վաղ և արվել են շատ ավելի խոր և հիմնավոր կերպով, քան որոշ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում¹:

Արևմուտքի երկրների և ԱՊՀ պետությունների հարկային համակարգերի միջև գոյություն ունեցող հայեցակարգային տարբերությունները պայմանավորված են օբյեկտիվ գործոններով: Բացի այդ, եթե ԱՊՀ երկրների հարկային համակարգերը կառուցվում են ընդամենը 15 տարվա ընթացքում, ապա զարգացած երկրներում այդ գործընթացը տևում է տասնամյակներ և նույնիսկ դարեր:

Հետևաբար՝ Արևմուտքում հարկման նորմերի երկակի մեկնաբանման խնդիրները լուծվում են հարկային օրենսդրության բոլոր արարողակարգերի հանգամանալի կանոնակարգման միջոցով՝ քաղաքացիների հարկային կուլտուրայի բարձր մակարդակի պայմաններում²:

Ներկայումս, կարծում ենք, հասունացել է հարկային օրենսդրության մեջ և հարկային վարչարարության ոլորտը կարգավորող իրավական դաշտում էական բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Բացի այդ, հարկերը պետք է գանձվեն ոչ թե բյուջեում եկամուտ ապահովելու համար, այլ այն պատճառով, որ այդպիսին են խաղի կանոնները, դրանք հավասար են բոլորի համար, ուստի բոլորն էլ պետք է ենթարկվեն այդ կանոններին: Անհրաժեշտ է հրաժարվել բյուջեի, որպես անմիջական կառավարման համակարգի, հարկային եկամուտների պլանավորումից, փոխարենը իրականացնելով ինդիկատիվ պլանավորում, որը տնտեսվարող սուբյեկտի գործունեության կանխատեսման արդյունքն է: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ապահովել հարկային համակարգի առավելագույն պարզությունը և հավասարագործությունը բոլոր սուբյեկտների նկատմամբ՝ իրագործման առավելագույն թափանցիկություն, հարկատուի անմեղության սկզբունքի ապահովում և օրինախախտների նկատմամբ պատժի սահմանում, իսկ հարկերի չվճարումը դիտարկել և իրավաբանորեն սահմանել որպես կատարված քրեական հանցագործություն:

ՀՀ հարկային օրենսդրության անկատարությունը և հարկային ծառայողների հետ գաղտնի համաձայնության գալու փոխհարաբերությունները հնարավորություն են ընձեռնում հարկ վճարողներին խուսափել հարկերը վճարելուց: Բացի այդ, տարբեր տարածաշրջաններում և ոլորտներում թերհայտարարագրվող եկամուտների ծավալները տարբեր են: Այսպես, ՀՀ-ում ընկերություններն առավել հաճախ թերհայտարարագրում են հյուսիսային և ավելի քիչ՝ հարավային տարածաշրջաններում և Երևանում, իսկ արտադրության մեջ ներգրավված տնտեսվարող սուբյեկտներն ավելի շատ են խուսափում հարկերից՝ տնտեսության այլ ոլորտներում ներգրավված տնտեսվարող սուբյեկտների համեմատ:

Այսպես, տարբեր տարածաշրջաններում, ոլորտներում և տնտեսվարող սուբյեկտների մոտ թերհայտարարագրման ծավալները և պատճառները բացահայտելու համար առավել խորքային և բազմագործոնային վերլուծություն է անհրաժեշտ իրականացնել:

Ուստի, փորձելով ներկայացնել, բացահայտել և գնահատել այդ հիմնախնդրի կարևորության աստիճանը, մեր կողմից փորձ է կատարվում հիմնավորելու տնտեսվարող սուբյեկտների շրջանառության ծավալների թերհայտարարագրման պատճառները՝ հիմք ընդունելով ՀՀ տարածաշրջանային բաժանումը: Ընդ որում, տնտեսվարող սուբյեկտների շրջանում, մասնավորապես, միջին և խոշոր ընկերություններում եկամուտների թերհայտարարագրման եղանակը գործում է Երևանում և հանրապետության կենտրոնական տարածաշրջանում: Այսպես, Պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակված պաշտոնական տվյալների համաձայն, եկամուտների թերհայտարարագրվող ընկերությունների 55 տոկոսի մոտ 2010թ. ստուգումներ են անցկացվել: Այլ խոսքով՝ նշված ընկերությունների 45 տոկոսը ստուգումների չի ենթարկվել: Իսկ 2010թ. հասույթի իրական մեծությունը հայտարարագրած ընկերություններից 56 տոկոսի մոտ ևս հարկային ստուգումներ են անցկացվել (աղյուսակ 2):

¹ Morek Pabrowski, Magdalena Tomerynska, "Tax Reforms in Transition Economics"- "Center for Social and Economic Research"- A Mixed Record and Complex Future Agenda, Warsaw, 2001, 36 p.

² www.fiscalreform.net/publications.php

Ստուգումների ենթարկված և չենթարկված ընկերությունների մասնաբաժինը՝ ըստ պաշտոնապես հայտարարագրված շրջանառության, %-ով


	Ստուգման ենթարկված	Ստուգման չենթարկված
Թերհայտարարագրված	55	45
Պաշտոնապես հրապարակված	56	46

Սա նշանակում է, որ հարկային մարմինն առանձին հարկ վճարողի կողմից եկամուտների թերհայտարարագրման ռիսկը հաշվի չի առնում, այսինքն՝ հարկերն ամբողջությամբ վճարած և հարկերից խուսափող ընկերությունների համար ստուգումների մակարդակը նույնն է:

Այսպիսով, եկամուտների թերհայտարարագրումը հարկերից խուսափելու ամենատարածված եղանակն է ՀՀ բիզնես միջավայրի համար, որը կազմում է հարցվողների 52 տոկոսը: Բացի այդ, հարկերից խուսափելու եղանակներից է համարվում նաև չձևակերպված աշխատավարձի վճարումը, որը կազմում է ՀՀ տնտեսվարող սուբյեկտների հարցման արդյունքում ընկերությունների 26 և անհատ ձեռնարկատերերի 16.5 տոկոսը (գծապատկեր 1):

Գծապատկեր 1

ՀՀ ընկերություններ և անհատ ձեռնարկատերեր) հարկերից խուսափելու ամենատարածված եղանակները, %¹



Այսպիսով, ամփոփելով հարկերից խուսափելու ամենատարածված եղանակների մասին կատարված վերլուծության արդյունքները, կարող ենք եզրակացնել, որ պետությունն ու հարկային մարմինը չպետք է մոռանան հարկային օրենսդրության և վարչարարության համակարգի կատարելագործման մասին, որը թույլ կտա կրճատել հարկերից խուսափելու հնարավորություն ընձեռնող գործոնները, ինչպես նաև կխթանի բարենպաստ գործարար միջավայր ՀՀ-ում:

Այսպես օրինակ, թերհայտարարագրված շրջանառության մասնաբաժինը փոքր-ինչ տարբերվում է՝ ըստ ոլորտների: Սպասարկման և այլ ոլորտներում գործող ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի շրջանակներում թերհայտարարագրվող շրջանառության ծավալներն ավելի փոքր են՝ արտադրության և առևտրի ոլորտներում զբաղվածների համեմատ: Այսինքն, որքան մեծ է ընկերության հասույթը, այնքան փոքր է հարկումից խուսափելու նպատակով շրջանառությունը թաքցնելու միտումը, իսկ անհատ ձեռնարկատերերի մոտ այդ օրինաչափությունը դրսևորում է հակադարձ ուղղվածություն:

¹ Ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություն, «Հարկային համապատասխանության արժեքը ՀՀ-ում», Երևան 2011թ. էջ 145:

**Ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից պաշտոնապես
հայտարարագրվող և թերհայտարարագրվող շրջանառության մասնաբաժինը՝
ըստ տարեկան հասույթի մեծության¹**

Ընկերություններ			Անհատ ձեռնարկատերեր		
Թերհայտարարագրվող	Պաշտոնապես հայտարարագրվող	Տարեկան հասույթ	Թերհայտարարագրվող	Պաշտոնապես հայտարարագրվող	Տարեկան հասույթ
20%	80%	մինչև 5 մլն դրամ	5%	95%	մինչև 1 մլն դրամ
16%	84%	5-29.99 մլն	17%	83	1-5մլն դրամ
17%	83%	30-58.35 մլն դրամ	21%	79%	ավելի քան 5մլն դրամ
10%	90%	ավելի քան 58.35 մլն դրամ			
7%	93%	խոշոր հարկ վճարողներ (ԽՀՎ)			

Ինչպես ցույց է տալիս աղյուսակ 3-ում շրջանառության տարբեր ծավալների ունեցող ընկերությունների թերհայտարարագրման մասին տվյալների համեմատական վերլուծությունը, որքան բարձր է ընկերության հասույթը, այնքան փոքր է թերհայտարարագրվող եկամուտների ծավալը: Մինչև 58.35 մլն ՀՀ դրամ հասույթ ունեցող ընկերությունների թերհայտարարագրվող շրջանառության տեսակարար կշիռը 16-20% է կազմում, իսկ խոշոր հարկ վճարողների համար՝ մինչև 11 %:

Միաժամանակ անհատ ձեռնարկատերերի համար այդ օրինաչափությունը դրսևորում է հակադարձ զարգացվածության միտում: Այլ խոսքով, որքան մեծ է վերջիններիս հասույթի մեծությունը, այնքան ավելի մեծ է թերհայտարարագրվող եկամուտների ծավալը: Այդ օրինաչափությունը կարելի է հիմնավորել եկամտահարկի դրույքաչափի աճող բնույթով: Եթե անհատ ձեռնարկատիրոջ տարեկան եկամուտը գերազանցում է 960000 ՀՀ դրամը, ապա հարկման դրույքաչափը կրկնապատկվում է:

Այսպիսով, 1 մլն ՀՀ դրամից ցածր և այդ շեմից բարձր եկամուտ ունեցող անհատ ձեռնարկատերերի միջև հսկայական տարբերությունը, որը երևում է աղյուսակ 3-ում, էական հարկային բեռ է:

Ուստի, մեր կողմից կատարված վերլուծության արդյունքների հիման վրա, կարող ենք հիմնավորել հարկերից խուսափելու դեպքերը կանխելու համար համալիր միջոցառումների մշակման անհրաժեշտությունը՝ ուղղված հարկային օրենսդրության կատարելագործմանը, մասնավորապես պատժամիջոցների վերանայված համակարգին: Այսպես, հարկ վճարողների և հարկային ծառայողների միջև ոչ պաշտոնական համաձայնության դեպքերը կանխելու համար անհրաժեշտ է հետևողական քաղաքականություն իրականացնել հարկային ծառայողների նկատմամբ: Ընդ որում, վերահսկողության գործող համակարգը հնարավորություն է տալիս խուսափել հարկերից, իսկ վերահսկող մարմինների մասնագիտական հմտությունների պակասի պատճառով հարկ վճարողները կարողանում են խուսափել հարկերից:

Ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում առաջ քաշված հիմնախնդիրը, ինչպես ուսումնասիրությունը ևս մեկ անգամ ցույց տվեց, գտնում ենք, որ ՀՀ-ում հարկային քաղաքականության զարգացման լուրջ անհրաժեշտություն կա: Երևի թե, ճիշտ կլինեք հարկային բեռը համապատասխանեցնել երկրի տնտեսության ընդհանուր մակարդակին: Սակայն, սա իրականացնելու համար անհրաժեշտ է փոքրացնել ստվերը, կանոնակարգել իրականացվող քաղաքականությունը:

¹ Ներդրումային միջավայրի խորհրդատվական ծառայություն, «Հարկային համապատասխանության արժեքը ՀՀ-ում», Երևան, 2011թ., էջ 143-144:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ՈՐՊԵՍ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ ՄԻՋՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՆ**

Տնտեսավարման ներկա պայմաններում արտադրության և սպառման միջև ընկած է մի հսկայաժավալ ոլորտ՝ յուրահատուկ օրինաչափությունների, ենթակառուցվածքների, ինստիտուցիոնալ կառույցների, մասնակիցների և շրջանառող գործիքների ամբողջությամբ հանդերձ, որը բնութագրում է շուկայի բովանդակությունը:

Շուկան որպես այդպիսին բնութագրելու նպատակով անհրաժեշտ է այն դիտարկել երկու տեսանկյունից: Մի կողմից՝ որպես տնտեսական կատեգորիա՝ հիմնական հասկացություն, ճանաչողական ընդհանրացում, իսկ մյուս կողմից՝ որպես դրա դրսևորման կոնկրետ ձև: Որպես տնտեսական կատեգորիա՝ շուկան հարաբերությունների ամբողջություն է, որն առաջանում է ապրանքներ, ծառայություններ, ֆինանսական և այլ ակտիվներ վաճառողների ու դրանց գնորդների միջև:

Որպես դրսևորման կոնկրետ ձև՝ շուկան մեխանիզմ է, վայր, միջնորդ կազմակերպություն, որը, համախմբելով առանձին ապրանքների գնորդներին, որոնք միևնույն ժամանակ պահանջարկի ներկայացուցիչներ են և վաճառողներին, որոնք հանդես են գալիս որպես առաջարկողներ, ապահովում է այդ հարաբերությունների իրացումը: Այս տեսանկյունից դիտարկելով (որպես դրսևորման ձև)՝ շուկան շատ բազմազան է, ունի շատ տարատեսակներ և, կախված տարբեր բնութագրերից, ամենատարբեր դասակարգումներ: Առավել ընդհանուր դասակարգմամբ տարբերակում ենք ապրանքային, աշխատանքային և ֆինանսական շուկաները:

Այդ հիմնական դասակարգման հիմքում ընկած է այն առանցքային սկզբունքը, թե ինչն է գործարքի առարկան կամ այլ կերպ ասած՝ ինչ է գնվում և վաճառվում շուկայում: Այսպիսով՝ ավելի քան հանրահայտ է, որ ապրանքային շուկաներում գնվում և վաճառվում են ապրանքներ և ծառայություններ, իսկ փողն այստեղ ընդամենը շրջանառության և վճարման միջոց է: Աշխատանքային շուկաներում գնվում և վաճառվում է «աշխատուժ ապրանքը», և փողն այստեղ ծառայում է որպես վարձատրության միջոց, պարզապես կամ այլ կերպ՝ վճար: Ինչպես տեսնում ենք, այս երկու շուկաներում էլ փողը հիմնականում ծառայում է որպես վճարման միջոց: Իսկ երբ շուկայում առք ու վաճառքի առարկան փողն է, ֆինանսական ակտիվները և շուկան կոչվում են ֆինանսական:

Ֆինանսական շուկան իրեն բնորոշ հարաբերություններով, յուրահատուկ օրինաչափություններով, ենթակառույցների, ինստիտուցիոնալ կառույցների, մասնակիցների և շրջանառվող գործիքների ամբողջությամբ տնտեսական աճի ապահովման գործունակ և հզոր համակարգ է: Դեռ ավելին՝ տնտեսության շուկայավարման պայմաններում «խնայողություններ-ներդրումներ-տնտեսական աճ» շղթայի փոխադարձ կապն ու գործողությունը դրսևորվում են ֆինանսական շուկայում և իրականացվում են վերջինիս գործառնությունների շնորհիվ:

Ֆինանսական շուկայի ընդհանուր բովանդակությունը և հատվածները մանրամասն ու տպավորիչ կարելի է տալ գծապատկերով (գծապատկեր 1): Ինչպես գծապատկեր 1-ն է արտացոլում, տնտեսության մեջ ցանկացած ժամանակահատվածում առկա են անձինք, որոնք հնարավորություն ունեն և պատրաստ են իրենց դրամական միջոցները վաճառելու: Ֆինանսական շուկայում դրանք կոչվում են ավելցուկային բյուջե ունեցող անձինք (ԱԲՈՒԱ), որոնք շուկայում ձևավորում են դրամական միջոցների նկատմամբ առաջարկը: Դրանք կարող են լինել քաղաքացիները (քաղաքացիների միջոցները ընտանեկան խնայողություններն են և կազմում են արտադրություն ներգրավվող ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը), ընկերությունները, պետությունը, տարածքային կառավարման մարմինները, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները և այլն: Ավելցուկային բյուջե ունեցող անձինք ֆինանսական շուկայում վաճառում են իրենց իսկ սեփական միջոցները և այդ պատճառով էլ կոչվում են հիմնական, իրական կամ առաջնային վաճառողներ՝ անկախ

նրանից, թե ում են վաճառում դրանք՝ անմիջապես գնորդների^օ, թե՞ ֆինանսական միջնորդներին:

Մյուս կողմից՝ տնտեսության մեջ միշտ առկա են անձինք, որոնք այս կամ այն պատճառով ունեն դրամական միջոցների պակաս և ցանկություն ունեն դրանք գնելու: Ֆինանսական շուկայում դրանք կոչվում են պակաստրդային բյուջե ունեցող անձինք (ՊԲՌԲԱ), որոնք ձևավորում են դրամական միջոցների նկատմամբ պահանջարկը: Այդ անձինք նույնպես կարող են լինել քաղաքացիները, ընկերությունները, այդ թվում, ֆինանսական և բանկային կազմակերպությունները, պետությունը, տարածքային կառավարման մարմինները, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները, այլ պետությունները և այլն: Պակաստրդային բյուջե ունեցող անձինք դրամական միջոցները գնում են վերջնական սպառման, իրենց կարիքների բավարարման նպատակով, դրանք միջոցների վերավաճառման նպատակ չեն հետապնդում և ձևավորում են հիմնական, իրական պահանջարկը, որն էլ դառնում է տնտեսության մեջ իրական ներդրումներ կամ էլ գնում է վերջնական սպառման (քաղաքացիների և պետական որոշ ծախսերի դեպքում):

Դրամական միջոցները ֆինանսական շուկայում վաճառողներից գնողներին կարող են անցնել հիմնականում երկու եղանակով: *Առաջին դեպքում*, դրամական միջոցները հիմնական վաճառողներից՝ դրանց սեփականատերերից, հիմնական գնորդներին են անցնում անմիջականորեն, այսինքն՝ ֆինանսական փոխհարաբերությունները ձևավորվում են անմիջականորեն վաճառողների և գնողների միջև: *Երկրորդ դեպքում*, դրամական միջոցները սեփականատերերից վերջնական սպառողներին են անցնում ֆինանսական հատուկ ինստիտուցիոնալ կառույցների՝ խնայողական և առևտրային բանկերի, ներդրումային և կենսաթոշակային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների և այլնի միջոցով, որոնք կոչվում են ֆինանսական միջնորդներ: Փաստորեն, ֆինանսական միջնորդները մի կողմից հավաքագրում են դրամական միջոցները հիմնական, իրական վաճառողներից և մյուս կողմից դրանք տարբեր ձևերով տրամադրում են վերջնական, իրական սպառողներին: Այս դեպքում ֆինանսական փոխհարաբերությունները ձևավորվում են մի կողմից իրական վաճառողի և ֆինանսական միջնորդի, իսկ մյուս կողմից՝ ֆինանսական միջնորդի և վերջնական գնորդի՝ սպառողի միջև:

Ֆինանսական շուկայի այն հատվածը, որն ընդգրկում է ֆինանսական միջնորդների հետ կապված հարաբերությունների համակարգը, կոչվում է փոխատվական կապիտալի շուկա (գծապատկեր 1): Շուկայի այս հատվածը շատ կարևոր նշանակություն ունի տնտեսության զարգացման համար, ինչը բացատրվում է նաև ֆինանսական միջնորդ կառույցների գործունեությամբ, որոնք ապահովում են մշտական ֆինանսական հոսքեր առաջնային, ընտանեկան, փոշիացած, կարճաժամկետ խնայողություններից դեպի իրական հատված, դեպի իրական ներդրումներ: Բացի այդ, փոխատվական կապիտալի շուկայում ձևավորվում է կապիտալի շուկայական գինը, այսինքն՝ այն, թե ինչ կարող է նստել միավոր դրամական միջոցը վերջնական սպառողի վրա՝ իհարկե, կախված ժամկետներից և տրվող իրավունքների համախմբից: Միաժամանակ շուկայի այս հատվածում առաջնային վաճառողները հաճախ կոչվում են փոխատուներ, իսկ վերջնական գնողները՝ փոխառուներ:

Իսկ ֆինանսական շուկայի այն հատվածում, որտեղ դրամական միջոցները վաճառողներից գնողներին են անցնում, որպես ֆինանսական գործիքներ ծառայում են արժեթղթերը, և շուկայի այս հատվածը, որն ընդգրկում է արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և շրջանառության հետ կապված փոխհարաբերությունների համակարգը, արժեթղթերի շուկան է (գծապատկեր 1): Ֆինանսական շուկայի այս հատվածում դրամական միջոցներ գնողները կոչվում են արժեթղթեր թողարկողներ, իսկ վաճառողները՝ արժեթղթերում ներդրողներ:


Բացի այդ, ֆինանսական շուկան հատվածավորվում է նաև դրամի և կապիտալի շուկաների: Ֆինանսական շուկայի այն հատվածը, որտեղ դրամական միջոցները վաճառվում են մինչև մեկ տարի ժամկետով, կոչվում է դրամի շուկա, իսկ այն հարաբերությունների համակարգը, որի պայմաններում դրամական միջոցները վերջնական սպառողներին են տրվում մեկ տարուց ավելի ժամկետով, կոչվում է կապիտալի շուկա:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, դրամի շուկան ներառում է հատվածներ և՛ փոխատվական կապիտալի, և՛ արժեթղթերի շուկաներից, այն է՝ մինչև մեկ տարի ժամկետով

Ֆինանսական պարտավորությունները: Նույնը պետք է ասել կապիտալի շուկայի համար, որն ընդգրկում է նշված հատվածների մեկ տարուց ավելի ժամկետով ֆինանսական հարաբերությունները:

Գծապատկեր 1

Ֆինանսական շուկայի կառուցվածքը



Տնտեսավարման ներկա պայմաններում ֆինանսական շուկայի կարևոր հատվածը դրամի շուկան է: Դրամի շուկան, իր հերթին, ստորաբաժանվում է մի քանի առանձին շուկաների, որտեղ կատարվում է առանձին կոնկրետ պարտավորությունների և ֆինանսական գործիքների առք ու վաճառքը: Դրանց թվին են դասվում, օրինակ, պետական կարճաժամկետ պարտատոմսերի, միջբանկային վարկերի, արտարժույթի, բանկային հավաստագրերի, առևտրային արժեթղթերի, մուրհակների շուկաները:

Դրամի շուկաները տնտեսության մեջ ունեն շատ կարևոր նշանակություն: Դրանք ֆինանսավարկային և այլ կազմակերպությունների ապահովում են իրենց ակտիվների իրացվելիության ճշգրտման համար արդյունավետ ֆինանսական գործիքներով: Տնտեսավարող ցանկացած անձ, ֆինանսական ինստիտուտ, առևտրային կամ արդյունաբերական կազմակերպություն կամ պետական կառույց ժամանակ առ ժամանակ առնչվում են իրենց ակտիվների իրացվելիության կառավարման խնդիրներին: Պատճառն այն է, որ դրամական միջոցների մուտքերի ժամկետները շատ հաճախ չեն համընկնում ծախսերի կատարման ժամկետների հետ: Նման անհամապատասխանությունը արդյունավետ կերպով կարգավորվում է դրամի շուկայի օգնությամբ և միջոցով: Օրինակ, եթե որևէ կազմակերպություն ունի ժամանակավորապես ազատ դրամական միջոցներ, որոնց ծախսումը կատարվելու է հետո, ապա դրանք սովորական հաշվարկային կամ ցպահանջ հաշիվներում պահելը արդյունավետ չէ՝ արժեզրկման և տնտեսական պայմանների փոփոխության պատճառով: Բացի այդ, նշված դրամական միջոցները կարող են բերել տոկոսային եկամուտ: Ուստի, անձը կարող է իր դրամական միջոցներն ուղղել դրամի շուկա՝ ներդնելով դրանք բանկային հավաստագրերում, կարճաժամկետ փոխառություններում կամ առևտրային արժեթղթերում կամ էլ դրամի շուկայի ֆինանսական այլ գործիքներում, և ստանալ որոշակի եկամուտ:

Ֆինանսական շուկայի հաջորդ կարևոր հատվածը՝ կապիտալի շուկան, ընդգրկում է ֆինանսական երկարաժամկետ հարաբերությունների համակարգը: Կապիտալի շուկայի դերն ու նշանակությունը հասարակական արտադրության ֆինանսավորման գործում այն է,

որ այն արտադրության հիմնական օղակներին, մասնավորապես տնտեսական ընկերություններին և ընկերակցություններին ապահովում է երկարաժամկետ ֆինանսական միջոցներով կամ, այլ կերպ ասած, կապիտալով: Վերջինս հնարավոր է իրականացնել շնորհիվ կապիտալի շուկայի ֆինանսական գործիքների, մասնավորապես բաժնետոմսերի և պարտատոմսերի:

Երբեմն տնտեսավարող անձինք և հատկապես ընկերությունները կազմակերպում են արտադրություն, հայթայթում են համապատասխան արտադրության միջոցներ, շենքեր, շինություններ, սակայն հնարավորություն չունեն ամբողջությամբ վճարելու դրա դիմաց: Մեկ այլ դեպքում նշված անձինք ուղղակի ցանկություն չունեն միայնակ իրականացնելու տվյալ գործունեության ֆինանսավորումը և միայնակ կրել տվյալ արտադրության հետ կապված ռիսկը, հետևաբար ներգրավում են այլ անձանց՝ դրամական միջոցներով հանդերձ: Երկու դեպքում էլ, այլ անձանց միջոցների ներգրավումը հնարավոր է դառնում այդ ներդրողին որոշակի իրավունքներ տալու միջոցով: Թերևս, այդ է պատճառը, որ կապիտալի շուկան հաճախ կոչվում է իրավունքների շուկա:

Այսպիսով, ամփոփելով սույն հոդվածով առաջադրված հիմնահարցերը, կարող ենք եզրակացնել, որ ֆինանսական շուկաները բազմազան են և դասակարգվում են նաև բազմաթիվ այլ բնութագրիչներից ելնելով: Մասնավորապես, դրանք կարող են լինել առաջնային կամ երկրորդային, բորսայական կամ արտաբորսայական, սփոթ (ընթացիկ) կամ ժամկետային, արժույթային, միջբանկային վարկերի, բաժնետոմսերի, պետական կարճաժամկետ պարտատոմսերի, մունիցիպալ պարտատոմսերի, ապահովագրական վճարների, լիզինգային շուկաների և այլն: Ֆինանսական շուկաներում բոլոր այլ շուկաների նման տեղի են ունենում միանման գործընթացներ: Անձինք այստեղ վաճառում և գնում են, սակարկում և բանակցություններ են վարում, վճարում և մատակարարում են և, վերջապես, շահում ու կորցնում են:

ԱՐՄԵՆ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ

*ՏՊ ԳԱԱ Մ. Լոթսոնյանի անվան
լոնդոնաագիտության ինստիտուտի հայցորդ*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական համակարգում բազմաբնույթ հիմնախնդիրները և դրանց կարգավորումը պահանջում են շուկայական հարաբերություններին անցման ուղղությամբ բարեփոխումների իրականացում, բնակչության պահանջումների բավարարում և կենսամակարդակի հետևողական բարձրացում: Անշուշտ, այդ խնդիրների լուծումն արդյունավետ կարող է լինել միայն համապատասխան ուղղությամբ համալիր հետազոտությունների իրականացման արդյունքում գիտականորեն հիմնավորված մոտեցումների մշակման և գործնական կիրառման դեպքում:

Ընդհանուր առմամբ, տնտեսության զարգացման նպատակով ծրագրային մոտեցումների կիրառումը և նպատակային ծրագրերի մշակումը, անցումային տնտեսության առանձնահատկություններով պայմանավորված, խիստ տրամաբանական է, ինչը պայմանավորված է տնտեսական համակարգում ճգնաժամային երևույթների խորացման միտումներով և շուկայական հարաբերություններին անցման տեմպերի արագացման անհրաժեշտությամբ: Մակայն պետք է նշել, որ հանրապետությունում դեռևս այդ ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացումը, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ գործունեության իրականացումը բավարար մակարդակի վրա չէ, ինչի ուղղակի հետևանք է առկա խնդիրների իրավիճակային՝ ոչ լիարժեք և ամբողջական լուծումը: Միևնույն ժամանակ, պետք է նաև նշել այն, որ տնտեսական համակարգում առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ հանրապետությունում կիրառվում են ծրագրա-

նպատակային մոտեցումների որոշակի տարրեր, որոնք կարող են որոշակի նախադրյալ հանդիսանալ մյուս համակարգերի ձևավորման և զարգացման համար:

Հայաստանի Հանրապետությունում «երկրորդ» սերնդի բարեփոխումների իրականացման փուլում տնտեսական հիմնախնդիրների լուծման ընթացքում ծրագրանպատակային մոտեցման մի շարք բնութագրական, իսկ ավելի հաճախ՝ էական կողմերը, չեն օգտագործվում, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է համակարգված վերլուծության սկզբունքների կիրառման անհետևողականությամբ:

Ուստի, բյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացումն ուղղակիորեն պայմանավորված է բյուջետային գործընթացի կազմակերպական և օրենսդրաիրավական մեխանիզմների կատարելագործմամբ:

Այսպես, բյուջետային գործընթացը պետական իշխանության մարմինների օրենսդրորեն կանոնակարգվող գործունեությունն է պետական և տեղական բյուջեների կազմման, քննարկման, հաստատման, կատարման և վերահսկողության ուղղությամբ: Դրա բովանդակությունը, ըստ էության, պայմանավորված է պետական կառուցվածքով և համապատասխան պետական մարմինների բյուջետային իրավասություններով: Բյուջետային գործընթացի բոլոր փուլերը փոխկապակցված են և հասարակության քաղաքական և տնտեսական կյանքի ուղղակի արտացոլումն են: Դրանց տևողությունը, համաձայն ուսումնասիրությունների, տարբեր երկրներում միմյանցից որոշակիորեն տարբերվում է՝ հասնելով մինչև 3 տարի:

Պետք է նշել, որ բյուջետային գործընթացում հատկապես կարևորվում է բյուջեի նախագծի մշակման նպատակով իրականացվող ֆինանսական կանխատեսումների գործընթացը: Որպես կանոն, այդ նպատակով հիմնականում օգտագործվում են հետևյալ մեթոդները.

1. Էքստրապոլյացիայի մեթոդ, այսինքն՝ կանխատեսումներն իրականացվում են նախորդ տարիների դինամիկայից ելնելով: Սակայն այդ մեթոդը հիմնականում կիրառելի է բյուջեի առանձին հոդվածների գծով, որոնք ունեն առավել կայուն բնույթ:
2. Փորձագիտական գնահատումների մեթոդ, այսինքն՝ համապատասխան փորձագետների կողմից առանձին ճյուղերի և ոլորտների զարգացման գիտականորեն հիմնավորված կանխատեսում:
3. Նշված երկու մեթոդների զուգակցում, որի դեպքում հաշվի են առնվում ինչպես զարգացման օբյեկտիվ միտումները, այնպես էլ համապատասխան մասնագիտական գնահատումները:

Որպես էքստրապոլյացիայի մեթոդի կիրառման առանձին մոտեցում կարող են օգտագործվել ռեգրեսիոն շարքերը, որոնց հուսալիությունը բարձրանում է համապատասխան գործոններից կանխատեսվող բյուջետային ցուցանիշների կախվածությունը ցույց տվող լայնամասշտաբ կորելացիոն մոդելների կառուցման դեպքում: Հետևաբար, բյուջետային կանխատեսումներին պետք է նախորդ են բյուջեի ձևավորման վրա ազդող գործոնների բացահայտումը և դրանց ազդեցության գնահատումը: Որպես այդպիսիք կարելի է նշել տնտեսության մեջ տեղի ունեցող որակական և քանակական տեղաշարժերը, պետական ֆինանսների դինամիկան, արտադրողական ուժերի զարգացումը, ժողովրդագրական փոփոխությունները և այլն:

Պետական բյուջեի հիմնական ցուցանիշների կանխատեսման համար կարող են օգտագործվել նաև բյուջետային եկամուտների ծավալի և համախառն ներքին արդյունքի միջև կորելացիոն կապերը: Ծախսերի ծավալի կանխատեսման համար իրականացվում է տնտեսական և վիճակագրական խոր վերլուծություն, հաշվարկվում է ակնկալվող եկամուտների ծավալը, սահմանվում են պետության ծախսային քաղաքականության գերակայությունները, և մշակվում են առկա ռեսուրսների առավել արդյունավետ և նպատակային օգտագործման տարբերակներ:

Փաստորեն, բյուջետային ծրագրումը երկրի տնտեսական զարգացման արդյունավետ տարբերակի ընտրության համար բյուջեի եկամտային և ծախսային մասերի իրատեսական գնահատումն է՝ ելնելով ձևավորված տնտեսական իրողություններից և ներուժային հնարավորություններից:

Վերջին տասնամյակներին շատ երկրներում հատկապես լայն տարածում են ստացել երկարաժամկետ բյուջետային ծրագրումը և կանխատեսումը, ինչն իր դրսևորումն է ստանում «շոթայական» և «լողացող» բյուջեների կազմման մեջ:

Այսպես օրինակ, «շոթայական» բյուջեները կազմվում են երկարաժամկետ զարգացման ծրագրի հիման վրա, որի համապատասխան ժամանակահատվածի մասը մեխանիկորեն ընդգրկվում է պետական բյուջե՝ առանց լրացուցիչ հաստատման: Իսկ օրինակ «լողացող» բյուջեի կազմման դեպքում նախապես հաստատվում է առաջիկա տարիների բյուջետային պլանը, և յուրաքանչյուր տարվա մասը համապատասխան ուղղորդումներով ընդգրկվում է պետական բյուջեի մեջ:

Հարկ է նշել, որ ինչպես նշված բյուջեների, այնպես էլ բյուջետային պլանավորման հիմքում վերջին տարիներին գերակայում է «պլանավորում-կանխատեսում-բյուջեի մշակում» մեթոդը, որը հիմնված է երկարաժամկետ ծրագրերի վրա: Կառավարության կողմից նման ծրագրերի մշակման ժամանակ կանխատեսվում են ինչպես խնդիրների լուծման համար անհրաժեշտ ռեսուրսների (ոչ միայն ֆինանսական, այլև նյութական, աշխատանքային և այլն) ծավալը, այնպես էլ ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ կանխատեսվում է ոչ միայն ծախսերի մեծությունը, այլ նաև վերջինս համադրվում է տվյալ ծրագրի իրականացումից ստացվելիք արդյունքների հետ: Նման համակարգը, ըստ էության, ենթադրում է վերջնական արդյունքի ստացման համար օպտիմալ տարբերակի ընտրություն, ինչը չափազանց կարևորվում է հատկապես պետության ֆինանսական սահմանափակ ռեսուրսների պայմաններում:

Ծրագրային բյուջետավորման հիմքում ընկած են ծախսերի ընթացիկ և կապիտալ ծախսերի տարանջատումն ու դրանց հասցեականությունը: Ընդ որում, վերջինիս նպատակն այն է, որ առանձին հատկացումներում ընթացիկ ծախսերը նվազեցնում են սեփական կապիտալը, իսկ կապիտալ ծախսերը՝ ավելացնում: Բացի այդ, դրանց մասին որոշումների կայացման լիազորությունը վերապահվում է խորհրդարանին, ինչը որոշումներ է կայացնում՝ հաշվի առնելով դրանց երկարաժամկետ ազդեցությունը տնտեսության զարգացման հեռանկարների վրա:

Ծրագրային բյուջետավորման հիմքում ընկած է նաև տրանսֆերտների ու ծառայությունների տարանջատումը՝ նպատակ ունենալով տարանջատել բուն տրանսֆերտի գումարները դրանց կառավարման ծառայությունների գումարից: Ինչ վերաբերում է կառավարության կարգավորիչ գործառնության, այն չի կարող հանրության որոշակի խմբերին հատկացված գումարներն իր հայեցողությամբ ուղղել այլ ծախսերի:

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշները 2008-2011թթ., մլրդ դրամ¹

	2008	2009	2010	2011	2012 բյուջե-տային ծրագիր ²
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ	785,4	690,0	690,2	758,7	852,4
Հարկային եկամուտներ և տուրքեր	621,1	522,4	542,5	596,2	650,0
Ավելացված արժեքի հարկ	318,3	254,2	275,8	299,1	-
Ակցիզային հարկ	45,9	42,8	42,2	34,7	-
Եկամտահարկ	53,7	60,2	67,2	73,2	-
Շահութահարկ	86,2	81,8	70,9	91,0	-
Գույքահարկ	0,0	0,0	0,0	0,0	-
Հողի հարկ	0,0	0,0	0,0	0,0	-
Մաքսատուրք	37,3	25,1	27,8	33,1	-
Հաստատագրված վճար	20,3	22,8	20,5	19,2	-
Այլ հարկային եկամուտներ	37,0	16,4	20,1	25,6	-
Պետական տուրք	22,3	19,0	18,0	20,3	-

¹ <http://www.mfe.am/main.php?lang=1&mode=macroind&iseng=1&isarm=1>

² Բյուջետային ծրագրի համար նշանակում է, որ ցուցանիշը չի ծրագրվել, բոլոր այլ տեղերում նշանակում է, որ ցուցանիշը հաշվարկվում է տարեկան կտրվածքով:

	2008	2009	2010	2011	2012 բյուջե-տային ծրագիր ²
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	105,0	102,9	98,5	112,2	123,4
Պաշտոնական դրամաշնորհներ	15,0	21,7	5,9	12,5	56,0
Այլ եկամուտներ	44,3	43,0	43,4	37,8	23,0
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր	810,6	929,1	742,6	796,8	1001,1
Ընթացիկ ծախսեր	717,5	718,3	662,1	706,1	838,8
Աշխատավարձ	59,4	70,6	62,5	67,7	67,1
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	4,7	5,0	4,5	4,9	5,4
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	135,3	152,3	137,6	147,2	173,2
Սուբսիդիաներ	87,7	19,0	16,0	16,7	19,0
Տոկոսավճարներ	11,1	16,3	25,2	31,0	42,6
Դրամաշնորհներ	83,2	80,1	82,9	86,9	89,6
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	207,9	240,2	222,3	232,7	268,2
Այլ ծախսեր	128,2	134,9	111,1	119,0	173,7
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	93,1	210,8	80,5	90,7	162,3
Պետական բյուջեի դեֆիցիտ (-) / պրոֆիցիտ (+)	-25,2	-239,1	-52,4	-38,1	-148,6

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս, որ 2008-2011թթ. ՀՀ պետական բյուջեի ընդամենը եկամուտներում 77.6%-ը կազմել են հարկային եկամուտները, ինչը նշանակում է, որ մեր երկրի բյուջեն ունի ֆիսկալ բնույթ: Ինչ վերաբերում է պետական բյուջեի ընդամենը ծախսերին, ընթացիկ ծախսերը 2008-2011թթ. կազմել են 85.5%: Բացի այդ, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման համար կատարված ծախսերը 2008 թվականից սկսած աճի միտում են դրսևորել: Այսպես, 2009թ. 2008թ. համեմատ դրանց աճի տեմպը կազմել է 12.6%, սակայն 2010թ. 2009թ. համեմատ դրանք նվազել են՝ կազմելով -9.6 %, որը պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացմամբ և ներթափանցմամբ դեպի ՀՀ տնտեսություն: Իսկ արդեն 2011թ. 2010թ. համեմատ ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսերն ավելացել են և կազմել են 6.9%: Բացի այդ, 2012թ. պետական բյուջեի ծրագրում նախատեսված է դրանք ևս ավելացնել՝ հասցնելով 17.6 %-ի:

Ամփոփելով, պետք է նշել, որ բյուջետային գործընթացի ծրագրային ապահովվածությունը խիստ կարևոր նախադրյալ է վերջինիս արդյունավետության բարձրացման համար: Դա, ըստ էության, նախ և առաջ, ենթադրում է բյուջետային գործընթացի կատարելագործման համար համապատասխան օրենսդրաիրավական միջավայրի ձևավորում:

ԱՐՄԵՆ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ

ՏԳԱԱ Մ. Լոթսոնյանի սևիվան
 արևրեսազիտության ինստիտուտի հայցորդ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒՃՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բյուջետային գործընթացի արդյունավետության բարձրացման նախադրյալներից մեկը միջնաժամկետ ֆինանսական պլանավորման գործուն մեխանիզմի ներդրումն է: Ընդհանուր առմամբ, թե՛ տեսականորեն, թե՛ գործնականում երկարաժամկետ պլանավորման հիման վրա բյուջեների ձևավորումը վիճարկման ենթակա չէ: Ակնհայտ է, որ պետական ֆինանսների բնագավառում տվյալ պահին ընդունվող որոշումների միջնաժամկետ հեռանկարում հետևանքների գնահատումը կարող է էականորեն նպաստել ապագայում անցանկալի երևույթների կանխմանը: Ըստ էության, գոյություն ունեն նշված մոտեցման գործնական իրացման մի քանի տարբերակներ:

Ընդհանուր առմամբ, ներկայումս շատ երկրներում նախապատվությունը տրվում է միջնաժամկետ (3-5 տարի) ֆինանսական պլանավորմանը: Սակայն, ակնհայտ է, որ հարկաբյուջետային համակարգում դրսևորվող միտումների և իրականացվող քաղաքականության արդյունքների և հետևանքների լիարժեք գնահատման համար անհրաժեշտ է կողմնորոշվել առավել երկարաժամկետ պլանավորմանը: Այնպիսի միտում, ինչպիսին է առողջապահության և սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող ծախսերի վրա ժողովրդագրական իրավիճակի փոփոխություններով պայմանավորված ազդեցությունը, պահանջում է առավել երկարաժամկետ կտրվածքով վերլուծությունների իրականացում՝ հետևանքների ամբողջական գնահատման համար: Բացի այդ, հարկաբյուջետային քաղաքականության առումով ժամանակային լագի խնդիրն առավել արտահայտված կերպով է դրսևորվում: Չնայած շատ երկրներում ներկայումս կիրառվում է բազմամյա բյուջեների կազմման մեխանիզմը, այնուամենայնիվ, դեռևս ամբողջությամբ հստակեցված չեն տարեկան և բազմամյա բյուջեների փոխկապակցման խնդիրները: Այդ առումով, կարծում ենք, որ անհրաժեշտ է տարեկան, միջնաժամկետ և երկարաժամկետ բյուջետային պլանավորման մեխանիզմների ներդրում և դրանց միջև հստակ փոխկապակցվածության ապահովում:

Միջնաժամկետ ֆինանսական պլանավորման համար խիստ կարևոր են նաև «լողացող» բյուջետային պլանավորման մեխանիզմի ներդրումը և զարգացումը: Ընդհանուր առմամբ, բյուջետային ծախսերի (հատկապես կապիտալ) կտրվածքով կարող են լինել այնպիսիները, որոնց իրականացման ժամկետը դուրս է գալիս մեկ տարվա շրջանակներից և կրում է երկարաժամկետ բնույթ: Որոշ երկրներում հաջորդ տարիների համար նախագծումները դիտվում են որպես փաստացի կամ պոտենցիալ բյուջեներ, իսկ որոշ երկրներում՝ կրում են զուտ ինդիկատիվ բնույթ: Կարևոր հանգամանք է նաև այն, թե հաջորդ տարվա համար մշակված բյուջեն դիտվում է որպես տվյալ բյուջեի հիմք, թե՞ յուրաքանչյուր տարի բյուջեն մշակվում է գրոյից: Ակնհայտ է, որ պետք է գոյություն ունենան համապատասխան մեխանիզմներ՝ յուրաքանչյուր տարի համապատասխան ուղղորդումներ կատարելու համար, քանի որ միշտ չէ, որ հնարավոր է կանխատեսել բոլոր գործոնները և վերջիններիս ազդեցությունը տնտեսական կոնյունկտուրայի և, հետևաբար, նաև իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության վրա:

Խիստ կարևոր է նաև ստանձնած պարտավորությունների և դրանց գերակայությունների սահմանման հստակ ընթացակարգերի ամրագրումը: Ըստ էության, սա այն ոլորտն է, որտեղ յուրաքանչյուր պետություն իր հայեցողությամբ կարող է օգտագործել սեփական մոտեցումները տվյալ խնդրի լուծման համար՝ հաշվի առնելով երկրում ընթացող քաղաքական և տնտեսական գործընթացները:

Ըստ արդյունքների՝ բյուջետավորումը բյուջեի պլանավորման, կատարման և վերջինիս նկատմամբ վերահսկողության մեթոդ է, որն ապահովում է բյուջետային ռեսուրսների բաշխումը՝ ելնելով պետության նպատակներից, խնդիրներից և գործառնություններից և հաշվի առնելով պետական քաղաքականության գերակայությունները և բյուջետային ռեսուրսների օգտագործումից ակնկալվող վերջնական և անուղղակի արդյունքների հասարակական նշանակությունը: Բյուջետավորման այս մեթոդը հնարավորություն է տալիս համադրելու ծախսերը և արդյունքները, ընտրելու բյուջետային միջոցների ծախսման առավել արդյունավետ ուղիներ, ժամանակին գնահատելու պլանավորված արդյունքների և դրանց որակի ձեռքբերման աստիճանը: Բյուջետավորման այդ մեխանիզմի առանձնահատկություններից մեկն այն է, որ այս դեպքում գնահատվում են ոչ միայն ծախսերը, այլ նաև ակնկալվող արդյունքները: Դա հնարավորություն է տալիս բյուջետային քաղաքականությունը դիտարկելու այլ տեսանկյունից և, այս առումով, հատկացվող բյուջետային ռեսուրսները պետք է ռեալ կերպով համապատասխանեն ակնկալվող արդյունքներին: Հետևաբար, այս դեպքում խիստ կարևորվում է նաև պատասխանատվության համապատասխան մեխանիզմների ներդրումը, քանի որ առանց վերջիններիս, ըստ էության, հնարավոր չի լինի ամբողջությամբ գնահատել և համապատասխան ճշգրտումներ կատարել իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության մեջ:

Տնտեսության զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում է միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական ծրագրման անհրաժեշտությունը: Ըստ էության, նշված խնդրի մասնակի լուծմանն էր ուղղված 2003 թվականից հանրապետությունում պետական

միջնաժամկետ ծախսերի ինստիտուտի ներդրումը, որը, փաստորեն, բյուջետային գործընթացի ծրագրային ապահովվածության բաղադրիչներից մեկն է: Արդեն երրորդ տարին է, ինչ չէ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրման գործընթացն օրենքով ճանաչվել է ընդհանուր բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս և իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգով: Ակնհայտ է, որ նշված փաստաթուղթն ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական որոշակի կարևորություն: Ըստ էության, պետական միջնաժամկետ ծախսերի համալիր ծրագիրը պետք է հանդիսանա տնտեսական զարգացման գերակայությունների հռչակման և դրանց իրացման ռազմավարական հիմքը:

Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի նախագիծը մշակվում է տարեկան կտրվածքով: Մակայն ակնհայտ է, որ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման հրամայականից ելնելով, անհրաժեշտ է գնահատել և հաշվի առնել ոչ միայն կարճաժամկետ հատվածում տնտեսական համակարգում ընթացող զարգացումները, այլ նաև երկարաժամկետ հեռանկարում մակրոտնտեսական միջավայրի փոփոխության միտումները, բյուջետային եկամուտների հնարավոր ծավալը, ծախսային գերակայությունները և այլն: Ակնհայտ է, որ պետական ծախսերի կառավարման առումով տարեկան կտրվածքով մշակվող և իրականացվող պետական բյուջեների հնարավորությունները սահմանափակ են այն պատճառով, որ դրանց հիմքում, որպես կանոն, դրվում են կարճաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումները, իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության և տարեկան բյուջետային ծախսերի միջև կապը հստակ չէ, և շատ դեպքերում կատարվող ծախսերի և դրանցից ակնկալվող արդյունքների միջև փոխկապակցվածությունը բացակայում է:

Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն սահմանված են բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում ծախսային իրավասությունները և պատասխանատվության մեխանիզմները: Դրանով հանդերձ, բյուջետային գործընթացում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, առանց որոնց լուծման բացառվում է բյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացումը: Այս առումով, պետք է նշել, որ բյուջետային օրենսդրությունը դեռևս ամբողջությամբ չի բավարարում ժամանակակից պահանջները, գործող մեխանիզմները և ընթացակարգերը սահմանափակում են պետական ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման հնարավորությունները և ինստիտուցիոնալ խթանները:

Նշված խնդիրները ակնհայտորեն լուրջ խոչընդոտներ են բյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար: Այդ առումով, կարծում ենք, որ բյուջետային գործընթացի հիմքում պետք է դրվեն երկրի զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ գերակայությունները: Պետական բյուջեի հիմնական ցուցանիշները պետք է ապահովեն բյուջետային պարտավորությունների երաշխավորված կատարումը, պետական պարտքի սպասարկմանն ուղղվող միջոցների շարունակական կրճատումը, պետության գործառույթների պատշաճ իրականացումը: Բյուջետային գործընթացի շեշտադրումները անհրաժեշտ է ծախսերի կառավարումից տեղափոխել դեպի արդյունքների կառավարում: Բյուջեն անհրաժեշտ է ձևավորել՝ ելնելով պետական քաղաքականության նպատակներից և ակնկալվող արդյունքներից, իսկ բյուջետային հատկացումները պետք է համահունչ լինեն պետական գործառույթներին:

Մեր կարծիքով, պետական ծախսերի կառավարման արդյունավետության ապահովման համար, նախ և առաջ, անհրաժեշտ է հարկաբյուջետային կարգապահության բարձրացում, ինչը ենթադրում է բյուջետային փաստաթղթերի հստակության և համալիրության ապահովում, բյուջետային ծախսերի հիմնավորում և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումների իրատեսականության բարձրացում: Բյուջետային ծախսերը պետք է ուղղված լինեն պետության ռազմավարական գերակայությունների և երկարաժամկետ զարգացման նպատակների իրացմանը: Այլ կերպ ասած, պետական ծախսերը պետք է համահունչ լինեն տնտեսական քաղաքականության գերակայություններին, և ծախսերի կառավարման համակարգը պետք է հնարավորություն ընձեռի իրականացնելու միջոցների միջոլորտային և ներոլորտային վերաբաշխում՝ նվազ գերակայություններից դեպի առավել կարևորները և ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցողները:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ներկա փուլում խիստ հրամայական են դարձել բյուջետային գործընթացի կատարելագործումը և բյուջետավորման նոր մեթոդների կիրառումը: Նշված խնդիրների լուծումը, մեր կարծիքով, ուղղակիորեն կնպաստի երկրում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը, ինչն էլ, իր հերթին, խթան կհանդիսանա տնտեսության զարգացման և տնտեսական համակարգում առկա բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման համար:

ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Զոթակյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՊԱՐԶ ԵՎ ԱՄԵՆԱԲԱՐԴ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒ ԸՍՏ «ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ 2012» ԶԵԿՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Արդյունավետ հարկային վարչարարությունը կարող է օգնել բիզնեսի օրինականացմանը և տնտեսական աճի խթանմանը՝ դրանով իսկ ընդլայնելով հարկային բազան և հարկային եկամուտների ավելացումը: Հարկային վարչարարությունը, որը «անարդար» է և «քմահաճ», հարկային համակարգին վատ համբավ կբերի և կթուլացնի կառավարության լեգիտիմությունը: Շատ անցումային տնտեսություններ 1990-ական թվականներին, երբ նոր հարկային համակարգ ներդրվեց, ձախողեցին հարկային վարչարարության բարելավումները, արդյունքում բազմաթիվ հարկային տուգանքներ նշանակվեցին, որին էլ հաջորդեց հարկերից համատարած խուսափելը: Հարկային օրենսդրությանը հետևելը անհրաժեշտ է, որպեսզի համակարգը աշխատի բոլորի համար և աջակցի ծրագրերին ու ծառայություններին, որոնք բարելավում են կյանքը:

Չափազանց բարդ հարկային համակարգը նպաստում է հարկերից խուսափելիության մակարդակի բարձրացմանը: Հարկային կարգուկանոնի ապահովման համար բարձր ծախսերը կապված են բարձր ստվերային տնտեսության, կոռուպցիայի ավելացման և ներդրումների նվազման հետ: Պարզ և լավ կառուցված հարկային համակարգ ունեցող տնտեսությունները կարող են օգնել բիզնեսի, ինչպես նաև ներդրումների և աշխատատեղերի աճին: Ցածր հարկային ծախսերը և արդյունավետ ընթացակարգերը կարող են լուրջ առավելություն հանդիսանալ ընկերությունների համար: Ազդեցությունը, որն ունի հարկային համակարգը ընկերությունների վրա, կարևոր է, և կառավարությունը պետք է շարունակի զարգացնել հարկային համակարգը, որը նպաստում է բիզնես ներդրումների և տնտեսական աճին: Օրինակ՝ Հոնկոնգում ստանդարտ ուսումնասիրվող ընկերությունը տարվա մեջ պետք է կատարի ընդամենը երեք հարկային վճարում, որը աշխարհի մակարդակով ամենացածրերից է, իսկ Մինգասպորում՝ հինգ վճարում, ինչը նույնպես ամենացածրերի շարքում է: Իռլանդիայում շահույթից հարկի, ավելացված արժեքի հարկի, աշխատուժի հարկի և վճարների կատարման համար անհրաժեշտ միջին տարեկան ժամանակը 76 ժամ է, ավելի քիչ, քան 10 աշխատանքային օրը¹:

Այսպիսի տվյալներ են հրապարակվել «Հարկերի վճարում 2012» հաշվետվությունում PriceWaterhouseCoopers (PWC) ընկերության կողմից: Վերլուծաբանները իրենց առաջ խնդիր են դրել գնահատել աշխարհի տարբեր երկրների հարկային համակարգի հարմարավետության աստիճանը: Մասնագետներն ազգային հարկման համակարգի վարկանշման ժամանակ առաջնորդվել են երեք չափորոշիչներով՝ հարկերի քանակ, ծավալ և ժամանակ, որը անհրաժեշտ է փաստաթղթերը լրացնելու և վճարելու համար:

¹ <http://www.pwc.com/lt/en/assets/publications/Paying-Taxes-2012.pdf>

Ըստ «Հարկերի վճարում» զեկույցի արդյունքների՝ այն ներառում է և՛ հարկերի արժեքը, որոնք առաջանում են ուսումնասիրվող ընկերությունում, և՛ համապատասխան ընկերության հարկային բեռը: Երկուսն էլ կարևոր են բիզնեսի տեսանկյունից, և դրանք գնահատվում են՝ օգտագործելով 3 ցուցանիշներ:

1. Ընդհանուր հարկային դրույքաչափ (TTR), որը ընդհանուր հարկային ծախսերի գումարն է:
2. Հարկային հաշվետվությունների վրա ծախսվող ժամանակը, որը անհրաժեշտ է շահութահարկի, եկամտահարկերի, շրջանառության այլ հարկերի և պարտադիր վճարների հաշվետվություններ կազմելու համար:
3. Հարկային հաշվետվությունների ընդհանուր թիվը:

Բոլոր ցուցանիշներն էլ կարևոր են վարկանիշային սանդղակում, սակայն կարևոր է դիտարկել յուրաքանչյուրն առանձին վերցրած, քանի որ յուրաքանչյուրը ներկայացնում է հարկային համակարգը տարբեր տեսանկյուններից:

Ընդհանուր հարկային դրույքաչափը չափում է բոլոր հարկերի բեռը, որը ընկերությունը պետք է վճարի՝ կախված իր առևտրային շահույթի մեծությունից: Այսպիսով, բոլոր տեսակի հարկերը ընկերության համար պարտադիր ծախսեր են: Այդ հարկատեսակներն են համարվում՝ շահութահարկը, գույքահարկը, աշխատանքային հարկերը և գործատուների պարտադիր վճարները, իրացման հարկերը և այլ վճարներ, որոնք չեն պահանջում հաշվետվությունների ներկայացում, օրինակ՝ սեփականության իրավունքի փոխանցման հարկը, դրոշմակնիքների տուրքերը, շահաբաժիններից հարկը, կապիտալի կուտակումից հարկը, ֆինանսական գործարքներից հարկը, բնապահպանական հարկը, փոխադրամիջոցներից և ճանապարհներից հարկը:

Հարկային հաշվետվություններ կազմելու վրա ծախսվող ժամանակի ցուցանիշը չափվում է այն ժամանակով, որը անհրաժեշտ է երեք հիմնական հարկատեսակների հաշվետվությունների լրացման և վճարման համար: Այդ հարկատեսակներն են՝ շահութահարկը, ավելացված արժեքի հարկը կամ վաճառքից հարկը, եկամտահարկը՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները:

Հարկային հաշվետվությունների ընդհանուր թիվը արտացոլում է բոլոր հարկային վճարումները, որոնք պարբերաբար կատարվում են՝ համապատասխան հաշվետվությունների ներկայացման և վճարման տեսքով:

2011 թվականին համաշխարհային մասշտաբով, միջին ընդհանուր հարկային դրույքաչափը (TTR) շահույթի 44.8%-ն էր: Վերջին յոթ տարիների ընթացքում այս ցուցանիշը նվազել է 7.4%-ով: Հարկային վճարումների միջին թիվը 29 է, վճարումների համար անհրաժեշտ միջին տարեկան ժամանակը՝ 277 ժամ: Համեմատության համար ասենք, որ հարկերի թիվը՝ հինգով, իսկ միջին ժամանակը՝ 46 ժամով նվազել է վերջին յոթ տարիների ընթացքում: Այս ժամանակահատվածում 183 տնտեսություններից ավելի քան 60%-ը ընդգրկվել է «Վարել բիզնես» ծրագրում՝ իրականացնելով փոփոխություններ, որոնք նպատակ ունեն պարզեցնել հարկային վարչարարությունը և նվազեցնել հարկային բեռը¹: 2010-2011 թթ. ընթացքում 33 տնտեսություններ հեշտացրին հարկերի վճարումը և նվազեցրին հարկային դրույքաչափերը: Հարկերի կատարումը հեշտացնող բարեփոխման ամենատարածված ձևը էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացումն էր, որը համաշխարհային պրակտիկա ներդրվեց 2004 թվականից: Անցած յոթ տարիների ընթացքում ամենից շատ տարածված բարեփոխումը կատարվել է հարկային դրույքաչափերի նվազեցման ասպարեզում, էլեկտրոնային համակարգի ներդրման ոլորտում, և պարզեցվել է հարկերի կատարումը՝ նվազեցնելով հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը կամ թույլատրելով մի քանի հարկատեսակների միասնական հաշվետվությունների ներկայացումը և վճարումը:

Այսպիսով, ներկայացնենք 10 ամենապարզ և ամենաբարդ հարկային համակարգերը «Հարկերի վճարում 2012» հաշվետվությունից ելնելով (աղյուսակ 1, 2):

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

Առանձին ուշադրության է արժանի կղզի-պետություն Մալդիվները, որը կարող է հպարտանալ իր ամենահեշտ հարկային համակարգով. այստեղ ձեռներեցները տարվա մեջ վճարում են երեք հարկ՝ տարեկան 9.3% ընդհանուր հարկային դրույքաչափով, և որի վճարման համար անհրաժեշտ է ընդամենը տարեկան կես ժամ: Երկրորդ և երրորդ հորիզոնականները կիսում են, համապատասխանաբար, Քաթարը և Հոնկոնգը, որտեղ նույնպես առկա է ընդամենը երեք հարկատեսակ, սակայն ի տարբերություն Մալդիվների՝ այստեղ բարձր են վճարման համար անհրաժեշտ ժամանակը և հարկադրույքը: Համեմատության համար ասենք, որ ըստ «Հարկերի վճարում 2009» հաշվետվության՝ Մալդիվներում և Քաթարում հարկերի թիվը մեկն էր, իսկ Հոնկոնգում՝ չորսը, այսինքն՝ կարելի է եզրակացնել՝ մինչ օրս այս պետություններում հարկային վարչարարությունը փոքր-ինչ բարդացել է, բայց, միևնույն է, Մալդիվները շարունակում է մնալ առաջատարի դիրքերում և դեռ երկար էլ կմնա:

Աղյուսակ 1

Աշխարհի ամենահեշտ հարկային համակարգ ունեցող պետությունները¹

№	Պետություն	Հարկերի ընդհանուր թիվը (վճարում/ տարի)	Հարկերի վճարման համար անհրաժեշտ ժամանակը (ժամ/ տարի)	Ընդհանուր հարկային դրույքաչափը (%)
1	Մալդիվներ	3	0	9.30%
2	Քաթար	3	36	11.30%
3	Հոնկոնգ, Չինաստան	3	80	23.00%
4	Սինգապուր	5	84	27.10%
5	Իռլանդիա	8	76	26.30%
6	Արաբական Միացյալ Էմիրություններ	14	12	14.10%
7	Սաուդյան Արաբիա	14	79	14.50%
8	Օման	14	62	22.00%
9	Կիբիբատի	7	120	31.80%
10	Մավրիտոս	7	161	25.00%

Ինչպես ցույց է տալիս PWC ընկերության հետազոտությունը, ամենապարզ հարկային ռեժիմները գործում են Մերձավոր Արևելքում և ասիական պետություններում: Ինչ վերաբերում է եվրոպական պետություններին, ապա լավագույն տասնյակում հայտնվել է միայն Իռլանդիան՝ հինգերորդ հորիզոնականում, որտեղ գործում է 8 հարկատեսակ, և տարեկան ընդհանուր հարկային դրույքաչափը 26.3% է կազմում: 2008 թվականին այստեղ գործում էր 9 հարկատեսակ, իսկ հարկադրույքը կազմում էր 28.8%: Այսինքն, այստեղ կատարվել են հարկային բարելավումներ, որի արդյունքում նվազել են բոլոր ցուցանիշները, և, ի վերջո, Իռլանդիան վարկանիշային սանդղակում մեկ հորիզոնականով դեպի վեր է բարձրացել՝ զբաղեցնելով հինգերորդ տեղը:

Ինչ վերաբերում է հետազոտության վերջին հորիզոնականները զբաղեցրած պետություններին, ապա այստեղ են հայտնվել Ուկրաինան, Կոնգոն և Վենեսուելան: 2008 թվականին Ուկրաինայում հարկերի ընդհանուր թիվը 99 էր, վճարման համար անհրաժեշտ տարեկան ժամանակը՝ 848 ժամ, իսկ ընդհանուր հարկային դրույքաչափը՝ 58.4%, և այս ցուցանիշներով նա զբաղեցրել էր վերջից երկրորդ տեղը, սակայն, ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ում, այս ընթացքում «սայլը տեղից չի շարժվել»: Բայց նույնը չենք կարող ասել Բելառուսի մասին, ով ըստ «Հարկերի վճարում 2009» հաշվետվության՝ վերջին հորիզոնականում էր, իսկ այսօր զբաղեցնում է 156-րդ հորիզոնականը: Այս ընթացքում լուրջ բարեփոխումներ են կատարվել Բելառուսում, արդյունքում հարկերի ընդհանուր թիվը 112-ից դարձել է 18, վճարման համար անհրաժեշտ ժամանակը՝ 1188-ից 654, իսկ ընդհանուր հարկային դրույքաչափը 117.5%-ից իջել է 62.8%-ի:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 112-127:

Աշխարհի ամենաբարդ հարկային համակարգ ունեցող պետությունները¹

№	Պետություն	Հարկերի ընդհանուր թիվը (վճարում/ տարի)	Հարկերի վճարման համար անհրաժեշտ ժամանակը (ժամ/ տարի)	Ընդհանուր հարկային դրույքաչափը(%)
174	Սենեգալ	59	666	46.00%
175	Մավրիտանիա	37	696	68.30%
176	Գվինեա	56	416	54.30%
177	Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն	54	504	54.60%
178	Չամբիա	50	376	283.50%
179	Բոլիվիա	42	1080	80.00%
180	Չադ	54	732	65.40%
181	Ուկրաինա	135	657	57.10%
182	Կոնգո	61	606	65.90%
183	Վենեսուելա	70	864	63.50%

Վերադառնալով աշխարհի ամենադժվար հարկային համակարգերին՝ կարելի է ասել, որ այս ընթացքում՝ 2008-2011թթ., Կոնգոյում ոչինչ չի փոխվել, և եթե նախկինում նա զբաղեցնում էր վերջից երրորդ տեղը, ապա այսօր իջել է մեկ հորիզոնականով՝ զբաղեցնելով 182-րդ տեղը: Ինչ վերաբերում է Վենեսուելային, ապա այստեղ բարձրացել է ընդհանուր հարկային դրույքաչափը՝ 56.6%-ից 63.5%, սակայն միայն սա չէ պատճառը, որ Վենեսուելան այսօր հայտնվել է վերջին հորիզոնականում, այս ամբողջ ընթացքում հարկային բարեփոխումներ իրականացնող պետությունները «առաջ անցան» Վենեսուելայից և, արդյունքում, նա 177-րդ հորիզոնականից հայտնվեց 183-րդ հորիզոնականում:

Ինչևիցե, թերևս մեզ ավելի շատ հետաքրքրում է, թե 2008-2011 թվականներին ինչ «անկումներ և վերելքներ» են ունեցել ԱՊՀ անդամ երկրները: Ստորև ներկայացված աղյուսակներում արտացոլված են ԱՊՀ անդամ երկրների «Հարկերի վճարում 2012» և «Հարկերի վճարում 2009» հաշվետվությունների տվյալները, ինչը հնարավորություն կտա պարզելու, թե որ պետությունն ունի առավել հարմար հարկային համակարգ, և թե ինչպիսի փոփոխություններ են կատարվել այս տարիների ընթացքում:

Հետևյալ աղյուսակներից պարզ է դառնում, որ ԱՊՀ երկրների ամենապարզ հարկային համակարգը ունի Ղազախստանը: Այստեղ 2008-2011թթ. ընթացքում բարելավվել են հետազոտության հիմնական երեք ցուցանիշներն էլ: Նույնը կարելի է ասել նաև Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Մոլդովայի, ինչպես նաև Բելառուսի մասին, այսինքն՝ այստեղ հարկային համակարգի բարեփոխումներն ընթանում են բավականին արագ տեմպերով: Բայց, ցավոք սրտի, մեր հանրապետությունում ոչ բոլոր ցուցանիշներն են բարելավվել, այս ընթացքում հարկերի ընդհանուր թիվը 50-ից կրճատվել է 34-ի, բավականին նվազել է նաև հարկերի վճարման համար անհրաժեշտ ժամանակը՝ 958-ից 500-ի, սակայն բարձրացել է ընդհանուր հարկային դրույքաչափը՝ 36.6%-ից 40.9%, ինչի արդյունքում Հայաստանը 150-րդ հորիզոնականից հայտնվել է 153-րդ հորիզոնականում: Անկումը պայմանավորված է ոչ միայն որևէ ցուցանիշի վատթարացմամբ, այլ նաև այն հանգամանքով, որ շատ երկրներ այս ընթացքում առաջ անցան Հայաստանից:

Ըստ PWC ընկերության հաշվետվության տվյալների՝ 2010-2011 թվականներին ԱՊՀ անդամ երկրներում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Ադրբեջանում իջեցվել են որոշ հարկատեսակների դրույքաչափերը, ինչպես նաև շահութահարկի դրույքաչափը: Հեշտացվել են շահութահարկի և ավելացված արժեքի հարկի վճարման ընթացակարգերը:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 112-127:

- Մոլորվալում նվազեցվել են գործատուների կողմից վճարվող սոցիալական ապահովագրության դրույքաչափերը:
- Տաջիկստանում նվազեցվել է շահութահարկի դրույքաչափը:
- Ուկրաինայում շարունակվել է պարզեցվել հարկերի վճարման ընթացակարգը և ԱԱՀ-ի էլեկտրոնային լրացման համակարգի ներդրումը:
- Հայաստանում պարզեցվել է հարկերի վճարումը, մասնավորապես նվազեցվել է շահութահարկի, սոցիալական ապահովագրության վճարների, գույքահարկի և հողի հարկի վճարումների թիվը, ինչպես նաև ներդրվել է հարկային հաշվետվությունների էլեկտրոնային լրացման համակարգ՝ հիմնական հարկատեսակների համար:
- Բելառուսում վերացվեցին մի քանի հարկատեսակներ, և պարզեցվեց որոշ հարկերի վճարման ընթացակարգը, մասնավորապես նվազեցվեց շահութահարկի, ԱԱՀ-ի վճարման և հաշվետվությունների լրացման հաճախականությունը:
- Վրաստանը հեշտացրել է կազմակերպությունների համար հարկերի վճարումը՝ պարզեցնելով ԱԱՀ-ի հաշվետվությունները և ներդնելով էլեկտրոնային հաշվետվությունների լրացման և վճարման համակարգ:
- Դրոգատանում բարդացվել է հարկային համակարգը կազմակերպությունների համար՝ ներդնելով անշարժ գույքի հարկը:
- Ռուսաստանում բարձրացվել է գործատուների կողմից վճարվող սոցիալական ապահովագրության վճարների դրույքաչափը:
- Ուկրաինայում պարզեցվել է հարկային օրենսդրությունը, միավորվել են սոցիալական ապահովագրության վճարները, նվազեցվել է շահութահարկի դրույքաչափը:

Աղյուսակ 3

«Հարկերի վճարում 2012» ԱՊՀ երկրների ցուցանիշները¹

Պետություն	Տեղը վարկանիշային սանդղակում	Հարկերի ընդհանուր թիվը	Հարկերի վճարման համար անհրաժեշտ ժամանակը	Ընդհանուր հարկային դրույքաչափը
Ղազախստան	17	7	188	28.60%
Վրաստան	39	4	387	16.50%
Ադրբեջան	77	18	225	40.00%
Ռուսաստան	102	9	290	46.90%
Մոլդովա	109	48	228	31.30%
Հայաստան	153	34	500	40.90%
Բելառուս	156	18	654	62.80%
Ուզբեկստան	157	41	205	97.50%
Դրոգատան	162	52	210	69.00%
Տաջիկստան	168	69	224	84.50%
Ուկրաինա	181	135	657	57.10%

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությանը՝ ընդհանուր առմամբ մեր հարկային համակարգը միանգամայն պարզ է, իսկ ընդհանուր հարկադրույքը՝ չափավոր: Այնուամենայնիվ, մտահոգիչ են հարկերի հավաքագրման ներկա ցածր տեմպերը, կոռուպցիան և հարկերի վճարումից խուսափելը, ինչը անդրադառնում է հարկային տեսչության կողմից հարկային օրենքների և կառավարության հարկային բարեփոխումների կիրարկման վրա: Հարկատուները բավականին ժամանակ պետք է տրամադրեն՝ գործ ունենալով հարկային համակարգում առկա խնդիրների հետ: Մյուս կողմից՝ հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունը շփոթմունք է ստեղծում, քանի որ դժվար է հարկատուների համար լինել միշտ տեղեկացված: ՀՀ հարկային համակարգը փոխառնված է մի շարք օտարերկրյա իրավական համակարգերից (Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն, Ռուսաստանի Դաշնություն), բայց շատ հաճախ չի համապատասխանում Հայաստանի օրենսդրական միջավայրին: Սա կարող

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 112-127:

է Հայաստանի հարկային օրենսդրության և միջազգային առաջավոր փորձի միջև անհամապատասխանությունն առաջացնել:

Աղյուսակ 4

«Հարկերի վճարում 2009» ԱՊՀ երկրների ցուցանիշները¹

Պետություն	Տեղը վարկանիշային սանդղակում	Հարկերի ընդհանուր թիվը	Հարկերի վճարման համար անհրաժեշտ ժամանակը	Ընդհանուր հարկային դրույքաչափը
Ղազախստան	49	9	271	36.40%
Վրաստան	110	30	387	38.60%
Ադրբեջան	102	23	376	41.10%
Ռուսաստան	134	22	448	48.70%
Մոլդովա	123	53	234	42.10%
Հայաստան	150	50	958	36.60%
Բելառուս	181	112	1166	117.50%
Ուզբեկստան	162	106	196	90.60%
Ղրղզստան	155	76	202	61.40%
Տաջիկստան	159	54	224	85.50%
Ուկրաինա	180	99	848	58.40%

Այնուամենայնիվ, վարկանիշային վերոնշյալ սանդղակը ամենևին էլ չի բնորոշում երկրի տնտեսական զարգացածության մակարդակը (օր.՝ Գերմանիան գտնվում է 86-րդ հորիզոնականում, իսկ Ղազախստանը՝ 17-րդ): Իհարկե, հարկային համակարգի պարզությունը որոշ չափով նպաստում է տնտեսական զարգացմանը, քանի որ այդ «պարզությունը» գրավիչ է օտարերկրյա ներդրումների համար: Օրինակ՝ Վրաստանում այնքան պարզ է հարկային համակարգը, և ցածր հարկային բեռը, որ ՀՀ գործարարները նախընտրում են ներդրումներ կատարել Վրաստանում, այլ ոչ թե մեր երկրում: Ի վերջո, հայ գործարարը գերադասում է արտադրել Վրաստանում, սպառել և՛ Վրաստանում, և՛ Հայաստանում, ինչը մի քանի անգամ շահութաբեր է: Բայց տնտեսական տեսանկյունից Հայաստանի համար սա կարող է կործանարար հետևանքներ ունենալ: Սակայն, ինչպես երևում է «Taxes at a Glance 2011»² զեկույցից, Հայաստանում կատարվել են հարկային բարեփոխումներ, որի արդյունքում զգալիորեն կրճատվել է հարկերի վճարման համար անհրաժեշտ ժամանակը:


Եվ վերջում, ներկայացնենք մի գծապատկեր (գծապատկեր 1), որտեղ արտացոլված է ԱՊՀ անդամ երկրների 2008 և 2011 թվականների հարկային հաշվետվությունների ընդհանուր թիվը:

Ինչպես տեսնում ենք, 2008-2011թթ. ընթացքում հարկային հաշվետվությունների թիվը զգալիորեն կրճատվել է Բելառուսիայում և Ուզբեկստանում, ոչ պակաս արդյունքներ են գրանցել նաև Ղրղզստանը, Հայաստանը, Ռուսաստանը և Վրաստանը: Բելառուսիան այն բացառիկ երկրներից է, որը վարկանիշային սանդղակի ամենացածր հորիզոնականից մի քանի տարվա ընթացքում բարձրացավ միջին հորիզոնական՝ արձանագրելով աննախադեպ առաջընթաց: ԱՊՀ երկրներից միայն Ուկրաինայում և Տաջիկստանում է ավելացել հարկային հաշվետվությունների ընդհանուր թիվը: Գծապատկերից պարզ է դառնում, որ 2011 թվականին այս ցուցանիշով ԱՊՀ անդամ երկրներից առաջատարը Վրաստանն է, իսկ երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանաբար կիսում են Ղազախստանը և Ռուսաստանը:

¹ http://www.pwc.com/gx/en/paying-taxes/pdf/paying_taxes_2009.pdf

² http://www.pwc.com/am/en/publications/assets/Taxes_at_a_Glance-2011.pdf

ԱՊՀ անդամ երկրների 2008 և 2011 թվականների հարկային հաշվետվությունների ընդհանուր թիվը¹



ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՆԿԱՍ Մ. Զոթանյանի անվան
 րնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:
 ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

Հարկային քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման կարևորագույն լծակներից է: Տնտեսության պետական կարգավորման խնդրի վերաբերյալ մի շարք տնտեսագիտական մոդելների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ օպտիմալ չափերով իրականացվող պետական կարգավորումն օբյեկտիվ անհրաժեշտություն է գրեթե բոլոր տնտեսական համակարգերում: Տնտեսությունում պետական միջամտության անհրաժեշտությունն ապացուցված է համաշխարհային փորձով, քանզի բոլոր այն երկրներում, որտեղ անտեսվել է պետական կարգավորման դերը, և ընդունվել են նեոլիբերալ դպրոցի առաջարկությունները, բարեփոխումներն ընթացել են դանդաղ տեմպերով: Տնտեսության պետական կարգավորման դերը մեծանում է հատկապես անցումային փուլում գտնվող երկրներում՝ պայմանավորված երկու կարևոր հանգամանքներով. նախ, այդ փուլում շուկան գտնվում է ձևավորման գործընթացում, և մեծ չեն նրա ինքնակարգավորման հնարավորությունները, երկրորդ, մի տնտեսական համակարգից անցումը մյուսին չի կարող տեղի ունենալ ինքնաբերաբար և տարերայնորեն:

Անցումը շուկայական հարաբերություններին ենթադրում է պետության նոր գործառույթների առաջացում՝ կապված պետական լծակների արդյունավետության բարձրացման և շուկայական ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտության հետ: Պետությունն իր

¹ http://www.pwc.com/gx/en/paying-taxes/pdf/paying_taxes_2009.pdf և <http://www.pwc.com/lt/en/assets/publications/Paying-Taxes-2012.pdf>

տնտեսական գործառույթների իրականացման համար տիրապետում է կարգավորման լծակների մի ամբողջ համակարգի, որոնցում առանձնակի տեղ ունի հարկային քաղաքականությունը: Այն իրավական նորմերի և կազմակերպատնտեսական միջոցառումների համակարգ է, որոնք ընդունվում և իրականացվում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ հարկային հարաբերությունների ոլորտում¹:

Հարկային քաղաքականությունը պետական կարգավորման ուղղակի մեթոդներից է: Նրա բովանդակությունը և նպատակները կապված են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հետ, քաղաքական կարգի, պետության առջև ծառայած խնդիրների: Այն ընդհանուր տնտեսական քաղաքականության շրջանակներում կիրառվող տնտեսական լծակների և մեխանիզմների մի ամբողջություն է, որը հիմնված է այնպիսի հարաբերությունների վրա, որոնք ծագում են մի կողմից՝ պետության, մյուս կողմից՝ հարկատու տնտեսական սուբյեկտների միջև: Հարկային քաղաքականությունը հետապնդում է երկու իրար հետ փոխկապակցված նպատակ՝ ապահովել պետության կողմից իրականացվող ծրագրերի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ստացում և միաժամանակ կատարել տնտեսական կարգավորման լծակի ֆունկցիա:

Հարկային քաղաքականության կոնցեպցիայի ձևավորման առաջնային կարևորության խնդիրներից մեկը, տնտեսական տեսանկյունից, պետության ֆինանսական շահերի և տնտեսվարող սուբյեկտների շահերի հավասարակշռությունն է: Հարկային քաղաքականությունը սահմանում է հարկերի դերը հասարակությունում, որը տնտեսվարող սուբյեկտների համար կարող է լինել դրական կամ բացասական: Պետության համար հարկային զանձումների աճը դրական գործոն է, իսկ տնտեսվարող սուբյեկտների համար՝ բացասական: Հարկային քաղաքականության գլխավոր խնդիրը օպտիմալ հարկման դրույթի սահմանումն է, որը չի «տոնահարի» տնտեսվարողների շահերը, ինչպես նաև չի խոչընդոտի աշխատուժի վերարտադրումը:

Հարկային քաղաքականության նպատակներն են.

- Ֆիսկալ՝ ապահովել պետությանը ֆինանսական ռեսուրսներով՝ ստեղծված ՀՆԱ-ի մի մասի մոբիլացման ճանապարհով, որպեսզի ֆինանսավորվեն պետական ծախսերը:
- Տնտեսական՝ հարկման միջոցով տնտեսության վրա նպատակաուղղված ներգործություն առաջարկի և պահանջարկի կարգավորման համար:
- Սոցիալական՝ բնակչության եկամուտների համահարթեցում ազգային եկամտի և ՀՆԱ-ի վերաբաշխման միջոցով:
- Խթանող՝ ներդրումային և նորարարական գործունեության ակտիվացում տնտեսության առավել հեռանկարային ճյուղերում, կապիտալի կուտակման համար պայմանների ստեղծում:
- Էկոլոգիական՝ շրջակա միջավայրի պաշտպանություն և արդյունավետ բնօգտագործում՝ բնապահպանական հարկերի սահմանման միջոցով:
- Վերահսկողական՝ առանձին հարկատեսակների և ամբողջ հարկային համակարգի գործունեության ոլորտում պետության որոշումների կայացման հնարավորություն:
- Միջազգային՝ միջազգային համաձայնագրերի պահանջներին համապատասխան հարկերի սահմանում՝ օտարերկրյա պետությունների հետ տնտեսական կապերի ամրապնդման համար:

Գոյություն ունի երեք տիպի հարկային քաղաքականություն.

1. մաքսիմալ հարկերի քաղաքականություն,
2. խելամիտ հարկերի քաղաքականություն,
3. բարձր հարկերի քաղաքականություն՝ սոցիալական բարձր մակարդակի պայմաններում:

Առաջին դեպքում պետությունը սահմանում է հարկադրույթների բարձր մակարդակ, կրճատում է հարկային արտոնությունները և հետապնդում է միայն ֆիսկալ նպատակ:

¹ Налоги. Словарь-справочник. - М.: ИНФРА-М, 2000, стр. 95.

Երկրորդ դեպքում՝ պետությունը հետապնդում է ոչ միայն ֆիսկալ նպատակներ, այլ նաև ստեղծում է մաքսիմալ բարենպաստ պայմաններ տնտեսության և ձեռներեցության զարգացման համար: Տվյալ քաղաքականությունը բերում է բյուջեում հարկային մուտքերի կրճատմանը, հետևաբար՝ նաև սոցիալական ծրագրերի կրճատմանը: Այս քաղաքականության նպատակը կապիտալի ավելացումն է, ներդրումային ակտիվության խթանումը առավել բարենպաստ հարկային կլիմայի ստեղծման միջոցով: Նմանատիպ քաղաքականությունը իրականացվում է տնտեսության անկման շրջանում, որը սպառնում է վերածվել տնտեսական ճգնաժամի: Հարկային քաղաքականության երրորդ տեսակը միջանկյալ վիճակ է առաջին և երկրորդ տեսակների միջև: Նրա էությունը հարկման բարձր մակարդակի սահմանումն է և միաժամանակ պետական բազմատեսակ սոցիալական ծրագրերի իրականացումը:

Հարկային քաղաքականության իրականացման կարևորագույն միջոցներից է հարկադրույքը: Այն սահմանում է հարկային բազայի տոկոսային մասը կամ նրա մի մասը, որի դրամային արտահայտությունը հարկի մեծությունն է: Փոփոխելով հարկադրույքը՝ կառավարությունը կարող է իրականացնել հարկային կարգավորում առանց օրենսդրության մեջ լուրջ փոփոխություններ կատարելու: Հարկային քաղաքականությունում էական արդյունքի կարելի է հասնել առանձին տարածաշրջաններում որոշակի հարկատուների, առանձին ճյուղերի և կազմակերպությունների համար հարկադրույքի տարբերակման միջոցով: Հարկադրույքը ապահովում է համեմատաբար ավելի ճկուն ֆինանսական օրենսդրություն և թույլ է տալիս կառավարությանը արագ և արդյունավետ փոփոխել եկամուտների կարգավորման քաղաքականությունը: Պետական քաղաքականության իրականացման ժամանակ հարկադրույքի դերն այն է, որ այն թույլ է տալիս կիրառել տարբեր հարկադրույքներ՝ համամասնական, պրոգրեսիվ և ռեգրեսիվ: Հատուկ նշանակություն ունեն պրոգրեսիվ և ռեգրեսիվ հարկադրույքները, որոնց միջոցով կարգավորվում է ոչ միայն հարկատուների եկամուտների չափը, այլ նաև բյուջեի եկամուտները: Շնորհիվ հարկադրույքի՝ հարկային համակարգը ունի բավականաչափ ճկունություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր տարի կատարել հարկադրույքի ճշտում՝ կախված տնտեսության վիճակից: Բայց, այնուամենայնիվ, պետք է հիշել՝ «հարկերը նման են դեղորայքի, որի բուժական հատկությունները դրսևորվում են միայն դրա խելացի չափաքանակի դեպքում»¹:

Հարկային քաղաքականության իրականացման արդյունավետ եղանակներից է հարկային արտոնությունը: Այն լրիվ կամ մասնակի ազատում է հարկումից ֆիզիկական և իրավաբանական անձանց: Համաշխարհային պրակտիկայում կիրառվող հարկային արտոնությունները շատ դժվար է դասակարգել, քանի որ դրանք կարող են տրամադրվել ցանկացած ժամանակ, երբ պետությունը շահագրգռված է որոշակի ձեռնարկատիրական գործունեության զարգացմամբ, և նա պատրաստ է խթանել այն: Ցանկացած երկրում հարկային արտոնությունների տրամադրման ձևերը և եղանակները անընդհատ զարգանում են: Հարկային արտոնությունների առավել շատ հանդիպող ձևերն են՝

- շահույթի, եկամտի կամ այլ օբյեկտի լրիվ կամ մասնակի ազատում հարկումից,
- իջեցված հարկադրույքի կիրառում,
- որոշակի ձեռնարկատիրական գործունեության մասնակի կամ լրիվ ազատում հարկումից,
- որոշակի սոցիալական խմբերի ազատում հարկումից,
- հարկային վճարումների հետաձգում կամ տարաժամկետ վճարում:

Հաճախ հարկերի խթանման օբյեկտը ներդրումային գործունեությունն է: Շատ երկրներում ներդրումային գործունեությանն ուղղված շահույթը ամբողջությամբ կամ մասնակի ազատվում է հարկումից: Հարկային արտոնությունների միջոցով շատ երկրներում խթանվում են փոքր և միջին բիզնեսի զարգացումը, օտարերկրյա կապիտալի ներգրավումը, գիտատեխնիկական առաջընթացը, որը ֆունդամենտալ նշանակություն ունի տնտեսության հետագա զարգացման համար: Առանձին հարկային արտոնությունների կիրառումը նպաստում է ֆինանսական և տնտեսական ճգնաժամի թեթևացմանը:

¹ Задоя А.А., Петруня Ю.Е. Основы экономической теории: Учеб. Пособие.- М.: Рыбари, 2000. стр. 344.

Հարկային քաղաքականության իրականացման համար ոչ պակաս կարևոր են նաև հարկային պատժամիջոցները: Այն մի կողմից պետության ձեռքին գործիք է, որի միջոցով ապահովվում է հարկատուների կողմից հարկերի պարտադիր վճարումը, մյուս կողմից՝ մղում է հարկատուին արդյունավետ տնտեսական գործունեության:

Կախված ժամանակաշրջանի տևողությունից և առաջադրված խնդիրների բնույթից՝ հարկային քաղաքականությունը տարանջատվում է հարկային ռազմավարության և հարկային մարտավարության: Հարկային ռազմավարությունը նախատեսված է մեծամասշտաբ խնդիրների լուծման համար՝ կապված երկրի հարկային համակարգի զարգացման կոնցեպցիայի վերամշակման հետ: Հարկային մարտավարությունը որոշակի ժամանակաշրջանում խնդրի լուծումն է հարկային համակարգի ժամանակավոր փոփոխության միջոցով: Հարկային քաղաքականության ռազմավարական ուղղության որոշումը ընդունվում է պետության գործադիր և օրենսդիր մարմինների կողմից:

Կարելի է առանձնացնել հարկային քաղաքականության ռազմավարության հետևյալ ուղղությունները.

- կայուն հարկային համակարգի ստեղծում
- արտադրողների հարկային բեռի թեթևացում
- հարկային արտոնությունների կրճատում կամ ավելացում
- հարկային ֆեդերալիզմի զարգացում:

Հարկային քաղաքականության ռազմավարությունը վերջին տարիներին հիմնված էր ՀՀ կառավարության՝ 2008-2012թթ. գործունեության ծրագրի, հարկաբյուջետային ոլորտը կարգավորող օրենքների, միջազգային և ՀՀ վերջին տարիների առաջավոր փորձի՝ հարկերին վերաբերող դրույթների վրա: Երկարաժամկետ հատվածում նախատեսվում է ունենալ ժամանակակից պահանջները բավարարող հարկային վարչարարություն՝ աստիճանաբար բացառելով կարճաժամկետ հատվածներում նախորդ տարիների արատավոր դրսևորումները և հասնելով նրան, որ ապահովվի հարկային օրենսդրության պահանջների համահավասար և ճշգրիտ կիրառումը¹: Հարկային ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վերջին տարիներին մշակվող և իրականացվող քաղաքականությունը կողմնորոշված է հարկային քաղաքականության կատարելագործմանն ու հարկահավաքման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Այլ կերպ ասած՝ ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականությունը նպատակադրված է մի կողմից՝ նպաստավոր ձեռնարկատիրական միջավայրի ձևավորմանը, մյուս կողմից՝ պետական եկամուտների հավաքագրման օպտիմալ մակարդակի ապահովմանը: Մասնավորապես ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականության շրջանակներում.

- փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության նպատակով բազմաթիվ փոփոխություններ են կատարվել գործող հարկային օրենսդրությունում (ներդրվել է ավելացված արժեքի հարկով չհարկվող նվազագույն շեմ, պարզեցվել են հարկային հաշվառման ու գրանցումների կատարման ընթացակարգերը, կրճատվել և պարզեցվել են հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվությունները և այլն),
- 2008 թվականի երկրորդ կիսամյակից մեր տնտեսությունում նկատված ճգնաժամային երևույթները մեղմացնելու նպատակով որոշակի հարկային արտոնություններ են տրամադրվել գործունեության առանձին ոլորտների (գորգագործություն, թանկարժեք քարերի ու մետաղների արտադրություն և իրացում),
- տնտեսության ներդրումային գրավչությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին հնարավորություն է տրվել երեք տարով հետաձգելու ներդրումային ծրագրերի շրջանակներում 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը,

¹ Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիր, էջ 2:

- ներդրվել է գերավճարների հետ վերադարձն ուշացնելու դեպքում պետության կողմից հարկ վճարողներին տույժերի վճարման համակարգ:

Միաժամանակ հարկահավաքման գործընթացի ցանկալի արդյունավետությունն ապահովելու նպատակով (հատկապես խոշոր ձեռնարկատիրության ոլորտում) ներդրվել են հարկային ներկայացուցչի ու ակցիզային պահեստի ինստիտուտները, տնտեսության մեջ ապրանքաշրջանառության իրական ծավալների հաշվառման նպատակով նախատեսվում է որոշ ապրանքների համար ներդնել դրոշմապլիտակների կիրառության համակարգ, իսկ կեղծ փաստաթղթաշրջանառության դեմ պայքարելու նպատակով ներդրվել է էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման համակարգ:

Հարկային քաղաքականության շրջանակներում իրականացվող միջոցառումները չեն սահմանափակվում միայն վերոնշյալով, և շարունակվում են իրականացվել ձեռնարկատիրական միջավայրի բարելավմանն ու հարկման բազայի ընդլայնմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես նախատեսվում է՝

1. կրճատել, պարզեցնել և միասնականացնել հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվությունները,
2. միավորել եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովության վճարը (Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում),
3. գործունեության առանձին տեսակների համար նախատեսված հաստատագրված վճարների համակարգը փոխարինել հարկման ընդհանուր համակարգով:
4. բենզինը, դիզելային վառելիքը և ծխախոտի արտադրանքը հարկման հաստատագրված վճարների համակարգից տեղափոխել հարկման ընդհանուր համակարգ,

Վերոնշյալ միջոցառումները հնարավորություն կընձեռեն մի կողմից՝ բարելավելու մեր երկրում ձեռնարկատիրական միջավայրը, մյուս կողմից՝ բարձրացնելու հարկահավաքման գործընթացի արդյունավետությունը: Արդյունքում կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ՝ պետական բյուջեի եկամուտների անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար:

Հարկային օրենսդրության մեջ կատարվել են մի շարք հիմնարար փոփոխություններ, որի արդյունքում 2011 թվականի հունվարից կրճատվել են հարկային մարմին ներկայացվող հաշվետվական ձևերը, ինչպես նաև նույնականացվել են տարբեր հաշվետվական ձևերի ներկայացման ժամկետները: Դա միաժամանակ բերել է հարկային հաշվետվությունների լրացման համար ծախսվող ժամանակի կրճատմանը՝ ապահովելով գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ պայմաններ:


Դեռևս 2008 թվականի օգոստոսի 7-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիրը» հարկային բարեփոխումների իրականացման հիմքը հանդիսացավ: Չնայած այն բանին, որ 2008-2010 թվականների ընթացքում հարկեր ու հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ամենաբարձր աճի տեմպն արձանագրվել է 2008 թվականին՝ կազմելով համապատասխանաբար 22.9% և 17.4%, այնուամենայնիվ ռազմավարական ծրագրի շրջանակներում լուրջ բարեփոխումներ են կատարվել հարկային ոլորտում, որի պտուղները կվայելենք քիչ ավելի ուշ, երբ այդ բարելավումներն ամբողջությամբ կյանքի կկոչվեն:

Հիմնականում կապված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, 2008 թվականի համեմատ 2009 թվականին նվազել են ՀՆԱ-ի (շուկայական գներով) հավելվածի տեմպը՝ 13%-ով, հարկերի հավելվածի տեմպը՝ 15.9%-ով, հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 0.6%-ային կետով (գծապատկեր 1):

Այնուամենայնիվ, հարկային բարեփոխումները շարունակվում են, և 2011 թվականի մայիսի 18-ին ՀՀ նախագահի կարգադրությամբ «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային համակարգի բարեփոխումների 2011-2013թթ. ծրագիրը»¹ դարձավ, ըստ էության, նախորդի շարունակությունը:

¹ <http://www.taxservice.am/index.php?menuID=231&tid=2&pid=&lng=9>

Հարկային եկամուտների հավելաճի տեմպը, ՀՆԱ-ի աճը շուկայական գներով, հարկային բեռի ցուցանիշները¹



2011-2013թթ. ռազմավարական ծրագրի բարեփոխումների նպատակներն են.

- Ավելացնել հարկային մարմինների կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ծավալը և թիվը, ընդլայնել ինքնուրույն հաշվարկվող հարկերի վճարման համար էլեկտրոնային հաշվետվությունների համակարգը:
- Տեղեկացնել գործարար հանրությանը հարկային վարչարարության զարգացումների մասին:
- Կատարել կառուցողական բարեփոխումներ և բարելավումներ վերադաս և տարածքային հարկային մարմիններում:
- Բարելավել հարկային օրենսդրությունը՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա:
- Բարելավել հարկատուներին մատուցվող ծառայությունների որակը՝ ընդլայնելով էլեկտրոնային կառավարման համակարգը:
- Համատարած հարկային ստուգումներից անցում թիրախային ստուգումների համակարգի:
- Բարելավել մարդկային ռեսուրսների որակը հարկային մարմիններում:
- Պայքարել հարկային հաշվետվությունների թերհայտարարագրման և հարկերից խուսափելու դեմ:
- Բարձրացնել վստահությունը և թափանցիկությունը,
- բարելավել համագործակցությունը զանգվածային լրատվական միջոցների հետ:

Այսպիսի շարունակական բարեփոխումների պայմաններում կլավանա ՀՀ գործարար միջավայրը, կավելանան օտարերկրյա ներդրումները: Իսկ ինչ վերաբերում է ընդհանուր տնտեսական զարգացմանը, ապա խիստ կարևոր է հարկային այնպիսի ռազմավարության մշակումն ու իրականացումը, որն առավել բարենպաստ պայմաններ կստեղծի երկրում տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնման, ներդրումային գործընթացների ակտիվացման, հավասար մրցակցային դաշտի ձևավորման և ընդլայնված վերարտադրության ապահովման համար: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ այդ քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման առումով խիստ կարևոր լծակ է, որի նպատակամետ և արդյունավետ օգտագործումը թույլ կտա տնտեսական զարգացման առումով ապահովել ցանկալի արդյունքներ:

¹ http://www.taxservice.am/uploads/pdf/annual_report-2011.pdf

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հարկային վարչարարության կազմակերպման սկզբունքները նպատակ ունեն ստեղծել հարկային այնպիսի համակարգ, որի իրագործումը առանց ցնցումների կապահովի պետական բյուջեի հարկային եկամուտների պլանային մեծությունը: Հարկային վարչարարությունը կարելի է ներկայացնել որպես հարկային մարմնի կողմից հարկային օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովում: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գոյություն չունի հարկային վարչարարության բոլորի կողմից ընդունված միասնական սահմանում: Այսպես, Մեծ հանրագիտարանում հարկային վարչարարությունը սահմանվում է որպես հարկային օրենսդրության պահպանմանն ուղղված հարկային մարմինների գործունեություններ¹: Վ.Կրասիցկու աշխատանքներում հարկային վարչարարությունը դիտվում է որպես հարկային հարաբերությունների կառավարման համակարգ, որի հիմնական խնդիրը տնտեսության առկա կառուցվածքին համապատասխանող հարկային հարաբերությունների նոր մեխանիզմների մշակումն է²: Մ.Օսպանովը հարկային վարչարարությունը ներկայացնում է որպես պետության կողմից և հարկային օրենսդրությամբ սահմանված իրավասությունների և գործառույթների շրջանակներում հարկային համակարգի վարչական կառավարում³:

Մի շարք հեղինակներ հարկային վարչարարությունը ներկայացնում են ավելի նեղ տեսանկյունից: Մասնավորապես, Գ.Չուխնիան հարկային վարչարարությունը ներկայացնում է որպես հարկային վերահսկողության սուբյեկտների արդյունավետ գործունեության կազմակերպում և իրականացում⁴: Ա.Արոնովի և Վ.Կաշինի տեսանկյունից հարկային վարչարարությունը իրենից ներկայացնում է որպես մեթոդների և հնարքների ամբողջություն, որի միջոցով գործադիր իշխանության մարմինները ուղղորդում են հարկային մեխանիզմների օրենքով սահմանված ուղղությամբ զարգացումը, իսկ քաղաքական և տնտեսական լուրջ վերափոխումների ժամանակ հարկային մեխանիզմները համապատասխանեցնում են նոր պահանջներին⁵:

Ներկայացված սահմանումների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարկային վարչարարության սահմանումներում հիմնական տարբերությունները վերաբերում են հարկային վարչարարության ընդգրկման և ուղղվածության շրջանակներին: Եթե որոշ սահմանումներում շեշտվում է հարկային վարչարարության իրավական կողմը (հարկային օրենսդրության կիրարկում և այլն), ապա մյուսներում շեշտվում է հարկային վարչարարության տնտեսական ազդեցությունը (տնտեսավարողների հետ հարաբերությունների կարգավորում և մակրոտնտեսական կայունացում):

ՀՀ օրենսդրությամբ հարկային վարչարարությունը սահմանվում է հարկային ծառայության մասին ՀՀ օրենքում՝ որպես հարկային մարմնի՝ հարկային ծառայության մասին օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործողություններ՝ ուղղված հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրության համատարած և ճիշտ կիրառման ապահովմանը, հարկային մարմնի խնդիրների իրագործմանը: Այսինքն՝ Հայաստանում հարկային վարչարարության սահմանման մեջ նույնպես շեշտվում է հարկային վարչարարության իրավական կողմը:

Ասվածն էլ ավելի հստակ է արտահայտված ՀՀ հարկային մարմնի՝ Հարկային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանված գործառույթների ուսումնասիրությունը: Մասնավորապես, նշված օրենքով ՀՀ հարկային մարմնի գործառույթների շարքին են դասվում.

¹ Большой энциклопедический словарь / под редакцией А.Н. Азрилияна. М., Издательство Института новой энциклопедии, 1999, с. 14.

² Красницкий В.А. Организация и методика налоговых проверок: учеб. пособие / под ред. Л.П. Павловой. М., Финансы и статистика, 2005, с. 15.

³ Оспанов М.Т. Налоговая реформа и гармонизация налоговых отношений. СПб., УЭФ, 1997, с. 289.

⁴ Перекрестова Л.В., Чухнина Г.Я. Реформирование системы налогового контроля в РФ. Волгоград, ВолГУ, 2001, с. 86.

⁵ Аронов А.В., Кашин В.А., Налоговая политика и налоговое администрирование: учеб. пособие. М., Экономист, 2006, с. 21.

- հարկ վճարողների սպասարկումը (հարկ վճարողներին իրազեկում, հարկային հաշվարկների, հայտարարագրերի, հաշվետվությունների, տեղեկանքների և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի ընդունում, օրենքով նախատեսված դեպքերում հարկերի հաշվարկում),
- հարկ վճարողների հաշվառումը,
- հարկերի և պարտադիր այլ վճարների հավաքման կազմակերպումը,
- հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը,
- հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի՝ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտավորությունների գծով պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումը,
- հարկ վճարողների բողոքների քննարկումը և որոշումների կայացումը,
- ՀՀ պետական և համայնքների բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը,
- արժույթային հարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջների նկատմամբ հսկողության իրականացումը,
- հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերով նախատեսված այլ գործառնություններ,
- գործատուների կողմից վարձու աշխատողների ապահովագրական նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման ճշտության նկատմամբ հսկողությունը՝ օրենքով սահմանված դեպքերում¹:

Ինչպես հեշտ է համոզվել՝ ՀՀ հարկային մարմնի գործառնությունը գերազանցապես վերաբերում են հարկային օրենսդրության գործառնական կազմակերպման խնդիրներին: Դա նշանակում է, որ տնտեսության համապետական կարգավորման այն գործառնությունները, որոնք կարող էին կյանքի կոչվել հարկային մարմնի կողմից, Հայաստանում չեն կիրառվում:

Հարկային վարչարարության էությունը բացահայտվում է այն սկզբունքներով և եղանակներով, որոնց շրջանակներում իրականացվում է վարչարարական այդ գործունեությունը: Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ բացակայում է հարկային վարչարարության սկզբունքների սահմանման միասնական մոտեցումը: Առավել ընդգրկում ուսումնասիրությունների շրջանակներում հարկային վարչարարության սկզբունքները բաժանվում են 2 խմբերի՝ հարկային վարչարարության ընդհանուր և մասնավոր սկզբունքների:


Ընդհանուր սկզբունքները կապված են հարկային վարչարարության համակարգային բնույթի հետ և ցույց են տալիս այն սահմանները, որոնց շրջանակներում կազմակերպվում է հարկային վարչարարությունը: Միաժամանակ, քանի որ հարկային վարչարարությունն իրենից ներկայացնում է հարկային հարաբերությունների կառավարման տեսակ, հարկային վարչարարության սկզբունքները կարելի է որոշակիացնել ըստ կառավարման գործառնությունների: Այսինքն՝ հարկային վարչարարության մասնավոր սկզբունքները վերաբերում են հարկային կառավարման գործառնությունների՝ հարկային պլանավորման, հարկային կանխատեսման, հարկային կարգավորման, հարկային վերահսկման, հարկերի հաշվարկման և վերլուծության սկզբունքների: Ուսումնասիրելով հարկային վարչարարության սկզբունքները՝ անհրաժեշտ է դիտարկել նաև այդ սկզբունքների կիրառման եղանակները: Քանի որ հարկային վարչարարությունը հիմնված է պլանավորման, կանխատեսման, կարգավորման, վերահսկման, հաշվառման և վերլուծության սկզբունքների վրա՝ դրանց իրականացումը հնարավոր է այդ սկզբունքներին հատուկ եղանակների կիրառման միջոցով²:

Հարկային վարչարարության հիմնական ընդհանուր սկզբունքները ներկայացված են գծապատկեր 1-ում:

¹ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք: ՀՀ ՊՏ 2002.08.14/33(208) Հոդ.737, ՀՕ-407-Ն, հոդված 9:

² Барулин С.В., Ермакова Е.А., Степаненко В.В. Налоговый менеджмент: учеб. пособие. М., Омега-Л, 2008, с. 104.

Հարկային վարչարարության հիմնական ընդհանուր սկզբունքները



Հարկային վարչարարության փոխկապվածության սկզբունքը ենթադրում է հարկային համակարգի կառավարման գործառնությունների հիմնարար տարրերի՝ հարկային պլանավորման, կարգավորման և վերահսկողության փոխկապակցվածություն, քանի որ այդ տարրերից թեկուզև մեկի ոչ անարդյունավետ իրագործումը հանգեցնում է հարկային վարչարարության ամբողջ համակարգի ռացիոնալ գործունեության խաթարմանը: Միասնականության սկզբունքը ենթադրում է հարկային վարչարարության բոլոր սուբյեկտների կողմից հարկային օրենսդրության կիրառման միասնական մոտեցում, ինչը նպաստում է հարկային օրենքների ամբողջական կիրառմանը՝ դրա հետ մեկտեղ բարձրացնելով համապատասխան մարմինների համագործակցության պարզությունը և կառավարման որակը: Եվ հակառակը, միասնականության բացակայությունը հանգեցնում է հարկային վարչարարության սուբյեկտների կողմից օրենսդրական ակտերի կամայական կիրառման, ինչն իր բացասական ազդեցություն է ունենում հարկային վարչարարության արդյունավետության վրա և հանգեցնում է հավաքագրվող հարկերի ծավալների կրճատման:

Միասնականության սկզբունքի հետ սերտորեն կապված են անկախության, չեզոքության, պատասխանատվության ինչպես նաև ընդհանրության սկզբունքները: Եթե առաջինը ենթադրում է, որ ստուգման ենթակա օբյեկտները չեն կարող ազդել հարկային վարչարարության սուբյեկտների գործողությունների վրա, ապա վերջինը նշանակում է, որ հարկային վարչարարությանը պետք է ենթարկվեն բոլոր հարկատուները: Պատասխանատվության սկզբունքը ենթադրում է հարկային օրենսդրության, նորմատիվ իրավական ակտերի, կանոնների խախտման դեպքում ինչպես հարկային վարչարարության մարմինների, այնպես էլ հարկատուների նյութական և վարչական պատասխանատվություն:

Հարկային վարչարարության արդյունավետության սկզբունքը ենթադրում է հարկային վարչարարության գործառնությունների նվազագույն ծախսերով իրականացում: Հաճախ հարկային վարչարարության արդյունավետությունը որոշվում է հավաքագրված հարկերի ծավալով, բացահայտված հարկային իրավախախտումների քանակով, հարկային մարմիններ ժամանակին ներկայացվող հարկային հաշվետվությունների քանակով և այլն: Հարկային վարչա-

րարության մարմինների գործունեության արդյունքը կապված է ոչ միայն ընդհանուր հարկային մուտքերի ծավալով, այլ նաև հարկային իրավախախտումների կանխարգելիչ միջոցառումներով, հարկային կարգապահության բարձրացմամբ, որոնք արտահայտվում են նաև քանակական ցուցանիշներով:

Հարկային վարչարարության ընդհանուր եղանակներն են՝

1. վարչական հարկադրումների եղանակը, որը կիրառվում է հարկատուների նկատմամբ հարկային պատժամիջոցների տեսքով՝ տուգանքներ, ունեցվածքի կալանք, հաշիվների սառեցում և այլն,
2. խթանող եղանակներ, որոնք ապահովում են հարկատուների հարկային պարտավորությունների կատարման օրինական գործընթացը (հարկային արտոնությունների տրամադրումը, հարկերի վճարման ժամկետների փոփոխությունը, հարկային նվազեցումները, հարկային և վերահսկիչ մարմինների աշխատակիցների նյութական խթանումը և այլն),
3. այլընտրանքների տրամադրման եղանակը, այսինքն հարկատուին հնարավորություն է տրվում ընտրելու տնտեսական գործունեություն ծավալելու իրավաքանական ձևը, հաշվառում վարելու և հաշվետվություններ կազմելու ձևը: Սակայն հարկատուի կողմից որոշակի վարքագծի ընտրությունից, այն նրա համար դառնում է պարտադիր, իսկ հարկային մարմինների համար ստուգումներ իրականացնելիս՝ նախնական,
4. վերահսկողության և կարգավորման եղանակ, որոնց շրջանակներում իրականացվում է հարկային հաշվառում, արտագնա և կամերալ ստուգումներ և այլն, որոնց նպատակը հարկատուի անօրինական գործունեության կանխումն ու նախազգուշացումն է:

Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրված չեն հարկային վարչարարության իրականացման սկզբունքները: Հարկային վարչարարության իրականացման սկզբունքներն անուղղակիորեն սահմանվում են հարկային ծառայության մասին օրենքում, հարկային ծառայության կազմակերպման սկզբունքների տեսքով¹,

- ՀՀ սահմանադրության, օրենքների գերակայությունը, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնությունը,
- հարկային ծառայության կայունությունը,
- հարկային ծառայողներին ներկայացվող պահանջների միասնականությունը և հարկային ծառայողների իրավահավասարությունը,
- օրենքով նախատեսված դեպքերում հարկային ծառայության հրապարակայնությունը,
- քաղաքացիների համար հարկային ծառայության հավասար մատչելիությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան,
- հարկային ծառայողների արհեստավարժությունը,
- հարկային ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը,
- հարկային ծառայողների պատասխանատվությունը՝ իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,
- հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների վճարման կամավորությունը և անխուսափելիությունը,
- հարկային օրենսդրության միատեսակ կիրառումը,
- հարկային ծառայության արդյունավետ կազմակերպումը,
- հարկային ծառայողների ռոտացիան²:

Հարկային վարչարարության սկզբունքների ուսումնասիրությունը բոլորովին էլ ինքնանպատակ չէ: Յուրաքանչյուր ծրագրի, քաղաքականության կամ ռազմավարության կազմումը ենթադրում է որոշակի չափանիշներ: Նման չափանիշների բացակայությունը սահմանափակում է տարբեր միջոցառումների փոխհամաձայնեցման շրջանակը, մանավանդ, եթե դրանք կազմվում են տարբեր ինստիտուտների կողմից: Մինչդեռ սկզբունքային մոտեցումների հստակ ներկայացումը, ընդհակառակը, կողողինացնում է տարբեր մարմինների աշխատանքը, ինչը տանում է դեպի արդյունավետության բարձրացման:

¹ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք: ՀՀՊՏ 2002.08.14/33(208) Հոդ. 737, ՀՕ-407-Ն:

² «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք: ՀՀՊՏ 2002.08.14/33(208) Հոդ. 737, ՀՕ-407-Ն, հոդված 7:

ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԴԵՐՈՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Որքան էլ կատարյալ լինի հարկային օրենսդրությունը, բարձր՝ տնտեսական ակտիվությունը և ցածր՝ պետության հարկային եկամուտների պահանջարկը՝ պետք է հաշվի առնել, որ հարկային քաղաքականության և վարչարարության անմիջական կատարողը մարդն է՝ հարկային ծառայողը, ով շահադրաման անընդհատ կարիք ունի: Հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետության խթանումը և ծառայողների ընտրությունը վճարող նշանակություն ունեն հարկային ծառայության համար՝ իր առջև դրված խնդիրները արդյունավետ լուծելու առումով: Այս առումով կարևոր է վերլուծել հարկային ծառայողների աշխատանքի կազմակերպման տնտեսաիրավական հենքը, ինչը հնարավորություն կտա բացահայտել առկա բացերն ու առաջարկել կատարելագործման ուղիներ:

Հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ներդրված է հարկային ծառայողների վարձատրության երկբաղադրիչ համակարգ, որը ներառում է հիմնական աշխատավարձն ու լրացուցիչ աշխատավարձը: Հարկային ծառայողների հիմնական աշխատավարձի հաշվարկման նպատակով հարկային ծառայողների պաշտոնների յուրաքանչյուր ենթախմբի համար սահմանվում է հիմնական աշխատավարձի սանդղակ՝ նվազագույն պաշտոնային դրույքաչափից մինչև առավելագույնը: Հարկային ծառայության յուրաքանչյուր պաշտոնում հարկային ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային պաշտոնային դրույքաչափը բազմապատկելով համապատասխան պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցով:

Լրացուցիչ աշխատավարձի համակարգն ավելի ընդգրկում է, և ներառում է հետևյալ բաղադրիչները՝

- աշխատանքի հատուկ պայմանների, աշխարհագրական միջավայրի, տոնական և հանգստյան օրերին, գիշերային ժամերին աշխատելու համար տրվող հավելումները,
- հարկային ծառայության դասային և հատուկ կոչումների համար տրվող հավելավճարները,
- ծառայողական գործունեության գնահատման արդյունքներով, հատուկ առաջադրանքների որակյալ կատարման, ինչպես նաև հարկային մարմնի գործունեության ամփոփ ցուցանիշներից ելնելով՝ հարկային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդից տրվող պարգևատրումները¹:

Հարկային ծառայողների վարձատրության ձևավորված համակարգի պայմաններում հարկային ծառայողների միջին աշխատավարձը 2010թ-ի փետրվարի դրությամբ կազմել է 379672 դրամ, իսկ միջին պաշտոնային դրույքաչափը՝ 191719 դրամ: Միջին աշխատավարձի մեջ 50.5%-ը կազմում է հիմնական աշխատավարձը, իսկ 49.5%-ը լրացուցիչ աշխատավարձը: Հարկային ծառայողների միջին, առավելագույն և նվազագույն աշխատավարձերի չափերն ըստ պաշտոնների խմբերի ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հարկային ծառայողների միջին, առավելագույն և նվազագույն աշխատավարձերի չափերն ըստ պաշտոնների խմբերի²

Պաշտոնի խումբը	Նվազագույն աշխատավարձ	Առավելագույն աշխատավարձ	Միջին աշխատավարձ
Բարձրագույն	373270	774137	537609
Գլխավոր	349520	659287	485296
Առաջատար	201817	618400	355523
Կրտսեր	121617	278317	203991

¹ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք: ՀՀՊՏ 2002.08.14/33(208) Հոդ.737, ՀՕ-407-Ն:

² Քաղաքացիական ծառայողների աշխատանքի վարձատրության մրցունակության բացահայտում թեմայով հետազոտության հաշվետվություն: Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, Երևան, 2010, էջ 7-10:

Աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ բարձրագույն և գլխավոր պաշտոններում միջին և նվազագույն աշխատավարձերը շատ չեն տարբերվում, ինչը պայմանավորված է այդ պաշտոնները զբաղեցնողների համեմատաբար մեծ ստաժի առկայությամբ: Հարկային ծառայության բարձրագույն և կրտսեր պաշտոնների խմբերի միջին աշխատավարձերի հարաբերակցությունը կազմում է մոտ 2.6: Հարկ է նշել, որ Պետական եկամուտների կոմիտեի կենտրոնական ապարատում աշխատող հարկային ծառայողների միջին աշխատավարձերի և տարածքային հարկային տեսչությունների հարկային ծառայողների միջին աշխատավարձերի տարբերությունը հասնում է մոտ 37%-ի: Իսկ եթե դիտարկենք ըստ պաշտոնների խմբերի, ապա առաջատար, հատկապես կրտսեր պաշտոններում նկատվում է հակառակ միտումը, այսինքն, եթե կենտրոնական ապարատում բարձրագույն պաշտոններ զբաղեցնողների միջին աշխատավարձը 15%-ով բարձր է տարածքային տեսչություններում նույն պաշտոնները զբաղեցնողների միջին աշխատավարձից, ապա ապա կրտսեր խմբում ճիշտ հակառակը՝ 15%-ով ցածր է:

Հարկային ծառայողների լրացուցիչ աշխատավարձի կառուցվածքում 4.5%-ը բաժին է ընկնում հավելավճարին (կոչման, ինչպես նաև գիտական աստիճանի համար), իսկ 95.5%-ը՝ պարգևին: Հարկային ծառայողների լրացուցիչ աշխատավարձի մեջ բոլոր 4 պաշտոններում գերակշռող է պարգևի չափը, ինչը պայմանավորված է նաև հարկային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդից տրվող պարգևներով:

Հարկային վարչարարության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է հարկային մարմնի աշխատակիցների, մասնավորապես՝ հարկային տեսուչների վարձատրության հիմքում ներառել շուկայական տնտեսությանը հարիք գնահատման «բիզնես մոդելներ», ինչը հնարավորություն կտա տարբերակված աշխատանքի վարձատրություն սահմանել արդյունավետ և ոչ արդյունավետ աշխատող հարկային ծառայողների համար: Տարբեր մասնագետներ հարկային տեսուչների գործունեության գնահատման հիմքում դնում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են հարկերի հավաքագրման պլանների կատարումը, հարկային պարտավորությունների չկատարման մակարդակի նվազեցումը, շահած հարկային վեճերի կամ բողոքարկումների քանակը, մինչ դատարան դիմելը լուծված հարկային վեճերի քանակը, հարկային ստուգումների արդյունաբարությունը, ինչպես նաև յուրաքանչյուր հարկային տեսուչի հաշվով արդյունաբար (խախտում արձանագրած) հարկային ստուգումների քանակը, ստուգումների ընդհանուր ծավալում արդյունաբար ստուգումների մասնաբաժինը, հարկատուների հետ հարկային մարմինների աշխատողների կողմից տարվող բացատարական աշխատանքների ծավալը, հարցումների դիտարկման օպերատիվությունը, հարկատուների կողմից առարկությունների բացակայությունը և այլն¹:

Հարկային մարմնի աշխատակցի հավելավճարի հաշվարկման ժամանակ պետք է հաշվի առնել նաև տվյալ աշխատակցի ստորաբաժանումը և մասնագիտական պատրաստվածությունը: Հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետության գնահատման ժամանակ օգտակար կլինի հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են մեծ լարվածությամբ և կատարողական բարձր ցուցանիշներ ապահովելու պայմաններում աշխատելու ունակությունը, սահմանված կարգով հրատապ ու պատասխանատու աշխատանքների կատարման գործում անհատական մասնակցությունը, խոշոր հարկատուների ստուգումների աշխատանքներում մասնակցությունը, դատարանում հարկային մարմնի շահերի պաշտպանության ժամանակ մասնակցությունը, հարկային մարմինների շահերի փաստարկված պաշտպանելու կարողությունը, ժամանակավորապես բացակայող աշխատակիցների արդյունավետ փոխարինելու կարողությունը, հարկային մարմինների գործունեության կատարելագործմանն ուղղված նոր նախագծերի ներդրման աշխատանքներում ակտիվ մասնակցությունը, կառուցվածքային և ներգերատեսչական աշխատանքների կատարելագործմանն ուղղությամբ առաջարկություն ներկայացնելու ունակությունը, և այլն:

Հարկային մարմնի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետության գնահատման համար տարբերակված չափանիշերի կիրառումը պայ-

¹ Смирнова Е.Е., О совершенствовании контрольной работы налоговых органов (по материалам опроса работников налоговых органов) // Налоговый вестник. 2008, №2, с. 5.

մանավորված է այն հանգամանքով, որ հաճախ առաջադրվող պլանային առաջադրանքները հանգեցնում են նրան, որ հարկային մարմնի աշխատակիցներն ամեն կերպ ջանում են գերակատարել պլանը, ինչքան հնարավոր է ավելի շատ գնահատականներ ստանալ և վարկանիշային աղյուսակում գրավել առաջին տեղը: Բացասական ազդեցություն ունենալով հարկատուների վրա՝ դա կարող է նաև հակասություններ առաջացնել հարկային մարմնի տարբեր ստորաբաժանումների միջև: Հակասությունն այն է, որ կամերալ ուսումնասիրությունների ու ստուգումների պատասխանատուները ջանում են ցանկացած եղանակով (նույնիսկ դատարանի միջոցով) որքան հնարավոր է շատ գումարներ (հարկեր, տուգանքներ և այլն) գանձել հարկատուներից, ինչը չի խրախուսվում իրավաբանական վարչության կողմից, քանի որ նրանք հետաքրքրված չեն ռիսկային դատական գործերով: Այսպիսով, մարդկանց մի խումբ ջանում է բոլոր հնարավոր եղանակներով լցնել բյուջեն (գանձումներ կատարել նույնիսկ ամենաչնչին խախտումների պարագայում), իսկ մյուս խումբը իրեն սպահովագրելու նպատակով չի ցանկանում ներգրավվել այնպիսի դատական վեճերում, որի հաղթելու հավանականությունը 100% չէ:

Այսպիսով, հարկային մարմինների աշխատակիցների նյութական խթանման համակարգը կարիք ունի որոշ փոփոխությունների: Կամերալ ուսումնասիրությունների ու ստուգումների ստորաբաժանումների օրինակով առաջարկում ենք դիտարկել մեր կողմից մշակված տեսուչների գործունեության արդյունավետության գնահատման չափանիշների համակարգը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Կամերալ ուսումնասիրությունների ու ստուգումների ստորաբաժանումների աշխատակիցների գործունեության արդյունավետության գնահատման չափանիշները

Ցուցանիշ	Ցուցանիշի բնութագիրը	Միավոր
Աշխատակիցների ծանրաբեռնվածությունը (1 հարկային տեսուչի հաշվով հարկատուների քանակը)	Նորմայից (միջինից) ցածր կամ հավասար	0
	Նորմայից (միջինից) բարձր	10
1 հարկատուի հաշվով տեսուչի կողմից առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորություններ	Միջինից ցածր կամ հավասար	0
	Միջինից բարձր	15
Հարկային տեսուչի գործողությունների նկատմամբ հարկատուների դժգոհությունը	Բողոքներ կան	0
	Բողոքներ չկան	15
Գատարանում քննարկված գործեր	Որոշումը հօգուտ հարկատուի	0
	Որոշումը հօգուտ հարկային մարմնի	15
Հաշտեցման համաձայնագրեր կնքում	Չեն կնքվել	0
	Կնքվել են	15
1 հարկային տեսուչին ընկնող ծախսերի հարաբերությունը նրա աշխատանքի արդյունքում հավաքագրված հարկային մուտքերի գումարին	Ծախսերը գերազանցում են	0
	Եկամուտները գերազանցում են	15
Հարկային ստուգումների արդյունավետությունը (ընդհանուր ստուգումների քանակում բացահայտված խախտումների քանակը)	70% և ավելի	15
	Մինչև 70%	0

Այսպիսով, հարկային տեսուչի գործունեության արդյունավետության արդյունքները գնահատվում են 100 բալանոց համակարգով: Մինչև 40 բալ հավաքած տեսուչի աշխատանքը համարվում է անարդյունավետ և չի ենթադրում հավելավճարի տեսքով խրախուսում, 40-60 բալի դեպքում՝ քիչ արդյունավետ, 60-80 բալի դեպքում՝ արդյունավետ, 80-100 բալի դեպքում՝ շատ արդյունավետ: Պարզևատրումների ֆոնդն այս դեպքում բաշխվում է ըստ հարկային տեսուչի հավաքած միավորների համամասնության:

Եթե հարկային մարմնի աշխատակիցների աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշները հստակ չեն, ստորաբաժանումների ղեկավարները նախաձեռնությունը

վերցնում են իրենց ձեռքը: Մեր կարծիքով դա ճիշտ մոտեցում չէ: Ստորաբաժանման ղեկավարի կողմից բալերի (հավելավճարների գումարների) որոշման ժամանակ սուբյեկտիվ մոտեցումից խուսափելու համար, որի դեպքում առավել մեծ նյութական խրախուսումները ստանում են ղեկավարության «սիրելիները», այլ ոչ թե հաշվետու ժամանակաշրջանում լավագույն արդյունք ցուցաբերած տեսուչները, առաջարկվում է բավականին խելամիտ մոտեցում: Մեր կարծիքով պետք է խիստ վերահսկողություն իրականացնել գումարների ճշգրիտ և արդար բաշխման նկատմամբ: Այդ նպատակով կադրերի բաժնում անհրաժեշտ է ստեղծել հատուկ պաշտոն կամ պատասխանատու, որը կգբաղվի եռամսյակի ընթացքում տեսուչի կողմից կատարված աշխատանքի մասին տեղեկատվության հավաքագրմամբ և տեղեկատվության մշակման արդյունքներով կորոշի անհատական նյութական խրախուսման չափը: Նման համակարգի ձևավորումը նյութական խրախուսման համակարգը կդարձնի ավելի թափանցիկ՝ հնարավորություն ընձեռելով վերահսկել միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Ինչպես նշվեց, հարկային մարմնի տարբեր ստորաբաժանումների աշխատանքի գնահատման ժամանակ անհրաժեշտ է կիրառել տարբեր չափանիշեր: Բացի այդ, հարկային մարմնի տարբեր ստորաբաժանումներ տարբեր ներդրում են ունենում ինչպես զարգացման ֆոնդի, այնպես էլ հարկային մարմնի աշխատանքի ընդհանուր գնահատականի ձևավորման վրա: Այլ կերպ ասած՝ հարկային մարմնում կան «կարևոր» և «ոչ այնքան կարևոր» ստորաբաժանումներ, որոնց միջև ևս խրախուսման միջոցները պետք է բաժանված «ըստ կարևորության» կշռի: Օրինակ՝ կամերալ ուսումնասիրությունների ու ստուգումների ստորաբաժանումները, որոնց շնորհիվ ապահովվում են բյուջե մուտքագրվող հարկային վճարների մեծ մասը, ավելի մեծ մասնաբաժին պետք է ստանան, քանի որ պետք է հատուկ ուշադրություն դարձնել այդ ստորաբաժանման աշխատակիցների նյութական խրախուսմանը: Միաժամանակ, ստուգումներն ի տարբերություն գրեթե ամբողջովին ավտոմատացված կամերալ ուսումնասիրությունների ավելի դժվար ու մասնագիտական պատրաստվածություն պահանջող աշխատանք է: Այդ պատճառով պետք է տարբերակել նաև նշված ստորաբաժանումների նյութական խրախուսման գործակիցները: Միաժամանակ, ստուգումներ իրականացնող ստորաբաժանումների հարկային տեսուչների ֆինանսական խրախուսումը պետք է ուղեկցվի այդ աշխատակիցների հավաքագրման խիստ պայմաններով:

Բացի հարկային ստուգումներ իրականացնող աշխատակիցներից ուշադրության են արժանի նաև հարկատուների սպասարկման ստորաբաժանման աշխատակիցները: Նրան պարտականություններից են հարկատուների ընդունումը, փաստաթղթերի գրանցումը և հաշվետվությունների տեսողական վերլուծությունը: Այս ստորաբաժանման աշխատակիցները պարտավոր են գրագետ և բարեհամբույր պատասխանել հարկատուների հարցերին, ինչը պահանջում է հարկային օրենսդրության փոփոխությունների իմացություն:

Աշխատավարձի բարձրացումը և խրախուսող հավելավճարների թափանցիկ համակարգի ներդրումը հնարավորություն կտա բարելավել իրավիճակը: Հավանական է, որ անարդյունավետ աշխատանքի համար հավելավճարներից զրկումը դրականորեն կազդի հարկային ստուգումների որակի վրա և մատուցվող ծառայությունների մակարդակի վրա: Հարկային աշխատակիցներն ինչ-որ որոշում ընդունելուց առաջ նախ կմտածեն դրա հետևանքների մասին: Միայն այդ դեպքում հնարավորություն կստեղծվի բարձրացնել վերահսկողական գործընթացների արդյունավետությունը, նվազեցնել հարկատուների կողմից հարկային աշխատակիցների կայացրած որոշումների գանգատարկման մասին դիմումների քանակը և հարկատուների մոտ բարձրացնել հարկային աշխատակիցների վարկանիշը, քանզի հարկային մարմինները շատ հաճախ իրականացնում են սխալ և անտեղի գործողություններ:

ՎԱՐԴԻՍԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Մ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆեսոր
Մ ԳԱԱ Մ. Բոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն*

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Մ ԳԱԱ Մ. Բոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.*

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Վերջին մի քանի տարիների ընթացքում «ֆինանսատնտեսական ճգնաժամ» բառերը դարձել են աշխարհում ամենաշատ օգտագործվողներից մեկը: Երկրագնդի վրա չի գտնվի այնպիսի մի մարդ, ում այս կամ այն կերպ չանդրադարձավ այդ ճգնաժամը. շահույթների նվազում, գների աճ, աշխատատեղերի կորուստ, գործազրկության աճ, վճարումների, այդ թվում՝ աշխատավարձերի և կենսաթոշակների ուշացում, արտաքին և ներքին շուկաների կորուստներ, ֆինանսական շուկաների անկումներ, բանկային և այլ ֆինանսական կառույցների սնանկացումներ և այլն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ներկա պահին խիստ կարևորվում է գտնել և վեր հանել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման իրական և հիմքային պատճառները՝ հետազայում գերծ մնալու անկանխատեսելի զարգացումներից և հնարավորին չափ դիմակայելու ֆինանսատնտեսական ճգնաժամների մարտահրավերներին՝ առավելապես պատրաստ լինելով դրանց:

Միջազգային փորձագետները նշում են վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի մի շարք ընդհանրացված պատճառներ, ինչպիսիք են.

- տնտեսության զարգացման բնականոն ցիկլերը,
- վարկային շուկայի գերակտիվացումը, կամ հիփոթեքային ճգնաժամը,
- հումքի բավական բարձր գները,
- անարդյունավետ ֆինանսական կարգավորման մեթոդների կիրառությունը տարբեր երկրներում:

Վերջիններից, որպես ամենագլխավոր, հարկ է նշել ԱՄՆ կառավարության կողմից վերջին տասնամյակներում վարվող ֆինանսական քաղաքականությունը, որի հիմնական բնորոշ գիծը ԱՄՆ դոլարի հսկայական չափերով արտադրությունն է: Այսօրինակ քաղաքականությանը մեծապես նպաստեց 1971 թվականին կայացած Յամայկայի միջազգային խորհրդաժողովը, որտեղ որոշվեց ԱՄՆ դոլարին վերապահվել միջազգային հաշվարկային և վճարային միջոցի բացառիկ դերը: Հաշվի առնելով այն փաստը, որ ԱՄՆ դոլարի վճարունակության մակարդակը որոշվում է ոչ միայն ԱՄՆ ՀՆԱ-ի այլև աշխարհի բոլոր երկրների ՀՆԱ-ի ծավալներով, և որ դոլարի նորանոր մեծածավալ թողարկումների բացասական հետևանքները շատ կարճ ժամանակահատվածում ի հայտ չեն գա, ապա սա պարարտ հող նախապատրաստեց ԱՄՆ Գ-աշնային պահուստային համակարգի (այսուհետ՝ Գ-ՊՀ) համար՝ իրականացնելու անսահմանափակ քանակի դոլարների նորանոր թողարկումներ: Բնականաբար, եթե այս գործընթացը հետևողական կերպով վերահսկվեր ԱՄՆ և համաշխարհային ֆինանսական կառույցների կողմից, ապա ոչ մի խնդիր չէր լինի: Սակայն, նույնիսկ ԱՄՆ կառավարությունը ի պաշտոնե չէր վերահսկում դոլարների վերարտադրությունը: Վերջինիս ինչպես թողարկումը, այնպես էլ վերահսկողությունը, ըստ ԱՄՆ գործող օրենսդրության, վերապահված է միայն ԱՄՆ Գ-ՊՀ-ին: Վերջինս իր գործառնություններով և լիազորություններով ԱՄՆ Կենտրոնական բանկն է: Սա մասնավոր մի կառույց է, որը պատկանում է նրա անդամ հանդիսացող 20 մասնավոր բանկերին: Այսպիսով, մասնավոր մի կառույց, որի հիմնական և մենաշնորհային գործառնություններից ամենագլխավորը, թերևս, փողի թողարկումն է, 1971 թվականից ստացավ հնարավորություն այն թողարկելու անսահմանափակ քանակով, ինքնուրույն որոշելով թողարկումների ծավալները և ժամկետները: Սա հանգեցրեց նրան, որ 2007 թվականին, երբ պաշտոնապես արդեն սկսեցին խոսել ֆինանսական ճգնաժամի մասին,

համաշխարհային դոլարային զանգվածն աճել էր մի քանի անգամ ավելի արագ, քան համաշխարհային համախառն ապրանքների շուկաների համախառն ծավալը: ԱՄՆ համախառն ներքին արդյունքը, ըստ պաշտոնական աղբյուրների, կազմում է համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 20 տոկոսը, սակայն ԱՄՆ-ի սպառումը կազմում է համաշխարհային արտադրության շուրջ 40 տոկոսը: Ակնհայտ է, որ մնացած 20 տոկոսը վճարվում է ոչ մի իրական ակտիվով չապահովված և պարզապես տպագրված դոլարների հաշվին, իսկ վերջինիս ֆինանսական բեռը ընկել էր արդեն ոչ միայն ԱՄՆ-ի ազգաբնակչության, այլև աշխարհի բոլոր երկրների վրա, որոնք այդ մասին ոչինչ կամ գրեթե ոչինչ չգիտեին:

Որպեսզի իրական ակտիվներով չապահովված դոլարային զանգվածը միանգամից չհոսեր դեպի ապրանքների և ծառայությունների շուկաներ, ինչը կհանգեցներ դոլարի զգալի արժեզրկման, ապա անհրաժեշտ էր այն ինչ-որ կերպ կապակցել ֆինանսական շուկաների հետ, որտեղ կիրառվող զանազան ֆինանսական գործիքները կգրավեին այդ փողային զանգվածի մեծ մասը: Ընդհանրապես, ցանկացած արժեթղթի իրական գնի ձևավորման ամենագլխավոր գործոնը տվյալ արժեթուղթը թողարկող ընկերության շահութաբերությունն է: Ընկերության արժեթղթերի գինը բարձր է այնքան, որքան մեծ է ընկերության շահույթը: Սա նշանակում է, որ նորմալ գործող ֆոնդային շուկաներում որպես արժեթղթերի գրավչության չափանիշներ դիտարկվում են այդ արժեթուղթը թողարկող ընկերության շահութաբերությունը, զարգացման հեռանկարները, գործունեության ոլորտը և այլն: Սակայն, ժամանակակից շուկաների գլոբալիզացիայի, ֆինանսական նորամուծությունների և նորանոր ածանցյալ գործիքների կիրառման, շուկաներում սպեկուլյատիվ տենդենցների աճի պայմաններում ֆինանսական շուկաները դարձել են ավելի շատ վիրտուալ, քան իրական: Այստեղ, օրինակ, արժեթղթերը, որոնց թողարկող ընկերություններն ապահովում են շատ չնչին տարեկան շահութաբերություն, ֆոնդային շուկաներում ներդրողների համար կարող են ապահովել մի քանի անգամ ավելի մեծ շահութաբերություն՝ ցուցադրելով աճող գնային դինամիկա: Ներկա պայմաններում, որպես արժեթղթերի գնումը խթանող գործոն, հանդես է գալիս դրանց շուկայական արժեքի դինամիկան: Դրանում է ներդրողի համար արժեթղթերի գրավչությունը, և դա է, ի վերջո, ապահովում նրա հիմնական եկամուտը: Մասնավորապես, ազատ ֆինանսական միջոցներ տնօրինող որևէ մի գործարար ներդրում կատարելուց առաջ մտածում է, թե արդյոք արժե՞ խոշոր գումարներ ներդնել տնտեսության իրական հատվածում, որի համար անհրաժեշտ է հատուկ բիզնես-պլան մշակել, գնել թանկարժեք սարքավորումներ, բարձր որակավորում ունեցող աշխատուժ հավաքագրել, շուկայում ապրանքի առաջխաղացման լայնամասշտաբ և ծախսատար մարքեթինգային քաղաքականություն վարել և արդյունքում, այն էլ ոչ կարճ ժամանակահատվածում, ստանալ համեստ շահույթներ, թե՞ այդ նույն միջոցները ներդնել ֆոնդային շուկայում որևէ գրավիչ արժեթղթերի փաթեթում և կարճ ժամանակում ապահովել զգալի եկամուտներ:

Այստեղ կարևոր են համարում նշել, որ ԱՄՆ-ում ընդունված հաշվապահական հաշվառման ստանդարտները ևս նպաստում են վերը նշված գործընթացին: Ըստ այդ ստանդարտների, որպես ակտիվների արժեք, հաշվապահական փաստաթղթերում նշվում են ոչ թե այդ ակտիվների իրական, այլ շուկայական արժեքները: Դժվար չէ կռահել, թե դրա արդյունքում ինչ է տեղի ունենում: Ծատ ժամանակ շուկայական գնագոյացման վրա ազդում են նաև միջազգային բարձր հեղինակություն վայելող վարկային գործակալությունների սահմանած վարկանիշները, ինչպիսիք են, օրինակ, Մուդիսը, S&P-ն և Ֆիթչը: Իրականում այս կազմակերպությունների առաքելությունն է ոչ թե հրապարակել ֆինանսական շուկաներում արժեթղթերի վարկանիշները, այլ բացահայտել այդ արժեթղթերը թողարկող ընկերությունների իրական ֆինանսատնտեսական վիճակը և ներդրողներին ապահովել անհրաժեշտ ու բավարար տեղեկատվությամբ, որի հիման վրա նրանք կընդունեն ներդրում կատարելու համապատասխան որոշումներ:

Անդրադառնանք ԱՄՆ հիփոթեքային և սպառողական վարկերի շուկաներում տեղի ունեցած զարգացումներին: Սկսած 1980-ական թվականներից՝ ԱՄՆ-ում սկսվեց լայնամասշտաբ վարկավորման գործընթաց, հիմնականում հիփոթեքային և սպառողական վարկերի տրամադրմամբ: Սրան զուգընթաց, անշարժ գույքի գները շատ արագ տեմպերով աճում էին: Ֆինանսական կառույցները վարկեր էին տրամադրում նույնիսկ վատ վարկային

պատմությամբ և ցածր եկամուտներ ունեցող հաճախորդների: Այսպիսի վարկերը, ստանալով «սուբսյուբսի» անվանումը, լայն տարածում ստացան: Սակայն, ո՛չ ԱՄՆ կառավարությունը և ո՛չ էլ ֆինանսական հաստատությունները չէին մտածում, որ այդ «կասկածելի» վարկերը ժամանակի ընթացքում լուրջ վճարունակության ու իրացվելիության խնդրի առաջ կկանգնեցնեն ողջ համաշխարհային ֆինանսական համակարգը: Բանկերը, որպեսզի «մաքրեին» իրենց հաշվեկշիռները այդ «կասկածելի» վարկերից, արժեթղթավորեցին դրանք՝ թողարկելով հիփոթեքային արժեթղթեր: Վերջիններս շրջանառվում էին առաջնային և երկրորդային ֆոնդային շուկաներում և անշարժ գույքի բարձր գների ու դրա անընդհատ աճի պայմաններում մեծ պահանջարկ էին վայելում: Սա նշանակում է, որ տրամադրված «կասկածելի» վարկերի չվերադարձման ռիսկը ամբողջությամբ դրվեց ոչինչ չկասկածող շարքային ներդրողների վրա: Սակայն, սա դեռ ամբողջը չէ: Շուկայում գործող խոշոր ներդրումային հիմնադրամները, ապահովագրական ընկերությունները և այլ ֆինանսական հաստատություններ, գնելով այդ արժեթղթերը, դրանց հիման վրա թողարկեցին իրենց սեփական արժեթղթերը, որոնք նույնպես մուտք գործեցին ֆինանսական շուկաներ և այսպես շղթայական կարգով: Այդ գործընթացը ժամանակի ընթացքում դուրս եկավ ԱՄՆ-ի սահմաններից և տարածվեց աշխարհով մեկ: Շատ ժամանակ, գործնականում, նույնիսկ անհնար էր պարզել կոնկրետ արժեթղթի իրական «սկզբնաղբյուրը»: ԱՄՆ և միջազգային ֆինանսական շուկաներում սկսվեց աննախադեպ գերակտիվացման շրջան, որն, ինչպես հետագայում կպարզվի, ընդամենը չափազանց մեծ «պղպջակ» էր:

Միջազգային ֆոնդային շուկաներում շրջանառվում էր, մոտավորապես, մի քանի տասնյակ տրիլիոնի հասնող դոլարային զանգված, այն դեպքում, երբ այդ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքներն ապահովված էին շատ անգամ ավելի քիչ արժողությամբ իրական ակտիվներով: Ըստ հաշվարկների՝ ֆինանսական շուկաներում շրջանառվող արժեթղթերի համախառն արժեքը 1980 թվականին հավասար էր համաշխարհային համախառն արդյունքին, իսկ արդեն 2006 թվականին այդ արժեքը հատեց 100 տրիլիոն դոլարի սահմանագիծը և կրկնակի գերազանցեց համաշխարհային համախառն արդյունքը:

Ակնհայտ է, որ պետությանը, կայուն տնտեսական աճ ապահովելու համար, անհրաժեշտ է խթանել բավարար մակարդակի համախառն շուկայական պահանջարկ՝ առանց ազգաբնակչության եկամուտների զգալի ավելացման, հակառակ դեպքում տեղի կունենա փողի զգալի արժեզրկում, ինչի հետևանքները քաջ ծանոթ են բոլորին: Այս հարցի լուծման տարբերակներից մեկը ազգաբնակչության լայն խավերի կողմից տարբեր տեսակի վարկերից օգտվելն ու այդ վարկերի հաշվին համախառն սպառման խթանումն էր: Վերջիններս, բնականաբար, պետք է հասանելի լինեին ազգաբնակչության բոլոր խավերին: Այս նպատակի համար ԱՄՆ-ում, ինչպես արդեն հիշատակվեց, վարկավորման մեծ արշավ սկսվեց: Այստեղ, դեռևս 1980-ական թվականներից լայն թափ առավ վարկային քարտերի թողարկումը: Վերջիններիս միջոցով ազգաբնակչությունը հնարավորություն ստացավ սպառողական վարկեր ստանալու՝ իրենց սպառողական կարիքները բավարարելու համար, ինչպես օրինակ՝ մեքենայի, կահույքի և լայն սպառման ապրանքների ձեռքբերում, բժշկական, ինչպես նաև այլ ծառայությունների համար վճարում: Բացի այդ, լայն տարածում գտան նաև հիփոթեքային վարկերը: ԱՄՆ-ի կառավարության քարոզչամեքենան, իր լծակներն օգտագործելով, մարդկանց հորդորում էր օգտվել տարբեր տեսակի վարկերից, ինչին մեծապես նպաստում էին բանկերի կողմից իրականացվող ագրեսիվ գովազդային արշավները: 1977 թվականին ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից ընդունված «Կոմունալ ներդրումների մասին» օրենքը պարզապես խթանեց բանկային կառույցներին՝ լայնամասշտաբ վարկային արշավ ծավալելու: Բնականաբար, որպեսզի պարտավորությունները աճեն սահուն և աստիճանական, անհրաժեշտ էին ցածր բանկային տոկոսադրույքներ, ինչին ուղղված դրամավարկային քաղաքականություն էր իրականացվում ԱՄՆ ԴՊՀ-ի կողմից: Այսօրինակ քաղաքականությունը այն ժամանակ մեծ ոգևորությամբ ընդունվեց բոլորի կողմից: Արդյունքում, ԱՄՆ-ի ազգաբնակչությունը, որ նորանոր վարկեր էր վերցնում, արդեն իսկ կուտակել էր հսկայածավալ պարտավորություններ: Այսպես, 1980-ական թվականներին, միջին հաշվով, ամերիկյան յուրաքանչյուր երրորդ ընտանիքն իր հաշվին ուներ շուրջ 10 000 ԱՄՆ դոլարի հասնող պարտք: 2007 թվականին արդեն ամերիկացիների բանկային ընդհանուր պարտքը կազմում էր շուրջ 900

մյոդ ԱՄՆ դոլար, որը կրկնապատկվել էր 10 տարի առաջվա այդ նույն ցուցանիշի համեմատ: Միևնույն ժամանակ, ամերիկյան ազգաբնակչության պարտավորությունները 2007 թվականին կազմեց ԱՄՆ ՀՆԱ-ի մոտ 98 տոկոսը, այնինչ 1979 թվականին այդ նույն ցուցանիշը 46 տոկոս էր: Միայն վարկային պարտավորությունների սպասարկման գումարը 2007 թվականին կազմեց 165 մյոդ ԱՄՆ դոլար, ինչը կրկնապատկվել էր 2002 թվականի նույն ցուցանիշի համեմատ: Հարկ են համարում նշել նաև, որ համարյա նույն իրավիճակն էր տիրում նաև Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում և եվրոպական մի շարք այլ զարգացած երկրներում:

Դեռևս 2004 թվականին Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր Նուրիել Ռուբինին կանխատեսեց ԱՄՆ-ում տնտեսական անկում՝ 2005-2006 թվականներին ընկած ժամանակահատվածում: 2004 թվականին «Մորգան Սթենլի Ասիա» ընկերության տնտեսական բաժնի դեկավար Էնդի Քսայը միջազգային տնտեսական համաժողովում հայտարարեց, որ համաշխարհային տնտեսությանը սպասվում է մեծ անկում՝ կապված գերարտադրության հետ, ինչը, սակայն, «արհեստականորեն» ձգձգվում էր ԱՄՆ կառավարության կողմից դոլարի գերարտադրության, ինչպես նաև շուկայում գործող անշարժ գույքի չափազանց բարձր գների շնորհիվ: Ըստ նրա, անշարժ գույքի շուկայի և դրա հիման վրա նաև ֆինանսական շուկայի արհեստական գերակտիվացումը հետագայում էլ ավելի մեծ անկման կրեքի ու կհանգեցնի հսկայական դեֆլյացիայի: 2006 թվականին Միջազգային արժույթային հիմնադրամի կազմակերպած խորհրդածողովին նա հայտարարեց, որ մոտակա մեկ տարում ԱՄՆ-ը կհայտնվի իր նախադեպը չունեցող տնտեսական ռեցեսիայի մեջ՝ կապված անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակի, ֆինանսական հաստատությունների կողմից պարտավորությունների արժեթղթավորման մեծ ծավալի ու զանազան ածանցյալ ֆինանսական գործիքների լայն տարածման հետ: Ըստ նրա, դա ի վերջո կրեքի ամբողջ ֆինանսական համակարգի կազմալուծման: Սակայն, համապատասխան լուրջ քայլեր ձեռնարկելու համար անհրաժեշտ էին քաղաքական հստակ ու կտրուկ որոշումներ, ինչը տվյալ ժամանակահատվածում ձեռնառու չէր, քանի որ առկա տնտեսական աճը գոհացնում էր թե՛ պետությանը, թե՛ ազգաբնակչությանը և թե՛ ֆինանսական կառույցներին: Ավելին, վարկային ու ֆոնդային շուկայի գերակտիվացումը դրված էր ԱՄՆ կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության հիմքում: Ավելի խորաթափանց ներդրողները, խաղալով գների իջեցման վրա, սկսեցին մեծ փողեր վաստակել: Զգալով մոտալուտ ֆինանսական աղետը՝ մնացած ներդրողները ևս սկսեցին վաճառել իրենց ակտիվում եղած արժեթղթերը, անշարժ գույքը և այլ ակտիվներ՝ կանխիկ գումար ստանալու համար: Սա, իր հերթին, ավելի արագացրեց արդեն իսկ կանխորոշված համաշխարհային ֆինանսական ճգնաժամը: Ինչ վերաբերում է բանկերին և մյուս ֆինանսական կառույցներին, ապա վերջիններս իրենց վճարունակությունը պահպանելու նպատակով միանգամից դադարեցրին վարկերի տրամադրումը: Արդյունքում տնտեսության իրական հատվածը գրկվեց իր ֆինանսական ամենագլխավոր աղբյուրից: Սա, իր հերթին, հանգեցրեց արտադրության և ապրանքաշրջանառության կրճատման, գործազրկության աճի: Այսպիսով, ֆինանսական ճգնաժամը տեղափոխվեց տնտեսության իրական հատված և վերածվեց ֆինանսատնտեսական ճգնաժամի:

Սակայն, ճգնաժամի առաջացման բոլոր նախադրյալները առկա էին: Դեռևս, սկսած 2005 թվականի սկզբից ԱՄՆ-ի բնակֆոնդի շինարարությունը կանգ առավ, իսկ նույն տարվա արդեն վերջին՝ անշարժ գույքի առքուվաճառքի ծավալները կրճատվեցին, և դրանց գների անկում տեղի ունեցավ: Արժեթղթավորված բանկային պարտավորությունները դարձել էին արդեն խնդրահարույց: Վարկերը մարելու համար մարդիկ ստիպված էին վաճառել իրենց պատկանող անշարժ գույքը, սակայն օրեցօր տեղի ունեցող գների անկման պարագայում դրա դիմաց ստացվող գումարները բավարար չէին ստացված վարկերը մարելու համար: 2006 թվականին սնանկացավ հիփոթեքային վարկեր տրամադրող առաջին ընկերությունը: Այդ նույն տարում «Bloomberg» գործակալության կողմից արդեն իսկ արձանագրվել էր բարձր վարկանիշ ունեցող վարկերի դիմաց վճարումների ուշացումների քանակական աճ: Սակայն, ԱՄՆ կառավարությունը շարունակ հայտարարում էր, որ ամեն ինչ նորմալ է: 2007 թվականին սնանկացան նաև մի շարք ներդրումային հիմնադրամներ: Շուրջ 2 միլիոն ամերիկացիներ, ի վիճակի չլինելով մարել իրենց վարկերը, վաճառեցին իրենց բնակարանները, ինչի արդյունքում էլ ավելի իջան անշարժ գույքի ու դրա հիման վրա նաև համապատասխան արժեթղթերի

գները: Խուճապը հասավ իր գագաթնակետին: Հենց այդ ժամանակ էլ պարզվեց, որ ճգնաժամը միայն ամերիկյան չէ: Ֆինանսական շուկաների գլոբալիզացման արդյունքում անշարժ գույքի հիման վրա թողարկված արժեթղթերը, ինչպես նաև դրանց հիման վրա թողարկված զանազան ածանցյալ գործիքները տարածվել էին աշխարհով մեկ: Այդ արժեթղթերում ներդրումներ էին կատարել աշխարհի խոշորագույն ֆինանսական հաստատություններ և շարքային ներդրողներ:

Ի՞նչ քաղաքականություն պետք է իրականացնեին ԱՄՆ-ի և մյուս երկրների կառավարությունները՝ այս իրավիճակից դուրս գալու համար: Բնականաբար, առաջին հերթին, նրանք պետք է ֆինանսական աջակցություն ցուցաբերեին ֆինանսական հաստատություններին, որոնց մոտ առկա էին զգալի խնդրահարույց ակտիվներ: Ինչը և տեղի ունեցավ: Եվրոպական շատ բանկեր, ունենալով իրացվելիության լուրջ խնդիրներ, դիմեցին իրենց երկրների Կենտրոնական բանկերին աջակցության համար: Եվրոպական Կենտրոնական բանկը ևս կարևոր դերակատարում ունեցավ: Նա որոշեց գնել բանկերի ակտիվներում եղած խնդրահարույց արժեթղթերը՝ փողի նոր թողարկում կատարելու հաշվին և այդ քայլով իսկ փրկեց համաշխարհային ֆինանսական համակարգը լիակատար կազմալուծումից: Այդ օրինակին հետևեց նաև ԱՄՆ-ի կառավարությունը: Սակայն, վերջինիս միջամտությունը փոքր-ինչ ուշացել էր: ԱՄՆ-ի գանձապետարանի քարտուղար Պաուլսոնի մշակած ֆինանսական աջակցության պլանը ԱՄՆ-ի Կոնգրեսում լուրջ դիմադրության արժանացավ: Ըստ այդ պլանի՝ նախատեսվում էր բանկերից հետո գնել «կասկածելի» պարտավորությունները մի գնով, որը կորոշվի գանձապետարանի կողմից: Այդ պլանի ընդդիմախոսների հիմնական փաստարկներն այն էին, որ պետությունը չպետք է ֆինանսավորի ֆոնդային շուկայի սպեկուլյատիվ մեքենայությունները ու նաև այն, որ ինչպես վերը նշվեց, գանձապետարանի կողմից պարտավորությունների գնի միանձնյա կերպով որոշումը զանազան չարաշահումների տեղիք կտա: Այդ ընթացքում սնանկացավ ֆինանսական շուկայի առաջատարներից մեկը՝ «Լեհման» ներդրումային բանկը և ֆինանսական աշխարհում խուճապի ու տագնապի նոր ալիք բարձրացրեց: Սակայն, ԱՄՆ-ի կառավարությունը այլընտրանք չուներ, և ի վերջո ֆինանսական աջակցման ծրագիրը կյանքի կոչվեց: Ազգայնացվեցին մի քանի խոշոր ֆինանսական կառույցներ, ֆինանսական աջակցություն ստացան բանկեր, ապահովագրական և ներդրումային ընկերություններ: Արդյունքում՝ դոլարի արժեզրկման նոր գալարապտույտ, ԱՄՆ բյուջեի պակասորդի զգալի աճ (2008 թվականին այն կազմեց 1.3 տրիլիոն դոլար), իսկ երկրի ընդհանուր պարտքը՝ 54 տրիլիոն դոլար, այն դեպքում, երբ բանկային համակարգը փլուզման եզրին էր, իսկ տնտեսության իրական հատվածում՝ աննախադեպ անկում:

Ամփոփելով վերոգրյալը՝ ներկայացնեմ այն հիմնական դասերը, որ տվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը.

- բանկային համակարգի և բանկերի ռիսկային գործունեության թույլ վերահսկողությունը,
- բանկային օլիգոպոլիաների նկատմամբ թերի վերահսկողությունը,
- օֆշորային ֆինանսական գոտիների լայն տարածումը և նրանց նկատմամբ միջազգային վերահսկողության գործուն մեխանիզմների բացակայությունը,
- ածանցյալ գործիքների շրջանառության աննախադեպ աճը,
- ֆոնդային շուկաների ինքնակարգավորման անկատարությունը,
- սպեկուլյատիվ կապիտալի զգալի գերակշռումը տնտեսության իրական հատվածում կապիտալի հոսքերի նկատմամբ,
- գերազանցապես վարկերի միջոցով մասնավոր սպառման խթանումը,
- ազգային եկամտի ոչ արդարացի ու անհավասարաչափ բաշխումը, ինչը հետևանք է հարկային ոչ արդյունավետ քաղաքականության,
- սոցիալական անարդյունավետ քաղաքականությունը,
- շուկայական գործընթացների վերաբերյալ տեղեկատվական համակարգի անկատարությունը և տեղեկատվության անհավասարաչափ բաշխումը,
- համաշխարհային տնտեսության վերազգային կառավարման գործուն մեխանիզմների բացակայությունը,

- որպես միջազգային վճարամիջոց՝ մեկ երկրի արժույթի մենաշնորհ կիրառումը համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի պայմաններում և այդ արժույթի թողարկման և շրջանառության նկատմամբ միջազգային հսկողության բացակայությունը:

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի հայցորդ, գիտաշխատող*

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

Հարկերի վճարման և հարկային քաղաքականության ուսումնասիրումը դարձել է օբյեկտիվ անհրաժեշտություն և պետք է ընդունել, որ առանց հարկային լծակների և հարկային գործիքների համակարգային ուսումնասիրման որևէ լուրջ ներդրումային հոսք ակնկալել չէ՝ տնտեսության տարբեր ոլորտներում իրատեսական չէ: Այսօր շատ է խոսվում հանրապետությունում տնտեսության զարգացման անհրաժեշտության մասին, սակայն որոշ չափով անուշադրության են մատնվել տնտեսական խթանները, մասնավորապես հարկային արտոնությունները: Չպետք է կարծել, թե տնտեսության անհամամասնական զարգացումն ունի միայն օբյեկտիվ պատճառներ, և դրանով պայմանավորված՝ բացառել տնտեսական նոր մոտեցումների առաջարկումը:

Մեր կարծիքով, հանրապետության տնտեսական զարգացումը խոչընդոտվելու է այնքան ժամանակ, քանի դեռ սկզբունքային միջոցառումներ չեն ձեռնարկվել գործարար միջավայրի վրա ազդող գործոնների բացահայտման, գնահատման և վերլուծության ուղղությամբ: Հարցն, իհարկե, չունի միարժեք լուծում՝ մասնավանդ երկրում առկա տարբեր ռիսկերի անկանխատեսելիության, դրանց գնահատման նվազեցման գործընթացի բարդության պայմաններում, մինչդեռ փորձ է արվել բացահայտել, գնահատել և վերլուծել գործարար ակտիվության վրա ազդող հարկային գործիքների և դրանց լծակների իրական ազդեցությունը:

Բազմաթիվ գիտափորձնական ուսումնասիրություններ են նվիրվել հարկերին, հարկային քաղաքականության և նրա կատարելագործման հիմնախնդիրներին, հարկային վարչարարության բարձրացման և հարկային ռիսկերի կանխատեսմանը, ինչպես նաև հարկերին, հարկային համակարգի արդյունավետությանն ու հարկային քաղաքականության իրականացմանը և առհասարակ՝ հարկային ազդակի՝ որպես տնտեսական խթանի ազդեցության գնահատման հարցադրումներին, որոնցով փորձեր են արվել գնահատել առանձին հարկային տարրերի, ֆինանսական հաստատությունների, այդ թվում՝ կապիտալի շուկայի ռիսկայնությունը տարբեր տնտեսական իրավիճակներում:

Սակայն, ամբողջությամբ վերցրած, չէ գործարար միջավայրի գնահատման և վերլուծության փորձեր կատարվել են իրականում շատ մասնակիորեն՝ լուրջ թերություններով և բացթողումներով: Բնականաբար, այդ գնահատումն ինքնին ենթադրում է բավականին բարդ աշխատանք, որն իր ներառում է առանձին ինստիտուցիոնալ համակարգերի գործունեության և ռիսկայնության գնահատման դժվարություն՝ կախված քաղաքական, տնտեսական, օրենսդրական և իրավական դաշտերի զարգացման առանձնահատկություններից:

Հարկային քաղաքականության կատարելագործման ազդեցությունը տնտեսական աճի վրա տարբեր երկրներում բնութագրվում է զգալի բազմազանությամբ՝ պայմանավորված տվյալ երկրի մակրոտնտեսական ցուցանիշների զարգացման բնույթով, տնտեսական մեխանիզմների կիրառման արդյունավետությամբ, տնտեսության կառավարման ու զարգացման գործում պետության դերով:

Արևմտյան երկրների զարգացման պատմությունը վկայում է, որ հարկային քաղաքականությունը մշտապես օգտագործվել է տնտեսության պետական կարգավորման նպատակով, որտեղ ֆիսկալ համակարգի միջոցով վերաբաշխվում է ՀՆԱ-ի 30-50%-ը¹: Որքան մեծ է

¹ А. А. Задоя, “Основы экономической теории”. Учеб. пособие.– М.: Рыбари, 2000, с. 479.

պետական բյուջեում ընդգրկվող միջոցների տեսակարար կշիռն ազգային արդյունքի մեջ, այնքան հարկաբյուջետային քաղաքականությունը մեծ դեր է խաղում շուկայական տնտեսության պետական կարգավորման մեջ¹:

Հետևաբար, հարկային համակարգերի զարգացումն արտացոլում է ինչպես տնտեսության, այնպես էլ պետության զարգացման մակարդակը: Հարկերի կոնկրետ տեսակները, դրույքաչափերը, արտոնությունների համակարգը, բաշխումն ըստ պետական համակարգի մակարդակների՝ որոշվում են այս կամ այն երկրի պայմաններով՝ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, պետական կարգով, տվյալ ժամանակահատվածում ծառայած խնդիրների շրջանակով, ընդգրկման չափագծով և վերջապես պետության հարկային համակարգի ազգային դիմագծի վրա էական ազդեցություն ունեցող սովորույթներով:

Տնտեսապես զարգացած երկրների հարկային համակարգերը ձևավորվել են այդ երկրների տնտեսական և պատմական զարգացմանը զուգահեռ, հետևաբար՝ այդ երկրների հարկային համակարգերի փոփոխություններն իրականացվել են՝ ելնելով տնտեսական տվյալ իրավիճակից ու պայմաններից և տնտեսության զարգացման համար չեն առաջացրել լուրջ խոչընդոտներ²:

Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ է դառնում, որ ԵՄ երկրներում հարկային բեռը բաշխված է հիմնական աշխատանքի վարձատրության և կապիտալի գործոնային եկամուտների վրա, որոնք համապատասխանաբար 2008թ. կազմել են 34.2% և 36.1%:

Աղյուսակ 1

ԵՄ-27 երկրների առանձին հարկատեսակների տեսակարար կշիռները ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսային արտահայտությամբ, ըստ գործոնային եկամուտների³

	Հարկեր/ՀՆԱ, %			Հարկային դրույքաչափ ըստ գործոնային եկամուտների նկատմամբ								
				Աշխատանքի վարձատրություն			Սպառում			Կապիտալ		
	2000	2007	2008	2000	2007	2008	2000	2007	2008	2000	2007	2008
ԵՄ-27 երկրների միջինը	40.6	39.7	39.3	35.8	34.3	34.2	20.9	22.2	21.5	25.1	26.8	36.1

Բավականին բարձր է նաև ուղղակի հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը եվրոպական երկրներում⁴: Այսպես, 2008թ. այդ ցուցանիշը Բելգիայում կազմել է 17.2 տոկոս, Իտալիայում՝ 15.4 տոկոս, Ֆինլանդիայում՝ 6.4 տոկոս, Շվեդիայում՝ 17.4 տոկոս, Նորվեգիայում՝ 22.0 տոկոս, իսկ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Դանիայում՝ 30.0 տոկոս), ինչը գրեթե 10 անգամ գերազանցում է Հայաստանի Հանրապետության համանման ցուցանիշը⁵:

Ուղղակի հարկեր/ընդհանուր հարկային եկամուտներ հարաբերակցությունը դարձյալ ամենաբարձրը գրանցվել է Դանիայում և 2008թ. կազմել է 62.3 տոկոս: Առավել բարձր ցուցանիշներ են գրանցվել Նորվեգիայում՝ 52.6 տոկոս, Մեծ Բրիտանիայում՝ 48.8 տոկոս, Ֆինլանդիայում՝ 41.4 տոկոս, Իռլանդիայում՝ 49.8 տոկոս, Շվեդիայում՝ 37.0 տոկոս, Բելգիայում՝ 38.9 տոկոս⁶: Ուղղակի հարկերի բաժնեմասի գերակշռումը եվրոպական զարգացած երկրներում դիտվել է նաև 2008թ., որը վկայում է այս երկրներում խելամիտ հարկային քաղաքականության առկայության մասին⁷:

Այսպես, 2008թ. ուղղակի հարկերի հաշվին ապահովվել է ընդհանուր հարկային եկամուտների 60-70%-ը (աղյուսակ 2):

¹ Ա. Վ. Ներսիսյան, ՀՀ հարկային համակարգի կատարելագործման հիմնահարցերը, Երևան 2004, էջ 26:

² Գ. Վ. Դինգլան, Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը ՀՀ-ում, Երևան 2009, էջ 36, 37:

³ Финансы: Под ред. В.В. Ковалева М. 2004, с. 814.

⁴ Eurostat. Statitics in Focus. Economy and Finance 3/2005. Tax revenues in EU Member States: Trend level and structure 1995-2008.

⁵ Զ. Ն. Սարգսյան, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կարգավորման և ավելացման ուղիները, Երևան 2010, էջ 72, 73:

⁶ Զ. Ն. Սարգսյան, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կարգավորման և ավելացման ուղիները, Երևան 2010, էջ 79:

⁷ Taxation trends in EU, Data for the EU Member States and Norway, 2010 edition, p. 259-366.

2008թ. զարգացած երկրներում հարկային եկամուտների կառուցվածքը, %¹

Երկրներ	Անուղղակի հարկեր/ՀՆԱ	Ուղղակի հարկեր/ՀՆԱ	Անուղղակի հարկեր/ հարկային եկամուտներ	Ուղղակի հարկեր/ հարկային եկամուտներ
Բելգիա	13.1	17.2	29.6	38.9
Բուլղարիա	18.6	7.0	55.7	21.0
Չեխիա	11.3	8.6	31.4	23.8
Դանիա	17.4	30.0	36.0	62.3
Գերմանիա	12.8	11.5	32.6	29.1
Էստոնիա	12.5	7.9	38.7	24.7
Իռլանդիա	12.4	11.5	42.5	39.3
Հունաստան	12.4	8.0	38.0	24.5
Իսպանիա	10.2	11.2	30.8	33.9
Ֆրանսիա	15.0	11.8	35.1	27.7
Իտալիա	14.0	15.4	32.8	36.0
Կիպրոս	18.6	12.9	47.4	32.9
Լատվիա	11.1	9.7	38.3	33.5
Լիտվա	11.1	9.4	39.5	31.0
Լյուքսեմբուրգ	12.0	13.5	33.7	38.0
Հունգարիա	16.0	10.6	39.6	26.3
Ֆինլանդիա	13.2	17.8	30.6	41.4
Շվեդիա	18.4	17.4	39.1	37.0

Ընդհանուր առմամբ, ելնելով ԵՄ երկրներում գործող շահույթի հարկման համակարգից, կարելի է բաժանել երեք խմբի, որոնք տարբերվում են բաշխման և չբաշխման բաժինների հարկման ձևերով: Ըստ խմբերի՝ դրանք հետևյալն են.

1. Երկրներ, որոնցում գործում է դասական համակարգ, համաձայն որի համապատասխանաբար շահույթի բաշխվող և չբաշխվող մասերը հարկվում են միասնական դրույքով, ինչը հանգեցնում է եկամտի կրկնակի հարկմանը: Այդ համակարգը գործում է Հոլանդիայում, Շվեդիայում, Շվեյցարիայում, Լյուքսեմբուրգում և Իսպանիայում²:
2. Երկրներ, որոնցում կիրառվում է, այսպես կոչված, պայմանական փոխանցման համակարգը, ինչը ենթադրում է, որ համախառն շահույթի նկատմամբ կիրառվում է միասնական դրույքաչափ, բայց շահաբաժինների վճարման դեպքում ընկերության կողմից վճարված հարկի բաժինը սեփականատերերին փոխհատուցվում է: Այդ համակարգը գործում է Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Դանիայում, Իռլանդիայում և Իտալիայում, բայց ներկայումս ենթարկվում է քննադատության, քանի որ հնարավորություն է առաջանում սպեկուլյատիվ խաղեր կատարել բաժնետոմսերի և շահաբաժինների տեսանկյուններից:
3. Երկրներ, որոնցում շահույթի բաշխվող և չբաշխվող մասերը հարկվում են տարբեր դրույքներով: Այդ համակարգը գործում է Ավստրիայում, Ֆինլանդիայում, Հունաստանում և Նորվեգիայում:

2000-2010թթ. հանրապետությունում հարկային բոյանիսի ($k=1.1$) մեծությունը մեկից բարձր է: Սակայն հարկային եկամուտների էլաստիկության գործակիցը, ԱՊՀ մյուս երկրների համեմատությամբ, խիստ ցածր է: Այսպես, 2000-2007թթ. հարկեր/ՀՆԱ ցուցանիշը բարելավվել է շուրջ 2 անգամ, և 2010թ. այն կազմել է 17.7% (աղյուսակ 3):

Աղյուսակ 3-ի տվյալներից պարզ է դառնում, որ հանրապետության հարկային եկամուտներում գերակշռող մասնաբաժին ունեն անուղղակի հարկերը (2010թ.՝ 349.8 մլն դրամ),

¹ Eurostat. Statitics in Focus. Economy and Finance 3/2005. Tax revenues in EU Member States: Trend level and structure 1995-2008.

² И. А. Подколзина, “Кредитно-денежная и бюджетная политика в Европе”. М.: 2008, с. 16-19.

որոնց գծով փաստացի վճարումները հիմնականում ծանրացած են ցածր կենսամակարդակ ունեցող ազգաբնակչության, ինչպես նաև փոքր ու միջին գործարարների վրա, քանի որ խոշորները «վարպետորեն» խուսափում են իրենց հասանելիք հարկերի վճարումներից:

Աղյուսակ 3


ՀՀ պետական բյուջեում հարկային եկամուտների և անվանական ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի դինամիկան 2000-2010 թթ. (մլրդ դրամ)¹

Հարկային ցուցանիշներ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	172.1	193.6	228.3	292.0	302.2	374.7	441.5	588.0	800.8	711.7	804.3
Հարկային եկամուտներ և տուրքեր	152.6	168.8	198.6	227.4	267.0	321.5	385.1	505.0	634.5	539.9	613.0
Ավելացված արժեքի հարկ	66.8	79.5	95.0	107.8	117.9	146.8	165.9	248.0	318.3	254.2	301.7
Ակցիզային հարկ	26.1	31.0	35.3	39.1	40.7	38.6	39.9	41.5	48.9	42.7	48.1
Եկամտահարկ	13.4	11.2	12.5	16.8	20.4	26.6	35.5	46.8	53.7	60.2	74.0
Շահութահարկ	20.4	16.3	17.4	17.6	32.0	46.6	65.3	75.5	86.2	81.8	77.8
Գույքահարկ	0.1	0.2	0.1	0.1	-0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Հողի հարկ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Մաքսատուրք	8.7	9.8	9.7	10.7	12.5	16.5	18.3	24.0	37.3	25.1	29.4
Հաստատագրված վճար	4.0	4.4	6.4	8.0	11.7	13.0	15.1	17.9	20.3	22.8	22.0
Այլ հարկային եկամուտներ	4.1	2.4	9.1	12.1	15.0	16.2	26.2	29.9	48.9	48.2	12.0
Պետական տուրք	8.9	13.9	13.2	15.2	16.9	17.3	18.9	21.9	24.0	21.3	23.1
Անվանական ՀՆԱ	1031.3	1175.9	1362.5	1624.6	1907.9	2242.9	2657.1	3139.4	3568.2	3141.7	3461.9

Անցումային տնտեսությամբ երկրների առանձնահատկություններով (սակավաթիվ անձանց ձեռքերում տնտեսական և քաղաքական իշխանության կենտրոնացում, հարկային վարչարարության սահմանափակ կարողություններ, արժանահավատ և մանրամասնեցված վիճակագրական տեղեկությունների բացակայություն և այլն) պայմանավորված, որպես կանոն, այդ երկրներում բարձր է լինում անուղղակի հարկերի մասնաբաժինը: Հայաստանում անուղղակի հարկերի մասնաբաժինը հարկային եկամուտներում գերազանցում է 50%-ը, 2010թ.՝ 58.9%-ը (զժապատկերներ 1, 2):

Գժապատկեր 1


Հարկատեսակների տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտներում 2007-2010թթ. (%)²



¹ www.taxinfo.am/reports.ph

² http://www.taxservice.am/, Հարկային վիճակագրական տվյալներ, 2007-2010թթ., 4-րդ եռամսյակ:

Հարկատեսակների մասնաբաժինը ընդհանուր հարկային եկամուտներում¹



Բացի այդ, ՀՀ պետական բյուջեի մուտքերի պլանային կամ փաստացի տվյալներով «հարկային բեռի» հաշվարկումը որոշակի ճշգրտումների կարիք ունի այն առումով, որ հատկեցման կարիք ունի հենց ինքը՝ «հարկային բեռ» հասկացությունը: Բանն այն է, որ իրականում նշանակալիորեն միմյանցից տարբերվում են փաստացի (նաև պլանային) ու հաշվարկված հարկային պարտավորությունները:

Բացի պետության հանդեպ ունեցած հարկային պարտավորությունների կատարումից՝ հարկատուները լրացուցիչ միջոցներ և ժամանակ են ծախսում նաև հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հաշվարկների, հաշվետվությունների ու հայտարարագրերի լրացման, համակարգչային ծրագրերի ներդրման, խորհրդատվական ու փաստաբանական ծառայությունների ստացման և այլնի համար, որոնք բացասաբար են ազդում հարկատուների վճարունակության և պետական բյուջեի մուտքերի մակարդակի վրա: Այդ առումով անհրաժեշտ է կարևորել առանձին երկրների առաջավոր փորձի կիրառումը, երբ պետություններն իրենք են գնահատում և հարկատուներին իրազեկում հարկային հաշվետվությունների փոփոխությունների արդյունքում ունենալիք լրացուցիչ ծախսերի մասին: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում եկամտահարկի գանձման համակարգում ցանկացած լուրջ փոփոխություն իրականացնելիս պարտադիր հաշվարկվում է ժամանակի այն գնահատականը, որը պահանջվում է յուրաքանչյուր հարկատուից նոր կանոններով հարկային հայտարարագիր (դեկլարացիա) լրացնելու համար: Մյուս կողմից՝ պետությունն իր հերթին հարկային եկամուտների հավաքագրումն իրականացնելու ընթացքում միջոցներ է ծախսում հարկային մարմինների պահպանման և հարկերի գանձման նկատմամբ վերահսկողության իրականացման, դատական համակարգի միջոցով անբարեխիղճ հարկատուներին պատասխանատվության ենթարկելու և այլնի համար, որոնց չարդարացված աճը սահմանափակում է ֆինանսական միջոցների նկատմամբ պետության ունեցած պահանջարկը: Նշված երկու դեպքերում էլ կատարված լրացուցիչ ծախսերը հասարակության համար ֆինանսական միջոցների կորուստներ են, քանի դեռ հավաքագրված միջոցների օգտագործումը չի ապահովում զոնե համարժեք արդյունավետություն: Բայց նույնիսկ վերջին պայմանի ապահովման դեպքում նախընտրելի է, որ պետությունը նպաստի նվազագույնի հասցնելու այս ծախսերը, քանի որ այն անուղղակիորեն բխում է պետության շահերից և հարկման արդյունավետության բարձրացման պահանջներից: Սա այն դեպքն է, երբ պետական շահն անտազոնիստական հակասության մեջ է ծանր «հարկային բեռի» հետ, և վերջինս «խաբխում է» պետականության հիմքերը:

Այսպիսով, մեր կողմից կատարված սույն ոլորտին վերաբերող ցուցանիշների վերլուծության գնահատականներով կարող ենք նշել, որ Հայաստանի Հանրապետության հարկային համակարգում դեռևս առկա են բացթողումներ, թերություններ, կամ նկատվում են բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունն ու հրատապությունը, քանի որ.

¹ Գծապատկեր 2.2.2-ը կազմվել է գծապատկեր 2.2.1-ի տվյալների հիման վրա:

- հարկման մակարդակը ոչ միայն ցածր է, այլև առանձին տարիների դրսևորել է նվազման միտում,
- հարկումն անարդարության շատ տարրեր է պարունակում՝ կապված ոչ միայն ցածր կենսամակարդակ ունեցող բնակչության առավել մեծ չափերով հարկման, այլև ոչ օրինապահ հարկատուներին մասսայաբար «հանդուրժելու», իսկ փոքր և միջին ձեռնարկություններին «դաժանաբար ճնշելու» փաստերի հետ:

Ասվածի ապացույցներն են կազմակերպությունների ժամկետանց կրեդիտորական և դեբիտորական պարտքերի մեծ ծավալները, ընդհանուրի մեջ վնասով աշխատող կազմակերպությունների թվաքանակի բարձր տեսակարար կշիռը, ինչպես նաև խոշոր ու միջին առևտրային կազմակերպությունների թվաքանակի գրեթե անփոփոխությունը:

Բերված եզրակացություններն ավելի ամբողջական են դառնում հարկման արդյունավետությունն ըստ առանձին հարկատեսակների գնահատելուց հետո:

Ուստի, դրանով է պայմանավորված այն, որ ՀՀ կառավարության առաջնահերթ նպատակներից է եկամուտների մոբիլիզացումը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հարկային վարչարարության բարեփոխումներ:

ՀՀ տնտեսության ընդլայնման և հարկային եկամուտների աճի միջև կապը թույլ է արտահայտված: Այսինքն՝ հարկային եկամուտների էլաստիկության գործակցի մեկից փոքր լինելը նշանակում է, որ ՀՆԱ-ի աճը չի ուղեկցվում հարկային եկամուտների համարժեք աճով: Արդյունքում՝ տեղի է ունենում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աստիճանական նվազում: Բացի այդ, ավելի փոքր է ուղղակի հարկերի էլաստիկության գործակցը. ՀՆԱ-ի 1% աճին համապատասխանում է ուղղակի հարկեր/ՀՆԱ հարկային եկամուտների ցածր հարաբերական մակարդակ:

Այսպիսով, ամփոփելով սույն հոդվածում առաջ քաշված հիմնախնդիրները, կարող ենք եզրակացնել, որ հարկային եկամուտների ցածր հարաբերական մակարդակը չի կարելի միարժեքորեն պայմանավորել այն հանգամանքով, որ հանրապետությունը գտնվում է ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումների փուլում, և հարկային համակարգի կազմավորման և կայացման աշխատանքները դեռևս շարունակվում են: Այդ գործընթացը բնորոշ է նաև ԱՊՀ մյուս պետություններին: Իսկ ՀՀ հարկային համակարգի բարեփոխումները սկսվել են շատ ավելի վաղ և արվել են շատ ավելի խոր ու հիմնավոր կերպով, քան ԽՍՀՄ որոշ նախկին հանրապետություններում:

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ

*Արցախի պետական համալսարանի
տնօրենազիլրության ամբիոնի դոցենտ, յր. գ. թ*

ՔԱՆԿԵՐԻ ԴԵՐԸ ԼՂՅ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Քանկային համակարգը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման էական գործոն է: Դրա դերը առավել կարևորվում է երկրի համար տնտեսական վերելքի ապահովման ժամանակ: Այն ներդրումային միջոցների, դրամական զանգվածի կարգավորման, սոցիալ-տնտեսական առաջընթացի բարելավման կարևորագույն մեխանիզմ է:

ԼՂՀ բանկային համակարգը ձևավորվել է 1993թ. ապրիլի 27-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից «Քանկային գործունեության մասին» օրենքի ընդունմամբ և ներկայումս ՀՀ բանկային համակարգի բաղկացուցիչ տարրն է: Հանրապետությունում գործում են ներքոհիշյալ բանկերը.

1. «Արցախբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակը և 12 մասնաճյուղերը՝ «Վերածնունդ», «Հաղթանակ», «Տիգրանակերտ», «Ստեփանակերտ թիվ 1», «Ստեփանակերտ թիվ 2», Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հաղրութի, Շուշիի, «Բերձոր», «Քարվաճառ» մասնաճյուղերը,
2. «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Ստեփանակերտ», «Խաչեն», «Մարտունի», «Մարտակերտ», «Ասկերան», «Հաղրութ», «Շուշի» մասնաճյուղերը,
3. «Ամերիաբանկ» ՓԲԸ «Ստեփանակերտ» մասնաճյուղը,

4. «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ «Արցախ» մասնաճյուղը,
5. «Արարատբանկ» ԲԲԸ «Ստեփանակերտ» մասնաճյուղը,
6. «Յունիբանկ» ՓԲԸ «Գանձասար» և «Ստեփանակերտ» մասնաճյուղերը,
7. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Շուշի», «Ստեփանակերտ», «Ասկերան», «Վարանդա», «Հաղորթ» և «Քաշաթաղ» մասնաճյուղերը,
8. «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ «Արցախ» մասնաճյուղը,
9. «Կոնվերսբանկ» ՓԲԸ «Ստեփանակերտ» մասնաճյուղը:

ՀՀ բանկային համակարգի բարեփոխումները և բանկային օրենսդրության կիրառումը ԼՂՀ-ում որակական նոր հնարավորություններ ընձեռեցին բանկերի զարգացման համար: ԼՂՀ տարածքում բանկերի գործունեությունը հիմնականում կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին», «ՀՀ ԿԲ-ի մասին», «Բանկերի սնանկության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ ԿԲ-ի նորմատիվ ակտերով:

Բանկային բիզնեսի ընդլայնումը դրականորեն է ազդում տնտեսության իրական հատվածի զարգացման վրա: Արդի տնտեսական պայմաններում, մակրոտնտեսական կայունության ապահովման հետ մեկտեղ, բանկային համակարգի առջև ծառայած է տնտեսության իրական հատվածի հետ առավել կայուն կապերի հաստատման խնդիրը, առանց որի անհնար է տնտեսության հետագա զարգացումը: Չնայած այն հանգամանքին, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը առաջին հարվածը հասցրեց հենց ֆինանսական համակարգին, այնուամենայնիվ, ինչպես ՀՀ, այնպես էլ ԼՂ հանրապետության բանկերին հաջողվեց խուսափել լուրջ ցնցումներից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին բանկերի նկատմամբ ավանդատուների վստահությունը հնարավորինս վերականգնվում է: ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն հանրապետության բանկերում 2012թ. հունվարի 1-ի դրությամբ ներգրավված ավանդները կազմել են 41182.9 մլն դրամ և 2011թ. հունվարի 1-ի դրությամբ աճել են 19.5 տոկոսով, իսկ 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ 9.5 տոկոսով: Ավանդների ընդհանուր կառուցվածքում 79.8 տոկոսը պատկանում է ռեզիդենտներին, 20.2 տոկոսը՝ ոչ ռեզիդենտներին, ընդ որում ռեզիդենտների կողմից ներգրավված ավանդների 24.9 տոկոսը ցայահանջ է, 75.1 տոկոսը՝ ժամկետային: Հատկանշական է, որ ավելանում են մեծամասամբ ժամկետային ավանդները, քանի որ դրանց տոկոսադրույքները ավելի բարձր են և ապահովում են ավելի շատ եկամուտներ: Այս ցուցանիշը 2011թ. հունվարի 1-ի համեմատ աճել է 29.6 տոկոսով¹:

Կարծում ենք, որ բանկային համակարգի հանդեպ հասարակայնության վստահության ավելի ամրապնդման համար նպատակահարմար է ԼՂՀ տարածքում ստեղծել բանկերի միություն, որի մասնակիցներ կարող են դառնալ հանրապետությունում գործող բանկային միավորները, այլ կազմակերպություններ: Բանկերի միության շնորհիվ բանկերը հնարավորություն կունենան ամրապնդել և զարգացնել միջբանկային կապերը, ունենալ իրենց շահերի ներկայացուցիչը տարբեր ատյաններում, գործել համակարգված՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար:

Վերջին տարիներին նկատվում է ԼՂՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալների անընդհատ աճ: Ընդգծենք, որ աճում են հիմնականում տարադրամով կատարվող կարճաժամկետ վարկային ներդրումները: ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2012թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերը կազմել են 59617.9 մլն դրամ և 2011թ. հունվարի 1-ի համեմատ աճել են 17091.8 մլն դրամով կամ 40.2 տոկոսով: Վարկերի 0.3 տոկոսը կազմել են բանկերի ժամկետանց վարկերը: Նշենք, որ 2012թ. հունվարի 1-ի դրությամբ առևտրային բանկերի վարկային ներդրումները (դրամով և տարադրամով) կազմել են 59437.1 մլն դրամ և 2011թ. հունվարի 1-ի նկատմամբ աճել են՝ 17207.7 մլն դրամով կամ 40.7 տոկոսով: Ընդ որում, 54.8 տոկոսը կազմում են արտարժույթով տրամադրված վար-

¹ Հաշվարկները կատարվել են ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների հիման վրա. Ստեփանակերտ, 2012թ. .էջ 74-79:

կային ներդրումները: Երկրում 2011թ. արտարժույթով վարկավորման ծավալները 2010թ. համեմատ աճել են 52.6 տոկոսով:

Ներկայումս ԼՂՀ բանկային շուկայում առաջարկվող ծառայությունների ցանկը ընդհանուր ուղղություններով համադրելի է զարգացող երկրների բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների ցանկի հետ, սակայն այդ ծառայությունները բազմազան չեն: Եթե զարգացող երկրների բանկերն իրենց հաճախորդներին հնարավորություն են ընձեռում օգտվելու մեկ ծառայության բազմաթիվ ենթատեսակներից, ապա ԼՂՀ բանկային միավորները հիմնականում առաջարկում են նշված ծառայությունների մեկ տարատեսակ: Համեմատության համար նշենք, եթե զարգացող երկրների բանկերը առաջարկում են մոտ 150 տեսակի բանկային ծառայություններ, ապա ԼՂՀ բանկային համակարգի կողմից առաջարկվող ծառայությունների թվաքանակը կազմում է մոտ 45 տեսակ: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության բանկերը գնալով կատարելագործում են իրենց կողմից մատուցվող ծառայությունները, բարձրացնում հաճախորդների սպասարկման մակարդակը, ինչը բավարարում է հաճախորդների պահանջմունքները և դրանով ապահովում հաճախորդների թվի աճ: ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն, ԼՂՀ բանկային համակարգի հաճախորդների թիվը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 68177 անձ, որից ֆիզիկական անձինք՝ 64193, իրավաբանական անձինք՝ 3984: Նրանց հաշիվների քանակը կազմել է 100976, որից ֆիզիկական անձանց հաշիվները՝ 93332, իրավաբանական անձանց հաշիվները՝ 7644: Եթե համեմատենք այս ցուցանիշները 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ եղած ցուցանիշների հետ, ապա կատանանք և՛ հաճախորդների թվի, և՛ նրանց հաշիվների թվի բավականին մեծ չափերով աճ:

ԼՂՀ բանկային համակարգի անխափան գործունեությունը և զարգացումը անհրաժեշտ պայմաններ են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Հետևելով տնտեսվարման շուկայական մեխանիզմի կատարելագործման սկզբունքներին՝ տնտեսությունը քայլ առ քայլ շարժվում է առաջ, որում ակնհայտորեն մեծ է բանկերի դերը: Այս առումով, խիստ կարևորվում են ԼՂՀ բանկային համակարգի զարգացման գերակայության ընդունումը և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում այդ դրույթի համակարգումն ու ամբողջականացումը, որոնք հնարավորություն կտան միջնաժամկետ հեռանկարում ունենալ բանկային համակարգի զարգացման միասնական պատկերը, բարձրացնել կանխատեսելիության մակարդակը, ինչն էլ իր հերթին կնպաստի բանկային համակարգի կայուն աճի համակարգում առկա հնարավորությունների ու ներուժի լիարժեք օգտագործմանը, հասարակությանը բանկային համակարգի զարգացման ուղղությունների և հեռանկարների վերաբերյալ համակողմանի տեղեկատվության տրամադրմանը:

Վերջին տարիներին հանրապետությունում իրականացված տնտեսական և ֆինանսական համակարգի բարեփոխումները դրական ազդեցություն են ունեցել բանկային ծառայությունների ընդլայնման և դրանց կատարելագործման վրա, ինչի արդյունքում ԼՂՀ բանկային հատվածը կարելի է բնութագրել որպես ամենազարգացածը տնտեսության այլ ճյուղերի համեմատ: Այդուհանդերձ, տնտեսությունում և ֆինանսական համակարգում առկա են բանկային համակարգի զարգացմանը և կայունության ապահովմանը, ԼՂՀ տնտեսության բանկային սպասարկման անհրաժեշտ մակարդակի ձեռքբերում խոչընդոտող մի շարք հիմնախնդիրներ, որոնց թվին են դասվում՝

- ԼՂՀ-ում քաղաքական ռիսկի բարձր աստիճանը, տարածաշրջանի սիներգետիկ զարգացումը և միջազգային ծրագրերում մասնակցությունը խոչընդոտող կոնֆլիկտների առկայությունը,
- ֆինանսական շուկայի դանդաղ ձևավորումը և դրա զարգացմանն ուղղված ինստիտուտների ու համալիր միջոցառումների բացակայությունը,
- տնտեսության ճյուղային կառուցվածքում առկա խնդիրները, որի հետևանքով նկատվում է ոչ միայն տնտեսական անկայուն շարժընթաց, այլև տնտեսության առանձին ճյուղերի զարգացման հնարավորությունների օգտագործման ցածր մակարդակ,
- ԼՂՀ-ում հումքատեսակների բացակայությամբ պայմանավորված հումքի մեծածավալ ներկրումը, որի արդյունքում հանրապետության ներմուծման ծավալները զգալիորեն

գերազանցում են արտահանման ծավալները՝ առաջացնելով հնարավոր վտանգավոր ռիսկեր,

- հարկաբյուջետային բնագավառի հիմնախնդիրները՝ կապված հարկերի կառուցվածքում անուղղակի հարկերի բարձր մասնաբաժնի, տազնապալի չափերի հասնող փոխադարձ չվճարումների ծավալի, ձեռնարկատիրության զարգացման և ներդրումների ներգրավման վրա հարկային քաղաքականության թույլ ազդեցության, հարկային վարչարարության հետ,
- ԼՂՀ սոցիալական ոլորտի խնդիրները՝ բնակչության զգալի հատվածի եկամուտների աղքատության շեմից ցածր լինելը, հանրապետությունում տնտեսական աճի արդյունքների անհավասարաչափ բաշխումը բնակչության տարբեր խավերի միջև, որը խորացնում է անհավասարությունն ու բնակչության սոցիալական շերտավորումը:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը էապես կարևորվում է հանրապետության բանկային համակարգի կայունության ապահովման և հետագա կատարելագործման տեսանկյունից:

ԼՂՀ տնտեսության զարգացման արդի պայմաններում կարևոր խնդիրներից է ֆինանսական ռեսուրսների վերափոխումը իրական ներդրումների: Հանրապետությանը բնորոշ է օրենսդրական դաշտի անկայուն վիճակը, որն անորոշության և տարակուսանքի մթնոլորտ է ստեղծում ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական ներդրողների համար: Այդ տեսանկյունից, ներդրումների փոքր ծավալները հիմք են տալիս փաստելու, որ իրական ներդրողի կողմից Արցախը չի դիտարկվում որպես ներդրումների համար գրավիչ երկիր, որը առաջին հերթին բացատրվում է ներդրումային գործունեություն իրականացնելու հետ կապված բարձր ռիսկով: Դա բացասաբար է անդրադառնում արտաքին աղբյուրներից ներդրումների ներգրավման վրա և առաջացնում է ներքին ֆինանսական միջոցների արտահոսք: Բացի այդ, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը մի կողմից, ԼՂՀ քաղաքական կարգավիճակի անորոշությունը, չճանաչված լինելը՝ մյուս կողմից, գրեթե անհնարին են դարձնում միջազգային ֆինանսական կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի հետ համագործակցությունը:

Այս պարագայում հանրապետությունում ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների խթանման նպատակով անհրաժեշտ են առաջնահերթ քայլեր: Կարծում ենք, նպատակահարմար են ԼՂՀ գործող օրենսդրությամբ սահմանված տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացման, սեփականատիրության իրավունքի գործողության լիարժեք ապահովման համար անհրաժեշտ պայմանների երաշխավորման, ներդրումային ծրագրերին բանկերի ակտիվ մասնակցությունն ապահովող երաշխիքների ստեղծման, այդ թվում նաև պետական կամ պետական երաշխիքներով ու մասնակցությամբ ծրագրերի իրականացման գործընթացները: Ներդրումային միջավայրի բարելավման նպատակով կարևորվում են նաև ներդրումները կարգավորող միջազգային իրավական նորմերի և միջազգային ընդունված պրակտիկայի ընդունումն ու կիրառումը, ներդրումային որոշումների վրա էական ազդեցություն ունեցող հարկային քաղաքականության բարելավումը, որը կնպաստի բանկերի ներդրումային գործունեության զարգացմանը, ներդրումները խթանող ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը:

Վերը առաջադրվող խնդիրների լուծումը պետության համար պետք է դառնա տնտեսական քաղաքականության ռազմավարական նպատակ:

Ցանկացած երկրում տնտեսական աճ ակնկալող ծրագրերը հիմնական շեշտը դնում են արտադրության զարգացման վրա: ԼՂՀ-ն չի կարող բացառություն կազմել: Սակայն այն հիմնականում ունի ընթացիկ սպառման, այլ ոչ թե ներդրումային ուղղվածություն: Այս պարագայում հանրապետության տնտեսության զարգացման համար պետական կարևորություն է ներկայացնում ձեռնարկատիրության, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկատիրության ընդլայնումը:

Ընդ որում, որքան մեծ է փոքր և միջին ձեռնարկատիրության բաժնեմասը համախառն արդյունքում, այնքան կայուն է տնտեսությունը, արտաքին շուկաների նկատմամբ՝ ավելի դիմացկուն և ճկուն: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում վերջին երեք տարիներին փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՉ) զարգացումը իր նշանակալի ազդեցությունն է թողել երկրի տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի

բարձրացման վրա: Այսպես, արձանագրված տվյալների համաձայն՝ 2011թ. արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները: 2011թ. հանրապետության բանկերի կողմից արդյունաբերությունում իրականացվել է 5091.3 մլն դրամի վարկավորում, որը 2010թ. համեմատ նվազել է 17.9 տոկոսով: Նշենք, որ տնտեսության մյուս ճյուղերում 2011թ. 2010թ. համեմատ դիտվել է վարկավորման ծավալների աճ: Այսպես, շինարարությունում այն աճել է 22.8 տոկոսով, գյուղատնտեսությունում՝ 14.7 տոկոսով, առևտրում՝ 37.3 տոկոսով և այլ ճյուղերում՝ 66.2 տոկոսով¹:

ԼՂՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացման ուղղությամբ պետական քաղաքականության էական ձեռքբերումներից է հանրապետությունում ՓՄՁ պետական աջակցության ծրագրերն իրականացնող հիմնական կառույցի՝ Արցախի ներդրումային հիմնադրամի կայացումը, որի գործունեության շրջանակներում իրականացվող ծրագրերն ընդգրկում են Արցախում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելուն և զարգացնելուն նպատակաուղղված միջոցառումների լայն շրջանակ:

Կարծում ենք, որ հատուկ ուշադրության է արժանի երկրում կաթի և մսի արտադրության ոլորտում ՓՄՁ զարգացումը: Անհրաժեշտ է նաև ֆինանսական ու ներդրումային աջակցություն, վարկային երաշխավորություններ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում տրամադրել առաջին հերթին սպառողական զամբյուղում իր ուրույն տեղն ունեցող սննդամթերքների՝ ոսպի, արևածաղկի, հլացուկի աճեցման ու սեփական արտադրության ուղղությամբ: Ուսումնասիրության է արժանի տեղում շաքարի և բուսական յուղի արտադրության ոլորտը:

Ընդգծենք, որ ՓՄՁ ոլորտի զարգացումը ներկայումս անհրաժեշտ է տեղափոխել որակապես նոր փուլ, մասնավորապես շեշտը դնել բանկերի կողմից նպատակային և նոր նախագծերի ֆինանսավորման, արտահանման և ներմուծման վարկավորման, երկրի տնտեսության զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի իրականացմանը:

Երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավման նպատակով ԼՂՀ կառավարության կողմից միջոցառումներ են ձեռնարկվում գյուղատնտեսության զարգացմանը աջակցելու համար: Արցախում գյուղատնտեսության զարգացումը դիտվում է որպես կարևորագույն խնդիր, որը պայմանավորված է երկրի պարենային անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը ակներև դարձրեց հանրապետության պարենային ինքնաբավարարվածության ցածր մակարդակն ու դրա բացասական հետևանքները թե՛ երկրի տնտեսության, թե՛ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Գյուղատնտեսության զարգացմանը պետական աջակցությունը կարևորվում է նաև նրանով, որ գյուղացին միայնակ չի կարողանում մշակել իր հողը՝ չունենալով մշակաբույսերի մշակման պահանջվող մակարդակի փորձ: Այս պայմաններում գյուղատնտեսությունը զարգացման մի նոր փուլ տեղափոխելու համար կարևորվում է գյուղատնտեսության պետական աջակցության համակարգի ձևավորումը, որը կնպաստի տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ենթակառուցվածքների, պարենային անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի ձևավորմանն ու զարգացմանը: Այդ առումով պետական քաղաքականության կարևոր ձեռքբերումներից է համարվում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի» (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծումը: Այն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հիմնադրվեց 2006 թվականի հունվարի 24-ին, սակայն իր լայնածավալ գործունեությունը վերսկսեց 2007 թվականին՝ նոր թափ հաղորդելով հանրապետության գյուղատնտեսության զարգացման տեմպերին:

2011թ. Հիմնադրամի կողմից իրականացված ծրագրերն ամփոփվել են չորս խմբերում.

- հողագործության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրեր,
- մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների արդյունավետությանն ուղղված աջակցության ծրագրեր,

¹ Հաշվարկները կատարվել են ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների հիման վրա. Ստեփանակերտ, 2012թ. .էջ 74-79:

- գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աջակցության ծրագրեր,
- անասնապահության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրեր:

Վերոնշյալ ծրագրերից բացի, Հիմնադրամը իրականացրել է նաև ծրագրերի մեկ այլ խումբ, որի շրջանակում նրանից աջակցություն են ստացել Հիմնադրամին 100 տոկոս բաժնեմասով պատկանող փակ բաժնետիրական ընկերությունները: Այդ ընկերությունները թվով չորսն են: Եթե 2009թ. նրանք հիմնականում ծառայություններ էին մատուցում գյուղատնտեսությանը, ապա սկսած 2010թ.՝ զբաղվում են նաև գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ: Այն նպաստեց խոշոր գյուղացիական տնտեսությունների ստեղծմանը, ինչը հանգեցրեց մշակաբույսերի բերքատվության և հանրապետությունում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճի, ինչպես նաև գյուղական վայրերում զբաղվածության մակարդակի բարձրացման:

Հիմնադրամի կողմից ծրագրերի իրագործման մեխանիզմներն են.

- անտոկոս փոխառությունների տրամադրում,
- ցածր տոկոսադրույքով փոխառությունների տրամադրում,
- ԼԳՀ առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում,
- արժեքի մասնակի սուբսիդավորում,
- անհատույց աջակցություն,
- ուղղակի առքուվաճառք:

Առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորմամբ աջակցության շրջանակներում Հիմնադրամը համագործակցում է «Արցախբանկ» ՓԲԸ-ի և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հետ: ԼԳՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների համաձայն՝ 2011թ. երկրի առևտրային բանկերը գյուղատնտեսությանը տրամադրել են 3837.9 մլն դրամի վարկ:

Հիմնադրամի տեղեկատվության համաձայն, 2011թ. այն տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացրել է 2.525.912 հազար դրամի աջակցություն, որից 119.882 հազար դրամը՝ արժեքի մասնակի սուբսիդավորման, 123.540 հազար դրամը՝ ուղղակի առքուվաճառքի, 130.665 հազար դրամը՝ անհատույց աջակցության, 145.637 հազար դրամը՝ բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման և 2.006.188 հազար դրամը՝ փոխառությունների տրամադրման տեսքով: Տվյալներից ակնհայտ է, որ Հիմնադրամի կողմից իրականացված աջակցության մեծ մասը կազմում է փոխառությունների տրամադրման միջոցով իրականացված աջակցությունը:

Ընդհանրացնելով ընդգծենք, որ Հիմնադրամի գործունեությունն ուղղված է վարկավորման, ինչպես նաև աջակցության այլ մեխանիզմների կիրառման միջոցով գյուղատնտեսությունում առաջացած հիմնախնդիրների լուծմանը, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ու գյուղատնտեսության հետագա զարգացման համար կայուն հիմքերի ստեղծմանը, որում կարևորվում է բանկերի կողմից ներդրումային ծրագրերի և ֆինանսական վարձակալության իրականացումը:

ԼԳՀ-ում նկատելի է պետության կողմից բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացումը: Այդ համատեքստում կարևորվում է բնակչության բնակարանային պայմանների բարելավման հիմնախնդրի լուծումը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ մի երկրում բնակարանային հարցը չի լուծվել առանց հիփոթեքի օգտագործման: Աշխարհի շատ երկրներում բնակարանի՝ վարկով ձեռքբերումը ոչ միայն բնակարանային խնդրի լուծման հիմնական ձև է, այլև տնտեսական գործունեության ոլորտ, բանկային և այլ վարկային կառուցվածքների արդյունավետ գործունեության կարևոր պայման: Ընդհանուր առմամբ, հիփոթեքային վարկավորման զարգացումը դրական ազդեցություն ունի երկրի բանկային համակարգի կայուն և արդյունավետ գործունեության ապահովման և բնակչության միջին խավի ձևավորման վրա:

ԼԳՀ-ում հիփոթեքային վարկավորումը կիրառվում է 2004թ.՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ի կողմից: Վերջին տարիներին հանրապետությունում հիփոթեքային վարկ են սկսել տրամադրել նաև երկրում գործող մյուս բանկերը:

Հանրապետությունում բնակարանային շինարարության զարգացման խթանման և քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման նպատակով ԼՂՀ կառավարությունը 2008թ. փետրվարի 26-ի թիվ 101 որոշմամբ հաստատել է բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում պետական ֆինանսական աջակցությունը տրամադրվում է հետևյալ կերպ.

- հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում,
- կանխավճարի նպատակային անտոկոս փոխառության տրամադրում,
- հիփոթեքային վարկավորմամբ բնակարանների կառուցում:

Հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ ձեռք բերելու կամ վերանորոգելու պետական ֆինանսական աջակցության ծրագիրը ԼՂՀ-ում իրականացնում է Արցախի ներդրումային հիմնադրամը: Ծրագրի նպատակն է նպաստել Արցախի քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավմանը, խթանել հանրապետությունում բնակարանային շինարարության զարգացումը: Համաձայն ծրագրի՝ առաջնային շուկայից բնակարանի ձեռք բերման համար, այսինքն՝ նորակառույց բնակարանի համար քաղաքացին պարտավոր է վճարել 20% կանխավճար, երկրորդային շուկայից, այսինքն՝ հին, շահագործվող շենքերից բնակարան ձեռք բերելու համար՝ 30% կանխավճար: Արցախի ներդրումային հիմնադրամն անտոկոս փոխառությամբ մասնակիորեն հատուցում է այդ կանխավճարը՝ միայն առաջնային շուկայում բնակարան ձեռք բերելու համար: Երկրորդային շուկայում հիմնադրամի կանխավճարի մասնակի փոխհատուցում կատարվում է միայն զոհված ազատամարտիկների ընտանիքների և հաշմանդամների համար: Ի տարբերություն տոկոսադրույքի սուբսիդավորման գումարների՝ նպատակային փոխառությամբ տրամադրվող կանխավճարները ենթակա են վերադարձման, սակայն՝ անտոկոս¹:

Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից տրամադրվող վարկը Ստեփանակերտում ձևակերպվում է 15 տարի մարման ժամկետով տարեկան 6% տոկոսադրույքով, շրջկենտրոններում՝ հիմնադրամի կառուցած շենքերի դեպքում՝ 18 տարի ժամկետով և 1% տոկոսադրույքով, գյուղական համայնքներում՝ 10 տարի մարման ժամկետով՝ 5% տոկոսադրույքով: Ֆինանսական միջոցները հատկացնում է պետությունը, ինչպես նաև դրանք ապահովվում են հիմնադրամի սեփական միջոցների հաշվին: Ծրագրի շրջանակներում բնակարան գնելու, վերանորոգելու կամ տուն կառուցելու նպատակով վարկային միջոցներ են հատկացվել 772 քաղաքացիների, որի 46%-ը՝ 2010թ. ընթացքում²:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հիփոթեքային վարկավորման ծրագիրը բնակչության լայն շրջանակի համար մատչելի չէ: Հիփոթեքը հասանելի է դառնում միայն վճարունակ սպառողների համար: Թեև հանրապետությունում հիփոթեքային վարկ ցանկացողների թիվն աստիճանաբար ավելանում է, այնուամենայնիվ, 65.579 հազար դրամ անվանական միջին աշխատավարձի պայմաններում դա հնարավոր չէ ձեռք բերել: Մասկնհայտ է, քանի որ ընտանիքները հիփոթեքային վարկի գծով պետք է կատարեն միջին հաշվով ամսական 150 հազար դրամի վճարումներ /մայր գումար և տոկոսավճար/: Ստացվում է, որ դարաբաղյան միջին եկամուտ ունեցող ընտանիքին այդպիսի վարկը անհասանելի է նույնիսկ 6% /սուբսիդավորման ժամկետը սահմանվում է առավելագույնը 5 տարի՝ հետագա ժամկետի վերանայման հնարավորությամբ/ դրույքի դեպքում: Այս պարագայում անհրաժեշտ է մշակել և իրագործել հիփոթեքային վարկավորման խթանիչ նոր ծրագրեր:

Այսպիսով, ժամանակակից տնտեսական պայմաններում բանկերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում ունեն ծանրակշիռ դեր, որոնք համարվում են տնտեսության արյունատար անոթները, և որոնց գործունեության ճկունությամբ պայմանավորված են տնտեսության շարունակական զարգացումն ու տնտեսական աճի անհրաժեշտ տեմպերի կայունության ապահովումը:

¹ «Հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու կամ վերանորոգելու պետական աջակցության» ծրագիրը:

² Արցախի ներդրումային հիմնադրամի տեղեկությունները:

**ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕՐԵՆԿՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՅՈՒՄ**

Հաստատագրված վճարների դեպքում հարկման ընդհանուր մոտեցումներից շեղումներ կան ոչ միայն հարկման օբյեկտի, այլև հարկման բազայի առումով, քանի որ այս դեպքում հարկման բազա է դիտարկվում ոչ թե մատուցվող ծառայության ամբողջ արժեքը, այլ հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների համար սահմանված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալը՝ դրամական արտահայտությամբ: Այն դեպքում, երբ սահմանված ելակետային տվյալներն ու ուղղիչ գործակիցները տնտեսագիտական հիմնավորում չունեն ու ճիշտ չեն արտացոլում հարկատուի ստացած եկամտի և հաստատագրված վճարի չափերի կախվածությունը, արդյունքում նվազում են բյուջետային մուտքերը:

Հարկերի և պարտադիր վճարների փոխարեն հաստատագրված վճարների կիրառումը կապված է իրացման շրջանառության կամ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման դժվարությունների հետ, կամ այդ վճարները ներդնելու միջոցով հարկման համակարգը պարզեցնելու նկատառումով է պայմանավորված: Օրինակ՝ որոշ երկրներում հաստատագրված վճարներով է հարկվում որոշակի մակարդակից ցածր եկամուտներ ստացող փոքր՝ ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը, ինչն արվում է այդ անձանց համար հարկային համակարգը պարզեցնելու նպատակով:

Սահմանվող հաստատագրված վճարները փոխարինում են մեկ կամ մի քանի վճարատեսակի: Հաստատագրված վճարները կոչված են կատարելու նույն այն գործառնությունները, որոնք կատարում են այն հարկատեսակները, որոնց փոխարինում են հաստատագրված վճարները: Օրինակ՝ ակցիզային հարկին փոխարինող հաստատագրված վճարները սահմանվում են տվյալ ապրանքատեսակի վճարումակ պահանջարկը և (կամ) այդ ապրանքատեսակի մասով առաջացող գերշահույթները նվազեցնելու նպատակներով:

Հաստատագրված վճարները գործունեության որոշակի տեսակների մասով օրենքով սահմանվող պարտադիր վճարներ են, որոնց մեծությունը կախված չէ գործունեության արդյունքներից (գործունեությունից ստացված հասույթից կամ զուտ եկամտից): Դա նշանակում է, որ հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների գծով ձևավորվող եկամուտների մի մասը «օրենքի ուժով» հանվել է հարկման դաշտից: Հաստատագրված վճարների կիրարկմանը հաջորդող տարիներին՝ 1999-2001թթ., նկատվել է հաստատագրված վճարների նվազման միտում, որին զգալիորեն նպաստել է խանութների, կրպակների միջոցով իրականացվող առևտրական և, առավել շատ, առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը, այն պատճառով, որ.

1. նշանակալի է դրանցից գանձվող վճարների մասնաբաժինը հաստատագրված վճարների ընդհանուր ծավալում,
2. դրանց ելակետային տվյալների, ուղղիչ գործակիցների ու սահմանային չափերի հաստատագրված մեխանիզմը զգալի սողանցքներ ունի, իսկ դրանց ճշտության նկատմամբ իրականացվող վերահսկողությունը աշխատատար և չափազանց արդյունավետ է գումարային առումով:

Ծխախոտի արտադրանքի հարկման հարաբերությունները, սկսած 2000թ. ապրիլի 1-ից, կարգավորվում են հարկման արտոնյալ դաշտով՝ «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով, ինչպես ՀՀ ներմուծվողի, այնպես էլ ՀՀ-ում արտադրվողի մասով: Սույն օրենքի գործողությունը չի տարածվում ՀՀ-ում ծխախոտի արտադրանքի արտադրող-իրացնողների կողմից ՀՀ-ից արտահանվող ծխախոտի արտադրանքի վրա: Ընդ որում, ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի մասով հաստատագրված վճարը փոխարինում է ԱԱՀ-ին, ակցիզային հարկին և մաքսատուրքին, իսկ ՀՀ-ում արտադրվողի մասով՝ ԱԱՀ-ին և ակցիզային հարկին: Ներմուծման դեպքում ընդհանուր

գումարի 76.5%-ը բաժին է ընկնում ակցիզային հարկին, 15%-ը՝ ԱԱՀ-ին և 8.5%-ը՝ մաքսատուրքին: ՀՀ-ում արտադրվողի դեպքում հաստատագրված վճարի ընդհանուր գումարի 20%-ը կազմում է ԱԱՀ-ը, իսկ 80%-ը՝ ակցիզային հարկը¹:

Ծխախոտի արտադրանքի հարկային բեռի նշանակալի նվազեցումը Եվրամիության երկրների հարկային բեռի նկատմամբ, տնտեսապես խթանում է ծխախոտի արտադրանքի ինչպես ներմուծումը, այնպես էլ արտադրությունը, որը բացասաբար է անդրադառնում բյուջետային մուտքերի և ծխելու դեմ տարվող պայքարի միջոցառումների արդյունավետության վրա:

Բացի այդ, թույլատրվում է հաշվանցել հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի արտադրության գծով ապրանքների ու ծառայությունների գումարների դիմաց ստացված՝ այլ մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, իսկ ծխախոտի արտադրանք իրացնող ծխախոտի արտադրանքի իրացման գծով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի նշում չի թույլատրվում կատարել: Դրանք նույնպես չարդարացված տնտեսական խթաններ են ծխախոտի արտադրությունը, ներմուծումը և իրացումը խրախուսելու համար:

Դիզելային վառելիքի և բենզինի հարկման հարաբերությունները կարգավորվում են «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով, այն կիրարկվում է 1.01.2004թ-ից, իսկ մինչ այդ, սկսած 1.01.1998թ. գործում էր «ՀՀ ներմուծվող դիզելային վառելիքի և բենզինի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը:

Դիզելային վառելիքի և բենզինի հաստատագրված վճարը միասնական վճար է, որը փոխարինում է.

1. ԱԱՀ-ին և ակցիզային հարկին՝ ՀՀ ներմուծվող դիզելային վառելիքի և բենզինի մասով,
2. շահութահարկին (եկամտահարկին)՝ անմիջապես ներմուծվողների կողմից իրացվող դիզելային վառելիքի և բենզինի մասով:

Առաջին դեպքում չափման միավոր է ընդունված մեկ տոննան, իսկ երկրորդ դեպքում այն կազմում է յուրաքանչյուր ամսվա իրացումից ստացվող հասույթի 1%-ը, բայց ոչ պակաս իրացված յուրաքանչյուր 1 տոննայի հաշվով 5 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ բենզինի մասով և յուրաքանչյուր ամսվա իրացումից ստացվող հասույթի 1%-ը, բայց ոչ պակաս իրացված յուրաքանչյուր 1 տոննայի հաշվով 3 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ դիզելային վառելիքի համար:

Հարկման հատուկ ռեժիմ հանդիսացող հաստատագրված վճարների կիրառման 10-ամյա գործունեությունը չի նպաստել ՓՄՁ-ների զարգացմանը, և դրանց կիրառմամբ նվազեցվել են պետական բյուջեի հարկային ակնկալվող մուտքերը, որի պատճառը ոչ միայն հարկային հատուկ ռեժիմների չարդարացված մոտեցումներով կիրառումն է, այլև ՓՄՁ-ների դասակարգման չափանիշների ոչ ճիշտ ընտրությունը: Ստեղծված իրավիճակի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշների ճշգրտումը և հստակեցումը, որպեսզի արդյունավետ լինի նաև դրա հենքի վրա կառուցվող հարկային քաղաքականությունը:

ՀՀ-ում ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշների հիմքում դրվել են միայն քանակական ցուցանիշները՝ աշխատողների թիվը, որը տարբերակված է ըստ տնտեսության առանձին ճյուղերի ու բնագավառների: Այս ցուցանիշի օգնությամբ դժվար է համեմատական վերլուծություններ կատարել ու արդյունավետ քաղաքականություն իրականացնել, որի ապացույցն է հանդիսանում այն, որ ՓՄՁ-ների նկատմամբ արտոնյալ հարկային քաղաքականություն իրականացնելու հիմքում դրվեց ոչ թե ՓՄՁ-ների դասակարգման հիմքում դրված աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, այլ իրացման շրջանառությունը:

Եվրոպական երկրներում լայն տարածում է ստացել ՓՄՁ-ների դասակարգման քանակական ու որակական ցուցանիշների գույակցումը, ինչպես, օրինակ, Ֆրանսիայում աշխատողների թիվը և հասույթը, Մեծ Բրիտանիայում շրջանառու միջոցների ծավալն ու աշխատողների թիվը:

2. Հարկային հստակ ու իրական խթանների ձևավորումը, քանի որ ՓՄՁ-ների գույակցման

¹ http://www.taxservice.am/uploads/pdf/annual_report-2011.pdf

գործում կարևոր է ոչ միայն ձեռնարկատերերի դերակատարումը, այլ նաև պետության հովանավորչական քաղաքականության իրականացումը: Ի տարբերություն խոշորի, ՓՄՁ-ների համար ծանր է հարկային բեռը, անհավասար է մրցակցային միջավայրը, «անհասանելի են» բանկային վարկերը, իսկ կառավարության կողմից հատկացվող գումարները չեն բավարարում շուկայում առկա նվազագույն պահանջները:


ՀՀ ֆինանսների նախարարությունում քննարկվում է հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակները կրճատելու և դրանք ընդհանուր կարգով հարկելու հարցը: Հարկման ընդհանուր կարգով հարկման կարող են փոխադրվել նաև բեռնափոխադրումները: Ինչ վերաբերում է գործունեության այդ տեսակը հաստատագրված վճարով հարկվելու հետ կապված վառելիքի մասով հաշվանցում չկատարելու հետ կապված վնասին, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործունեության այս տեսակի համար վճարվող հաստատագրված վճարի մեծությունը անփոփոխ է առնվազն 2002 թվականից:

Հաստատագրված վճարի մեծությունը կախված չէ այդ գործունեության համար ստացվող հասույթի կամ եկամտի չափից: Ստեղծված իրավիճակում նույնիսկ այն պայմաններում, երբ բեռնափոխադրման համար օգտագործվող վառելիքի մասով ԱԱՀ-ի հաշվանցումներ չեն կատարվում, չի բացառվում, որ հաստատագրված վճարով հարկման համակարգը կարող է ավելի ձեռնառու լինել, քան այն դեպքում, երբ այդ գործունեությունը հարկվեր հարկման ընդհանուր համակարգով:

Հաստատագրված վճարներ/ՀՆԱ հարաբերակցությունը 1998-2008թթ. ընթացքում կազմել է 0.3-0.6%-ի սահմաններում, որը շատ ցածր ցուցանիշ է, քանի որ հաստատագրված վճարներով են հարկվում գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, խաղատների գործունեությունը, շահումով խաղային ավտոմատների շահագործումը, վիճակախաղերի կազմակերպումը, ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության կազմակերպումը և այլն¹: 2009թ. այդ հարաբերակցությունը 2008թ-ի համեմատ աճել է 0.1%-ով՝ կազմելով է 0.7% (գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Հաստատագրված վճարների մասնաբաժինը ՀՆԱ-ում և հարկային եկամուտներում, 2005-2010թթ.²



Բյուջեի եկամուտների հավաքագրման համակարգում ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզելային հաստատագրված վճարների գծով կատարվող մուտքերը հաստատագրված վճարներից 2011թ. համար ծրագրվել է 53.8 մլրդ դրամ մուտքեր, որը 6.1 մլրդ դրամով գերազանցում է 2009 թ. հարկման եկամտի փաստացի մակարդակը:

¹ ՀՀ Հարկային օրենքները, Պաշտոնական Տեղեկագիր ՓԲԸ, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ հարկեր, տուրքեր և վճարներ, առաջին մաս, հոդված 7, Երևան 2011:
² Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2010թ., էջ 377-382:

**Հաստատագրված վճարի և պարզեցված հարկի տեսակարար կշիռը
ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում և ՀՆԱ-ում¹**

№	Ցուցանիշները	Չափի միավոր	Տարիներ					
			2005	2006	2007	2008	2009	2010
1	Պ/բ հարկային եկամուտներ	մլրդ դրամ	304.1	366.3	483.4	598.3	503.8	574.1
2	ՀՆԱ	մլրդ դրամ	2242.9	2656.2	3148.7	3646.1	3102.1	3509,6
3	Հաստատագրված վճար	մլրդ դրամ	12.9	15.2	17.4	20.2	22.2	22.0
	Պարզեցված հարկ	մլրդ դրամ	6.3	7.5	10.7	6.1	0.3	0.0
4	Հաստատագրված վճարի մասնաբաժինը հարկային եկամուտներում	%	4.2	4.1	3.5	3.3	4.4	3.8
5	Պարզեցված հարկի մասնաբաժինը հարկային եկամուտներում	%	2.1	2.0	2.2	1.0	0.1	0.0
6	Հաստատագրված վճարի մասնաբաժինը ՀՆԱ-ում	%	0.6	0.6	0.6	0.6	0.7	0.7
7	Պարզեցված հարկի մասնաբաժինը ՀՆԱ-ում	%	0.3	0.3	0.3	0.2	0.0	0.0

Վերը թվարկված գործունեություններն ունեն սովորականից բարձր շահութաբերության մակարդակ, և այս ոլորտներից հաստատագրված վճարներ/ՀՆԱ այսպիսի ցածր ցուցանիշը պայմանավորված է հիմնականում հաստատագրված վճարների մասին օրենքում օրենսդրական բացթողումներով և տվյալ ոլորտում առկա մեծ ստվերայնությամբ:

ԱՐՄԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
յրևարեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԼՂՀ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կարելի է արձանագրել, որ ԼՂՀ վարկային համակարգի ակունքներում կանգնած է ԽՍՀՄ բանկային համակարգի ժառանգությունը: ԽՍՀՄ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ բանկերը պետության սեփականությունն էին և գտնվում էին պետական մարմիններից լիովին կախվածության մեջ²: Կապված տնտեսական համակարգի առանձնահատկությունների հետ՝ ԽՍՀՄ Պետական բանկն առանձնապես ջանքեր չէր գործադրում միջոցների ներգրավման և բաշխման համար: Բանն այն է, որ պետական կազմակերպությունները պարտավոր էին իրենց ազատ դրամական միջոցները պահել Պետական բանկում, ինչը նշանակում էր, որ այդ միջոցները փաստացի կերպով «ձուլվում» էին Պետական բանկի այլ ռեսուրսների հետ: Ձեռնարկությունները նույնպես առանձնապես մտահոգված չէին ռեսուրսների ներգրավման հարցով, քանզի համընդհանուր պլանավորման պայմաններում պետական գանձարանից ստանում էին այնքան դրամական միջոցներ, որքան որոշված էր նախօրոք: Նման պայմաններում ձեռնարկությունների ջանքերն ուղղվում էին ոչ թե ռեսուրսների ներգրավման այլընտրանքների միջև ընտրության կատարմանը, այլ պլանների ուռճացմանը, դրանց հաստատմանն ուղղված ոչ պաշտոնական անձնական կապերի օգտագործմանը, իսկ պլանային փաստաթղթերի հաստատումից հետո արդեն կարելի էր չանհանգստանալ ռեսուրսների ստացման համար: Ահա նման պայմաններում արդեն խորհրդային վերջին տարիներին ԽՍՀՄ ֆինանսական ոլորտում հասունացել էր բավականին լուրջ ֆինանսական ճգնաժամ, որն արտահայտվում էր այնպիսի երևույթների տեսքով, ինչպիսիք են բոլոր մակարդակներում պետության առջև ֆինանսական

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան 2010թ., էջ 377-382:
² Рясенцева В.А., “Советское гражданское право”. т.1 М., 1987.

պլանների ու պարտավորությունների կատարման թերացումը, ֆինանսական կարգապահության վատթարացումը, շահույթի և ինքնարժեքի նվազեցման պլանը չկատարող կազմակերպությունների թվի աճը, վնասաբերության աճը, ինչպես նաև անհիմն դոտացիաների թվի ավելացումը և այլն:

Բացի հետխորհրդային բոլոր պետություններին բնորոշ վերը նշված դժվարություններից՝ ԼՂՀ բանկային համակարգի ձևավորման սկզբնական փուլը համընկավ աշխարհաքաղաքական շատ ծանր վերափոխումների հետ: Խոսքը 1988թ. փետրվարին սկիզբ առած Ղարաբաղյան շարժման մասին է, որը նպատակ ուներ գործող ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների շրջանակներում հասնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Հայկական ԽՍՀ վերամիավորմանը: Հետագա տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ն բացառապես խաղաղ հիմք ունեցող և միանգամայն օրինական այս շարժումը փորձեց ճնշել հանցավոր ագրեսիայի միջոցով, ինչը սկիզբ դրեց Արցախյան ազատամարտին:

Այնուամենայնիվ, թե՛ Ղարաբաղում և թե՛ Հայաստանում նոր բանկային մեխանիզմի կառուցումը տրվում էր շատ դժվար: Օրենսդրության բացակայության պայմաններում անկախության սկզբնական տարիներին դեռևս պահպանվում էր նախկին խորհրդային ռուբլու միասնական գոտին, շարունակվում էին կիրառվել բանկային գործունեության իրավական կարգավորման նախկին օրենսդրական և ենթաօրենսդրական նորմերը: Բանկային համակարգի ձևավորման թերևս կարևորագույն իրադարձությունը 1993թ. նոյեմբերի 22-26-ին հայկական դրամի շրջանառություն մտցնելն էր: Ազգային արժույթի շրջանառության մեջ դնելը կարևորագույն նշանակություն ունեցավ ինքնուրույն տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման առումով, այն նոր հնարավորություններ ստեղծեց տնտեսական բարեփոխումների ընթացքի արագացման, ֆինանսական, հատկապես՝ բանկային հատվածի վերակառուցման համար¹:

Բանկային համակարգի ձևավորումը և զարգացումը Ղարաբաղում և Հայաստանում պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի: Ստորև ներկայացված են պայմանականորեն առանձնացված ժամանակագրական փուլերն ու դրանց առանձնահատկությունները:

Առաջին փուլ՝ 1988-1994 թթ.: Փուլն ընդգրկում է Խորհրդային Միության փլուզմանը նախորդած ժամանակաշրջանը և հետխորհրդային շրջանի առաջին տարիները: Այս փուլի հիմնական առանձնահատկությունը պայմանավորված էր Ղարաբաղյան շարժման և Արցախյան ազատամարտի ամենակտիվ ժամանակաշրջանի առանձնահատկություններով: Նախ՝ ԼՂՀ առջև առկախված էին օրհասական խնդիրներ, և բանկային համակարգի ձևավորումը չէր դիտարկվում որպես կարևորագույն լուծման կարիք ունեցող խնդիր: Ավելին, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ այս փուլում գոյություն չունեին ձևավորված վերջնական տեսակետներ և պատկերացումներ ԼՂՀ տնտեսական և բանկային համակարգերի կառուցվածքի, ՀՀ տնտեսության հետ փոխառնչությունների վերաբերյալ:

Երկրորդ փուլ՝ 1995-1996թթ.: Բանկային համակարգի ձևավորման երկրորդ փուլը բնութագրվում է բանկային օրենսդրության ակտիվ մշակմամբ: Բանկային համակարգի բարեփոխումների այս փուլի առանձնահատկությունն այն է, որ բանկային միավորների վիճակի կտրուկ վատթարացման հետ զուգընթաց, գործունեության մեջ դրվեցին նոր օրենքներ:

Երրորդ փուլ՝ 1997-2000թթ.: Բանկային համակարգի բարեփոխումների 3-րդ փուլի առանձնահատկությունն այն է, որ տնտեսության կայունացման հետ մեկտեղ դրական փոփոխություններ տեղի ունեցան բանկերի և տնտեսության ճյուղերի փոխհարաբերությունների բնագավառում, բարելավվեցին բանկային համակարգի գործունեությունը բնութագրող ցուցանիշները: Այս փուլում շարունակվեց բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության մեխանիզմների կատարելագործման գործընթացը, որը լուրջ ներդրում հանդիսացավ համակարգի բնականոն գործունեության ապահովման գործում:

Չորրորդ փուլ՝ 2001թ.-ից մինչ օրս: Այս փուլում բանկային համակարգը թևակոխեց իր զարգացման ժամանակակից փուլը: Այս ժամանակաշրջանը նշանավորվեց բանկային օրենսդրության մեջ կատարված մի շարք էական փոփոխություններով և նորամուծություններով: Ընդունվեցին նոր նորմատիվ ակտեր, փոփոխություններ կատարվեցին բանկերի գործունեությունը կարգավորող կանոնակարգերում, օրենքներում՝ կարգավորման դաշտի կատարելագործման, Բազելյան սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով:


Քննարկման առանձնահատուկ թեմա է ԼՂՀ բանկային համակարգի կարգավիճակն ու կառուցվածքը: ԼՂՀ բանկային համակարգի զարգացումների արդյունքում սահմանվեց, որ ԼՂՀ և

¹ Մինասյան Է., ՀՀ ֆինանսավարկային համակարգի վերափոխումների ժամանակագրությունը 1990-ական թվականներին: Рынок капитала в Армении №21,22 (127,128), ноябрь 2003:

ՀՀ բանկային համակարգերը գործելու են մեկ հարթությունում, ինչը պատմական այդ փուլում հիմնավորված որոշում էր: Այդպիսով, ԼՂՀ ժամանակակից բանկային համակարգը ՀՀ բանկային համակարգի բաղկացուցիչ մասն է: Բանկային ոլորտը ԼՂՀ այն եզակի բնագավառն է, որտեղ գործում են ՀՀ բանկային համակարգին առնչվող օրենքներն ու ենթօրենսդրական ակտերը: ԼՂՀ բանկային համակարգն ունի երկմակարդակ կառուցվածք, որի առաջին մակարդակը զբաղեցնում է ՀՀ Կենտրոնական բանկը: Այն կարգավորում և վերահսկում է ԼՂՀ տարածքում գործող բանկային միավորների գործունեությունը, ԼՂՀ և ՀՀ տարածքներում իրականացնում է միասնական դրամավարկային քաղաքականություն: ԼՂՀ բանկային համակարգի երկրորդ մակարդակը ներկայացված է մեկ առևտրային բանկով («Արցախբանկ» ՓԲԸ) և ՀՀ բանկերի՝ ԼՂՀ տարածքում գործող մասնաճյուղերով: ԼՂՀ և ՀՀ բանկային համակարգերի սխեմատիկ գծապատկերը ներկայացված է գծանկարում:

Գծանկար 1

ԼՂՀ և ՀՀ բանկային համակարգերը



Այսպիսով՝ պատմական զարգացումների արդյունքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձևավորվեց թերևս աշխարհում եզակի բանկային համակարգ: Այստեղ դե յուրե գործում է ՀՀ բանկային համակարգը, սակայն դե ֆակտո այն բավականին ինքնուրույն համակարգ է՝ իր խաղի կանոններով և առանձնահատկություններով: Չնայած ՀՀ բանկային համակարգի մաս կազմելուն՝ ՀՀ բանկերն առանձնապես շահագրգռված չեն այստեղ գործունեություն ծավալելու մեջ, ինչն արտահայտվում է նրանում, որ ոչ բոլոր ՀՀ բանկերը ԼՂՀ տարածքում ունեն գործող մասնաճյուղեր:

Ներկայումս, ԼՂՀ-ում ներդրված է բանկային ծառայությունների, այդ թվում՝ նաև վարկավորման բավականին լայն համակարգ: 2009-2011թթ. ԼՂՀ բանկային համակարգի կողմից սպասարկվող վարկերի ծավալում լուրջ աճի միտում է արձանագրվել^{1,2}: 2009թ. 17.8 մլրդ դրամ վարկային փաթեթը աճել է՝ 2010թ. հասնելով 29.2 մլրդ, 2011թ.՝ 42.5 մլրդ դրամի, այսինքն՝ աճել է ավելի քան 24.7 մլրդ դրամով կամ ավելի քան 2.35 անգամ: Աճի ապահովման գործում մեծ է եղել կազմակերպություններին և տնային տնտեսություններին տրամադրված վարկերի դերը (աղյուսակ 1):

¹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրություն, 2010 թվականին: ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2011, էջ 64-70:
² Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրություն, 2009 թվականին: ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2010, էջ 65-70:

ԼՂՀ բանկային հատվածի վարկերը ըստ տնտեսության հատվածների, տարեսկզբին

	Սյն դրամ			%		
	2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Ոչ ռեզիդենտներին	167.9	82.0	-	0.9	0.3	-
Կազմակերպություններին	10019.7	18228.1	24051.4	56.3	62.3	56.6
Տնային տնտեսություններին	7609.1	10183.2	14084.2	42.7	34.8	33.1
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	-	-	1817.2	-	-	4.3
Այլ ֆինանսական կազմակերպություններին	16.1	755.8	2573.3	0.1	2.6	6.0
Ընդամենը	17812.8	29249.1	42526.1	100.0	100.0	100.0

Բանկային համակարգի տրամադրած վարկային միջոցների ճյուղային բաշխման ուսումնասիրությունը նույնպես հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում: Այսպես, բոլոր ճյուղերին տրամադրված վարկային միջոցների արժեքային ծավալի աճին զուգահեռ բավականին մեծ փոփոխություններ են արձանագրվել վարկերի ճյուղային կառուցվածքում (աղյուսակ 2):

ԼՂՀ բանկային հատվածի վարկերի ճյուղային կառուցվածքը, տարեսկզբին

	Սյն դրամ			%		
	2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Արդյունաբերություն	3333.3	5692.2	6201.5	18.7	19.5	14.6
Գյուղատնտեսություն	1043.8	1798.6	3346.4	5.9	6.1	7.9
Շինարարություն	1472.6	4435.2	6074.8	8.3	15.2	14.3
Առևտուր	4204.6	4480.0	5108.1	23.6	15.3	12.0
Այլ ճյուղեր	7758.5	12843.2	21795.3	43.5	43.9	51.2
Ընդամենը	17812.8	29249.2	42526.1	100.0	100.0	100.0

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ նվազել են արդյունաբերության և առևտրի ոլորտին տրամադրված վարկերի մասնաբաժինները, փոխարենը ավելացել է գյուղատնտեսության, շինարարության և այլ ճյուղերի վարկավորման մասնաբաժինը:

ԼՂՀ ֆինանսական համակարգում որոշակի տեղ ունեն նաև ոչ բանկային ֆինանսական հաստատությունները, որոնց մասնաբաժինը ընդհանուր փոխառությունների ծավալում 2011թ. սկզբի դրությամբ կազմել է 8%-ից մի փոքր ավել: Ի տարբերություն բանկային համակարգի՝ ոչ բանկային կազմակերպությունների տրամադրած վարկային ռեսուրսները 2011թ.-ին նախորդ տարվա համեմատ նվազել են՝ 5.1 մլրդ դրամից հասնելով 3.5 մլրդ դրամի: Ընդ որում, մինչ այդ նվազումը (2010թ.) ոչ բանկային ֆինանսական հաստատությունների մասնաբաժինը փոխառությունների շուկայում կազմում էր ավելի քան 17% (աղյուսակ 3):

ԼՂՀ ոչ բանկային կազմակերպությունների փոխառությունները ըստ տնտեսության հատվածների, տարեսկզբին

	Սյն դրամ			%		
	2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Ոչ ռեզիդենտներին	-	-	-	-	-	-
Կազմակերպություններին	2502.6	3246.4	786.9	53.0	63.8	22.6
Տնային տնտեսություններին	1744.6	1715.8	2581.8	36.9	33.7	74.1
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	477.3	-	115.0	10.1	-	3.3
Այլ ֆինանսական կազմակերպություններին	-	128.0	-	-	2.5	-
Ընդամենը	4724.5	5090.2	3483.7	100.0	100.0	100.0

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ հատկապես նվազել են կազմակերպություններին տրամադրվող վարկերը:

Ամենայն հավանականությամբ դա կապված է ֆինանսատնտեսական ճգնաժամի և բանկային համակարգի խիստ մրցակցային պայմանների հետ: Ոչ բանկային համակարգի տրամադրած վարկային միջոցների ճյուղային բաշխման ուսումնասիրությունը նույնպես հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ԼՂՀ ոչ բանկային կազմակերպությունների կողմից իրականացված փոխառությունները ըստ տնտեսության ճյուղերի, տարեսկզբին

	Մլն դրամ			%		
	2009թ.	2010թ.	2011թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Արդյունաբերություն	740.7	699.3	78.1	15.7	13.8	2.2
Գյուղատնտեսություն	1731.8	1465.1	2047.5	36.6	28.8	58.8
Շինարարություն	367.9	570.8	160.6	7.8	11.2	4.6
Առևտուր	363.6	912.9	539.9	7.7	17.9	15.5
Այլ ճյուղեր	1520.5	1442.1	657.6	32.2	28.3	18.9
Ընդամենը	4724.5	5090.2	3483.7	100.0	100.0	100.0

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ոչ բանկային հատվածը կորցնում է արդյունաբերության վարկավորման իր ունակությունը՝ ամբողջության զիջելով այն բանկային համակարգին: Փոխարենը ավելանում է գյուղատնտեսության վարկավորման պոտենցիալը, որտեղ կենտրոնացած է ոչ բանկային համակարգի տրամադրած վարկային միջոցների շուրջ 60%-ը: Նման պատկերը կարելի է բացատրել գյուղատնտեսության ռիսկայնությամբ և բանկային համակարգի՝ գյուղատնտեսության վարկավորումից խուսափելու գործոններով:

Մասնագիտական տեսանկյունից բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ բանկային համակարգի տրամադրած վարկերի ճյուղային կառուցվածքի համեմատումը ԼՂՀ համապատասխան ցուցանիշների հետ: ՀՀ բանկային համակարգի տրամադրած վարկերի ճյուղային կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 5-ում¹:

Աղյուսակ 5

ՀՀ բանկային հատվածի վարկերի ճյուղային կառուցվածքը, տարեսկզբին

	Մասնաբաժինը, %		
	2009թ.	2010թ.	2011թ.
Արդյունաբերություն	13.9	21	23
Գյուղատնտեսություն	5.9	6.3	5.9
Շինարարություն	6.4	7.7	8.4
Առևտուր	21.4	20.8	20.9
Այլ	52.4	44.1	41.8
Ընդամենը	100	100	100

Աղյուսակ 2-ի և աղյուսակ 5-ի համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՀ և ԼՂՀ տնտեսությունները որոշակի կառուցվածքային տարբերություններ ունեն: Եթե ՀՀ արդյունաբերության ոլորտում 2011թ. տարեսկզբին տեղաբաշխված է եղել վարկերի 22.8%-ը, ապա ԼՂՀ-ում՝ 14.6%-ը, ընդ որում, եթե Հայաստանում նկատվում է այս ոլորտում տեղաբաշխված ռեսուրսների մասնաբաժնի աճ, ապա ԼՂՀ-ում՝ նվազում: Նմանատիպ միտում է արտահայտվում նաև առևտրի ոլորտում, որտեղ ՀՀ-ի համեմատաբար կայուն մասնաբաժնին զուգահեռ ԼՂՀ-ում արձանագրվել է նվազում: Շինարարության դեպքում թե՛ Հայաստանում և թե՛ ԼՂՀ-ում նկատվում է աճ, սակայն, ԼՂՀ-ում՝ ավելի արտահայտված: Հակառակ միտումն է դիտվում գյուղատնտեսության և մյուս ճյուղերում:

Համեմատությունը ցույց է տալիս նաև, որ Հայաստանի պարագայում առևտրի ոլորտը վարկերի զգալիորեն ավելի մեծ մասնաբաժին է կլանում, ինչը հավանաբար կապված է այն հանգամանքի հետ, որ արտաքին առևտրում, հիմնականում, մասնագիտացված են հայաստանյան

¹ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների: <http://www.cba.am>

ընկերությունները, իսկ ԼՂՀ առևտրային կազմակերպությունները օգտվում են իրենց հայաստանյան գործընկերների ծառայություններից:

Նշենք ևս մեկ կարևոր հանգամանք: ԼՂՀ վարկային համակարգի վիճակագրության վերլուծությունն ու հետևություններ անելը բավականին ռիսկային են այն իմաստով, որ կապված տնտեսության ոչ մեծ լինելու հետ՝ տարեկան տատանումների ամպլիտուդն այստեղ բավականին մեծ է: Այնուամենայնիվ՝ կարող ենք արձանագրել, որ բնականոն զարգացող տնտեսությունը չի կարող գոյություն ունենալ առանց կայուն և ուժեղ բանկային համակարգի: Ժամանակակից աշխարհում բանկերի նշանակությունը դուրս է եկել դրամային ու վարկային հարաբերությունների շրջանակից: Առանց դրանց հնարավոր չէ պատկերացնել տնտեսվարող սուբյեկտների գործունեության նորմալ, ռացիոնալ կազմակերպումը տնտեսական զարգացման գրեթե բոլոր մակարդակներում: Մինչդեռ թույլ բանկերը պետության թուլացման ու տնտեսության դեգրադացման գործոն են¹:

ԼՂՀ ներկայիս խնդիրները հիմնականում կապված են ճգնաժամային երևույթների հաղթահարման հետ: Արդյունավետ գործող այնպիսի բանկային համակարգի առկայությունը, որն ի վիճակի կլինի ապահովել ֆինանսական ռեսուրսների կենտրոնացումը և դրանց ուղղորդումը դեպի տնտեսության զարգացման առաջնային ուղղություններ, իսկապես կարևոր նշանակություն կունենա: Սակայն, հարկ է նշել, որ ներկայումս տնտեսության իրական հատվածի վարկավորումը կապված է վարկառուների անվճարունակության բարձր ռիսկի հետ: Դրա հետևանքով բանկերը խուսափում են ավելորդ ռիսկերից ու նախընտրում են վարկեր տրամադրել միայն բարձր հուսալիություն ունեցող գրավի առկայության դեպքում, ինչը զգալիորեն կրճատում է վարկառուների շրջանակը:

ԱՐՄԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Լոթսոնյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՎԱՐԿԻ ԴԵՐՈ ԾՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վարչաիրամայական համակարգից շուկայական տնտեսության անցումն իրատեսական չէ առանց վարկային համակարգի զարգացման, որը պետք է հիմնված լինի շուկայական տնտեսության գործունեության սկզբունքների վրա: Վարկային համակարգը վարկային հարաբերությունների, վարկավորման ձևերի ու եղանակների, ինչպես նաև ֆինանսավարկային հաստատությունների ամբողջություն է, որը փոխատվական կապիտալի շուկայում կուտակում է ազատ դրամական միջոցները և տրամադրում տնտեսվարող սուբյեկտներին²: Ինչպես և բոլոր հետխորհրդային հանրապետությունները, ՀՀ վարկային համակարգը պետք է ձևավորվեր այն իրողությունների հիման վրա, որոնք առկա էին ԽՍՀՄ վերջին տարիներին: Իսկ բանկային համակարգի տեսանկյունից դրանք մեղմ ասած նպաստավոր չէին: Ընդ որում՝ շուկայական բանկային համակարգին անցումը խոչընդոտվում էր ոչ միայն ինստիտուցիոնալ և աշխարհաքաղաքական գործոններով, այլև նոր ձևավորվող վարկային համակարգի ապագա հաճախորդների՝ նոր պայմաններում աշխատելու անպատրաստությամբ:

Վարկ տերմինն առաջացել է լատիներեն «credere» բառից, որը բառացի նշանակում է վստահել: Վարկային հարաբերությունները կարելի է ներկայացնել որպես տնտեսական սուբյեկտների միջև արժեքի տեղաշարժման հետ կապված հասարակական հարաբերությունների համակարգ, որը կարող է տեղի ունենալ վարկի տարբեր դրսևորումների տեսքով՝ առևտրային վարկ, բանկային վարկ, լիզինգ, ֆակտորինգ և այլն³: Վարկը ֆինանսական գործիք է, որը քաղաքացուն կամ ձեռնարկությանը հնարավորություն է ընձեռում դրամ փոխառել՝ ապրանքներ, հումք և այլ ունեցվածք գնելու կամ պարտավորություն կատարելու

¹ Беляков А.В., Банковские риски: проблемы учета, управления и регулирования. Москва, БДИ-пресс, 2003.

² Николаев И.П., Теория переходной экономики. Москва, ЮНИТИ, 2001.

³ Деньги, кредит, банки: Учебник / Под ред. О. И. Лаврушина. — М.: Финансы и статистика, 2000.

համար՝ վճարումը կատարելով որոշ ժամանակահատվածի ընթացքում: Սովորաբար վարկավորումն իրականացվում է մի շարք սկզբունքների պահպանման պայմաններում, որոնց շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն.

- վարկի վերադարձելիության սկզբունքը,
- վարկի ժամկետայնության սկզբունքը,
- վարկի տարբերակվածության (դիֆերենցիվածության) սկզբունքը,
- վարկի ապահովվածության սկզբունքը,
- վարկի վճարելիության սկզբունքը:

Ներկայացված սկզբունքները վեր են հանում այն արմատական տարբերությունները, որոնք առկա են վարկի և դրամաշնորհի, նվիրատվության, ներդրման և ակտիվների փոխանցման այլ ձևերի միջև: Այսպես, վարկի վերադարձելիության սկզբունքը ենթադրում է, որ վարկը տրամադրվում է միմիայն վերադարձման նախապայմանով: Ընդ որում, ժամկետայնության սկզբունքը ենթադրում է, որ վարկը ոչ թե պետք է պարզապես վերադարձվի, այլ պետք է վերադարձվի վարկային պայմանագրով սահմանված ժամկետում:

Վարկավորման տարբերակվածության սկզբունքը վարկի վերադարձելիության ապահովման երաշխիքներից մեկն է, որը նշանակում է, որ վարկատուները պարտավոր չեն բավարարել վարկավորման համար դիմած բոլոր հաճախորդների հայտերը: Այսինքն՝ վարկը պետք է տրամադրվի այն սուբյեկտներին, որոնք ի վիճակի են այն ժամանակին հետ վերադարձնել:

Վարկի ապահովվածության սկզբունքը նույնպես վարկի վերադարձելիության ապահովման երաշխիքներից մեկն է, որը ենթադրում է, որ տրված վարկերը պետք է ապահովված լինեն որոշակի ակտիվներով: Ընդ որում, որպես վարկի ապահովվածության միջոց՝ հանդես են գալիս ոչ միայն ապրանքանյութական արժեքները, այլև երրորդ անձանց կողմից տրված երաշխիքները:

Վճարելիության սկզբունքը բացահայտում է վարկի շուկայական էությունը և ցույց է տալիս, որ վարկի օգտագործման դիմաց փոխառուն պետք է տոկոսների ձևով վճարի որոշակի գումար: Այսինքն, բանկային տոկոսադրույքը հանդես է գալիս որպես վարկի գին՝ երկակի ազդեցություն ունենալով վարկավորման գործընթացի մասնակիցների վրա: Նախ, վարկատուի համար այն տնտեսական նման գործունեությամբ զբաղվելու խթան է, իսկ վարկառուի համար՝ ներգրավված միջոցները արդյունավետ օգտագործելուն նպաստող գործիք:

Վարկավորման սկզբունքների խախտումը խեղաթյուրում է վարկի էությունը, այն կորցնում է իր նշանակությունը, ինչը բացասաբար է ազդում վարկատուի և վարկառուի տնտեսական գործունեության արդյունավետության վրա: Այս սկզբունքների խիստ և միաժամանակյա պահպանումը ցանկացած պետականության վարկային համակարգի կայունության պարտադիր նախապայմանն է, որոնք չպահպանելը կարող է հանգեցնել նաև համապետական և գլոբալ ճգնաժամերի:

Հայաստանում վարկային փոխհարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքով, բանկային ոլորտի օրենսդրությամբ, ինչպես նաև կողմերի միջև կնքված վարկային պայմանագրով: Քաղաքացիական օրենսդրությամբ սահմանվում են վարկային իրավահարաբերությունների մասնակիցների իրավունակությունը, վարկային պայմանագրին ներկայացվող պահանջները, պարտավորությունների կատարման ապահովման եղանակները, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունը և այլն: Բանկային օրենսդրությամբ (օրենքներ, Կենտրոնական բանկի կանոնակարգեր, կարգեր, հրահանգներ, այլ իրավական ակտեր) սահմանվում են բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման և վերահսկողության կարգն ու պայմանները: Վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպություն պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից¹:

Ներկայումս ապրանքային վարկի տեսակներից են ապրանքների ապառիկ մատակարարումը, ապառիկ վաճառքը, ունեցվածքի վարձակալությունը, սարքավորումների լիզինգը,

¹ Անդրեասյան Ա., Վարկային գործառնություններ: Երևան, Ֆինանսաբանկային քոլեջ, 2003:

ապրանքային վարկը, հավատարմագրային կառավարման որոշ տեսակներ: Նման դեպքերում վերադարձվում են նույնանման ապրանքը և հավելավճար:

Վարկի դրամային տեսակը ենթադրում է նախօրոք որոշված դրամական միջոցների օգտագործման իրավունքի ժամանակավոր փոխանցում: Գրամական հարաբերությունների զարգացման ներկայիս փուլում գերակշռում են վարկավորման հենց այս տեսակները: Այստեղ նույնպես պահպանվում են վարկի ժամկետայնության, վերադարձելիության, վճարելիության և մյուս սկզբունքները:

Վարկի խառը տեսակն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ վարկը տրամադրվում է ապրանքի տեսքով, իսկ վերադարձվում է գումարի տեսքով, կամ հակառակը: Այս տարբերակը շատ հաճախ կիրառվում է միջազգային հաշվարկներում, երբ ստացված դրամային վարկերի դիմաց վճարվում է ապրանքների մատակարարմամբ: Ապրանքների ապառիկ վաճառքը նույնպես ներկայանում է որպես վարկավորման խառը տեսակ, երբ տրամադրված ապրանքի վերադարձն իրականացվում է դրամական տեսքով:

Շուկայական տնտեսությունում վարկային համակարգի տեղի և դերի մասին է վկայում վարկատեսակների այն լայն շրջանակի առկայությունը, որոնք կիրառվում են տնտեսության ամենատարբեր ոլորտներում: Վարկային ռեսուրսների տեղի և դերի վերաբերյալ ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել ըստ տնտեսության ճյուղերի, ինչը հնարավորություն կտա նաև բացահայտելու տնտեսական զարգացման միտումները, քանզի ապացուցված է, որ վարկային միջոցները հոսում են հենց տնտեսության առավել ակտիվ և դինամիկ զարգացող ոլորտներ: Ըստ տնտեսական ոլորտի ուղղվածության՝ առանձնացվում են վարկերի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են արդյունաբերական վարկերը, գյուղատնտեսական վարկերը, շինարարական վարկերը, առևտրի ֆինանսավորման վարկերը, սպառողական վարկերը, հիփոթեքային վարկերը և այլն:

Արդյունաբերական վարկերը տրամադրվում են ձեռնարկությունների հիմնական և շրջանառու միջոցների համալրման, հարկերի և աշխատավարձի վճարման, երկարաժամկետ և միջնաժամկետ ներդրումների և նախագծերի իրականացման ծախսերը ծածկելու համար: Նման վարկերի թվին են դասվում ինքնաիրացվելի վարկերը (օգտագործվում են ձեռնարկության ապրանքանյութական պահուստների ձևավորման համար), շրջանառու կապիտալի վարկավորումը (օգտագործվում են ձեռնարկության շրջանառու կապիտալի համալրման համար), ռեզվերային վարկավորումը (վարկային գիծը) և այլն:

Արդյունաբերական վարկերի կառուցվածքում առանձնահատուկ տեղ ունեն երկարաժամկետ վարկերը, որոնք նախատեսված են երկար և միջին ժամկետային ներդրումների ֆինանսավորման համար՝ շինությունների և սարքավորումների ձեռքբերման նպատակով: Որպես նմանատիպ վարկերի վերադարձելիության ապահովման միջոց՝ սովորաբար հանդես են գալիս վարկառուի հիմնական միջոցները: Նման վարկեր երբեմն տրամադրվում են մի քանի բանկերի կողմից (համատեղ ֆինանսավորում):

Հիփոթեքային են կոչվում այն վարկերը, որոնք ապահովված են անշարժ գույքով՝ հողով, շենքերով և այլ կառույցներով: Տրվում են, հիմնականում, շինարարության, հողաշինարարության, հողեր, բնակարան և այլ հիմնական միջոցներ գնելու համար: Շինարարության «միջակայքային» վարկերը իրենց էությամբ նույնպես հիփոթեքային վարկերի շարքից են: Նման վարկերը տրվում են կարճ ժամկետներով և նախատեսված են բնակելի, վարչական շենքերի և այլ կառույցների շինարարության համար: Գրանք վարկառուին հնարավորություն են տալիս միջոցներ ստանալ աշխատողներ վարձելու, սարքավորումներ վարձակալելու, շինանյութ ձեռք բերելու, հողային աշխատանքներ կատարելու համար: Շինարարության ավարտից հետո բանկային վարկը մարվում է այլ վարկառուից ավելի երկարաժամկետ վարկ ստանալու միջոցով, գրավադրելով նորակառույց անշարժ գույքը:

Գյուղատնտեսական վարկերի շարքին են դասվում գյուղացիական տնտեսություններին հողի մշակման, բերքահավաքի, անասնապահական նպատակներով տրամադրված վարկերը: Նման վարկերը, հիմնականում, կարճաժամկետ են և տրվում են ֆերմերներին գյուղատնտեսական մեկ ցիկլի համար՝ հողի մշակման, բերքահավաքի, կենդանիներին կերակրելու նպատակով:

Սպառողական վարկերը ամենաշահութաբեր վարկատեսակներից են: Դրանք տրվում են ազգաբնակչությանը՝ շարժական և անշարժ գույքի, կենցաղային ապրանքների, տների վերանորոգման և վերակառուցման, բժշկական ծառայությունների և այլ անձնական ծախսերի համար: Նման վարկերը, հիմնականում, տրվում են ձեռք բերվող գույքի կամ թանկարժեք իրերի գրավադրմամբ:

Վարկեր տրվում են նաև ֆինանսական հաստատություններին՝ բանկերին, ապահովագրական ընկերություններին, արժեթղթերի դիլերներին և այլն: Բացի այդ, վարկառուի դերում կարող են հանդես գալ անգամ պետությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, բյուջետային կազմակերպությունները և այլն:

Վերջին տասնամյակում Հայաստանում մեծացել է ոչ միայն վարկավորման ընդհանուր ծավալը, այլև տնտեսությունում դրանց ունեցած դերն ու կարևորությունը: Տնտեսությունում ունեցած դերի և կարևորության աճի մասին է վկայում բանկային համակարգի ակտիվների և տրամադրված վարկային միջոցների ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերության շարունակական ավելացումը, ինչը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Բանկային համակարգի ակտիվների և տրամադրված վարկային միջոցների հարաբերությունը ՀՆԱ-ին, %

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Բանկային համակարգի ակտիվներ / ՀՆԱ	22.8	19.8	18.4	17.6	19.1	19.6	19.7	24.3	28.7	42.7	44.5
Բանկային համակարգի վարկեր / ՀՆԱ	9.6	7.1	6.7	6.6	7.5	8.7	9.2	13.5	17.8	23.7	27.1

Աղբյուր՝ ՀՀ ԿԲ, <http://www.cba.am>

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերությունը աճել է՝ հասնելով շուրջ 44.5 %-ի, իսկ բանկային համակարգի վարկերի և ՀՆԱ-ի հարաբերությունը՝ ավելի քան 27 %-ի: Չնայած դրական միտումներին՝ հարկ է նշել, որ զարգացած երկրներում բանկային համակարգի վարկերը կարող են մինչև անգամ գերազանցել ՀՆԱ-ն ավելի քան 2 անգամ, ինչը ցույց է տալիս, որ Հայաստանում այս ոլորտը զարգացման մեծ ներուժ դեռ ունի:

Հայաստանում վարկավորման գործընթացի պատմության ուսումնասիրությունը հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում: Աղյուսակում 1-ում ներկայացված են բանկային համակարգի կողմից տնտեսության առանձին ոլորտներին տրամադրված վարկային միջոցների ծավալները 2000-2011 թթ. համար:

Աղյուսակ 2

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների, մլրդ ՀՀ դրամ¹

Ոլորտ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Արդյունաբերություն	33,1	37,8	29,7	28,6	32,5	34,2	41,0	50,6	73,2	106,8	161,6	238,9
Գյուղատնտեսություն	7,3	10,4	7,8	8,2	8,2	10,9	12,3	17,9	29,1	43,7	48,4	64,8
Շինարարություն	2,3	2,6	3,0	4,1	5,4	6,7	9,1	15,7	32,5	45,8	61,9	85,8
Տրանսպորտ և կապ	1,5	2,0	1,3	0,9	0,9	2,8	4,3	4,5	9,1	12,2	22,0	36,2
Առևտուր	9,9	12,7	15,9	17,3	26,0	34,3	47,0	67,3	112,8	138,0	165,6	228,5
Սպասարկման ոլորտ	-	-	-	-	5,2	6,8	10,2	15,0	22,3	26,4	35,3	48,3
Սպառողական վարկեր	-	-	-	-	39,3	43,5	58,5	92,3	156,8	144,9	146,4	189,5
Հիփոթեքային վարկեր	-	-	-	-	-	8,1	17,3	37,9	71,6	83,8	84,6	98,1
Այլ	-	-	-	-	4,6	3,7	5,3	10,6	26,9	35,6	46,9	56,5
Ընդամենը	54,2	64,8	57,3	59,1	77,1	149,1	204,9	311,9	534,1	637,1	772,7	1046,4

¹ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների: <http://www.cba.am>

Աղյուսակում ներկայացված թվային տվյալները հետաքրքիր համամասնություններ են բացահայտում, որոնք հստակ բնորոշում են այն զարգացումները, որոնք տեղի են ունեցել նախորդ տասնամյակում: Այսպես, առևտրային բանկերի կողմից տնտեսության վարկավորման ընդհանուր ծավալը 2011թ. անցել է 1 տրլն դրամից՝ 2000թ. համեմատությամբ աճելով ավելի քան 19 անգամ: Միջին ցուցանիշից պակաս աճի տեմպեր են արձանագրվել արդյունաբերության (7.21 անգամ), գյուղատնտեսության (8.86 անգամ), սպասարկման ոլորտի (9.27 անգամ), սպառողական (4.82 անգամ) և հիփոթեքային (12.13) վարկերի ծավալների մասով, մինչդեռ շինարարության (36.54 անգամ), առևտրի (23.00 անգամ) և տրանսպորտի ու կապի (24.87 անգամ) ոլորտներին ուղղվող միջոցների գծով արձանագրվել է միջինից բարձր աճի տեմպ: Նշենք, որ բացի առևտրային բանկերից՝ տնտեսության վարկավորմամբ զբաղվում են նաև վարկային կազմակերպությունները, որոնց տրամադրած վարկային միջոցները 2011թ. կազմել են մոտ 100 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային միջոցների մինչև 10%-ը:

ՀՀ բանկային համակարգի վարկային ճամպուրակի կառուցվածքի ներկայացումը տուկոսներով ավելի ակնառու է դարձնում վերը նշված միտումները: Աղյուսակ 2-ում ներկայացված է ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների՝ արտահայտված տուկոսներով:

Աղյուսակ 3

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների, %¹

Ոլորտ	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Արդյունաբերություն	61.2	57.3	51.1	48.4	42.2	23.0	20.0	16.2	13.7	16.8	20.9	22.8
Գյուղատնտեսություն	13.5	16.1	13.7	13.9	10.6	7.3	6.0	5.7	5.5	6.9	6.3	6.2
Շինարարություն	4.3	4.0	5.3	6.9	7.0	4.5	4.4	5.0	6.1	7.2	8.0	8.2
Տրանսպորտ և կապ	2.7	3.0	2.2	1.5	1.3	1.9	2.1	1.4	1.7	1.9	2.8	3.5
Առևտուր	18.3	19.6	27.7	29.3	33.7	23.0	23.0	21.6	21.1	21.7	21.4	21.8
Սպասարկման ոլորտ	-	-	-	-	6.8	4.5	5.0	4.8	4.2	4.1	4.6	4.6
Սպառողական վարկեր	-	-	-	-	51.0	29.2	28.5	29.6	29.4	22.7	18.9	18.1
Հիփոթեքային վարկեր	-	-	-	-	0.0	5.4	8.5	12.2	13.4	13.2	10.9	9.4
Այլ	-	-	-	-	6.0	2.5	2.6	3.4	5.0	5.6	6.1	5.4
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Նման համամասնությունները ցույց են տալիս, որ նախորդ տասնամյակում տնտեսության զարգացման միտումները որակական առումով բացասական են: Արդյունաբերությանն ուղղվող վարկային միջոցների տեսակարար կշիռի նվազումը ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսական մթնոլորտը չի խրախուսում այս ոլորտի զարգացումը: Արդյունաբերության ոլորտում վարկային միջոցների աճի ցածր աստիճանը կարելի է բացատրել արդյունաբերության շարունակական անկմամբ, որի մասին է վկայում նաև առևտրի վարկավորման ծավալների աճը, ինչպես նաև արդյունաբերության մոնոպոլացմամբ, որի դեպքում արդյունաբերության ոլորտը «փակ է» նորեկների համար, իսկ գործող արդյունաբերական օբյեկտները չեն գնում ընդլայնման՝ սեփական միջոցներով բավարարելով ֆինանսական միջոցների պահանջը:

Բացասական միտում է նկատվում նաև գյուղատնտեսության առումով, որտեղ առկա է հստակ արտահայտված նվազող միտում: Ընդ որում, սա այն դեպքում, երբ գյուղատնտեսության ոլորտում առկա է կապիտալի խիստ պակաս, մեքենատեխնիկայի և մեխանիզմների մաշվածությունը գնալով խորանում է:

Ամփոփելով նշենք, որ վարկային ռեսուրսների տեղաբաշխման նման գնահատականը մասամբ պայմանական է: Հստակ գործող տնտեսական մեխանիզմների և կայացած տնտեսության պայմաններում փոխառու կապիտալն ինքնաբերաբար կհոսի այն ոլորտներ, որտեղ առկա է դրա պահանջարկը: Սակայն, Հայաստանի պարագայում, կարծում ենք, վարկային ռեսուրսների տեղաբաշխման նման պատկերը հստակորեն ցույց է տալիս, որ տնտեսական քաղաքականությունը շատ դեպքերում չի բերում ցանկալի արդյունքների, որի պատճառների ուսումնասիրությունը առանձին հետազոտության առարկա է:

¹ Ցուցանիշները հաշվարկվել են Կենտրոնական բանկի պաշտոնական հրապարակումների հիման վրա: <http://www.cba.am>

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ինչպես և արժեթղթերի դեպքում, բնակարանի համար ևս դժվար է գտնել գնահատման այնպիսի մի համակարգ, որը հնարավորություն կընձեռի հաշվելու բնակարանի «արդարացի» գինը: Նույնիսկ այն դեպքում, երբ մենք գիտենք, թե ինչպես կարելի է հստակ գնահատել ապրանքն այս կամ այն շուկայում, չենք կարող երաշխավորված լինել, որ սպեկուլյացիաները կամ մարդկային հոգեբանության մեջ առկա վախը չեն բարձրացնի կամ իջեցնի գները՝ շեղելով իրենց կանխատեսվող իրական արժեքից: Ինչևէ, ինչպես փաստում է արժեթղթերի շուկան, չհիմնավորված ոչ արդարացի գները չեն կարող գոյատևել տևական ժամանակ:

Մեր հետազոտության նպատակն է հաշվարկել բնակարանային գներ-եկամուտ գործակիցը՝ որպես բնակարան ձեռք բերելու հասանելիության չափման մեթոդ: Ակնհայտ է դառնում, որ հետազոտության անհրաժեշտ կոմպոնենտներից են բնակարանների գնահատումը, հիփոթեքային վարկավորման տոկոսադրույքները և բնակարանի գծով վճարվելիք կանխավճարները:

Բնակարանների գնահատման մեր հետազոտության հիմքում ներդրված է հետևյալ առանցքային մոտեցումը, որ բնակարանային շուկան պետք է միջին արժողությամբ բնակարանը հասանելի դարձնի միջին եկամուտ ունեցող ընտանիքի համար: Անշուշտ գոյություն ունեն բնակարանների գնահատման մեթոդաբանական շատ տարբեր մոտեցումներ, սակայն կարծում ենք, որ այս մոտեցումը բավականին արդիական է և տալիս է այնպիսի մի պատկեր, որը հասանելի չէր լինի այլ շատուշատ գնահատման մեթոդների կիրառության պարագայում:

Ներկայիս Հայաստանի Հանրապետությունում ձևավորված վարկավորման պրակտիկայի համաձայն՝ բանկերի համար ընդունելի է պոտենցիալ հաճախորդի ամսական եկամտի մինչև 35%-ը ուղղել հիփոթեքային վարկի մարմանը¹: Ստորև մենք կատանանք մի թիվ, որի արտադրյալը եկամտի հետ ցույց կտա այն մեծությունը, որը կարող է արժենալ բնակարանը՝ մնալով հասանելի միջին եկամուտ ունեցող անձի համար:

Որպեսզի հաշվարկենք բնակարանի առավելագույն գին-եկամուտ գործակիցը, ենթադրենք մենք ունենք միջին ընտանիքի եկամուտ 1000 ԱՄՆ դոլար տարեկան (ենթադրության համար կարող էինք վերցնել ցանկացած թիվ. այն չէր ազդելու գործակցի վրա): Վարկավորման ստանդարտներն այստեղ ևս հուշում են, որ մենք կարող ենք օգտագործել մեր ամսական եկամտի առավելագույնը 35%-ը հիփոթեքային վարկի սպասարկման ուղղությամբ: Այսպիսով՝ մենք կունենանք $(1000/12) \times 35\% = 29.16$ դոլար նախատեսված հիփոթեքային վարկի մարման համար: Այժմ մեզ անհրաժեշտ է հաշվարկել փոխառնված յուրաքանչյուր 1000 ԱՄՆ դոլարի գծով ամսական ծախսը, որպեսզի կարողանանք հասկանալ, թե ինչքան կարող ենք ծախսել բնակարանի վրա: Տարեկան 12% տոկոսադրույքով և 10 տարի մարման ժամկետ ունեցող վարկի ամսական վճարումները կազմում են 14.35 դոլար: Այստեղից էլ հետևություն, որ մենք կարող ենք մեզ թույլ տալ փոխառել $29.16/14.35 = 2$ անգամ 1000 դոլար (այսինքն՝ $2 \times 1000 = 2000$ դոլար): 2.0-ը, այսպիսով, առավելագույն թույլատրելի՝ միջին բնակարանի գին - միջին ընտանիքի եկամուտ գործակցի արժեքն է զրո տոկոս կանխավճարի, 10 տարի մարման ժամկետ ունեցող և տարեկան 12% ֆիքսված տոկոսադրույքով վարկերի դեպքում: Խոսելով ավելի իրատեսական թվերով՝ տարեկան 100,000 ԱՄՆ դոլար եկամուտ ունեցող ընտանիքը կարող է իրեն թույլ տալ առավելագույնը 200,000 ԱՄՆ դոլար մեծությամբ հիփոթեքային վարկ: 11% և 13% տարեկան տոկոսադրույքների համար (այլ հավասար պայմաններում) գործակիցները կլինեն համապատասխանաբար 2.1 և 1.95: Ակնհայտ է, որ գործակիցն ու տոկոսադրույքը հակադարձ համեմատական են միմյանց. որքան ցածր է տոկոսադրույքը, այնքան գործակիցը բարձր է, քանի որ վարկի ծախսերը նվազում են, հետևաբար մեր եկամտի 35%-ը դառնում է ավելի գնողունակ: Եթե մենք վճարենք որոշակի

¹ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի Հիփոթեքային վարկերի տրամադրման կարգ:

կանխավճար, կկարողանանք գնել ավելի մեծ գործակցով բնակարան, քանի որ վճարված կանխավճարը նվազեցնում է մեզ անհրաժեշտ փոխառու գումարը: Որպեսզի հաշվարկենք նույն գործակիցը կանխավճարի առկայության պարագայում, պարզապես անհրաժեշտ է բազմապատկել սկզբնական գործակիցը վճարված կանխավճարով: Օրինակ՝ 2.0 գործակիցը 20% կանխավճարի համար հաշվարկվում է հետևյալ կերպ՝ $1.2 \times 2.0 = 2.4$:

Փորձենք ներկայացնել առավելագույն հասանելիության գործակիցները աղյուսակ 1-ի տեսքով տարբեր տոկոսադրույքների և կանխավճարների համար: Ներքոնշյալ վարկավորման բոլոր պայմանները հիմնականում համահունչ են ներկայիս հայաստանյան շուկայում ձևավորված պայմաններին:

Աղյուսակ 1

Հասանելիության գործակցի արժեքների կախվածությունը վարկային տոկոսադրույքից և կանխավճարից

	10%	11%	12%	13%
0 % կանխավճար	2.21	2.12	2.03	1.96
10 % կանխավճար	2.43	2.33	2.23	2.15
20 % կանխավճար	2.65	2.54	2.44	2.34
30 % կանխավճար	2.87	2.75	2.64	2.54

Այնհայտ է, որ այստեղ մենք գործ ունենք հիփոթեքային վարկի տոկոսադրույքի և տրված կանխավճարների հետ: Կախված այս երկու փոփոխականների մեծություններից՝ մեր գործակիցը տատանվում է 1.96-ից (0 տոկոս կանխավճարի և 13 տոկոս տարեկան տոկոսադրույքի պայմաններում) 2.87-ի (30 տոկոս կանխավճարի և 10 տոկոս տարեկան տոկոսադրույքի պայմաններում) սահմաններում: Մեր հետազոտությունն իրատեսական դարձնելու նպատակով կարծում ենք, որ այս երկու փոփոխականների համար պետք է ընտրվեն հետևյալ արժեքները՝ ապագա կանխատեսվող հիփոթեքային միջին տոկոսադրույքը և ապագա վճարվելիք կանխավճարի միջին չափը: Մեր մոտեցումն այս հարցում բավականին կոնսերվատիվ է այն առումով, որ ապագայի կանխատեսումն ամենևին էլ լավատեսական չէ, այլ մոտավորապես արտացոլում է ներկայիս շուկայական իրականությունը, այն է, որ հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների միջինը կկազմի շուրջ 12%, և գնվելիք բնակարանների գծով վճարվելիք կանխավճարի չափը կկազմի 20%: Այստեղ, իհարկե, հնարավոր են բավականին խիստ տարակարծություններ, այնուամենայնիվ կարծում ենք, որ այդ «տարակարծությունների միջինը» հենց մեր ենթադրությունն է: Այս ենթադրությունները թույլ են տալիս մեզ եզրակացնել, որ հասանելիության առավելագույն գործակիցն է 2.44:

Այսպիսով, այժմ, երբ մենք ունենք արդեն հիմնավորված կարծիք, թե ինչպիսին պետք է լինի հասանելիության առավելագույն գործակիցը (2,44 կամ աղյուսակից ընտրված որևէ այլ գործակից), կարող ենք եզրակացնել, թե ինչպիսին է Երևան քաղաքի համար ակտուալ հասանելիության գործակիցը: Ներքոնշյալ հաշվարկը ցույց է տալիս, թե ինչպիսին է միջին բնակարանի գին - միջին ընտանիքի եկամուտ հարաբերակցությունը Երևանում: Հաշվարկում օգտագործվել է «ArmTown» տեղեկատվական գործակալության հետազոտությունների արդյունքում հրապարակված 2011 թվականի Երևան քաղաքի բնակարանների շուկայական գները ըստ համայնքների, ինչպես նաև նույն գործակալության կողմից Երևան քաղաքի համար կիրառվող «Ստանդարտ բնակարանի» գաղափարը, որը կազմում է 63.1 քմ¹: Հաշվի առնելով այն փաստը, որ Երևան քաղաքի բնակչությունը կազմում է 1,122,000 մարդ², միջին Հայաստանում բնակվող ընտանիքի մեծությունը կազմում է 3,6 մարդ³, իսկ մեկ շնչին բաժին ընկնող ամսական եկամուտը շուրջ 32,000 դրամ՝ կունենանք հետևյալ պատկերը.

¹ www.armtown.am

² ՀՀ վիճակագրական տարեգիրք 2011:

³ www.mission.am

Հասանելիության գործակիցը երևանյան համայնքներում

Համայնք	Լքմ-ի միջին զին	Ստանդարտ բնակարանի զին	Ընտանիքի միջին տարեկան եկամուտ	Հասանելիության գործակից
ԱԶՄՓՆՅԱԿ	235 900	14 885 290	1 382 400	10,76
ԱՎԱՆ	240 300	15 162 930	1 382 400	10,96
ԱՐԱԲԿԻՐ	377 400	23 813 940	1 382 400	17,22
ԴԱՎԹԱՇԵՆ	272 300	17 182 130	1 382 400	12,42
ԷՐԵՐՈՒՆԻ	248 700	15 692 970	1 382 400	11,35
ԿԵՆՏՐՈՆ	462 900	29 208 990	1 382 400	21,12
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՐԱՍՏԻԱ	239 300	15 099 830	1 382 400	10,92
ՆՈՐ ՆՈՐԶ	236 000	14 891 600	1 382 400	10,77
ՆՈՐԶ-ՄԱՐԱՇ	272 400	17 188 440	1 382 400	12,43
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ	146 600	9 250 460	1 382 400	6,69
ՇԵՆԳԱՎԻԹ	250 900	15 831 790	1 382 400	11,45
ՔԱՆԱՔԵՆ-ՉԵՅԹՈՒՆ	285 700	18 027 670	1 382 400	13,04

Փաստորեն Երևան քաղաքի համայնքների համար ստացված գործակիցները միջին մեծությամբ գերազանցում են մեր հաշվարկած հասանելիության առավելագույն գործակիցը շուրջ հինգ անգամ: Սա չափազանց մտահոգիչ է, քանի որ փաստում է, որ մարդիկ, որոնք ապրում են Երևանում, չեն կարող թույլ տալ իրենց գնել բնակարան նույն քաղաքում: Իհարկե այստեղ չի կարելի արատրահվել այն մտքից, որ ի վերջո եկամուտների վիճակագրությունը էական շեղում կարող է արձանագրել Երևան քաղաքի՝ այն էլ քաղաքի այնպիսի համայնքների համար, ինչպիսիք են Կենտրոնը կամ Արաբկիրը: Ակնհայտ է, որ այստեղ տարեկան կտրվածքով մեկուկես միլիոն դրամի սահմաններում եկամուտ ունեցող ընտանիքների տեսակարար կշիռը շատ քիչ է, այնուամենայնիվ մյուս վարչական շրջանների համար այս թիվն արդեն փոքրիշատե մոտենում է իրականությանը:

Նմանատիպ հետազոտություն իրականացվել է նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում. «Գոլդմեն Սաքս» աշխարհահռչակ ներդրումային ընկերության տնտեսագետները իրականացրել են նմանատիպ մի հետազոտություն, որի արդյունքում 2.7-ը սահմանվել է ազգային՝ բնակարանի միջին զին – միջին ընտանիքի եկամուտ գործակցի արժեք: Այսինքն՝ 2.7 արժեքը ԱՄՆ պատմական միջինն է, որի մեծության հետ էլ անհրաժեշտ է համեմատվել:

Ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում կատարված վերլուծությունը՝ գտնում ենք, որ բնակչության՝ հասանելիության առավելագույն աստիճանից հեռանալը հետևանք է նրա, որ շուկան գերազանահատված է: Եթե որևէ մեկի պատկերացումները ապագա վարկային տոկոսադրույքների և կանխավճարների չափերի մասին տարբեր են, վերջինս կարող է ընտրել այլ գործակից, սակայն վերը բերված աղյուսակը ակնհայտորեն ցույց է տալիս, որ շեղումը շատ մեծ է: Նման իրավիճակում պոտենցիալ հիփոթեքային վարկառուները ստիպված են լինելու գնել կամ էժանագին բնակարաններ, կամ փոխառու դրամ հայթայթել այլ աղբյուրներից: Ցավալի է, բայց փաստ, Երևանում բնակվող շարքային ընտանիքը չի կարող իրեն թույլ տալ գնել բնակարան նույն քաղաքում: Այս փաստը հղի է այնպիսի սոցիալական հետևանքներով, ինչպիսիք են՝ ամուսնությունների կրճատում, ծնելիությունների անկում, ընտանիքների կազմալուծում: Այսպիսի առանցքային սոցիալական խնդիրների լուծումը կարելի է համարել երկրի տնտեսական աճի հիմնական, ինչու չէ նաև միակ հիմքը: Հուսանք, որ բնակարանային ապահովման և հասանելիության խնդիրները մշտապես գտնվում են կառավարության ուշադրության ներքո:

**ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Դրամավարկային քաղաքականությունն, այլ կերպ ասած՝ մոնետար քաղաքականությունը, պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության կարևոր բաղկացուցիչ մասն է, որի հիմնական նպատակն է, ազդելով տնտեսության մեջ փողի զանգվածի մեծության վրա, կարգավորել երկրում գների մակարդակը: Դրամավարկային քաղաքականությունը տնտեսապես զարգացած երկրներում տնտեսական իրավիճակի վրա ազդող այն ճկուն մեխանիզմն է, որը հավելում և լրացնում է ֆիսկալ քաղաքականությունը: Այն ակը, զբաղվածությունը, տնտեսական աճը, ազգային արժույթի փոխարժեքը և այլն իրականացվում են պետության կողմից լիազորված Կենտրոնական բանկի կողմից, որը, փոփոխելով փողի առաջարկի ծավալը, ազդում է մակրոտնտեսական վերը թվարկված հիմնական ցուցանիշների վրա: Պետության կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության հաջողությունը մեծապես կախված է նաև այն ազդեցությունների արդյունավետությունից, որը տվյալ պետությունն ունի մասնավոր հատվածի ընկերությունների գործունեության վրա, քանի որ շուկայական զարգացած տնտեսություններում նրանք են պետության տնտեսական քաղաքականության, այդ թվում՝ դրամավարկային քաղաքականության կրողները:

Դրամավարկային քաղաքականությունը, ըստ իրականացման մեթոդների, լինում է կոշտ կամ ճկուն, իսկ ըստ տնտեսության վրա թողած ազդեցության բնույթ՝ խթանող կամ զսպող: Կոշտ դրամավարկային քաղաքականությունն ուղղված է փողի որոշակի զանգվածի պահպանմանը՝ զսպելով դրա ընդլայնումը, իսկ ճկուն դրամավարկային քաղաքականության դեպքում կարգավորվում է տոկոսադրույքը՝ դրանով ազդելով տնտեսական մյուս կարևոր ցուցանիշների վրա: Խթանող դրամավարկային քաղաքականությունը, սովորաբար, իրականացվում է տնտեսության անկման փուլում և ուղղվում է տնտեսության ակտիվացմանը: Ընդհակառակը, զսպող դրամավարկային քաղաքականություն իրականացվում է տնտեսության ամենաակտիվ փուլում և նպատակ ունի զսպել գների մակարդակը: Կենտրոնական բանկի խթանիչ դրամավարկային քաղաքականության գործիքներն են՝ պարտադիր պահուստների չափի նվազեցումը, տոկոսադրույքի նվազեցումը և բաց շուկայական գործառնությունները՝ տվյալ դեպքում պետական արժեթղթերի գնումը: Չսպող դրամավարկային քաղաքականությունը ենթադրում է հակառակը՝ պարտադիր պահուստների նորմայի բարձրացում, տոկոսադրույքների իջեցում, բաց շուկայում պետական արժեթղթերի վաճառք Կենտրոնական բանկի կողմից: Փողի ոչ բավարար քանակը տնտեսության մեջ բերում է, մասնավորապես, տնտեսական գործունեություն իրականացնող ընկերությունների մրցունակության անկման, ինչպես նաև փոխադարձ դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների աճի:

Դրամավարկային քաղաքականությունը, համեմատած ֆիսկալ քաղաքականության հետ, ավելի ճկուն և արդյունավետ է, կապված այն բանի հետ, որ այստեղ քաղաքական ազդեցություններն ավելի քիչ են, որոշումների ընդունումն ավելի արագ և օպերատիվ է, իսկ ազդեցություններն ավելի արագ են իրենց արդյունքը տալիս: Բացասական կողմերից կարելի է նշել այն, որ դրամավարկային քաղաքականության համար որոշակի ժամանակ է պահանջվում, որպեսզի ազդի առևտրային բանկերի կողմից վարկերի տրամադրման ծավալների և ըստ այդմ փողի առաջարկի վրա:

Ազգային տնտեսության ներսում դրամավարկային քաղաքականության գործիքները հաջողությամբ գործել են, ինչը սակայն իրեն չի արդարացնում ժամանակակից տնտեսության գլոբալիզացիայի պայմաններում, երբ տվյալ երկրի տնտեսությունը մեծապես կախված է համաշխարհային տնտեսությունում առկա զարգացումներից: Վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, թե որքան խոցելի են ազգային տնտեսությունները: Սա հանգեցրեց նրան, որ պետությունները և միջազգային ֆինանսական կառույցները սկսեցին ակտիվորեն դրամավարկային քաղաքականության նոր մեթոդներ ու ուղղություններ մշակել: Հիմնական

խնդիրը, որ գոյություն ունի նաև այս պահին, ԱՄՆ կառավարության կողմից դուրսի մեծածավալ թողարկումներն են, ինչը փաստացի ամբողջությամբ ապահովված չէ իրական ակտիվներով: Այս մենաշնորհը ԱՄՆ-ը ձեռք է բերել դեռևս Բրետտոն-Վուդյան համաձայնագրի ստորագրման ժամանակաշրջանից, երբ ԱՄՆ դուրսին միջազգային արժույթի կարգավիճակ տրվեց: Միջազգային արժույթ հանդիսանալով՝ ԱՄՆ դուրսը պետք է ապահովված լինի ոչ միայն ամերիկյան, այլև համաշխարհային ապրանքային արժեքներով, ուստի երկարատև ժամանակ էր պետք հասկանալու համար, թե ինչ չափերի արժեզրկում է իրականում տեղի ունենում: Ավելին, երկրների կառավարություններին, խոշոր հաշվով, ԱՄՆ կառավարության նմանօրինակ վարքագիծը միայն ձեռնադր էր, քանի որ իրենք էլ, իրենց հերթին, ազգային արժույթների նորանոր թողարկումներ սկսեցին իրականացնել, ինչն ավելի հաճախ քողարկվում էր ԱՄՆ դուրսի նկատմամբ տվյալ երկրի արժույթի կայուն դիրքով կամ աննշան տատանումներով. չէ՞ որ դուրսն ինքն էր արժեզրկվում բարձր տեմպերով: Ինչպես արդեն հիշատակեցինք, ԱՄՆ կառավարության որդեգրած դրամավարկային քաղաքականությունը, հիմնականում ուղղված էր ֆինանսական շուկաների ազատականացմանը, բանկային և այլ ֆինանսական կառույցների ոչ խիստ վերահսկողությանը, վարկային, անշարժ գույքի և ածանցյալ արժեթղթերի շուկաների գերակտիվացմանը և ուռճացմանը, տնտեսության մեջ դուրսային զանգվածի հետևողական և բարձր տեմպերով աճին: Ավելին, վարկային ռեսուրսների հաշվին համախառն պահանջարկը խթանելը դարձել էր ԱՄՆ պետության կողմից որդեգրած քաղաքականությունը: Համաշխարհային մասշտաբով այլ երկրների ազգային արժույթների արժեզրկումը ևս հանգեցրեց նրան, որ զգալի մեծ չափերով արժեզրկվեց համաշխարհային փողային զանգվածը: Սրան ավելացնենք նաև ԱՄՆ հիփոթեքային շուկայի փլուզումը, որն իր հերթին բերեց ֆինանսական շուկաների կազմալուծմանը: Վերջինիս արդյունքում բանկերը, ունենալով իրացվելիության խնդիր, սկսեցին ուշացնել վճարումները, որն էլ, իր հերթին, խուճապ առաջացրեց ազգաբնակչության մեջ, և նրանք փողերը սկսեցին խնայել:

Ազգային դրամի զանգվածի չափը տնտեսության մեջ հետևանք է դրամավարկային այն գործիքների և մեթոդների, որը տվյալ երկրի Կենտրոնական բանկն իրականացնում է դրամավարկային քաղաքականության շրջանակում: Տնտեսության մեջ փող ներարկելու ամենատարածված մեթոդներից է Կենտրոնական բանկի կողմից վարկերի տրամադրումը առևտրային բանկերին: Վերջիններս, իրենց հերթին, վարկեր են տրամադրում տնտեսվարող սուբյեկտներին, ֆիզիկական անձանց և միմյանց: Բայց ցանկացած բանկ վարկ տրամադրելուց որոշակի ժամանակ անց պետք է հետ ստանա տրամադրված գումարը, դրան գումարված նաև տոկոսները: Փաստորեն խոշոր հաշվով բանկային համակարգը ավելի շատ փող է հետ ստանում, քան տրամադրում է: Սա բերում է տնտեսության մեջ պարտավորությունների մեծացման և փողի նկատմամբ նոր պահանջարկի: Արդյունքում տեղի են ունենում փողի նոր թողարկումներ, և վերը նշված շրջապտույտը սկսվում է նորից: Ակներև է, որ փողի զանգվածը տվյալ պահին պետության մեջ ունի որոշակի ֆիքսված քանակ, իսկ առևտրային բանկերի միջոցով փողի բազմապատկիչի գործարկումը միայն պարտավորություն է ավելացնում, այլ ոչ թե իրական փող: Դրա արդյունքում մեծանում է փողի նկատմամբ պահանջարկը, և անհրաժեշտություն է առաջանում այն տպագրել նորից ու նորից:

Ինչպես գիտենք, ժամանակակից փողը չունի իրական արժեք, ավելի ճիշտ՝ այդ արժեքը շատ չնչին է (թղթի, տպագրության, տեղափոխման ծախսեր և այլն): Նախկինում, երբ փողի դեր էին կատարում թանկարժեք մետաղները, շուկայական առաջարկի և պահանջարկի հիման վրա ձևավորվում էին դրանց շուկայական գները, ինչպես նաև արտադրության կամ առաջարկի համախառն ծավալները: Այդ թանկարժեք մետաղները կոնկրետ ապրանքներ էին, դրանց հիմքում ընկած էր հասարակական աշխատանք, ուստի, ինչպես մյուս ապրանքների դեպքում ևս, երբ դրանց նկատմամբ պահանջարկը մեծանում էր, գները աճում էին, խթանվում էր դրանց արտադրությունը: Վերջինիս արդյունքում մեծանում էր համախառն առաջարկը, և գները իջնում էին: Թանկարժեք մետաղները վաղուց դուրս են եկել շրջանառությունից, և նրանց փոխարինած թղթադրամները, ինչպես վերևում նշվեց, չունենալով իրական արժեք, չէին կարող շուկայական առաջարկի և պահանջարկի հարաբերակցության շնորհիվ օպտիմալ ծավալ ձևավորել: Դրանց տնտեսության մեջ առկա զանգվածը կարգա-

վորվում է պետության, հանձինս Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքակազմի միջոցով: Այսպիսով, ժամանակակից տնտեսության պայմաններում արդեն, ինչպես վերևում նշվեց, վարկերի տրամադրման արդյունքում փողի բազմապատկիչի շնորհիվ լրացուցիչ փողի պահանջարկ է զգացվում, քանի որ տրամադրված վարկերը, իրենց վրա հաշվարկված տոկոսներով հանդերձ, վաղ թե ուշ պետք է վճարվեն: Երբ փողի քանակը չի բավարարում համապատասխան վճարումներ իրականացնելու համար, սկսվում է վճարումների ուշացում, և բանկերը, զգալով վտանգ ու ապահովելու համար բավարար իրացվելիության մակարդակ, խուսափում են նոր վարկեր տրամադրելուց կամ առնվազն զգալի կրճատում են դրանց ծավալը, բարձրացնելով բանկային տոկոսադրույքը: Արդյունքում, տնտեսության իրական հատվածը գրկվում է ֆինանսավորման աղբյուրներից, առաջանում է տնտեսավարող ընկերությունների փոխադարձ պարտավորությունների աճ, կրճատվում են արտադրության ծավալները և աճում է գործազրկության մակարդակը: Սկսվում է տնտեսական անկման շրջանը: Այս իրավիճակում, բնականաբար, պետությունը երկու ելք ունի: Առաջին, փողի պահանջարկը բավարարել դրա նոր թողարկումներով և երկրորդ, փողի նոր թողարկումներ չիրականացնել և փորձել ոչ դրամական բնույթի միջոցառումներով մեղմել տնտեսության անկումը: Նշենք, որ առաջին դեպքում ևս, երբ պետությունն իրական ակտիվներով չապահովված փողային ներարկումներ է իրականացնում տնտեսության մեջ, ապա, դա վաղ թե ուշ հանգեցնում է փողի գնողունակության անկման, շուկայական գների բարձրացման, ինչի արդյունքում կրճատվում է համախառն պահանջարկը, ու տնտեսությունը նորից հայտնվում է անկման փուլում:

Համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի ժամանակակից պայմաններում ազգային տնտեսությունները մեծապես կախման մեջ են համաշխարհային տնտեսական զարգացումներից, միջազգային ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակից, հումքի միջազգային գների տատանումներից, միջազգային ֆինանսական կառույցների և առաջատար զարգացած երկրների կառավարությունների որոշեցրած ֆինանսական ու տնտեսական քաղաքականություններից: Վերջին ժամանակաշրջանում դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման վրա իրենց կարևոր ազդեցությունն ունեցան ֆինանսական շուկաների զարգացումը և դրանց ինտեգրացումը: Արդյունքում Կենտրոնական բանկերին զուգահեռ սկսեցին զործել ֆինանսական շուկաների ինքնակարգավորվող կառույցներ, որոնց վարած քաղաքականությունը անկախ էր Կենտրոնական բանկերի վարած դրամավարկային քաղաքականությունից, ինչպես օրինակ, դա կատարվում էր Ավստրալիայում, Մեծ Բրիտանիայում, Շվեդիայում, Ճապոնիայում: Ֆինանսական շուկաներում լայն տարածում գտած ֆինանսական զանազան ածանցյալ գործիքները, որոնք սկզբում ըստ իրենց նշանակության, ուղղված էին ֆինանսական գործարքների հետ կապված ռիսկերը նվազեցնելուն, սակայն, ժամանակի ընթացքում, ինչպես այժմ տեսնում ենք, հիմնականում սպեկուլյատիվ գործունեությանն էին ծառայում: Ավելին, բանկային համակարգը նույնպես ներքաշվեց ֆինանսական շուկայի այն հատվածի մեջ, որտեղ շրջանառվում էին հիմնականում ածանցյալ գործիքները: Դրա նպատակը իրենց ակտիվների ապահովագրումն էր շուկայական տարբեր ռիսկերից, ինչպես նաև սպեկուլյատիվ շահույթ ստանալը: Ժամանակի ընթացքում բանկերը իրենք արդեն սկսեցին թողարկել զանազան ֆինանսական գործիքներ, որոնք էլ հիմք հանդիսացան շուկայում նոր ածանցյալ արժեթղթերի թողարկման համար: Այդ արժեթղթերը լայն պահանջարկ գտան սկզբից ամերիկյան, իսկ հետագայում նաև միջազգային ֆինանսական շուկաներում և ունեին բարձր իրացվելիություն: Մասնավորապես, հնարավոր էր այնպիսի իրավիճակ, երբ առևտրային բանկը նոր վարկ տրամադրեր, որտեղ որպես գրավ հանդես գար նախկինում նույն կամ այլ բանկերի կողմից տրամադրված վարկերի հիման վրա թողարկված արժեթղթերի, օրինակ՝ հիփոթեքային պարտատոմսերի փաթեթ, ինչն էլ շատ հաճախ կրեց շրթայական բնույթ: Ցանկացած խնդրահարույց վարկի դեպքում, երբ վարկառուն վճարումներ չէր իրականացնում կամ շուկայական գնային տատանումների արդյունքում չէր ավելացնում վարկի ապահովման կամ, այլ կերպ ասած, գրավի գումարը, բանկը ստիպված էր լինում վաճառել այդ արժեթղթերը, ինչն իր բացասական ազդեցությունն էր ունենում ֆինանսական շուկայում դրանց գների և ներդրողների սպասումների վրա: Եթե նմանօրինակ դեպքերը լայն տարածում գտնեին, ապա ֆինանսական շուկայում խուճապը

անխուսափելի կլինեն: Վերջինիս արդյունքում այդ արժեքների գները կնվազեին մինչև դրանց ամենացածր մակարդակը, ինչը կբերեր նաև միջբանկային պարտավորությունների աճի, բանկերի կողմից նոր վարկերի տրամադրումը կդադարեր, և շատ բանկեր կհայտնվեին սնանկացման եզրին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ածանցյալ արժեքները հիմնականում թողարկվել էին անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրված հիպոթեքային վարկերի հիման վրա, ապա անշարժ գույքի շուկայի անկումը իր հերթին մեծապես պայմանավորեց այդ ածանցյալ գործիքների շուկայի փլուզումը: Արդեն 2007 թվականին, երբ սկիզբ էր առել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, և փլուզվել էր արհեստական կերպով գերակտիվացված ամերիկյան անշարժ գույքի շուկան, բանկերը և մյուս ֆինանսական հաստատությունները, իրացվելիության խնդիրը լուծելու նպատակով սկսեցին գրավ հանդիսացող արժեքների համատարած վաճառք իրականացնել: Սա էլ ավելի արագացրեց ֆինանսական շուկաների փլուզումը: Կանխիկ գումարի հայթայթումը դարձել էր իրոք դժվարին խնդիր: Նախորդ տարիներին «կվազիփող» հանդիսացող ածանցյալ արժեքները արդեն ոչ մի արժեք իրենցից չէին ներկայացնում և բոլորը ցանկանում էին ժամ առաջ ազատվել դրանցից: Բանկային հաստատությունները դադարեցրին վարկերի տրամադրումը թե՛ տնտեսության իրական հատվածին, թե՛ ազգաբնակչությանը և թե՛ միմյանց: Նրանք գերադասեցին խնայել կանխիկ միջոցները՝ իրացվելիության բավարար մակարդակ ապահովելու համար: Երկրների կենտրոնական բանկերը հայտնվեցին շատ բարդ իրավիճակում: Փաստորեն դրամավարկային քաղաքականության ավանդական գործիքակազմը բավարար չէր ֆինանսատնտեսական ճգնաժամին դիմագրավելու համար: Անհրաժեշտ էր շատ արագ միջոցներ ձեռնարկել ֆինանսական կառույցների իրացվելիությունն ապահովելու նպատակով: Երբ նախաճգնաժամյան տարիներին և, ըստ իրենց դերի, նրանք վերջին ատյանի վարկատուներ էին, ապա ճգնաժամի պայմաններում նրանք հանդես եկան արդեն նաև ֆինանսական կառույցների հովանավորների դերում:

Նախքան վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը գործում էր այն մոտեցումը, որ ածանցյալ արժեքները ֆինանսական շուկայի ինքնակարգավորիչներ են, որոնք օգնում են ապահովագրվել ֆինանսական ակտիվների արժեքների հնարավոր կորուստներից, ինչպես նաև թույլ են տալիս դիվերսիֆիկացնել ռիսկերը: Շուկայական մյուս կարևոր ինքնակարգավորիչը համարվում էր փողի բազմապատկիչը: Վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ապացույցեց, որ այդ երկու ինքնակարգավորման մեխանիզմներն էլ իրենց չեն արդարացնում: Ավելին, ածանցյալ արժեքների չափազանց լայն տարածումը և ակտիվների արժեքթափորումը, ի վերջո, բերեցին գլոբալ համակարգային ճգնաժամի, իսկ փողի բազմապատկիչը՝ փողի մեծ չափերի արժեզրկման: Այնուհայտ է, թե ինչ բացասական ազդեցություն կարող են ունենալ ֆոնդային շուկայի սպեկուլյատիվ զարգացումներն ամբողջ ֆինանսական շուկայի վրա: Ակտիվների արժեքթափորումը, ի վերջո, պարունակում է համակարգային ճգնաժամի մեծ ռիսկեր, ինչին և ականատես եղանք: Այս իրավիճակում, թերևս, բանկային և ֆոնդային շուկաների տարանջատումը պարզապես անհրաժեշտ քայլ է: Կարծում են, մասնավորապես, խիստ սահմանափակումներ է անհրաժեշտ մտցնել բանկերի կողմից արժեքներով գործարքների վրա՝ ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի ամենակարևոր դասերից մեկն էլ այն էր, որ ի հայտ եկավ շուկաների ինքնակարգավորման անկատարությունը, շուկայական բազմաթիվ գործընթացների ժամանակի ընթացքում ոչ հաստատուն լինելը, ինչպես նաև շուկայական բազմաթիվ ցուցանիշների՝ միմյանց նկատմամբ ոչ գծային կապը: Սա ինքնին ենթադրում է, որ ֆինանսական շուկայում անկանխատեսելի կտրուկ և հանկարծակի տատանումները ժամանակ առ ժամանակ կարող են խաթարել շուկայի կայունությունը: Վերջինս շուկայում ընթացող գործընթացների փոխադարձ հավասարակշռությունն է, որն ապահովելու համար պետությունը պետք է փոխազդի միաժամանակ մի քանի շուկայական գործոնների վրա և ապահովի դրանց վերահսկողությունը ժամանակի ընթացքում: Ինչպես վերևում նշվեց, տնտեսական շատ ցուցանիշներ իրար նկատմամբ ոչ գծային կապի, երբեմն նաև հակադարձ համեմատական կապի մեջ են: Օրինակ, Կենտրոնական բանկի կողմից գնաճը վերահսկելու համար բնականաբար վարվում է «թանկ փողի» քաղաքականություն, ինչի դեպքում

տնտեսության իրական հատվածը զրկվում է ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորություններից, և բիզնեսի ընդլայնումը դառնում է ոչ ձեռնտու ու շատ դեպքերում, դժվարամատչելի: Արդյունքում տնտեսական աճը դանդաղում է, և տեղի է ունենում կապիտալի արտահոսք դեպի ավելի բարենպաստ տնտեսական իրավիճակ ունեցող երկրներ: Սա, իր հերթին, բերում է արտադրության ծավալների և աշխատուժի զբաղվածության նվազմանը, բնակչության կենսամակարդակի անկմանը: Երկրում բանկային տոկոսադրույքների աճի պայմաններում, բնականաբար, ձեռնարկություններին ավելի ձեռնտու կլինի ֆինանսական միջոցներ ներգրավել արտերկրում: Սա կազդի ինչպես կորպորատիվ արտաքին պարտքի աճի, այնպես էլ եկամուտներ-խնայողություններ-ներդրումներ գործընթացի խաթարման և ընդհանրապես մակրոտնտեսական անհավասարակշռության վրա:

Բազմաթիվ երկրների Կենտրոնական բանկեր, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը, որպես հետազոտամասյին դրամավարկային քաղաքականության առանցքային ուղղություն, որդեգրել են գնաճի թիրախավորման մեթոդը, որն, ըստ իր նշանակության, պետք է բերի գների կայունության, տնտեսական աճի բարձր տեմպերի, բնակչության կենսամակարդակի բարձրացման: Հավելեմ նաև, որ գնաճի թիրախավորմանը զուգահեռ ազգային արժույթի փոխարժեքը ձևավորվում է զուտ շուկայական մեխանիզմներով՝ առանց Կենտրոնական բանկի լուրջ միջամտությունների: Մեկուսացված փակ տնտեսության պայմաններում հնարավոր է, որ գնաճի թիրախավորումը արդյունավետ կերպով նպաստի տնտեսության աճին: Սակայն միայն այն հանգամանքը, որ ժամանակակից երկրների տնտեսությունները գործում են միջազգային ինտեգրացիայի, գլոբալիզացիայի և համաշխարհային նոր տնտեսական զարգացումների դարաշրջանում, ապա ներկա պահին, պետության գլխավոր խնդիրը գնաճի զսպումը չէ, որ պետք է հանդես գա: Ավելին, Հայաստանում, որը ներկրող երկիր է, շատ ապրանքատեսակների գնաճը կրում է «ներմուծվող» բնույթ, կապված արտասահմանյան շուկաներում էներգակիրների և հիմնական սպառման ապրանքատեսակների գների բարձրացման հետ: Սա, իր հերթին, բերում է մնացած բոլոր ապրանքատեսակների գների աճի: Այս գնաճը, բնականաբար, ոչ մի երկրի կենտրոնական բանկ չի կարող զսպել, քանի որ դա մոնետարիստական կարգավորման դաշտից դուրս է: Պետությունը պարզապես կարող է այն մեղմել ֆիսկալ քաղաքականության միջոցով, որը ենթադրում է ծախսերի մեծացում՝ եկամուտների ինդեքսացիայի, տարբեր տեսակի դոտացիաների և պետական այլ առաջնահերթ ծրագրեր կյանքի կոչելու միջոցով: Վերը նշված խնդիրը կարող է կարգավորվել միայն միջազգային տնտեսական սերտ համագործակցության շրջանակներում՝ միջազգային տնտեսական կառույցների և զարգացած խոշոր երկրների կառավարությունների փոխհամաձայնեցված ծրագրերի շնորհիվ:

Բայց արդյո՞ք փողի արժեզրկումը կամ գնաճը միայն բացասական ազդեցություն ունեն տնտեսության վրա: Տնտեսական ժամանակակից շատ հետազոտություններ ցույց են տալիս, որ փողի արժեզրկման մակարդակի բավական ցածր լինելը կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ տնտեսության վրա, առավել ևս տնտեսական անկման շրջանից հետո տնտեսական կյանքի աշխուժացման փուլում: Այսպես, որոշ դեպքերում 10-15% գնաճի պայմաններում շատ երկրներ ցուցադրել են կայուն տնտեսական աճ:

Կարծում եմ, որ ժամանակակից տնտեսական զարգացումների պարագայում անհրաժեշտ է վերանայել Կենտրոնական բանկի հիմնական խնդիրները և առաջնությունը տալ ոչ թե գների կայունության ապահովմանը, այլ տնտեսական աճի ապահովմանը և տնտեսության իրական հատվածում ներդրումների խթանմանը: Մեծապես կարևորում եմ նաև, որ այդ նպատակով վերանայվեն դրամավարկային քաղաքականության ուղղությունները, գործիքները և մեթոդները: Ինչպես վերևում նշվեց, դրամավարկային քաղաքականության առանցքում, որպես գերակա նպատակ, պետք է ընկած լինի տնտեսական աճի ապահովումը, իսկ այդ գլխավոր նպատակին հասնելու համար իրականացվող քաղաքականության շրջանակներում անհրաժեշտ է առանձնացնել ազդեցության կոնկրետ ոլորտներ, որոշել դրանց համար կոնկրետ նպատակներ, սահմանել այդ նպատակները բնութագրող քանակական և որակական ցուցանիշներ: Այս ամենից հետո միայն կարելի է որոշել դրամավարկային քաղաքականության գործիքները՝ ըստ նշված ոլորտների: Ավելի ընդլայնված գործիքակազմի ու համապատասխան ոլորտներում ցուցանիշների վերահսկողության ճկուն մեխանիզմներ սահմա-

նելու հիման վրա կապահովվ են շուկայում ընթացող բոլոր գործընթացների կայունությունը և փոխադարձ հավասարակշռվածությունը:

Առևտրային բանկերի կարևոր առանձնահատկությունն այն է, որ տնտեսական աճի պայմաններում նրանք մեծացնում են փողի առաջարկը՝ բերելով փողի մեծ չափերի արժեզրկման, իսկ, ընդհակառակը, տնտեսական անկման փուլում, երբ տնտեսությունը փողի մեծ պահանջարկ ունի, կրճատում և նույնիսկ դադարեցնում են փողի առաջարկը՝ էլ ավելի խորացնելով տնտեսական անկումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում են, մեծապես կարևորվում է Կենտրոնական բանկի դերը բանկերի վարկային քաղաքականությունը ուղղորդելու առումով: Ներկայումս խիստ կարևորվում են բանկային տոկոսադրույքների հստակ տարբերակումը՝ ըստ ոլորտների, և դրանց համապատասխան չափերի սահմանումը: Ամենակարևոր քայլերից մեկը, կարծում են, տնտեսության իրական հատվածում ներդրումների խթանումն է, ինչին կարելի է հասնել այդ ոլորտի համար մատչելի տոկոսադրույքով վարկեր ապահովելով: Կենտրոնական բանկը այս խնդիրը կարող է լուծել երկու եղանակով: Առաջին դեպքում նա կարող է հանդես գալ առևտրային բանկերին տնտեսության իրական հատվածի ֆինանսավորմանն ուղղված սուբսիդավորված նպատակային վարկերի տրամադրմամբ, երկրորդ դեպքում՝ Կենտրոնական բանկը այդ վարկերի տրամադրումը կարող է իրականացնել անձամբ, ինչպես դա կատարվում է, օրինակ, Ճապոնիայում: Ի դեպ, այդ քաղաքականության շնորհիվ էր նաև, որ այդ երկիրը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ունենալով քայքայված տնտեսություն, սահմանափակ բնական պաշարներ և հսկայական պարտքեր, կարճ ժամանակահատվածում դարձավ աշխարհի զարգացած պետություններից մեկը: Երկրորդ դեպքում, Կենտրոնական բանկը կառավարության հետ համատեղ կարող է մրցութային կարգով ընտրել գործարար միջավայրից ստացած լավագույն բիզնես առաջարկները և կառավարության իսկ տրամադրած երաշխիքների հիման վրա վարկավորել համապատասխան արտադրությունները: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ սա, կարծում են, անհրաժեշտ քայլ է, որը կբերի արտադրության և զբաղվածության աճի, արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի մրցողունակության մեծացման, արտահանման խթանման ու կայուն տնտեսական աճի:

ՎԱՅԱԳՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տ. գ. թ.*

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԼՃԱԿՆԵՐԻ ՑԱՃՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ Էկոնոմիկայի Էկոլոգացման և կայուն զարգացման հայեցակարգի ձևավորման սկզբունքային հարցը նման հայեցակարգի մեխանիզմների ընտրությունն է: Ընդհանուր գծերով համաշխարհային փորձը խոսում է հնարավոր տնտեսական նպատակների, այդ թվում՝ Էկոլոգոտնտեսական, իրականացման երեք մեխանիզմների մասին: Էկոլոգիական քաղաքականության մասին խոսելիս սովորաբար ընդգծվում են երեք մոտեցումներ.

- Առաջին՝ ուղղակի կարգավորում, որը կապված է պետության ներգործության հետ (որը երբեմն ձևակերպվում է «հրամայիք և վերահսկիք»): Մրանք նորմատիվ-իրավական, վարչավերահսկիչ, ուղղակի կանոնակարգով և այլ կարգավորման ձևեր են,
- Երկրորդ՝ տնտեսական խթանում, կապված շուկայական մեխանիզմների հետ,
- Երրորդ՝ խառը մեխանիզմներ, որոնք զուգակցում են առաջին երկու մոտեցումները:

Նախկին ԽՍՀՄ-ի և Արևելյան Եվրոպայի երկրների փորձը ցույց տվեց կոշտ, կենտրոնացած պլանավորման և կառավարման անարդյունավետությունը Էկոլոգիապես հավասարակշռված տնտեսական զարգացման նպատակների համար: Բնությունը շահագործող ճյուղերի համար նշանակալից սուբսիդիաները, բնական ռեսուրսների գնի բացակայությունը կամ լավագույն գները, որոնք հանգեցրին դրանց գերշահագործման, հանրային սեփական-

նությունը ամեն ինչի համար և անհրաժեշտ վերահսկողության բացակայությունը միջավայրի պահպանության և ռեսուրսների օգտագործման նկատմամբ և շատ այլ հանգամանքներ հանգեցրին տեխնոգեն տիպի տնտեսական զարգացման, բազմաթիվ ճգնաժամային էկոլոգիական երևույթների:

ԽՍՀՄ-ում բազմաթիվ տարածաշրջանային և ճյուղային տնտեսական ծրագրեր, որոնք մշակվել և իրականացվել էին առանց էկոլոգիական գործոնի հաշվառման, երկարաժամկետ հեռանկարում հանգեցրին ծայրահեղ ծանր էկոլոգիական հետևանքների, որոնք ուղեկցվեցին հսկայական տնտեսական և սոցիալական վնասներով: Այստեղ կարելի է հիշել այնպիսի ծավալուն և բնություն խախտող ծրագրերի մասին, ինչպիսիք էին Վոլգայի վրա հիդրոէլեկտրակայանների կասկադի կառուցումը, խամ ու խոպան հողերի յուրացումը Սիբիրում և Ղազախստանում, Արալյան տարածաշրջանի անապատային հողերի ոռոգումը և այլն: 12-20 տարի անց ծագեցին էկոլոգիական խնդիրներ, որոնք չարիք դարձրին ենթադրվող տնտեսական և սոցիալական էֆեկտները:

Սակայն պետք չէ պատրանք ստեղծել, թե էկոլոգիական հիմնախնդիրները կարելի է լուծել միայն շուկայական մեխանիզմների շնորհիվ: Փորձը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պահպանության նպատակով անհրաժեշտություն է կայուն զարգացման հայեցակարգի մշակումը:

Շուկայի կարևոր որակական հատկությունն է գնային ազդանշանների շնորհիվ որոշել տարբեր ռեսուրսների լավագույն օգտագործումը՝ հաշվի առնելով դրանց անբավարարությունը: Շրջակա միջավայրի դեգրադացումը, բնական ռեսուրսներից աղքատացումը, չափից ավելի աղտոտումը ապացուցում են շուկայի թույլ կողմերը: «Բնության» շուկաներում ձևավորված գները հաճախ խեղաթյուրված պատկերացում են տալիս բնական բարիքների և ծառայությունների իրական արժեքի մասին, չեն արտացոլում էկոլոգիական ռեսուրսների իրական, հասարակայնորեն անհրաժեշտ ծախսերը, էկոլոգիական ռեսուրսների օգտագործման օգուտները: Արդյունքում ձևավորվում է ռեսուրսների պակասորդայնության (անբավարարության), պահանջարկի և առաջարկի մեծության ոչ համարժեք գնահատական, որն իջեցված խթաններ է տալիս բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության համար:

Ընդհանրացնելով վերոհիշյալը՝ կարելի է նշել, որ էկոլոգիական ոլորտում «շուկայի ձախողման» հիմնական պատճառներն են.

- էքստերնալները (արտաքին էֆեկտներ),
- բնական բարիքների գների բացակայությունը կամ ցածր լինելը և շուկաների բացակայությունը,
- հանրային բարիքները,
- սեփականության իրավունքը,
- անորոշությունը և անհեռատեսությունը:

Հայեցակարգային առումով շրջակա միջավայրի պահպանության առումով շուկայի ձախողումը առաջին հերթին կապված է էքստերնալների, շրջակա միջավայրի դեգրադացման՝ հասարակության սոցիալական ծախսերի, բնական բարիքների մատչելիության ազատ հասանելիության, դրանց իջեցված գների հետ և այլն:

Շուկայի համար էական խնդիրներ են անորոշությունը և անհեռատեսությունը: Անորոշությունն առաջին հերթին և մեծապես պայմանավորված է էկոլոգիական համակարգերի հետ կապված օրենքների մասին անբավարար գիտելիքներով, որը հանգեցնում է դժվարությամբ կանխատեսվող՝ շուկայական որոշումների հեռահար հետևանքների անտեսման: Հիմնախնդիր է դառնում շուկայի «կարճատեսությունը», արագ արդյունքներ, շահույթ ստանալու նրա կողմնորոշումը՝ լիարժեք հաշվի չառնելով երկարաժամկետ վնասներն ու օգուտները: Դրա մասին պատկերավոր արտահայտվել է Ֆ. Էնգելսը. «Չոգևորվեք, սակայն, չափից ավելի, բնության դեմ տարած մեր հաղթանակներով: Այդ հաղթանակներից յուրաքանչյուրը, ճիշտ է, առաջին հերթին ունի այն հետևանքները, ինչը մենք ակնկալում էինք, սակայն երկրորդ և երրորդ հերթին բոլորովին այլ են չկանխատեսված հետևանքները, որոնք շատ հաճախ ոչնչացնում են առաջինների նշանակությունը»:

Շուկայի՝ միջավայրի պահպանության ձախողումներն ընդգծում են պետության բնապահպանական քաղաքականության անհրաժեշտությունը, որն ուղղված է վերացնելու նշված շուկայական թերացումները: Մակայն նույնիսկ ամենախիմաստուն պետական քաղաքականության իրականացումը չի երաշխավորում անարդյունավետ էկոլոգիական որոշումներից: Այդ մասին է վկայում պետական կարգավորման համաշխարհային պրակտիկան, այդ թվում՝ նաև շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Նման քաղաքականության օրինակներից կարելի է նշել.

- հարկային համակարգ (գյուղատնտեսության մեջ և էներգետիկայում էկոլոգակայունացնող գործունեության խթանում),
- սուբսիդիաների տրամադրում (պեստիցիդներ, էներգիա, ոռոգման ջուր և այլն),
- գների վերահսկում,
- էկոլոգակայունացնող արտաքին առևտրային քաղաքականություն,
- սեփականության իրավունքի ոչ հետևողական ռեֆորմ,
- կառավարման և մոնիտորինգի թերությունները շրջակա միջավայրի առնչությամբ:

Պետության միջամտության արդյունքում բացասական էկոլոգիական հետևանքների տիպիկ օրինակներ են սուբսիդիաները: Համաշխարհային Բանկի տվյալներով, անցյալ դարի 80-ական թվականներին աշխարհում էներգետիկ սուբսիդավորման նպատակով տարեկան ծախսված ավելի քան 250 մլրդ դոլարի մեծ մասը (շուրջ 180 մլրդ դոլար) բաժին էր ընկնում ՄՍՀՄ-ին և Արևելյան Եվրոպայի երկրներին: Ըստ գնահատումների մթնոլորտի աղտոտման կեսից ավելին այդ երկրներում պայմանավորված է գների խեղաթյուրմամբ: Սուբսիդիաների վերացումը խոշոր արդյունավետության բարձրացում կլիներ և կավելացներ բյուջետային մուտքերը: Դա միաժամանակ կտրուկ կկրճատեր տեղական մթնոլորտային աղտոտումները, և մի շարք երկրներում ածխածնի արտանետումը կկրճատվեր 20, իսկ աշխարհում՝ 7 տոկոսով:

Չնայած պետական միջամտության թերություններին՝ պետության դերը շրջակա միջավայրի պահպանության գործում մեծ է նաև այժմ և մեծ կլինի հետագայում: Մասնավորապես պետությունը ուղղակի կամ անուղղակի կարգավորմամբ պետք է հասնի արտադրության շուկայական օպտիմալ կառուցվածքի և մակարդակի (առանց հաշվի առնելու էքստերնալները), արտադրանքի թողարկման սոցիալական օպտիմալ մակարդակի՝ իրականացնելով հասարակության շահերը:

Այստեղ շրջակա միջավայրի պահպանության գործում պետությունն էական դեր ունի տարբեր տեսակի նորմատիվների և ստանդարտների սահմանման մեջ, հատկապես բնության և մարդու առողջության համար առանձնապես վտանգավոր դեպքերի համար: Պետությանն է պատկանում առաջատար դերը՝ իրականացնելու էկոլոգիական հիմնախնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ շուկայի պայմաններում էկոնոմիկայի կառուցվածքային վերափոխման գործում: Այդ մասին է վկայում զարգացած երկրների փորձը վերջին քսան տարում: Պետության դերի թերագնահատումը մակրոտնտեսական կարգավորման գործում՝ շուկային անցման կամ հենց շուկայի պայմաններում կարող է բերել բացասական էկոլոգիական հետևանքների:

Պետական քաղաքականության և շուկայի պայմաններում անհաջողության հետ մեկտեղ ինստիտուցիոնալ անարդյունավետությունը ևս կարող է էկոլոգիական անկայունացման պատճառ հանդիսանալ: Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականատերերի իրավունքի անորոշությունը (այդ թվում՝ մասնավոր սեփականության), սեփականության իրավունքի ոչ հստակ ձևակերպումը կենտրոնական և տարածաշրջանային իշխանությունների միջև բերում են ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման, դրանց չափից դուրս մեծ չափով շահագործման:

Խնդրի օպտիմալ լուծման որոնումները պետական և շուկայական կառուցվածքների միջոցով լուծելու ուղղությամբ տարվում են դեռևս անցյալ դարի 60-70-ական թթ., երբ էկոլոգիական հիմնախնդիրները կտրուկ սրվեցին: Շուկայական տնտեսություն ունեցող երկրները այդ հիմնախնդիրին արձագանքեցին՝ ստեղծելով շրջակա միջավայրի պահպանության կառավարման կենտրոնացած վարչական մարմիններ, ինչպես նաև ձեռնարկելով պատժամիջոցներ: Ընդունված օրենքների կարևորագույն սկզբունքը շրջակա միջավայրի գծով դարձավ «աղտոտողը վճարում է» սկզբունքը, որը մտցվեց Տնտեսական համագործակցու-

թյան և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից 1972 թվին: Մտցվեց բնապահպան գործունեության անհատույց պետական սուբսիդավորում: Այդ ժամանակաշրջանում տնտեսական կարգավորմանը, բնության պահպանության խրախուսմանը փոքր ուշադրություն էր դարձվում:

Հետագայում 80-ական թթ. նշանավորվեցին տնտեսական լծակների լայնորեն օգտագործման փորձերով՝ խրախուսելու բնապահպան գործունեությունը շուկայական տնտեսության պայմաններում: Ներկայումս աշխարհում հաշվվում են ավելի քան 85 նման տնտեսական գործիքներ: Շրջակա միջավայրի պահպանման գործում զուգակցվել են վարչական և շուկայական մեխանիզմները: Անգամ այս պայմաններում օպտիմալ էկոլոգատնտեսագիտական կարգավորիչների որոնումը շարունակվում է: Ուստի այժմ ճիշտ կլինի խոսել միայն բնության և հասարակության փոխհարաբերությունների նոր տնտեսական մեխանիզմի ստեղծման սկզբունքների և մոտեցումների մասին:

«Պետական» և շուկայական մոտեցումներն ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Սակայն համաշխարհային փորձը ցույց է տալիս միայն դրանցից մեկի «մաքուր» օգտագործման անարդյունավետությունը: Ըստ երևույթին, ապագան դրանց խելամիտ գուգակցումն է, որը կհավասարակշռի այս երկու մոտեցումները, և ընտրությունը դրանց միջև կախված կլինի կոնկրետ իրավիճակից: Սակայն նման լիարժեք, հաջողված մոդել առայժմ աշխարհում չկա: Հայաստանի համար նման մոդելը պետք է կարողանա լիովին հաշվի առնել անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները և տնտեսության ներկա վիճակը:

Էկոնոմիկայի էկոլոգացման՝ վերը թվարկված ուղղությունների իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան իրավական և տնտեսական մեխանիզմներ, օրենսդրական դաշտ: Ձևավորված շուկայական էկոնոմիկայի պայմաններում Հայաստանում ունեցած տնտեսաիրավական մեխանիզմները լիարժեք հնարավորություն չեն տալիս արդյունավետ և անվնաս պահել շրջակա միջավայրը: Տնտեսության վերակառուցման ժամանակակից ուղղությունները շուկայական տնտեսության անցման պայմաններում նույնպես անբավարար են հաշվի առնում տնտեսության վարման էկոլոգիական կողմերը, որը տարբեր կերպ է մեկնաբանվում: Մյուս կողմից միայն էկոլոգատնտեսական հետևանքների հաշվառումով և տնտեսական հարաբերությունների ձևերը կարող են հասարակության համար վնասաբեր լինել ամբողջությամբ առանց հուսալի բնապահպանական կարգավորիչների:

Ասվածից չի հետևում, որ պետք է դանդաղեցնել անցումը տնտեսավարման նոր ձևերի: Հին համակարգը տնտեսությունը կանգնեցրել է էկոլոգիական կործանման եզրին: Սակայն այն նորը, որը պետք է ստեղծվի, պետք է լինի կշռադատված էկոլոգիական կշեռքով, ցանկացած վերափոխում էկոնոմիկայում պետք է իրականացվի՝ սկսելով կոշտ էկոլոգիական պաշտպանությունից:

Անցումը շուկային պետք է ենթադրի էկոլոգիական կոշտ շրջանակներ զարգացման բոլոր հնարավոր տարբերակների համար: Բնական միջավայրի բոլոր հնարավոր խախտումները, վերջին հաշվով, կքանդեն նաև և հենց էկոնոմիկան ու շուկան: Այսպիսով, անհրաժեշտ են էկոլոգատնտեսական անցման հայեցակարգ և կայուն զարգացման ձևավորման հնարավոր ուղղությունների մոդելավորում:

Ընդունված բոլոր տնտեսական լուծումները պետք է ունենան բարձրագույն էկոլոգիական հուսալիություն և անվտանգություն: Ակնհայտ է, որ մրցակցության, փողի զանգվածային արժեզրկման, ձեռնարկության սրվող ֆինանսական իրավիճակի (անկախ տնտեսության և սեփականության ձևից) գոյության համար պայքարի առաջին զոհերից մեկը դառնում է բնությունը: Ձեռնարկությունները ձգտում են տնտեսել բնապահպան միջոցառումներից էկոլոգիական սարքավորումներ ձեռքբերելիս, քանի որ դրանք չեն ավելացնում արտադրանքի թողարկումը: Թաքցվում են վնասակար նյութերի արտանետումները, թափոնների թաղումը, որպեսզի խուսափեն դրանց համար վճարելուց, տուգանքներից և այլն:

Հատկապես պետք է նշել էկոլոգիական անվտանգության աճող նշանակությունը, որն այժմ գնալով ավելի մեծ դեր է խաղում ինչպես երկրի էկոնոմիկայում, այնպես էլ քաղաքականության մեջ: Էկոլոգիական անվտանգության տակ հասկացվում է բնակչության առողջապահության պահպանման և երկարատև, կայուն սոցիալ-տնտեսական խնդիրներին համարժեք էկոլոգիական պայմանների ապահովումը:

ГОСУДАРСТВЕННЫЕ ФИНАНСЫ В СИСТЕМЕ РЕГУЛИРОВАНИЯ СОЦИАЛЬНЫХ ПРОБЛЕМ В РА

Финансовую политику государства можно характеризовать в соответствии с основными целями, к которым относятся следующие: 1) повышение объема и эффективности использования финансовых ресурсов. Отказ от этого принципа может привести к распылению средств, к сокращению источников удовлетворения потребностей общества, 2) оздоровление и структурная перестройка экономики, 3) достижение более высокого уровня жизни населения на основе развития отраслей производства. Социальная направленность финансовой стратегии проявляется не только в изыскании возможностей увеличения финансовых ресурсов, направляемых на повышение благосостояния народа, но и в новом подходе к главной цели экономической политики. Уровень жизни фактически выступает величиной, определяющей развитие производства, направление и структуру использования финансовых ресурсов. Можно выделить также и другие цели проведения финансовой политики – снижение темпов инфляции, сглаживание экономических циклов (как инструмента борьбы со спадом экономики), которые также отражаются на социальной ситуации страны.

Эффективность процесса финансового регулирования экономики и социальной сферы зависит от способности государственных структур комплексно осуществлять следующие мероприятия: систематически совершенствовать формы организации финансовых отношений, в целях усиления их регулирующего воздействия на воспроизводство; своевременно аккумулировать денежные средства, необходимые для удовлетворения совокупных воспроизводственных потребностей; определять направления наиболее рационального расходования финансовых средств и оценивать социально-экономическую эффективность их освоения, выявлять причины и принимать меры для устранения отклонений фактически складывающихся пропорций формирования и использования средств общегосударственных денежных фондов от требуемых для нормального развития социально-экономических процессов, проводить действенный контроль за ходом финансового перераспределения стоимости.

Специфика развития Армении состоит в том, что ее экономику можно охарактеризовать как трансфертную. Действительно, по расчетам экономистов, объем частных трансфертов в республике приближается к 1 млрд. долларов США. Конечно, такой объем поступления трансфертов позволяет повышать покупательный спрос населения до определенного уровня. Однако существует тенденция постепенного ограничения указанных поступлений. Мировой финансово-экономический кризис также отрицательно повлиял на объемы поступлений трансфертов в республику и тем самым усугубил неблагоприятную социально-экономическую ситуацию в стране.

Что касается вопроса государственного регулирования социальных задач, то нынешняя социально-экономическая ситуация требует ее активизации. Анализ статистических данных показывает, что в последние годы в республике, несмотря на некоторый рост среднемесячной заработной платы и социальных платежей, уровень жизни людей не только не повысился, а, наоборот, снизился, учитывая инфляционные процессы, повышение платы за коммунальные услуги, уровень безработицы. Так, по сравнению с прошлым годом, в 2011 году индекс потребительских цен составил 107,7%, среднемесячная заработная плата – 105,9%. Согласно результатам социологического исследования, проведенного Институтом политических и социологических советов (опрос проводился в сентябре 2011 года на территории Армении среди 1618 человек), 38,2% опрошенных считают, что социальная ситуация в республике за год ухудшилась и только 13,1% видят перемены в лучшую сторону. Следовательно, неотложной проблемой является социальная защита населения, и в этом

отношении важную роль может сыграть разработка концепции управления социальным развитием Армении. При наличии отдельных программ, направленных на улучшение социального положения людей, отсутствует четкая концепция, раскрывающая общие цели социальной политики в ближайшей перспективе с обоснованием необходимых функций для ее реального осуществления. Она должна включать систему государственного пенсионного обеспечения, социальной поддержки малоимущих слоев населения, защиту семьи и др. В этой связи следует внести изменения в действующие механизмы финансирования социальных расходов, отказавшись от остаточного принципа финансирования. Увязка уровня социальной защиты населения с состоянием государственных финансов приводит к тому, что размеры многих социальных пособий не соответствуют прожиточному минимуму. Поэтому серьезной проблемой является совершенствование системы материальной помощи малоимущим семьям. Практика показывает, что социальные трансферты часто получают не самые нуждающиеся группы населения, а часть малоимущих семей лишена доступа к государственной поддержке. В целях оптимизации социальной политики представляется целесообразным переход от категорийного к адресному принципу оказания социальной поддержки малоимущих домашних хозяйств, что позволит организовать предоставление средств наиболее нуждающимся. Кроме того, учитывая изменения в структуре расходования заработной платы - повышение удельного веса квартирной платы и других коммунальных услуг, появление пенсионных отчислений и медицинского страхования – размеры заработной платы должны существенно повыситься. В целом основной установкой при разработке долгосрочной государственной программы борьбы с бедностью должно стать положение о том, что чистая заработная плата низкооплачиваемых работников и минимальный уровень социальных выплат уже в ближайшей перспективе должны максимально приближаться к рациональному прожиточному минимуму. а это требует значительного увеличения финансовых ресурсов государства и общества в целом.

Условием роста финансовых ресурсов государства, необходимых для решения ряда социальных задач, является создание определенных предпосылок для экономического развития республики. Отрицательное воздействие на социальную ситуацию в стране оказал и мировой финансово-экономический кризис, последствия которого все еще не преодолены. При этом в условиях кризиса задача социальной защиты населения еще более обостряется, учитывая необходимость проведения определенных мер по поддержанию внутреннего спроса. Указанные проблемы разрешимы в рамках общегосударственных мер, включая борьбу с инфляцией, безработицей, монополизацией экономики и др. При этом ряд мероприятий связан с социальной политикой государства, опирающейся на общегосударственные финансовые ресурсы.

В решении указанных проблем важнейшая роль принадлежит усилению функций государственного регулирования социальных задач за счет бюджетных средств страны. Основными целями при этом выступают: во-первых, направленность налоговой политики на сглаживание социального неравенства, соблюдение принципа социальной справедливости, во-вторых, совершенствование структуры бюджетных расходов с целью ее большей социальной направленности и направленности на увеличение капитальных затрат, связанных с развитием социальной инфраструктуры.

В экономической литературе, при рассмотрении макроэкономических показателей социальной направленности налоговых систем, различают страны: а) с сильной социальной ориентацией государственного регулирования экономики, б) с незначительной и средней социальной ориентацией государственного регулирования экономики. Сопоставление уровня налоговой нагрузки на экономику с уровнем социальных расходов государства показало, что первая группа стран (развитые страны), имея достаточно высокий уровень налоговой нагрузки на экономику (40% - 50% от ВВП), одновременно предоставляют больший объем социальных благ (до 70% налоговых доходов возвращается обратно обществу). В указанных странах, в структуре показателя уровня социальных расходов государства, велика доля расходов на социальную защиту населения (41,4%-46,7% от общих расходов бюджета), тогда

как в России этот показатель составляет только 26,5%¹. В Армении в 2010г. налоговая нагрузка на экономику составляла 20,4% ВВП, а уровень социальных расходов государства составил 41,8% (показатель рассчитан как отношение расходов на здравоохранение, образование и социальную защиту населения к общим расходам бюджета страны). В то же время приведенные показатели расходов Государственного бюджета на здравоохранение, образование, социальные пособия и пенсии по отношению к ВВП в республике составили 11,4% (соответственно 7%, 1,6% и 2, 8%)². Анализ приведенных данных свидетельствует о том, что несмотря на достаточный уровень законодательно установленной налоговой нагрузки на отдельных налогоплательщиков и по различным видам налогов, объем налоговых поступлений в бюджет явно не отвечает требованиям социально-экономического развития страны. Очевидно, что действующая в республике налогово-бюджетная система является несовершенной и давно назрела необходимость ее реформирования. Недостатками бюджетной системы можно считать фискальную направленность налоговой политики, недооценку социальных факторов, слабое использование перераспределительной и стимулирующей функций и, наконец, несовершенство структуры налогов.

Налоговая система страны играет существенную роль в вопросе выравнивания доходов, смягчения социального неравенства. Наиболее тесную связь с социальными проблемами обеспечивают такие виды налогов, как подоходный, налог на имущество физических лиц, социальные платежи. В большинстве стран с переходной экономикой, включая Армению, действует система налогообложения доходов физических лиц по прогрессивной шкале, которая в определенной степени влияет на выравнивание доходов. Исключение составляют Россия и Беларусь, где действует единая ставка (плоская шкала налогообложения физических лиц), причем в России среди специалистов и ученых уже длительное время идет дискуссия по данному вопросу, и большинство из них обосновывает необходимость внедрения прогрессии по подоходному налогу, доказывая также, что прогрессия должна быть сложной, то есть облагаемый доход должен делиться на несколько частей, и каждая последующая часть должна облагаться по более высокой ставке. Одним из аргументов в пользу перехода на прогрессивную систему подоходного налога в России является то, что установленная ставка в 13% находится в противоречии с относительно высокой по сравнению с ней ставкой налога на прибыль. Между тем налоговая система страны должна быть цельной и входящие в ее состав налоги должны быть взаимосвязаны между собой через элементы налоговой базы, объекты обложения.

В качестве примера прогрессивного налогообложения можно привести США, где подоходный налог взимается по прогрессивной шкале, включающей необлагаемый минимум и 3 ставки (до 1986 г. в стране действовало 14 ставок подоходного налога, величина которого нарастала от 0 до 50%), причем может облагаться либо отдельный человек, либо семья. В ходе налоговой реформы шкала ставок снижена, а необлагаемый минимум увеличен, но при этом уменьшено количество льгот. Во Франции объектом налогообложения является совокупный доход семьи, независимо от количественного состава (такая система используется для стимулирования семьи - ставки от 0 до 56,8%). В Армении вопрос перехода на обложение совокупного дохода семьи также дискутируется среди ученых и специалистов. Кроме того, учитывая высокую поляризацию и дифференциацию по уровню доходов, действующая шкала налогообложения физических лиц в республике должна стать более сложной в смысле прогрессии. Учитывая вышесказанное, своевременными можно считать принятые в 2011 году изменения в налоговом законодательстве, которые коснулись основных налоговых законов (налога на добавленную стоимость, налога на прибыль, подоходного налога, акцизов, социальных платежей). По подоходному налогу с 2012 года вместо двухступенчатой ставки для граждан Армении устанавливается трехступенчатая ставка (10%, 20% и 25%). Ежемесячный облагаемый доход физических лиц в размере свыше 2,0 млн. драмов

¹ См. журнал «Финансы и кредит», 2011г., № 3, стр. 49.

² Рассчитано на основании данных статистического ежегодника РА за 2010 год.

отныне будет облагаться по ставке 25 %. Можно предусмотреть ряд и других мер при налогообложении доходов, направленных на социальную защиту граждан и в этом вопросе целесообразно изучить опыт других стран. В России, например, предусмотрены вычеты при налогообложении граждан в случае приобретения жилья, расходовании средств на обустройство, медицинские цели и при участии в пенсионной программе.

По сравнению с другими странами в Армении низок уровень поступлений социальных платежей по отношению к ВВП (в последние годы он не достигает и 4%). Для сравнения укажем, что в Германии он составляет 15,5%, во Франции - 20,8% и т.д. Причиной низкого уровня социальных платежей к ВВП является не только ограниченная база расчета этих платежей, но и низкий уровень собираемости платежей в результате нарушений законов со стороны работодателей. Необходимость обеспечения эффективной политики социальной защиты населения требует принятия мер по увеличению поступлений указанных платежей. Согласно закону "О бюджетной системе РА", источниками поступлений по социальному обеспечению считаются платежи по обязательному социальному страхованию и неналоговые доходы. Анализ уровня взносов социальных платежей показал, что в докризисный период (2001-2007гг.), в условиях роста ВВП и Госбюджета, удельный вес социальных платежей почти не вырос.

Исходя из вышесказанного, принято решение, согласно которому в отношении социальных платежей с начала текущего года будут действовать двухступенчатые ставки расчета – при заработной плате и приравненных к ней доходах свыше двух миллионов драмов социальные платежи будут исчисляться по ставке 8 %, вместо ранее действующих 3%. Пересмотрен также размер социальных платежей за неоформленных наемных работников. Начиная с 1 января текущего года, при фиксации отсутствия письменного приказа или договора о приеме на работу, работодатель за каждого неоформленного в данном месяце наемного работника исчисляет и уплачивает социальный платеж а) 60 тысяч драмов, если количество неоформленных работников составляет от 1 до 3 человек, б) 150 тысяч драмов, если количество неоформленных работников составляет от 4 до 6 человек, в) 300 тысяч драмов, если количество неоформленных работников составляет от 7 до 9 человек, г) 600 тысяч драмов, если количество неоформленных работников составляет свыше 9 человек.

Принятый в 2011 году пакет изменений в налоговое законодательство не охватывает такого важного с точки зрения выравнивания доходов вида налога, как налог на имущество физических лиц. В нынешних условиях требуется более существенная дифференциация данного налога в соответствии со стоимостью недвижимого и движимого имущества. Изменения в имущественном налоге в соответствии с современными реалиями (учитывая посткризисную ситуацию в республике) позволят, с одной стороны, восполнить доходные поступления бюджета, а с другой стороны, обеспечить перераспределение налоговой нагрузки между собственниками (соответственно, например, более дорогое жилье должно облагаться по более высокой ставке, чем социальное). Необходимо учесть следующее: 1) база налогообложения имущественного налога гораздо выше, чем по другим налогам, поэтому даже незначительное повышение или упорядочение ставок данного налога (с определенными ограничениями, которые помогут оградить социально незащищенные слои населения) может привести к существенному восполнению доходов бюджета, 2) по данному виду налога налогоплательщикам труднее оставаться в "тени" 3) налог на имущество поступает в местные бюджеты и упорядочение механизма взимания поможет в обеспечении региональных социально-экономических программ. Исходя из вышеизложенного, можно сделать вывод о несомненной актуальности вопроса совершенствования порядка налогообложения имущества физических лиц. Рассматриваемый налог имеет значительные резервы и рычаги стимулирования (например, дифференцирование ставок в зависимости от стоимости имущества, выполнение функции социального выравнивания и др.). Сложность в вопросе законодательных изменений в законе о налоге на имущество связана с необходимостью проведения кадастрового учета объектов недвижимости и установления их кадастровой стоимости, однако, учитывая, что резервы, заложенные в указанном виде налога (в смысле возможности

дифференциации доходов и изыскания дополнительных финансовых ресурсов), довольно значительны, вопрос требует скорейшего решения.

Отрицательное воздействие на социальную направленность налогов имеет сама структура налогов, в которой преобладающую долю составляет налог на добавленную стоимость, являющийся наиболее социально несправедливым налогом, поскольку, отражаясь в ценах товаров первой необходимости, он ложится тяжелым бременем на неимущие слои населения. Вообще, для Армении характерно явное преобладание налогов на потребление, что является фактором сдерживания спроса, а следовательно, экономического роста. Следует напомнить, что, в отличие от Армении, почти во всех странах СНГ осуществлено снижение ставки по НДС, причем в ряде случаев, например в Беларуси, установлена дифференцированная ставка. Считаем, что в нынешних условиях Армении снижение и дифференциация указанного налога может сыграть положительную роль с точки зрения социальной защиты населения.

Таким образом, назрела необходимость в реализации комплекса мер, направленных на увеличение перераспределительной части национального дохода для более полного удовлетворения современных социальных потребностей общества, снижения поляризации доходов различных слоев общества, повышения качества жизни людей. В целом, с точки зрения совокупных интересов общества, одной из важнейших задач финансовой политики государства на современном этапе является нахождение оптимального соотношения экономической эффективности и социальной справедливости на каждом этапе развития общества.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՄԳԱԱ Մ. Քոթասյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ,
երկրաբանահանրաբանական գիտությունների դոկտոր

ԱՐՄԱՆԻՍԻ ՈՍԿԻ-ԲԱԶՄԱՄԵՏԱՂԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀԱՆՔԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Ստեփանավանի շրջանում՝ Ստեփանավան քաղաքից 4-5 կմ դեպի արևմուտք:

Հանքավայրի հանքայնացումները ներկայացված են երակային մարմիններով և երակիկացանային տիպի գոտիներով: Հանքային դաշտի տարածքում հայտնաբերված են 65 հանքային մարմիններ, որոնցից 26-ը ներկայացված են պիրիտ-խալկոպիրիտ-հեմատիտային կազմության հանքանյութերով, 18-ը՝ բազմամետաղային, 17-ը՝ խառը և 2-ը՝ քվարց-պիրիտային հանքանյութերով:

Բազմամետաղային հանքանյութերով ներկայացված երակների հզորությունը կազմում է 0,5-0,6 մ, երակիկացանային տիպի գոտիներինը՝ 2-3 մ, կալցիտ-գալենիտ-սֆալերիտ-պիրիտ հանքանյութերով ներկայացված երակներինը՝ 0,5 մ, քվարց-պիրիտ-խալկոպիրիտ, հեմատիտային երակներինը՝ 0,2-0,3 մ և քվարց-պիրիտային երակներինը՝ 0,1-0,15 մ:

Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի տարբեր հանքանյութային կազմի երակների հանքանյութերում հայտնաբերված ցրված և հազվագյուտ տարրերի պարունակությունները նույնպես տարբեր են: Շ.Ամիրյանի¹ տվյալներով բազմամետաղային կազմության հանքային մարմինների պիրիտ հանքանյութում ցրված և հազվագյուտ տարրերի պարունակությունները կազմում են՝ սելենինը՝ 10 գ/տ, տելուրինը՝ 8 գ/տ, քիսմոտինը՝ 60 գ/տ, գալիումինը՝ 3,7 գ/տ, գերմանիումինը՝ 0,1 գ/տ, կադմիումինը՝ 30 գ/տ, արծաթինը՝ 400 գ/տ, ոսկունը՝ 30 գ/տ, խալկոպիրիտ հանքանյութում՝ կադմիումինը՝ 110 գ/տ, արծաթինը՝ 675 գ/տ, ոսկունը՝ 79,1 գ/տ, սֆալերիտ հանքանյութում՝ սելենինը՝ 30 գ/տ, տելուրինը՝ 20 գ/տ, քիսմոտինը՝ 90 գ/տ, գալիումինը՝ 10 գ/տ, գերմանիումինը՝ 2,3 գ/տ, ինդիումինը՝ 27 գ/տ, կադմիումինը՝ 12 կգ/տ, արծաթինը՝ 70 գ/տ, ոսկունը՝ 20 գ/տ, գալենիտ հանքանյութում՝ սելենինը՝ 40 գ/տ, տելուրինը՝ 50 գ/տ, քիսմոտինը՝ 100 գ/տ, գալիումինը՝ 3,7 գ/տ, ինդիումինը՝ 0,3 գ/տ, կադմիումինը՝ 950 գ/տ, արծաթինը՝ 350 գ/տ, ոսկունը՝ 20 գ/տ:

Կալցիտ-գալենիտ-սֆալերիտային կազմության հանքանյութերում ցրված և հազվագյուտ տարրերի պարունակությունները կազմում են.

- սֆալերիտ հանքանյութում՝ սելենինը՝ 25 գ/տ, տելուրինը՝ 15 գ/տ, քիսմոտինը՝ 10 գ/տ, գալիումինը՝ 10 գ/տ, գերմանիումինը՝ 1,2 գ/տ, ինդիումինը՝ 5,1 գ/տ, կադմիումինը՝ 10000 գ/տ, արծաթինը՝ 20 գ/տ, ոսկունը՝ 10 գ/տ,
- գալենիտ հանքանյութում՝ սելենինը՝ 40 գ/տ, տելուրինը՝ 30 գ/տ, քիսմոտինը՝ 350 գ/տ, գերմանիումինը՝ 7,1 գ/տ, ինդիումինը՝ 0,5 գ/տ, կադմիումինը՝ 1200 գ/տ, արծաթինը՝ 350 գ/տ, ոսկունը՝ 10 գ/տ:

Շ.Ամիրյանի տվյալներով Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքանյութերում նշված ցրված և հազվագյուտ տարրերի միջին պարունակությունները 8-30 մմոլ-ների անալիզների տվյալներով, որն էլ ընդունում ենք հաշվարկների համար որպես հիմք, կազմում են.

¹ Амирян Ш.О., Пиджян Г.О. Арманиское медно-полиметаллическое месторождение. Изв. АН Арм ССР. “Науки о Земле”, 1983, №6, с. 30-45.

Амирян Ш.О., Пиджян Г.О., Фармазян А.С. Минеральный состав руд и характер распределения главных рудообразующих редких, благородных элементов в рудах Арманиского медно-полиметаллического месторождения. Библи. ИГН АН Арм ССР. Ереван, 1985, с. 10.

- ցինկի սֆալերիտ հանքանյութում՝ սելենինը՝ 27,5 գ/տ, տելուրինը՝ 17,5 գ/տ, քիսմուտինը՝ 50 գ/տ, գալիումինը՝ 10 գ/տ, ինդիումինը՝ 16,05 գ/տ, կադմիումինը՝ 11000 գ/տ, գերմանիումինը՝ 1,17 գ/տ, ոսկունը՝ 15 գ/տ, արծաթինը՝ 45 գ/տ,
- կապարի գալենիտ հանքանյութում՝ սելենինը՝ 40 գ/տ, տելուրինը՝ 40 գ/տ, քիսմուտինը՝ 225 գ/տ, գալիումինը՝ 1,85 գ/տ, գերմանիումինը՝ 3,55գ/տ, կադմիումինը՝ 1075գ/տ, ինդիումինը՝ 0,4գ/տ, ոսկունը՝ 15 գ/տ, արծաթինը՝ 350 գ/տ,
- պղնձի խալկոպիրիտ հանքանյութում՝ սելենինը՝ 65գ/տ, տելուրինը՝ 15գ/տ, քիսմուտինը՝ 145 գ/տ, գալիումինը՝ 6 գ/տ, ինդիումինը՝ 16 գ/տ, կադմիումինը՝ 110 գ/տ, ոսկունը՝ 79,1 գ/տ, արծաթինը՝ 675 գ/տ,
- ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութում՝ սելենինը՝ 10գ/տ, տելուրինը՝ 8 գ/տ, քիսմուտինը՝ 60 գ/տ, գալիումինը՝ 2,35 գ/տ, ինդիումինը՝ 1,0 գ/տ, կադմիումինը՝ 21,25 գ/տ, գերմանիումինը՝ 0,55 գ/տ, ոսկունը՝ 15,75գ/տ, արծաթինը՝ 203,75 գ/տ:

Այժմ հաշվարկենք Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հիմնական (պղինձ, կապար, ցինկ) տարրերի հանքանյութերի քանակները հաշվեկշռային պաշարներում և կանխատեսումային ռեսուրսներում: Այդ հանքանյութերի հետ էլ կապված են վերը նշված ցրված և հազվագյուտ տարրերը: Եվ, այսպես.

- պղնձի հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է 158,6 հազ.տ, հետևապես պղնձի խալկոպիրիտ հանքանյութի քանակը կկազմի 458,12 հազ.տ,
- կապարի հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է 178,1 հազ. տ, հետևապես կապարի գալենիտ հանքանյութի քանակը կկազմի 205,66 հազ.տ,
- ցինկի հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է 381 հազ. տ, հետևապես ցինկի սֆալերիտ հանքանյութի քանակը կկազմի 567,9 հազ.տ,
- ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութի քանակի վերաբերյալ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հետախուզման և պաշարների հաստատման ամփոփիչ (ինչպես նաև տարեկան) հաշվետվության մեջ տվյալներ չունենալու պատճառով դրա քանակը պայմանականորեն ընդունում ենք հանքավայրի երեք հիմնական սուլֆիդային հանքանյութերի քանակների գումարին հավասար, քանի որ պիրիտ հանքանյութը, բացի այն, որ լայն չափերով տարածված է մյուս բոլոր հանքանյութերի հետ, ունի նաև անջատ կուտակումներ: Այսպիսով՝ պիրիտ հանքանյութի քանակը ընդունում ենք 1231,68 հազ.տ:

Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հիմնական տարրերի կանխատեսումային ռեսուրսների և դրանց հանքանյութերի քանակները կազմում են.

- պղնձինը՝ 94,7 հազ.տ, հետևապես պղնձի խալկոպիրիտ հանքանյութինը կկազմի 273,54 հազ.տ,
- կապարինը՝ 131,7 հազ. տ, հետևապես կապարի գալենիտ հանքանյութինը կկազմի 152,08 հազ.տ,
- ցինկինը՝ 282,3 հազ. տ, հետևապես ցինկի սֆալերիտ հանքանյութինը կկազմի 420,78 հազ.տ,
- ծծմբի հրաքար պիրիտի քանակը կկազմի 846,4 հազ.տ:

Քանի որ Արմանիսի հանքավայրի հիմնական սուլֆիդային հանքանյութերի մեջ՝ հիմնական տարրերի հետ զուգակցվող ցրված և հազվագյուտ տարրերի տեսականորեն հաշվարկված քանակները վերագրվելու են կանխատեսումային ռեսուրսներին (դրանցից հեռացնելով հաշվեկշռային պաշարներում հաստատված տարրերի քանակները), ուստի նպատակահարմար է համատեղել հիմնական սուլֆիդային հանքանյութերի հաշվեկշռային պաշարներն ու կանխատեսումային ռեսուրսները և դրանցից էլ ելնելով, հաշվարկել ցրված և հազվագյուտ տարածված տարրերի ռեսուրսները: Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի չորս հիմնական սուլֆիդային հանքանյութերի քանակները հանքավայրի պաշարներում ու կանխատեսումային ռեսուրսներում համատեղ կազմում են.

- պղնձի խալկոպիրիտինը՝ 731,66 հազ.տ,
- կապարի գալենիտինը՝ 357,74 հազ.տ,

- ցինկի սֆալերիտինը՝ 988,68 հազ.տ,
- պիրիտ հանքանյութինը՝ 2078,08 հազ.տ: Այստեղից.
- պղնձի խալկոպիրիտ հանքանյութի հետ հարակից տարածված ցրված և հազվագյուտ տարրերի քանակները կազմում են.
- սելենինը՝ 47,56տ, տելուրինը՝ 10,97տ, քիսմուտինը՝ 106,09տ, գալիումինը՝ 4,39տ, ինդիումինը՝ 11,71տ, կադմիումինը՝ 80,48տ,
- կապարի գալենիտ հանքանյութի հետ՝ սելենինը՝ 14,31տ, տելուրինը՝ 14,31տ, քիսմուտինը՝ 80,49տ, գալիումինը՝ 0,66տ, գերմանիումինը՝ 1,27տ, կադմիումինը՝ 304,59տ, ինդիումինը՝ 0,143տ,
- ցինկի սֆալերիտ հանքանյութի հետ՝ սելենինը՝ 27,19տ, տելուրինը՝ 17,30տ, քիսմուտինը՝ 49,44տ, գալիումինը՝ 9,89տ, ինդիումինը՝ 15,86տ, կադմիումինը՝ 10875,6տ, գերմանիումինը՝ 1,15տ,
- ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութի հետ՝ սելենինը՝ 20,76տ, տելուրինը՝ 16,62տ, քիսմուտինը՝ 124,68տ, գալիումինը՝ 4,88տ, ինդիումինը՝ 2,08տ, կադմիումինը՝ 44,16տ, գերմանիումինը՝ 1,14տ:

Արմանիսի հանքավայրի չորս հիմնական սուլֆիդային հանքանյութերի հետ հարակից տարածված ցրված և հազվագյուտ տարրերի ընդհանուր ռեսուրսների քանակները կազմում են՝ սելենինը՝ 109,82տ, տելուրինը՝ 59,20տ, քիսմուտինը՝ 360,70տ, գալիումինը՝ 19,78տ, գերմանիումինը՝ 3,56տ, ինդիումինը՝ 29,793տ, կադմիումինը՝ 11304,83տ, որոնցից հաշվեկշռային պաշարներում հաստատվածների քանակները կազմում են՝ սելենինը՝ 69,8տ, քիսմուտինը՝ 38,0տ, կադմիումինը՝ 2358,0տ:

Կանխատեսումային ռեսուրսների մեջ հաշվառվող ցրված և հազվագյուտ տարրերի քանակները կազմում են՝ սելենինը՝ 40,02տ, տելուրինը՝ 59,20տ, քիսմուտինը՝ 322,70տ, գալիումինը՝ 19,78տ, գերմանիումինը՝ 3,56տ, ինդիումինը՝ 29,793տ, կադմիումինը՝ 8946,83տ:

01.01.2010թ.-ի դրությամբ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հաշվեկշռային (C₁+C₂ կատեգորիաների) պաշարների քանակները կազմում են.

- հանքաքարերինը՝ 14397 հազ.տ,
- պղնձինը՝ 153,6 հազ.տ,
- ցինկինը՝ 374,4 հազ.տ,
- կապարինը՝ 175,1 հազ.տ,
- ոսկունը՝ 12571 կգ,
- արծաթինը՝ 162,4տ,
- սելենինը՝ 69,3տ,
- քիսմուտինը՝ 83,0տ,
- կադմիումինը՝ 2317,7տ
- ծծմբինը՝ 368,9 հազ.տ:

Հանքավայրում հաստատված են նաև արտահաշվեկշռային պաշարներ, որոնք, ի վերջո, պետք է շահագործվեն հաշվեկշռային պաշարներին համահավասար: Այդ իսկ պատճառով էլ այդ արտահաշվեկշռային պաշարները ևս ներառում ենք Պաշարների պետական հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից հաստատված արդյունաբերական պաշարների մեջ: Եվ այսպես, արտահաշվեկշռային գնահատված պաշարների քանակը կազմում է՝

պղնձինը՝ 1,3 հազ.տ, ցինկինը՝ 2,1 հազ.տ, կապարինը՝ 0,8 հազ.տ, ոսկունը՝ 252,1 կգ, արծաթինը՝ 3,0տ, կադմիումինը՝ 17,8տ: Այսպիսով, պղնձի գնահատվող պաշարների քանակը կազմում է 154,9 հազ.տ, ցինկինը՝ 386,5 հազ.տ, կապարինը՝ 175,9 հազ.տ, ոսկունը՝ 12823,1կգ, արծաթինը՝ 165,4տ, սելենինը՝ 69,3տ, քիսմուտինը՝ 83,0տ, կադմիումինը՝ 2335,5տ: Հաշվեկշռային գնահատվող պաշարներում՝ պղնձի խալկոպիրիտ և ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութերի մեջ առկա երկաթի քանակը կազմում է 709490տ, իսկ սուլֆիդային չորս հանքանյութերում պարունակվող ծծմբինը՝ 1.029.400տ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ արդյունաբերական պաշարների արժեքն ընդերքում կազմում է 4 մլրդ 166,6 մլն ԱՄՆ դոլար, իսկ կանխատեսումային ռեսուրսների արժեքը՝ 2 մլրդ 939,04 մլն դոլար:

Աղյուսակ 1

Արմանիսի ոսկի- բազմամետաղային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ արդյունաբերական պաշարների (առ 01.01.2010թ. դրությամբ) արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը դոլ.
Պղինձ	տ	154900	7465	1.156.328.500
Ցինկ	տ	376500	3400	1.280.100.000
Կապար	տ	175900	2000	351.800.000
Ոսկի	կգ	12823,1	31500	403.927.650
Արծաթ	տ	165,4	450000	74.430.000
Սելեն	տ	69,3	52220	3.618.846
Բիսմուտ	տ	83,0	24440	2.028.520
Կադմիում	տ	2335,5	5330	12.448.215
Ծծումբ	տ	1.029.400	650	669.110.000
Երկաթ	տ	709490	300	212.847.000
Ընդամենը				4.166.638.731

Աղյուսակ 2

Արմանիսի ոսկի- բազմամետաղային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ կանխատեսումային P1 կատեգորիայի ռեսուրսների արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը դոլ.
Պղինձ	տ	94700	7465	706.935.500
Ցինկ	տ	282300	3400	959.820.000
Կապար	տ	131700	2000	263.400.000
Ոսկի	կգ	7650	31500	240.975.000
Արծաթ	տ	98,7	450000	44.415.000
Սելեն	տ	40,02	52220	2.089.844
Տելուր	տ	59,2	116000	6.867.200
Բիսմուտ	տ	322,7	24440	7.886.788
Գալիում	տ	19,78	460000	9.098.800
Գերմանիում	տ	3,56	950000	3.382.000
Ինդիում	տ	29,793	680000	20.259.240
Կադմիում	տ	8946,83	5330	47.686.039
Ծծումբ	տ	734570	650	477.470.500
Երկաթ	տ	495855	300	148.756.500
Ընդամենը				2.939.042.411

Արմանիսի հանքավայրը որոշակի ընդհատումներով շահագործվում է 2002 թվականից, այն էլ բաց հանքի եղանակով, և որն էլ վերականգնվել է 2007 թվականին: Անցած մի քանի տարիների ընթացքում այդ հանքավայրի ընդերքից արդյունահանվել է 250 հազ.տ հանքաքար, որի մեջ պարունակվող օգտակար տարրերի քանակները կազմել են.

պղինձինը՝ 2,7 հազ.տ, ցինկինը՝ 6,6 հազ.տ, կապարինը՝ 3 հազ.տ, ոսկունը՝ 243կգ, արծաթինը՝ 2,9տ, կադմիումինը՝ 40,3տ, ծծմբինը՝ 6,4 հազ.տ: Ձեռնարկության «Տր» ձևի տարեկան հաշվետվության¹ համաձայն՝ բիսմուտի և սելենի քանակների մասին տվյալներ չեն բերվում, չնայած դրանց պաշարները այդ հանքավայրի ընդերքում հաստատված են:

Նշենք, որ հանքավայրը դեռևս կանոնավոր կերպով չի շահագործվում: Հանքավայրի մոտակայքում կառուցվում է հանքահարստացման ֆաբրիկա, որի ավարտից հետո միայն կարող է սկսվել կանոնավոր շահագործումը (մինչ այժմ արդյունահանված 250 հազ.տ հանքաքարերը մշակվել են Ախթալայի հանքահարստացման ֆաբրիկայում, որն Արմանիսի հանքավայրից գտնվում է մոտ 80 կմ հեռավորության վրա): Եվ միայն այդ դեպքում հնարավոր կլինի գնահատել լեռնահանքային ձեռնարկության աշխատանքի որակը՝ օգտակար

¹ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի՝ 2009թ. տարեկան հաշվետվություն՝ «Տր»:

տարրերի կորզման արդյունավետությունը, պոչամբարներ թափվող օգտակար տարրերի քանակները, միջավայրի աղտոտման ու թունավորման աստիճանը, պոչամբարներում օգտակար տարրերի մեջ ընդերքի հարստությունների արժեքը և այլն, և այն էլ այն դեպքում, եթե լեռնահանքային ձեռնարկությունը ՀՀ կառավարությանը ներկայացնի «Տրք» ձևի տարեկան հաշվետվությունները լիարժեք և ամբողջական, որտեղ պետք է լինեն.

- արդյունահանված հանքաքարերի քանակը,
- օգտակար տարրերի պարունակություններն արդյունահանված և մշակման ուղարկված հանքաքարերում,
- ստացված խտանյութերի քանակները և դրանց մեջ օգտակար տարրերի քանակներն ու պարունակությունները,
- օգտակար տարրերի կորզման աստիճանները և այլն:

Բայց քանի որ ՀՀ կառավարությունն արտադրողներից (օգտակար տարրերի հանքավայրեր շահագործողներից) չի պահանջում ԽՍՀՄ-ի օրոք մշակված և շատ կարևոր ու շատ անհրաժեշտ վերը նշված (Տրք ձևի) հաշվետվությունները, շահագործողներն էլ, օգտվելով առիթից, այդ հաշվետվությունները չեն ներկայացնում սահմանված ձևով: Ներկայացնում են միայն տվյալներ արդյունահանված հանքաքարերի և դրանց մեջ պարունակվող հիմնական համարվող օգտակար տարրերի քանակների վերաբերյալ և ուրիշ ոչինչ: Կան բացառիկ ձեռնարկություններ (Չանգեգուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատները), որոնք հաշվետվությունները ներկայացնում են քիչ թե շատ լիարժեք:

Եվ քանի որ Արմանիսի հանքավայրի շահագործման վերաբերյալ դեռևս չկան տարեկան «Տրք» ձևի լիարժեք հաշվետվություններ, ուստի այդ հանքավայրի շահագործման արդյունավետության հարցերի, օգտակար տարրերի կորզման աստիճանի, պոչամբարներ թափվող տարրերի քանակի և արժեքային գնահատականի վերաբերյալ մեր հետազոտությունները կատարում ենք այդ հանքավայրի կոնդիցիաների նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորման տվյալներով, որոնց հիմքում էլ դրվել են Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքաքարերի հարստացման տեխնոլոգիական լաբորատոր հետազոտությունների արդյունքները: Ընդունում ենք, որ լաբորատոր պայմաններում հանքահարստացման տեխնոլոգիաների տվյալները 100%-ով, այսինքն՝ լիարժեք կպահպանվեն հանքավայրը շահագործելիս հանքահարստացման գործարանային պայմաններում:

Դիտարկում ենք վերը նշված կոնդիցիաների նախագծով ընդունված տարատեսակներից միջինը՝ պայմանական կապարի 1,5% պարունակությամբ հանքաքարերի արդյունահանման և մշակման տարբերակը: Եվ այսպես. լեռնահանքային ձեռնարկության տարեկան արտադրողականությունն ընդունված է 300 հազ.տ հանքաքարի արդյունահանում և մշակում, որոնցից կարող են ստացվել.

- կապարի խտանյութ՝ 4,14 հազ.տ, որի մեջ կլինի 2,16 հազ.տ կապար (կապարի պարունակությունը խտանյութում պետք է կազմի 52,12%),
- ցինկի խտանյութ՝ 10,5 հազ.տ, որի մեջ կլինի 5,49 հազ.տ ցինկ (ցինկի պարունակությունը խտանյութում պետք է կազմի 52,29 %),
- պղնձի խտանյութ՝ 10,78 հազ.տ, որի մեջ պղնձ մետաղի քանակը կկազմի 2,53 հազ.տ (պղնձի պարունակությունը խտանյութում պետք է կազմի 23,46%):

Հանքաքարերից մետաղների կորզումը խտանյութերի մեջ պետք է կազմի՝ կապարինը կապարի խտանյութում՝ 75%, ցինկինը ցինկի խտանյութում՝ 81%, պղնձինը պղնձի խտանյութում՝ 84%, ոսկունը պղնձի և կապարի խտանյութերում՝ 77%, արծաթինը պղնձի և կապարի խտանյութերում՝ 72%:

Հաշվարկները ցույց են տալիս, որ Արմանիսի հանքավայրի հաշվեկշռային և արտահաշվեկշռային պաշարներից արդյունահանվող (մշակման ենթակա) 300 հազ. տ հանքաքարերում կլինեն՝ պղնձ 3201տ, ցինկ՝ 7800տ, կապար՝ 3648տ, ոսկի՝ 267,1կգ, արծաթ՝ 3,45տ, սելեն՝ 1,44տ, բիսմութ՝ 1,73տ, կադմիում՝ 48,65տ, ծծումբ՝ 21491տ, երկաթ՝ 14812տ, որոնցից խտանյութերի մեջ կարող են կորզվել՝ պղնձ՝ 2689տ (84%), ցինկ՝ 6318տ (81%), կապար՝ 2736տ՝ 75%-ը (ծանոթություն. այս թվերը չեն համապատասխանում ստացվելիք խտանյութերում հիմնական տարրերի կորզումներին, և քանի որ այդ անհամապատասխանությունը

վերացնել չենք կարող, մեր հետագա հաշվարկների համար որպես հիմք ընդունում ենք վերջին թվերը՝ կորզման տոկոսներին համահունչ) ոսկի՝ 205,7կգ (77%-ը ամբողջից), արծաթ՝ 2,48տ (72%-ը), սելեն՝ 1,15տ (80%-ը), քիսմուտ՝ 1,38տ (80%-ը), կադմիում՝ 38,92տ (80%-ը), ծծումբ՝ 6511տ (30,3%-ը, պիրիտ հանքանյութի հետ կապված ծծումբն ամբողջությամբ թափվելու է պոչամբար), երկաթ՝ 2577տ (17,4%-ը, պիրիտ հանքանյութի հետ կապված երկաթն ամբողջությամբ թափվելու է պոչամբար): Այսպիսով, տարեկան պոչամբար թափվող տարրերի քանակները (լավագույն կորզման դեպքում) կարող են կազմել՝ պղնձինը՝ 512տ, ցինկինը՝ 1482տ, կապարինը՝ 912տ, ոսկունը՝ 61,4կգ, արծաթինը՝ 0,97տ, սելենինը՝ 0,29տ, քիսմուտինը՝ 0,35տ, կադմիումինը՝ 9,73տ, ծծմբինը՝ 14980տ, երկաթինը՝ 12235տ, որոնց արժեքը (2007թ. մարտ-ապրիլ և 2008թ. մայիս ամիսներին գործող գներով) կարող է կազմել 26 մլն 518 հազ. 129 դոլար և սա էլ այն դեպքում, եթե օգտակար տարրերը կորզվեն նախագծով նախատեսված քանակներով (տոկոսներով): Իրականում մեզ մոտ Հայաստանում օգտակար տարրերի կորզումները շատ ավելի ցածր են լինում, քան նախատեսված է նախագծերով: Դրա վառ օրինակ կարող է հանդիսանալ Արմանիսի հանքավայրի տիպին պատկանող և վաղուց ի վեր (ԽՍՀՄ-ի օրվանից) շահագործվող Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը:

Արմանիսի հանքավայրի նկարագրության բաժնում գրել ենք, որ հետախույզ-երկրաբանների հետ զուգահեռաբար հանքավայրը հետազոտվել է գիտնական-երկրաբանների կողմից: Եթե հետախույզ-երկրաբանների կողմից հանքավայրի առանձին հանքանյութերը չեն հետազոտվել, և դրանց յուրաքանչյուրի հետ հարակից տարածված՝ ցրված և հազվագյուտ տարրերի գծով անալիզներ չեն կատարվել, ապա գիտնական-երկրաբանները (ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատողները) կատարել են այդ հետազոտությունները և Արմանիսի հանքավայրի սուլֆիդային հանքանյութերում հայտնաբերել են կորզելի պարունակություններով շատ արժեքավոր և շատ կարևոր այնպիսի տարրեր, որպիսիք են՝ ինդիումը, գալիումը, գերմանիումը և այլն: Այդքանից հետո էլ հետախույզ-երկրաբաններն ուշադրության չեն արժանացրել գիտնական-երկրաբանների կատարած աշխատանքները և ուշադրությունից դուրս են թողել նշված տարրերը: Ասենք ավելին. եթե հանքավայրը հետախույզող երկրաբանները ծանոթանային գիտնականների կողմից կատարված աշխատանքների արդյունքներին, տեղեկանային, որ ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութի հետ զուգահեռաբար տարածված են սելեն (10գ/տ պարունակությամբ), տելուր (8գ/տ), քիսմուտ (60-95գ/տ), գալիում (3,7-15գ/տ), գերմանիում (0,1-10գ/տ), կադմիում (10-30գ/տ), արծաթ (5-400գ/տ), ոսկի (2-30գ/տ), ապա նրանք, հավանաբար (եթե քիչ թե շատ մասնագիտական որակավորում ունենային), անալիզի կներկայացնեին նաև պիրիտ հանքանյութը, կորոշեին ոչ միայն պիրիտի հետ զուգակցվող (հարակից տարածված) տարրերի պարունակությունները, այլև կորոշեին պիրիտի պարունակությունը հանքաքարերում (պիրիտի քանակն ու պաշարները), որն էլ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հարակից բաղադրիչների առումով, այլև հենց իր (պիրիտի) բյուրեղային կառուցվածքը կազմող ծծմբի և երկաթի առումով:

Բերված տվյալներով և մեր կողմից կատարված հաշվարկներով պարզվում է, որ Արմանիսի հանքավայրի հաշվեկշռային պաշարներում առկա 1231680տ պիրիտ հանքանյութի մեջ պարունակվում են.

սելեն՝ 12,3տ (միջին պարունակությունը պիրիտի մեջ 10 գ/տ), տելուր՝ 9,85տ (միջին պարունակությունը 8 գ/տ), քիսմուտ՝ 73,90տ (միջին պարունակությունը 60,0 գ/տ), գալիում՝ 2,89տ (միջին պարունակությունը 2,35 գ/տ), գերմանիում՝ 0,68տ (միջին պարունակությունը 0,55 գ/տ), կադմիում՝ 26,17տ (միջին պարունակությունը 21,25 գ/տ), արծաթ՝ 253,42տ (միջին պարունակությունը 203,75 գ/տ), ոսկի՝ 19399կգ (միջին պարունակությունը 15,75 գ/տ):

Սի կողմ թողնենք պղնձի խալկոպիրիտ, ցինկի սֆալերիտ, կապարի գալենիտ հանքանյութերի թերկորզման հետևանքով պոչամբարներ թափվող և խտանյութերի հետ օտարներին նվիրվող վերը նշված արժեքավոր տարրերի հարցը, քննարկենք պիրիտ հանքանյութի հետ պոչամբարներ թափվող՝ մեր կողմից հաշվարկված տարրերի հարցը և տանք դրանց արժեքային գնահատականը: Նախ նշենք, որ պիրիտ հանքանյութի քանակը մեր կողմից

պայմանականորեն ընդունված հանքավայրի երեք հիմնական՝ պղինձ, ցինկ և կապար տարրերի սուլֆիդային հանքանյութերի գումարային քանակին հավասար, կարող է լինել նույնիսկ դրանից ավելի, քանի որ հանքավայրում լայն տարածում ունեցող քվարց-պիրիտային կազմության երակները հետախույզ-երկրաբանների ուշադրությունից դուրս են մնացել (դրանք համարվել են ոչ օգտակար և հետագոտության չեն ներկայացվել, բայց դրանք շատ ավելի հետաքրքիր են իրենց ոսկու շատ բարձր պարունակության (2-30գ/տ)) առումով:

Հանքավայրի շահագործման ընթացքում պիրիտ հանքանյութը չի կորզվելու, և պիրիտն ամբողջությամբ, իր հարակից բոլոր բաղադրիչներով հանդերձ, թափվելու է պոչամբարներ, և փոշիացվելու է 1331,57 մլն դոլարի հարստություն, որն էլ համարժեք է հանքավայրի արդյունաբերական պաշարներից կորզվող արժեքին:

Պիրիտ հանքանյութի հետ և Արմանիսի հանքավայրում օգտակար համարվող երեք սուլֆիդային հանքանյութերի՝ պղնձի խալկոպիրիտի, կապարի գալենիտի և ցինկի սֆալերիտի թերկորզման հետևանքով պոչամբարներ թափվող թունավոր տարրերի՝ սելենի և տելուրի քանակները պոչամբարներում (Արմանիսի հանքավայրի արդյունաբերական պաշարների շահագործման ամբողջ ժամանակահատվածում) կազմելու են՝ սելենինը՝ 26,19տ, տելուրինը՝ 9,85տ: Թունավոր տարրերի ընդհանուր քանակը պոչամբարներում 48 տարի հետո կազմելու է 36,04տ, որն էլ պոչամբարների շրջակայքում և պոչամբարներից ներքև ընկած տարածքներում թունավորումներ է առաջացնելու հարյուրավոր տարիներ՝ այնքան ժամանակ, որքան պահպանվելու են պոչամբարները:

Աղյուսակ 3

Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ արդյունաբերական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների արժեքի հաշվարկը համատեղ

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը դոլ.
Պղինձ	տ	249600	7465	1.863.264.000
Ցինկ	տ	668800	3400	2.273.920.000
Կապար	տ	307600	2000	615.200.000
Ոսկի	կգ	20473,1	31500	644.902.650
Արծաթ	տ	264,1	450000	118.845.000
Սելեն	տ	109,82	52220	5.734.800
Տելուր	տ	59,20	116000	6.867.200
Բիսմուտ	տ	360,7	24440	8.815.508
Գալիում	տ	19,78	460000	9.098.800
Գերմանիում	տ	3,56	950000	3.382.000
Ինդիում	տ	29,793	680000	20.259.240
Կադմիում	տ	11304,83	5330	60.254.744
Ծծումբ	տ	1763970	650	1.146.580.500
Երկաթ	տ	1205345	300	361.603.500
Ընդամենը				7.138.727.942

Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքի հարստությունները ի վերջո պետք է շահագործվեն ամբողջությամբ՝ հաստատված հաշվեկշռային և արտահաշվեկշռային պաշարները, ինչպես նաև կանխատեսումային ռեսուրսները (վերջիններս, իհարկե, հետախուզելուց և պաշարների կարգավիճակի փոխադրելուց հետո): Այդ դեպքում Արմանիսի հանքավայրի ընդերքից տարեկան 300 հազ.տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում կորզման ենթակա տարրերի միջին հավասարակշռված քանակը՝ հաշվարկված աղյուսակ 3-ի (բերված է ստորև) հիման վրա, կարող է կազմել՝ պղնձինը՝ 2725,5տ, ցինկինը՝ 7301տ, կապարինը՝ 3358տ, ոսկունը՝ 223,5կգ, արծաթինը՝ 2,88տ, սելենինը՝ 1,20տ, տելուրինը՝ 0,65տ, բիսմուտինը՝ 3,94տ, գալիումինը՝ 0,216տ, գերմանիումինը՝ 0,039տ, ինդիումինը՝ 0,325տ, կադմիումինը՝ 123,45տ, ծծմբինը՝ 19262տ, երկաթինը՝ 13162տ, որոնցից հանքահարստացման ընթացքում խտանյութերի մեջ կանցնեն (կկորզվեն)՝ պղինձ՝ 2289տ, ցինկ՝ 5914տ, կապար՝ 2518տ, ոսկի՝ 172,1կգ, արծաթ՝ 2,07տ, և, խտանյութերի մեջ են անցնելու պղնձի, ցինկի և

կապարի հետ սերտորեն կապված, ստորև թվարկվող տարրերը, որոնք խտանյութերի վաճառքի ժամանակ չեն գնահատվելու և գնորդներին են նվիրվելու հետևյալ քանակություններով՝ սելեն՝ 0,96տ, տելուր՝ 0,52տ, քիսմուտ՝ 3,15տ, գալիում՝ 0,173տ, գերմանիում՝ 0,03տ, ինդիում՝ 0,26տ, կադմիում՝ 98,76տ, ծծումբ՝ 5835տ, երկաթ՝ 2290տ: Դրա հետ մեկտեղ պոչամբարներ կթափվեն՝ պղինձ՝ 436,5տ, ցինկ՝ 1387տ, կապար՝ 840տ, ոսկի՝ 408:8կգ, որից 357,4կգ-ը պիրիտի հետ, արծաթ՝ 4,86տ, որից 4,05-ը պիրիտի հետ, սելեն՝ 0,467տ, որից 0,227 տ-ն պիրիտի հետ, տելուր՝ 0,311տ, որից 0,181տ-ն պիրիտի հետ, քիսմուտ՝ 2,15տ, որից 1,36տ-ն պիրիտի հետ, գալիում՝ 0,096տ, որից 0,053տ-ն պիրիտի հետ, գերմանիում՝ 0,02տ, որից 0,012տ-ն պիրիտի հետ, ինդիում՝ 0,088տ, որից 0,023տ-ն պիրիտի հետ, կադմիում՝ 25,17տ, որից 0,48տ-ն պիրիտի հետ, ծծումբ՝ 13426տ, որից 12128տ-ն պիրիտի հետ, երկաթ՝ 10872տ, որից 10564տ-ն պիրիտի հետ:

Պոչամբարներ թափվող տարրերի արժեքը յուրաքանչյուր տարի կարող է կազմել 37,077 մլն դոլար, իսկ շահագործման ամբողջ ժամանակահատվածում՝ 3395,45 մլն դոլար, քանի որ հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածում (91,578 տարի) պիրիտ հանքանյութի չկորզման և հիմնական հանքանյութերի թերկորզման հետևանքով պոչամբարներ թափվող տարրերի քանակները կարող են կազմել՝ պղինձինը՝ 39974տ, ցինկինը՝ 127019տ, կապարինը՝ 76925տ, ոսկունը՝ 37437կգ (Հայաստանի միջին չափերի մեկ հանքավայրի պաշարների քանակի), արծաթինը՝ 497,6տ, սելենինը՝ 42,77տ, տելուրինը՝ 28,48տ, քիսմուտինը՝ 196,9տ, գալիումինը՝ 8,8տ, գերմանիումինը՝ 1,83տ, ինդիումինը՝ 8,06տ, կադմիումինը՝ 2305տ, ծծմբինը՝ 1.229.526տ, երկաթինը՝ 995.636տ:

Պոչամբարներ թափվող սելեն և տելուր թունավոր տարրերի ընդհանուր քանակը ի վերջո կկազմի 71,25տ:

Եթե ընդունենք, որ Շ.Ամիրյանի (1985) կողմից բերված տվյալները ճիշտ են (իսկ մենք այդ տվյալների ճշտության վերաբերյալ կասկածներ ունենալու ոչ մի փաստ, հետևապես և իրավունք չունենք, քանի որ այդ տվյալները պաշտոնական տվյալներ են և հրատարակված են ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» հանդեսում և գրված են Արմանիսի հանքավայրի հետազոտությունների արդյունքների վերաբերյալ ամփոփիչ հաշվետվության մեջ), ապա պիրիտ հանքանյութի հետ պոչամբարներ թափվող ազնիվ մետաղների քանակները ի վերջո (հանքավայրն ամբողջությամբ շահագործելու պարագայում) կարող են կազմել՝ ոսկունը՝ 32730կգ, արծաթինը՝ 423,4տ (ազնիվ մետաղների միջին չափերի հանքավայրի պաշարների քանակությամբ, կամ ավելի քան 2,5 անգամ շատ նույն հանքավայրի հաստատված պաշարներից): Եթե ընդունենք, որ պիրիտ հանքանյութի ընդհանուր քանակի 10%-ը մասնակցել է ոսկու և արծաթի գծով անալիզի տրված նմուշներում, և պիրիտ հանքանյութի քանակը հաշվարկելիս մենք դրա քանակը գերազանցել ենք երկու անգամ, ապա նույնիսկ այդ դեպքում էլ պոչամբարներ թափվող ոսկու քանակը կարող է կազմել 14728կգ, արծաթինը՝ 190,5տ, որոնց գումարային արժեքը կարող է կազմել 559,6 մլն դոլար:

Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքից տարեկան 300 հազ.տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում խտանյութերի տեսքով կարող են կորզվել ընդամենը 25,42 հազ.տ, հետևապես 300 հազ.տ հանքաքարերից պոչամբարներ կթափվեն 274,58 հազ.տ՝ արդյունահանված հանքաքարերի 91,52%-ը: Հանքավայրի ողջ պաշարներն ու ռետուրսները շահագործելու պարագայում՝ 91,6 տարիների ընթացքում, պոչամբարներում կուտակված կլինեն 25151528տ պոչանքներ հիմնական պղինձ, կապար և ցինկ մետաղներով համեմատաբար աղքատ, իսկ թունավոր սելեն և տելուր տարրերով, ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութով և դրա հետ սերտորեն կապված ոսկով, արծաթով, ծծմբով ու երկաթով բավականին հարուստ՝ փշրված ու մանրացված, վերամշակման համար պատրաստի հանքաքարեր, որոնց կուտակներն իրենցից կարող են ներկայացնել ձեռակերտ հանքավայրեր: Նշված 25.151.528տ պոչանքներում կարող են լինել՝ պղինձ՝ 39988տ, ցինկ՝ 127049տ, կապար՝ 76944տ, ոսկի՝ 37437կգ կամ՝ 19435կգ (պիրիտ հանքանյութի քանակը 2 անգամ պակաս լինելու և դրա 10%-ն էլ նմուշներում քիմիական անալիզներին մասնակից լինելու դեպքում), արծաթ՝ 497,6տ կամ՝ 264,7տ, սելեն՝ 42,77տ, տելուր՝ 28,48տ, քիսմուտ՝ 196,90տ, գալիում՝ 8,8տ, գերմանիում՝ 1,83տ, ինդիում՝ 8,06տ, կադմիում՝ 2305տ, ծծումբ՝ 1229455տ, երկաթ՝ 995636տ: Պոչամբար թափվող ծանր մետաղների ընդհանուր քանակը ի վերջո կարող է կազմել 1 242 673 (կամ 1.242.522)տ, որն էլ կարող է դառնալ աղետաբեր միջավայրի համար:

Պարոն Տեր-Պողոսյանից որպես «Ժառանգություն» ստացած Արմանիսի լեռնահանքային «europe.com.» ձեռնարկության նոր տնօրեն պարոն Վ.Պապյանը՝ Արմանիսի պիրիտ հանքանյութի հետ կապված ազնիվ մետաղների կորզման հարցերի քննարկման ժամանակ ասաց, որ «Պղնձի խտանյութը ստացվելու է պղնձի 23 տոկոս պարունակությամբ և պիրիտի մի մասն անցնելու է պղնձի խտանյութի մեջ (համեմայն դեպս այդպես է պարզվել տեխնոլոգիական հետազոտություններից)»:

Համաձայնելով ասվածի հետ՝ ընդունենք, որ Արմանիսի ոսկի-բազմամետաղային կազմավորման հանքայնացման՝ ներկայացված գալենիտ, սֆալերիտ, խալկոպիրիտ, պիրիտ, քվարց և այլ հանքանյութերով, պիրիտից բացի ոչ մի այլ հանքանյութ պղնձի խտանյութի մեջ չի անցնում (այդպես սովորաբար չի պատահում), այդ պարագայում պղնձի 23 տոկոսանոց խտանյութում պիրիտի պարունակությունը առավելագույնը կարող է կազմել ամբողջ խտանյութի 33,5%-ը, իսկ ամբողջ պիրիտի 15%-ը, հետևապես պոչամբար թափվող պիրիտի քանակը կարող է կազմել ամբողջ պիրիտի 85%-ը, որն էլ իր հետ կտանի բոլոր օգտակար տարրերի, այդ թվում նաև ազնիվ մետաղների 85%-ը: Այն էլ նշենք, որ պղնձի խտանյութ անցած պիրիտը իր օգտակար բոլոր տարրերով հանդերձ՝ նվիրվելու է օտար գնորդներին, հետևապես՝ փոշիացվելու է, որն էլ հավասարազոր է պոչամբարներ թափելուն: Իսկ եթե Արմանիսի հանքաքարերի հարստացման գործընթացում ստացվեն սելենիտիվ (պիրիտից նույնպես) կամ կոլելենիտի խտանյութեր և դրանք վերամշակվեն մետալուրգիական փուլով Հայաստանում, ապա կարող են կորզվել բոլոր օգտակար տարրերը բարձր տոկոսներով (Կապանի լաբորատորիայի տվյալներով՝ 86-88,5%):

Ամեն դեպքում Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրը շահագործել այնպես, ինչպես որ նախատեսված ու նախագծված է, չի կարելի, քանի որ պիրիտ հանքանյութի կորզում նախատեսված չէ, և պիրիտը որպես «ոչ օգտակար հանածո» թափվելու է պոչամբարներ, որն էլ իր հետ տանելու է ոսկու և արծաթի հաստատված պաշարներից բավականին ավելի ոսկի և արծաթ, ինչպես նաև մեծաքանակ ծծումբ ու երկաթ: Սույն հանգամանքի հետ կապված առաջարկում ենք.

1. հանքավայրում կատարել լրահետախուզական աշխատանքներ, հատկապես տարբեր ծագման, տարբեր ձևերով ներկայացված պիրիտ հանքանյութի հետազոտության գծով: Այդ նպատակի իրագործման համար օգտագործել հանքավայրի հետախուզման տարիներին անցած լեռնային փորվածքներն ու հորատահանուկները, որոնցից անհրաժեշտ է լինելու վերցնել նմուշներ քիմիական անալիզի համար,
2. անհրաժեշտության դեպքում հորատել մի քանի, նույնիսկ մի քանի տասնյակ հորատանցքեր, որոնց հորատահանուկը նմուշարկման պետք է ենթարկվի ամբողջությամբ,
3. նմուշարկման ենթարկել ինչպես նախկինում օգտակար հանածո համարվող՝ պղնձի, ցինկի, կապարի հանքանյութերով հանքային մարմինները, այնպես էլ պիրիտով, քվարց-պիրիտ հանքանյութերով հանքային մարմինները և պիրիտով հանքայնացված բոլոր տեսակի ապարները,
4. վերցված մի քանի հարյուր նմուշներն անալիզի ներկայացնել հիմնականում ոսկու և արծաթի գծով, իսկ դրանցից կազմված խմբակային նմուշները (70-100 նմուշ) ներկայացնել անալիզի պիրիտի հետ հարակից տարածված տարրերի՝ սելենի, տելուրի, բիսմութի, կադմիումի, գալիումի, գերմանիումի, ինդիումի գծով,
5. վերցնել տեխնոլոգիական հետազոտությունների համար 2-3 տեխնոլոգիական նմուշներ և ուղարկել հետազոտությունների,
6. սահմանված կարգով կազմել հաշվետվություն (կոնդիցիաների տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն) և հաշվարկված պաշարները ներկայացնել ՀՀ պաշարների պետական հանձնաժողովի հաստատմանը,
7. կազմել հանքավայրի շահագործման նոր նախագիծ,
8. կառուցվող հանքահարստացման ֆաբրիկան վերակողմնորոշել հայտնաբերված և զնահատված բոլոր օգտակար տարրերի բարձր տոկոսներով կորզման ուղղությամբ,
9. կառուցել ստացվելիք խտանյութերի վերամշակման մետալուրգիական ժամանակակից գործարան և ապա,
10. սկսել հանքավայրի շահագործման աշխատանքները:

**ՇԱՀՈՒՅԱՆԻ ՈՍԿԻ-ՔԱԶՄԱՄԵՏԱՊԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀԱՆՔԱՅԱՐՍՏԱՑՄԱՆ
ՌԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Շահումյանի ոսկի-քազմամետաղային հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Կապանի շրջանում, Կապան քաղաքից (Կենտրոնից) 4-5 կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևելք՝ Ողջի և Խալաջ գետերի միջև:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են յուրայի հասակի հրաբխանստվածքային առաջացումները: Հանքային մարմինները ներկայացված են քազմամետաղային հանքանյութերի երակներով ոչ մեծ հզորությամբ՝ 0,2-0,8 մ, հազվադեպ մինչև 1-1,5 մ: Հիմնական հանքանյութերը ներկայացված են կապարի՝ գալենիտ, ցինկի՝ սֆալերիտ, պղնձի՝ խալկոսիդիտ և ծծմբի հրաքարի՝ պիրիտ հանքանյութերով, որոնց հետ էլ կապված են ազնիվ մետաղներն ու հազվագյուտ տարրերը:

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող Է.Խաչատրյանի¹ հետազոտություններով Շահումյանի ոսկի-քազմամետաղային հանքավայրի ցինկի սֆալերիտ հանքանյութում հայտնաբերվել են՝ կադմիում 1-3% պարունակությամբ, ոսկի՝ 0,001-0,003%, արծաթ՝ 0,05-0,1%, տելուր՝ 0,05-0,1%, գալիում՝ 0,05-0,1%, քիսմուտ և ինդիում՝ 0,003-0,01%, գերմանիում՝ 0,001-0,003%: Կապարի գալենիտ հանքանյութում քիմիական անալիզներով հայտնաբերվել են ցրված և հազվագյուտ տարրեր՝ սելեն և տելուր՝ 0,001-0,003%, գերմանիում՝ 0,0003-0,0012%, գալիում՝ 0,0002%: Ծծմբի հրաքարի՝ պիրիտ հանքանյութի մեջ հայտնաբերվել են սելեն 0,003-0,008%, տելուր՝ 0,001-0,023%: Պղնձի խալկոսիդիտ հանքանյութում հայտնաբերվել են տելուր և ինդիում՝ 0,03-0,1%, կադմիում՝ 0,01-0,03%, արծաթ և քիսմուտ՝ 0,003-0,01%, ոսկի, գալիում և գերմանիում՝ 0,001-0,003%:

Շահումյանի ոսկի-քազմամետաղային հանքավայրի հետախուզման ընթացքում հայտնաբերվել և հետազոտվել են հիմնական տարրերից՝ պղնձ, կապար, ցինկ, ազնիվ մետաղներից՝ ոսկի և արծաթ, ցրված և հազվագյուտ տարրերից՝ կադմիում, սելեն, տելուր, գալիում, ինդիում, որոնց սկզբնական շրջանում հաստատված պաշարները կազմել են՝ պղնձինը 99,6 հազ. տ, կապարինը՝ 24 հազ. տ, ցինկինը՝ 392,4 հազ. տ, ոսկունը՝ 42400 կգ, արծաթինը՝ 810 տ, կադմիումինը՝ 4165 տ, սելենինը՝ 1967,5 տ, տելուրինը՝ 1062 տ, գալիումինը՝ 257,8 տ, ինդիումինը՝ 101,3 տ: Այդ նույն տարրերի ռեսուրսները հետախույզ-երկրաբանների կողմից գնահատվել են՝ պղնձինը՝ 50 հազ. տ, կապարինը՝ 13 հազ. տ, ցինկինը՝ 200 հազ. տ, ոսկունը՝ 20000 կգ, արծաթինը՝ 400 տ, կադմիումինը՝ 2200 տ, սելենինը՝ 1000 տ, տելուրինը՝ 550 տ, գալիումինը՝ 130 տ, ինդիումինը՝ 80 տ:

Քանի որ Շահումյանի ոսկի-քազմամետաղային հանքավայրի հետախուզության ընթացքում հետախույզ-երկրաբանների կողմից հայտնաբերվել, հետազոտվել և գնահատվել է ցրված ու հազվագյուտ տարրերի մեծ մասը՝ կադմիումը, սելենը, տելուրը, գալիումը և ինդիումը, դրանց վերաբերյալ տեսական հաշվարկներ չենք կատարում (ընդերքի հարստությունների արժեքային գնահատականը տալիս հիմք ենք ընդունում հետախույզ-երկրաբանների կողմից հաշվարկված պաշարները): Տեսական հաշվարկներ կատարում ենք միայն այն տարրերի համար, որոնք չեն հայտնաբերվել ու չեն հետազոտվել հետախույզ-երկրաբանների կողմից, սակայն հայտնաբերվել ու հետազոտվել են գիտնական-երկրաբանների կողմից: Դրանք գերմանիումն ու քիսմուտն են, որոնց տեսականորեն հաշվարկված քանակները ներառվում են ոչ թե պաշարների, այլ ռեսուրսների մեջ:

Գերմանիումը տարածված է ինչպես ցինկի սֆալերիտ հանքանյութում, այնպես էլ կապարի գալենիտ և պղնձի խալկոսիդիտ հանքանյութերում: Նշված հանքանյութերի

¹ Хачатурян Э.А. Минералогия, геохимия и генезис руд колчеданной формации Армянской ССР, Ереван, Изд. АН Арм.ССР, 1977, 318 с.

սկզբնական քանակը՝ մինչ հանքավայրի շահագործումը (դրանց օգտակար տարրերի պաշարներից ու ռեսուրսներից ելնելով), կազմել է՝ սֆալերիտինը՝ 882,86 հազ. տ, խալկոպիրիտինը՝ 432,75 հազ. տ, գալենիտինը՝ 42,73 հազ. տ: Դրանց մեջ գերմանիումի միջին պարունակությունը կազմել է՝ գալենիտի մեջ 0,00075%, իսկ սֆալերիտի ու խալկոպիրիտի մեջ՝ 0,002%: Այստեղից՝ գերմանիումի ողջ ռեսուրսը Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքաքարերում կազմում է 26,63 տ: Բիսմուտը հայտնաբերվել է սֆալերիտի և խալկոպիրիտի մեջ, որտեղ բիսմուտի միջին պարունակությունը կազմում է 0,0065%, հետևապես բիսմուտի ողջ ռեսուրսը կազմել է 85,51 տ:

ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված պաշարների մնացորդը 01.01.2007թ. դրությամբ, կազմել է՝ հանքաքարերինը՝ 14,21 մլն տ, պղնձինը՝ 86,49 հազ. տ, կապարինը՝ 21,35 հազ. տ, ցինկինը՝ 348,15 հազ. տ, ոսկունը՝ 36874,54 կգ, արծաթինը՝ 720,2 տ, կադմիումինը՝ 3837,54 տ, սելենինը՝ 195,79 տ, տելուրինը՝ 976,06 տ, գալիումինը՝ 234,89 տ, ինդիումինը՝ 140,07 տ:

Պիրիտ հանքանյութի քանակը, ինչպես Հայաստանի շատ այլ հանքավայրերում, Շահումյանի հանքավայրում ևս որոշված չէ, սակայն գիտենալով, որ ցանկացած հանքավայրում պիրիտի քանակը մշտապես շատ ավելի շատ է լինում, այն գերակշռում է բոլոր օգտակար տարրերի հանքանյութերին, և այդ իսկ պատճառով էլ այստեղ ևս պիրիտի քանակը պայմանականորեն ընդունում ենք Շահումյանի հանքավայրի պղնձի, ցինկի և կապարի հանքանյութերի քանակի չափով՝ 776080տ արդյունաբերական պաշարներում և 457543տ կանխատեսումային ռեսուրսներում, ընդհանուրը՝ 1233623տ:

Պիրիտի հետ կապված օգտակար տարրերի քանակները կազմում են.

ա. արդյունաբերական հանքաքարերում՝ սելենինը՝ 42,68տ, տելուրինը՝ 93,13տ, ծծմբինը՝ 414815տ, երկաթինը՝ 361265տ,

բ. կանխատեսումային ռեսուրսներում՝ սելենինը՝ 25,17տ, տելուրինը՝ 54,87տ, ծծմբինը՝ 244556տ, երկաթինը՝ 212987տ,

գ. արդյունաբերական հանքաքարերում և կանխատեսումային ռեսուրսներում համատեղ՝ սելենինը՝ 67,85տ, տելուրինը՝ 148տ, ծծմբինը՝ 659371տ, երկաթինը՝ 574252տ:

Ամբողջությամբ պոչամբարներ թափվող, փաստորեն փոշիացվող՝ պիրիտի հետ սերտորեն կապված, օգտակար տարրերի արժեքը՝ 2007թ. մարտ-ապրիլ ամիսների գներով, կարող է կազմել 621,578 մլն դոլար:

Ունենալով Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի պաշարների և ռեսուրսների տվյալները՝ ստորև կարող ենք տալ այդ հանքավայրի ընդերքի հարստությունների արժեքային գնահատականը:

Աղյուսակ 1

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ արդյունաբերական (հաշվեկշռային) պաշարների արժեքի հաշվարկը (առ 01.01.2010թ. դրությամբ)

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Պղինձ	տ	86490	7465	645.647.850
Կապար	տ	21350	2000	42.700.000
Ցինկ	տ	348150	3400	1.183.710.000
Ոսկի	կգ	36874,54	31500	1.161.548.010
Արծաթ	տ	720,2	450000	324.090.000
Կադմիում	տ	3837,49	5330	20.453.822
Սելեն	տ	195,79	52220	10.224.154
Տելուր	տ	976,06	116000	113.222.960
Գալիում	տ	234,89	460000	108.049.400
Ինդիում	տ	140,07	680000	95.247.600
Ծծումբ	տ	792844	650	515.348.600
Երկաթ	տ	538454	300	161.536.200
Ընդամենը				4.381.778.596

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ կանխատեսումային ռեսուրսների արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Պղինձ	տ	50000	7465	373.250.000
Կապար	տ	13000	2000	26.000.000
Ցինկ	տ	200000	3400	680.000.000
Ոսկի	կգ	20000	31500	630.000.000
Արծաթ	տ	400	450000	180.000.000
Կարմիրում	տ	2200	5330	11.726.000
Բիսմութ	տ	85,51	24440	2.089.644
Սելեն	տ	1000	52220	52.220.000
Տելուր	տ	550	116000	63.800.000
Գերմանիում	տ	26,63	950000	25.298.500
Գալիում	տ	130	460000	59.800.000
Ինդիում	տ	80	680000	54.400.000
Ծծումբ	տ	395135	650	256.837.750
Երկաթ	տ	256933	300	77.079.900
Ընդամենը				2.492.501.794

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ արդյունաբերական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների, արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Պղինձ	տ	136490	7465	1.018.897.850
Կապար	տ	34350	2000	68.700.000
Ցինկ	տ	548150	3400	1.863.710.000
Ոսկի	կգ	56874,54	31500	1.791.548.010
Արծաթ	տ	1120,2	450000	504.090.000
Կարմիրում	տ	6037,45	5330	32.179.608
Բիսմութ	տ	85,51	24440	2.089.864
Սելեն	տ	1195,79	52220	62.444.154
Տելուր	տ	1526,06	116000	177.022.960
Գերմանիում	տ	26,63	950000	25.298.500
Գալիում	տ	364,89	460000	167.849.400
Ինդիում	տ	220,07	680000	149.647.600
Ծծումբ	տ	1.187.979	650	772.186.350
Երկաթ	տ	795.387	300	238.616.100
Ընդամենը				6.874.280.396

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի տեխնիկատնտեսական հիմնավորումը կատարվել է լեռնահանքային ձեռնարկության հզորության երկու տարբերակով՝ 300 հազ.տ և 500 հազ. տ տարեկան¹: Երկու դեպքում էլ ձեռնարկության արդյունավետությունը շատ բարձր էր ստացվել, սակայն մեր հանրապետության համար ընդունելի է առաջին տարբերակը, որի դեպքում ձեռնարկության «կյանքի տևողությունը» մինչև հանքավայրի շահագործման իրավունքը օտարներին տրամադրումը, կարող էր կազմել 57,3 տարի: Այստեղ ցանկանում ենք խոսել մի շատ կարևոր և «բարի» ավանդույթի մասին, որը գործում էր ԽՍՀՄ օրոք. ԽՍՀՄ-ի օրոք ցանկացած հանքավայրի տեխնիկատնտեսական հիմնավորումը կատարվում էր լեռնահանքային ձեռնարկության հզորության մի քանի տարբերակով:

¹ Мартикян К., Саруханян Л. Отчет “ТЭО постоянных кондиций для подсчета запасов Шаумянского золото-полиметаллического месторождения”. Армгеолфонды, Ереван, 1999.

Ընդունվում էր այն տարբերակը, որն ապահովում էր բավարար շահույթ և հանքավայրի շահագործման տևական ժամանակահատված: Չէր ընդունվում և խոտանվում էր այն տարբերակը, որն ապահովում էր մեծ շահույթ, բայց ձեռնարկության աշխատանքի կարճ ժամանակահատված և այն տարբերակը, որն ապահովում էր շատ փոքր շահույթ, բայց ձեռնարկության «կյանքի տևողության» շատ մեծ ժամանակահատված (միշտ ընդունվում էր «ոսկե միջինը»): Կարծում ենք, այդպես պետք է լինի նաև այժմ, բայց ..., ցավալի է, որ այդպես չի լինում և ոչ մի դեպքում:

Այժմ, երբ հանքավայրերի շահագործման իրավունքը տրվել է օտարներին և Հայաստանի անհատ ձեռներեցներին ու ոչ պետական ձեռնարկություններին, հանքավայրերը շահագործվում են բարբարոսաբար. օրստօրե ավելացվում են հանքաքարերի արդյունահանման ու մշակման քանակները, հանքաքարերի արդյունահանումն ու մշակումը կատարվում է ընտրովի. օգտակար տարրերով առավել հարուստ տեղամասերից կորզվում են փոքրաթիվ օգտակար տարրեր (1-3) և այն էլ շատ ցածր օգտահանման գործակցով (60-70, լավագույն դեպքում 80 տոկոսով), իսկ ձորերն ու գետերն են թափվում շատ-շատերն ու շատ կարևորները:

Ինչևիցե, հանքաքարերից մետաղների կորզումը խտանյութերի մեջ, տվյալ հանքավայրի հանքաքարերի համար մշակված և ընդունված տեխնոլոգիաների համաձայն, պետք է կազմեր՝ պղնձի համար 73,0 %, ցինկի համար՝ 80,0%, կապարի համար՝ 48,0 %, ոսկունը պղնձի խտանյութի մեջ՝ 53,2%, ոսկունը ցինկի խտանյութի մեջ՝ 19,35 %, ոսկունը կապարի խտանյութի մեջ՝ 9,68 %, ոսկու գումարային կորզումը՝ 82,23 %, արծաթինը պղնձի խտանյութի մեջ՝ 45,8 %, արծաթինը ցինկի խտանյութի մեջ՝ 22,94 %, արծաթինը կապարի խտանյութի մեջ՝ 13,55 %, արծաթի գումարային կորզումը՝ 82,29 %: Սակայն տեխնոլոգիական հետազոտությունները հաստատել են, որ ոսկու և արծաթի կորզման ամենաբարձր արդյունքները ստացվել են կոլեկտիվ ֆլոտացիոն սխեմայով, որի դեպքում ոսկու կորզումը կազմում է 94,87%, իսկ արծաթինը՝ 92%, բայց, ցավոք, դրանք, նույնիսկ առաջին տարբերակը, իրականում չեն կատարվում. կորզումները շատ ավելի ցածր են 80%-ից:

Շահումյանի հանքավայրի հանքաքարերի հարստացման համար մշակված տեխնոլոգիաների համաձայն՝ մետաղների պարունակությունը խտանյութերի մեջ պետք է կազմեր՝ պղնձինը պղնձի խտանյութում՝ 16,0 %, ցինկինը ցինկի խտանյութում՝ 53,8 %, կապարինը կապարի խտանյութում՝ 19,2 %, ոսկունը պղնձի խտանյութում՝ 49,4 գ/տ, ոսկունը կապարի խտանյութում՝ 70,9 գ/տ, ոսկունը ցինկի խտանյութում՝ 14,0 գ/տ, արծաթինը պղնձի խտանյութում՝ 819,4 գ/տ, արծաթինը ցինկի խտանյութում՝ 318,9 գ/տ, արծաթինը կապարի խտանյութում՝ 1915,0 գ/տ :

Լեռնահանքային ձեռնարկությունը տարեկան թողարկելու էր. պղնձի խտանյութ՝ 7,12 հազ. տ, ցինկի խտանյութ՝ 9,1 հազ. տ, կապարի խտանյութ՝ 0,91 հազ. տ, որոնցից կորզման ենթակա մետաղների քանակը պետք է կազմեր՝ պղնձինը 1138,8 տ, ցինկինը՝ 4920 տ, կապարինը՝ 172,8 տ, ոսկունը՝ 541,2 կգ, արծաթինը՝ 10,4 տ: Այս պարագայում լեռնահանքային ձեռնարկության տարեկան հասույթը, առանց հաշվի առնելու հարակից տարածված մյուս տարրերի արժեքը, կարող էր կազմել 47,302 մլն դոլար, իսկ շահույթը՝ 15,66 մլն դոլար: Սակայն Շահումյանի հանքավայրի պաշարներում թվարկված բոլոր օգտակար տարրերի 90%-ով կորզման պարագայում ձեռնարկության տարեկան հասույթը կարող էր կազմել 70,9 մլն դոլար, իսկ շահույթը՝ ավելի քան 28 մլն դոլար և տարեկան 300 հազ. տ հանքաքար արդյունահանելու պարագայում 01.01.2010թ. դրությամբ մնացած պաշարներով լեռնահանքային ձեռնարկությունը ապահովված կարող էր լինել ավելի քան 47,3 տարի:

2000թ. Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հենքի վրա գործող լեռնահանքային ձեռնարկությունը հանքավայրի ընդերքից արդյունահանել և մշակել է 56746 տ հանքաքար, որից ստացվել է՝ պղնձի խտանյութ՝ 803,7 տ, պղնձի 14,79 % պարունակությամբ, ցինկի խտանյութ՝ 527,93 տ, ցինկի 54,39 % պարունակությամբ: Կապարի անջատ խտանյութ չի ստացվել, չնայած նրան, որ այս հանքավայրի հանքաքարերի հարստացման համար մշակված տեխնոլոգիական ցիկլում դա նախատեսված եղել է: Որոշ մասնագետների, հատկապես լեռնահանքային ձեռնարկության ղեկավարության կարծիքով, կապարը հարակից

մետաղների՝ ոսկու, արծաթի և գերմանիումի հետ միասին անցել է ցինկի և պղնձի խտանյութերի մեջ:

Ինչևիցե, ունեցած տվյալներով հաշվարկենք 2000 թվականին օգտակար տարրերի կորուսմները: 1996թ. հունվարի 1-ի դրությամբ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունաբերական պաշարները կազմել են.

հանքաքարերինը՝ 16,6 մլն տ, պղնձինը՝ 99,6 հազ.տ, կապարինը՝ 24 հազ.տ, ցինկինը՝ 392,4 հազ.տ, ոսկունը՝ 42400կգ, արծաթինը՝ 810տ, կադմիումինը՝ 4165տ, սելենինը՝ 1967,5տ, տելուրինը՝ 1062տ, գալիումինը՝ 257,8տ, ինդիումինը՝ 101,3տ, հետևապես նշված տարրերի միջին պարունակությունները կազմել են՝ պղնձինը՝ 0,6%, կապարինը՝ 0,1446%, ցինկինը՝ 2,364%, ոսկունը՝ 2,554գ/տ, արծաթինը՝ 48,8գ/տ, կադմիումինը՝ 250,9գ/տ, սելենինը՝ 118,52գ/տ, տելուրինը՝ 63,98գ/տ, գալիումինը՝ 15,53գ/տ, ինդիումինը՝ 6,1գ/տ:

Արդյունահանված և մշակված 56746տ հանքաքարերում վերը նշված տվյալների հիման վրա պարունակվել են՝ պղինձ՝ 340,48տ, կապար՝ 82տ, ցինկ՝ 1341,47տ, ոսկի՝ 144,93կգ, արծաթ՝ 2,77տ, կադմիում՝ 14,24տ, սելեն՝ 6,72տ, տելուր՝ 3,63տ, գալիում՝ 0,88տ, ինդիում՝ 0,35տ:

Պղնձի 803,7տ խտանյութում կորզված պղնձի քանակը կազմել է 118,87տ, ցինկի 527,93տ խտանյութում կորզված ցինկի քանակը կազմել է 287,14տ, կապարի խտանյութ չի ստացվել, և եթե մտածենք, որ կապարն իրոք անցել է պղնձի և ցինկի խտանյութեր, ուրեմն դրա կորզման քանակն էլ պետք է լինի պղնձի և ցինկի կորզումներին համապատասխան:

340,48տ պղնձից կորզվել է 118,87տ, հետևապես պղնձի կորզումը կազմել է 34,91%, 1341,47տ ցինկից կորզվել է 287,14տ ցինկ, հետևապես ցինկի կորզումը կազմել է 21,4%: Ընդունենք, որ կապարը հավասարապես անցել է պղնձի և ցինկի խտանյութերի մեջ, հետևապես կապարի կորզումը կազմել է 28,155% (կորզված կապարի քանակը կազմել է 23,09տ):

Ծանոթություն. Շահումյանի հանքավայրի շահագործման ժամանակ օգտակար տարրերի տեղի ունեցած կորուստները նվազ ներկայացնելու նպատակով հանքավայրի երկրաբանները «ՏԴԲ» ձևի հաշվետվության մեջ հանքաքարերում պարունակվող պղինձ և ցինկ օգտակար տարրերի պարունակությունները ներկայացրել են մոտ 2 անգամ պակաս հանքավայրի միջինից (արդյունահանված և մշակված 56746տ ապրանքային հանքաքարերում պղնձի պարունակությունը ներկայացված է 0,31% հանքավայրի 0,6% միջինի դիմաց, իսկ ցինկինը՝ 1,3% հանքավայրի 2,364% միջինի դիմաց): Նշված տվյալներով էլ հաշվարկված՝ պղնձի կորզումը կազմել է 65,8% (կորուստը՝ 34,2%), իսկ ցինկի կորզումը՝ 39% (կորուստը՝ 61%), որոնք էլ դարձյալ շատ վատ ցուցանիշներ են:

Հիմնական օգտակար տարրերի (պղնձի, ցինկի և կապարի), որոնց հետ էլ սերտորեն կապված են հարակից բաղադրիչները, միջին հավասարակշռված կորզումը կազմել է.

$$\frac{(340,48 \times 34,9) + (1341,47 \times 21,4) + (82 \times 28,155)}{340,48 + 1341,47 + 82} = \frac{42902,32}{1763,95} = 24,32\% :$$

Ենթադրելով, որ հիմնական օգտակար տարրերի հետ սերտորեն կապված օգտակար բաղադրիչներն էլ խտանյութերի մեջ են անցել միջին կորզմանն ուղիղ համեմատական քանակներով, ապա դրանց կորզված քանակները կազմել են՝ ոսկունը՝ 35,25կգ, արծաթինը՝ 0,67տ, կադմիումինը՝ 3,46տ, սելենինը՝ 1,63տ, տելուրինը՝ 0,88տ, գալիումինը՝ 0,214տ, ինդիումինը՝ 0,085տ: Պոչամբարներ թափված տարրերի քանակը կազմել է՝ պղնձինը՝ 221,61տ, կապարինը՝ 58,91տ, ցինկինը՝ 1054,3տ, ոսկունը՝ 109,68կգ, արծաթինը՝ 2,1տ, կադմիումինը՝ 10,78տ, սելենինը՝ 5,09տ, տելուրինը՝ 2,75տ, գալիումինը՝ 0,666տ, ինդիումինը՝ 0,265տ:

Պոչամբարներ թափված տարրերի արժեքը 2007թ. մարտ-ապրիլ ամիսների գներով կազմել է 10,886 մլն դոլար, այն պարագայում, երբ կորզված և վաճառքի ենթակա պղինձ, ցինկ, ոսկի և արծաթ տարրերի գինը (նույն 2007թ. գներով) կազմել է 3,275 մլն դոլար:

Ստացված պղնձի խտանյութը կարելի է գնահատել որպես անորակ՝ պղնձի ցածր պարունակության պատճառով: Նախագծի (մշակված տեխնոլոգիայի) համաձայն՝ աշխատելու դեպքում պղնձի պարունակությունը խտանյութի մեջ պետք է կազմեր 16 %: Սակայն պետք է նշել, որ այդ տեխնոլոգիական մշակումը արդեն իսկ հնացած և անպետք է այսօրվա համար: Այժմ պղնձի 16 % պարունակության խտանյութերը միջազգային շուկայում պահանջարկ չեն գտնում, մրցունակ լինել չեն կարող և չեն վաճառվում: Միջազգային շուկայում մրցունակ կարող են լինել պղնձի այն խտանյութերը, որոնցում պղինձ մետաղի պարունակու-

թյունը բարձր է 26 տոկոսից: Այստեղից հետևում է, որ Շահումյանի հանքավայրի հանքաքարերի մշակման և խտանյութերի ստացման համար անհրաժեշտ է ունենալ ժամանակակից պահանջները բավարարող հանքահարստացման տեխնոլոգիաներ:

2002թ. Կապանի հանքահարստացուցիչ ձեռնարկության բաժնետոմսերի լրիվ փաթեթը 1,25 մլն դոլարով ձեռք էր բերել շվեյցարական «Դենո» ընկերությունը և դարձել այդ ձեռնարկության լիիրավ սեփականատերը: Բնականաբար Շահումյանի ոսկի-բազմամետաղային, ինչպես նաև Կապանի պղինձ-կոլչեդանային հանքավայրերի շահագործման իրավունքն էլ տրվել էր այդ ընկերությանը, որի ծրագրերն էլ առաջիկա 5 տարիներին ընդգրկել էին:

1. Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրում լրահետախուզական աշխատանքների կատարում, որն էլ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2008թ. տրված տեղեկության համաձայն, կատարվում է և պետք է ավարտվի 2010թ. վերջին,
2. օգտակար տարրերի կորզման գործակցի մեծացման նպատակով հանքահարստացման նորագույն տեխնոլոգիաների մշակում և ներդրում (թե ինչպես է կատարվել այս ծրագիրը և, կատարվե՞լ է արդյոք, կտեսնենք հետո),
3. լեռնահանքային ձեռնարկության կարողության (արտադրողականության), ասել է թե հանքաքարերի արդյունահանման և մշակման, կրկնակի մեծացում: Հետագայում մենք տեղեկացանք, որ նշված ընկերությունը մտադրվել է Շահումյանի հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանել և մշակել մեկ մլն տ հանքաքար, որն էլ ասում է այն մասին, որ ձեռնարկության արտադրական կարողությունը կմեծացվի ոչ թե կրկնակի, այլ եռակի և նույնիսկ բավականին ավելի,
4. խտանյութերի վերամշակման մետալուրգիական գործարանի կառուցում (ծրագրի համաձայն նախատեսված էր իրագործումն սկսել ձեռնարկությանը տիրանալուց 4 տարի հետո, սակայն անցել են նշված 4 տարիները (արդեն 8-րդ տարին է ընթանում), սակայն մետալուրգիական գործարանի նախագիծ անգամ գոյություն չունի: Այժմ Շահումյանի հանքավայրի շահագործումն իրականացնում է շվեյցարա-կանադական «Դինո գոլդ մայնինգ» համատեղ ընկերությունը, որի ծրագրի մասին մենք տեղեկություն չունենք: Բայց և այնպես պետք է նշել.

- մենք կտրականապես դեմ ենք մեր ընդերքի հարստություններն օտարներին «նվիրելուն», բայց քանի որ արդեն իսկ «նվիրվել» են (Հայաստանի բազմաթիվ խոշորագույն և կարևորագույն հանքավայրեր վաղուց ի վեր շահագործվում են օտարերկրյա ֆիրմաների և քաղաքացիների կողմից. օտարերկրացիները «մտել են» նույնիսկ Արցախի Հանրապետություն), ապա Հայաստանի կառավարությունը պարտավոր է անել ամեն ինչ, որպեսզի մեր ժողովրդի հարստությունները չփոշիացվեն ու չթալանվեն, շահագործվեն ոչ բարբարոսաբար՝ ոչ ընտրովի և ոչ խոշոր ծավալներով, այլ համալիր և առանց թունավորելու բնական միջավայրը:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում տեղեկացնել ԽՍՀՄ-ի տարիներին գործող մի շատ կարևոր՝ ավանդույթ դարձած պարտավորության մասին. երկրաբաններիս առջև պարտավորեցնող խնդիր էր դրված՝ մետաղական օգտակար հանածոների շահագործվող հանքավայրերի տարածքում՝ դրա խորքում, թևերում կամ անմիջական հարևանությամբ, կատարել երկրաբանական որոնողական ու հետախուզական աշխատանքներ այնպիսի ուղղվածությամբ, որպեսզի յուրաքանչյուր տարի տվյալ հանքավայրի պաշարներին ավելացվեն հանքաքարերի այնքան պաշարներ, որքան արդյունահանվում է դրա ընդերքից: Այդ ավանդույթ-պարտավորությունը այժմ՝ հետխորհրդային այս ամբողջ ժամանակաշրջանում, չի գործում և շատ վատ է, որ չի գործում: Այժմ, մեր հաստատ համոզմամբ, Հայաստանի կառավարությունն ուղղակի պետք է պարտավորեցնի հանքավայրեր շահագործողներին՝ բոլորին առանց բացառության (ընդհուպ մինչև Քաջարանի նման խոշոր հանքավայրի շահագործողին), որպեսզի նրանք իրենց միջոցների (շահույթի) հաշվին կատարեն նշված պարտավորությունները, շարունակեն մեր վաղեմի և բարի ավանդույթը:

Երրորդ կետի բովանդակությունը խոսում են այն մասին, որ հանքավայրը շահագործող ձեռնարկությունը՝ «Դինո գոլդ մայնինգ»-ը, ընդունել ու իրագործելու է Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի համար ԽՍՀՄ-ի օրոք տեխնիկատնտեսական հաշվարկով հիմնավորված արդյունավետ շահագործման 57 տարի ժամանակահատվածը (որով նախա-

տեսվում էր նշված հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանել 300 հազ. տ հանքաքար) կրճատել մինչև 15 տարի և այդ կարճ ժամանակահատվածում արդյունահանել, ԽՍՀՄ-ի օրոք կառուցված հանքահարստացուցիչ ֆաբրիկայում մշակել օգտակար տարրերով առկեցուն ամենահարուստ հանքաքարերը, կորզել հնարավորինս շատ մեծ շահույթներ, փչացնել ու ապականել այդ հոյակապ հանքավայրն ու հեռանալ Հայաստանից՝ մտովի ծաղրելով մեր ժողովրդի միամիտ կեցվածքը:

Քանի որ ՀՀ լեռնահանքային ձեռնարկությունները ՀՀ կառավարության անթաքույց թողտվությամբ ՀՀ կառավարությանն ու երկրաբանական ֆոնդին չեն ներկայացնում ԽՍՀՄ-ի օրոք մշակված պահանջվող ձևի (Տրք) տարեկան հաշվետվություններ, որտեղ պետք է լինեն.

- հանքավայրերի ընդերքից արդյունահանված հանքաքարերի քանակի վերաբերյալ ստույգ տվյալները,
- արդյունահանված և մշակված հանքաքարերում օգտակար բոլոր բաղադրիչների պարունակությունները,
- ստացված խտանյութերի քանակներն ըստ օգտակար տարրերի,
- օգտակար տարրերի պարունակություններն ու քանակները խտանյութերում,
- շահագործման առաջին օրվանից մինչև տվյալ տարին ներառյալ հանքավայրի ընդերքից արդյունահանված խանքաքարերի քանակը,
- պաշարների մնացորդը հանքավայրում և օգտակար տարրերի պարունակությունները և այլն, ուստի մենք ստիպված ենք պոչամբարներ թափվող տարրերի քանակները հաշվարկել հանքավայրերի շահագործման նախագծերի կամ տեխնիկատնտեսական հիմնավորումների տվյալների համաձայն, որն, իհարկե, չի արտացոլի պոչամբարներ թափվող տարրերի իրական քանակներն ու պարունակությունները, քանի որ օգտակար տարրերի իրական կորզումները շատ ավելի ցածր են լինելու նախագծված կորզումներից:

Պայմանականորեն ընդունենք, որ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը շահագործելիս օգտակար տարրերի կորզումները կկատարվեն այդ հանքավայրի տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն, այսինքն՝ օգտակար տարրերի կորզումները հանքաքարերից խտանյութերի մեջ կկազմեն՝ պղնձինը՝ 73%, ցինկինը՝ 80%, կապարինը՝ 48%, ոսկունը՝ 82,23%, արծաթինը՝ 82,29%: Լեռնահանքային ձեռնարկությունն աշխատանքային այլ նախագիծ չունի և այժմ աշխատում ու աշխատելու է այդ «նախագծով», այսինքն՝ ծրագրված է, որ պետք է կորզվեն միայն նշված մետաղները՝ պղնձը, ցինկը, կապարը, ոսկին և արծաթը, իսկ մյուսները (կադմիումը, բիսմութը, սելենը, տելուրը, գերմանիումը, գալիումը, ինդիումը, ծծումբը, երկաթը) անտեսվում են, և դրանց մի մասը, որն անցնելու է խտանյութերի մեջ, խտանյութերի վաճառքի պարագայում նվիրվելու է գնորդներին (օտարներին), իսկ մյուս մասը՝ այն մասը, որն օգտակար տարրերի թերկորզման և պիրիտ հանքանյութի չկորզման հետևանքով դուրս է մնալու խտանյութերից, թափվելու է պոչամբարներ և կորստի է մատնվելու, այսինքն՝ փոշիացվելու: Ստացվում է, որ փոշիացվելու են երկու մասերն էլ:

Այժմ հաշվարկենք Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունաբերական պաշարների շահագործման հետևանքով կորզվող օգտակար տարրերի քանակները և դրանց հետ էլ կապված պոչամբարներ թափվող տարրերի քանակները.

- 86490տ պղնձից տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն՝ կկորզվի 63377,7տ (կորզումը՝ 73%), իսկ պոչամբարներ կթափվի 23112,3տ,
- 348150տ ցինկից կկորզվի 278520տ (կորզումը՝ 80%), պոչամբարներ կթափվի 69630տ
- 21350տ կապարից կկորզվի 10248տ (կորզումը՝ 48%), պոչամբարներ կթափվի 11102տ,
- 36874,54կգ ոսկուց կկորզվի 30321,9կգ (կորզումը՝ 82,23%), պոչամբարներ կթափվի 6552,64կգ,
- 720,2տ արծաթից կկորզվի 592,65տ (կորզումը՝ 82,29%), պոչամբարներ կթափվի 127,55տ:

Շահումյանի հանքավայրի հետախուզման ժամանակ հիմնական օգտակար տարրերի հետ հարակից տարածված ցրված և հազվագյուտ տարրերի պաշարները գնահատված են բոլոր 3 տարրերի համար միասնաբար՝ առանց մասնատելու ըստ հիմնական տարրերի: Այդ

պատճառով էլ հարակից բաղադրիչների կորզումները (դրանց անցումը խտանյութերի մեջ) հաշվարկելու համար մեզ անհրաժեշտ է ունենալ հիմնական տարրերի՝ պղնձի, ցինկի և կապարի միջին հավասարակշռված կորզումը, որը կազմում է 77,17%:

Այս թիվը՝ 77,17%-ը, ցույց է տալիս, որ 3 հիմնական օգտակար տարրերի հետ հարակից տարածված (գուգակցվող) ազնիվ մետաղների (ոսկու և արծաթի) կորզումները տեխնոլոգիական ցիկլում չեն կարող կազմել 82,23 և 82,29%: Այդ մետաղների կորզումները լավագույն դեպքում կարող են կազմել 77,17%: «Լավագույն դեպքում» ասելով պետք է հասկանալ այն դեպքը, երբ արդյունահանվող և մշակման ենթակա երեք հիմնական հանքանյութերը կորզվեն տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն:

Մյուս բոլոր հարակից բաղադրիչների, բացառությամբ ծծմբի և երկաթի, կորզումները (անցումները հանքաքարերից խտանյութերի մեջ) պետք է կազմեն լավագույն դեպքում 77,17%: Այդ պարագայում Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքաքարերի հարստացման գործընթացում կադմիումի կորզումը (անցումը խտանյութերի մեջ) կկազմի 2691,39տ, որը նվիրվելու է խտանյութերի գնորդներին, իսկ 876,1տ կթափվի պոչամբարներ, սելենի կորզումը կկազմի 151,09տ, իսկ պոչամբարներ կթափվի 44,7տ, տելուրի կորզումը՝ 753,22տ, պոչամբարներ կթափվի 222,84տ, գալիումի կորզումը՝ 181,26տ, պոչամբարներ կթափվի 53,63տ, ինդիումի կորզումը՝ 108,09տ, պոչամբարներ կթափվի 31,98տ, ծծմբի կորզումը (պղնձի խալկոպիրիտ, ցինկի սֆալերիտ և կապարի գալենիտ հանքանյութերի հետ) 202.173տ, պոչամբարներ կթափվի 58986տ և 669895տ պիրիտի հետ, երկաթի կորզումը (պղնձի խալկոպիրիտ հանքանյութի հետ)՝ 55707տ, պոչամբարներ կթափվի 20129տ և 462618տ պիրիտի հետ:

Այժմ հաշվարկենք Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունաբերական պաշարների շահագործման հետ կապված փոշիացվող՝ օտարներին նվիրվող և պոչամբարներ թափվող օգտակար տարրերի արժեքն ըստ «փոշիացման» բնագավառների.

ա. խտանյութերի վաճառքի պարագայում գնորդներին (օտարներին) նվիրվող տարրերի (կադմիումի, սելենի, տելուրի, գալիումի, ինդիումի, ծծմբի և երկաթի) արժեքը կկազմի 326,216 մլն դոլար,

բ. օգտակար տարրերի թերկորզման և պիրիտ հանքանյութի չկորզման հետևանքով պոչամբարներ թափվող տարրերի արժեքը կկազմի 1393,151 մլն դոլար,

գ. փոշիացվող օգտակար տարրերի ընդհանուր արժեքը կկազմի 1719,367 մլն դոլար:

Տարեկան 300 հազ. տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում խտանյութերի տեսքով կորզվող տարրերի քանակը կկազմի 17,13 հազ.տ, հետևապես յուրաքանչյուր տարի պոչամբարներ կթափվեն 282,87 հազ.տ փշրված ու մանրացված, օգտակար տարրերով համեմատաբար աղքատ, բացառությամբ ծծմբի և երկաթի, հանքաքարեր: Հանքավայրի արդյունաբերական ամբողջ (16,6 մլն տ) պաշարների շահագործումից հետո պոչամբարներում կուտակված կլինեն 15640 հազ.տ պոչանքներ, որոնց մեջ թունավոր սելեն և տելուր տարրերի քանակները կկազմեն համապատասխանաբար 51,2 և 256,3տ և ծանր մետաղներ (պղինձ, կապար, ցինկ, կադմիում, ոսկի, արծաթ, գալիում, ինդիում և երկաթ)՝ 587.687,1տ, որոնք էլ բավականին մեծ վտանգ են պարունակում պոչամբարների շրջակայքի բնակավայրերի բնակիչների համար:

Այժմ նույն հաշվարկները կատարենք Շահումյանի հանքավայրի արդյունաբերական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների ամբողջովին շահագործման հետ կապված:

01.01.2007թ. դրությամբ Շահումյանի հանքավայրի հանքաքարերի արդյունաբերական պաշարների և կանխատեսումային ռեսուրսների գումարային քանակը կազմում է 23,21 մլն տ, իսկ օգտակար տարրերի քանակները բերված են աղյուսակ 3-ում:

Տարեկան 300 հազ. տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում կորզվող օգտակար տարրերի քանակները կկազմեն՝ պղնձինը՝ $1765,7 \times 0,73 = 1289$ տ, ցինկինը՝ $7091 \times 0,8 = 5673$ տ, կապարինը՝ $444,4 \times 0,48 = 213,3$ տ, ոսկունը՝ $735,76 \times 0,8223 = 605,02$ կգ, արծաթինը՝ $14,49 \times 0,8229 = 11,92$ տ: Հիմնական օգտակար տարրերի միջին հավասարակշռված կորզումները կազմում են 77,17%, հետևապես նշված 3 հիմնական տարրերի հետ հարակից այլ տարրերի կորզման քանակները կկազմեն՝ կադմիումինը՝ $78,1 \times 0,7717 = 60,27$ տ, բիսմուտինը՝ $1,11 \times 0,7717 = 0,85$ տ, սելենինը՝ $15,47 \times 0,7717 = 11,94$ տ, տելուրինը՝ $19,74 \times 0,7717 = 15,23$ տ,

գալիումինը՝ $4,72 \times 0,7717 = 3,64$ տ, գերմանիումինը՝ $0,3445 \times 0,7717 = 0,2658$ տ, ինդիումինը՝ $2,85 \times 0,7717 = 2,197$ տ, ծծմբինը՝ 4181,8տ, երկաթինը՝ 1133տ:

Պոչամբարներ թափվող տարրերի քանակները կկազմեն.

- պղնձինը՝ 476,7տ, ցինկինը՝ 1448տ, կապարինը՝ 231,1տ, ոսկունը՝ 130,74կգ, արծաթինը՝ 2,57տ, կադմիումինը՝ 17,83տ, քիսմուտինը՝ 0,26տ, սելենինը՝ 3,53տ, տելուրինը՝ 4,51տ, գալիումինը՝ 1,08տ, գերմանիումինը՝ 0,0787տ, ինդիումինը՝ 0,653տ, ծծմբինը՝ 11586,2տ, երկաթինը՝ 9157տ (այստեղ հաշվառված չեն պիրիտ հանքանյութի ծծումբն ու երկաթը):

Պիրիտ հանքանյութի հետ պոչամբար թափվող ծծմբի քանակը կկազմի 668.635տ, իսկ երկաթինը՝ 581.460տ, որոնց արժեքը կկազմի 609.050.750 դոլար:

Յուրաքանչյուր տարի պոչամբարներ թափվող տարրերի արժեքը կարող է կազմել 26 մլն 219 հազ. 395 դոլար, իսկ հանքավայրի ամբողջ պաշարներն ու ռեսուրսները շահագործելու պարագայում՝ 2026,76 մլն դոլար:

Խտանյութեր անցած և խտանյութերի վաճառքի ժամանակ յուրաքանչյուր տարի գնորդներին նվիրվող օգտակար տարրերի՝ կադմիումի, քիսմուտի, սելենի, տելուրի, գալիումի, գերմանիումի, ինդիումի, ծծմբի և երկաթի արժեքը կկազմի 9,211 մլն դոլար, իսկ Շահումյանի հանքավայրի ողջ պաշարներն ու ռեսուրսները շահագործելուց հետո՝ 722,02 մլն դոլար:

Այսպիսով, Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ողջ պաշարներն ու ռեսուրսները՝ հանքավայրի տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն, շահագործելու պարագայում (օգտակար տարրերը նախատեսված տոկոսներով կորզելու, որի հավանականությունը, մեր գնահատմամբ, չի գերազանցի 10%-ի սահմանագիծը, իսկ դրա վառ ապացույցը կարող է հանդիսանալ 2000 թվականի կորզումը) օգտակար տարրերի փոշիացման գումարը կարող է կազմել 3.357,73 մլն դոլար:

Շահումյանի հանքավայրի ողջ պաշարներն ու ռեսուրսները շահագործելու պարագայում պոչամբարներ կթափվեն 24,044 մլն տ պոչանքներ, որոնց մեջ կլինեն ծանր մետաղներ՝ 959.902,7տ և թունավոր տարրեր՝ սելեն՝ 272,87տ, տելուր՝ 348,62տ, որոնք էլ կթունավորեն պոչամբարների շրջակա միջավայր՝ առաջացնելով բնապահպանական աղետ:

«Երկրի հրովարտակ» գրքույկի II բաժնի 6-րդ կետի «դ» ենթակետում գրված է. «Կանխել շրջակա միջավայրի յուրաքանչյուր հատվածի աղտոտումը և թույլ չտալ ռադիոակտիվ, թունավոր կամ այլ վնասակար նյութերի կուտակումը», սակայն մենք արհամարհում և կուտակում ենք որտեղ պատահի և որքան պատահի:

Մենք խոստացել էինք տեղեկացնել հարգարժան ընթերցողներին, թե ինչպես են կատարվում Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման առնչությամբ օտար ֆիրմաների տված խոստումներն ու մշակված ծրագրերը: Ասենք, որ մենք համոզված էինք, որ ոչ մի մետալուրգիական գործարան էլ չի կառուցվելու: «Դ-ենո» ընկերությունը, իսկ այժմ էլ նրա հետնորդ «Դ-ենո գոլդ մայնինգ»-ը պարտավորվել էին 2006թ. սկսել մետալուրգիական գործարանի կառուցման աշխատանքները: Սա չի կատարվել և այժմ էլ չի կատարվում: Չեն իրագործվել նաև Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքաքարերի հարստացման նորագույն տեխնոլոգիաների ներդրման աշխատանքները (պարտավորությունը): Մի խոսքով, օտարերկրյա ֆիրմաների և պարոնների ոչ մի խոստում (պարտավորություն) էլ չի կատարվել, չի կատարվում և չի էլ կատարվելու, եթե դա իրենց ձեռնառու չէ: Դ-րանք մեր «երկիր» են եկել փողեր լվանալու, մեր ընդերքի հարստությունները թալանելու և հարստանալու մոլուցքով լցված և իրագործում են իրենց այդ հիմնական ծրագիրը. կատարում են ծրագրերից միայն մեկը. աստիճանաբար մեծացնում են Շահումյանի ընդերքից հանքաքարերի արդյունահանման և մշակման քանակները, որն էլ շատ ձեռնառու է իրենց, բայց բոլորովին ձեռնառու չէ մեզ՝ Հայաստանի քաղաքացիներին: Արդյունահանված հանքաքարերը մշակվում, հարստացվում են ԽՍՀՄ-ից մնացած հնագույն տեխնոլոգիաներով, կորզում են այն, ինչ ցանկանում են, ինչ կարող են և ինչքան կարող են, իսկ թույլը՝ ծանր ու թունավոր մետաղներով հարուստ հարստապոչերը, թափում են մեր ժողովրդի «գլխին», նույնիսկ չմտահոգվելով, թե ինչ հետևանք կունենան դրանք այդ տարածքում ապրող ժողովրդի համար:

«Երկրի հրովարտակ»¹ գրքույկի II բաժնի 5-րդ կետի «գ» ենթակետում գրված է. «Ղեկավարել չվերականգնվող պաշարների՝ օգտակար հանածոների և հեղուկ վառելանյութի հանույթն ու օգտագործումը առանց շրջակա միջավայրին լուրջ վնաս պատճառելու և նվազագույնի հասցնելով նրանց սպառումը»: Եթե այս «հրովարտակը» ընդունենք որպես ուղղորդող հիմք Շահումյանի հանքավայրի շահագործման գործում, ապա այդ հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանվող հանքաքարերի 300 հազ.տ քանակությունը բավարարից էլ բավարար է, որպեսզի «նվազագույնի հասցվի» դրանց պաշարների արագ սպառումը: Իսկ եթե ղեկավարվենք «Դենո Գոլդ Մայնինգ» ընկերության գլխավոր տնօրենի ազահությանը և Շահումյանի հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանենք 3,33 անգամ ավելի հանքաքարեր, ապա այդ հանքավայրի պաշարներն էլ կարող ենք սպառել նույնքան անգամ փոքր ժամանակահատվածում (եթե տարեկան արդյունահանվեն 300 հազ.տ հանքաքարեր, ապա հանքավայրի հաշվեկշռային պաշարները (14,21 մլն տ) կարող են շահագործվել 57 տարի, իսկ եթե իրագործվեն «Դենո Գոլդ Մայնինգ»-ի տիրոջ մտահոգումները՝ տարեկան արդյունահանել մեկ մլն տ հանքաքար, ապա հանքավայրը կշահագործվի 14 տարի և հազարավոր բանվոր-ծառայողներ փողոց կնետվեն):

Ծանոթություն. Պարոն Է.Խաչատրյանի կողմից Շահումյանի հանքավայրի ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութը ազնիվ մետաղների գծով անալիզի չի տրվել, հետևապես և դրա մեջ ազնիվ մետաղներ չեն հայտնաբերվել: Բայց քանի որ «Դենո Գոլդ Մայնինգ» ընկերությունը որոշել է Շահումյանի հանքավայրը շահագործել բացահանքի եղանակով՝ վերցնելով (արդյունահանելով և մշակելով) ոչ միայն հանքային երակների պարունակությունը, այլև այդ երակները ներփակող՝ միջանկյալ ապարները, ուրեմն նա այդ միջանկյալ տարածքի ապարներում, որտեղ լայն չափերով տարածված է հիմնականում և մեծամասամբ պիրիտ հանքանյութը, արդեն իսկ հայտնաբերել է ազնիվ մետաղների (հիմնականում ոսկու) կորզելի պարունակություններ: Հակառակ դեպքում ինչո՞ւ պետք է հսկայական ավելորդ ծախսեր կատարել միջհանքային դատարկ ապարները (հանքային երակներից ծավալով 10-20 անգամ ավելի) արդյունահանելու և մշակելու համար:

ՎԱՐՂԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տ. գ. թ.*

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԳԻՏԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ինչպես հանրապետության, այնպես էլ ՀՀ Արագածոտնի մարզի գյուղատնտեսության կառավարման հիմնախնդիրները բազմազան են և դրանց ընդգրկվածությունից կախված՝ գոյություն ունեն հանրապետական, մարզային, տարածաշրջանային, համայնքային և տնտեսավարող սուբյեկտների մակարդակներով:

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտելու հանրապետության և Արագածոտնի մարզի գյուղատնտեսության ոլորտի կառավարման մի քանի հիմնախնդիրներ, մասնավորապես տեղեկատվական և խորհրդատվական համակարգի, գիտական ապահովման կառուցակարգերի և կադրերի պատրաստման համակարգի կառավարման կատարելագործման հետ կապված հիմնախնդիրները, որոնք պահանջում են հրատապ լուծում: Վերջիններս, ընդհանուր բնորոշմամբ, հետևյալն են.

1. Գյուղատնտեսության տեղեկատվական և խորհրդատվական համակարգի զարգացման կառուցակարգերի մշակումը և կիրառման հնարավորությունների ստեղծումը դիտարկում ենք

¹ «Երկրի հրովարտակ», Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա ՀԿ, Երևան, 2003:

հանրապետական և մարզային նշանակության գյուղատնտեսության կառավարման հիմնախնդիր: Գյուղատնտեսության ճյուղի արդյունավետ գործունեության կարևորագույն նախապայմաններից է տեղեկատվական և խորհրդատվական գործուն համակարգի առկայությունը: Ներկայումս գյուղատնտեսության նախարարության համակարգում գործում են գյուղատնտեսության մարզային աջակցության կենտրոնները, որոնք ունեն գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տեղեկատվության և խորհրդատվության մատուցման գործառնություններ: Սակայն, դրանց աշխատանքի բնագավառում կան կառավարման բնույթի հիմնախնդիրներ, որոնք կապված են նոր տեխնոլոգիաները, արտադրության առաջավոր փորձը, գիտական նվաճումները, շուկայական տեղեկատվությունը մատչելի և առավել ընկալելի ձևերով տնտեսավարողներին փոխանցման, այդ գործընթացում առևտրային ծառայությունների մատուցման, այս համակարգերի մասին տնտեսավարողների իրազեկության հետ:

2. Գյուղատնտեսության գիտական ապահովման կառուցակարգերի մշակումը և կիրառումը դիտարկում ենք որպես գյուղատնտեսության կառավարման հանրապետական մակարդակի կարևորագույն հիմնախնդիր: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում գործում են 8 գիտական կենտրոններ, սակայն գիտական կենտրոնները երբեմն իրականացնում են արժեքավոր հետազոտություններ, բայց խնդիր է մնում դրանց ներդրման հարցը, և այդ հետազոտություններն իրականացվում են դրանց վճարունակ պահանջարկից անկախ: Ուստի, կառավարման կարևորագույն հիմնախնդիրներից ենք համարում գիտական նվաճումների ներդրման գործուն կառուցակարգերի մշակումը և իրական պահանջարկից ելնելով՝ գիտական հետազոտությունների իրականացումը:

3. Գյուղատնտեսության բնագավառի կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումը գյուղատնտեսության կառավարման հանրապետական մակարդակի հիմնախնդիր է: Ներկայումս գյուղատնտեսության կադրերի պատրաստմամբ զբաղվում են Հայաստանի պետական ագրարային համալսարանը՝ իր Վանաձորի և Սիսիանի մասնաճյուղերով, նշված ուսումնական հաստատությունների քոլեջները և ՀՀ գյուղատնտեսության նախարարության 10 գյուղատնտեսական քոլեջները՝ Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Շիրակի, Լոռու (2 քոլեջ) մարզերում և Երևանում: Արագածոտնի մարզում գյուղատնտեսական ուսումնական հաստատություններ չեն գործում, բնակչությունը օգտվում է ՀՀ Կոտայքի, Լոռու մարզերի, Երևանի քոլեջներից, երբեմն նաև այլ մարզերի քոլեջներից: Նշված ուսումնական կազմակերպությունների կազմում գործում են նաև արհեստագործական ուսումնարաններ: Նշված ուսումնական հաստատություններն ունեն գյուղատնտեսության տարբեր բնագավառների մասնագիտությունների լայն ցանց: Ուսումնական հաստատությունները թողարկում են իրական պահանջարկը մի քանի անգամ գերազանցող մասնագետներ: Տվյալ բնագավառում կառավարման առումով առկա են խնդիրներ կադրերի իրական պահանջարկի գնահատման, դրանց մասնագիտությունների, ուսումնառության ժամանակահատվածում գործնական հմտությունների ձեռքբերման, տնտեսավարողների կողմից պատվերների հիման վրա ուսուցման կազմակերպման և այլ ուղղությամբ: Կադրերի պատրաստման գործընթացի կառավարման համատեքստում կարևոր է համարվում կառավարման այնպիսի կառուցակարգերի մշակումը, որոնք նպաստեն հիշատակված խնդիրների լուծմանը:

Բացահայտված կառավարման վերոնշյալ հիմնախնդիրների կառավարման կատարելագործման մեր կողմից առաջարկվող հիմնական ուղղությունները ներկայացնում ենք ստորև.

Գյուղատնտեսության տեղեկատվական և խորհրդատվական համակարգի կառավարման ուղղությունները.


- Արագածոտնի մարզում խորհրդատվական համակարգի բարելավման համար անհրաժեշտ ենք գտնում Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների գործակալների թվաքանակի ավելացումը: Ներկայումս մարզում գործում է 13 գործակալ, այսինքն՝ մեկ գործակալը սպասարկում է 8-9 գյուղական համայնք: Առաջարկում ենք գործակալների թվաքանակի ավելացումը կատարել ըստ փուլերի և ապահովել դրանց աշխատանքային գործունեության կառուցակարգերի կատարելագործումը: Միջնաժամկետ հեռանկարում անհրաժեշտ է գործակալների թվաքանակի ավելացումը հասցնել այն մակարդակի, որ մեկ գործակալը սպասարկի 3 համայնք: Այսինքն՝ 111 գյուղական համայնքի համար կպահանջվի 37 գործակալ, կամ դրանց թվաքանակը կավելանա

24-ով: Գործակալների ցանցի ընդլայնման արդյունքում, մեր կանխատեսումների համաձայն, մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը կավելանա 0.25%-ով, իսկ համախառն արտադրանքի աճը կկազմի 121.0 մլն դրամ,

- հաշվի առնելով գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակությունը՝ գտնում ենք անհրաժեշտ խորհրդատվական ծառայությունների համաֆինանսավորման գերակշիռ մասը միջնաժամկետ հեռանկարում ապահովել ՀՀ պետական բյուջեից և այլ աղբյուրներից (համաֆինանսավորման մասնաբաժինը պահպանելով 80-90%-ի սահմաններում),
- աջակցել խոշոր տնտեսությունների և խորհրդատվական գործառույթ ունեցող կառույցների, գործակալների հետ երկարատև պայմանագրային հարաբերությունների հաստատմանը: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է օրինակելի պայմանագրի ձևի մշակում, որը կարտացոլի գյուղատնտեսությունում տնտեսավարողի և խորհրդատվական գործառույթ ունեցող կառույցների շահերը՝ ներառելով խորհրդատվական ծառայությունների լայն շրջանակ, սկսած արտադրության տեխնոլոգիաներից մինչև շուկաների ուսումնասիրությունը և դրա հիման վրա իրականացնել արտադրական կառուցվածքի բարելավման վերաբերյալ խորհրդատվություն:
- Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների գործակալների օպերատիվությունը և հաշվետվողականության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք ձևավորել գործակալների գործունեության համակարգման տարածաշրջանային ստորաբաժանումներ՝ սկզբնական շրջանում նյութական ռեսուրսների սղության պայմաններում տարածաշրջանային ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները վերապահելով գործակալներից մեկին: Խորհրդատվական ծառայության կառավարման առաջարկվող կառուցվածքը ներկայացվում է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1

Խորհրդատվական ծառայության կառավարման առաջարկվող կառուցվածքը




Գյուղատնտեսության գիտական ապահովման կառուցակարգերի կատարելագործման ուղղությունները.

- գյուղատնտեսական խոշոր տնտեսությունների և կոոպերատիվների կողմից պատվերների ձևավորման պայմանագրային համակարգի ներդրումը: Վերջինս հնարավոր է իրականացնել տարբեր աղբյուրներից՝ պետությունից, զարգացման հիմնադրամներ, միջազգային կազմակերպություններ և այլն:
- Ինչպես հանրապետության, այնպես էլ Արագածոտնի մարզի համար կարևոր ենք համարում գիտական հետազոտությունների արդյունքների ներդրման գործընթացի կատարելագործումը: Մասնավորապես այդ գործառույթի իրականացումը հնարավոր է Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների կամ տարածաշրջանային կտրվածքով կոոպերացման սկզբունքով գործող մասն գործառույթ ունեցող կառույցի ձևավորման միջոցով: Կառույցը կիրականացնի այդ բնագավառում գյուղացիական տնտեսությունների կարիքների բացահայտման, պայմանագրային հարաբերությունների հաստատման, գիտական նվաճումների ներդրման գործառույթներ: Տարածաշրջանի կտրվածքով գործող այդ կառույցի գործունեության ֆինանսավորման համար աղբյուր կարող է հանդիսանալ նաև գյուղացիական տնտեսությունների մասնակի փոխհատուցումը: Ագրարային ոլորտի գիտական նվաճումների ներդրման համար առաջարկվող կազմակերպական կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 2-ում: Ներկայացված կառուցվածքի կիրառումը, մեր համոզմամբ, հնարավորություն կընձեռի համակարգել կիրառական նշանակություն ունեցող գիտական նվաճումների ներդրման գործընթացը և ապահովել դրա արդյունավետությունը:

Գծապատկեր 2

Ագրարային ոլորտում գիտական նվաճումների ներդրման առաջարկվող կազմակերպական կառուցվածքը



Գյուղատնտեսության բնագավառի կադրերի պատրաստման համակարգի կատարելագործման ուղղությունները.

- Արագածոտնի մարզի աշխարհագրական դիրքի և առանձնահատկությունների պայմաններում կադրերի պատրաստման հիմնական ուղղությունը պետք է լինի գյուղացիական տնտեսությունների պահանջարկին և մարզի մասնագիտացմանը համապատասխան՝ տարբեր ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստումը,
- կարևորում ենք նաև կոնկրետ կազմակերպությունների պատվերների հիման վրա կադրերի պատրաստման իրականացումը,
- Արագածոտնի մարզում անհրաժեշտ է համարվում արհեստագործական ուսուցման կազմակերպումը հատկապես մեխանիզատորական կադրերի պատրաստման համար:

ԱՐՄԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏՊ ԳԱԱ Մ. Լոռուի մարզի քաղաքացիական ինստիտուտի հայցորդ

ՀԱՄԱՇԽԱՐԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ ԵՎ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՁԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունը թողեց և այժմ էլ շարունակում է թողնել ողջ համաշխարհային տնտեսության զարգացումների վրա: Այդ մասին են վկայում աշխարհում տեղի ունեցող տնտեսական զարգացումները, որոնք առավել մեծ չափով ազդում են Եվրոպական Միության երկրների տնտեսության վրա: Մակայն պետք է նշել, որ բացասական տնտեսական զարգացումներն առաջին հերթին իրենց վրա են կրում փոքր ու միջին ձեռնարկությունները (ՓՄՁ), քանի որ տնտեսական այս միավորները չունեն այն հսկայական ներուժը, որ կարողանան դիմակայել ուժեղ տնտեսական հարվածների: Այդ իսկ պատճառով շատ երկրներում ՓՄՁ-ների աջակցության խնդիրը հատկապես ճգնաժամային իրավիճակներում մղվում է առաջին պլան: Այս առումով առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հիմնախնդիրները, որոնց բախվում են ՓՄՁ-ները ճգնաժամերի ժամանակ և մյուս կողմից պետական աջակցության այն մեխանիզմները, որոնք ուղղված են այդ խնդիրների արդյունավետ լուծմանը կամ գոնե դրանց բացասական ազդեցությունների և հետևանքների մեղմմանը:

Ուսումնասիրելով վերջին մի քանի տարիների համաշխարհային հեղինակավոր կազմակերպությունների հրապարակումները ՓՄՁ-ների և ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխկապվածության վերաբերյալ՝ նկատում ենք, որ ԱՄՆ տնտեսությունից սկիզբ առած ճգնաժամն իր ազդեցության ոլորտներով ունի համակարգային բնույթ:

Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՏՀԶԿ-ի կողմից 2009թ. հրապարակված «Համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը ՓՄՁ-ների և ձեռնարկատիրության վրա. ֆինանսավորում և հակազդող քաղաքականություն»¹ փաստաթուղթը, որտեղ քննարկվող հարցերում իսկապես բարձրացվում են ՓՄՁ-ների ֆինանսավորման և աջակցության դժվարությունները: Ուսումնասիրության մեջ նախ և առաջ կատարվում է լուրջ համադրություն «նորմալ» պայմաններում և ճգնաժամային պայմաններում գործող ՓՄՁ-ների վերաբերյալ, այնուհետև ներկայացվում են ճգնաժամի ժամանակ ՓՄՁ-ների ֆինանսավորման և պետության կողմից հակազդող քաղաքականության մշակման մոտեցումները: Խնդիրների կարգա-

¹ The Impact of the Global Crisis on SME and Entrepreneurship Financing and Policy Responses, Contribution to the OECD Strategic Response to the Financial and Economic Crisis, Centre for Entrepreneurship, SMEs and Local Development, OECD 2009, 72 p.
www.oecd.org/dataoecd/36/27/42514077.pdf

վորման հիմքում է դրվում նաև ՓՄՁ-ներին վերականգնման հմտություններ և նորամուծությունների վրա հիմնվելով աճ ապահովելու ունակություններ հաղորդելը:

Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում Եվրոպական հանձնաժողովի կողմից 2009թ. հրապարակված «Եվրոպական ՓՄՁ-ները ճնշման տակ»¹ տարեկան զեկույցը, որտեղ բարձրացվող հարցերը կրկին առնչվում են ճգնաժամի բացասական ազդեցությունների և մյուս կողմից ձեռնարկությունների հնարավորությունների հետ: Հարցերը, որոնք բարձրացվում են զեկույցում, առնչվում են նաև ՓՄՁ-ների աշխարհագրական բաշխվածության, դրանց արագ աճի հնարավորությունների, գործունեություն սկսելու և դադարեցնելու հետ, զեկույցում կարևորվում են նաև ՓՄՁ-ների արտադրական կառուցվածքի դիվերսիֆիկացման և աշխատուժի արտադրողականության հարցերը, ինչպես նաև ներկայացվում են առաջարկություններ առկա հիմնախնդիրների լուծման վերաբերյալ:

ՓՄՁ-ների գործունեության մի շարք կարևորագույն հարցադրումներ են քննարկվում նաև Աշխատուժի միջազգային կազմակերպության (ILO)² փորձագետ Պաուլ Վանդենբերգի կողմից 2009թ. հրապարակված «Գերփոքր (միկրո), փոքր և միջին չափերի ձեռնարկությունները և համաշխարհային տնտեսական ճգնաժամը. ազդեցություններ և հակազդող քաղաքականություն» աշխատությունում: Այստեղ մեծ կարևորություն է տրվում մարդկային կապիտալին, վարկային երաշխիքների համակարգին, միկրո ֆինանսավորմանը, զբաղվածության և ինքնազբաղվածության հիմնահարցերին: Խնդիրների կարգավորման տեսանկյունից առավել նշանակալի դեր է տրվում ձեռնարկատիրական միջավայրի բարելավմանը, քաղաքականություն մշակողների միջոցով ֆինանսական ռեսուրսների հայթայթմանը աջակցելուն, գործարարության զարգացմանն ուղղված թրեյնինգների կազմակերպմանը և այլն:

Ուշագրավ է նաև Համաշխարհային բանկի մասնագետների կողմից 2011թ. հունվարին հրապարակված «Փոքր և միջին ձեռնարկությունների համադրական վերլուծությունը առանձին երկրներում»³ փաստաթուղթը: Այստեղ բարձրացվող հարցերն առնչվում են ՓՄՁ-ների գործունեության կարգավորման հետ, մյուս կողմից բերվում են ՓՄՁ-ների չափերի համադրություններ՝ կապված աշխատողների թվաքանակի հետ: Խնդրահարույց վարկային միջոցները ևս լուրջ ուսումնասիրության են ենթարկված: Եվ իսկապես սրանք այն խնդիրներն են, որոնց լուծումները յուրաքանչյուր երկիր տալիս է յուրովի, իսկ համադրական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել զարգացման հնարավոր ուղիները: Հատկապես այն պարագայում, որ մի շարք երկրների պարտքերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն նաև ձեռնարկությունների կողմից կուտակված պարտքերը:

Այս համատեքստում առավել մեծ կարևորություն են ստանում ֆինանսական հիմնախնդիրները, որոնց բախվում են գրեթե բոլոր ՓՄՁ-ները, որի հիմնական պատճառներն են՝ վաճառքի ծավալների անկումը, ավանդական շուկաների կորուստը, հումքի գների թանկացումը, պատվերների նվազումը, փոխանակային կուրսերի տատանումները և այլն: Շատ երկրներ, որոնք չունեն հզոր արտադրություններ և մյուս կողմից ունեն ՀՆԱ-ի մեջ մեծ մասնաբաժին ունեցող ՓՄՁ-ներ առանց հապաղելու 2008թ. վերջին համաշխարհային տնտեսության մեջ սկիզբ առած ճգնաժամի դժվարություններին դիմագրավելու հարցում իրենց տնտեսական քաղաքականության վեկտորն ուղղեցին դեպի ՓՄՁ հատվածը: Պետք է նշել, որ պետական քաղաքականությունն այս իրավիճակում հիմնվում էր երկարաժամկետ ֆինանսական աջակցության գաղափարի վրա, քանի որ կարճաժամկետ կամ տեղային լուծումներով խնդիրը կարգավորելը բավականին բարդ է: Վերջինս արվում էր նրա համար, որ ձեռնարկությունները կարողանան գոնե միջնաժամկետ և ավելի մեծ հեռանկարում, երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի վրա հիմնվելով, շարունակեն իրենց գործու-

¹ European Commission, European SMEs under Pressure, Annual Report On EU Small and Medium - Sized Enterprises 2009, Directorate –General for Enterprise and Industry, 60 p.

http://ec.europa.eu/enterprise/policies/sme/facts-figures-analysis/performance-review/pdf/dgentr_annual_report2010_100511.pdf

² Micro, small and medium-sized enterprises and the global economic crisis: impacts and policy responses /Paul Vandenberg; International Labour Office, Sustainable Enterprise Programme. - Geneva: ILO, 2009, 46 p.

http://www.ilo.org/wcmsp5/groups/public/@ed_emp/@emp_ent/documents/publication/wcms_108413.pdf

³ Small and Medium Enterprises A Cross-Country Analysis with a New Data Set, Oya Pinar Ardic, Nataliya Mylenko, Valentina Saltane, The World Bank, Financial and Private Sector Development, Consultative Group to Assist the Poor, January 2011, 32 p.

նեությունը, այլ ոչ թե անորոշության լայն դաշտի պարագայում չկարողանան երկարաժամկետ ծրագրեր մշակել:

Խնդիրների շարքում, որոնց բախվեցին ՓՄՁ-ները, պետք է նշել այն, որ առաջին հարվածն արտահայտվեց պահանջարկի շոկով, այսինքն՝ ողջ համաշխարհային տնտեսության մեջ կտրուկ նվազեց պահանջարկը, և գրեթե բոլոր երկրները բախվեցին այս խնդրին: Հաջորդ խնդիրը, որը ևս կործանարար էր այդ պարագայում, վարկային ռեսուրսների կրճատումն էր ՓՄՁ-ների համար և բարձր տոկոսադրույքներով վարկերի առաջարկումը: Իհարկե, վարկային ռեսուրսների կտրուկ կրճատումը և տնտեսության մեջ ֆինանսավորման ծավալների կրճատումը խիստ բացասական երևույթ է և կախված է կրճատման տոկոսից, եթե այն գերազանցում է 20%-ի մակարդակը, շատ տնտեսագետներ համարում են, որ տնտեսության մեջ տեղի է ունենում «վարկային ճգնաժամ», այսինքն՝ նման խնդրի բախվելով՝ տնտեսությունը պարզապես մտնում է հարկադրաբար «սառեցման» փուլ, որի պարագայում ՀՆԱ-ի ծավալների անկումն անխուսափելի է: Եվ բացի այն, որ կրճատվում են վարկային ռեսուրսները, եղած ռեսուրսներն էլ առաջարկվում են բարձր տոկոսադրույքներով, իսկ դա իր հերթին առավել դժվար կացության մեջ է դնում տնտեսավարող սուբյեկտներին: Մի կողմից ձեռնարկություններին հարկավոր են ֆինանսական ռեսուրսներ ընթացիկ իրացվելիություն ունենալու համար, իսկ մյուս կողմից կա բարձր տոկոսադրույքների խնդիր, հարկադրաբար ռիսկի դիմելու արդյունքում ՓՄՁ-ների համար սնանկացման վտանգը խիստ բարձր հավանականություն է ստանում: Այս ամենն ազդում է նաև ՓՄՁ-ների մրցունակության անկման վրա, քանի որ գնային քաղաքականությունը վերոնշյալ պայմաններում արդյունավետ լինել չի կարող, իսկ պետությունն այս պարագայում պարտավոր է միջամտել և աջակցել ՓՄՁ-ներին, քանի որ հակառակ պարագայում տնտեսության մեջ մի ամբողջ հատված կարող է հայտնվել պարզապես գոյատևման խնդրի առաջ: Եվ իզուր չէ, որ ՓՄՁ-ների լուծարման և սնանկացման մի շարք դեպքեր արձանագրվեցին աշխարհի տարբեր երկրներում:

Խնդրի լուծման տարբերակներից մեկը ՓՄՁ-ների կողմից վարկերի մարման ժամանակահատվածի երկարաձգումն է, որն, իհարկե, բավականին բարդ է, և մյուս կողմից վարկային երաշխիքների տրամադրման համակարգի կիրառումը: Այս մոտեցումները կիրառել են մի շարք ՏՀԶԿ երկրներ՝ հատկապես ընդլայնելով արտահանման վարկային երաշխիքները, այսինքն՝ եթե ՓՄՁ-ն կարող է արտահանման ուղղվածություն ունեցող ապրանքներ արտադրել, ապա երաշխիքների համակարգը սկսում է գործել:

Երկրորդ մոտեցումը, որը կիրառվում է ՓՄՁ-ների աջակցության ժամանակ, կառավարությունների կողմից «վարկային միջնորդների» ինստիտուտի ստեղծումն է, որը պետք է մոնիթորինգ անցկացնի ՓՄՁ-ներին բանկերի կողմից վարկերի տրամադրման վերաբերյալ և ժամանակ առ ժամանակ հաշվետվություններ ներկայացնի, իսկ այդ հիմքի վրա պետք է ձևավորվի վարքագծի այն կանոնների համակարգը, թե ինչպես են բանկերը վարկավորում ՓՄՁ-ներին: Հատկապես ճգնաժամի ժամանակ մի շարք բանկեր առանց լուրջ հիմնավորումների կարող են մերժել ՓՄՁ-ներին վարկավորել, իսկ վերոնշյալ օղակը ՓՄՁ-ներին բանկերի կողմից անհիմն մերժումներից ապահովագրող գործառույթ պետք է կատարի:

Կանխիկ հոսքերի կառավարման հարցում ՓՄՁ-ները ևս լուրջ խնդիրների են բախվում ճգնաժամերի ժամանակ, այս առումով գրեթե բոլոր երկրներում կան հստակ վճարումների ժամկետներ, և խախտումների համար նախատեսվում են նաև խիստ տուգանքներ: Խնդրի կարգավորման համար հարկավոր են վճարումների ժամկետների միջակայքի ընդլայնումներ: Շատ երկրներում դեռևս արդյունավետ կերպով չի գործում առանձին հարկատեսակների գծով փոխադարձ մարումների համակարգը, որը բավականին մեծ դժվարություններ է ստեղծում ՓՄՁ-ների համար և ստացվում է այնպես, որ մի հարկատեսակի գծով (օրինակ՝ ԱԱՀ) ձեռնարկությունը կարող է ունենալ գերավճարներ, իսկ մյուս կողմից՝ պարտքեր ունենալով հայտնվել սնանկացման գործընթացում:

Հիմնահարցերը, որոնք բարձրացրինք, բավականին շատ են և ընդգրկում, այդ իսկ պատճառով ամբողջությամբ և խորությամբ դրանց լուծումները գտնելը ևս պահանջում է յուրաքանչյուր հարցադրման վերաբերյալ հետազոտությունների անցկացում: Եվ ինչպես

համոզվեցինք, այս խնդիրների լուծման հարցերով են զբաղվում համաշխարհային տնտեսության մեջ մեծ դերակատարում ունեցող մի շարք կազմակերպություններ:

Այս ամենից ելնելով՝ փորձենք համառոտ ներկայացնել այն հնարավոր լուծման ուղեցույցները, որոնք կարող են ՓՄՁ-ներին հնարավորություններ տալ առավել կենսունակ լինելու ճգնաժամների պայմաններում.

- Հարկավոր է մշակել հնարավոր մոտեցումներ ՓՄՁ-ների տեղեկատվական հասանելիությունն առավել բարձր մակարդակի հասցնելու համար, ինչպես նաև զարգացնել կառավարություն և ՓՄՁ-ներ փոխհարաբերությունների մակարդակը:
- Հաջորդ քայլով հարկավոր է հզորացնել ՓՄՁ-ների ունակությունները, որոնք պետք է արտահայտվեն կառավարչական հմտությունների հզորացման, ֆինանսական կառավարման ոլորտում գիտելիքների ընդլայնման հարցերում և այլն:
- Բանկեր և ՓՄՁ-ներ կապի ուժեղացում և վարկավորման արտոնյալ պայմանների ստեղծում, ինչպես նաև ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում, երաշխիքների արդյունավետ գործող համակարգի ներդրում:
- ՓՄՁ-ների գործունեության դադարեցման՝ սնանկացման, լուծարման և այլ դեպքերի ուսումնասիրություն և առաջացող խնդիրների կարգավորման ուղղությամբ հստակ քաղաքականության մշակում:

Իհարկե, նշված լուծումները կյանքի կոչվելու պարագայում կարող են առաջխաղացման հիմքեր ստեղծել ՓՄՁ-ների գործունեության համար, սակայն դժվարություններն այնքան շատ են, որ ստիպում են մի շարք ձեռնարկությունների անգամ պետական աջակցության և արտոնյալ պայմանների դեպքում ևս դուրս գալ շուկայից, քանի որ մենք գործ ունենք գլոբալ մրցակցային շուկայի հետ, իսկ այստեղ մրցակցության պայմանները թելադրում են առավել ուժեղ ձեռնարկությունները: Եվ որպեսզի ՓՄՁ-ները կարողանան դիմակայել ճգնաժամերին և մրցակիցներին, պետք է կարողանան դրսևորել ճգնաժամերի դեմ ճկունություն, իսկ մրցակիցների հանդեպ ունենան առավելություն:

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏՊԱՏ ասպիրանտ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ ԶՅ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱՃԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ագրարային համակարգի առջև ծառայած խնդիրների լուծման արդյունավետ միջոցներից է տնտեսության սուբսիդավորումը, ինչը հնարավորություն է ընձեռում բարձրացնելու ոլորտի մրցունակությունը, նպաստելու գյուղական համայնքների ամրապնդմանը, հատկապես սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային գոտում և արդյունքում բարելավելու գյուղական բնակչության կենսապայմաններն ու կյանքի որակը: Գյուղատնտեսությունը երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է: Վերջին տարիներին ճյուղին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 17,1%-ը, իսկ աշխատաշուկայում ոլորտն ապահովում զբաղվածության շուրջ 45%-ը: Սակայն դրա հետ մեկտեղ, ագրարային գործունեությունը դեռևս սուբսիդավորման և պետական աջակցության կարիք է զգում:

Ագրարային ոլորտի սուբսիդավորումը տարբեր կերպ է անդրադառնում գյուղատնտեսական շուկայի վրա: Մի դեպքում այն հնարավորություն է ընձեռում բարձրացնելու ոլորտի մրցունակությունը կամ շահութաբերության մակարդակը, քանի որ պետությունը նպատակ է հետապնդում իրականացնելու տնտեսական կարգավորման ակտիվ քաղաքականություն, խոշորամասշտաբ նորամուծությունների ներդրում, գյուղատնտեսական արտադրության վերակազմավորում: Մեկ այլ դեպքում սուբսիդավորումը անուղղակի ճանապարհով է ակտիվացնում ագրարային շուկան, երբ կառավարության կողմից սահմանվում են արտադրանքի

մթերման գների հավելավճարներ, գյուղատնտեսական վարկային տոկոսային ծախսերի մասնակի փոխհատուցումներ, ապահովագրական պոլիսների մասնակի վճարումներ: Սուբսիդավորում իրականացվում է նաև գյուղատնտեսության ոլորտի կայուն գործունեության ապահովման համար, երբ պետությունը ֆինանսավորում է բնապահպանական միջոցառումներ, իրականացնում է գյուղի սոցիալական պայմանների բարելավման ծրագրեր, դրանով իսկ կանխելով գյուղական վայրերից արտագաղթը, ֆերմերային տնտեսությունների քայքայումը:

Սուբսիդավորման արդյունքում մի դեպքում ագրարային շուկայում տեղի է ունենում մրցակցային դիրքերի վերաբաշխում, մեկ այլ դեպքում՝ ընդամենը գյուղատնտեսության կայունության ապահովում: Հետևաբար, պետության կողմից աջակցության ցուցաբերման թվարկած արդյունքները տարբեր կերպ են անդրադառնում ագրարային ոլորտի մրցակցային միջավայրի վրա, որն էլ ստիպում է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) մշակել գյուղատնտեսության պետական կարգավորման միջոցառումները սահմանափակող չափանիշներ, համաձայն որոնց գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորումը տարանջատվում է կանաչ, դեղին, կապույտ զամբյուղների¹:

Կանաչ զամբյուղ: Այս խմբի մեջ ընդգրկված են այն սուբսիդիաները, որոնք *առևտրի բնագավառում շեղումներ չեն առաջացնում*, իսկ եթե դա տեղի է ունենում, ապա՝ նվազագույն չափով: Այս զամբյուղի շրջանակներում ներառվող ծրագրերի թվին են պատկանում շրջակա միջավայրի պահպանման, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի, ենթակառուցվածքների զարգացման, կրթության, մասնագետների ուսուցման, հետազոտություններ, խորհրդատվության մատուցման, տեսչական ծառայությունների, եկամուտների ապահովագրման, մարքեթինգի ծառայությունների, տարածաշրջանային օգնության ծրագրերի հետ կապված վճարումները, ինչպես նաև համեմատաբար վատ բնակլիմայական, բնապահպանական և տնտեսական պայմաններում գտնվող տարածաշրջաններին աջակցությունը, տարերային աղետների դեպքում ցուցաբերվող օգնությունը, երկրի ներսում պարենային օգնության տրամադրումը:

Դեղին զամբյուղ: Այս խմբի մեջ մտնում են տեղական արտադրողներին տրվող այն սուբսիդիաները, որոնք վերաբերում են գյուղատնտեսական արտադրանքների և նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման գների կարգավորման պետական աջակցությանը: Դեղին զամբյուղի միջոցառումներն ունեն գյուղատնտեսական ապրանքների միջազգային *առևտրի մրցակցային պայմանների փոփոխման հետևանքներ*, ուստի ԱՀԿ-ն պահանջում է դրանց հատուկ սահմանափակում:


Կապույտ զամբյուղ: Այս խմբում ներառված միջոցառումները նույնպես պետական ուղղակի աջակցության բնույթ են կրում, սակայն միջազգային առևտրում մրցակցային պայմանների խաթարման վրա ավելի թույլ ազդեցություն ունեն: Ուստի այն մասով, որը նպատակաուղղված է առանձին արտադրատեսակների հաստատագրված չափաքանակներին չգերազանցող արտադրության կարգավորմանը, սահմանափակում չի դրվում: Իսկ այն մասով, որն ուղղորդվում է գյուղատնտեսական գործունեություն իրականացնողների եկամուտների ավելացմանը, ենթարկվում է որոշակի սահմանափակումների:

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը ագրարային շուկայի մրցակցային միջավայրի վրա սուբսիդավորման ազդեցության արդյունքների դասակարգումը նպատակահարմար է գտնում ներկայացել երեք ուղղությամբ (գծապատկեր 1):


Ագրարային շուկայական միջավայրի և գյուղատնտեսության սուբսիդավորման արդյունքների վերլուծությանը զուգահեռ, ֆինանսական աջակցության լծակներով պետության կարգավորիչ գործառույթները առաջարկվում է դիտարկել նաև ագրարային ոլորտում սուբսիդիաների ազդեցության բնույթի տեսանկյունից (գծապատկեր 2): Այսպես, որպես ուղղակի ազդեցության ուղիներ ենք առաջարկում գյուղմթերքների արտադրության և իրացման գործընթացում պետության ֆինանսական աջակցությունը, որը նպաստում է ոչ միայն գյուղատնտեսության զարգացմանը, այլև մրցակցային միջավայրի էական փոփոխություններ է առաջացնում ագրարային շուկայում:

¹ Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների հայեցակարգի մասին ՀՀ կառավարության որոշումը, 27 հոկտեմբեր, 2005 թ., # № 2310-Ն:

Սուբսիդավորման ազդեցության արդյունքների դասակարգումը ագրարային շուկայի մրցակցային միջավայրի վրա



Գյուղատնտեսության սուբսիդավորման արդյունքների դասակարգման առաջարկվող սխեման



Սուբսիդավորումը ոչ միայն ուղղակիորեն, այլև ուղեկցող արդյունքներ է ձևավորում կայուն գյուղատնտեսության վարման գործընթացում, երբ պետությունը ֆինանսական օգնություն է ցուցաբերում ագրարային վարկերի տոկոսադրույքների, ապահովագրական ծախսերի փոխհատուցման գծով, ինչպես նաև ներդրումներ է կատարում տնտեսության ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ: Կարևոր ենք համարում նաև սուբսիդա-

վորման այն ուղղությունները, որոնք ուղղակիորեն կապ չունեն տնտեսության հետ, սակայն անուղղակի ազդեցություն են գործում ագրոտորտի կայուն զարգացման վրա՝ նպաստելով գյուղական բնակչության աղքատության հաղթահարմանը, արտագաղթի կանխմանը, գործազրկության նվազմանը, առողջապահության և բնապահպանական միջոցառումների ապահովմանը:

Այսպիսով, գյուղատնտեսության սուբսիդավորման շուկայական հետևանքների ԱՀԿ-ի դասակարգումը մեր կողմից առաջարկվում է լրացնել ըստ ագրարային ոլորտի առանձին ենթակառուցվածքների ֆինանսական աջակցության ազդեցության արդյունքների ուղղություններով՝ որը հնարավորություն է ընձեռում:

Առաջին, գնահատելու սուբսիդավորման ուղղակի և անուղղակի հետևանքները ինչպես ագրարային շուկայի հավասարակշռման, այնպես էլ գյուղատնտեսության ենթակառուցվածքների զարգացման վրա:

Երկրորդ, տարանջատել սուբսիդավորման տնտեսական հետևանքները ագրարային ոլորտում, դրանով իսկ հնարավորություն ստեղծելով բարելավելու պետական ֆինանսական օժանդակության արդյունավետության գնահատումը՝ ըստ միջոցառումների առանձին ուղղությունների:

Երրորդ, իրականացնել սուբսիդավորման համալիր վերլուծություն, դիտարկելով պետության տնտեսական կարգավորման ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական հետևանքները, հաշվի առնելով նաև պետական ֆինանսական աջակցության ածանցյալ արդյունքները ագրոտորտի զարգացման վրա:

Հետևաբար, գյուղատնտեսության ոլորտում պետական սուբսիդավորման արդյունքների վերլուծության գույքորդումը՝ ըստ ագրարային շուկայի մրցակցային միջավայրի և սոցիալ-տնտեսական հետևանքների, հնարավորություն է ընձեռում առավել իրատեսորեն գնահատելու պետական ֆինանսական աջակցության արդյունավետությունը ինչպես մակրո, այնպես էլ մեզո և միկրոմակարդակներում: Հատկապես, պետական կարգավորման կարիք են գգում լեռնային (առավելապես՝ բարձրլեռնային) գոտու բնակավայրերի տնտեսությունները: ՀՀ գործող օրենսդրությամբ լեռնային բնակավայրերի շարքին են դասվում ծովի մակերևույթից 1700-ից-2000 մ բարձրության վրա, իսկ բարձր լեռնային՝ 2000 մ նիշից բարձր գտնվող բնակավայրերը:

Լեռնային և բարձրլեռնային գոտու բնակիչները գտնվում են անհավասար պայմաններում շուկաների մատչելիության, երկրագործության վարման, ոչ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելու, կրթության, առողջապահության, կոմունալ ծառայություններից օգտվելու, ինչպես նաև նյութական և մարդկային աղքատությունը պայմանավորող սոցիալ-մշակութային, կենցաղային և տնտեսության այլ ոլորտների ծառայություններից օգտվելու համեմատական անմատչելիության տեսակետից: Ուստի ներկայումս արդիական է դարձել լեռնային և բարձրլեռնային տարածաշրջանների առաջանցիկ զարգացման ապահովումը:

Հանրապետության լեռնային տարածաշրջաններն ունեն բնակլիմայական բարդ պայմաններ, ջրային, գյուղօգտագործելի հողատեսքերով և այլ ռեսուրսներով անհավասար ապահովվածություն: Նշված առանձնահատկություններն առավել ցայտուն են դրսևորվում Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի բարձրլեռնային, ինչպես նաև Արագածոտնի, Շիրակի, Լոռու ու Բաղրամյանի տարածաշրջանների բարձրադիր գոտում:

Լեռնային և բարձրլեռնային տարածաշրջանների համայնքների տնտեսաիրավական դաշտը հիմնականում կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին», «Տարածքային կառավարման մասին», «Համահարթեցման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով: Նշված օրենքներով, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ հարկային օրենսդրությամբ և մի շարք այլ իրավական ակտերով սահմանվում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, սկզբունքները, լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, այդ թվում համայնքային բյուջեների ձևավորման, վարկերի և փոխատվությունների ստացման, հարկերի ու տուրքերի գանձման, սուբվենցիաների, սուբսիդիաների տրամադրման բնագավառները:

Սակայն ձեռնարկվող միջոցները դեռևս բավարար չեն լեռնային և բարձրլեռնային

տարածաշրջանների բնակչության սոցալ-տնտեսական վիճակն իրատեսորեն բարելավելու, արտագաղթը կանխելու, բնակավայրերի ամրապնդումն ապահովելու համար: Դրա պատճառներից է նաև ՀՀ օրենսդրության որոշակի անկատարությունը, մասնավորապես «Լեռնային տարածաշրջանների զարգացման մասին» ՀՀ օրենքի բացակայությունը, որի ընդունմամբ կստեղծվեն օրենսդրական հիմքեր դրամավարկային և հարկաբյուջետային լծակներով անհրաժեշտ արտոնություններ սահմանել բարձրադիր գոտու բնակավայրերի առաջանցիկ զարգացման և այդ բնակավայրերի բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման համար:

Ներկայումս ՀՀ մարզերի 874 համայնքներից 315-ը, կամ 36.0 %-ը գտնվում են լեռնային և բարձրլեռնային գոտում: Գեղարքունիքի մարզի բնակավայրերը գրեթե ամբողջությամբ, Շիրակի մարզի՝ 2/3-ը, իսկ Արագածոտնի մարզի կեսից ավելին գտնվում են բարձրադիր գոտում: Բարձր է նաև լեռնային բնակավայրերի տեսակարար կշիռը Սյունիքի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզերում:

Լեռնային և բարձրլեռնային տարածաշրջանների կայուն զարգացումը խոչընդոտվում է հիմնականում ենթակառուցվածքների թերզարգացությամբ և դրանց անհամապատասխանությամբ տնտեսվարման նոր պայմաններին: Ինչպես իրական հատվածի, այնպես էլ տնտեսության այլ ճյուղերի զարգացումն անհնարին է առանց վերջիններիս կենսունակությունն ապահովող համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման ու զարգացման հիմնախնդրի լուծման: Լեռնային բնակավայրերի հեռավորությունը մայրուղիներից, ռելիեֆի կտրտվածությունը, կլիմայական անբարենպաստ պայմանները պահանջում են ավելի մեծ ներդրումներ ենթակառուցվածքների գործունեության բարելավման համար՝ ցածրադիր գոտու համեմատ: Այդ իսկ պատճառով լեռնային և բարձրլեռնային տարածաշրջանների զարգացմանն ուղղվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը նույնպես պետք է գերազանցի այլ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման համար կենտրոնացված կարգով հատկացվող ներդրումները, քանի որ հիմնական ենթակառուցվածքները դեռևս գործում են անհուսալի և անկայուն:

Այսպիսով, ֆինանսական տեսանկյունից պետական աջակցության համընդհանուր և սկզբունքային հիմնախնդիրները ՀՀ լեռնային և բարձրլեռնային գյուղատնտեսության զարգացման գործընթացում առաջարկում ենք լուծել հետևյալ ուղղություններով:

Առաջին, պետական բյուջեի ծախսային մասում բարձրլեռնային գոտու ագրարային ոլորտի համար առաջարկում ենք առավել մեծ տեղ հատկացնել սուբսիդավորմանը, քանի որ տնտեսավարման այդ ոլորտը ցածրադիր գոտու համեմատ ունի իր լրացուցիչ դժվարությունները և կարիք ունի տնտեսության կարգավորման ուղղակի պետական միջամտության:

Երկրորդ, տնտեսության սուբսիդավորման հիմնական մասը, որը ներկայումս ուղղորդվում պետական հատվածին, անհրաժեշտ ենք համարում որոշակիորեն կրճատել և վերատրոջել լեռնային և բարձր լեռնային ագրարային գոտու տնտեսավարման ֆինանսական օժանդակությանը, քանի որ այդ ոլորտում գերիշխող դիրքում է գտնվում ագրոբիզնեսի մասնավոր և ոչ թե պատական հատվածը:

Երրորդ, ՀՀ կառավարության կողմից ագրարային ոլորտում իրականացվող ծրագրերի սուբսիդավորումը առաջարկում ենք կենտրոնացնել առավելապես ոլորտը ակտիվացնող՝ և ոչ թե կայունացնող նախագծերի իրականացմանը, քանի որ ներկայումս պետական ֆինանսական օժանդակությունը հիմնականում ուղղորդվում է ոլորտի տնտեսական ցնցումների կանխարգելմանը, հետին պլան թողնելով գյուղատնտեսությունում նորամուծությունների խթանումը:

Չորրորդ, լեռնային և բարձրլեռնային տարածաշրջանների տնտեսական դանդաղ զարգացման պատճառ է հանդիսանում ՀՀ օրենսդրության որոշակի անկատարությունը, մասնավորապես, «Լեռնային տարածաշրջանների զարգացման մասին» ՀՀ օրենքի բացակայությունը, որի ընդունմամբ օրենսդրական հիմքեր կձևավորվեն դրամավարկային և հարկաբյուջետային լծակներով անհրաժեշտ արտոնությունների սահմանման, բարձրադիր գոտու բնակավայրերի առաջանցիկ զարգացման և այդ բնակավայրերի բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման համար:

**ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ժամանակակից շուկայական տնտեսությունը հիմնվելով սեփականության տարբեր ձևերի վրա, գործում է երկու ուժերի՝ շուկայի ինքնակարգավորման, մասամբ նաև պետական կարգավորման սկզբունքով: Կիրառվում են շուկայական տնտեսավարման տարբեր մոդելներ, որոնք միմյանցից տարբերվում են պետական սեկտորի մասնակցության տեսակարար կշռով, ինչպես նաև տնտեսության պետական կարգավորման մոտեցումներով: Մի դեպքում, պետությանը վերագրվում է բավականաչափ համեստ՝ «գիշերային պահակի» դեր, որն ընդամենը կարգ ու կանոն է սահմանում տնտեսության նորմալ ընթացքը ապահովելիս, մյուս դեպքում՝ պետությունն ակտիվ դերակատարում ունի տնտեսության կարգավորման համակարգում:

Հետևաբար, ցանկացած պարագայում պետության դերակատարումը (ակտիվ կամ պասիվ) տնտեսավարման կարգավորման համակարգում անհրաժեշտություն է համարվում, որն հիմնականում պայմանավորված է հետևյալ պատճառներով:

Առաջին, շուկայական տնտեսավարմանը հատուկ չէ լիարժեք կատարելություն, քանի որ ոչ միշտ չէ, որ շուկայական մեխանիզմը իր գործունեությամբ բավարարում է հասարակության պահանջմունքները:

Երկրորդ, գործող իրական շուկայական մեխանիզմի գործունեությունը հաճախակի տարբերվում է կատարյալ մրցակցային միջավայրով գործող դասական ազատական շուկայից:

Պետության կողմից տնտեսական կարգավորման ժամանակ հիմնականում օգտագործվում է հետևյալ «գործիքակազմը». հարկային խթանիչ (զսպող) լծակները, սուբսիդիաները (որոնցով նպատակային ֆինանսավորում իրականացնելով, խրախուսվում է դրական արտաքին էֆեկտներ առաջացնող տնտեսական գործունեությունը), վարչական մեթոդները: Մակայն տնտեսագետների մեծ մասը գտնում է, որ պետության միջամտությունը տնտեսավարման կարգավորման հարցում պետք է լինի «չափավոր», քանի որ հակառակ պարագայում նվազում է շուկայական տնտեսավարման արդյունավետությունը¹:

Հասարակական եկամուտների վերաբաշխման անհրաժեշտությունը պայմանավորված է շուկայի գործող բաշխման մեխանիզմների ոչ լիարժեքությամբ, որը հատկապես դրսևորվում է կապիտալի, հողի աշխատաշուկաներում, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման շուկայում: Հարկային քաղաքականության, տրանսֆերտների, սուբսիդիաների ճանապարհով պետությունը եկամուտների վերաբաշխում է կատարում՝ տնտեսության շահութաբեր ոլորտներից ֆինանսական միջոցներ ուղղորդելով ոչ շահութաբեր ոլորտներ, դրանով իսկ ձգտելով որոշակիորեն համահարթեցնել ձևավորված սոցիալ-տնտեսական անհավասարությունը:

Միաժամանակ, մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվում, որ պետությունը չպետք է ձգտի ամբողջական համահարթեցման, քանի որ այն կրեթի տնտեսավարման խթանիչ լծակների գործառույթների թուլացմանը և կնվազեցնի շուկայական տնտեսավարման արդյունավետությունը²: Տնտեսագետները հիմնականում պետության միջամտող գործառույթները դիտարկում են տնտեսության կարգավորման համատեքստում, երբ անհրաժեշտություն է ծագում մեղմելու գործազրկությունը, տղաճը, կանխարգելելու տնտեսական ճգնաժամերը: Նման գլոբալ հիմնախնդիրներ լուծելուց բացի, պետությունը իր կարգավորիչ գործառույթներն է իրականացնում տարածաշրջանային տնտեսական մակարդակների համահարթեցման ոլորտում և անգամ միկրոտնտեսական հիմնախնդիրներ է լուծում, երբ

¹ Задон А., Петрухин Ю., Основы экономической теории., М., Рыбари, 2000, 101 с., стр. 58.
² Ведута Е.Н., Стратегия и экономическая политика государства, М. «Наука», 2004, 456 с.,стр. 48-49.

կազմակերպություններին ֆինանսավորում է ռիսկային, սակայն հեռանկարային բարձր արդյունավետություն ունեցող ծրագրեր¹:

Հետևաբար, պետական կարգավորումը լրացնում է գործող շուկայական տնտեսավարման գործառույթները և գործում է հետևյալ սկզբունքով. «մրցակցությունն ամենուր, որտեղ հնարավոր է, իսկ կարգավորումը այնտեղ, ուր անհրաժեշտ է»²: Ուստի, տնտեսության պետական կարգավորումը կարող է դրսևորվել երեք մակարդակով. միկրո (կազմակերպություններ, կորպորացիաներ), մեզո (միջին մակարդակ՝ տնտեսության ճյուղեր), մակրո (համապետական): Գործնականում պետության կարգավորիչ միջամտությունը նվազագույն ձևով հանդես է գալիս միկրոտնտեսական, իսկ առավելագույնը՝ մակրոտնտեսական մակարդակում:

Գյուղատնտեսությունը որպես երկրի տնտեսության առաջնահերթ ոլորտ և պարենային անվտանգության ապահովման հիմնական նախապայման՝ նախատեսում է պետական աջակցություն, մասնավորապես սուբսիդավորման քաղաքականություն՝ իր յուրահատուկ մոտեցումներով, որը պետք է հաշվի առնի ճյուղի առանձնահատկությունները և տարածաշրջանային համաչափ զարգացման անհրաժեշտությունը:

Պետական աջակցության սահմանափակության պայմաններում գյուղատնտեսության ոլորտում սեփականության և տնտեսավարման բազմաձևությունը, ապրանքների և ծառայությունների գների ազատականացումը առավել ամբողջական են բացահայտում յուրաքանչյուր տարածաշրջանի և արտադրող սուբյեկտի իրական մրցակցային հնարավորությունները: Վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից զգալի աջակցություն է ցուցաբերվել ոռոգման համակարգերի վերականգման, հողերի որակական բարելավման, սերմնաբուծության, բույսերի պաշտպանության, անասնաբուծության տոհմային գործի, անասնաբուծության, գյուղի սոցիալական զարգացման բնագավառներում:

Այնուամենայնիվ, հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիներում, պայմանավորված բնական և արտադրական պայմանների տարբերությամբ, առկա է գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մրցակցային հնարավորությունների ակնհայտ անհավասարություն: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, նման իրավիճակում պետական կարգավորիչ գործիքը գյուղատնտեսության սուբսիդավորումն է, որը նպատակամետ ձևով իրականացվում է ագրարային ոլորտի առավել կարևոր արտադրությունների խթանման համար³:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ եվրոպական երկրներում ագրոոլորտին տրամադրվող սուբսիդավորումը առավելապես ուղղվում է գների կայունացմանը, նպատակ ունենալով կայունացնելու ֆերմերների եկամուտները և հավասարակշռություն սահմանելու գյուղատնտեսությունում և այն սպասարկող ճյուղերում ձևավորվող գնագոյացման միջև: Երկրորդ տեղում է գտնվում ֆերմերներին ուղղակի օգնությանն ուղղված սուբսիդավորումը: Սակայն, մյուս կողմից, ֆերմերային տնտեսությունների ուղղակի սուբսիդավորումը առավել մեծ տեսակարար կշիռ է կազմում ագրարային ոչ բարենպաստ պայմաններ ունեցող տարածաշրջաններում, և այնպիսի երկրներում, ինչպիսիք են Նորվեգիան, Իսլանդիան, Ֆինլանդիան, Շվեյցարիան: Պետության կողմից ֆերմերներին ֆինանսական աջակցության ցուցաբերման նպատակը հողի ցածր ռենտայի փոխհատուցումն է լեռնային և հյուսիսային շրջաններում, որտեղ գյուղատնտեսական արտադրության ծախսերը գերազանցում են միջին մակարդակը: Այդ տարածաշրջաններում, ագրարային ուղղակի սուբսիդիաներ հատկացվում են ֆերմերային տնտեսությունների միավոր հողատարածքի կամ անասնազխաքանակի հաշվով⁴:

Այնուամենայնիվ, արևմտյան զարգացած երկրներում գյուղատնտեսությանը հատկացվող պետական սուբսիդիաների կառուցվածքում, որպես կանոն, մեծ տեսակարար կշիռ են

¹ Вахрин П.И., Инвестиции, учебник, М., «Финансы», 2002, 383 с., стр. 108.

² Экономическая теория, под ред. проф. В.И.Видяпина, Г.П. Журавлевой, «Российская экономическая академия», М., 2000 г., 639 с. стр. 169.

³ Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների հայեցակարգի մասին ՀՀ կառավարության որոշումը, 27 հոկտեմբեր, 2005 թ., թիվ 2310-Ն:

⁴ Иванов В.А., Государственное регулирование аграрного сектора в условиях Севера, М, СНИОО, № #8, 2006, стр. 36.

կազմում գների կայունացմանն ուղղված ֆինանսական միջոցները: Չարգացած տնտեսությամբ երկրներում գյուղատնտեսական արտադրանքի գնագոյացման ժամանակակից հայեցակարգերում ընդգծվում է պետության ակտիվ դերակատարումը գների կարգավորման գործընթացում և դրանով իսկ պայմանավորված՝ ագրարային ոլորտի կայուն եկամտունների ձևավորման, կուտակման և ներդրումների իրականացման գործում: Հետևաբար, զարգացած երկրների ագրարային ոլորտի պետական կարգավորման համակարգում բյուջեի միջոցների հաշվին գյուղմթերքների գների կայունացումը կարևորագույն գործընթաց է: Միայն 2000-2005 թվականներին ԱՄՆ-ում գյուղմթերքների գների բյուջետային օժանդակությունը ագրարարտադրանքի վաճառահանման արժեքի նկատմամբ 14,7%-ից հասավ 35,8%-ի, այդ թվում բուսաբուծությունում՝ 8,5%-ից մինչև 47%, անասնաբուծությունում՝ 20%-ից մինչև 28,5%: Եվրամիության երկրներում թողարկվող գյուղմթերքների արժեքի նկատմամբ սուբսիդավորումը կազմում է 45-50%, Ճապոնիայում և Ֆինլանդիայում՝ մինչև 70%, իսկ Ռուսաստանի Դաշնությունում՝ ընդամենը 3,5%¹: Այդ ցուցանիշը Հայաստանի Հանրապետությունում չի գերազանցում 1%-ի սահմանագիծը:

Միացյալ Նահանգներում գյուղատնտեսական մթերքների գների կայունության ապահովման պետական աջակցության երկու մոտեցում է ցուցաբերվում²: Մի դեպքում սահմանվում են նպատակային (երաշխիքային) գներ, որոնք կիրառվում են առավել հաճախակի օգտագործվող գյուղմթերքների տեսականու վրա: Նպատակային գների մակարդակը հաշվարկվում է այնպես, որպեսզի ֆերմերային տնտեսություններում երաշխավորվի ընդլայնված վերարտադրության ինքնաֆինանսավորումը՝ ծախսերի միջին մակարդակի պահպանման պայմաններում: Գյուղմթերքների իրացումն իրականացվում է շուկայական գներով, և եթե այն ավելի ցածր է նպատակային գներից, ապա այդ տարբերության չափով տարեվերջին պետության կողմից ֆերմերները ստանում են վոխհատուցում: Հետևաբար, ֆերմերի համար որպես տնտեսական իրատեսական գին է հանդես գալիս ոչ թե շուկայում ձևավորվող՝ այլ պետության կողմից նախօրոք կանխորոշված երաշխիքային արժեքը:

Մյուս դեպքում, գյուղմթերքների կայուն գների ապահովումը պետության կողմից իրականացվում է գրավադրման դրույքաչափերի սահմանմամբ: Ֆիքսված գներով գյուղմթերքները ֆերմերները հանձնում են ապրանքավարկային կորպորացիաներին որպես գրավ, երաշխավորվելով վոխհատուցում ստանալու պետության կողմից, եթե գյուղմթերքների շուկայական գները ցածր կլինեն նախօրոք ֆիքսված գներից: Միացյալ Նահանգների օրենսդրությունը իրավունք է ընձեռում ֆերմերներին գրավադրման հանձնելու գյուղմթերքները, հետաձգելով դրանց իրացումը և ձգտելով դրանց վաճառահանմանը շուկայական պահանջարկի առավել բարենպաստ իրավիճակներում: Ֆերմերները իրավունք ունեն գրավադրման պահից 9 ամսվա ընթացքում հետ գնելու իրենց արտադրանքը: Եթե այն տեղի չի ունենում, ապա գյուղմթերքները դառնում են ապրանքավարկային կորպորացիաների սեփականությունը, որից հետո վերջիններիս կողմից նախորոշված ֆիքսված գներով ֆերմերներին վճարվում է ապրանքերի արժեքը՝ հանած պահպանման ծախսերը:

Հետևաբար, ֆիքսված գները հանդես են գալիս որպես գյուղմթերքների իրացման երաշխիքային գների ներքին մակարդակ, որը մի կողմից ագրարային շուկայում իրացման բարենպաստ պայմանների պարագայում ֆերմերին հնարավորություն է տալիս ստանալու գերշահույթ, քանի որ 9 ամսվա ընթացքում վերջինս իրավունք ունի հետ գնելու իր արտադրանքը ֆիքսված արժեքով և վերավաճառելու բարձր գնով: Մյուս կողմից, իրացման գների անբարենպաստ պայմաններում, երբ դիտվում է գյուղմթերքների շուկայական գների անկում, հնարավորություն է ընձեռվում ապրանքավարկային կորպորացիաներից ֆիքսված գներով ստանալու իրացման այնպիսի հասույթ, որն ապահովում է ֆերմերային տնտեսության կայուն զարգացումը:

Եվրամիության երկրներում գյուղմթերքների կայուն գների պետական կարգավորման այլ մեխանիզմ է գործում, որին հատուկ է ապրանքային ինտերվենցիայի ճանապարհով

¹ Ильин Ю.А., Шишкин М.И., Механизмы государственного регулирования АПК, Ижевск, «КнигоГрад», 2008, стр. 112.

² Хитров А.Н., Государственное регулирование сельскохозяйственного производства в развитых капиталистических странах, М., ВНИИТЭИ АПК, 1990, стр. 28.

շուկայական առաջարկի և պահանջարկի հավասարակշռության սահմանում¹: Այստեղ պետությունը գյուղմթերքների մեծաքանակ գնումներ է կատարում, ֆերմերներին վճարելով նվազագույն երաշխիքային գներով, այնպես, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ինքնաֆինանսավորմամբ կազմակերպելու ընդլայնված վերարտադրություն: Այնուհետև հետևելով շուկային, պետությունը ինքն է վաճառում գյուղմթերքները: Եթե նկատվում է շուկայական գների անկում, ապա պետությունը փոքր-ինչ հապաղում է գյուղմթերքների վաճառահանման հարցում և դրանով ձևավորելով պահանջարկի ավելացում, բարձր գներով է վաճառում նախօրոք ձեռքբերած մեծաքանակ ագրոարտադրանքը, դրանով իսկ ֆերմերներին հնարավորություն ստեղծելով նույնպես բարձրացնելու սեփական արտադրանքի իրացման գները: Եվ հակառակը, եթե պարենամթերքի միջազգային շուկայում նկատվում է գների աննախադեպ աճ, որից օգտվում են հայրենական ֆերմերները և իրենց արտադրանքը վաճառում սպեկուլյատիվ գներով՝ ստանալով գերշահույթներ և վնաս հասցնելով սպառողին, ապա նախօրոք գնված մեծաքանակ գյուղմթերքներով և ցածր գներով պետությունը ինտերվենցիա է կազմակերպում հայրենական պարենամթերքի շուկա՝ դրանով իսկ մեղմելով ագրոարտադրանքի չափից ավելի գնաճը:

Դրա հետ մեկտեղ, Արևմտյան Եվրոպայի երկրներում գործում է պետության կողմից գյուղմթերքների երաշխիքային գների ապահովման համակարգ: Այսպես, Ֆինլանդիայում այդ նպատակով կիրառվում են երեք տեսակի գներ՝ նպատակային, դոտացիոն և լրացուցիչ²: Յուրաքանչյուր տարի, երկրի անտառային և գյուղատնտեսության նախարարությունը սահմանում է գյուղմթերքների իրացման նպատակային գներ, որն համաձայնեցվում է երկրի ֆերմերների ասոցիացիայի հետ: Նպատակային գների սահմանման հիմքում դրվում է հարավային շրջանների բարենպաստ գյուղատնտեսական շրջաններում պարենամթերքի արտադրության ինքնարժեքի կալկուլյացիան, իսկ համեմատաբար անբարենպաստ շրջանների համար սահմանվում է գների կայունացման լրացուցիչ սուբսիդավորում: Իսկ եթե իրականացվում է գյուղմթերքների արտահանում, ապա դրանց գծով կատարվում են պետական գնումներ՝ ֆերմերներին տրամադրելով հավելյալ ֆինանսավորում:

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում տնտեսության շուկայական կարգավորումը զուգորդվում է գյուղատնտեսության պետական աջակցությամբ, որը հիմնավորվում է հետևյալ կերպ:

Նախ, գյուղատնտեսությունը ընդունվում է որպես տնտեսության ռազմավարական ոլորտ, քանի որ պարենային ինքնաբավությունը մեղմացնում է արտակարգ իրավիճակի պայմաններում երկրի պարենային անվտանգության ռիսկերը:

Երկրորդ, գյուղատնտեսությունը կախված է բնական գործոններից, որոնք սահմանափակում են արտադրության դիվերսիֆիկացման հնարավորությունները և ստեղծում անհավասար պայմաններ տարբեր բնական գոտիների գյուղացիական տնտեսությունների համար: Բացի դրանից, հողի վրա կատարվող ներդրումները դյուրին չէ արագ վերակողմնորոշել այլ արտադրատեսակների արտադրության ուղղությամբ:

Երրորդ, գյուղատնտեսությունը բազմագործառնության ոլորտ է, այն չի սահմանափակվում միայն գյուղատնտեսական արտադրանքների արտադրությամբ, այլ նպաստում է գյուղական տարածքների զարգացմանը, ժողովրդական գործընթացների կարգավորմանը, էկոհամակարգերի պահպանմանը:

Չորրորդ, ագրարային ոլորտը ոչ միայն գյուղմթերքների խոշոր մատակարար է, այլև ապրանքների ու ծառայությունների կարևոր սպառող, հետևաբար մեծ ազդեցություն ունի տնտեսության կառուցվածքի և տնտեսական աճի վրա: Մակրոտնտեսական առումով, այս ոլորտում կատարվող ներդրումների բազմապատկչի արդյունքը շատ բարձր է, և երկրի տնտեսությունը խիստ զգայուն է ոլորտի անցումային վիճակների նկատմամբ:

Հինգերորդ, քանի որ գյուղատնտեսական մթերքները արտադրվում են տարբեր բնակլիմայական պայմաններում, դրանց ծավալներն ու գները խիստ տարբերակված ու անկայուն են: Ուստի ՀՀ տնտեսական անվտանգության տեսանկյունից արդարացում չունի

¹ Назаренко В.И., Пашцов А.Г., Государственное регулирование сельского хозяйства в странах с развитой экономикой, М., Информагробизнес, 1996, стр.75-76.

² Мезенцева Е.С., Государственное регулирования АПК в развитых странах, Конкуренция и рынок, 2007, # №1, стр 35.

ռազմավարական նշանակության պարենամթերքների պակասը ներկրումների միջոցով լրացնելու երկարաժամկետ քաղաքականությունը:

Ներկայումս հիմնախնդիր է հանդիսանում ՀՀ ագրարային ոլորտի սուբսիդավորման արդյունավետության գնահատումը: Սուբսիդավորման արդյունավետության գնահատմանն անհրաժեշտ է ցուցաբերել համալիր մոտեցում, կիրառելով ոչ թե տնտեսական մեկ ինտեգրալային ցուցանիշ, այլ ցուցանիշների համակարգ, ընդգրկելով այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են սուբսիդավորման ուղղակի տնտեսական արդյունքները, դրանց ուղեկցող բնապահպանական և սոցիալական հետևանքները:

Այսպես, կատարված ուսումնասիրություններից բացահայտվեց գյուղատնտեսության ոլորտի կարևորությամբ և առանձնահատկություններով պայմանավորված ճյուղի սուբսիդավորման անհրաժեշտությունը, որի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է այդ բնագավառում հիմնավորված քաղաքականության լիարժեք իրականացմամբ: Գյուղատնտեսության բնագավառում սուբսիդավորման քաղաքականության իրականացումը պահանջում է նախկինում իրականացված ծրագրերի արդյունավետության իրատեսական գնահատում, ծառայած խնդիրների բացահայտում, սուբսիդավորման իրականացման օպտիմալ սահմանների տնտեսագիտական հիմնավորում և տարածաշրջանային զարգացման առաջնահերթությունների իրագործում:

ՀՐԱԶՅԱ ԾՊՆԵՑՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Քոթասյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Կ. Գ. Դ.*

ՎԱՐԴԱՆ ԻՎԱՆՅԱՆ

*Նայասարանի պետական
ագրարային համալսարանի հայցորդ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԱՇՏԱՅԻՆ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կերի կայուն բազայի ստեղծումը հանդիսանում է անասնաբուծության զարգացման կարևորագույն պայմանը: Գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունն ուղիղ կապի մեջ է գտնվում կենդանիների կերակրման հետ: Կերային հաշվեկշռի ոչ ճիշտ կառուցվածքը, կերի բարձր ինքնարժեքը հանդիսանում է անասնաբուծության ցածր արդյունավետության հիմնական պատճառներից մեկը:

Կերարտադրության հիմնական աղբյուրը դաշտային կերարտադրությունն է: Կերային մշակաբույսերին, վերջին տարիների տվյալներով, բաժին է ընկնում հանրապետության ցանքատարածությունների ավելի քան 20 տոկոսը: Դաշտային կերարտադրության յուրաքանչյուր հեկտարից հնարավոր է ստանալ 6.5 անգամ ավելի շատ կերային միավորներ, քան բնական կերային տարածություններից¹:

Դաշտային կերարտադրության մեջ մշակվող կերային կուլտուրաները բազմազան են, որոնք իրարից տարբերվում են հիմնականում սննդանյութերի պարունակությամբ, հյութալիությամբ, մարսելիությամբ: Դաշտային կերային կուլտուրաներից առավել կարևոր նշանակություն ունեն հատիկակերային կուլտուրաները, բազմամյա բակլազգի խոտաբույսերը, միամյա խոտաբույսերը, սիլոսային կուլտուրաները, կերի արմատապտուղները և այլն:

Հողի, անասնազլխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և այլ արտադրական միջոցների մասնավորեցումից հետո ձևավորված բազմահազար գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, մասնատվածությունը, փոխառու միջոցների սղությունը և դրանց


¹ Ա.Ս. Թովմասյան, Դաշտային կերարտադրություն: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1978, էջ 10:

համալրման դժվարությունները, նախկին տնտեսական կապերի խզումը, բնակչության վճարունակ պահանջարկի անկումը, անասնագլխաքանակի և դրա կառուցվածքի փոփոխությունը և մի շարք այլ գործոններով պայմանավորված՝ վերջին երկու տասնամյակի ընթացքում տեղի են ունեցել դաշտային կերարտադրության ծավալների և դրանց որակական կազմի կտրուկ փոփոխություններ, որի հետևանքով անասնագլխաքանակի կրճատումը շրթայաբար հանգեցրել է նաև անասնապահական մթերքների, հումքի և վերջիններիս վերամշակումից ստացվող սննդամթերքի արտադրության ծավալների կրճատմանը: Համեմատության համար հարկ է նշել, որ կերային մշակաբույսերի տարածությունները 1990թ. կազմել են 251.3 հազ. հա, իսկ 2011 թվականի տվյալներով, աստիճանաբար կրճատվելով՝ նվազել են 3.8 անգամ և կազմել ընդամենը 66.0 հազ. հա¹:

Կերային մշակաբույսերի և նրա հիմնական տեսակների ցանքատարածությունների 1990-2011 թվականների վերաբերյալ տվյալները ներկայացվում են 1-ին գծապատկերում.

Գծապատկեր 1

Ընդամենը կերային մշակաբույսերի, ընթացիկ և նախորդ տարիների բազմամյա խոտաբույսերի, միամյա խոտաբույսերի, կերի արմատապտուղների, սիլոսի, կանաչ կերի և սենածի համար եզիպտացորենի ցանքատարածությունների փոփոխությունը 1990-2011 թթ.²



Ներկայացված տվյալներից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում առավել կրճատվել են միամյա խոտաբույսերի (6.7 անգամ), կերի արմատապտուղի (4.9 անգամ), եզիպտացորենի (58.1 անգամ) ցանքատարածությունները: Քանակական փոփոխությունների հետ մեկտեղ տեղի են ունեցել որակական փոփոխություններ: Կերային մշակաբույսերի կառուցվածքի փոփոխության մասին պատկերացում են տալիս 1-ին աղյուսակի տվյալները.

¹ 2011 թվականի բերքի տակ կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման հանրագումարը: ՀՀ ԱՎԾ, Երևան-10, էջ 8:

² 1990թ. և 1991թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածության և ստացված համախառն բերքի մասին ամփոփ տվյալներ, ՀՀ վիճակագրության գլխավոր հաշվողական կենտրոն, Երևան, 1992, էջ 2-4: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2006; 2007, 2008, 2009 և 2010 թվականներին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2007, 2008, 2009, 2010 և 2011 թթ., էջ 6-7:


ՀՀ-ում կերային մշակաբույսերի կառուցվածքի փոփոխությունը 1990-2011 թթ.

Մշակաբույսերը	1990թ.	1991թ.	2006թ.	2007թ.	2008 թ.	2009թ.	2010թ.	2011թ.
	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %	տես. կշիռը, %
Կերի արմատապտուղ	1.02	0.48	0.50	0.75	0.72	0.62	0.57	0.79
Եգիպտացորեն սիլոսի, կանաչ կերի և սենածի համար	9.39	7.15	1.04	0.79	0.41	0.68	0.47	0.62
Միլոսային այլ մշակաբույսեր	6.72	5.12	0.17	0.02	0.00	0.01	0.03	0.12
Միամյա խոտաբույսեր	27.91	29.28	15.52	12.78	11.74	12.88	12.09	15.82
Բազմամյա անձածկույթ խոտաբույսերի ընթացիկ տարվա ցանք	1.62	1.70	6.31	6.96	7.45	4.82	5.39	4.47
Բազմամյա խոտաբույսերի անցյալ տարիների ցանք	53.35	56.27	76.47	78.70	79.67	80.99	81.45	78.18
Ընդամենը կերային մշակաբույսեր	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Ներկայացված տվյալներից երևում է, որ կերային մշակաբույսերը որակական առումով զգալի փոփոխություններ են կրել: Դրանք հատկապես վերաբերում են սիլոսային մշակաբույսերին, այսպես՝ եթե 1990-1991թթ. դրանց տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է 16.11 և 12.27 տոկոս, ապա այն 2006-2011 թվականների միջին տվյալներով կազմել է 0.73 տոկոս: Ընդհանուր վերցրած կրճատվել է միամյա խոտաբույսերի տեսակարար կշիռը, որը 2011 թվականի տվյալներով կազմել է 15.82 տոկոս, դրա փոխարեն ավելացել է բազմամյա խոտաբույսերի անցյալ տարիների ցանքը, այն 1991 թվականի 56.27 տոկոսի դիմաց հասել է 78.18 տոկոսի: Վերջինս վկայում է, որ բազմամյա խոտաբույսերն օգտագործվում են սահմանված ժամկետներից ավել, 5 տարուց ավել: Ստեղծված վիճակը հանգեցնում է կերային մշակաբույսերի որակական հատկանիշների կորստի:

Գծապատկեր 2

Կերային մշակաբույսերի հիմնական տեսակների համախառն արտադրանքի փոփոխությունը 1991-2010թթ.¹



¹ 1990թ. և 1991թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածության և ստացված համախառն բերքի մասին ամփոփ տվյալներ, ՀՀ վիճակագրության գլխավոր հաշվողական կենտրոն, Երևան, 1992, էջ 2-4: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2006; 2007, 2008, 2009 և 2010 թվականներին, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2007, 2008, 2009, 2010 և 2011 թթ., էջ 6-7:

Կերային առանձին մշակաբույսերի արտադրության ծավալների փոփոխության միտումների ուսումնասիրությունը վկայում է, որ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների հետ մեկտեղ զգալիորեն կրճատվել են նաև տարբեր մշակաբույսերի արտադրության ծավալները:

Հիմնական կերային մշակաբույսերի 1990-2011թթ. արտադրության ծավալների փոփոխության մասին պատկերացում են տալիս 1-ին աղյուսակի տվյալները:

Ներկայացված տվյալներից ակնհայտ է դառնում, որ զգալիորեն կրճատվել են հիմնական կերային մշակաբույսերի արտադրության ծավալները, այսպես՝ միամյա խոտաբույսերի արտադրության ծավալները 2010 թվականին 1990 թվականի նկատմամբ կրճատվել են 1.9 անգամ, այդ թվում՝ միամյա խոտաբույսերինը՝ 5.4 անգամ, ինչ վերաբերում է կերի արմատապտղին, ապա այն կրճատվել է 5 անգամ, հյութալի կերերի համար եգիպտացորենի արտադրությունը՝ 45.2 անգամ:

Կերի բազայի համալրման համար կարևոր է համարվում նաև գարու և վարսակի արտադրության ծավալների փոփոխության ուսումնասիրությունը: Գարու և վարսակի ցանքատարածությունների ու համախառն արտադրանքի մասին պատկերացում են տալիս 2-րդ աղյուսակի տվյալները:

Աղյուսակ 2

Գարու և վարսակի ցանքատարածությունները 1990-2010թթ. տվյալներով¹

	(հեկտար)							
	1990թ.	1991թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Աշնանացան և գարնանացան գարի	56.4	65.0	63.7	65.9	66.5	68.6	61.2	67.9
Վարսակ	2.7	2.2	0.7	0.7	0.9	1.0	1.4	1.4

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ի տարբերություն վերը նշված կերային մշակաբույսերի, գարու արտադրության ծավալները որոշակիորեն ավելացել են, դրանք 2010 և 2011 թվականներին գերազանցել են 1990 թվականի մակարդակը, համապատասխանաբար՝ 8.5 և 20.4 տոկոսով:

Ցանքատարածությունների փոփոխության հետ մեկտեղ կարևոր ենք համարում գարու և վարսակի արտադրության ծավալների փոփոխության ուսումնասիրումը: Վերջինիս վերաբերյալ տվյալները ներկայացված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Գարու և վարսակի արտադրության ծավալների 1990-2010 թթ. տվյալները²

	(հազ. տոննա)							
	1990թ.	1991թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Աշնանացան և գարնանացան գարի	94.7	118.1	49.5	162.6	149.1	145.1	118.5	170.7*
Վարսակ	2.4	3.0	0.7	1.5	1.6	1.7	2.6	2.7*

* Տվյալները օպերատիվ են:

Ներկայացված տվյալներից երևում է, որ գարու և վարսակի արտադրության ինտենսիվացման մակարդակը որոշակիորեն բարձրացել է, այսպես՝ 1990-1991թթ. միջինի նկատմամբ 2010-2011թթ. գարու ցանքատարածություններն ավելացել են 6.3 տոկոսով, սակայն գարու համախառն արտադրանքն ավելացել է 35.9 տոկոսով:

¹ Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1995թթ., Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010թթ., վիճակագրական ժողովածուներ, ՀՀ ԱՎԾ, Երևան, 1996 և 2011թթ., էջ 6:

² Նույն տեղում, էջ 7:

Նշվածի հետ մեկտեղ լուրջ խնդիրներ են առաջացել նաև խոտհարքների ու արոտավայրերի արդյունավետ օգտագործման և վերականգնման գործում: Խոտհարքները (128.3 հազ. հա) և արոտավայրերը (1067.2 հազ. հա), ըստ հողային հաշվեկշռի տվյալների (2011 թ.), կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերի 57.6 տոկոսը¹:

Նշվածի հետ մեկտեղ բարձր ինքնարժեքի հետևանքով զգալիորեն կրճատվել է նաև համակցված կերերի արտադրությունը: Ներկայումս հանրապետությունում լիարժեք, հավասարակշռված, համակցված կերեր գրեթե չեն արտադրվում, դրանց «փոխարինում են» կերախառնուրդները, որոնց հիմնական բաղադրիչը ցորենի վերամշակումից առաջացած թեփն է, որի օգտագործման ժամանակ պահանջվող արդյունավետությունը չի ապահովվում:

Թվարկած և մի շարք այլ գործոնների արդյունքում, բացի անասնազվաքանակի կրճատումից, տեղի են ունեցել նաև մթերատվության և սերնդատվության անկում, որի հետևանքով հանրապետության բնակչության անասնապահական ծագման մթերքի պահանջարկի մեծ մասը՝ տավարի մսի և կաթի-կաթնամթերքի շուրջ 15 տոկոսը, խոզի մսի շուրջ 60 տոկոսը, թռչնի մսի շուրջ 85 տոկոսը բավարարվում է ներմուծման հաշվին, որը որոշակիորեն ազդում է ոչ միայն գյուղացիական տնտեսությունների անդամների սոցիալ-տնտեսական վիճակի վրա, այլ ինչ-որ չափով վատթարացնում է նաև երկրի մակրոտնտեսական ցուցանիշները:

Կերապահության հիմնախնդրի լուծման ռազմավարական նշանակությունը պայմանավորված է նաև մեկ այլ գործոնով, որը բխում է կերապահության և անասնաբուծության ճյուղի փոխհարաբերությունից: Հայտնի է, որ լեռնային և բարձր լեռնային (այդ թվում՝ սահմանամերձ) գոտիներում գյուղական բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունն անասնապահությունն է, ուստի բազմաթիվ համայնքների ամրապնդման, անցանկալի միգրացիայի կանխման, բնակչության եկամուտների աճի տեսանկյունից կերապահովվածության հիմնախնդրի լուծումն ունի նաև ռազմավարական կարևոր նշանակություն:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ կերապահության վիճակի հետագա բարելավման և զարգացման գործում կարևորվում է արտադրատեխնիկական սպասարկումների ու մատակարարումների, ոռոգման համակարգերի, ագրոտեխնիկական սպասարկման, մարքեթինգային, գիտակրթական և խորհրդատվական, ինչպես նաև շուկայական ենթակառուցվածքների (ֆինանսական, արտադրանքի իրացման, ապահովագրական) կայուն գործունեությունը:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կերարտադրության բարելավման հիմնական ուղիներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Կերարտադրության բնագավառում մեքենայացման և մեքենաօգտագործման արդյունավետության մակարդակի աստիճանական բարձրացումը: Մշակության ագրոտեխնիկական կանոնների կատարման ապահովումը:
- Կերարտադրության զարգացումը և արդյունավետությունը պայմանավորող սերմնաբուծության վիճակի էական բարելավումը:
- Ագրոտեխնիկայով պահանջվող պարարտանյութերի և բուժամիջոցներով ապահովվածության մակարդակի բարձրացումը:
- Ոռոգման առկա ցանցի հնարավորությունների արդյունավետ օգտագործումը, միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման համակարգերում ջրի կորուստների կրճատումը:
- Գյուղական բնակավայրերում անասնակերերի պահպանման, վերամշակման արտադրական ենթակառուցվածքների ձևավորումը և զարգացումը:
- Անասնապահությամբ զբաղվող գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններին և տնտեսավարողներին կերարտադրության, պահպանման, կերերի վերամշակման և օգտագործման բնագավառում խորհրդատվության տրամադրման գործընթացի բարելավումը:
- Անասնապահության ճյուղում վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:
- Կերարտադրության բնագավառում կոոպերացման գործընթացի խրախուսումը:

¹ Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2011 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին, ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի №1450-Ն որոշում:

Հանրապետության կերարտադրության ճյուղի զարգացումը պայմանավորող կարևոր գործոններից է նաև գյուղական բնակավայրերում անասնապահական մթերքների վերամշակման և իրացման փոքր և միջին ձեռնարկատիրության խթանմանն ուղղված պետական աջակցությունը:

Ներկայումս փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում կենտրոնացված են հանրապետության խոշոր քաղաքներում և Արարատյան հարթավայրում, որը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղական համայնքներում ենթակառուցվածքների զարգացման և ներդրումների ներհոսքի ավելացման վրա:

Շուկայական տնտեսության պայմաններում մրցունակության կարևորագույն գործոններից է արտադրանքի գինը: ՀՀ տարբեր մարզերի համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ կերային մշակաբույսերի, մասնավորապես՝ առվույտի, կորնգանի, միամյա խոտերի, կերի արմատապտուղների վրա կատարված ծախսերի բացահայտման ուղղությամբ:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ բազմամյա խոտաբույսերից առվույտի արտադրության շահութաբերության մակարդակը, ագրոտեխնիկական պահանջների կատարման դեպքում (տվյալ տարվա ցանքի համար) կազմում է 23.5 %, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքները հիմնականում կատարվում են արտադրողների կողմից՝ շահութաբերության մակարդակն առանց աշխատուժի վարձատրման ծախսերի կազմում է 40.9 %: Սակայն գյուղացիական տնտեսությունները, հնարավորությունների սահմանափակության պատճառով, արտադրությունը կազմակերպում են՝ չպահպանելով տեխնոլոգիական պահանջները, որն իր բացասական ազդեցությունն է ունենում բերքատվության և արտադրանքի որակի վրա: Այդ իսկ պատճառով առվույտի արտադրության փաստացի շահութաբերությունը կազմում է, համապատասխանաբար՝ 7.5 % և 25.2 %: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ առվույտի արտադրության արդյունավետությունը բավականին բարձր է նախորդ տարիների ցանքի դեպքում (հետագա տարիներին), այն, ըստ տեխնոլոգիայի հաշվարկման, կազմում է 45.2 %, իսկ փաստացի շահութաբերությունը՝ 35.8 %:

Կորնգանի արտադրությունն առվույտի համեմատությամբ ավելի պակաս արդյունավետ է: Երկրորդ տարվա բերքի դեպքում համապատասխան տեխնոլոգիայով մշակությունից շահութաբերության մակարդակը կազմում է 16.7 %, փաստացիի 6.8 %-ի դիմաց, իսկ աշխատուժի փոխհատուցման ծախսերը չհաշվարկելու պայմաններում՝ համապատասխանաբար՝ 41.5 և 31.9 %:

Այլ է պատկերը նախորդ տարիների ցանքի ժամանակ: Այս դեպքում շահութաբերության մակարդակը տեխնոլոգիական պահանջները պահպանելու դեպքում կազմում է 93.6, փաստացի 75.2 %-ի դիմաց:

Կերի նպատակով գարին օգտագործվում է բավականին մեծ ծավալներով, և արդյունավետությունը գնահատվել է ջրովի և անջրդի պայմաններում աճեցնելու դեպքում: Շահութաբերության մակարդակը բնականաբար ավելի բարձր է ջրովի պայմաններում արտադրություն կազմակերպելու ժամանակ, այն տեխնոլոգիական պահանջները կիրառելու դեպքում կազմում է 37.0 %՝ անջրդի պայմաններում արտադրության 29.2 %-ի դիմաց:


Հատկանշական է, որ միամյա խոտերից վիկ + վարսակ մշակելու դեպքում արդյունավետությունը բավականին բարձր է: Հարկ ենք համարում նշել, որ թեև հանրապետությունում գյուղացիական տնտեսություններից քչերն են մշակում վիկ + վարսակ կերային մշակաբույսը, սակայն այս դեպքում արդյունավետությունը ջրովի պայմաններում կազմում է (ըստ տեխնոլոգիայի հաշվարկման դեպքում) 45.1 %, փաստացին՝ 38.0 %, իսկ անջրդի պայմաններում՝ համապատասխանաբար՝ 42.6 և 34.5 %:

Կերային մշակաբույսերից կերի արմատապտուղները մշակվում են համեմատաբար փոքր տարածքների վրա, սակայն բերքատվության շնորհիվ ապահովում են բարձր արդյունավետություն: Տեխնոլոգիական պահանջները կիրառելու դեպքում շահութաբերության մակարդակը կազմում է 136.3 % (դա պայմանավորված է կերի արմատապտուղի բարձր բերքատվությամբ), մինչդեռ փաստացի շահութաբերությունը, ըստ ուսումնասիրությունների, 80.3 % է, որը նույնպես վկայում է տվյալ մշակաբույսի արտադրության արդյունավետության մասին:

Ընդհանուր առմամբ կերային մշակաբույսերը շուկայում ձևավորված գների պայմաններում ապահովում են որոշակի շահութաբերություն, ծախսերը փոխհատուցվում են, և արտադրական գործունեությունը այս ոլորտում արդյունավետ է: Վերջին տարիներին կերային մշակաբույսերի միավորի գները որոշակիորեն տատանվում են (գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Կերային մշակաբույսերի գների փոփոխությունը 2006-2011 թթ.



Գծապատկերից երևում է, որ ներկայացված ժամանակահատվածի 2009-2011թթ. հատվածում գարու գինը զգալիորեն բարձրացել է, բարձրացել են նաև բազմամյա խոտաբույսերի գները:

Կերերի արտադրության հիմնահարցի լուծումն ինքնանպատակ չէ, քանի որ դրանով է պայմանավորված անասնաբուծական բոլոր ճյուղերի կայուն և արդյունավետ զարգացումը: Հետևաբար հանրապետությունում կերապահովվածության հետագա զարգացման նպատակով առաջարկվում է մշակել և իրականացնել պետական համալիր ծրագիր:

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆ

*Մ. ԳԱՄ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ

*Մ. ԳԱՄ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՅՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսությունը հանրապետության տնտեսության առաջատար ոլորտներից է, որի տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) վերջին հինգ տարիների տվյալներով, միջինը, կազմել է 17.8, իսկ գյուղատնտեսական մթերքի (հումքի) վերամշակող արդյունաբերության հետ մեկտեղ՝ 22.9 տոկոս: Գյուղատնտեսությանը բաժին է ընկնում հանրապետության ընդհանուր զբաղվածների 45,4 տոկոսը: Այդուհանդերձ գյուղատնտեսության արտադրական ներուժի օգտագործման մակարդակը դեռևս բավականին ցածր է, որի հիմնական պատճառներից մեկը գյուղացիական տնտեսությունների փոքր

չափերն է: Ուստի գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած խնդիրների լուծման, ներքին և արտաքին մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից առանձնահատուկ կարևորվում է գյուղացիական տնտեսությունների խոշորացումը, այդ բնագավառում պետական միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը: Գյուղացիական տնտեսությունների փոքր չափերն ու մասնատված հողաբաժինները, որոնք ձևավորվել են հողի սեփականաշնորհման գործընթացի արդյունքում սահմանափակում են ոլորտի կայուն զարգացումը և խոչընդոտում են գյուղատնտեսության վարման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրմանը և արդյունաբերականացմանը:

Գյուղացիական տնտեսությունների խոշորացման տեսլականը՝ մրցունակ ապրանքային տնտեսությունների ձևավորման ու զարգացման միջոցով, երկրի պարենային անվտանգության (անկախության), ինչպես նաև գյուղատնտեսական արտադրությունում տնտեսավարողների բարձր կենսամակարդակի ապահովման հիմնախնդիրների աստիճանական լուծումն է:

Հայաստանի Հանրապետությունում 90-ական թվականների սկզբին իրականացված հողի, անասնազխաքանակի, գյուղտեխնիկայի և այլ արտադրական միջոցների սեփականաշնորհման (մասնավորեցման) և ագրարային բարեփոխումների արդյունքում ձևավորվել և ներկայումս գործում են շուրջ 340 հազար ընտանեկան գյուղացիական տնտեսություններ: Դրանց միջին հաշվով, բաժին է ընկնում շուրջ 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1.1 հա վարելահողեր:

Գյուղատնտեսական արտադրությունն իրականացվում է ավելի քան 1200 հազար մասնատված հողակտորների վրա: Գյուղացիական տնտեսությունների (ընտանեկան տնտեսությունների) կողմից արտադրվող գյուղատնտեսական մթերքի տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքում կազմում է 97.2 տոկոս:

Գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և հողամասերի մասնատվածությունը հնարավորություն չեն ընձեռում տնտեսության բնականոն զարգացման, ընդլայնված վերարտադրության, ինչպես նաև արտադրության արդյունավետ կազմակերպման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և դրամական հոսքերի համաչափ ապահովման համար:

Գյուղատնտեսությունում զբաղվածների թիվը 2010 թվականի տվյալներով, ինչպես նշվել է, կազմում է հանրապետությունում ընդամենը զբաղվածների շուրջ 45 %-ը, սակայն գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ցածր մակարդակի, ագրոտեխնիկական և զոոտեխնիկական կանոնների պահանջների թերի կատարման, փոխառու և հիմնական միջոցների սղության և մի շարք այլ գործոններով պայմանավորված՝ աշխատանքի արտադրողականությունը շարունակում է մնալ ցածր, և տնտեսավարողների եկամուտները չեն ապահովում գյուղաբնակների կյանքի բավարար որակ:

Գյուղացիական տնտեսությունների խոշորացումը բնականոն, օրինաչափ գործընթաց է, որը չունի այլընտրանք և բնորոշ է, մասնավորապես, անցումային տնտեսության գրեթե բոլոր երկրներին:

Գյուղական աղքատության բարձր մակարդակը, պաշտոնական տվյալներով 2010թ.՝ 36,0 %, գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական զբաղվածության ընդլայնման օբյեկտիվ բարդությունները, փոքր, ոչ արդյունավետ տնտեսությունների միավորմանը խոչընդոտող բարդության հաղթահարումը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրության ներդրումային գրավչության ցածր մակարդակը վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների խոշորացումը ժամանակատար գործընթաց է: Այն կարող է իրականացվել աստիճանաբար, նպատակամետ պետական ծրագրերի շրջանակներում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղացիական տնտեսությունների խոշորացումը կարող է իրականացվել ինչպես առանձին տնտեսությունների ընդլայնման (տնտեսավարող սուբյեկտների կողմից գյուղատնտեսական արտադրությունում նոր հողատեսքերի ներգրավման, անասնազխաքանակի ավելացման, բարձր ավելացված արժեք ապահովող մթերքի արտադրության և էքստենսիվ ու ինտենսիվ զարգացման այլ եղանակներով), այնպես էլ՝ գյուղացիական տնտեսությունների կոոպերացման, ընկերությունների, ընկերակցությունների, ասոցիացիաների և կամավոր հիմունքներով այլ միավորումների ձևավորման միջոցով:

Գյուղացիական տնտեսությունների խոշորացման նպատակն է՝ սոցիալ-տնտեսական շարժառիթների (մոտիվացիաների) և գյուղատնտեսության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացման միջոցով նպաստավոր պայմաններ ստեղծել մրցունակ գյուղատնտեսական սուբյեկտների կայացման, ինչպես նաև խոշոր առևտրային կազմակերպությունների զարգացման համար: Վերջինս պահանջում է լուծել մի շարք խնդիրներ, որոնցից հիմնականներն են՝

- օրենսդրության կատարելագործման միջոցով անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել տնտեսությունների կամավոր միավորումների (կոոպերատիվների) ձևավորման, հողի շուկայի լիարժեք կայացման, հողամասերի միավորման, ոլորտում մրցակցային բարենպաստ միջավայրի ձևավորման և ներդրումային գրավչության բարձրացման համար,
- ապահովել պետություն-մասնավոր հատված արդյունավետ համագործակցությունը, ընդլայնել պետական աջակցության չափերը և կատարելագործել դրա ձևերը, մեթոդներն ու մեխանիզմները,
- նպաստել գյուղական տարածքներում արտադրական (ֆիզիկական), սոցիալական և շուկայական (ֆինանսական) ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը,
- խթանել սննդամթերքի վերամշակող արդյունաբերությունում փոքր և միջին ձեռնարկատիրությունը, արտադրական ուժերի ապակենտրոնացումը և ռացիոնալ տեղաբաշխումը, ինչպես նաև գյուղատնտեսությանն այլընտրանքային աշխատատեղերի ստեղծումը (հանքարդյունաբերության, էներգետիկայի, զբոսաշրջության, առևտրի, ծառայությունների, թեթև արդյունաբերության և այլ ոլորտներում),
- խրախուսել գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների և գյուղացիական տնտեսությունների միավորումների (միությունների) միջև պայմանագրային հարաբերությունների արմատավորումը, ինստիտուցիոնալ կառույցների զարգացումը:

Գյուղատնտեսական արտադրության զարգացման կարևոր ուղղություններից է օրգանական (էկոլոգիական) գյուղատնտեսությունը, որը գյուղական տարածաշրջանների զարգացման այլընտրանքային ուղղություն է և ունի զարգացման ռեալ հնարավորություններ, կարող է մեծապես նպաստել աղքատության հաղթահարմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, տնտեսությունների շահութաբերությանը և ի վերջո ՀՀ ագրոպարենային համակարգի զարգացմանը:

Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման գործընթացը սահմանափակող հիմնական գործոններն են.

- գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական արտադրությանն այլընտրանքային ոլորտներում աշխատատեղերի սղության պայմաններում բնակչության եկամուտների հիմնական աղբյուրներն են՝ երկրագործությունից և անասնապահությունից ստացված եկամուտները, ուստի փոքր չափերի տնտեսությունների կողմից հողերի, ինչպես նաև անասնազվաքանակի, արտադրության այլ միջոցների օտարումը և արդյունքում՝ խոշոր սպորանքային տնտեսությունների ձևավորումն ընթանում է դանդաղ տեմպերով,
- հողի մշակման նկատմամբ գյուղական բնակչության «մենատիրական» հոգեկերտվածքը (մենթախիտեռը) ձևավորվել է բազմադարյան պատմության ընթացքում, որի վկայությունն է թերևս այն փաստը, որ հողերի համատարած (համընդհանուր) սեփականաշնորհման գործընթացի սկզբում ձևավորված 8200 գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները կարճ ժամանակահատվածում լուծարվեցին և վերակազմավորվեցին գյուղացիական ընտանեկան տնտեսությունների,
- հանրապետության գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկայնության և գյուղատնտեսության ապահովագրության դեռևս բացակայության հետևանքով, ոլորտը գրավիչ չէ օտարերկրյա և տեղական խոշոր ներդրումների ներգրավման համար,
- մատչելի տոկոսադրույքներով և երկարաժամկետ վարկային ռեսուրսների սղությունը, պարենամթերքի ներքին շուկայի ոչ մեծ տարողությունը, արտահանվող պարենային սպորանքների իրացման որոշ բարդությունները նպաստավոր չեն գյուղատնտեսական մթերքի (հումքի) վերամշակման բնագավառում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար,

- Հայաստանում դեռևս լիարժեք չեն ձևավորվել ինստիտուցիոնալ համապատասխան կառույցներ (մեծածախ շուկաներ, բորսաներ, լոգիստիկ կենտրոններ և այլն), ինչպես նաև մասնագիտացված միջնորդ կառույցներ, որոնց միջոցով կարող է իրականացվել գյուղատնտեսական մթերքի մեծածավալ խմբաքանակների գնումը և իրացումը ներքին ու արտաքին շուկաներում, որը նույնպես կնպաստի գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը, քանի որ նշված կառույցները համագործակցելու են միայն միջին և խոշոր ապրանքային տնտեսությունների հետ,
- Ենթակառուցվածքների թերզարգացվածությունը նույնպես հանդիսանում է տնտեսությունների խոշորացման խոչընդոտող գործոններից մեկը:
Հայաստանի Հանրապետությունում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հնարավորություններն ու նպաստող գործոններն են.
- Երկրի տնտեսությունում ազատ մրցակցային միջավայրի ձևավորումն անխտասպիտելիորեն կհանգեցնի գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը, քանի որ փոքր չափերի տնտեսություններն անմրցունակ կլինեն խոշորների նկատմամբ (այդ գործընթացն արդեն իսկ տեղի է ունենում): ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագրով գյուղատնտեսության ոլորտը դասվում է պետական ծախսային քաղաքականության առաջնահերթությունների շարքին, ուստի առաջիկայում հնարավորություն կընձեռվի իրականացնել տարբեր նպատակային ծրագրեր, որոնք կուղղվեն գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը, ենթակառուցվածքների գործունեության բարելավմանը, ազրովերամշակման ոլորտի խթանմանը, խոշոր գործարար նախագծերում պետական կապիտալի ներգրավմանը,
- Եվրամիության հետ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի հնարավոր ստորագրումը, տեղական արտադրության սննդամթերքի անվտանգության բնագավառում ներկայացվող պահանջները միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին համապատասխանեցումը, տարածաշրջանային բարենպաստ զարգացումները մեծապես կնպաստեն պարենամթերքի արտահանման ծավալների էական ընդլայնմանը, ինչը շրթայաբար կհանգեցնի տնտեսությունների խոշորացմանը,
- ՀՀ տնտեսության զարգացման ուղեմիջային ռազմավարական ծրագրերով նախատեսվում է արդյունաբերության, էներգետիկայի, զբոսաշրջության, գիտելիքների վրա հիմնված այլ ոլորտների առաջանցիկ զարգացումը, որի արդյունքում կառաջանան նոր աշխատատեղեր, տնտեսական գլոբալ ճգնաժամի հետևանքները հաղթահարելուց հետո հնարավորություն կընձեռվի ավելացնել ոլորտին ուղղվող պետական տրանսֆերտները և բարձրացնել ոլորտի մրցունակությունը,
- գլոբալացման անշրջելի գործընթացները, Եվրամիության արևելյան գործընկերության շրջանակներում իրականացվող աջակցության ծրագրերը, տարածաշրջանային համագործակցության ընդլայնումը կհանգեցնեն գյուղատնտեսության ոլորտի մասնագիտացմանը, արտադրության կառուցվածքի վերափոխումներին և դիվերսիֆիկացմանը, ինչը հնարավոր է միայն գյուղացիական տնտեսությունների խոշորացման պայմաններում,
- հետսեփականաշնորհման ժամանակահատվածում մասնատված հողաբաժինների համարժեք փոխանակումը (կոնսոլիդացումը) գյուղացիական տնտեսությունների միջև, արտավայրերի ու խոտհարքների մասնավորեցման գործընթացի խթանումը, ներկայումս իրականացվող սուբսիդավորման ծրագրի շարունակականությունը նույնպես հնարավորություն կընձեռի տնտեսությունների խոշորացման և գյուղատնտեսական արտադրությունում նոր հողատեսքերի ներգրավման համար
- պետական պահուստային հողերի փոխանցումը համայնքներին, հողի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ավարտը, հողի շուկան կարգավորող օրենսդրության առկայությունը (մասնավորապես՝ «ՀՀ հողային օրենսգիրքը») ստեղծում են նախադրյալներ առավել կենսունակ գյուղացիական տնտեսությունների կողմից հողերի կենտրոնացման (ձեռքբերման) և վարձակալման համար:
Գյուղացիական տնտեսությունների խոշորացմանն ուղղված քաղաքականությունը կիրականացվի այդ գործընթացը խոչընդոտող գործոնների բացասական ազդեցության

մեղմման, ինչպես նաև առկա հնարավորությունների արդյունավետ օգտագործման միջոցով: Այդ տեսանկյունից առանձնահատուկ կարևորվում է գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության գերակայությունների և կիրառվող մեխանիզմների վերաբերյալ հայեցակարգային հստակ մոտեցումների սահմանումը, որոնք, ներառելով տնտեսական, սոցիալական, բնապահպանական բաղադրիչները, հնարավորություն կընձեռեն ստեղծելու անհրաժեշտ նախադրյալներ ոլորտի կայուն ու համաչափ զարգացման համար:

Գյուղացիական տնտեսությունների խոշորացման գործընթացի խթանումը պահանջում է Հայաստանի Հանրապետության ագրարային քաղաքականությունը նպատակաուղղել.

- ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացված հողերի միավորման (կոնսոլիդացման) փորձնական ծրագրի շարունակականության ապահովմանը,
- տարածքային զարգացման ծրագրերում գյուղական համայնքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ընդլայնմանը,
- պետական աջակցությամբ գյուղատնտեսության զարգացման ծրագրերի նպատակաուղղում գյուղատնտեսական հողերի և ռեսուրսների համատեղ օգտագործման հնարավորությունների ընդլայնմանը,
- գյուղացիական տնտեսությունների միավորման և տնտեսությունների խոշորացման գործընթացի խթանմանն ուղղված՝ գյուղատնտեսությունում ապրանք արտադրողների սուբսիդավորմանը, արտոնյալ վարկավորմանը և աջակցության մյուս ձևերին,
- գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների կոոպերացման և տնտեսությունների խոշորացման տնտեսական արդյունավետության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,
- գյուղական տարածքներում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության նպատակային ծրագրերի իրականացմանը,
- նորամուծություններին, տեխնիկական վերազինմանը և տեխնոլոգիական գործընթացների արդիականացմանն ուղղված աջակցության ընդլայնմանը,
- ագրովերամշակման ոլորտում խոշոր ներդրումային ծրագրերի իրականացմանն աջակցությանը,
- սննդամթերքի անվտանգության, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների իրականացմանը,
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխությունների միջոցով գյուղատնտեսական հողատեսքերի ոչ նպատակային օգտագործման համար պատասխանատվությունը սահմանող դրույթների ուժեղացմանը,
- գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ պիտանի հողերի վերածելու համար վնասների հատուցումը և գյուղ. նշանակության հողերի վիճակին բերելու համար ողջ պատասխանատվությունը ընկնում է քաղաքացիների և իրավաբանական անձանց վրա,
- մասնավոր ներդրողների կողմից ագրոբիզնեսի զարգացման ծրագրերի իրականացման դեպքում ոչ նպատակային օգտագործվող կամ չօգտագործվող գյուղատնտեսական հողատեսքերը պետական գերակա շահ ճանաչելու կարգավիճակով պոտենցիալ ներդրողներին վաճառելուն,
- գյուղատնտեսության ոլորտին ծառայություններ մատուցող կառույցներին (ջրօգտագործողների ընկերություններ, գյուղատնտեսության տեխնիկական սպասարկման կենտրոններ, վերամշակող կազմակերպություններ և այլն) կողմից պետական գերակա շահ ճանաչելու միջոցով ոչ նպատակային օգտագործվող կամ չօգտագործվող հողատարածքների տրամադրմանը (վաճառքին),
- համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող (ոչ գյուղատնտեսական նշանակության), մեխորացման կարիք ունեցող հողերը կադաստրային արժեքի 1/3-ով վաճառքին՝ դրանք մեխորացնելու և ռեկուլտի-

վացիայի ենթարկելու պատրաստակամություն հայտնող և գյուղատնտեսական օգտագործման նպատակներով ձեռք բերող ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Շուկայական տնտեսության պայմաններում, մրցակցային բարենպաստ միջավայրի ձևավորման դեպքում, գյուղատնտեսության ոլորտում տնտեսությունների խոշորացումն օբյեկտիվ և այլընտրանք չունեցող գործընթաց է, քանի որ տվյալ գոտում, ելնելով գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից և գոտիական մասնագիտացումից, օպտիմալ չափերով տնտեսությունների ձևավորմամբ հնարավորություն է ընձեռվում ծախսերի կրճատման արդյունքում ստանալ ավելի բարձր բերք մեկ միավոր հողատարածությունից, կրճատել միավոր արտադրանքի վրա կատարվող ծախսումները, բարձրացնել մեքենայացված աշխատանքների տեսակարար կշիռը (մասշտաբի էֆեկտ), հետևաբար՝ բարձրացնել արտադրողականությունը և արտադրանքի մրցունակությունը: Սակայն, այդ գործընթացների խթանման և խրախուսման համար պահանջվելու է պետական աջակցության աստիճանական ընդլայնումը վերը նշված հիմնական ուղղություններով, ինչպես նաև վերջիններիս շարունակական հստակեցումը և կատարելագործումը, ելնելով առկա ռիսկերի գնահատման ու վերլուծության արդյունքներից:

ԵՎԳԵՆՅԱ ՅԱԿՈԲՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքի 75 տոկոսը գտնվում է ծովի մակերևույթից 1500 մետր բարձրության վրա: Հայաստանի 60 տոկոսի համար տարեկան տեղումները կազմում են մինչև 600 մմ, իսկ 20 տոկոսի համար՝ 400 մմ: Հայաստանի Հանրապետության տարածքում շուրջ 9480 փոքր և մեծ գետ է գտնվում, որոնցից 379-ը ունի 10 կմ և ավելի երկարություն: Գետերի ցանցի ընդհանուր երկարությունը 23 000 կմ է: Երկրի տարածքի 76%-ը պատկանում է Արաքս գետի ավազանին: Գետի պետական սահմանն է Իրանի հետ և Թուրքիայի հետ սահմանի մեծ մասը: Երկրի հյուսիսարևելյան մասը պատկանում է Քուռ գետի ավազանին: Տեղումների ընդհանուր ծավալի (15 000-18 000 մլն խոր. մ) 2/3-ը գոլորշանում է, և միայն 1/3-ն է առաջացնում վերգետնյա կամ ստորգետնյա հոսք, որն ունենում է անհամաչափ բաշխում¹: Գետերը հիմնականում ունեն ոչ հավասարաչափ սնուցում:

Գետերի վրա կառուցված է 75 ջրամբար՝ 986.0 միլիոն խոր. մետր ծավալով: Հանրապետության հիդրոէներգետիկ պաշարները գնահատվում են 1 700 000 կՎտ-ի, որոնցից այսօր օգտագործվում է միայն 40 %-ը:

Հայաստանի տարածքում գտնվում են շուրջ 100 մանր լճեր՝ մոտ 300 միլիոն խոր. մետր ընդհանուր ծավալով: Այստեղ է նաև Կովկասի ամենամեծ բարձրալեռ լիճը՝ Սևանը, որի մակերեսը կազմում է 1240 քառ. կմ (մինչև իջեցումն այն կազմել է 1360 քառ. կմ), խորությունը՝ շուրջ 99 մ: Լիճն են թափվում 28 գետ, արտահոսում՝ միայն Հրազդանը: Երկիրը հարուստ է նաև ստորգետնյա ջրերով:

Հայաստանի մի քանի գետերի հիդրոգրաֆիկական և հիդրոլոգիական բնութագրերը ներկայացված են 1-ին աղյուսակում:

Տարեկան առաջանում է մոտ 3 մլրդ խոր. մետր ստորգետնյա ջուր: Ստորերկրյա ջրերի ոչ համաչափ տեղաբաշխման պատճառով Արարատյան դաշտում արտեզյան ջրերի ճնշումից ճահիճներ են առաջանում, որոնց ընդհանուր մակերեսը մոտ 1500 քառ. կմ է: Ստորգետնյա ջրերն օգտագործվում են ջրամատակարարման և ոռոգման նպատակով: Խմելու ջրի 96%-ը ևս ստորգետնյա ծագում ունի²:

¹ http://ostarmenia.com/?page_id=4729&lang=hy#gold

² http://ostarmenia.com/?page_id=4729&lang=hy#gold

Հանրապետության մի քանի խոշոր լճերի ծավալների և ջրի հայելու մակերեսի վերաբերյալ տվյալները ներկայացվում են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 1

Հայաստանի մի քանի գետերի հիդրոգրաֆիկական և հիդրոլոգիական բնութագրերն ըստ գետերի վերջին (սահմանափակող) հատվածների¹

Գետերի անվանումը	Որտեղ է թափվում	Երկարությունը, կմ	Ձրհավար մակերեսը, քառ. կմ	Ընդհ. անկումը, մ	Միջին տարեկան հոսքը խոր.մ/վրկ	Հոսքի մոդուլը 1/վրկ. 1 քառ. կմ-ից
Փամբակ	Գեբեղ	86	1380	940	7.97	7.97
Գեբեղ	Խոռամ	176	4050*	565	8.84	8.84
Աղստև	Կուր	133	1610*	2770	6.83	6.83
Ախուրյան	Արաքս	186	3602*	1070	9.08	9.08
Հրազդան	Արաքս	141	2310	1090	9.70	9.70
Որոտան	Արաքս	178	2180*	2775	10.0	10.0
Մարիկ	Սևանա լ.	43	753	970	5.38	5.38
Ազատ	Արաքս	56	547	2285	11.1	11.1
Արփա	Արաքս	128	2175*	2670	10.1	10.1
Արաքս	Կուր	1050	101900	3295	-	-

* Տվյալները սահմանափակվում են Հայաստանի սահմաններում ընդգրկվածության մասով:

Աղյուսակ 2

Հանրապետության մի քանի խոշոր լճերի ծավալները և ջրի հայելու մակերեսը²

Լճերի անվանումները	Մակարդակի միջը, մ	Ծավալը	Հայելու մակերեսը քառ. կմ
Սևանա	1897(1916*)	33.8(58.5*) խոր. կմ	1244 (1416*)
Արփի	1480	50.0 մլն. խոր. մ	4.5
Սև	2708	9.0 մլն. խոր. մ	2.0
Այրր	853	310 հազ. խոր. մ	0.07
Քարի	3190	357 հազ. խոր. մ	0.12
Կապուտան	3299	1.5 մլն խոր. մ	0.1
Ակնա	3038	2.5 մլն խոր. մ	0.8

* Ցուցանիշները վերաբերում են մինչև լճի մակարդակի իջեցման գործընթացի սկսելը:

Հայաստանի բնակչության շուրջ 36 տոկոսը ապրում են գյուղական համայնքներում, որտեղ եկամտի զգալի մասը ձևավորվում է գյուղատնտեսության ոլորտում, որի մեծ մասը ոռոգելի երկրագործությունն է: Հայաստանում հիմնական ջրօգտագործողն է հանդիսանում գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսական ՀՆԱ-ի տեսակարար կշիռը վերջին 3 տարիների տվյալներով կազմում է ավելի քան 17 տոկոս, Հայաստանի բուսաբուծական արտադրանքի 80 տոկոսը ստեղծվում է ոռոգելի տարածքներում:

Հայաստանում հիմնական ջուր սպառող ոլորտները գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են, քաղաքային ջրամատակարարումը, էներգետիկան, ձկնալիս տնտեսությունը և այլն: Հայաստանում գյուղատնտեսությունը հանդիսանում է հիմնական ջրօգտագործողը: Ոռոգելի հողատարածքների ընդհանուր մակերեսը 1987 թվականից մինչև 1998 թվականը 340000 հա-ից կրճատվել է մինչև 274000 հա և կայունացել է այդ մակարդակի վրա: Շուկայական հարաբերությունների անցման ժամանակահատվածում գյուղատնտեսության կողմից օգտագործվող ջրի ծավալը կրճատվել է մոտավորապես կիսով չափ. 1988 թվականին 2.7 մլրդ մ³-ից 2000 թվականին հասնելով մինչև 1.37 մլրդ մ³: Նման կրճատումը հիմնականում պայմանավորված է էներգատար հիդրոպոմպային կայանների ոչ արդյունավետ շահագործմամբ: Վերջին տարիներին ինժեներական սարքավորումների վերակառուցման և կատարելագործման ճանապարհով ոռոգման ինքնահոս համակարգին անցման նպատակով տարվում են ակտիվ աշխատանքներ, ինչպես նաև ջրային համակարգերի ՕԳԳ բարձրացման ուղղությամբ, որն էլ համապատասխանաբար հնարավորություն կտա ավելացնել

¹ Աշոտ Մարկոսյան, Գևորգ Նազարյան, Ջրային ռեսուրսների կառավարումը, Երևան, 2003, էջ 654:

² Նույն տեղում, էջ 660:

ռոռգելի հողատարածքների մակերեսը: Քաղաքային ջրամատակարարումը համարվում է երկրորդ հիմնական ջրօգտագործողը: Խմելու ջրի պահանջների բավարարման համար Հայաստանում բնակչությունը հիմնականում օգտվում է բարձրորակ ստորգետնյա ջրային ռեսուրսներից: Ջրի օգտագործման ընդհանուր քանակի միայն 5 տոկոսն են կազմում մակերեսային ջրերը, որոնք ենթարկվում են համապատասխան մաքրման: Հենց քաղաքային ջրամատակարարման համակարգերը հիմնականում տեխնիկական վիճակի պատճառով հայտնվեցին ֆինանսական կախվածության մեջ: Շատ տարիներ առանց ընթացիկ վերանորոգման աշխատանքների և զգալի ներդրումների շահագործումը հանգեցրեցին ջրային մագիստրալների և ինժեներական սարքավորումների մաշվածության: Դրա հետ կապված ավելացել է վթարների քանակը, և, համապատասխանաբար, զգալիորեն բարձրացել է արտահոսքերի մակարդակը: Քաղաքային ջրամատակարարման համակարգի սպասարկմամբ զբաղվում են «Եվրոդոնկանալ» ՓԲԸ-ն, որը սպասարկում է մայրաքաղաքի և մոտակա գյուղերի ավելի քան 1 մլն բնակչություն և «Արմվոդոկանալ» ՓԲԸ-ն, որը սպասարկում է հանրապետության 43 քաղաքների և 290 գյուղերի մոտավորապես 1.4 մլն բնակիչներին: Հանրապետության 600 հազար բնակչությամբ ավելի քան 600 բնակավայրեր, տարածքներ (այդ թվում նաև քաղաքներ) սպասարկվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: «Նոր ակունք» կազմակերպությունը սպասարկում է Արմավիրի մարզի 100 հազարանոց բնակչությամբ 12 քաղաքներ և գյուղեր:

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները ունեն ջրամատակարարման սեփական համակարգերը: Դրանք ջուրը վերցնում են ինչպես մակերեսային ջրային օբյեկտներից, այնպես էլ ստորգետնյա աղբյուրներից: Վերջին 10 տարիների ընթացքում արդյունաբերական ձեռնարկությունների կողմից ջրօգտագործումը արդյունաբերության ծավալների կրճատման և դրանցից շատերի գործունեության կասեցման պատճառով զգալիորեն կրճատվել է (220-ից հասնելով մինչև 50 մլն մ³): Ձեռնարկությունների հիմնական մասը տեղակայված է Երևանի սահմաններում, դրանք կազմում են Հայաստանի ընդհանուր ջրօգտագործող արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր թվաքանակի 40 տոկոսը:

Ջրի խոշորագույն օգտագործող է հանդիսանում ատոմակայանը: Չնայած այն հանգամանքին, որ ջրի արդյունաբերական սպառումը ընդհանուր ջրօգտագործման համեմատ կազմում է չնչին տոկոս, այդուհանդերձ տվյալ ճյուղի հիմնական խնդիրն է արդյունաբերական կեղտաջրերի մաքրումը, որոնք պարունակում են մեծ քանակությամբ աղտոտող նյութեր: Արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը առանց նախօրոք մաքրման արտանետում են իրենց թափոն ջրերը քաղաքային կոլեկտորներ, կամ էլ հեղուկ արտանետումները խառնում են գետերին և ջրամբարներին:

Հայաստանում հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր հզորությունը կազմում է 1.020 ՄՎտ, իսկ արտադրվում է մոտավորապես 800 ՄՎտ: Գոյություն ունեցող 35 հիդրոէլեկտրակայաններից 9-ը համարվում են երկու հիմնական հիդրոէներգետիկայի կասկադներ՝ Որոտանի և Հրազդանի բաղկացուցիչ մասը, որոնք իրենց հերթին երկրի հիդրոէներգիայի ընդհանուր հզորության մեջ կազմում են 92 տոկոս և արտադրում են ամբողջ էլեկտրաէներգիայի 23 տոկոսը:

Էներգետիկայի ոլորտի ընթացիկ բարեփոխումներից մեկն է հանդիսանում մասնավոր հիդրոէլեկտրակայանների շահագործման և կառավարման գործընթացին օպերատորի միացումը:

Գարնանային ջրհեղեղները հիմնականում վնասում են մասնավոր կառույցների ենթակառուցվածքները և գետերի մոտ ապրող բնակչության անձնական սեփականությունը: Քուռ գետի ավազանում ջրհեղեղների հիմնական պատճառն են անձրևները, իսկ Արաքս գետի ավազանում՝ ձյան հալքը:

Հայաստանում կառուցված ռոռգման ջրամբարները հիմնականում հաշվարկված չեն եղել ջրհեղեղներից պաշտպանվելու համար: Այդուհանդերձ դրանցից մեծ մասը ավերիչ ջրհեղեղների ազդեցությունից պաշտպանվելու տեխնիկական հնարավորություն ունի:

Հայաստանի ջրային հատվածի խնդիրները կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի. ջրային ռեսուրսների կառավարման հետ կապված խնդիրներ և ջրամատակարարման և ջրահեռացման քաղաքային ենթակառուցվածքների կառավարման հետ կապված

խնդիրներ: Առաջին խմբին են դասվում ջրի ցածր որակի հետ կապված խնդիրները, արդյունաբերական աղտոտվածությունը և գյուղատնտեսական արտանետումները (ռեկրեացիոն գոտիների (Սևանա լիճ) ձևավորման ժամանակ էկոհամակարգերի պահպանության անտեսումը, այս խմբին են դասվում նաև ջրհեղեղների հետ կապված խնդիրները, հողերի էրոզիան, ջրի բաշխման հետ կապված ջրօգտագործողների միջև եղած հակասությունները: Երկրորդ խմբին են դասվում պահանջարկի անարդյունավետ կարգավորման հետևանքով ջրային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործումը, ենթակառուցվածքների վիճակի վատացումը և մեծ կորուստները:

Ոռոգման ջրամատակարարման կառավարումն իրականացնում է ջրային համակարգերի կառավարման մարմինը կամ ջրօգտագործողների ընկերությունը (ջրօգտագործողների ընկերությունների միությունը)՝ «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի համար ջրային ռեսուրսների միասնական կառավարման միտքը հարաբերականորեն նոր է, սակայն արդեն դրա սկզբունքների ներդրման ուղղությամբ քայլեր են ձեռնարկված: Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ 1992-2000թթ. մշակվել և հաստատվել էր «ՀՀ ջրային ռեսուրսների և ջրային տնտեսության կառավարման բարելավման հայեցակարգը», որն իր հերթին 2002 թվականին ջրային օրենսգրքի ստեղծման համար հիմնային փաստաթուղթ դարձավ: Դրանում տեղ էին գտել նաև ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման մոտեցումները:

«Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ջրային ռեսուրսներ ինտեգրված կառավարման մոտեցումները» ամփոփ գեկուցման մեջ հիշատակվում է, որ Ջրային օրենսգրքը (ՋՕ) մասնավոր օպերատորներին հնարավորություն է տալիս կառավարել պետական ջրային տեղամասերը: Այս պահի դրությամբ մշակված էր ավելի քան 30 ենթաօրենսդրական ակտ և նորմատիվ իրավական փաստաթղթեր, որոնք ուղղված են ՋՕ-ի կիրարկմանը: Ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման սկզբունքների իրականացման համար Հայաստանում միջազգային կազմակերպությունների ֆինանսական և փորձագիտական աջակցության պարագայում իրականացվել են և գործողության փուլում են գտնվում նախագծեր, որոնք ուղղված են օրենսդրական դաշտի և մոնիթորինգի համակարգի բարելավմանը, գետավազանային կառավարման մեջ ներդրումների իրականացման աջակցությանը: Ծրագրի նպատակն է ներդնել գետավազանների ինտեգրված պլանավորման մոդելը և տեղական մակարդակում ստեղծել համապատասխան հնարավորություններ: Ծրագիրը համագործակցում է «Հայիդրոմետ»-ի ծառայության հետ (ծրագրի շրջանակներում վերանորոգվել և անհարժեշտ սարքավորումներով վերազինվել են Դեբետ գետի վրա հետազոտական կայանները):

Նաև ստեղծվել է գետավազանային կառավարման Հյուսիսային Մարմինը, կատարվել են բնակչության տեղեկացվածության բարձրացման և որոշումների ընդունման գործընթացում նրա մասնակցության հետ կապված աշխատանքները: Ջրի ինտեգրված կառավարման սկզբունքների առավել արդյունավետ ներդրման համար պետք է այդ ուղղությամբ մասնագետների պատրաստում, որոնք ինչպես մասնագետների, այնպես էլ շահագրգիռ հասարակության համար կանցկացնեն վերապատրաստում¹: Հայաստանում այդ գործընթացի ներդրման համար կան հիմքեր, սակայն առանց դրսից օգնության ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ներդրման գործընթացը դանդաղ և անարդյունք կընթանա, քանի որ այն պահանջում է բավականին շատ ժամանակ և ֆինանսներ:

Ջրային ռեսուրսների կառավարումն ապահովում է հետևյալ սկզբունքների իրականացումը².

1. ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման գիտական հիմնավորվածությունը.
2. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով սահմանված գնագոյացման կարգավորման, խթանման և այլ չափանիշների կիրառումը.
3. ռիսկերի կարգավորման կիրառման ապահովումը.

¹ ԱՊՀ երկրների անկախ մամուլի տեսություն, 2010, № 6, էջ 12-21:

² Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթներ, 03.05.2005թ.:

4. բնապահպանական, մշակութային, սոցիալական և տնտեսական արժեքների համալիր գնահատմամբ ջրային ռեսուրսների կառավարման իրականացումը.
5. ջրային ռեսուրսների ազատ հոսքի կուտակումը և տեղափոխումը արհեստական ջրամբարների ու պատվարների կառուցմամբ.
6. Հայաստանի Հանրապետության բնակավայրերում իրավական ակտերով սահմանված նորմերին և ստանդարտներին համապատասխանող որակով հետզհետե շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը.
7. ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի թափանցիկ և մասնակցային կառավարումը, ինչպես նաև գենդերային քաղաքականության սկզբունքների իրականացումը.
8. ջրավազանային կառավարման մակարդակով ջրային ռեսուրսների ջրառատության, ինչպես նաև ջրային ռեսուրսների սպառողական և ոչ սպառողական արժեքների հիման վրա ջրային ռեսուրսների բաշխման, վերաբաշխման և գնագոյացման ապահովումը.
9. անդրսահմանային ջրային ռեսուրսների և ջրահոսքերի կառավարումը:

ԵՎԳԵՆՅԱ ՅԱԿՈԲՅԱՆ

*ՏՊ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
վնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ՈՌՈԳՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՍՈՒԲՍԻԴՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոռոգման ոլորտում առկա հիմնախնդիրների բարեհաջող լուծումը որոշակիորեն պայմանավորված է ճիշտ և նպատակասլաց սուբսիդավորման քաղաքականության հետևողականորեն իրականացմամբ: Ըստ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 81-րդ հոդվածի՝ ջրային հարաբերություններում կարող է տրամադրվել ֆինանսական օգնություն՝ սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների տրամադրման տեսքով՝ կախված ջրի ազգային ծրագրում ամրագրված ֆինանսական օգնության տրամադրման կոնկրետ ձևից: Ընդ որում, կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծով ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը պետք է ներկայացնի ջրամատակարարներին և ջրօգտագործողներին պետական բյուջեից տրվող սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների չափերը: Միաժամանակ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունները պետք է սահմանվեն այնպես, որ նպաստեն ջրային համակարգերի պահպանման և տեխնիկական սպասարկման ծախսերի հատուցմանը:

Նշված օրենսգրքով սահմանված սուբսիդիաները ջրամատակարարներին կամ ջրօգտագործողներին կարող են տրամադրվել ուղղակի վճարումների տեսքով:

ՀՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին 2011թ. տրամադրվել է 5.343 մլրդ դրամ, իսկ 2012թ. նախատեսված է հատկացնել 6.856 մլրդ դրամ, որից գյուղատնտեսական ծրագրերի ֆինանսավորման համար՝ 4.407 մլրդ դրամ: Վերջինս ներառում է պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին ծրագիրը 625 մլն դրամ և գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը 578 մլն դրամ գումարով: Ջրային տնտեսության համակարգին բյուջեի նախագծով հատկացումները կազմում են 7 մլրդ 143 մլն դրամ՝ առանց վարկային ծրագրերի միջոցների: Այս ոլորտում դիտվում է ծախսերի կրճատում քանի որ ավարտվել են խոշորածավալ՝ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակում իրականացվող նախագծերը: Նշված գումարից «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրով կհատկացվի 3 մլրդ 9 մլն դրամ, «Ոռոգման համակարգերի հիմնանորոգում ծրագրով»՝ 1 մլրդ դրամ և նույնքան էլ «Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում» ծրագրով: Միջոցներ են նախատեսվել նաև կոլեկտորացիոնաժային ցանցի մաքրման և նորոգման նպատակով: Համակարգում նախատեսվում է

իրականացնել նաև մի շարք նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրեր: Սակագնային փոփոխություն առաջիկա տարում չի սպասվում¹:

Ֆինանսական օգնության տրամադրման ժամանակ հաշվի են առնվում՝ ֆինանսական օգնության տրամադրման նպատակը, հավասարության ապահովումը և խտրականության բացառումը, թափանցիկության ապահովումը, անկողմնակալությունը, օգնություն ստացողի ֆինանսական վիճակը, ջրային համակարգերի պահպանության անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման ծառայություններ մատուցող կազմակերպություններն անցած տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել են թե՛ ուղղակի սուբսիդավորումների տեսքով, թե՛ կրեդիտորական պարտավորությունների մարման (կամ հաշվանցման), և թե՛ կրեդիտորական պարտավորությունների զիջման (կամ վերակառուցման) տեսքով:

Ջրային տնտեսության ոլորտի ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները երկուսն են՝

1. Պետական բյուջե,
2. Դոնորների ֆինանսավորում:

Ֆինանսավորման միայն երկու աղբյուրների առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ջրային ենթակառուցվածքներն հանդիսանում են պետական սեփականություն: 2001թ. սկսած կիրառվում է ջրային համակարգերի օգտագործման իրավունքով տրամադրման ձևը, ինչպես եղավ Երևանի ջրամատակարար ընկերության դեպքում, երբ Երևանի ջրամատակարարման ողջ ենթակառուցվածքը մրցույթով տրամադրվեց վարձակալության:

Ոռոգման համակարգը ևս ամբողջությամբ կախված է պետական բյուջեի և դոնոր աղբյուրների կողմից իրականացվող ֆինանսավորումից: Այստեղ թեև սկսած 2002թ. կատարվեցին լուրջ բարեփոխումներ (նոր ջրային օրենսգրքի և «Ջրօգտագործողների ընկերությունների ու ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքի ընդունումը, անցում առևտրային հարաբերություններին, ջրօգտագործողների ընկերությունների ստեղծում - ՋՕԸ), սակայն կառավարությունը դեռևս սուբսիդավորում է ՋՕԸ-ներին՝ ցածր գների ռազմավարությունը պահպանելու նպատակով՝ տեղական սննդամթերքների մատակարարման ռազմավարական խնդիրների և տեղական արտադրության բարձր ինքնարժեքի պատճառով²:

ՀՀ կառավարության այսօրվա ընդունած մի շարք որոշումներ դարձյալ վերաբերել են գյուղատնտեսությանը: Գործադիրը հաստատել է 2011թ. ընթացքում ըստ ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության չափաքանակները:

«Այս տարի ևս կառավարությունը մոտ 4 մլրդ 200 մլն դրամ է հատկացնում ոռոգման ջրի ծախսը հոգալու նպատակին՝ դրանով իսկ կանխելով ջրի սակագնի բարձրացումը: Այսպիսով, ոռոգման ջրի տարեկան ծախսի շուրջ 60 տոկոսը հոգում է պետությունը», – նշվում է կառավարության տարածած հաղորդագրությունում³:

2010-2011թթ. ընթացքում ըստ ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության չափերը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող կազմակերպություններին սուբսիդիաները հիմնականում տրվել են ընթացիկ տարվա ֆինանսական հոսքերով պլանավորված ֆինանսական ճեղքվածքի մարման համար: Ընդ որում, ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբսիդիաները նախկինում հիմնականում ուղղված էին ջրամատակարար կազմակերպությունների կողմից ծախսված էլ. էներգիայի գծով ծախսի մարմանը:

Տվյալ դեպքում սուբսիդիան ջրամատակարար կազմակերպություններին հատկացվում է ինքնարժեքից ցածր սակագնով ծառայությունների մատուցման ծախսերի փոխհատուցման համար:

¹ http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=4846&year=2011&month=11&day=04

² <http://www.ast.am/files/BIA,%20Arm.pdf>

³ http://www.zhamanak.com/arm/armenia_economy_14841.html

2010-2011 թթ. ըստ ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության չափերը ^{1,2}

N	ՋՕԸ-ների անվանումները	մլն դրամ	
		2010թ.	2011թ.
1.	«Ազատ» ՋՕԸ	300,068	213,108
2.	«Արտաշատ» ՋՕԸ	330,566	256,981
3.	«Արարատ» ՋՕԸ	410,835	355,219
4.	«Գետիկ» ՋՕԸ	25,116	25,299
5.	«Հրազդան-ջուր» ՋՕԸ	8,634	12,661
6.	«Նոյեմբերյան» ՋՕԸ	137,292.00	144,502
7.	«Վարդենիս» ՋՕԸ	31,443	37,734
8.	«Վեդի» ՋՕԸ	269,753	177,698
9.	«Մասիս» ՋՕԸ	47,778	43,474
10.	«Մուսալեռ» ՋՕԸ	193,767	175,447
11.	«Վաղարշապատ» ՋՕԸ	150,389	129,279
12.	«Ալմալիճ» ՋՕԸ	119,841	90,100
13.	«Ժոյ» ՋՕԸ	469,747	371,586
14.	«Երևան» ՋՕԸ	89,092	102,996
15.	«Կոտայք» ՋՕԸ	57,395	55,897
16.	«Նաիրի» ՋՕԸ	34,986	38,899
17.	«Եղվարդ» ՋՕԸ	24,965	24,959
18.	«Ջրվեժ-Չորաղբյուր» ՋՕԸ	92,968	85,805
19.	«Սև ջուր-Ախթամար» ՋՕԸ	69,932	77,037
20.	«Փարսի» ՋՕԸ	17,292	16,124
21.	«Շամիրամ» ՋՕԸ	48,592	39,636
22.	«Աշտարակ» ՋՕԸ	25,148	15,679
23.	«Սիսիան» ՋՕԸ	30,907	39,992
24.	«Ապարան-Արագած» ՋՕԸ	10,027	9,801
25.	«Գավառ» ՋՕԸ	49,470	43,808
26.	«Մարտունի» ՋՕԸ	115,702	131,697
27.	«Թալին» ՋՕԸ	361,411	316,481
28.	«Արմավիր» ՋՕԸ	200,083	172,308
29.	«Սերձափնյա» ՋՕԸ	173,720	99,136
30.	«Արաքս» ՋՕԸ	181,061	199,022
31.	«Շենիկ» ՋՕԸ	98,615	88,741
32.	«Քարակերտ» ՋՕԸ	125,286	88,738
33.	«Շիրակ» ՋՕԸ	105,549	123,305
34.	«Լոռու-ջրանցք» ՋՕԸ	41,059	45,179
35.	«Վայք» ՋՕԸ	8,210	7,355
36.	«Մեղրի» ՋՕԸ	137,6860	136,069
37.	«Եղեգնաձոր» ՋՕԸ	65,264	50,001
38.	«Որոտան» ՋՕԸ	30,751	39,840
39.	«Ղափան» ՋՕԸ	5,500	12,895
40.	«Գառնի-Գեղարդ» ՋՕԸ	38,240	45,008
41.	«Ուտիք» ՋՕԸ	9,624	9,801
42.	«Իջևան» ՋՕԸ	12,236	12,762
	ԸՆԴԱՍԵՆԸ	4,756,000	4,179,500

Ոռոգման համակարգին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական աջակցությունը՝ սուբսիդիան, ըստ էության, տրամադրվում էր ավանդական ծախսային մեթոդով: Նման մոտեցման կիրառությունը շատ դեպքերում խոչընդոտում էր ջրօգտագոր-

¹ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի № 298-Ա որոշում:

² ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի № 320-Ա որոշում:

ծողների ընկերություններում արդյունավետության բարձրացման խթանների արմատավորմանը և չէր կարող երաշխավորել առանցքային արդյունքային ցուցանիշների ապահովում: Մյուս կողմից, մեծանում են ինչպես ջրօգտագործողների, այնպես էլ պետական կառավարման մարմինների կողմից ջրօգտագործողների ընկերությունների ծախսային քաղաքականության մեկնաբանության հայեցողականության աստիճանն ու երկակիության դրսևորումները: Ընդհանուր դեպքում, նման երևույթների հավանականությունն ավելի մեծ է այնպիսի իրավիճակներում, երբ ծախսային քաղաքականությունը վարվում է առանց նորմատիվային ծրագրման:

Վերը նշված իրավիճակների մեղմման նպատակով անհրաժեշտ է աստիճանական անցում կատարել ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության (սուբսիդավորման) ներկայումս կիրառվող ծախսային ավանդական մեթոդին այլընտրանքային՝ ըստ արդյունքների դրամաշնորհային օժանդակության տրամադրման մոտեցմանը:

Այդ գործընթացը նախատեսում է ջրօգտագործողների ընկերություններին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական աջակցության տրամադրում՝ առաջնորդվելով ջրօգտագործողների ընկերությունների հետ կնքվելիք դրամաշնորհային պայմանագրերով: Ըստ արդյունքների դրամաշնորհային օժանդակության տրամադրման մոտեցման հիմնական առավելություններն են՝ կանխատեսելիության և որոշակիության ավելացումը, 5 տարվա կտրվածքով ոլորտին հատկացվելիք պետական ֆինանսական աջակցության չափերի հստակեցումը, ջրօգտագործողների ընկերությունների առավել արդյունավետ գործունեության խթանների տրամադրումը, ջրօգտագործողների ընկերությունների բյուջետային կարգապահության մեծացումը, ջրօգտագործողների ընկերությունների կողմից արդյունքային ցուցանիշների ապահովման հավանականության ավելացումը:

Հայաստանի Հանրապետությունում ոռոգման զարգացմանն ուղղված առաջնահերթ ներդրումների համար ֆինանսական աղբյուրները ներկայումս հնարավոր է իրականացնել միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող արտոնյալ վարկերի հաշվին:

Այսպիսով, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տնտեսական որոշակի աճը, որի արդյունքում հետզհետե ավելանում են ՀՀ պետական բյուջեի մուտքերը, ոռոգման համակարգերի զարգացմանն ուղղված կապիտալ ներդրումներն անհրաժեշտ է ֆինանսավորել նաև ՀՀ պետական բյուջեից:

Ոռոգման ջրի մատակարարման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործում ոչ պակաս կարևորվում է ներդրումային քաղաքականության դերը: Ավելին, համակարգի գանձումների ավելացումը, կորուստների կրճատումը, կառավարման բարելավման ճանապարհով ֆինանսական առողջացումը և ֆինանսական հոսքերի ծրագրի կատարումը, սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերին համապատասխան անխափան ու անվտանգ շահագործումն իրատեսական կարող է լինել միայն բավարար ներդրումների իրականացման պայմաններում:

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔ

Բնության պահպանության բարելավման և բնական ռեսուրսների օգտագործման կարևոր ուղղությունը համարժեք գնի և (կամ) բնական ռեսուրսների և բնական ծառայությունների տնտեսական արժեքի որոշումն է, ավելի ճիշտ՝ տնտեսական գնահատումը:

Շրջակա միջավայրն ապահովում է 3 ֆունկցիա.

- բնական ռեսուրսներով ապահովման,
- թափոնների և աղտոտման ասիմլացման,
- բնության ծառայություններով մարդուն ապահովելու (ռեկրեացիա, էսթետիկական բավականության և այլն):

Այս երեք բաղադրամասերը կարող են դիտվել նաև որպես շրջակա միջավայրի գլխավոր՝ կենսաապահովման ֆունկցիայի բաղադրամասեր:

Ոչ սոցիալիստական, ոչ շուկայական էկոնոմիկան ընդունակ չեղան գնահատել մաքուր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների իրական նշանակությունը, սահմանել դրանց համարժեք գինը: Ընդհանուր դեպքերում դրանք շատ իջեցված էին կամ զրոյական: Մինչև վերջին ժամանակներս շատ երկրներում կիրառվող՝ բնական ռեսուրսներից անվճար օգտվելու քաղաքականությունը հասցրեց դրանց շռայլման և վատնման: Ռեսուրսների «անսպառության», «ձրի լինելու» պատրանքը հասցրեց նրան, որ արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունները մուծումներ կատարելով ֆոնդերի համար, միաժամանակ անտնտեսվար օգտագործելով բնական ծագման արտադրության միջոցները, դրանում ոչ մի վնաս չկրելով (որևէ մուծում չկատարելով) և հաճախ բարելավելով իրենց տնտեսական դրությունը:

Մրա հետ կապված, բնական ռեսուրսների ռեալ գները շուկայական մեխանիզմում կարող են արդյունավետ լծակներ դառնալ: Ոչ ռացիոնալ բնօգտագործման դեպքում ձեռնարկություններում դրանց հաշվառումը կարող է վատթարացնել տնտեսության արտադրական ցուցանիշները, որը կանդրադառնա նրա ֆինանսական ցուցանիշների վրա:

Հայաստանում, ստեղծված պայմաններում նպատակահարմար է էկոնոմիկայում տնտեսական զարգացման կանխատեսման տարբերակների ընտրությունը, նախագծերի գնահատումը էկոնոմիկայում որպես բնական բարիքների տնտեսական գնահատում ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակներով:

Ռեսուրսների գնահատման հաշվառումը թույլ կտա ավելի հիմնավորված ձևով որոշել այլընտրանքային զարգացման տնտեսական արդյունավետությունը:

Բնական ռեսուրսների ոչ համարժեք գնահատումը բերում է էկոնոմիկայի էկոլոգացումից ստացվող էֆեկտների իջեցման, կայուն ռեսուրսախնայողական զարգացման անցնելուն: Բազմամիլիարդ դոլարների հասնող բնական ռեսուրսների ամենամյա կորուստները (նավթ, օգտակար այլ հանածոներ և այլն) էկոնոմիկայի բնատարության աճը պատճառ են նաև թույլատրելի նորմատիվները գերազանցող՝ սարքավորումների մաշվածությունը, որոնց օգտագործումը կտրուկ ավելացնում է էկոլոգիական աղետների հավանականությունը:

Վթարների կանխարգելումից տնտեսված միջոցներից (մի քանի տարվա կտրվածքով) կարելի է վերակառուցել ցանկացած երկրի վառելիքաէներգետիկ համալիրը և համապատասխանաբար նվազեցնել ամբողջ էկոնոմիկայի էներգատարությունը:

Էներգետիկ բնական ռեսուրսներ ունեցող երկրների մեծ մասը (արաբական երկրներ, Ռուսաստան, Վենեսուելա, Իրան և այլն) տնտեսության զարգացումը մեծապես կախման մեջ են դրել ճյուղի էքստենսիվ զարգացման հնարավորություններից, մեծ տեղ հատկացնելով նաև այդ ռեսուրսների արտահանմանը: Մակայն ակնհայտ է, որ այդ պայմաններում ստեղծված էներգետիկ կառույցները, էներգառեսուրսների հսկայական կորուստները դրանց ոչ ռացիո-

նալ օգտագործման պայմաններում, առաջիկայում թույլ չեն տա հաղթահարել վառելիքի դեֆիցիտը բնատար զարգացմանը սատարելու համար անգամ սեփական երկրներում:

Այսպիսով, էկոլոգիական գործոնի տնտեսական համարժեք հաշվառման դեպքում ռեսուրսախնայողության արդյունավետությունն ավելի բարձր է լինում էկոնոմիկայի բնատարության աճից, որը ցույց է տալիս վերջին մի քանի տասնամյակների զարգացած երկրների տնտեսական զարգացումը:

Նպատակահարմար է բնական ռեսուրսների գնահատումը մտցնել երկրի ազգային հարստության մեջ: Մինչև այժմ դա չի արվում, դրա մեջ մտցվում են միայն հիմնական ֆոնդերը, նյութական շրջանառու միջոցները և բնակչության անձնական սեփականությունը: Սա խոսում է էկոլոգիական գործոնի թերագնահատման մասին: Մինչդեռ նման գնահատումը թույլ կտա ազգային հարստության կարևորագույն բաղկացուցիչ մասը կազմող բնական ռեսուրսները մտցնելով դրա կառուցվածքում, ռեալ արտացոլել երկրի բնական պոտենցիալի իրական մեծությունը, որի մեծությունը տարբեր երկրներում տատանվում է շուրջ 30-65%-ի սահմաններում (ազգային հարստության մեջ):

Էկոլոգիական գործոնի հաշվառման դիրքերից ճշգրտման կարիք ունեն և՛ տնտեսական զարգացման ավանդական ցուցանիշները, և՛ առաջընթացի՝ մեկ շնչին ընկնող եկամուտը, համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ), համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և այլն: Այդ ցուցանիշների նշանակալից աճի դեպքում կարող են թաքնվել (չնշմարվել, աննկատ մնալ) բնության դեգրադացումը, նրանց կտրուկ պակասելու հնարավորությունը՝ բնական ռեսուրսների և շրջապատող միջավայրի արագ դեգրադացման դեպքում:

Այժմ ՄԱԿ-ը, զարգացած երկրները էկոլոգիական գործոնների հաշվառումով հիմնական տնտեսագիտական ցուցանիշների «կանաչ» չափման փորձեր են ձեռնարկում: ՄԱԿ-ի վիճակագրության բաժինը առաջարկում է էկոլոգիական և տնտեսագիտական հաշիվների (ինտեգրացված) մասնավորապես համակարգը, որն ուղղված է էկոլոգիական գործոնը ազգային վիճակագրություններում արտացոլելու, ինչպես նաև դրանցում մտցնելու ՄԱԿ-ի կողմից առաջարկված հումանիտար զարգացման ինդեքսը և կայուն տնտեսական բարեկեցության ինդեքսը:

Սրանցից առաջինն իրենից ներկայացնում է միացումային ցուցանիշ՝ կազմված կյանքի տևողության, գիտելիքների մակարդակի և ռեսուրսներին տիրապետելու մակարդակի բնութագրերից, որոնք անհրաժեշտ են նորմալ կյանքի համար: Երկրորդը բավական համալիր ցուցանիշ է, որը հաշվի է առնում ոչ ռացիոնալ տնտեսավարման պատճառով կատարված էկոլոգիական բնույթի ծախսերը:

Ըստ կայուն տնտեսական բարեկեցության ինդեքսի՝ ԱՄՆ-ում (Գ. Դալի) կատարված հաշվարկները ցույց տվեցին հակադիր միտումներ այդ ինդեքսի և ՀՆԱ-ի փոփոխությունների միտումների միջև՝ առաջինի իջեցում երկրորդի նշանակալից աճի դեպքում: Գ. Դալիի բնութագրմամբ՝ «Քանի դեռ նյութական բարեկեցության չափանիշը մնում է ՀՆԱ-ն, փոփոխությունների ճանապարհին կան բազմաթիվ խոչընդոտներ: Շուկան տեսնում է միայն արդյունավետությունը, նա հարմարեցված չէ զգալու արդարությունը կամ կայունությունը:

Հայաստանը հարուստ չէ բնական ռեսուրսներով, և եղածների ռացիոնալ և խնայողական օգտագործումը ապագայի համար սկզբունքային նշանակություն ունի: Ուստի երկրի էկոնոմիկան պետք է ունենա կողմնորոշում դեպի վերջնական արդյունքները, շեշտը դնելով նվազ նյութատար տեխնոլոգիաների վրա, վաղօրոք ճիշտ հաշվառելով և գնահատելով բնական ռեսուրսների և ամբողջ բնօգտագործման պոտենցիալի արժեքը:

Բնօգտագործման արդյունավետության բարձրացման խթանող գործոնները:

Էկոլոգատնտեսական և սոցիալական պրոցեսների պլանավորումն ու կառավարումը հենվում են անձնական և հասարակական պահանջումների սկզբունքների և գործոնների ձևավորման վրա, քանի որ այդ ցուցանիշները նշանակալիորեն ազդում են շրջակա միջավայրի որակի փոփոխության ինտենսիվության վրա: Բնատնտեսական բարեկեցության պետական գնահատականը, համարվելով ապրանքանյութական հարաբերությունների մեխանիզմով, հանդես է գալիս շրջակա միջավայրի որակի պահպանմանը կարգավորելու, հարմարեցնելու, այն հասարակական պահանջումներին համապատասխանեցնող միջոցի դերում: Ուստի էկոտնտեսական համակարգում առանձնահատուկ նշանակություն է ձեռք

բերում ֆունկցիոնալ-սպառողական համալիրների ստեղծումը՝ ռեկրեացիոն գոտիներ, սոցիալական, արդյունաբերական և գյուղատնտեսական ենթակառուցվածքներ: Սպառողական համալիրները էկոտնտեսական համակարգում կարող են հանդես գալ միկրոհամալիրների տեսքով՝ սննդի, բնակարանի, տնային և անձնական տնտեսության, անձնական հիգիենայի, բնության պահպանության և մարդու, թռչունների ու կենդանիների առողջության, հանգստի, սպորտի, կրթության և մշակույթի, տրանսպորտի, պահեստարանների, կապի և այլն: Բնական է, որ յուրաքանչյուր սպառողական համալիրի սահմանները էկոտնտեսական համակարգում բավական պայմանական են, քանի որ միևնույն սպառման և ծառայությունների առարկաները կարող են օգտագործվել տարբեր նպատակներով: Օրինակ, հողային, ջրային ռեսուրսները, օդը կարող են հանդես գալ որպես աշխատանքի միջոցներ և առարկաներ:

Մարդու պահանջմունքները պետք է դիտարկել որպես զարգացող պրոցեսներ, իսկ ամբողջ հասարակության, ինչպես նաև անհատի պահանջմունքների ամբողջությունը, ինչպես նաև դրանց հասնելու միջոցները՝ որպես դինամիկ կառավարվող էկոտնտեսական համակարգ:

Ներկայումս, սպառման բնագավառում սոցիալ-տնտեսական և էկոլոգիական պրոցեսների օպտիմալ կառավարման ալգորիթմի մշակման առաջատար ուղղությունը դառնում է շրջապատող բնական միջավայրի որակի պահպանման գործում անձնական և հանրային պահանջմունքների ամբողջության ուսումնասիրությունը:

Բնական ռեսուրսների սպառման (անձնական և հասարակական) առավել լրիվ բնութագիրը ռեգիոնալ (տարածաշրջանային) էկոտնտեսական համակարգում որոշվում է սպառման քանակական և որակական ցուցանիշների մի ամբողջ համակարգով: Քանակականների շարքին են դասվում բնամթերային (բնեղեն) և արժեքային, որակականներին՝ կառուցվածքային ցուցանիշները, որոնք բնութագրում են սպառողական արժեքը: Բոլոր էկոտնտեսական և սոցիալ-տնտեսական ցուցանիշների շարքում առանձնացվում են բացարձակ և հարաբերական, մասնավոր և ընդհանուր ցուցանիշները:

Բնեղեն ցուցանիշներն ավելի ճշգրիտ են, սակայն դրանց օգտագործումը սահմանափակվում է ըստ խմբերի, տեսակների և այլնի միատեսակ (միատարր) սպառողական արժեքներով: Սպառման արժեքային ցուցանիշները սովորաբար օգտագործվում են որպես ընդհանրացնող, սակայն դրանք չեն կարող արտացոլել սպառման բացարձակ ծավալը որոշակի ժամանակաշրջանում: Արժեքային ցուցանիշներին են դասվում ընտանիքի իրական եկամուտը, ազգային եկամտում սպառման ֆոնդը, աշխատավարձի ֆոնդը, սպառման հասարակական ֆոնդերը, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, շրջակա միջավայրի որակի պահպանմանն ուղղված ծախսերը և այլն: Դրանք արտահայտում են միայն բնական ռեսուրսների կամ հասարակական աշխատանքի այն քանակը, որը ծախսվում է սպառողական արժեքների ստեղծման և փոխանակության վրա՝ բնության հետ հասարակության փոխհարաբերությունների դեպքում, սակայն ոչ բնության ռեսուրսների քանակը: Օրինակ, ընտանիքի ռեալ եկամուտը կամ սպառման ֆոնդը չի արտացոլում սպառման ծավալի փոփոխությունը, քանի որ ներառում է մթերքներ, որոնք նախատեսված չեն անձնական սպառման համար: Բացի դրանից, միշտ չէ, որ դրանք ներառում են ծառայություններն ու հարմարավետությունը, որոնք տնային տնտեսությունում ստեղծում են էկոլոգիական լարվածություն:

Աշխատավարձի ֆոնդը, ընտանիքի իրական եկամտի սահմանումը և սպառման հասարակական ֆոնդերը ոչ բոլոր դեպքերում են բնութագրում բնակչության սպառողական արժեքների մուտքերի բոլոր աղբյուրները, իսկ ապրանքաշրջանառությունը և բնապահպանական գործունեությունը ցույց են տալիս միայն բնության պահպանության գծով կատարված աշխատանքների և բնակչության կողմից ապրանքների գնումների ծավալները որոշակի ժամանակաշրջանում:

Շրջակա միջավայրի որակի բարելավումը տալիս է որակական և քանակական գնահատական այն ապրանքային մասսային և հարմարավետության մակարդակին, որոնք արտադրության ոլորտից անցնում են անձնական սպառման ոլորտ՝ մի կողմ թողնելով սպառողական արժեքների մյուս աղբյուրները, բացառությամբ առևտրի: Էկոլոգիական իրադրությունը մարդու համար ստեղծում է կյանքի տարբեր պայմաններ՝ այս կամ այն էկոլոգիական կամ վարչական շրջանում, և հաճախ կտրուկ տարբերություններ են նկատվում հասարակության

հարմարավետության մեջ: Այդ մակարդակների առավել լրիվ տարբերությունները կարելի է բացահայտել ռեգիոնալ ռեկրեացիոն համակարգի և բնական ռեսուրսների սպառողների համադրելի շրջանի բնակչության մեկ շնչի հաշվով օգտագործվող բնական և արժեքային ցուցանիշների ուսումնասիրման ժամանակ:

Յուրաքանչյուր էկոտնտեսական համակարգ ունի արտադրողական ուժերի զարգացման իր յուրահատկությունը՝ քանակական և որակական արտահայտությամբ, և որոշվում է արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, արդյունահանող և վերամշակող նյութական արտադրության ճյուղերի միջև, նվազ թափոնային նոր տեխնիկայով հագեցված ձեռնարկությունների միջև և նյութական բարիքների ու ծառայությունների արտադրության միջև հարաբերակցությամբ և այլն:

Ռեսուրսների, սննդամթերքի և հագուստի, կոշիկի, տրանսպորտային ծառայությունների օգտագործման, հարմարավետության մակարդակի վրա էապես ազդում են արտադրական ուժերի տեղաբաշխման բնակլիմայական գործոնները, տրադիցիաները, ազգային մշակույթը, բնակչության կուլտուրական մակարդակը և այլն:

Այսպիսով, հանրապետության յուրաքանչյուր տարածաշրջանային էկոտնտեսական համակարգում առանձին կողմերի և տարրերի հարցում դիտվում են տարածքային և քանակական տարբերություններ: Դրանք որոշվում են (պայմանավորված են) տարբեր արտադրողական ուժերով: Այդ ամենը ազդում է ուսումնասիրվող օբյեկտի գործելու արդյունավետության, սպառման մակարդակի և նրա կառուցվածքի վրա: Սպառման համադրումը, ինչպես ընդհանուր, այնպես էլ ըստ բնական ռեսուրսների առանձին տեսակների, երկրորդային մթերքների և ծառայությունների, դեռևս անբավարար է դրա բարձր կամ ցածր մակարդակի կամ մեկ բնապահպանական շրջանում մյուսի նկատմամբ լավ կամ վատ կառուցվածքի մասին եզրակացություն անելու համար: Մարդու կյանքի մակարդակի հարմարավետության ռացիոնալ նորմաները որոշվում են սանիտարական ծառայությունների կողմից:

Ռեսուրսների, սննդամթերքի, ժողովրդատնտեսական ապրանքների սպառման պահանջարկի և հարմարավետության մակարդակի վերլուծությունն ու գնահատականը ենթադրում են քանակական և որակական ցուցանիշների ամբողջ համակարգի օգտագործում: Սակայն անբավարար վիճակագրական բազան և անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը ներկայումս հնարավորություն չեն տալիս լիարժեք վերլուծություն կատարել: Ուստի, ժամանակակից պայմաններում անհրաժեշտ է պահանջմունքները և դրանց բավարարումը կառավարել նորովի՝ էկոլոգիական պոտենցիալի օգտագործմամբ, նոր մեթոդական մոտեցումների օգնությամբ, որոնք նախատեսում են մարդկային գործոնի օգտագործման նոր մոտեցում, ինչպես նաև բնական սպառողական համալիրի և դրանց սպառողական հատկությունների օգտագործում:

Ժամանակակից արդյունաբերության, գյուղատնտեսության և ոչ արտադրական ոլորտի զարգացումն անհմատ է առանց բնական ռեսուրսների պոտենցիալի և մոտ ապագայում դրա միտումների հաշվառման:

Կյանքի հարմարավետության նկատմամբ հասարակության պահանջի բավարարման համար ամենից առաջ անհրաժեշտ է բարձրացնել էկոլոգիապես կողմնորոշված ժողովրդատնտեսական համալիրի արդյունավետությունը, և այստեղ հատուկ կարևորություն է ստանում այն սկզբունքների և գործոնների օպտիմալ օգտագործումը, որոնք որոշում են այդ արդյունավետությունը:

Միջոցների ներդրումը սպառմանը մոտ ստադիաներում փաստորեն «կտրում» է կամ նվազագույն է դարձնում ծախսերը սկզբնական փուլերում: Այսինքն, անհրաժեշտ է որքան հնարավոր է քիչ «խցկվել» բնական ոլորտ և աշխատել էֆեկտ ստանալ մշակման ստադիաներում (բնական նյութերի մշակում, վերամշակում), դրա՝ դեպի սպառողը շարժի ընթացքում: Դրան կարելի է հասնել առաջնային բնական հումքի համալիր և արդյունավետ օգտագործման հաշվին: Դրանով իսկ բնությունատարության ցուցանիշը հասցվում է նվազագույնի, երբ որոշակի քանակությամբ բնական ռեսուրսից ստացվում է հնարավորինս առավելագույն քանակով արտադրանք (վերջնական տեսքով):

**ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱԼԻՐԻ ԷԿՈԼՈԳԱՑՈՒՄԸ ԵՎ
ԱՐՏԱՂՐԱԿԱՆ-ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

ԱԱՀ էկոլոգացման ծրագրի երկրորդ բաղկացուցիչը արտադրական-սպառողական ոլորտի արագացված զարգացման ենթածրագիրն է, որի իրագործումը թույլ է տալիս բարելավել գյուղատնտեսական հումքի օգտագործումը և լիկվիդացնել կորուստները: Ենթակառուցվածքի (ճանապարհներ, պահեստարաններ, առևտուր և այլն) և արդյունաբերության վերամշակող ճյուղերի (սննդի և թեթև) զարգացման արագացումը էկոլոգիական իրավիճակի կայունացման և պարենային հիմնախնդրի լուծման համար կարևոր նշանակություն ունի:

Ներկայումս ենթակառուցվածքի և վերամշակող արդյունաբերության զարգացման ետ մնալու պատճառով առաջացող կորուստները կազմում են 20-30%: Սա նշանակում է, որ ԱԱՀ բնական ռեսուրսների համարժեք մասը, որը կիրառվում է կորչող արտադրանքի արտադրության համար, վերջին հաշվով օգտագործվել է ոչ ռացիոնալ ձևով: Արտադրված գյուղատնտեսական արտադրանքի կորուստները հարկ է լինում փոխհատուցել՝ ընդլայնելով գյուղատնտեսական արտադրությունը և հետևաբար շահագործելով ավելի ու ավելի նոր բնական ռեսուրսներ և ավելացնելով արդեն ունեցածի բեռնվածությունը: Հաշվարկները ցույց են տալիս, որ ի հաշիվ գյուղատնտեսական արտադրանքի կորուստների լիկվիդացման, օգտագործելով դրա ռեզերվները, կարելի է մեծ քանակությամբ ռեզերվներ ազատել, առանց սպառման ֆոնդերի կրճատման, օրինակ օգտագործվող գյուղատնտեսական բոլոր հողատեսքերի մինչև 30-40%-ի: Արդեն մոտակա հեռանկարում աշխարհի շատ երկրներում ակտիվ օգտագործումից անհրաժեշտ կլինի դուրս հանել միլիոնավոր հեկտար գյուղատնտեսական հողատեսքեր, հատկապես նրանք, որոնք ուժեղ չափով տուժել են անտրոպոգեն ներգործությունից և նեգատիվ բնական պրոցեսներից: Իրավիճակն էլ ավելի է բարդանում ԱԱՀ բնական պոտենցիալի ընդհանուր աղքատացման հետ ագրարային տարածաշրջանների գերակշիռ մեծամասնությունում, հատկապես Արարատյան հարթավայրում, նախալեռնային գոտում և հյուսիսարևելյան շրջաններում: Ըստ էության, ԱԱՀ արտադրասպառողական ոլորտի զարգացման արագացումը գյուղատնտեսության մեջ էկոլոգիական հիմնախնդիրների լուծման այլընտրանքային տարբերակ է, բնական ռեսուրսների նկատմամբ յուրահատուկ փոխհատուցող ծրագիր: Այս ուղղությունը ենթադրում է ԱԱՀ-ի խոր կառուցվածքային վերափոխման ծրագիր, որի դեպքում տեղի է ունենում հիմնական ֆոնդերի տեսակարար կշռի նվազում, զբաղվածների, ԱԱՀ վերջնական արտադրանքի մեջ գյուղատնտեսության տեսակարար կշռի իջեցում և այդ ցուցանիշների աճ ենթակառուցվածքի և վերամշակող արդյունաբերության համար:

Ջրային և հողային ռեսուրսների տնտեսման համար հարկավոր է լայնորեն օգտագործել վերջնական սպառման ավելացման համանման այլընտրանքային տարբերակներ:

Գումարենք հիմնական էկոլոգիական փաստարկները հօգուտ արտադրասպառողական ոլորտի աճի:

Առաջին, էկոլոգիական փոխհատուցման ծախսերը, որոնք պահանջվում են շրջակա միջավայրին հասցված վնասը վերացնելու, որը հասցվել է ԱԱՀ-ում, այս կամ այն միջոցառումների արդյունքում (էքստերնալներ կամ արտաքին էֆեկտ), «հումքախնայողական» ներդրումային տարբերակում նվազագույն են: Գյուղատնտեսական արտադրանքը մինչև սպառողին հասցնելու պրոցեսի կատարելագործման գործում կապիտալ ներդրումները գործնականորեն բնության առումով մաքուր են:

Երկրորդ, գյուղատնտեսական հումքի լրիվ և համալիր օգտագործումը նվազ կամ անթափոն տեխնոլոգիաներով վերամշակող արդյունաբերության մեջ կանխում է շրջակա միջավայրի աղտոտումը:

Երրորդ, արտադրված գյուղատնտեսական արտադրանքի կորուստները հարկ է լինում փոխհատուցել ի հաշիվ գյուղատնտեսական արտադրության նյութատեխնիկական բազայի աճի, արտադրանքի համախառն ելքի ավելացման, որը ազդեկոհամակարգի համար լրացուցիչ բեռնվածություն է ստեղծում:

Չորրորդ, գյուղատնտեսական արտադրանքի ռեզերվների հաշվառումը, որոնք կարող են օգտագործվել ԱԱՀ արտադրասպառողական ոլորտի զարգացման արագացման հետ, իջեցնում է բնական ռեսուրսների վրա եղած բեռնվածությունը և նույնիսկ դրանց մի մասին ազատում այդ բեռնվածությունից:

Հինգերորդ, կապիտալ ներդրումները արտադրասպառողական ոլորտում փոխհատուցվում են ավելի արագ, քան ԱԱՀ-ի զարգացման շատ բնությունատար տարբերակներում, ցածր է կապիտալատարությունը և ստացված արտադրանքը:

Բնական ռեսուրսների օգտագործման կրճատումը ԱԱՀ-ում

ԱԱՀ-ի զարգացման էկոլոգացման կարևորագույն արդյունքը պետք է դառնա հողային և ջրային ռեսուրսների օգտագործման կայունացումն ու կրճատումը՝ արտադրության վերջնական արդյունքների աճի դեպքում: Զննարկենք մասն ռեսուրսախնայողության հիմնական տեսանկյունները:

Գյուղատնտեսության մեջ արդեն ազատ հողեր չկան, որոնց մշակումը թույլ տա փոխհատուցել «հին» գյուղատնտեսական հողատեսքերի բերքատվության նվազումը: Սակայն օգտագործվող հողակտորների շրջանակներում տեղի է ունենում հողային ֆոնդի որակի վատացում, հողերի դեգրադացում: Քաղաքների, արդյունաբերության, ենթակառուցվածքի «գրոհը» բերում է շատ արժեքավոր գյուղատնտեսական հողատեսքերի կորստի (առգրավման): Հողային հաշվեկշռի պահպանման նպատակով այսօր գյուղատնտեսական շրջանառության մեջ են ներգրավվում ավելի ցածր բերրիությամբ հողեր:

Ստեղծված իրավիճակից ելքը նոր ձևավորված պայմաններում հողային ռեսուրսների օգտագործման նկատմամբ նոր մոտեցումների մշակման և իրագործման մեջ է: Մինչև այժմ հողօգտագործումն էքստենսիվ բնույթ ունի: Դա հատկապես նկատելի է Ռուսաստանում, Կանադայում, Մեքսիկայում, Ղազախստանում և համեմատաբար փոքրաթիվ բնակչություն և մեծ տարածք ունեցող այլ երկրներում: Ընդ որում, հարկ է նշել, որ ԱԱՀ-ի արդյունավետության զարգացման պայմաններում բնական ռեսուրսների ներգրավումը ագրարային արտադրության մեջ զարգացած երկրների մեծ մասում կրճատման միտում ունի: Սա գործնականորեն բոլոր զարգացած երկրների ուղին է: Հազիվ թե կարելի է նախկին ԽՍՀՄ-ի հսկայական ԱԱՀ բնական բազիսը տնտեսապես և էկոլոգիապես արդարացված համարել: Օրինակ, համաշխարհային պրակտիկայում աննախադեպ՝ խամ ու խոպան հողերի յուրացումը անցյալ դարի 50-ական թվականներին Ռուսաստանի և Ղազախստանի տարածքներում: Սակայն անգամ ԱԱՀ-ի այդ հսկայածավալ բնական պոտենցիալի խթանումը չլուծեց գյուղատնտեսական հիմնախնդիրը: Ավելին, սրվեցին բազմաթիվ էկոլոգիական, տնտեսական, սոցիալական խնդիրներ:

Բնօգտագործման մեջ տիրող իրավիճակի շտկման համար ամենից առաջ պետք է ձևավորել մտածողության ինտենսիվ եղանակ (ձև) ագրարային բնագավառի համար, հեռանալ էքստենսիվության սովորական կարծրատիպերից, որոնք ձևավորվել են վերջին երեսուն տարիների ընթացքում: Անցումային էկոնոմիկայի բնույթը, դրանում պետության ունեցած նշանակալից դերով, պահանջում է նոր լուծումներ:

Հողօգտագործման ինտենսիվ մոտեցման մշակման մեջ ամենակարևորը՝ անհրաժեշտությունն է կողմնորոշվելու դեպի վերջնական արդյունքը: Էքստենսիվ մտածողության համար կարևորը ցանկված տարածությունների մեծությունն է: Հողը և գյուղատնտեսական արտադրությունը միմյանց կապող երկար շղթայում կարևոր չէ թե ինչքան հող է դրված ցանքի տակ: Կարևորն այն է, թե որքան գյուղատնտեսական արտադրանք և ինչ որակի, կարելի է ստանալ այդ հողից: Այստեղ հարկավոր է գյուղատնտեսական արտադրությունը ծրագրավորել այն հաշվով, որ ստացվի պահանջված քանակով արտադրանք: Նման

մոտեցումն անհրաժեշտ է իրատեսական՝ գյուղատնտեսության էկոլոգացման նպատակային ծրագիր մշակելու համար՝ ԱԱՀ կառուցվածքային վերակառուցման նպատակով: Վերջինս պայմանավորված է ԱԱՀ մյուս ճյուղերի՝ գյուղատնտեսության զարգացման հետ փոխապայմանավորվածությամբ, և այս հանգամանքը պետք է հաշվի առնել ոլորտի կառուցվածքային քաղաքականության մշակման ժամանակ:

ԱԱՀ-ում արտադրության միջոցների բաժնի ինտենսիվացումը, վերաբաշխումը և համակենտրոնացումը թույլ են տալիս կրճատել հողային ռեսուրսներն ի հաշիվ արտադրանքի վերջնական արդյունքի ավելացման, այսինքն՝ ի հաշիվ հսկայական չափերի հասնող բերքի կորուստների կրճատման կամ նախկինում չստացված պոտենցիալ բերքի ստացման՝ դրա տրանսֆորմացիայի և դեպի սպառողը շարժման պրոցեսում: Նման մոտեցումը ոչ միայն տնտեսապես արդարացված է, այլ նաև էկոլոգիապես անհրաժեշտ: Ներկայումս, չնայած հողատարածությունների մի մասի ուժեղ էռոզացվածությանը, նրանց բնական բերրիության նշանակալից անկմանը, այդ հողերում շարունակվում են դաշտային աշխատանքները, շատ հաճախ՝ հին, հողավերիչ տեխնոլոգիաների կիրառմամբ: Հատկապես վտանգավոր է մման հողերը որպես վարելահող օգտագործելը, քանի որ այն բերում է հողի հումուսային բերրի շերտի ավերման, դրա լվացման և հողատարման: Արդեն այժմ ռեալ վտանգ կա անցնել բերրիության իջեցման «էկոլոգիական շեմը», որին կարող են հետևել շատ արժեքավորագույն հողերի դեգրադացումը և բերրիության լրիվ անկումը:

Արդեն այժմ աշխարհում միլիոնավոր հեկտար հողեր անհրաժեշտ է ազատել որպես վարելահող օգտագործվելուց՝ դրանք դնելով բազմամյա խոտերով խոտացանության տակ կամ օգտագործելով որպես մարգագետիններ և այլն: Էլ ավելի մեծ հողատարածություններ պետք է կոնսերվացնել, որոնք այժմ դրված են արոտավայրերի տակ: Դա թույլ կտա ապագա սերունդների համար պահպանել արժեքավոր գյուղատնտեսական հողատեսքերը, դրանք պաշտպանել էռոզիայի և տեխնիկայի ավերիչ ներգործությունից, բավականաչափ արագ վերականգնել դրանց բերրիությունը: Այդ նպատակով պետք է մշակել համապատասխան շուկայական և վարչական կարգավորիչներ, որոնք թույլ կտան հողերը դուրս բերելով ակտիվ գյուղատնտեսական շրջանառությունից՝ վերաարտադրել բնական բերրիությունը:

Նման միջոցառումներ արդեն կիրառվում են մի շարք երկրներում: Հատկապես էկոլոգիական մեծ էֆեկտ ապահովեցին նման միջոցառումների կիրառումը ԱՄՆ-ում: 1970-1980-ական թվականներին այդ երկրում ծավալված և ավելի ու ավելի մեծացող էռոզիոն պրոցեսների արդյունքում գյուղատնտեսության մեջ ձևավորվեցին վտանգավոր էկոլոգիական իրավիճակներ: Դրան ի պատասխան պետության կողմից հատուկ ֆեդերալ ծրագիր մշակվեց հողերի կոնսերվացման համար, որին համապատասխան գյուղատնտեսական շրջանառությունից դուրս բերվեցին հողերի 10%-ը կազմող առավել դեգրադացված հողերը: Դա թույլ տվեց արմատապես նվազեցնել էռոզիոն պրոցեսների ինտենսիվությունը: Հողերի կոնսերվացման ծրագրում ֆերմերներին ընդգրկելու համար ԱՄՆ-ի կառավարությունը օգտագործեց տնտեսական միջոցառումների լայն համալիր դոտացիաների, գնային օժանդակության, վարկերի և այլ կարգի օգնության տեսքով: Նման քայլ վերջին հինգ տարում արվել է նաև Հայաստանում, որտեղ շուրջ 54 000 հա վարելահողեր դուրս են բերվել գյուղատնտեսական շրջանառությունից: Նման մոտեցում է հանդես բերվել նաև բազմամյա տնկարկների դեպքում¹:

Արտադրության գործոնների վերաբաշխման, հողային ռեսուրսների պահպանման և տնտեսման գործում մեծ դեր պետք է խաղան հանրապետության շուկայական կարգավորիչները: Բարենպաստ կամ աննպաստ շուկայական մթնոլորտի (կլիմայի) ստեղծումը արտոնությունների, վարկերի, ներդրումների, խթանիչների և այլնի հիման վրա թույլ է տալիս անցկացնել արդյունավետ տարածքային ագրարային քաղաքականություն: Դա ապացուցել է նաև համաշխարհային փորձը:

ԱԱՀ-ի զարգացումը մշակվող հողատարածությունների կրճատման և գյուղատնտեսության մեջ ռեսուրսների կրճատման դեպքում չի նշանակում մշակվող հողատարածության միավորի հաշվով արտադրության միջոցների մեխանիկորեն ավելացում: Նախկին մոտեցում-

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2010, էջ 294-314:

ների պահպանման դեպքում դա կլինի «տեխնոգեն» ինտենսիվացում, որը կարող է միայն գյուղատնտեսական հողատարածությունների դեգրադացման բերել: Անհրաժեշտ են որակապես նոր մոտեցումներ, ագրոկուլտուրայի բարձր կուլտուրայի հիմքի վրա երկրագործության էկոլոգիական ինտենսիվացում, հողի բերրիության պարզ և ընդլայնված վերարտադրություն՝ օպտիմալ ցանքաշրջանառությունների, մաքուր ցեղերի կիրառման էկոլոգիապես համատեղելի արտադրության միջոցների, պարարտանյութերի ռացիոնալ կիրառման միջոցով և այլ ճանապարհներով:

Անհրաժեշտ է առաջին հերթին խստորեն պահպանել բնառեսուրսային օրենքներով, մասնավորապես «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք»-ով նախատեսվող՝ առանց այն էլ սուղ հողային ֆոնդի պահպանման և օգտագործման կարգը, հողօգտագործողների իրավունքներն ու պարտականությունները, իրականացնել հանրապետությունում հողօգտագործման խնդիրները, հողերի պահպանության վիճակի նկատմամբ առաջարկվող պահանջները, խթանել հողերի արդյունավետ օգտագործումը և այլն, որոնց նվիրված են նշված օրենսգրքի 21; 25; 26; 27; 29; 50-53 և 60-68 հոդվածները, «Ագրարային պետական տեսչությունների մասին» ՀՀ օրենքը, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքի №№ 54-58 հոդվածները և այլն:

ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՏՊԾՏ (պոլիտեխնիկ), սախարենյր,
«ընդհանուր տնտեսագիտության» ամբիոն, ր. գ. թ.*

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՅ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամն ազդակ հանդիսացավ յուրաքանչյուր երկրի համար իր անցած տնտեսական ուղին վերլուծելու, տնտեսական առաջնահերթությունների համակարգը ձևափոխելու և հետճգնաժամային զարգացումներն ուղղորդելու տեսանկյունից: Իրողություն է, որ ճգնաժամին հաջող դիմակայել են այն երկրները, որոնց տնտեսությունը կողմնորոշված էր պատրաստի արտադրանքի արտահանմանը՝ ուշադրություն սևեռելով վերջինիս կառուցվածքի կատարելագործման խնդիրների վրա: Նկատենք, որ արտաքին առևտրի կառուցվածքի բարելավման նպատակադրումը չի կարող հանգել սոսկ ներմուծման կրճատման և արտահանման ընդլայնման գուտ մերկանտիլիստական հայեցողությանը: Խնդիրն ավելի շուտ տնտեսական արդյունավետության տեսանկյունից միջազգային մասնագիտացման համար առավել նպատակահարմար արտադրական ոլորտների բացահայտումն է, իսկ արտաքին առևտրում տնտեսական արդյունավետության «չափման» հիմնական սկզբունքները ձևակերպված են համեմատական առավելության տեսության շրջանակներում: Ինչ խոսք, վիճահարույց է, թե արդյո՞ք նպատակահարմար է, որ այդ սկզբունքների կիրառման արդյունքում արտաքին առևտրի կառուցվածքի «բարելավումը» հանգեցնի առևտրային հաշվեկշռի պակասուրդի մեծացման: Այնուամենայնիվ, շուկայական տնտեսության օրինաչափությունները թելադրում են առաջնորդվել տնտեսական արդյունավետության չափորոշիչներով, քանզի գոնե տեսականորեն երաշխավորում են որոշակի հավասարակշռություն:

Անդրադառնանք Ռիկարդոյի հարաբերական ծախսերի սկզբունքին և փորձենք գնահատել ՀՀ տնտեսության համեմատական առավելություններն այդ տեսանկյունից: Աղյուսակ 1-ում ներկայացված են աշխատուժի արտադրողականության ցուցանիշներն՝ ըստ տնտեսության ճյուղային կառուցվածքի: Համեմատելով աշխատուժի արտադրողականությունը արտադրական ոլորտներում, դժվար չէ եզրակացնել, որ արտաքին առևտրի ներկա կառուցվածքը հիմնականում պայմանավորվել է աշխատուժի արտադրողականությամբ: Աշխատուժն ավելի արտադրողական է հանքարդյունաբերությունում և մետաղագործական արդյունաբերությունում, որոնք էլ հենց ներկայումս ապահովում են արտահանման հիմնական

մասը: Բարձր արտադրողականության ցուցանիշ ունի նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, որի բաժինն արտահանման մեջ, սակայն, ընդամենը 5.5% է: Աշխատուժի արտադրողականությամբ երրորդ տեղում սննդարդյունաբերության ոլորտն է, ինչն, ըստ ամենայնի, նույնպես արտահանման ուղղությունը պայմանավորող հանգամանք է հանդիսացել: Բնականաբար, արտաքին առևտրում համեմատական առավելությունների մասին դատողությունները չեն կարող պայմանավորվել միայն մեկ գործոնով, թեկուզ և այդ գործոնն ամենակարևորը լինի, բացի այդ աշխատուժի որակական հատկանիշների գնահատումը պարզ թվային հարաբերություններով չի կարող լրիվ տեղեկատվություն պարունակել աշխատուժի ներուժային հնարավորությունների վերաբերյալ:

Աղյուսակ 1

Աշխատուժի արտադրողականությունն ըստ ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի

Արտադրական ոլորտներ	Թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալը (մլրդ դրամ)	Աշխատողների միջին տարեկան թվաքանակը (հազ. մարդ)	Արտադրողականություն ¹
Մետաղական հանքաքարի արդյունահանում	140.1	5.8	24.1
Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	49.9	5.5	9.0
Մետաղագործական արդյունաբերություն	145.4	4.8	30.2
Աղամանդագործություն և ոսկերչություն	9.7	1.0	9.7
Քիմիական արդյունաբերություն	26.9	7.3	3.6
Մեքենաշինություն	15.3	4.0	3.8
Թղթի, թղթե արտադրատեսակների արտադրություն	4.8	0.7	6.9
Փայտանյութի մշակման և փայտե արտադրատեսակների արտադրություն	1.4	0.9	1.5
Մանածագործական արտադրատեսակներ	0.3	0.2	0.06
Հագուստի արտադրություն	3.5	2.0	1.8
Կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն	1.0	0.3	3.3
Սննդի արդյունաբերություն	188.2	13.2	14.2
Խմիչքների արտադրություն	69.9	5.3	13.2
Ծխախոտի արտադրություն	19.9	1.7	11.7
Տեղեկ. տեխնոլոգիաների արտադրություն	58.3	4.9	12.0

Երկրների համեմատական առավելությունները գնահատելու համար վերջին տարիներին հաճախ է օգտագործվում 1965թ-ին Բ. Բալասայի կողմից առաջարկված «բացահայտված համեմատական առավելությունների» ինդեքսը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$RCA = (exp_{ij} / exp_{tj}) / (exp_{iw} / exp_{tw})$, որտեղ *i*-ն տվյալ ապրանքն է, *j*-ն տվյալ երկիրն է, *t*-ն բոլոր ապրանքներն են, իսկ *w*-ն համաշխարհային շուկան է: Այսինքն՝ այն հավասար է տվյալ երկրի արտահանման մեջ որևէ ապրանքի տեսակարար կշռի և համաշխարհային արտահանման մեջ այդ նույն ապրանքի տեսակարար կշռի հարաբերությանը: Եթե $RCA > 1$, ապա երկիրն ունի համեմատական առավելություն տվյալ ապրանքի գծով, իսկ եթե $RCA < 1$, ապա երկիրն այդ ապրանքի գծով մրցունակ չէ համաշխարհային շուկայում:

Եթե վստահենք AEPLAC՝ Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի, իրականացրած «Հայաստանի արտահանման մրցունակության վիճակագրական վերլուծությանը²», ապա 2008թ. հայկական 314 անուն ապրանք համաշ-

¹ Աղյուսակը կազմելիս օգտագործվել են պետական վիճակագրական տվյալներ՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2010-ը (էջ259-269), բացառությամբ աղամանդագործության և ոսկերչության ոլորտի աշխատողների թվի, ինչպես նաև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրական ոլորտի վերաբերյալ տվյալների, որոնց աղբյուրը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքն է www.mineconomy.am:

² Վերլուծությունն իրականացրել է AEPLAC-ի փորձագետ Հ. Մադոյանը, 2010թ: Աղբյուրը՝ www.aeplac.eu կայք:


խարհային շուկայում ունեցել է համեմատական առավելություն: Հատկանշական է, որ ցուցանիշը գնահատվել է նաև ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի համար և պարզվել է, որ վերոնշյալ 314 ապրանքատեսակներից 188-ը կամ ԵՄ հետ առևտրում չեն ունեցել համեմատական առավելություն (50 դեպք) կամ էլ ընդհանրապես չեն արտահանվել ԵՄ երկրներ (138 դեպք):

Հեղինակի կողմից նույնպես իրականացվել է ՀՀ համեմատական առավելությունների «բացահայտման» փորձ՝ 2010թ UN COMTRADE վիճակագրական տվյալների հիման վրա՝ Հայաստանի արտահանման գրեթե 95%-ը կազմող 25 ապրանքախմբերում (ներդաշնակեցված դասակարգման համակարգով)¹, որոնցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը ՀՀ արտահանման մեջ գերազանցել է 0.5%-ը: Համեմատական առավելություններ բացահայտվել են նշված գրեթե բոլոր ապրանքախմբերում (բացառությամբ դեղագործական մթերքի):

Եթե հիմնվենք նշված վերլուծությունների վրա, ապա Հայաստանը մեծ թվով ապրանքների գծով ունի համեմատական առավելություն, իսկ արտահանման հետ կապված հիմնական խնդիրը պարզապես արտահանման ծավալների մեծացումն է: Ակնհայտ է Բալասայի ինդեքսի օգտագործման մեթոդոլոգիական սխալը՝ համեմատական առավելությունների գնահատման նպատակով: Ինդեքսը հնարավորություն է տալիս հետևել արտահանման դինամիկային և դրա հիման վրա կառուցել արտահանման հետագա բարելավման ճիշտ ռազմավարություն, բայց չի դիտարկում արտահանման կառուցվածքը պայմանավորող գործոնները, արտահանման ներուժ ունեցող, բայց չարտահանվող ապրանքները, անտեսում է տնտեսական արդյունավետության հարցը: Այնինչ, ՀՀ արտահանման կարևոր խնդիրը հենց կառուցվածքի կատարելագործումն է, որն ենթադրում է ներուժային առավելությունների բացահայտում, վերակողմնորոշում դեպի գիտատար, մեծ ավելացված արժեք պարունակող ապրանքների արտադրության ոլորտ:

Անշուշտ, համեմատական առավելությունները պայմանավորող գործոնները բազմաթիվ են, և դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը տարբեր է արտաքին առևտրի միտումների վրա: Մեր կողմից առանձնացվել են յոթ կարևոր գործոններ (*աշխատուժ, արտադրության այլ գործոններ, համաշխարհային շուկայի պահանջարկ, այլընտրանքային ծախսեր, կենսագիկի առանձնահատկություններ, գների մակարդակ և փոխարժեք, ներքին շուկայում մրցակցություն և ինստիտուցիոնալ այլ պայմաններ*), և դրանց հիման վրա մշակվել է միջազգային առևտրում երկրների առավելությունների գնահատման նոր մոտեցում, որը ենթադրում է երևույթների բազմատարբերակ գնահատումների հիման վրա ձևավորված ինտեգրալ հայացք: Արտաքին առևտրում երկրի հաջողությունը չի կարող պայմանավորված լինել միայն աշխատուժի արտադրողականությամբ կամ երկրների ռեսուրսապահովվածությամբ, ոչ էլ տեխնոլոգիական առաջընթացի հնարավորություններով, իրականում, այդ հաջողությունը հնարավոր է ապահովել *ինտեգրալ համեմատական առավելությամբ*, ինչը ենթադրում է վերոնշյալ 7 գործոնների և պայմանների բարենպաստ ազդեցություն: Ինտեգրալ համե-

Գծանկար 1



մատական առավելությունն՝ իր բաղադրիչներով պատկերավոր կարելի է ներկայացնել բուրգի տեսքով (տե՛ս գծանկար 1): Բուրգի հիմքում աշխատուժն է, բոլոր հաջորդ շերտերը նախորդի համեմատ փոքր մակերես են զբաղեցնում, ուստի և ավելի քիչ ազդեցություն ունեն ինտեգրալ համեմատական առավելության ձևավորման վրա: Բուրգի գագաթին մրցակցության և այլ ինստիտուցիոնալ պայմանների առկայությունն է, որի մակերեսը թեև ամենափոքրն է, բայց այն, ամենակարևորն է իր ընդհանրացնող նշանակությամբ: Շերտերից յուրաքանչյուրի բացակայության դեպքում բուրգը (ինտեգրալ համեմատական առավելությունը) դադարում է ամբողջական լինելուց, այսինքն՝ նույնիսկ նվազագույն կշիռ ունեցող գործոնի բացա-

¹ Աղբյուրը՝ <http://comtrade.un.org/pb/CommodityPagesNew.aspx?y=2010> կայք:

ասկան ազդեցությունը կարող է չեզոքացնել այլ գործոնների ազդեցությամբ ձևավորված առավելությունները: Հենց այս հանգամանքն էլ պայմանավորում է նշված գործոնների կարևորությունը և առանձնացումը համեմատական առավելությունների վրա ազդող այլ գործոններից, որոնց ազդեցությունն անուղղակի է և միջնորդավորված:

Այժմ ներկայացնենք այն հիմնական սկզբունքային մոտեցումները, որոնք բխում են ինտեգրալ համեմատական առավելությունների կոնցեպցիայից և պետք է ընկած լինեն ՀՀ արտաքին առևտրի բարելավմանն ուղղված տնտեսական քաղաքականության հիմքում:

✓ Արտահանման ցանկացած աճ չի կարող հանգեցնել երկրի բարեկեցության աճին: Հումքի արտահանումը, օրինակ, տնտեսապես ոչ նպատակահարմար է: Արտահանումը չի կարող ինքնանպատակ լինել. տնտեսական ցանկացած քաղաքականության հիմքում սահմանափակ ռեսուրսներով անսահմանափակ պահանջումների արդյունավետ բավարարման խնդիրն է: Հայաստանի համար, որը հարուստ չէ բնական ռեսուրսներով, այս խնդրի լուծումն արտաքին առևտրային քաղաքականության համատեքստում պարզապես ենթադրում է տեղական հումքով պատրաստի արտադրանքի թողարկում և արտահանում:

✓ Արտաքին շուկա դուրս գալը չի կարող դիտվել որպես տնտեսական գործունեության վերջնանպատակ: Տնտեսական անվտանգության տեսանկյունից կարևոր ապրանքատեսակների ներքին պահանջարկը սեփական հնարավորություններով բավարարելու նպատակադրումն ավելի կարևոր է, քան արտահանման միջոցով տեղական արտադրողների եկամուտների հավելումը: Նշված ապրանքների դեպքում արտաքին շուկան պետք է երկրորդային դիտվի՝ ներքին շուկայի համեմատությամբ, այսինքն՝ պետք է արտահանել միայն այն ապրանքները, որոնց ներքին պահանջարկը հիմնականում բավարարված է: Հակառակ դեպքում՝ ստացվում է, որ երկրի սակավ ռեսուրսներն ուղղվում են օտարերկրյա պահանջարկի բավարարմանը: Փաստորեն, արդյունավետ արտահանումը պիտի ենթադրի ոչ միայն ծախսերի ու օգուտների պարզ քանակական համադրում, այլ նաև սուբյեկտիվ առաջնահերթությունների հաշվառում:

✓ Եթե որևէ ոլորտում պետական աջակցության հիմնավորված անհրաժեշտություն կա, ապա այն չի կարող համարվել ինտեգրալ համեմատական առավելություն ունեցող: Շուկայական տնտեսությունում պետական աջակցությունն արդարացվում է միայն այն ոլորտներում, որտեղ սահմանային բարձր ծախսերը սահմանափակում ռեսուրսների հոսքը ոլորտ և խոչընդոտում ներդրումների իրականացմանը, թեև դրանց նշանակությունը մեծ է ներքին պահանջարկի բավարարման առումով:

✓ Ինտեգրալ համեմատական առավելությունների վրա պետության ներգործությունը պետք է սահմանափակվի ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ դաշտի և զարգացած ենթակառուցվածքների ապահովմամբ (նկատենք, որ սա բուրգի գազաթում գտնվող գործոնն է), գիտակրթական համակարգի վրա ներգործությամբ (բուրգի հիմքում գտնվող գործոնի վրա ազդելու արդյունավետ ձև է), ինչպես նաև՝ ազգային և տնտեսական անվտանգությունից բխող միջոցառումներով,

✓ Հմուտ շուկայագետները կարող են ազդել համաշխարհային պահանջարկի գործոնի վրա՝ նպաստելով ինտեգրալ համեմատական առավելությունների իրացմանը, իսկ նորարարական ունակություններով, համարձակ նախաձեռնություններին պատրաստական գործարարների առկայությունը (ինչը հնարավոր է միայն կրթության և գիտության զարգացման պայմաններում) ապրանքների կենսացիկլի սկզբնական փուլերում արտադրության կազմակերպման հնարավորություն է ընձեռում, այսինքն՝ նախապայման՝ գիտատար ապրանքների արտադրության և արտահանման համար, ուստի, շեշտադրում պետք է կատարել երկրում գիտակրթական մակարդակի բարձրացման վրա:

✓ Տնտեսության առավելությունների վերաբերյալ խորհրդային տարիներին ձևավորված պատկերացումները հարկ է ենթարկել արդյունավետության նոր չափանիշների: Ինչպես գիտենք, ՀՀ համեմատական առավելությունները հաճախ նույնացվում են խորհրդային տարիների տնտեսական ձեռքբերումների հետ, իսկ ձեռնարկատիրությունը հաճախ կառչում է հենց այն ոլորտներից, որոնք երբևէ հաջողություն են ունեցել միջազգային շուկայում: Այնինչ, խորհրդային տնտեսական համակարգի հիմքում գերազանցապես քաղաքական

գործոններ էին, և համեմատական առավելությունների ձևավորման անհրաժեշտություն ու հիմքեր չկային

Ելակետ ունենալով նշված սկզբունքները և կատարված վերլուծության արդյունքները, փորձենք ուրվագծել ՀՀ արտահանման կառուցվածքի բարելավման հեռանկարները:

Ինտեգրալ համեմատական առավելություններն առավել ակնառու են *տեղեկատվական տեխնոլոգիաների* արտադրական ոլորտում՝ պայմանավորված գիտակրթական զգալի ներուժով, ռեսուրսային ապահովվածության նվազագույն պահանջով, համաշխարհային շուկայում զգալի պահանջարկով, այլընտրանքային ցածր ծախսերով, կենսացիկլի նպաստավոր փուլով և ինստիտուցիոնալ բավարար պայմաններով: Բայց այդ առավելությունները գործնական հաջողությունների վերածելու նպատակով անհրաժեշտ է նախ բարելավել գիտակրթական համակարգը: SS ոլորտն արագ փոփոխվող ոլորտ է, և կրթական համակարգը պետք է անհրաժեշտ ճկունություն ունենա փոփոխություններին արձագանքելու համար: Ոլորտին առնչվող կարևոր խնդիր է այն, որ արտադրված բարձր տեխնոլոգիական արտադրանքը հիմնականում արտահանվում է, և ոլորտի զարգացումից ակնկալվող դրական էքստերնալները (SS-երի համատարած օգտագործումը հանգեցնում է բիզնեսի և պետական կառավարման ոլորտում արդյունավետության աճի) լավ չեն դրսևորվում: Պետությունը պետք է որոշակի լծակներով (օրինակ՝ պետական պատվերների միջոցով) արտադրանքի մի մասն իրացնի երկրի ներսում: Այս դեպքում ոլորտի զարգացումն իսկապես կհանգեցնի երկրի բարեկեցության աճին:

Մեքենաշինության ոլորտում ինտեգրալ համեմատական առավելությունները նկատելի են առավել *գիտատար և նվազ նյութատար ենթաճյուղերում*, որոնց զարգացման վրա քիչ է անդրադառնում ռեսուրսային ապահովվածության գործոնը: Ընդ որում, որոշիչ են ցածր այլընտրանքային ծախսերը, քանի որ տնտեսության հետագա զարգացումը գերազանցապես պայմանավորված է հենց այս ոլորտի զարգացմամբ, որը առաջինը կրելով գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունը շրթայական ռեակցիայով այն տեղափոխում է տնտեսության մյուս ճյուղեր՝ էապես նպաստելով դրանց զարգացմանը, թեև այստեղ նույնպես առկա է բարձրորակ աշխատուժի կրճատված վերարտադրության խնդիրը: Միաժամանակ, եթե SS ոլորտում ներդրումների ներգրավման խնդիր գրեթե չկա, ապա մեքենաշինության ոլորտում այդ խնդիրը կա, քանի որ անկախ զարգացման նախադրյալների առկայությունից, ձեռնարկատիրությունն այն չի դիտում որպես հեռանկարային ոլորտ: Պետական նախաձեռնությամբ ոլորտի (և ոչ միայն այս ոլորտի) տնտեսական առավելությունների վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար հրապարակումն, անշուշտ, կփոխի գործարարների անտարբերությունը ոլորտի նկատմամբ: Ինչ վերաբերում է հայկական ապրանքների նկատմամբ համաշխարհային ոչ բարձր պահանջարկին, ապա այդ խնդիրը նույնպես լուծելի է՝ ճիշտ շուկայավարման մեթոդների օգնությամբ:

Հաջորդ ոլորտը որտեղ կարելի է պնդել, որ առկա են ինտեգրալ համեմատական առավելություններ, *թեթև արդյունաբերությունն* է, հատկապես եթե հաշվի ենք առնում, որ երկրում առկա են բրդի, բամբակի, մետաքսի սեփական արտադրություն հիմնելու նախադրյալներ: Իդեալ, մնան արտադրությունների նախադեպեր Հայաստանում եղել են, ընդ որում՝ բավական հաջող: Որոշ ապրանքների ինտեգրալ համեմատական առավելության վերլուծությունը հիմնականում հաստատում է այդ ապրանքների արտահանման ներկա իրողության հիմնավորվածությունը: Առավելություններն առավել ակնառու են *ձեռագործ գորգերի* արտադրությունում, քիմիական, արհեստական թելերից ու մանրաթելերից արտադրանքի, տրիկոտաժե և տեքստիլ հագուստեղենի արտադրությունում: Ընդհանրապես, հանդիսանալով փոքր ձեռնարկատիրության զարգացման յուրօրինակ բնական միջավայր (հատկապես՝ անհատական բացառիկ արտադրատեսակների թողարկման համար), թեթև արդյունաբերությունը պետք է համարվի զարգացման համար առավել նախընտրելի ոլորտ, քանզի ճկունության շնորհիվ կարող է տնտեսական արդյունավետություն ապահովել: Բացի այդ, թեթև արդյունաբերությունը չափազանց մեծ կարևորություն ունի սոցիալական հարթությունում առկա խնդիրների մեղմացման հարցում, հատկապես կապված կանացի աշխատուժի զբաղվածության ապահովման հետ: Ընդգծենք նաև, որ տնտեսության այս ճյուղում կարևոր է նաև ներմուծման փոխարինումը: Ներքին շուկայում տեղական արտադրանքի առաջարկն,

անշուշտ, կլուծի էժան և անորակ արտասահմանյան (առավել հաճախ՝ թուրքական) արտադրանքի ստվերային ներմուծման հարցը: Ուշադրության է արժանի նաև այն, որ թեթև արդյունաբերական ձեռնարկությունների «աշխատանքային օրակարգը» պատվիրվում է արտասահմանից, իսկ այդ պատվերները սովորաբար պատահական բնույթի են լինում: Մեր կարծիքով, միայն տեղական սպառողական շուկային կողմնորոշված արտադրությունները (որոնց համար արտաքին շուկան միայն մասշտաբի էֆեկտ ընձեռող գործոն է) կարող են հաջողություն և կայուն պահանջարկ ունենալ ներքին և արտաքին շուկաներում:

Ագրոարդյունաբերության ոլորտի ինտեգրալ համեմատական առավելությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային շուկայում էկոլոգիապես մաքուր արտադրանքի նկատմամբ մեծ պահանջարկով, ոլորտում աշխատուժի բարձր արտադրողականությամբ և այլընտրանքային ցածր ծախսերով, այնուամենայնիվ, նույնպես լիակատար չեն օգտագործվում: Հրատապ են գյուղատնտեսական վարկերի դժվար հասանելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավման, գյուղատնտեսական հարաբերությունները կարգավորող ինստիտուցիոնալ պայմանների հստակեցման խնդիրները: Եթե վերջին երկու խնդիրների լուծման պարտականությունը պետական մարմինների վրա է, ապա առաջին խնդրի լուծմանը պետությանը կարող է նպաստել միայն անուղղակիորեն (օրինակ, վարկերի վերադարձման պետական երաշխիքներ տրամադրել կամ գյուղատնտեսությունում կորուստների ռիսկերը նվազեցնելու այնպիսի միջոցառումներ ձեռնարկել, ինչպիսին է հակակարկտային համակարգերի ներդրումը): Ոլորտում առկա են այլ խնդիրներ ևս, որոնց լուծումը, սակայն, չի տանի արտահանման ծավալների աճի, գուցե, նույնիսկ՝ հակառակը: Դրանցից առաջինը դարձյալ առնչվում է տեղական սպառողների շահերի պաշտպանությանն, իսկ մյուսը՝ բարձրակազմ աշխատուժը գյուղատնտեսական աշխատանքներում օգտագործելուն, ինչը տնտեսապես աննպատակահարմար է: Եթե, օրինակ, բացարձակ առավելություն ունեցող այնպիսի ապրանքն, ինչպիսին հայկական ծիրանն է, պետք է հիմնականում արտահանվի, և դրա արդյունքում ներքին շուկայում առաջարկը գերազանցող պահանջարկը բարձր գներ ձևավորի, ապա այս պայմաններն անտեսող արտաքին առևտուրը չի կարող արդյունավետ կառուցվածք ունենալ:

Քիմիական արդյունաբերության ոլորտում ինտեգրալ համեմատական առավելություններ կան «փոքր քիմիայի» ենթաճյուղում՝ դեղորայքի և վիտամինների, անօրգանական քիմիական միացությունների, գունատու նյութերի, արհեստական ներկերի, պոլիմերային նյութերից իրերի և արհեստական կորունդի արտադրությունում՝ ռեսուրսային ապահովվածության (կամ նվազ ռեսուրսատարության՝ դեղագործության ենթաճյուղում), այլընտրանքային ցածր ծախսերի և համաշխարհային շուկայի պահանջարկի որոշիչ ազդեցությամբ: Ոլորտի առավելությունների վերաբերյալ եզրակացություններն հակասական են: Դրանք չեն հիմնավորում արտահանվող հիմնական ապրանքների (արհեստական կաուչուկ, պլաստմասսե իրեր, ավտոդողեր, ռետինե այլ իրեր) արտահանման նպատակահարմարությունը ժամանակակից պայմաններում: Ուստի, խնդիր է առաջանում հրաժարվել նախկինից պահպանված խոշոր արդյունաբերական միավորումներից և առավելություններից, որոնք հնարավոր էին քաղաքական գործոնի գերակշիռ ազդեցությամբ: Մյուս կողմից, այդ խոշոր ընկերություններն ապահովում են քիմիական մյուս ենթաճյուղերի նորմալ գործունեությունը: Ամեն դեպքում, նպատակահարմար է գիտական մեծ բաղադրիչով փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը՝ շուկայի փոփոխություններին արագ արձագանքելու հնարավորությամբ: Լրացուցիչ հիմնավորում է այն, որ քիմիական արտադրանքի ավելի քան 63%-ն արտադրվում է «Նաիրիտ» գործարանում՝ ներկրվող գազի հիման վրա, որը բավական թանկ է, իսկ տեղական հումքի (կրաքար, պղնձարդյունաբերության թափոններ) վրա հիմնված արտադրությունները (ազոտական պարարտանյութերի, ծծմբաթթվի և այլն) չնչին բաժին են կազմում: Հատկանշական է, որ ոլորտի որոշ ենթաճյուղեր պետական անհիմն հովանավորչության տակ են (պլաստմասսե իրերի, ավտոդողերի և ռետինե այլ իրերի ներմուծման ժամանակ զանձվում է 10% մաքսադրույք): Մեր կարծիքով, քիմիական միակ ենթադրուրտը, որտեղ պետական ուղղակի միջամտության անհրաժեշտություն կա, դեղորայքի արտադրությունն է և ներմուծման վերահսկողությունը:

Ինտեգրալ համեմատական առավելությունների առկայությունը չի հիմնավորվում ադամանդագործության և լեռնամետալուրգիական ոլորտներում: Թեև որոշ ապրանքների արտահանումը կարելի է նպատակահարմար դիտել, ընդհանուր առմամբ, այս ոլորտներում մասնագիտացումը հեռանկարային չէ, համեմայնդեպս ներկա միտումներով: Նկատենք, որ նշված երկու ոլորտների արտահանումը միասին կազմում է արտահանման ավելի քան 50%-ը: Նույնիսկ չափազանց մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրներն իրենց թույլ չեն տալիս հումքի ուղղակի արտահանում այն դեպքում, երբ երկրում առկա է դրանց նկատմամբ պահանջարկ և իրացման լայն հնարավորություններ: Ինչ վերաբերում է ադամանդագործության և ոսկերչության ոլորտին, ապա այստեղ մասնագիտացումը պետք է ընթանա ավելի շուտ ոսկերչական իրերի, քան ադամանդի վերամշակման արտադրությունում, քանի որ այդ ենթաճյուղում առկա են առավելություններ աշխատուժի որակի, հումքային ներուժի, արտաքին շուկայում բարձր պահանջարկի և մյուս գործոնների առումով: Վերամշակված ադամանդի արտահանումը կարող է նպատակահարմար համարվել միայն այն դեպքում, երբ հիմնական արտադրանքը ծառայի ոսկերչության և հարակից արտադրությունների զարգացմանը: Բացի այդ, անհրաժեշտ է վերամշակված ադամանդը ոչ թե որպես հումք վերադարձնել մատակարարներին, այլ վաճառել այն միջազգային շուկայում տվյալ պահին ձևավորված գներով: Հակառակ դեպքում ստացվում է, որ Հայաստանը ոչ թե ադամանդ է արտահանում, այլ էժան աշխատուժ:

Իհարկե, «տնտեսական սկզբունքները հեշտությամբ չեն ենթարկվում սուբյեկտիվ ցանկությունների չափումներին»¹: Բայց համապատասխան հիմնավորումների առկայությունն ավելի, քան բավարար է, սուբյեկտիվ գործոնը նշանակալի համարելու համար, հատկապես, երբ խոսքը վերաբերում է ազգային տնտեսության առաջնահերթություններին: Ինչ խոսք, անհնար է անմիջապես հրաժարվել արտահանման 2/3-ն ապահովող արտադրություններից, ուստի, հարկ է աստիճանաբար դրանք ուղղորդել առավելապես ներքին պահանջարկի բավարարմանը և «համեմատական առավելություն չունեցող» արտադրություններից անցնել «համեմատական առավելություններ ունեցող» արտադրություններին:

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՆՆ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, ր. գ. թ.*

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ տնտեսական քաղաքականության շուկայական կողմնորոշման արդյունքում, ագրարային ոլորտում ձևավորվել են ազատական տնտեսական հարաբերություններ:

Մեխանիզմային և տնտեսավարման բազմաձևությունը, ապրանքների և գների ազատականացումը, պետության աջակցության սահմանափակության պայմաններում, հիմք ընդունելով գյուղատնտեսական ոլորտի առանձնահատկությունները, առավել իրական է արտահայտվում յուրաքանչյուր տարածաշրջանի և արտադրող սուբյեկտի մրցակցային հնարավորությունների անհավասարությունը:

ՀՀ անկախ պետության հաստատումից հետո, նոր սահմանադրության 104 հոդվածով, որպես վարչատարածքային միավորներ, սահմանվել են մարզերը և համայնքները: Առանձնացված են 10 մարզեր, իսկ դրանց կազմում 925 համայնք: Երևան քաղաքը նույնպես ունի համայնքի կարգավիճակ 12 քաղաքի համայնքներով:

Հանրապետության գյուղական համայնքների միջև առկա են էական տարբերություններ, որոնք պայմանավորված են բնակչության թվաքանակով, իրենց պատկանող հողատարածք-

¹ Ռ.Ն. Սարինյան, Արդի հայ տնտեսագիտության տեսություն, Երևան, 2003, էջ 82:

ներով, բնակլիմայական պայմաններով, սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներով և տրամադրվող ֆինանսական միջոցներով:

Հայաստանում իրականացվում են մի շարք համապետական, տարածքային, համայնքային զարգացման ռազմավարական ծրագրեր, որոնք ուղղված են գյուղատնտեսության զարգացմանը, գյուղական ենթակառուցվածքների կառուցմանը և վերականգմանը, տնտեսության աջակցությանը:

Ինչ խոսք, միայն գյուղացիական տնտեսությունների արդյունավետության բարձրացմամբ և ենթակառուցվածքների կառուցմամբ հնարավոր չէ ապահովել բնակչության բարձր կենսամակարդակը: Հանրապետության տարածաշրջանների համաչափ զարգացումը տնտեսության պետական կարգավորման դժվարին հիմնահարցերից մեկն է: Գործարարության եկամտաբերության տեսանկյունից միանգամայն տրամաբանական է, որ արտադրության գործունեների մատչելիության պայմաններում ներդրումները առավելապես կենտրոնացվում են Երևանում և մայրաքաղաքին մոտ տարածաշրջաններում:

2009թ. համայնքների բյուջեների եկամուտների մոտ 1/3-ը կազմում են Երևան քաղաքի ընդհանուր եկամուտները: Գյուղական համայնքների բյուջեների եկամուտներում մեծ տեսակարար կշիռ ունեն պետության կողմից տրամադրվող տրանսֆերտները, միջինը մոտ 50 տոկոս և ըստ բյուջեների կառուցվածքի՝ եկամուտներում մեծ տեսակարար կշիռ ունեն ֆինանսական համահարթեցման դոտացիաները:

Գյուղատնտեսական զարգացման պետական կարգավորիչ գործիքը սուբսիդավորումն է, որի նպատակն է ձևավորել գյուղատնտեսական սուբյեկտների գործունեության համար նպաստավոր միջավայր և ստեղծել ճյուղի գերակա ուղղությունների զարգացմանը նպաստող պայմաններ: Անհրաժեշտ խնդիրներից են՝ սուբսիդավորման անհրաժեշտությունը, նրա ուղղությունները, իրականացման մեխանիզմները և արդյունքները:

Հայաստանի տնտեսական ազատականացման պայմաններում ագրարային ոլորտը, հեռանկարում, միջազգային մրցունակության ուժեղացման պայմաններում, կարող է հայտնվել ավելի վատ վիճակում, եթե ժամանակին չձեռնարկվեն սուբսիդավորման և նաև արտադրողների շահերի պաշտպանության միջազգային պրակտիկայում կիրառվող այլ միջոցներ և գործողություններ:

Ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) չափանիշների՝ գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորումը տարանջատվում է՝ կանաչ, դեղին, կապույտ զամբյուղների, որոնք ունեն հետևյալ նշանակությունը՝

«Կանաչ զամբյուղ»-ի շրջանակներում ներառվում է շրջակա միջավայրի պահպանման, բույսերի և կենդանիների հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի, ենթակառուցվածքների զարգացման, կրթության, մասնագետների ուսուցման, եկամուտների ապահովագրման, վատ բնակլիմայական էկոլոգիական և տնտեսական պայմաններում գտնվող տարածաշրջանների աջակցությունը, տարերային աղետների դեպքում աջակցությունը և երկրի ներսում պարենային օգնության տրամադրումը:

«Դեղին զամբյուղ»-ի շրջանակներում են գյուղատնտեսական արտադրանքի և նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման, գների կարգավորման աջակցությունը, քանի որ սա որոշ չափով խաթարում է մրցակցային պայմանները, ենթարկվում է սահմանափակումների:

«Կապույտ զամբյուղ»-ը չի ենթարկվում սահմանափակումների, եթե տրամադրվում է առանձին արտադրանքների հաստատված չափաքանակներին չգերազանցող արտադրության կարգավորմանը, իսկ գյուղատնտեսական գործունեության իրականացնողների եկամուտների ավելացման դեպքում, այն որոշ չափով սահմանափակվում է:

2011թ. ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորման կարգին համապատասխան գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել է 14.0% վարկեր, որից 4%-ը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ ավելի կարիքավոր 225 համայնքի համար՝ 6%: Այս նպատակով տրամադրվել է 25 հազար միավոր վարկ՝ 17.4 մլրդ դրամի չափով:

Գյուղատնտեսության արտադրության սուբսիդավորման արդյունավետ համակարգի մշակումը և օգտագործումը կնպաստի գյուղատնտեսական արտադրության օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարածքային տարբերությունների մեղմմանը և գործունեության համար հավասար պայմանների ստեղծմանը: Այն կարող է դրական ազդեցություն ունենալ գյուղա-

ցիական տնտեսությունների արտադրանքի կառուցվածքի վրա՝ խրախուսելով բարձր մրցունակություն ունեցող գյուղմթերքի արտադրության ավելացմանը և ապրանքայնության բարձրացմանը:

ՀՀ 2010թ. ապրանքայնության միջին մակարդակը գյուղացիական տնտեսություններում կազմել է 55.8 տոկոս: Այն տարբեր է, ելնելով մարզերում գյուղատնտեսական մթերքների արտադրության կառուցվածքից և իրացման պայմաններից:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում 2006-2011թթ. կատարված գյուղատնտեսական հումքի գնումների ծավալները

հազ. տոննա

Գյուղատնտեսական մթերքներ	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Բանջարեղեն	67.6	57.1	39.0	32.3	29.7	51.0
Պտուղ	13.2	14.8	19.4	11.2	3.6	14.1
Խաղող	106.1	144.4	137.4	127.7	135.0	129.0

2011թ. վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 51.0 հազ. տ բանջարեղեն, 14.3 հազ. տ պտուղ, որը գերազանցում է նախորդ տարվա մթերումների ծավալները համապատասխանաբար՝ 1.7 և 3.9 անգամ: Խաղողի մթերումները՝ 129.0 տ, մթերվել է 40 ընկերությունների կողմից: Հանրապետությունից արտահանվել է 16.9 հազար տ. պտուղբանջարեղեն, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը՝ 35.2%:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական մթերքների իրացման կառուցվածքը 2010թ. տվյալներով¹

(տոկոսներով)

	Գյուղատնտեսական մթերքների անվանումը	Գյուղացիական տնտեսությունների կողմից			Օգտագործվել է տնտեսությունում	Մնացորդը տնտեսությունում
		վաճառվել է	տրվել է ապրանքափոխանակման դիմաց	տրվել է բնամթերքով ծառայությունների դիմաց		
1	Հացահատիկային և հատիկարնղեղեն մշակաբույսեր	15.8	6.0	2.0	38.7	37.5
2	Կարտոֆիլ	28.3	6.1	0.6	30.1	34.9
3	Բանջարեղեն	67.3	6.5	0.5	20.3	5.4
4	Բոստան	85.2	6.6	0	8.2	0
5	Պտուղ	26.9	6.9	1.2	36.0	29.0
6	Խաղող	84.5	4.7	0.5	7.8	2.5
7	Միս	71.3	5.1	0.2	22.9	0.5
8	Կաթ և կաթնամթերք (վերածած կաթի)	44.7	4.3	0.4	41.4	9.2
9	Չուր	29.8	10.3	0.3	59.6	0
10	Բուրդ	28.1	9.5	0.3	22.8	38.3
11	Մեղր	44.9	4.6	0.7	31.6	18.2

Համայնքների հավասարակշռված և կայուն զարգացման համար կարևոր է սոցիալական կապիտալը, որի ստեղծման և զարգացման համար հիմք են հանդիսանում կոոպերատիվները, համայնքային և միջհամայնքային միավորումները, որոնք նպաստավոր պայմաններ կստեղծեն գյուղացիական տնտեսությունների ձևավորման, տեխնիկայի և արտադրության մյուս միջոցների առավել արդյունավետ օգտագործման և գյուղմթերքների իրացման համար: Նոր մթերող և վերամշակող ընկերություններ ստեղծելով, որոշ չափով կլուծվի գյուղերում աշխատուժի զբաղվածության խնդիրը:

¹ Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2010 թվականին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2010, էջ 5-10:

Ըստ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն» վարկային ծրագրի, հանրապետության անասնապահության մասնագիտացված 5 մարզի 33 համայնքներում ստեղծվել են սպառողական կոոպերատիվներ, 22-ում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներ:

Գյուղատնտեսական կոոպերացիայի համայնքային և միջհամայնքային միավորման գործընթացի զարգացմանը խթանելու նպատակով, անհրաժեշտ է գյուղատնտեսության համակարգում իրականացվող դրամաշնորհային վարկային ծրագրերի համապատասխան բաղադրիչների նպատակաուղղում գյուղատնտեսական կոոպերատիվների, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեության կազմակերպման ձևերի ստեղծմանը և ամրապնդմանը, գյուղատնտեսական մթերքների վերամշակողներին նոր տեխնոլոգիաների ներդրմանը, շուկայահանմանը, սննդամթերքի անվտանգության պահանջների ապահովմանը:

2010թ. մարզերին տրամադրվող դրամաշնորհների միջոցով կատարված աշխատանքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 3

2010թ. դրամաշնորհների միջոցով կատարված աշխատանքները¹

(ՀՀ մլն դրամով)

Մարզ	Գյուղտեխնիկայի և տրանսպորտի ձեռքբերում		Խմելու ջրի ցանցի բարելավում		Ռոռզման համակարգի կառուցում		Գազաֆիկացում		Այլ ծրագրեր		Ընդամենը մարզով	
	վերցման/հոյու	միություն	վերցման/հոյու	միություն	վերցման/հոյու	միություն	վերցման/հոյու	միություն	վերցման/հոյու	միություն	վերցման/հոյու	միություն
Արագածոտն	7	62.0	1	8.8	0	0	5	167.6	1	2.8	14	241.2
Լոռի	5	46.0	3	74.6	0	0	2	27.6	0	0	10	148.2
Սյունիք	0	0	2	35.4	0	0	0	0	2	41.4	4	76.8
Գեղարքունիք	3	32.3	2	48.4	2	82.6	0	0	1	7.3	8	170.6
Տավուշ	6	68.6	3	21.8	0	0	0	0	0	0	9	90.4
Շիրակ	11	81.4	1	20.4	0	0	5	58.4	1	46.3	18	206.5
Ընդամենը	32	290.3	12	209.4	2	82.6	12	253.6	5	97.8	63	933.7

Ըստ աղյուսակի տվյալների ներկայացված հիմնախնդիրները (գյուղտեխնիկայի և տրանսպորտի ձեռքբերում, խմելու ջրի, ռոռզման համակարգի, գազաֆիկացիայի) վերաբերում են մարզերի և համայնքների կայուն և հավասարաչափ զարգացմանը:

Գյուղատնտեսության ճյուղի համար լուրջ հիմնախնդիր է գյուղտեխնիկայի և տրանսպորտի ձեռքբերումը: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների մոտ 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է արտադրողականությունը և բարձր են շահագործման ծախսերն ու ծառայությունների սակագները:

Հրատապ պահանջ է տեխնիկայի համատեղ տնօրինման և օգտագործման անհրաժեշտությունը: Գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների գործընթացի բարելավումը հնարավոր է տարբեր դրամաշնորհային և վարկային ծրագրերով, պետական աջակցությամբ հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկական միջոցների բազայի հիման վրա մեքենատրակտորային կայանների ստեղծման և դրանց գործունեության ապահովման միջոցով:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական տեխնիկա արտադրող և մատակարարող ընկերությունների հետ պետության աջակցությամբ լիզինգային մեխանիզմներով տեխնիկական միջոցների ձեռքբերումը և գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրումը:

Բազում խնդիրներ կան խմելու ջրի մատակարարման ոլորտում: Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական տվյալների, գյուղական համայնքների ընդհանուր թվի 43.4 տոկոսն է ջրով ապահովված կենտրոնացված ջրամատակարարման համակարգի միջոցով: 46.8 տոկոսը

¹ Ըստ գյուղատնտեսական նախարարության տվյալների:

ունեն սեփական ջրամատակարարման համակարգ: 2.4 տոկոսը օգտվում են ջրհորերից, 1.3-ը գետերից, 5/4-ը բերովի ջրից: ՀՀ համայնքներում շատ է կարևորվում նաև ջրահեռացման հարցը:

Գյուղական համայնքներում ոռոգման ջրի դժվարին հիմնախնդիր ունի 706 համայնք: Ոռոգման ջրի անբավարարության պատճառով հանրապետությունում նպատակային նշանակությամբ չի մշակվում 32.0 տոկոս գյուղատնտեսական նշանակության հողատարածք: Վատ է վիճակը Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում:

Տեղական ինքնակառավարման մասին ՏԻՄ գործառույթների կազմում կարևոր դեր է նշանակություն ունի համայնքի ճանապարհային ենթակառուցվածքի պահպանությունը, բարեկարգումը, վերանորոգումը և զարգացումը: Համայնքների բյուջեների ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև 2010թ այս ոլորտում չնչին գումարներ են հատկացվել: Այսպես, քաղաքային համայնքների այս ոլորտում ծախսեր չի կատարվել, գյուղական համայնքներում ծախսեր չեն կատարվել Շիրակի և Լոռու մարզերում:

Կարևորելով գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիրը՝ «Շուկայական հնարավորություն ֆերմերներին» ծրագրով 2010թ. գյուղական տարածքներում բարելավվել է գյուղատնտեսական մթերքների իրացման գործունեության արդյունավետությունը և փոքր ու միջին ձեռնարկությանը խթանող արտադրական և սպասարկմանը կարևորված ենթակառուցվածքները:

Այս նպատակով հանրապետության ծրագրային տարածքի 25 համայնքներում սկսվել են իրականացվել ենթակառուցվածքների վերականգման նոր ծրագրեր 891.6 մլն դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում 3 համայնքներում իրականացվել են ոռոգման և խմելու ջրի ցանցերի կապիտալ նորոգումներ, խորքային հողերի հորատում, գետերի հունի և դրենաժային համակարգի մաքրում և վերականգնում, 9 համայնքներում գազաֆիկացման աշխատանքներ, 1 համայնքում ավտոճանապարհների վերանորոգում և ասֆալտապատում: Շարունակվում է 31 համայնքներում տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգման աշխատանքներ, 15 համայնքներում՝ ոռոգման և խմելու ջրի ջրամատակարարման ցանցերի կապիտալ նորոգումներ և վերականգնում, իսկ 16 համայնքում՝ գազաֆիկացում:

Գյուղական տարածքներում ներդրումների հիմնադրամի «ՖԲԵԴԱ» միջոցով հաստատվել է 280.0 մլն դրամի բաժնետիրական ներդրում թռչնաբուծության և պահածոների արտադրության ոլորտում:

«Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսություն» ծրագրի կողմից համայնքներին տրամադրվող դրամաշնորհների միջոցով կատարվել են ՀՀ Լոռու մարզի Այրում համայնքի գազաֆիկացման, Տավուշի մարզի Թովուզ համայնքի խմելու ջրի բարելավման, Գեղարքունիքի մարզի Լուսակունք համայնքի ոռոգման ջրագծի կառուցման և Ակունք համայնքի խմելու ջրի բարելավման աշխատանքները:

«Թռչնագործի հակազդման ծրագրով» ավարտվել է Մեղրիի սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական և բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետի կառուցման և Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոնի շենքի կառուցման աշխատանքները:

ՀՀ 2011թ. տարվա վերջին ներկայացված «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն» վարկային ծրագրի «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում նորարարական առաջարկությունների փորձարկման նպատակով իրականացվելու է «Տեխնոլոգիաների գնահատման» ծրագրեր 21572.0 դրամի, որից 16178.4 հազար դրամ հատկացվելու է ծրագրի վարկային միջոցներից, իսկ 5394.2 հազ. դրամ՝ մասնակից ֆերմերների կողմից:

Ինչ խոսք, համայնքներում իրականացվող նմանատիպ ծրագրերը նպաստավոր պայմաններ են ստեղծում գյուղատնտեսական տնտեսությունների համատեղ գործունեության կազմակերպման ձևերի ստեղծմանը և ամրապնդմանը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում գյուղատնտեսական համայնքների զարգացման հեռանկարային ուղղվածությունը կապված է պետական ֆինանսական աջակցության և այդ ուղղությամբ նպատակային պետական քաղաքականության իրականացման հետ, ոլորտում առկա խնդիրներին լուծում տալու համար:

**ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՆՏԵԳՐԱՅԻՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԶԱՐՅԵՐ**

Ագրարային ոլորտում, շուկայական հարաբերությունների պայմաններում, ինտեգրացիոն հարաբերությունները ստեղծում և զարգացնում են արտադրության նոր ձևեր, որը նշանակում է, տեխնոլոգիական գործընթացի ավարտ, այսինքն՝ արտադրություն, վերամշակում և պատրաստի արտադրանքի իրացում:

Գործնականում, զարգացած երկրներում, ինտեգրացիոն հարաբերություններ նշանակում է արդյունաբերական ձեռնարկություններում գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում, գյուղատնտեսության մեջ արտադրական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում և արտադրության բարձր շահութաբերության ապահովում: Միաժամանակ, ինտեգրացիոն հարաբերությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում գյուղտեխնիկայի կատարելագործման և գիտատեխնիկական արագընթաց գործընթացի նոր նվաճումների օգտագործման համար:

Գյուղատնտեսության ներքին արտադրանքի ձևավորման մեջ կարևոր դեր են խաղում բազմաթիվ տնտեսական կառուցվածքներ և ոլորտներ: Արդյունքում ներքին արդյունքի ձևավորման այդ կապերը իրացվում են շուկայում:

Գյուղատնտեսության մեջ արտադրվող արտադրանքի ավելի քան 75%-ը ենթարկվում է վերամշակման՝ հասնելով վերջնական արտադրողին: Փաստորեն կորչում է գյուղատնտեսական հումք արտադրողների և սպառողների միջև եղած կապը, իսկ գնորդների և վաճառողների կառուցվածքները միջնորդի դեր են կատարում արտադրողների և սպառողների միջև:

Անկախ սեփականության ձևից, խաթարվում է գյուղատնտեսական մթերք արտադրողների տնտեսական հետաքրքրությունը, և վնասվում է նրանց ֆինանսատնտեսական գործունեությունը: Անցնելով շուկայական տնտեսական հարաբերությունների, գյուղատնտեսական ոլորտի բարենպաստ գործունեության համար անհրաժեշտ է ստեղծել արդյունավետ տնտեսական հարաբերություններ վերամշակող արդյունաբերության, տեխնիկայի ապահովման, ինչպես նաև այն տնտեսությունների հետ, որոնք ապահովում են արտադրանքի պահպանման և իրացման հարցերը: Ներկայումս, գյուղատնտեսական մթերքների իրացման հարցերը մասնակիորեն են լուծվում: Խնդիրը կայանում է նրանում, որ գյուղատնտեսական արտադրանքի առանձնահատուկ կողմերից մեկն այն է, որ շուտ փչացող է, այսինքն՝ իրացման գործընթացում ժամանակի գործոնն ունի որոշիչ նշանակություն, հետևաբար, անհրաժեշտություն է զգացվում փնտրել իրացման այլ ուղիներ, հանձնիս՝ թարմ վիճակում իրացմանը:

Գյուղատնտեսության ոլորտում ինտեգրացիոն կապերը նպատակահարմար է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- ձևավորել անմիջական հարաբերություններ գյուղատնտեսական մթերք արտադրողների և շուկայում նյութատեխնիկական ռեսուրսներով զբաղվողների միջև,
- ստեղծել իրավահավասար տնտեսական հարաբերություններ գյուղատնտեսական մթերք արտադրողների և վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների միջև,
- ձևավորել սերտ կապ գյուղատնտեսական մթերք արտադրողների և արտադրատեխնիկական ծառայության ոլորտի միջև,
- ձևավորել սերտ կապ գյուղատնտեսական մթերք արտադրողների և շուկայում ագրարային ենթակառուցների (ստեղծելով քաղաքներում և մարզերում ֆիրմային խանութներ), ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ առևտրով զբաղվողների միջև,
- ձևավորել փոխադարձ կապ քաղաքներում և մարզերում ֆիրմային խանութների միջոցով, արտադրողների և վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների միջև,

- ձևավորել շուկայական հարաբերությունների պահանջներին համապատասխան մասնագիտացում,
- ձեռնարկել ագրարային ոլորտում խթանման սկզբունքի հիման վրա մոնոպոլիայի վերացում, միջոցառումներ կապերի վերականգնում:

Ինտեգրացիոն հարաբերությունների մեջ ընդգրկված բոլոր կողմերի համար, անկախ սեփականության ձևից, շատ կարևոր է իրավահավասար պայմանները, այսինքն`

- ժամանակին պարտականությունների կատարում,
- միջոցառումներ կապերի զարգացում, նյութական խրախուսման ապահովում,
- արտադրության արդյունավետության բարձրացում և արտադրաֆինանսական գործունեության շահութաբերության ապահովում:

Ինտեգրացիոն հարաբերությունների ձևավորման համար, ամենակարևորը, անհրաժեշտ է ներքին շուկայում տեղական արտադրանքի ծավալի ավելացում և միավոր արտադրանքի ծախսերի մակարդակի իջեցում:

Ինտեգրացիոն հարաբերությունները ավելի կարևորվում են գյուղաբնակների սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման համար: Այն բարենպաստ պայմաններ է ստեղծում գյուղատնտեսական արտադրանքի լայն տեսականու արտադրության բարձրացման, աշխատուժի, հիմնական միջոցների և հողի ռացիոնալ օգտագործման, շահույթի ապահովման և սոցիալական խնդիրների լուծման համար:

Ինտեգրացիոն ձեռնարկություններում շահութաբերության կտրուկ աճը հնարավորություն է ստեղծում վերարտադրության զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և կենցաղային ծառայությունների ապահովման համար:

Ոլորտի մասնագիտացման և աշխատանքի հասարակական բաժանման խորացման հետ, բարենպաստ պայմաններ են ապահովում արտադրողական ուժերի որակական և քանակական չափանիշների բարելավումը, որը շուկայական տնտեսության անցման պայմաններում տնտեսության օրինաչափ զարգացման արդյունքն է:

Աղյուսակ 1

Գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող հիմնական արտադրատեսակների արտադրության ծավալները

Արտադրատեսակներ	Չափի միավոր	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Պանիր	տոննա	16900	17200	17459.3	18000
Պահածոներ ընդամենը	տոննա	12411	12909	8436	11050
<i>այդ թվում` միս</i>	տոննա	752	784	718.9	800
ձկան	տոննա	180	117	30	150
բանջարեղենի	տոննա	2569	3122	2832.6	3100
տոմատի	տոննա	6187	4169	3489	4000
մրգի	տոննա	2723	4717	1364.7	3000
Բնական հյութեր ընդամենը	հազ. լիտր	5722	6648	7474.8	7500
Օղի և օղու լիկյորի արտադրանք	հազ. լիտր	12735	12155	13146	13150
Կոնյակ	հազ. լիտր	14131	16047	9869	14000
Գինի	հազ. լիտր	3672	3342	4372.1	8300
Շամպայն գինի	հազ. լիտր	579	464	456.4	450
Գարեջուր	հազ. լիտր	11631	10527	10825.3	10500
Շաքարավազ	տոննա	3293.7	3826.5	870	10000

Աղբյուր` ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, 2011թ.:

Տնտեսական շուկայական համակարգի առանձնահատկություններից է ազատ մրցակցային միջավայրի ապահովումը և արտադրատնտեսական գործունեության արդյունավետ ավարտը, որը շուկայական տնտեսությունում, որպես ամենակարևոր էլեմենտ, գնի հետ զուգահեռ, կատարում է անհրաժեշտ կարգավորիչ դեր: Ազատ շուկայական հարաբերություններում, մրցակցության գոյությունը, բազմաթիվ նույնատիպ արտադրանք արտադրողների գործառնությունից կախված, սահմանափակում է գնի մակարդակի վրա ազդելու հնարավորությունները: Ինտեգրացիոն հարաբերությունների կարգավորման համար գինը

տնտեսական մեխանիզմի դեր է կատարում, հատկապես գյուղատնտեսական մթերք արտադրողների և սպառողների, վերամշակող ձեռնարկությունների միջև: Եթե ինտեգրացիոն հարաբերությունները չեն ընթանում փոխշահավետ հիմքերի վրա, պատճառը՝ գնային համակարգի ոչ ճիշտ ընտրությունն է: Գյուղատնտեսության մեջ գինը փոխվում է ըստ շուկայական կառուցվածքի, կամ էլ ըստ բնության պայմանների, միաժամանակ ապահովելով գյուղաբնակների սոցիալ-տնտեսական զարգացումը և զբաղվածությունը:

Ազատ մրցակցային պայմաններում, արտադրողների և վերամշակող ձեռնարկությունների միջև, գործի դնելով ագրարային ռեֆորմներ, կսկսեն գործել բազմաթիվ կառույցներ, որոնք էլ կձևավորեն ինտեգրացիոն հարաբերություններ: Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալների (տե՛ս աղյուսակ 1): Վերջին տարիներին գյուղատնտեսական մթերքների վերամշակման համակարգում նկատելի է որոշ առաջընթաց՝ կապված գործող և նոր ստեղծվող գործարաններում արդիական տեխնոլոգիաների կիրառման և արտադրանքի մրցունակության բարձրացման, արդյունավետ մեներջմանի ու մարքեթինգային ծառայությունների աջակցության և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացման հետ: Անհրաժեշտ է ձևավորել ինտեգրացիոն հարաբերություններ ագրոարդյունաբերական կոմպլեքսի մեջ մտած ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև՝ շուկայական հարաբերությունների պահանջներին համապատասխան: Արտադրատնտեսական արդյունքի հասնելու համար նպատակահարմար է նշվածը կազմակերպել այնպես, որպեսզի պաշտպանվեն յուրաքանչյուր կազմակերպության շահերը միաժամանակ, և մեկը մյուսի համար լինի հետաքրքիր: Միաժամանակ, հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունները նպաստում են փոխշահավետ համագործակցության զարգացմանը: Այլ կերպ հնարավոր չէ լուծել բնակչությանը պահանջվող կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրը:

Ինչ խոսք, մթերող, վերամշակող և առևտրի կազմակերպությունների գործունեությունը այնպես սերտ են կապված միմյանց հետ, որ եթե մի ոլորտը վնասվի, այն կտարածվի բոլորի վրա: Այսպես՝ օրինակ, եթե մթերող կազմակերպությունը ի վիճակի չէ գնելու տրանսպորտային միջոց շուտ փչացող արտադրանքի տեղափոխման համար, ապա անհնար է վերամշակման համար որակյալ արտադրանքի ապահովումը, արդյունքում՝ առևտրային կազմակերպությունը չի կարող ստանալ բարձր որակի արտադրանք, ուրեմն կտուժեն բոլորը:

Ագրոարդյունաբերական ինտեգրացիան բարդ գործընթաց է, այն ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը և վերամշակումը, ինչպես նաև այդ արտադրանքի առաքումը սպառողին: Ագրոարդյունաբերական ինտեգրացիոն հարաբերություններն ուժեղացնում են վերամշակող արդյունաբերության ազդեցությունը գյուղատնտեսական արտադրանքի վրա, որի հետևանքով ինտեգրացված ձեռնարկություններում և տնտեսություններում պակասում են արտադրական ծախսերը, բարձրանում է աշխատունակությունը, ամրապնդվում է տնտեսությունը, և կայուն միջավայր է ստեղծվում սոցիալական միջոցառումներ իրագործելու համար: Այն անմիջականորեն ներգործում է արտադրության արդյունավետության բարձրացման վրա, բարենպաստ պայմաններ են ստեղծվում արտադրության մասնագիտացման, հողի նպատակային օգտագործման, ցանքային տարածությունների կառուցվածքի կատարելագործման, կորուստների և թափոնի կրճատման համար:

Անհրաժեշտ է նշել, որ քիչ չեն կորուստները մինչև սպառողը գյուղատնտեսական տնտեսությունների արտադրանքի առաքման ժամանակ: Տնտեսական արդյունավետության բարձրացման և պարենային ֆոնդի ավելացման վստահելի աղբյուր են հանդիսանում կորուստների կրճատումը, որոնք տեղի են ունենում արտադրանքի վերամշակման, փաթեթավորման, պահեստավորման և տեղափոխման ժամանակ:

Այս հանգամանքում, արտադրող և վերամշակող տնտեսության գործունեության մեջ կարևոր գործոն կդառնա մասնագիտացումը: Այս իսկ պատճառով, շուկայական տնտեսական պայմաններում տնտեսությունների միջև շատ է կարևորվում ինտեգրացիոն հարաբերությունների զարգացումը: Միևնույն ժամանակ ավելի արդյունավետ կլինի տնտեսական տարբեր ոլորտների միջև փոխադարձ կապի ձևավորումը: Ինտեգրացիոն հարաբերությունների այս տեսակը կարևոր է երկրի ռազմավարական շահերի իրացման համար, որն էլ կապահովի կայուն զարգացում՝ ագրարային ռեֆորմի հաջորդ շրջանի համար: Գործնականում, երկրի

ագրարային հատվածի զարգացումը չի սահմանափակվում արտադրողների և վերամշակող ձեռնարկությունների միջև ինտեգրացիոն հարաբերություններով: Ագրարային ոլորտի արտադրության ապահովումը լիզինգի միջոցով կայուն հիմք է հանդիսանում գյուղատնտեսության զարգացման համար: Ագրոլիզինգի գործունեությունը ընդլայնելով մարզերի և պետության միջև, երաշխիք է դառնում ինտեգրացիոն հարաբերությունների զարգացման:

Շուկայական հարաբերությունների անցման պայմաններում, ագրարային ոլորտում ազատ ձեռներեցության և մրցակցության զարգացումը ինտեգրացիոն հարաբերություններում առաջացնում է քանակական և որակական փոփոխություններ, մասնավորապես.

- գյուղատնտեսական արտադրանքի որոշ մասը վերամշակման չի ենթարկվում՝ անցնելով սպառման ոլորտ:
- ինչքան շատ գյուղատնտեսական արտադրանք ենթարկվի վերամշակման, այնքան կբարձրանա արտադրանքի արժեքը, որն էլ կօգնի բնակչության սննդի ապահովմանը և վերամշակող արդյունաբերության մեջ նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Ինչպես հայտնի է, արդյունաբերության շատ ճյուղերում է օգտագործվում գյուղատնտեսական արտադրանք, որն էլ նպաստում է ինտեգրացիոն հարաբերությունների ընդլայնմանը: Սակայն սննդի և թեթև արդյունաբերությունը տնտեսական և արտադրական հարցերում ունենալով բարենպաստ պայմաններ, դառնում է առաջնային գյուղատնտեսական մթերք արտադրողների նկատմամբ: Դա խախտում է երկու կողմերի միջև հավասարությունը, վերամշակող արդյունաբերությունը ստանում է ավելի շատ շահույթ՝ գյուղատնտեսական մթերք արտադրողների վնասի հաշվին:

Ինտեգրացիոն հարաբերություններում վերամշակող ձեռնարկությունների և գյուղատնտեսական մթերք արտադրողների միջև, բացի աստիճանաբար ձևավորվող պայմանագրային հարաբերություններից, որոնք հուսալի պայմաններ են ստեղծում որոշ գյուղմթերքների ավելացման համար, անհրաժեշտ են նոր օպտիմալ ձևեր և պետության անմիջական միջամտության ուժեղացում:

Արտադրանքը, որը ստացվում է փոքր և միջին վերամշակող ձեռնարկություններում, չի կարող մրցակցել արտերկրներից բերված նույնատիպ արտադրանքի հետ, քանի որ այն պաշտպանված չէ ներքին շուկայում, և ինվեստիցիաները նպատակային չեն օգտագործվում ճյուղի զարգացման համար:

Ագրոարդյունաբերական ձեռնարկության արտադրանքը, չունենալով եվրոպական ստանդարտին համապատասխան փաթեթավորում և գովազդ, ընդունակ չէ մրցակցել ոչ միայն արտասահմանյան շուկայում, այլ նաև ներքին շուկայում: Ագրարային ոլորտի, ինտեգրացիոն հարաբերությունների համար անհրաժեշտ է ձևավորել մրցունակ արտադրանք՝ ըստ միջազգային շուկայի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջի:

ՄԱԳՐԱ ՀՈՎՅԱՆՆԵՍՅԱՆ

*Նայասարանի պետական ագրարային
համալսարանի ասպիրանտ*

ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԹԻ ՓՈՇԻԱՅՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՅՈՎ

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կաթնամթերքի արտադրության արդյունավետության բարձրացման հիմնական ուղղություններից է դրանց արտադրության տեխնոլոգիաների կատարելագործումը: Այս ուղղությամբ կարևորել ենք կաթի վերամշակման ոչ ավանդական մեթոդների կիրառումը:

Կաթնամթերքի արտադրության արդյունավետության բարձրացման գործում հիմնարար տեղ կարելի է հատկացնել, այսպես կոչված, «առողջարարական ապրանքներով» շուկայի

հագեցմանը: Հաշվի առնելով կաթնամթերքի արտադրության մեջ կաթի փոշու օգտագործման ծավալները՝ փորձել ենք գերծ մնալ կաթից կաթի փոշու ստացման ավանդական ջերմային մշակման եղանակից և առաջարկել ստանալ կաթի փոշի և չորացված մթերքներ այլ տեխնոլոգիայով՝ լիոֆիլիզացման ճանապարհով:

Արագ փչացող մթերքների պահածոյացման առաջատար տեխնոլոգիաներից է սուրլիմացիոն չորացման մեթոդի կիրառումը, որը իրականացվում է վակուում միջավայրում: Վակուում-սուրլիմացիոն չորացումը միավորում է երկու տեխնոլոգիական առավելություններ՝ սառեցում և չորացում (խոնավության հեռացում):

Լիոֆիլիզացիան նյութերի չորացման մեթոդ է, որի ժամանակ չորացվող նյութը սառեցվում է, որից հետո էլ տեղափոխվում վակուում կամերաներ, որտեղ էլ և կատարվում է լուծիչի պինդ նյութից գոլորշու անցումը: Լիոֆիլիզացիան թարգմանաբար նշանակում է Lyo-լուծվել, philia-հակում:

Վակուում-սուրլիմացիոն ջրազրկումը չորացման հատուկ եղանակ է, որի ընթացքում ջրազրկման ենթարկվող նյութում պարունակվող ջուրը (կամ խոնավությունը) գտնվում է սառած վիճակում (կարծր փուլում) և նյութից հեռացվում է անմիջականորեն գոլորշու տեսքով՝ շրջանցելով կարծր նյութ-հեղուկ-գոլորշի անցումը: Կարծր նյութ-գոլորշի անցումը իրականացնելու համար օգտագործվում է սուրլիմացիա կոչվող ֆիզիկական երևույթը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ որոշակի պայմաններում կարծր նյութի մակերևույթից տեղի ունի անմիջական, առանց հեղուկ փուլի անցման, գոլորշիացում: Այս նյութերի գոլորշիացումը տեղի է ունենում սովորական մթնոլորտային պայմաններում, սակայն սովորական պայմաններում սառույցից գոլորշիացումը աննշան է: Սառույցից գոլորշիացման ինտենսիվությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է նվազեցնել նրա մակերեսի վրա ճնշումը՝ ստեղծել վակուում:

Այսպիսով, վակուում-սուրլիմացիոն ջրազրկման գործընթացը իրականացնելու համար ընդհանուր առմամբ անհրաժեշտ է սառեցնել ջրազրկման ենթակա զանգվածը, մինչև որ նրանում պարունակվող ջուրն ամբողջությամբ վերափոխվի սառույցի, և տեղափոխել վակուումային խուց, որտեղ ապահովված է անհրաժեշտ խորության նոսրացում-վակուում: Նշենք նաև, որ նյութում պարունակվող ջուրը իր մեջ պարունակում է զանազան հանքային աղեր, լուծված օրգանական նյութեր, և այն սառույցի վերածելու համար անհրաժեշտ են ցածր ջերմաստիճաններ (-5°C -ից -50°C):

Տեխնոլոգիական սարքվածքների համալիրը, որը նախատեսված է սառեցված նյութը վակուում միջավայրում գոլորշացման և գոլորշու տեսքով հեռացման համար, կոչվում է վակուում-սուրլիմացիոն կայանք (լիոֆիլիզատոր): Սովորաբար այն իր մեջ ներառում է՝

- վակուումային խուցը,
- սառնարանային համակարգը,
- վակուումային համակարգը,
- կառավարող-չափիչ համակարգը:

Վակուում-սուրլիմացիոն ջրազրկման տեխնոլոգիական պրոցեսի հիմնական փուլերը հետևյալներն են՝

- Ջրազրկման ենթակա նյութի մշակումը: Սովորաբար ջրազրկման ենթակա նյութերը հանդես են գալիս որպես տարբեր խտության հեղուկներ կամ մածիկներ: Այս դեպքում կայանք բեռնվող նյութի մշակումը սովորաբար չի պահանջվում, և դրանք բեռնվում են այն տեսքով, ինչ տեսքով, որ կան: Հազվագյուտ դեպքերում դրանք կարող են սառեցվել, վերածվել սառեցված նյութի մանր հատիկների և այդ տեսքով բեռնվել կայանքում: Մշակման խնդիրը սովորաբար ծագում է բուսական ծագման կենսազանգվածների ջրազրկման պրոցեսում, երբ կոնկրետ հումքից և նրա հատկություններից ելնելով հարկ է լինում նախապատրաստել այն մածիկի, մանր կտրտված կտորների կամ քերուկի տեսքով:
- Նախնական սառեցում: Նախնական սառեցման փուլում բեռնվող նյութի ջերմաստիճանը իջեցվում է մինչև այնպիսի ջերմաստիճանի, որի դեպքում նրանում պարունակվող ջրային լուծույթը իր բոլոր բաղադրիչներով հանդերձ հայտնվի սառույցի վիճակում:

- Վակուումային համակարգի գործարկում: Այս փուլում, ըստ էության, իրականացվում է ջրազրկման պրոցեսի կառավարում՝ կառավարող-չափիչ համակարգի կողմից: Այս փուլում գործընթացը տարվում է նախապես փորձարկված և հաստատված ռեժիմներով, ավտոմատ կամ ծրագրավորվող սարքերի միջոցով:
- Ջրազրկման պրոցեսի ավարտ, բեռնաթափում:
- Չոր կենսազանգվածի մշակում, նրա որակական, կենսաբանական ցուցանիշների վերահսկում:

Վակուում-սուրլիմացիոն ջրազրկումը ջրազրկման համեմատաբար ավելի ծախսատար եղանակ է, քան հայտնի մնացած եղանակները: Սակայն վակուում-սուրլիմացիոն ջրազրկման տեխնոլոգիայի կիրառումը չի խախտում հումքի կառուցվածքը, նյութերում արագ կրճատվում կամ դանդաղում են բիոքիմիական ռեակցիաները, որի հետևանքով դրանք դառնում են ավելի կայուն արտաքին միջավայրի նկատմամբ և պահպանում են օգտակար նյութերի, վիտամինների, ֆերմենտների և այլ կենսաբանական ակտիվ տարրերի շուրջ 95%-ը: Այն սննդամթերքները, որոնք ջրազրկվել են լիոֆիլիզացիոն մեթոդով, ունեն լավ լուծելիություն, և նրանցում ջրի կամ այլ լուծիչի ավելացումը հեշտությամբ առաջ կբերի իր սկզբնական վիճակի:


Այսպես, վակուում-սուրլիմացիոն ջրազրկման տեխնոլոգիան ունի մի շարք առավելություններ, որոնք հետևյալն են.

- Բարձր ջերմաստիճանների բացակայություն, դիսպերսիոն ֆազայի պահպանում: Լիոֆիլիզացման մեթոդը հնարավորություն է տալիս ստանալ չոր մանրաթելեր, պատրաստուկներ՝ առանց որևէ կենսաբանական հավելումների և կառուցվածքի փոփոխության:
- Թույլ է տալիս գործընթացի ժամանակ խուսափել ջրազրկվող նյութի բաղադրիչների քիմիական, կենսաբանական փոփոխություններից:
- Լիոֆիլիզացման ժամանակ սպիտակուցների մեծ մասը չեն ենթարկվում բնափոխման և կարող են պահպանվել երկար ժամանակ:
- Նյութի օգտակար, հեշտ գոլորշացող բաղադրիչների կորուստը հասցվում է նվազագույնի:
- Պահպանվում է ջրազրկվող նյութի բաղադրիչների դիսպերսությունը և նյութի սկզբնական մեխանիկական կառուցվածքը:
- Նվազագույնի է հասցվում կամ ընդհանրապես բացառվում է նյութի օքսիդացումը:
- Ապահովվում է նյութի ստերիլությունը ջրազրկման պրոցեսի ընթացքում:
- Լիոֆիլիզացված մթերքները կարող են պահպանվել առանց սառնարանային ջերմաստիճանների, ինչն էլ հանգեցնում է պահպանման և տեղափոխման ծախսերի կրճատման:
- Լիոֆիլիզացիան ակնհայտ կերպով իջեցնում է հումքի քաշը և հեշտացնում փոխադրումները: Ջրազրկումից հետո մոտ 10 անգամ թեթևանում է հումքի քաշը:
- Ջրազրկված մթերքների ծակոտկենության շնորհիվ հեշտությամբ կարելի է վերականգնել դրանց մոլեկուլյար կառուցվածքը, որի ժամանակ պահպանվում է արտադրանքի սկզբնական հատկությունները:
- Վակուում-սուրլիմացիոն մեթոդով ջրազրկված հումքը ենթակա է մանկական և դիետիկ կերերի պատրաստման ժամանակ օգտագործման:

Հաշվի առնելով վերը նշված բազմաթիվ առավելությունները առաջարկվում է լիոֆիլիզացիայի ենթարկել կաթը, կաթնամթերքի արտադրությանն անհրաժեշտ բոլոր մերանները, ինչպես նաև բոլոր մրգերն ու հատապտուղները, որոնք ենթակա են օգտագործման ցանկացած կաթնամթերքի արտադրության համար: Նշված մեթոդով հումքի վերամշակման համար կարևոր է չոր նյութերի ելքի ցուցանիշի իմացությունը:

Վակուում – սուրլիմացիոն մեթոդով ջրազրկման դեպքում տարբեր հումքատեսակների ելքը ներկայացված է գծապատկերում: Նշված հումքատեսակները չորացված ձևով կարող են օգտագործվել տարբեր կաթնամթերքների ստացման համար:

Լիոֆիլիզացիայի ենթարկվող մթերքներից չոր նյութերի ելքը



Հաշվի առնելով տարբեր հումքատեսակներից չոր նյութերի ելքը՝ նպատակահարմար ենք գտել ներկայացնել նրանցից մի քանիսի ինքնարժեքի հաշվարկը, ընդ որում անհրաժեշտ է նշել, որ մրգերի, մերանների չորացում հնարավոր է միայն վակուում-սուրլիմացիոն չորանոցներում, որն ինչպես նշել ենք պահպանում է բոլոր վիտամինները:

Հաշվարկների արդյունքները տարբեր հումքատեսակների համար ներկայացված է ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 1

Վակուում – սուրլիմացիոն մեթոդով 1 կգ խնձորի փոշու ստացման ինքնարժեքի հաշվարկը

	Ծախսվող ռեսուրսներ	Չափի միավոր	Ծախսի նորման	Միավորի գինը, դրամ	Ծախսերը, դրամ
1	Խնձոր	կգ	7,7	150	1155
2	Էլ. էներգիա	Կվտ	43	25	1075
3	Աշխատանքային ծախսումներ	մարդ ժամ	8,0	562,5 ¹	4500
4	Ջուր և ախտահանող նյութեր	դրամ	-	-	500
5	Ամրոտիզացիոն հատկացումներ	դրամ	-	-	150
6	Այլ ծախսեր	դրամ	-	-	769,5
7	Ընդամենը	դրամ	-	-	8149,5

Աղյուսակ 2

Վակուում – սուրլիմացիոն մեթոդով 1 կգ մրրու փոշու ստացման ինքնարժեքի հաշվարկը

	Ծախսվող ռեսուրսներ	Չափի միավոր	Ծախսի նորման	Միավորի գինը, դրամ	Ծախսերը, դրամ
1	Մրրի	կգ	16,6	500	8300
2	Էլ. էներգիա	Կվտ	43	25	1075
3	Աշխատանքային ծախսումներ	մարդ ժամ	8,0	562,5	4500
4	Ջուր և ախտահանող նյութեր	դրամ	-	-	500
5	Ամրոտիզացիոն հատկացումներ	դրամ	-	-	150
6	Այլ ծախսեր	դրամ	-	-	769,5
7	Ընդամենը	դրամ	-	-	15294,5

¹ Էլ. էներգիայի սակագինը վերցված է գիշերային և ցերեկային սակագնի միջինը:

Վակուում – սուրլիմացիոն մեթոդով 1կգ բանանի փոշու ստացման ինքնարժեքի հաշվարկը

	Ծախսվող ռեսուրսներ	Չափի միավոր	Ծախսի նորման	Միավորի գինը, դրամ	Ծախսերը, դրամ
1	Բանան	կգ	6,6	700	4620
2	Էլ. էներգիա	Կվտ	43	25	1075
3	Աշխատանքային ծախսումներ	մարդ ժամ	8,0	562,5	4500
4	Ջուր և ախտահանող նյութեր	դրամ	-	-	500
5	Ամրոտիզացիոն հատկացումներ	դրամ	-	-	150
6	Այլ ծախսեր	դրամ	-	-	769,5
7	Ընդամենը	դրամ	-	-	11614,5

Նման հաշվարկ կարելի է իրականացնել նաև մնացած բոլոր մրգերի համար՝ հաշվի առնելով դրանցից չոր նյութերի ելքը:

Առաջարկում ենք վակուում-սուրլիմացիոն մեթոդի կիրառմամբ ստանալ չոր մերան և չոր մրգային փոշի՝ վիտամինների, օգտակար նյութերի, ֆերմենտների, կենսաբանական ակտիվ տարրերի պահպանմամբ, և այն օգտագործել կաթնամթերքների, մասնավորապես թարմ յոգուրտ ստանալու համար:

Առաջարկվող տեխնոլոգիայի կիրառման տնտեսական արդյունավետության հաշվարկները իրականացրել ենք մեկ լիտր ծավալով յոգուրտի ստացման համար: Հաշվարկի արդյունքները ներկայացված են աղյուսակում:

1լ թարմ յոգուրտի ստացման ինքնարժեքի հաշվարկը վակուում-սուրլիմացիոն չորացման մեթոդի կիրառմամբ

	Ծախսվող ռեսուրսներ	Չափի միավոր	Ծախսի նորման	Միավորի գինը, դրամ	Ծախսերը, դրամ
1	Կաթ	լ	1	170	170
2	Չոր (յոգուրտի) փոշի	միավոր	1	140	140
3	Չոր մրգային փոշի	գր	5	15	75
4	Այլ ծախսեր	դրամ	-	-	30
5	Ընդամենը	դրամ	-	-	415

Յոգուրտի պատրաստման տեխնոլոգիան բավականին պարզ է: Այն հետևյալն է. կաթը եռացվում է մի քանի րոպե և թողնվում է սառչի մինչև 39-41°C: Նշված ջերմաստիճանը չպետք է գերազանցել՝ մանրէների ոչնչացումը կանխելու նպատակով: Այնուհետև վակուում – սուրլիմացիոն մեթոդով ստացված չոր յոգուրտի փոշին լուծվում է 50 մլ նույն կաթի մեջ, ստացված խառնուրդն ավելացվում է եռացված և մինչև 39-41°C սառեցված կաթին և լավ խառնվում: Արդեն իսկ խառնված մասսան տարրայավորվում և պահվում է թերմոստատում՝ կայուն ջերմաստիճանի պահպանման համար: Թերմոստատում մասսան թողնվում է 10-12 ժամ, որից հետո տեղափոխվում է սառնարանային տեղակայանք: Տվյալ դեպքում 200 մլ յոգուրտի արտադրության ծախսերը կազմում են 83 դրամ:

Ստացվածը ավանդական մեթոդով ստացված յոգուրտի հետ համեմատելով ստանում ենք հետևյալը. 200մլ պատրաստի յոգուրտն արժե 170 դրամ (տեղական արտադրության): Հինգ նման ծավալով յոգուրտը կարժենա 850 դրամ: Տվյալ դեպքում արտադրության ծախսերը կազմում են 680 դրամ: Այսինքն, նոր տեխնոլոգիայի ներդրման արդյունքում ոչ միայն հնարավոր է ստանալ բարձրորակ արտադրանք, այլև ստացվում է շահույթ 265 դրամի չափով:

Հաշվի առնելով, որ ՀՀ-ն շուկան հագեցած է անհայտ ծագում ունեցող մանկական կերերով, որոնք պարունակում են բազմաթիվ միկրոօրգանիզմներ և կարող են վնասակար

լինել առողջության համար, հետևաբար առաջարկում ենք արտադրել չոր մանկական կաթի փոշի վակուում – սուբլիմացիոն մեթոդով:

Առաջարկի արդյունավետությունը հիմնավորելու համար անհրաժեշտ է նախ և առաջ կատարել համեմատական հաշվարկ ավանդական մեթոդով և վակուում – սուբլիմացիոն մեթոդով կաթի փոշու ստացման համար:

Համեմատենք կաթից կաթի փոշու ստացման ինքնարժեքի կալկուլյացիան ավանդական՝ ջերմային մշակմամբ և վակուում-սուբլիմացիոն չորացման միջոցով: Փոշու ստացման արդյունքում նրա մեջ պահպանվում է 4% խոնավություն: Կաթը պետք է նորմալացնել մինչև 3,2% և չորացնել:

Կաթի մեկ կիլոգրամի մթերման գինն ընդունենք 170 դրամ: Փոշու ստացման համար կիրառվում է «Փոշիացնող-չորացնող սարքավորումը», որի արտադրողականությունը 300 կգ/ժամ է: Սկզբում կաթն ընդունվում է և սառեցվում մինչև 4°C, որից հետո պաստերիզացնում են, ջերմաստիճանն իջեցնում են մինչև 70°C և ուղարկում վակուում-գոլորշիացնող տեղակայանք անոթ 2000 (մեկ ժամում գոլորշիանում է 2000կգ ջուր): Խտացնում են մինչև 48-50% չոր նյութեր: Որից հետո խիտ մասսան տեղափոխվում է ջերմային չորանոց: Կաթի որոշ օգտակար հատկություններ կորչում են և՛ պաստերիզացման, և՛ ջերմային պրոցեսի ընթացքում:

Աղյուսակ 5

Ավանդական տեխնոլոգիայով կաթից 1կգ կաթի փոշու ստացման ինքնարժեքի կալկուլյացիան

Ծախսվող ռեսուրսները	Չափի միավոր	Ծախսերը, դրամ
Հումք (կաթ)	դրամ	1870
Էներգետիկ ծախսեր	դրամ	65
Չուր	-//-	0,3
Լվացող, ախտահանող նյութեր	-//-	2
Աշխատավարձ	-//-	200
Ամորտիզացիոն հատկացումներ	-//-	50
Այլ ծախսեր	-//-	65
Ընդամենը	-//-	2252,3

Չնայած այն հանգամանքին, որ տվյալ դեպքում կաթից կաթի փոշու ստացումը բավականին էժան է, սակայն այն ունի մի շարք թերություններ, որոնք հիմնականում հետևյալն են:

- Բարձր ջերմաստիճանների առկայություն, որի դեպքում տեղի է ունենում հումքի կառուցվածքի փոփոխություն:
- Սպիտակուցների մեծ մասն ենթարկվում է բնափոխման:
- Տեղի է ունենում նյութի օքսիդացում
- Փոշիացնող նյութն օժտված չէ ծակոտկենությամբ, որի արդյունքում բավականին երկար ժամանակ է հարկավոր նյութի սկզբնական տեսքի վերականգնման համար, որը, սակայն, տեղի է ունենում ոչ լիարժեք կերպով:
- Ավանդական մեթոդով ստացված փոշին չի կարելի կիրառել մանկական, ինչպես նաև դիետիկ կերերի արտադրության համար:

Վակուում-սուբլիմացիոն չորացման մեթոդով կաթից կաթի փոշու ստացման ինքնարժեքի կալկուլյացիան ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ի տարբերություն ավանդական եղանակով կաթից կաթի փոշու ստացման, այս մեթոդն ավելի ծախսատար է, որակապես միանշանակ ավելի բարձր և օժտված է մի շարք առավելություններով: Նշված հումքից ստացվող կաթնամթերքներն իրենց որակական և համային հատկանիշներով գերազանցում են ավանդական մեթոդով ստացված կաթի փոշուց ստացված կաթնամթերքից: Վակուում-սուբլիմացիոն չորացման մեթոդով ստացված կաթնամթերքները իրենց բարձր գնի շնորհիվ փոխհատուցում են տվյալ տեխնոլոգիայի կիրառման ծախսերը, և արդյունքում վերջին մեթոդով ստացված կաթնամթերքների արտադրության արդյունավետությունը բարձր է ստացվում:

**Վակուում-սուրլիմացիոն չորացման մեթոդի կիրառմամբ կաթից
1 կգ կաթի փոշու ստացման ինքնարժեքի հաշվարկը**

Ծախսվող ռեսուրսներ	Չափի միավոր	Ծախսի նորման	Միավորի գինը, դրամ	Ծախսերը, դրամ
1	Հումք /կաթ/	կգ	11	1870
2	Էլ. էներգիա	կվտ	42,8	1070
3	աշխատանքային ծախսումներ	մարդ - ժամ	8,0	4500
4	Ջուր և ախտահանող նյութեր	դրամ	-	500
5	Ամորտիզացիոն ծախսեր	դրամ	-	150
6	Այլ ծախսեր	դրամ	-	500
7	Ընդամենը	դրամ	-	8590

Հաշվի առնելով այն, որ քանի որ կաթի մթերումը որոշակիորեն սեզոնային բնույթ ունի, ապա նշված մեթոդով կաթի փոշին առաջարկում ենք օգտագործել չոր յոգուրտի ստացման մեջ: Սակայն այս դեպքում կավելացվի ոչ թե կաթ, այլ ջուր: Հետևապես կարող ենք միանշանակ ասել, որ այն օգտակար է սպառողների առողջությանը և կիրառելի է դիետիկ, և, որն ամենակարևորն է, մանկական կերերի պատրաստման ժամանակ:

ՆԱՐԻՆԵ ՀՈՎՅԱՆՆԻՍԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՄԻ ՇԱՐՔ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ
ԴՐԱ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

Ինչպես ցույց է տալիս տնտեսության զարգացման համաշխարհային փորձը, ցանկացած երկրի համար փոքր և միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) համարվում է շուկայական տնտեսության առանցքային տարրերից մեկը և կարևոր դերակատարում ունի տնտեսության կայուն զարգացումն ապահովելու գործում:

Գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականում փոքր և միջին բիզնեսի ու ձեռնարկությունների վերաբերյալ տարբեր երկրներին բնորոշ են իրենց իսկ յուրահատուկ մեկնաբանումներն ու հասկացումը¹: Առավել մեծ հետաքրքրության է արժանի, այսպես կոչված, Բոուլտոնի հանձնաժողովի կողմից տրված «փոքր ձեռնարկատիրություն» եզրույթի սահմանումը, որը մատնանշում է փոքր ձեռնարկության երեք հիմնական հատկանիշներ.

- *վաճառքի փոքր շուկա*, որը թույլ չի տալիս ձեռնարկությանը զգալի ազդեցություն ունենալ իրացվող ապրանքի գնի և ծավալի վրա,
- *իրավական անկախություն*, այսինքն ձեռնարկությունը կառավարվում է կոնկրետ սեփականատիրոջ կամ գործընկեր-սեփականատերերի կողմից, ովքեր իրենք են վերահսկում սեփական բիզնեսը:
- *անձնավորված կառավարում*, որը ենթադրում է, որ սեփականատերը կամ սեփականատերերն իրենք են մասնակցում բիզնեսի կառավարման բոլոր հարցերում և բոլոր որոշումների կայացման գործընթացում²:

Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք³: Իսկ ձեռնարկատիրության բնութագրման համար կարող են հանդես

¹ Ибадова Л. Т. Финансирование и кредитование малого бизнеса в России: Правовые аспекты. – М.: Волтерс Клувер, 2006. – С. 1.
² Табатадзе Р. В. Организационно-экономический механизм воздействия на эффективность малого бизнеса (На примере предприятий легкой промышленности). Дис. ... канд. экон. наук. М., 2002. С. 13.
³ ՀՀ Սահմանադրություն, էջ 7: // http://www.g-a.am/pdf/_HH%20Sahmanadrutyun.pdf

գալ մեկ կամ մի քանի չափորոշիչներ: Օրինակ, որպես չափորոշիչ կարող է հանդես գալ ձեռնարկության մեջ զբաղվածների թիվը (ինչպես Մեծ Բրիտանիայում, Մեքսիկայում, Հունաստանում) կամ ընկերության ստացած եկամտի առավելագույն մեծությունը: Որոշ երկրներում փոքր և միջին ձեռնարկությունները հիմնվում են միաժամանակ երկու չափորոշիչների վրա՝ զբաղվածների թվի և ընկերության շրջանառության վրա (ինչպես Պորտուգալիայում): Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են գերփոքր, փոքր և միջին առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի՝ ելնելով աշխատողների միջին ցուցակային թվաքանակից (գերփոքրը՝ մինչև 10 մարդ, փոքրը՝ մինչև 50 մարդ, միջինը՝ մինչև 250 մարդ), ինչպես նաև նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթից կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքից (որը չի գերազանցում գերփոքրի համար՝ 100 մլն դրամը, փոքրի համար՝ 500 մլն դրամը, իսկ միջինի դեպքում՝ համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը)¹: Եվրամիությունում ազգային մակարդակով ՓՄՁ տարբերակման համար ծառայում է Եվրամիության հանձնաժողովի 2003/361/ԵՄ հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունը վերաբերում է փոքր և միջին բիզնեսի ոլորտին, եթե դրա չափորոշիչները չեն գերազանցում հաստատված առավելագույն զբաղվածների թվի շեմը կամ ընկերության տարեկան շրջանառությունը²: Արտասահմանյան փորձը հաստատում է, որ օրենսդրությունը կարող է չափարունակել ՓՄՁ տարբերակման հստակ թվով չափորոշիչներ, մասնավորապես ԱՄՆ-ում՝ փոքր բիզնեսի մասին օրենքում (առաջին անգամ ընդունված՝ 1953 թ. հուլիսի 30-ին) գրված չեն որոշ ցուցանիշների սահմանային նշանակությունները: Համաձայն տվյալ օրենքի՝ փոքր համարվում է ձեռնարկությունը, որը գերիշխող չէ իր գործունեության ոլորտում և հսկող կամ նշանակալի ազդեցություն չի գործում ճյուղի վրա³: Կանադայի վիճակագրական ազգային ծառայությունը ձեռնարկությունը փոքր և միջինին դասելու համար օգտագործում է ձեռնարկությունում աշխատողների թվի և տարեկան եկամտի չափորոշիչները, իսկ կանադական բանկերի միությունը՝ այն ձեռնարկությունները, որոնց վարկ տրամադրելու սահմանը չի գերազանցում 1 մլն դոլարը⁴: ԱՄՆ-ում փոքր ձեռնարկության մասին օրենքը ձեռնարկությունը փոքր բիզնես կատեգորիային դասելու համար նախատեսում է այնպիսի լրացուցիչ չափորոշիչների օգտագործում, ինչպիսիք են ֆիրմայի չափսերի ճյուղային ստանդարտները՝ արտահայտված կամ զբաղվածների թվի, կամ ձեռնարկության գումարային մուտքերի միջին տարեկան ծավալի տեսքով: Անդրադառնանք նաև «Ռուսաստանի Դաշնությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման մասին» պետական օրենքին (№ 209-Դ-Օ)⁵, ըստ որի ՓՄՁ սուբյեկտները բաժանվում են երեք կատեգորիաների՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ: Ձեռնարկությունները ՓՄՁ կատեգորիային դասելու ընդհանուր ընդունված մոտեցում չկա. տարբեր երկրներում գոյություն ունեն տարբեր չափորոշիչների վրա հիմնված բազմաթիվ ձևակերպումներ:

Վերոնշյալ սահմանումներից ելնելով, միակ ընդհանուր բնորոշում կարող ենք համարել այն, որ դրանք ընդգծում են ՓՄՁ անկախությունն ավելի մեծ ընկերությունների վերահսկումից, ինչը վերաբերում է սեփականության իրավունքին (այսինքն՝ ձեռնարկությունը կառավարվում է հենց սեփականատիրոջ կամ սեփականատերերի կողմից և ոչ թե ձևայնացված կառավարչական կառույցների, մասնավորապես՝ մեծ ընկերությունների միջոցով):

Նշենք, որ ՓՄՁ տեղն ու դերը ազգային տնտեսությունում գերակա է՝ պայմանավորված մի քանի հանգամանքներով: Այսպես՝

¹ ՀՀ օրենքը 05.12.2000 թ. ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին, ընդունվել է 05.10.2010 թ.:

² Commission Recommendation 2003/361/EC of 6 May 2003 concerning the definition of micro, small and medium-sized enterprises // Official Journal. – 2003. – May 5. – No. L 124. – P. L 124/36-L 124/41.

³ Small Business Act (Public Law 85-536) [Electronic resource]. – 3. // <http://www.sba.gov/library/cfrs/Small-Business-Act.pdf>

⁴ Principales statistiques sur le financement des petites entreprises // Programme de recherche sur le financement des PME. Gouvernement du Canada. Decembre 2006. – P. 4.

// [http://www.pme-prf.gc.ca/epic/site/sme_fdi-prf_pme.nsf/vwapj/KSBFS_Dec2006_Fr.pdf/\\$FILE/KSBFS_Dec2006_Fr.pdf](http://www.pme-prf.gc.ca/epic/site/sme_fdi-prf_pme.nsf/vwapj/KSBFS_Dec2006_Fr.pdf/$FILE/KSBFS_Dec2006_Fr.pdf)

⁵ О развитии малого и среднего предпринимательства в Российской Федерации: Федеральный закон от 24 июля 2007г. № 209-ФЗ.

- այն չի պահանջում նախնական խոշոր ներդրումներ, բայց այդ դեպքում էլ ապահովում է ռեսուրսների արագ շրջանառություն,
- փոքր բիզնեսը օգնում է ներդնել նորարարություններ, հաղթահարել գործազրկության խնդիրը և նպաստում է տնտեսության վերակազմավորմանը,
- պարզվում է, որ փոքր ձեռնարկությունները, իրենց փոքր չափերի հաշվին, ավելի ճկուն են տնտեսական կոնյունկտուրայի փոփոխությունների հանդեպ և հակազդելով դրանց «... փաստացի նպաստում են գործնական ցիկլի տատանումների հարթեցմանը»¹,
- փոքր բիզնեսը կարող է նպաստել սոցիալական և քաղաքական կայունությանը երկրում, քանի որ անհատ ձեռնարկատերերն իրենց տնտեսական դրությամբ և կյանքի պայմաններով մոտ են ազգաբնակչության մեծ մասին և կազմում են միջին խավի հիմքը, ինչը և հանդիսանում է այդպիսի կայունության հիմքը:

Հետևաբար ՓՄՁ դերը առաջնային է հատկապես զարգացող երկրների տնտեսության համար: Պակաս կարևոր չէ դրա դերը նաև արդյունաբերապես զարգացած երկրներում, որը և փաստում է այն, որ ՓՄՁ բաժինը մեծ է համախառն արտադրանքում: Կանադայում դրանց բաժին է ընկնում համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 45 %-ը²: ԱՄՆ-ում՝ մասնավոր հատվածում (բացառությամբ գյուղատնտեսության ճյուղի) արտադրված փոքր բիզնեսի բաժինը ՀՆԱ-ում նույնպես մնում է համեմատաբար հաստատուն արդեն մի քանի տասնամյակ և տատանվում է 50 %-ի շրջակայքում³: Ամերիկյան փորձագետները հայտնաբերել են, որ փոքր բիզնեսի բաժինը տնտեսությունում կախված է առաջին հերթին այն բանից, թե որքանով են դինամիկ զարգանում տնտեսության այն հատվածները, որոնցում գերիշխում են փոքր ձեռնարկությունները, մասնավորապես ծառայության ոլորտում: Դրա հետ մեկտեղ՝ զարգացող տնտեսության պայմաններում փոքր ձեռնարկություններն ընդլայնում են իրենց գործունեությունը և դրանցից որոշներն անցնում են խոշորների շարքը, որը կարող է տանել ՀՆԱ-ում փոքր բիզնեսի բաժնեմասի կրճատմանը: Սակայն ԱՄՆ-ում փոքր ձեռնարկությունների թիվն էապես չի փոխվել. դա կարելի է բացատրել նրանով, որ իրենց զարգացման, ինչպես նաև տնտեսությունում կատարվող փոփոխությունների գործընթացում որոշ փոքր ձեռնարկություններ կայացան որպես խոշոր ընկերություններ, մինչդեռ որոշ խոշոր ընկերություններ, հակառակը՝ մասնատվեցին փոքր ընկերությունների:

Բացի այդ՝ կարող ենք նշել, որ փոքր և միջին ձեռնարկությունները հանդիսանում են տնտեսության կարևոր ներդրողները, և այդ է փաստում այն, որ թեպետ Ֆրանսիայում գլխավոր ներդրող մնում են խոշոր ձեռնարկությունները, չի կարելի չնշել, որ 2006 թվականին ներդրումների 45 % ծավալը՝ ըստ նյութական ակտիվների, բաժին էր ընկնում փոքր և միջին ձեռնարկություններին: Համաշխարհային տնտեսության համակարգում, ընդհանրապես փոքր և միջին ձեռնարկություններում զբաղված են աշխատունակ բնակչության մոտ 50 %-ը: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ճապոնիան, Շվեյցարիան, փոքր ձեռնարկություններում կենտրոնացված է աշխատունակ բնակչության 67 %-ը: ԱՄՆ-ում դրանց բաժին է ընկնում մասնավոր հատվածում զբաղվածների մոտ կեսը, Կանադայում՝ ընդհանուր զբաղվածների թվի 60 %-ը: Հյուսիսային Ամերիկայում փոքր և միջին ձեռնարկությունների 60-75 %-ը ապահովում են նոր աշխատատեղերի ստեղծումը⁴:

Նշենք նաև, որ ԱՄՆ-ում փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածների ընդհանուր թվի մեջ աշխատողների մասնաբաժինը ցածր է, իսկ խոշոր ընկերությունների աշխատողներինը՝ ավելի բարձր է, քան Եվրոպայում: Դա կարելի է բացատրել նրանով, որ ԱՄՆ-ում միկրոձեռնարկությունների մեծ մասը (մոտ 80 %) միանձնյա սեփականություն է և տնօրինվում է մեկ մարդու կողմից, իսկ Եվրոպայում այդ ցուցանիշը կազմում է մոտ 50 %: ԱՄՆ-ում մեկ ձեռնարկությունում զբաղվածների միջին թիվը կազմում է 3 մարդ, իսկ

¹ Курс экономической теории: Общие основы экономической теории. Микроэкономика. Макроэкономика. Основы национальной экономики: учеб. пособие для студентов вузов / рук. авт. коллектива и науч. ред. А. В. Сидоровича; МГУ им. М. В. Ломоносова. – М., 2007. – С. 662.

² Bureau des petites et moyennes enterprises [Source electronique] // http://tpsgc-pwgsc.gc.ca/text/faa/osme_pamphlet-f.pdf

³ Small Business Share of Economic Growth: Final Report submitted to U.S. Small Business Administration / Joel Popkin and Company. – Washington, D.C., 2001. – P. 1, 4, 8-11. // <http://www.sba.gov/advo/research/rs211tot.pdf>

⁴ Bureau des petites et moyennes enterprises [Source electronique] // http://tpsgc-pwgsc.gc.ca/text/faa/osme_pamphlet-f.pdf

Եվրոպայում՝ 5 մարդ: Նկատվում է էական տարբերություն առանձին երկրներում ձեռնարկության միջին թվի հարցում՝ այն մեծ է այն երկրներում, որտեղ համեմատաբար մեծ է ՀՆԱ-ի ցուցանիշը 1 բնակչի հաշվով, ինչպես օրինակ Գերմանիայում, Լյուքսեմբուրգում և Նիդեռլանդներում (գրադվածների միջին թիվը կազմում է 7-8 մարդ), Պորտուգալիայում ու Հունաստանում նկատվում է հակառակ իրավիճակ (համապատասխանաբար 4 և 2 մարդ): Փոքր և միջին ձեռնարկությունների մոտ կեսը չունեն վարձու աշխատողներ, դրանով իսկ տրամադրում են աշխատատեղեր և ապահովում են եկամուտ միայն իրենց ընտանիքի անդամների համար: Իտալիայում 10 մարդուց ոչ պակաս աշխատող միկրոձեռնարկություններին բաժին է ընկնում գրադվածների հիմնական թիվը՝ 48 %¹:

Ցավոք փոքր և միջին բիզնեսի զարգացած ոլորտները թույլ չեն տալիս դրական բնութագրել հետևյալ գործոնները.

1. Փոքր և միջին ձեռնարկությունների և կառավարության մարմինների հարաբերությունները սերտորեն կապված են կոռուպցիայի հետ: Եթե կառավարության մարմինների հետ փոխհարաբերություններում առաջ են գալիս խնդիրներ, ապա բավականին հաճախ դրանց լուծումը կարելի է գտնել օրենքի շրջանցմամբ՝ պաշտոնյաներին անօրինական վճարումների օգնությամբ: Այն, որ այդպիսի պրակտիկան լայնորեն տարածվում է դրանց գործունեության շրջաններում՝ հաստատում են ավելի քան 40 % ձեռնարկատերերը: Մասնավորապես, երբ փոքր ձեռնարկություններում անցկացվում են վերահսկիչ ստուգումներ, ուղղակի կամ անուղղակի արվում են ակնարկներ ստուգողների ծառայությունների վճարման համար: Փոքր բիզնեսի հետ արտոնված կառույցների սերտ շփումը կարող են ստեղծել միջավայր կոռուպցիայի տարածման համար: Փոքր ձեռնարկությունների ղեկավարները բավականին հաճախ հանդիպում են կառավարության օրգանների, անդամների, պաշտոնյաների կողմից չարաշահումներին և կամայականություններին: Ուսումնասիրությունները փաստում են, որ կառավարության օրգանների հետ շփման դեպքում կոռուպցիային դիմակայելու ունակությունն էականորեն սահմանափակ է, որը պայմանավորված է կոնֆլիկտային իրավիճակներում ձեռնարկատերերի կողմից իրենց իրավունքները պաշտպանելու ցածր հնարավորությամբ, ինչպես նաև կոռուպցիոն վճարումներ կատարելով, որն անուղղակիորեն նշանակում է համաձայն լինել նրանց հետ:

2. Մեծ խնդիր է մնում փոքր և միջին ձեռնարկությունների իրավական պաշտպանվածությունը: Զգալի թվով ձեռնարկատերեր բախվել են կրիմինալ խմբերի կողմից ահաբեկումների և բռնությունների:

3. Ցածր մակարդակում է գտնվում դատական մարմինների հանդեպ վստահությունը. դատարանում իրենց օրինական իրավունքների ոտնահարման դեպքում ձեռնարկատերերի գրեթե կեսը պատրաստ չեն դրանք պաշտպանելուն, չնայած որ նկատվում է այդ ցուցանիշի նվազման միտում: Չնայած վերը նշվածին՝ ձեռնարկատերերն իրենք էլ են խախտում օրենքը, դա է փաստում ստվերային տնտեսության առկայությունը: Օրինակ՝ Ռուսաստանում այն կազմում է 30-50 % իրական շրջանառության նկատմամբ²:

Ազգային տնտեսությունում ՓՄՁ տեղի ու դերի պատկերը կլինի ոչ լրիվ, եթե չանդրադառնանք նաև խոշոր ձեռնարկությունների հետ ունեցած դրանց հարաբերություններին:

Այն դեպքում, երբ գործընկերության հիմքում ընկած է երկու կողմերի (ՓՄՁ և խոշոր ընկերություններ) էլ ավելի արդյունավետ գործունեության ձգտումը, մասնավորապես՝ ծախսերը նվազագույնի հասցնելը կամ արտադրանքի վաճառքի շուկաների ընդլայնումը, տնտեսվարող սուբյեկտների մոտ գոյություն ունի նորմալ տնտեսական գործընկերություն: Այսպես, Ֆրանսիայի համակարգով մանրածախ առևտրի ոլորտում ԱՄՆ-ում աշխատում են ձեռնարկությունների 80 %-ը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ են ուշադրություն դարձնել նաև ՓՄՁ և խոշոր բիզնեսի ընկերությունների համագործակցության բացասական կողմին, ամենից առաջ՝ փոքր ընկերությունների անկախության կորուստին: Ինչպես նշում է Վ. Ա. Ռուբեն, «Մնալով իրավաբանորեն ինքնուրույն, ձեռնարկությունը, խոշոր ընկերության

¹ European Commission [Electronic resource]. – Enterprise and Industry. – Policy areas. – Entrepreneurship. – Facts and figures. // http://ec.europa.eu/enterprise/entrepreneurship/facts_figures.htm

² Виленский А. В. Макроэкономические институциональные ограничения развития российского малого предпринимательства. – М., 2007. – С. 120.

տնտեսական համալիրում ընդգրկվելով, կորցնում է իր տնտեսական ինքնուրույնությունը. այն այլևս ինքնուրույն դուրս չի գալիս շուկա»¹:

Փոքր և խոշոր ձեռնարկությունների համագործակցությունը կիսաօրինական շրջանակներում է, որի դեպքում խոշոր ընկերության շահերը դրվում են առաջնային տեղում, իսկ փոքր ձեռնարկությունները դառնում են դրա ստվերային գործընթացները մատուցող անձնակազմը: Դրա հետ մեկտեղ գործնականում բավականին տարածված է ձեռնարկությունների մասնատումը հարկման օպտիմալացման համար, ինչի մասին վկայում են Ռուսաստանի ձեռնարկատերերի գրեթե կեսը:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ներկայումս փոքր և միջին բիզնեսի ոլորտը ոչ բավարար է զարգացած ինչպես մեր կողմից դիտարկված երկրների, այնպես էլ Հայաստանի տնտեսությունում, ինչը հնարավորություն չի տալիս լրիվ իրականացնել այն գործառույթները, որոնք բնութագրական են արդյունաբերապես զարգացած երկրներում: Որպեսզի փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունները կարողանան զարգանալ և հաջող կերպով իրականացնեն իրենց դերը տնտեսությունում, նրանց անհրաժեշտ է ֆինանսավորման հնարավորություն: Նշենք նաև, որ ՓՄՁ-ների դերն առաջնային է հատկապես զարգացող երկրների տնտեսության համար՝ պայմանավորված երկրի սոցիալական և քաղաքական կայունությանը նպաստելու, մասնավորապես փոքր բիզնեսում նորարարություններ ներդնելու և գործազրկության խնդիրը հաղթահարելու հանգամանքներով:

ԷԴՈՒՄԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

*Մ. Գ. Ա. Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմայի ղեկավար, տ. գ. դ., պրոֆեսոր*

ՀՐԱԶՅԱ ԾՊՆԵՑՅԱՆ

*Մ. Գ. Ա. Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ. գ. դ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրապետությունում 1991 թվականից հետո իրականացված բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի արդյունքում հողերի մասնավորեցումն ուղեկցվել է նախկին 859 կոլտնտեսություններին, խորհունտեսություններին և միջտնտեսային կազմակերպություններին պատկանող գյուղատնտեսական տեխնիկայի սեփականաշնորհմամբ: Արդյունքում, ներկայումս գործում են շուրջ 340 հազ. գյուղացիական տնտեսություններ: Մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից 1.1 հա՝ վարելահողեր, որոնք իրենց հերթին բաժանվում են 3-4 հողակտորների:

Տնտեսությունների փոքր չափերի պատճառով սեփական տեխնիկա ունենալը նպատակահարմար չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկայի սեփականատերը մեխանիզատոր է և իրականացնում է վճարովի ծառայություններ:

Քանի որ հողօգտագործողներն ազատ են մշակաբույսերի ընտրության հարցում և նույն հողազանգվածի տարբեր հատվածներում զբաղվում են տարբեր մշակաբույսերի արտադրությամբ, ապա որոշակի բանվորական գործընթացները կատարվում են ոչ զանգվածային տարածությունների վրա, և կարճ ժամանակահատվածում իրականացվում են տարբեր բնույթի մեքենայական աշխատանքներ:

Հիմնական գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքիմության մակարդակի մասին պատկերացում են տալիս 1-ին աղյուսակի տվյալները:

¹ Рыбе В. А. Институциональные аспекты организации малого бизнеса в развитых странах и в России. – М., 2004. – С. 22.

2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ (անկախ սեփականության ձևից) հանրապետությունում առկա է 1367 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 324 միավոր կերահավաք կոմբայն, 15600 միավոր բեռնատար ավտոմեքենաներ, գյուղատնտեսական նշանակության 14558 միավոր տարբեր տեսակի տրակտորներ:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հիմնական տեխնիկայի առկայությունը և սարքինության մակարդակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ¹

Տեխնիկայի տեսակը	Առկա քանակը, միավոր	Որից՝ սարքին վիճակում, միավոր	Սարքինության մակարդակը, %
Տրակտորներ	14558	11327	77.8
Բեռնատար ավտոմեքենաներ	15600	11875	76.0
Հացահատիկահավաք կոմբայններ	1367	1054	77.1
Տրակտորային կցասայլեր	6026	5278	87.6
Տրակտորային խոտհնձիչներ	1922	1661	86.4
Կերահավաք կոմբայններ	324	230	71.0
Հատիկագոյիչ մեքենաներ	433	364	84.1
Տրակտորային շարքացաններ	1839	1609	87.5
Տրակտորային գութաններ	3716	3351	90.2
Կուլտիվատորներ	2138	1826	85.4
Հավաքիչ-մամլիչներ	1454	1260	86.7

Ընդհանուր առմամբ, մինչև շուկայական հարաբերություններին անցման ժամանակահատվածում, գյուղատնտեսության տեխնիկական հավաքակալայանի նորացման նպատակով, օրինակ 1976-1986թթ. տարեկան միջին հաշվով գյուղատնտեսական կազմակերպություններին է հատկացվել տարբեր մակնիշի շուրջ 1000 տրակտոր, 120 հացահատիկահավաք կոմբայն, 350 գութան, 320 կուլտիվատոր, 160 շարքացան և մեքենայացման այլ միջոցներ²:

Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակալայանի ներկայիս տարիքային կազմի վերլուծությունից պարզվել է, որ տրակտորների ընդհանուր թվի 15,4 %-ը շահագործվում է 30 տարուց ավելի, 32,8 %-ը՝ 26-30 տարի, 46,2 %-ը՝ 11-25 տարի և միայն 5,6%-ը՝ մինչև 10 տարի: Փաստորեն, շահագործվող տրակտորների 94,4%-ն օգտագործվում է 10 տարուց ավելի և անցել է ամորտիզացիայի համար սահմանված ժամկետները: Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերաժախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում է նորոգման և տեխսպասարկման աշխատանքները:

Երկար տարիներ տեխնիկական նոր միջոցներով գրեթե չհամարվելու, եղածը բարոյապես և ֆիզիկապես մաշվելու, ժամանակին չնորոգվելու, տեխնիկական խնամքներով չապահովվելու հետևանքով, աստիճանաբար նվազել է գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակը: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2012 թվականի տարեսկզբին տեխնիկայի սարքինության ցուցանիշը կազմում է՝ տրակտորներինը՝ 77,8, հացահատիկահավաք կոմբայններինը՝ 77,1, կերահավաք կոմբայններինը՝ 71,0, խոտհնձիչներինը՝ 86,4, տրակտորային կցասայլերինը՝ 87,6, գութաններինը՝ 90,2, կուլտիվատորներինը՝ 85,4 տոկոս և այլն (աղյուսակ 1):

Վերջին տարիներին, բացի ՉԺՀ-ի, Ճապոնիայի և Հնդկաստանի կառավարությունների դրամաշնորհների հաշվին և «Գյուղատնտեսական բարեփոխումներին աջակցության» ԾԻԳ-ի կողմից իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում ներկրված գյուղատնտեսական տեխնիկայից, այլ ներկրումներ գրեթե չեն եղել: Դրամաշնորհների հաշվին 1997-2011թթ. ընթացքում ներմուծվել են 116 հացահատիկահավաք կոմբայն և 885 տրակտոր՝ իրենց գյուղգործիքներով, երկարաժամկետ վարձակալության և աճուրդ-վաճառքի միջոցով դրանք

¹ Հիմք է ընդունվել՝ Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2012թ. հունվարի 1-ի դրությամբ, վիճակագրական տեղեկագրի տվյալները, Երևան, 2012, էջ 4-9:
² ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալներով:

հատկացվել են հոգօգտագործողներին: Դրամաշնորհներով ստացված գյուղատնտեսական տեխնիկայի հետ ներմուծվել են գյուղատնտեսական գործիքներ և ընդհանուր արժեքի 10%-ի չափով անհրաժեշտ պահեստամասեր: Փոքր խմբաքանակով տրակտորներ է ներմուծվել նաև «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում (մատչելի մեխանիզմներով գյուղատնտեսությունում տնտեսավարողներին է տրամադրվել 32 միավոր անվավոր տրակտոր):

Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության բնագավառում ստեղծված վիճակի հետևանքով հաճախ մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով ագրոտեխնիկական կանոններով պահանջվող մի շարք գործընթացներ չեն կատարվում կամ կատարվում են ձեռքով՝ խիստ բարձրացնելով մշակության աշխատատարությունը և խախտելով աշխատանքների կատարման լավագույն ժամկետները: Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածության հետևանքով մեծացել են նորոգումների և տեխնիկական սպասարկումների ծախսերը, որի հետևանքով բարձրանում են նաև ծառայությունների սակագները:

Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակալայնի վերազինման հարցում առկա դժվարություններն առնչվում են տեխնիկական շահագործող սուբյեկտների, սպասարկումների կարիք ունեցող գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորությունների, ներմուծվող մեքենայացման միջոցների և պահեստամասերի բարձր գների և այլ պատճառների հետ:

Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական միջոցների օգտագործման ուղղությամբ կատարված ուսումնասիրություններից բացահայտվել է, որ այդ բնագավառի գործունեությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Հոդվածի շրջանակներում փորձ է արվել բացահայտել այդ գործոնները և, դրանցից ելնելով, ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման վիճակի բարելավման ուղղությամբ:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2012թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղատնտեսության տրակտորային և բեռնատար ավտոմոբիլային հավաքակազմի թվաքանակը, համեմատած 1990թ. հետ, ավելացել է համապատասխանաբար 4.8 և 37.9 տոկոսով: Որոշակի կրճատվել է հացահատիկահավաք կոմբայնների հավաքակազմը (4.4 %), և 1991թ. համեմատ, շուրջ 70.0 տոկոսով կրճատվել է կերահավաք կոմբայնների թվաքանակը:

Տրակտորների և բեռնատար ավտոմեքենաների թվաքանակի ավելացումը հիմնականում պայմանավորված է հանրապետության տնտեսության մյուս ճյուղերից տվյալ տեսակի տեխնիկական միջոցները գյուղատնտեսությունում օգտագործելու և հանգույցների հավաքման միջոցով նոր տեխնիկա կոմպլեկտավորելու հանգամանքով: Կերահավաք կոմբայնների կրճատումը հիմնականում հետևանք է կերային մշակաբույսերի տարածքների կտրուկ կրճատման և հանրապետությունից այդ տեխնիկայի արտահանման:

Գյուղացիական տնտեսությունների տեխնիկական ապահովվածության և մեքենաօգտագործման վիճակի գնահատման նպատակով ուսումնասիրվել է գյուղացիական տնտեսությունների հիմնական տեխնիկական միջոցներով ապահովվածության և դրանց ծանրաբեռնվածության վիճակը: Արդյունքները ներկայացված են 2-րդ և 3-րդ աղյուսակներում:

Գյուղացիական տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության տվյալներից ակնհայտ է, որ վերջինիս մակարդակը չափազանց ցածր է, այսպես 100 տնտեսության հաշվով տրակտորների ապահովվածությունը կազմում է 4.36, իսկ բեռնատար ավտոմեքենաներինը՝ 4.6: Մնացած տեխնիկական միջոցներով ապահովվածությունը առավել ցածր է: Պարզ է, որ սարքին տեխնիկայով ապահովվածության մակարդակը առավել ցածր է: Առկա իրավիճակը զգալի բարդություններ է առաջացնում մեքենայացված աշխատանքներով սպասարկումներ կազմակերպելիս՝ անհավասար պայմաններ ստեղծելով տեխնիկայի սեփականատերերի և գյուղացիական տնտեսությունների միջև:

Կատարված հաշվարկներից բացահայտվել է, որ տեխնիկական միջոցներից տրակտորների փաստացի ծանրաբեռնվածությունը՝ համեմատած տարեկան ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմաների հետ, զգալիորեն ցածր է (ընդհանուր նշանակության տրակտորների համար այն տատանվում է 1320-2673 էտալոնային հեկտարի սահմաններում), նույն իրավիճակն է նաև տրակտորային գութանների գծով, միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 91.5 ֆիզիկական հեկտար (կողմնորոշիչ նորման ընդհանուր նշանակության գութանների համար կազմում է 125 հեկտար)¹:

Աղյուսակ 2

Գյուղացիական տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության մակարդակը (2011թ. տվյալներով)

Գյուղատնտեսական տեխնիկայի տեսակը	Առկա քանակը 100 գյուղացիական տնտեսության և առևտրային կազմակերպության հաշվով	Սարքին քանակը 100 գյուղացիական տնտեսության և առևտրային կազմակերպության հաշվով
Տրակտորներ	4.36	3.42
Բեռնատար ավտոմեքենաներ	4.59	3.49
Հացահատիկահավաք կոմբայններ	0.42	0.34
Կերահավաք կոմբայններ	0.09	0.07
Տրակտորային կցասայլեր	1.80	1.58
Տրակտորային խոտհնձիչներ	0.56	0.49
Տրակտորային շարքացաններ	0.54	0.48
Տրակտորային գութաններ	1.09	0.95
Կուլտիվատորներ	0.61	0.55
Հավաքիչ-մամիչներ	0.43	0.39

Տեխնիկական միջոցների օգտագործման արդյունավետությունը գնահատելու համար կատարվել են հաշվարկներ՝ ուղղված հիմնական տեխնիկական միջոցների տարեկան ծանրաբեռնվածությունների բացահայտմանը: Արդյունքները ներկայացված են 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Հիմնական տեխնիկական միջոցների ծանրաբեռնվածության մակարդակը 2011թ. համար²

Հանրապետության մարզերը	Մեկ տրակտորի հաշվով		Մեկ տրակտորային գութանի հաշվով և քանակաբաշխման արդյունքում, հա	Մեկ հացահատիկահավաք կոմբայնի հաշվով և քանակաբաշխման արդյունքում, հա
	ցանքատարածությունը, հա	ցանքատարածությունը և բազմամյա տնկարկների տարածությունը, հա		
Արագածոտն	25.55	30.62	109.75	129.23
Արարատ	16.81	26.24	85.84	130.08
Արմավիր	15.70	24.15	81.15	97.49
Գեղարքունիք	27.21	27.77	172.31	141.60
Լոռի	13.39	14.89	63.52	82.38
Կոտայք	18.13	24.14	71.08	114.39
Շիրակ	31.97	32.24	95.49	120.14
Սյունիք	21.95	24.41	78.44	94.89
Վայոց Ձոր	5.61	9.39	66.63	62.85
Տավուշ	12.16	15.43	57.40	101.34
Ք. Երևան	0.22	2.88	58.42	1.06
Ընդամենը	19.23	22.86	91.54	111.69

¹ Ա. Հ. Համբարձումյան, Հ. Ս. Ծպնեցյան, Գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների գնահատումը, Երևան, «Աստղիկ», 2001, էջ 17-19:


² Հաշվարկների համար հիմք է ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները:

Հացահատիկահավաք կոմբայնների համար վիճակը այլ է, մի շարք մարզերում դրանց ծանրաբեռնվածությունը զգալիորեն գերազանցում է կողմնորոշիչ նորմաներին (119 հեկտար), այն հատկապես բարձր է ՀՀ Գեղարքունիքի, Արարատի և Արագածոտնի մարզերում: Ստեղծված իրավիճակը պահանջում է, բերքահավաքի ժամկետներից կախված, հացահատիկահավաք կոմբայնների տեղափոխման կազմակերպումը: Բացի այդ, խնդիր կա նաև կոմբայնների ֆիզիկական մաշվածության հետ կապված. հացահատիկի բերքահավաքի ընթացքում մեծ կորուստների առկայությունն այդ մասին է վկայում:


Հանրապետության գյուղատնտեսությունում տեխնիկական միջոցների օգտագործման արդյունավետությունը գնահատելու համար կատարված ուսումնասիրություններից ելնելով՝ իրականացվել են հաշվարկներ վարի տրակտորային ագրեգատի (ԳՏ-75, ՊԼՆ-4-35) և հացահատիկահավաք կոմբայնի (ՍԿ-5 «Նիվա») արտադրողականության գնահատման ուղղությամբ՝ կախված մշակվող և բերքահավաքի տարածքի չափերից: Հաշվարկները կատարվել են 0.02 մինչև 18 հա միջակայքի հողակտորների համար՝ գոնի երկարությունը 20-ից մինչև 600 մ: Հաշվարկների կատարման համար հողակտորի կոնֆիգուրացիան ընդունվել է ուղղանկյունաձև (1x2 հարաբերակցությամբ): Ուսումնասիրությունների և հաշվարկների հիման վրա գնահատվել է տվյալ արտադրական գործընթացների համար աշխատանքային ժամանակի օգտագործման գործակիցը նշված միջակայքում գտնվող հողակտորների համար (ելնելով շրջադարձի երկարությունից, թվաքանակից, ինչպես նաև նախապատրաստական ու այլ գործընթացների վրա ծախսվող ժամանակի գնահատականներից): Կատարված հաշվարկների արդյունքների պատկերավորությունը ապահովելու համար մեքենայական և բերքահավաքի ագրեգատների արտադրողականության կախվածությունը մշակվող հողակտորի չափերից, ներկայացված է գրաֆիկորեն (1-ին և 2-րդ գծապատկեր):

Գծապատկեր 1

Վարի ագրեգատի (ԳՏ-75, ՊԼՆ-4-35) արտադրողականության կախվածությունը մշակվող հողամասի չափերից



Հացահատիկային կոմբայնի ((ՄԿ-5) «Նիվա») արտադրողականության կախվածությունը մշակվող հողամասի չափերից



Ներկայացված գրաֆիկներից ակնառու է, որ մեքենայական ագրեգատների արդյունավետությունը մեծապես կախված է մշակվող և բերքահավաքի ենթակա հողակտորի չափերից: Այսպես, հաշվարկները ցույց են տալիս, որ հանրապետության գյուղացիական տնտեսություններին պատկանող վարելահողերի և մշակվող հացահատիկային մշակաբույսերի տարածքների միջին չափը համապատասխանաբար կազմում է 1.1 և 0.6 հա: Հաշվի առնելով այն, որ նշված տարածքը կարող է բաժանվել առնվազն 2 հողակտորի, ուստի գյուղացիական տնտեսությունների կողմից մշակվող հողակտորների միջին չափը կկազմի համապատասխանաբար 0.55 և 0.3 հա, որտեղ ագրեգատների արտադրողականությունը, հետևաբար նաև արդյունավետությունը առավել ցածր է:

Մեքենաօգտագործման ներկա վիճակից ակնհայտ է հողերի մշակությունը համատեղ օգտագործման սկզբունքով կազմակերպման խնդրի հրատապությունը և այդ ուղղությամբ համապատասխան մեխանիզմների, միջոցառումների մշակման և ներդրման անհրաժեշտությունը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության ցածր մակարդակի հետևանքով, մշտապես ծագում են դժվարություններ և ոչ հավասար պայմաններ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական տեխնիկական տնօրինող սեփականատերերի միջև: Տեխնիկական միջոցների ցածր արտադրողականությունը, իհարկե, բացասական ներգործություն է ունենում գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վրա:

Գյուղատնտեսության տեխնիկաօգտագործման բնագավառում առկա խնդիրների գնահատման արդյունքում ձևավորվել են առաջարկություններ՝ ուղղված գյուղատնտեսության տեխնիկական միջոցներով ապասարկումների բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը, որոնք մասնավորապես հետևյալն են՝

- գյուղատնտեսության տեխնիկաօգտագործման կազմակերպումը կոոպերացման սկզբունքով, որը հնարավորություն կտա զգալիորեն լուծել գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման մի շարք հարցեր, մասնավորապես՝ տեխնիկայի ծանրաբեռնված օգտագործում, տեխնիկական պատրաստության մակարդակի բարձրացում, տեխնիկական միջոցների նորացման հնարավորությունների ստեղծում, ապասարկումների որակի բարելավում, ագրոտեխնիկական պահանջների ապահովում և այլն,
- համատեղ սկզբունքով հողօգտագործման մեխանիզմների մշակում և ներդրում,
- կոոպերացման և միավորման սկզբունքով տեխնիկա օգտագործող տնտեսավարողների և անհատ սեփականատերերի համար հավասար տնտեսական պայմանների ստեղծում,

- գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական ներկայիս սուղ պայմաններում տեխնիկական միջոցների նորացումը և դրանց համալրումը հնարավոր է իրականացնել տեխնիկայի մատակարարման լիզինգային մեխանիզմների կիրառմամբ, ինչպես նաև տեխնիկական հագեցվածության համար նպատակային վարկերի տրամադրմամբ: Լիզինգային մեխանիզմներն առավել արդյունավետ կարող են գործել և փոխադարձ պարտավորությունների կատարումն ապահովել, եթե դրանք կիրառվեն կոուպերացման սկզբունքով գործող կառույցների, միավորումների նկատմամբ,
- դրամաշնորհային ծրագրերի հաշվին հանրապետություն ներմուծվող գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման տրամադրման մատչելի և արդարացի մեխանիզմների կիրառում:

Վերը նշված ամփոփ միջոցառումների իրականացման համար համապատասխան մեխանիզմների մշակումն ու դրանց իրականացումը կարող են նպաստել գյուղատնտեսությունում տեխնիկական միջոցների օգտագործման արդյունավետության և արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակի բարձրացմանը:

ԷՂՈՒՐԴ ՍԱՆԱՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԵՎ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխություններն իրենց անդրադարձն են ունենում յուրաքանչյուր երկրի տնտեսության վրա: Այդ ազդեցություններն առավել արտահայտիչ են լինում հիմնականում փոքր բաց տնտեսություն ունեցող երկրներում, քանի որ այս երկրներն իրենց բնույթով ոչ թե թելադրում են համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը, այլ իրենց վրա են կրում խոշոր բաց տնտեսություններում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը: Իհարկե, այն երկրները, որոնք ունեն ձևավորված այնպիսի տնտեսական մեխանիզմների համակարգ, որոնց միջոցով կարողանում են դիմագրավել կամ գոնե պատնեշներ ստեղծել համաշխարհային տնտեսական բացասական զարգացումների իրենց երկիր ներթափանցման առումով ավելի ճկուն են և ունեն ավելի մեծ դիմադրողականություն: Հաշվի առնելով այս ամենը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, թե ինչպես ՀՀ տնտեսությունը դիմագրավեց համաշխարհային տնտեսական մարտահրավերներին, որոնք սկիզբ առան 2008թ. երկրորդ կեսին և ինչպես է կարողանում դիմակայել հետճգնաժամային զարգացումներին:

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում վերջին 4 տարիների ընթացքում պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցություններով նկատվում են առանձին ոլորտներում զարգացման միտումների փոփոխություններ և դրանից բխող տնտեսության ճյուղային կառուցվածքային տեղաշարժեր: Վերջինս ստիպում է պատկերացում կազմել այս համատեքստում ինչ է կատարվել ՀՀ տնտեսության հետ: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ տնտեսության մեջ 2010թ. արձանագրվեց 102.1% տոկոս տնտեսական աճ, իսկ 2011թ. այն հասավ արդեն 104.6%-ի, այնուամենայնիվ 2008թ. արձանագրված 85.9% անկման ֆոնի վրա դեռևս ՀՀ տնտեսությունը չի վերադարձել 2008թ. 100%-անոց մակարդակին: Սակայն, եթե հարցին մոտենանք անվանական աճի տեսանկյունից, ապա 2011թ. ՀՆԱ-ն կազմել է 3.8 տրլն դրամ, որը մոտ 250 մլրդ դրամով ավելի է, քան 2008թ. ՀՆԱ-ն: Ուսումնասիրելով NACE 1.1 դասակարգմամբ տնտեսության առանձին ճյուղերի աճի միտումները՝ նկատում ենք, որ 2008թ. արդեն իսկ տնտեսության մի շարք ճյուղեր չեն կարողացել ապահովել 2007թ. հավասարագոր մակարդակ, և կրթության, առողջապահության և սոցիալական ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծառայությունների ոլորտներում գրանցվել է անկում:

**ՀՆԱ-ի արտադրության փոփոխությունը
(ԵՀՀ-95 Ա 17 խմբավորմամբ՝ SՊՏՀԴ (NACE 1.1.) դասակարգմամբ)¹**

	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	113.9	113.2	113.7	106.9	85.9	102.1	104.6
Արտադրանքի հարկեր (համաձ սուբսիդիաներ)	112.4	114.9	135.9	117.1	77.5	109.2	104.3
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	114.0	113.0	111.7	105.8	86.9	101.3	104.6
Ֆինանս. միջնորդության անուղղակի չափվող ծառայություններ (ՖՄԱՉԾ)	106.5	101.7	153.4	109.1	89.8	103.5	173.6
A Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	111.3	100.5	110.3	103.0	105.9	84.2	113.5
B Չկնորություն. ձկնաբուծություն	87.1	119.5	127.5	212.9	109.7	92.8	125.9
C Հանքագործական արդյունաբերություն	90.7	101.2	103.6	103.8	106.3	119.1	125.3
D Մշակող արդյունաբերություն	108.8	99.5	101.6	100.9	92.9	113.6	113.5
E Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	106.5	89.6	105.8	104.6	86.7	96.9	115.9
F Շինարարություն	127.9	137.7	118.2	111.3	58.4	103.0	87.7
G Առևտուր. ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	113.4	112.4	108.8	108.0	95.2	104.8	104.1
H Հյուրանոցներ և ռեստորաններ	125.1	91.9	158.1	109.6	123.5	122.3	110.8
I Տրանսպորտ և կապ	118.0	117.0	122.0	108.4	90.1	104.9	99.8
J Ֆինանսական գործունեություն	124.1	131.5	142.6	132.6	98.4	101.7	122.5
K Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	106.0	132.9	116.1	98.6	99.9	108.7	105.8
L Պետական կառավարում	118.9	111.7	104.6	93.4	94.1	106.3	104.2
M Կրթություն	108.9	106.1	102.9	94.7	102.2	98.7	108.7
N Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	131.8	112.3	105.7	93.0	96.0	101.9	107.1
O Կոմունալ. սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	98.2	112.5	112.0	90.7	108.5	100.5	110.8
P Տնային տնտեսությունների վարման ծառայություններ	121.4	-	130.3	292.7	113.4	107.0	100.9

Հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ ոլորտներից ամենամեծ անկումը գրանցվել է կոմունալ. սոցիալական և անհատական ծառայությունների մատուցման բնագավառում և կազմել է 90.7%: Առավել մեծ թվով ոլորտներում է անկում գրանցվել 2009թ., քանի որ տնտեսության մի շարք ճյուղերում անկումը ոչ թե կազմում էր 1-2%, ինչպես դա տեղի էր ունենում զարգացած երկրներում, այլ անկումը երկնիչ թվերով էր: Այսպես՝ ամենամեծ անկում գրանցվեց շինարարության ոլորտում և կազմեց 58.4%, որին հաջորդում էր էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտը՝ 86.7% մակարդակով: Մեծ էր անկումը նաև մշակող արդյունաբերության մեջ՝ 92.9%, ինչպես նաև բավականին տուժել էր տրանսպորտի և կապի ոլորտը՝ 90.1%: Սակայն հակասականն այն է, որ 2009թ. աննախադեպ աճ էր արձանագրվել հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի ոլորտում՝ 123.5%: Ճյուղային աճի միտումների բաշխվածության ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում մի հանգամանք, որ 8-9 խոշոր ոլորտներում ՀՀ տնտեսության մեջ անկում է արձանագրվել և վերջինս հանգեցրել է աննախադեպ անկման, սակայն որոշ ոլորտներ էլ աճ են արձանագրել 2008թ. ունեցած անկման ֆոնի վրա, օրինակ՝ կրթության ոլորտում՝ 102.2%, կոմունալ ծառայությունների ոլորտում՝ 108.5% և այլն: Իհարկե, եթե փորձենք խնդիրը դիտարկել տնտեսության դիվերսիֆիկացվածության տեսանկյունից, ապա աճի միտումներից ելնելով բավականին դժվար է ասել, որ չդիվերսիֆիկացված տնտեսության պայմաններն են հիմք հանդիսացել նման աննախադեպ անկման, քանի որ մի շարք ոլորտներում գրանցված անկումը միանգամից այդ հարցի պատասխանը տեղափոխում է այլ հարթություն, և խնդիրն անհրաժեշտ է դիտարկել ճյուղերի տեսակարար կշիռների հիման վրա:

Ստորև ներկայացված աղյուսակում հստակ երևում է, որ տնտեսության չդիվերսիֆիկացվածություն իսկապես կա այն պարզ պատճառով, որ 4 հիմնական ճյուղերի տեսակարար

¹ <http://armstat.am/am/?nid=263>

կշիռը ՀՆԱ-ի մեջ գերազանցում է 50%-ը, իսկ որոշ տարիների անգամ 60%-ը: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ՀՆԱ-ի մեջ 2006թ. սկսած շինարարությունը գերազանցում էր 20%-ի մակարդակը, ապա պարզ է դառնում, որ ՀՀ տնտեսական աճի լոկոմոտիվը եղել է շինարարությունը, իսկ 2009թ. ամենամեծ անկում արձանագրվեց այս ոլորտում: Իսկ հետճգնաժամային անկման միտումները տարան նրան, որ 2008թ. 25.3% տեսակարար կշիռ ունեցող շինարարության մասնաբաժինը ՀՆԱ-ում 2011թ. կազմեց 12.7%: Տնտեսության առաջատար շինարարության դիրքերի թուլացումը հանգեցրել է նրան, որ շինարարությունն իր դիրքերը 2010թ. զիջեց գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության ոլորտին, որի մասնաբաժինը 2011թ.-ին կազմել է 20.4%, շինարարության հետճգնաժամային անկման տեմպերն այնքան մեծ են եղել և չեն վերականգնվել, որ այս ոլորտից 2011թ. առաջ է անցել նաև առևտրի ոլորտը 13.5% մասնաբաժնով: Այսինքն՝ եթե փորձենք տնտեսության կառուցվածքային առաջատար երեք ճյուղերը ներկայացնել, կատացվի, որ առաջին հորիզոնականում գյուղատնտեսությունն է, որին հաջորդում է առևտուրը, իսկ վերջինիս հետևում է շինարարությունը: Այս հանգամանքը ստիպում է, որպեսզի Հայաստանը համարվի գյուղատնտեսական երկիր, սակայն սեզոնային գործոնից կախված գյուղատնտեսությունը, որը 2010թ. արձանագրեց 84.2% տնտեսական անկում բավականին ռիսկային է, սակայն այն, որ այս ամենից հետո վերջինս պահպանել է առաջատարի դիրքերը բավականին ողջունելի է: Հետաքրքիրն այն է, նաև որ հետճգնաժամային զարգացումների առանձնահատկություններից է այն, որ տնտեսական աճի մեջ գյուղատնտեսության ունեցած տեսակարար կշռի ավելացմանը, որն, ի դեպ, նախորդ տարվա համեմատ կազմում է 3.2 տոկոսային կետ, իրենց մասնակցությունն են ունեցել նաև մի շարք այլ ճյուղեր, որոնք ճգնաժամային 2008 և 2009թթ. գրեթե աչքի չեն ընկել իրենց մասնաբաժնով:

Աղյուսակ 2

**ՀՆԱ-ի արտադրության փոփոխությունը
(ԵՀՀ-95 Ա 17 խմբավորմամբ՝ S9-SՀԳ (NACE 1.1.) դասակարգմամբ)¹**

	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Արտադրանքի հարկեր (համաժամաբար սուբսիդիաներ)	8.6	8.5	10.0	11.4	10.6	11.1	10.8
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	91.4	91.5	90.0	88.6	89.4	88.9	89.2
Ֆինանս. միջնորդության անուղղակի չափվող ծառայություններ (ՖՄԱԶԾ)	-1.2	-1.1	-1.4	-1.5	-1.6	-1.5	-2.5
A Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	19.0	18.7	18.2	16.1	16.7	17.2	20.4
B Չկնորսություն. ձկնաբուծություն	0.0	0.1	0.0	0.2	0.2	0.2	0.3
C Հանքագործական արդյունաբերություն	3.2	2.6	2.3	1.6	1.7	2.5	2.9
D Մշակող արդյունաբերություն	13.5	10.8	9.4	8.8	8.7	9.5	9.7
E Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	5.0	3.8	3.3	2.9	3.1	2.8	3.4
F Շինարարություն	19.6	23.7	24.5	25.3	18.6	17.1	12.7
G Առևտուր. ավտոմեքենաների. կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	11.4	11.4	10.9	11.6	12.7	13.0	13.5
H Հյուրանոցներ և ռեստորաններ	0.4	0.3	0.4	0.4	0.6	0.7	0.8
I Տրանսպորտ և կապ	6.0	6.3	6.9	6.8	7.2	6.8	6.3
J Ֆինանսական գործունեություն	1.8	2.1	2.5	3.4	3.9	3.6	4.0
K Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	3.2	3.7	3.8	3.7	4.9	4.7	5.0
L Պետական կառավարում	2.8	2.6	2.5	2.7	3.8	3.8	3.8
M Կրթություն	2.8	2.8	2.8	2.7	3.6	3.3	3.2
N Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	2.5	2.5	2.5	2.7	3.5	3.3	3.9
O Կոմունալ. սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	1.3	1.3	1.3	1.2	1.8	1.8	1.9
P Տնային տնտեսությունների վարման ծառայություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

¹ <http://armstat.am/am/?nid=263>

ՀՆԱ-ի մեջ իր մասնաբաժինը 0.6 տոկոսային կետով 2011թ. ավելացրել է առողջապահության և սոցիալական ծառայությունների ոլորտը՝ հասնելով 3.9%-ի, առևտրի ոլորտն իր տեսակարար կշիռն ավելացրել է 0.5 տոկոսային կետով, 0.4 տոկոսային կետով աճ է արձանագրվել նաև հանքագործական արդյունաբերության ոլորտում, և այն կազմել է 2.9%, այսինքն՝ ճգնաժամային 2008թ. ՀՆԱ-ի մեջ 1.6% տեսակարար կշիռ ունեցող հանքագործության ոլորտն իր դիրքերը բարելավել է 1.3 տոկոսային կետով: Տնտեսության մեջ իր կայուն մասնաբաժինն ունի նաև տրանսպորտի և կապի բնագավառը, որը կազմում է ՀՆԱ-ի 6.3%, այս ոլորտն իր առավելագույն տեսակարար կշիռն է ունեցել ճգնաժամային 2009թ.՝ 7.2%:

Այսպիսով՝ 2005թ. սկսած տնտեսության ճյուղային աճի միտումների և կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դիտարկվող ժամանակահատվածում կայուն աճ ապահոված չկա և ոչ մի ճյուղում, քանի որ և՛ տեսակարար կշիռների, և՛ աճի տեմպերի անկում բոլոր ճյուղերն էլ ունեցել են: Մյուս կողմից վերջին 7 տարիների ընթացքում գրեթե ամեն տարի գրանցվում են ճյուղային վերադասավորումներ, և ՀՆԱ-ի մեջ իրենց կայուն մասնաբաժնով ճյուղերը չեն մնում և ենթարկվում են դիրքային փոփոխությունների, վերջինս փաստում է, որ տնտեսության մեջ գոյություն ունի խիստ մեծ ակտիվություն և անընդհատ վերադասավորումներ կախված տնտեսական իրավիճակային զարգացումների հետ: Այս ամենը փաստում է տնտեսական անկայունության գոյության, ինչպես նաև հստակ դիվերսիֆիկացիայի բացակայության մասին: Եվ բոլոր դեպքերում, եթե փորձենք նայելով վիճակագրական տվյալներին պատկերացնել ՀՀ տնտեսական քաղաքականության վեկտորները, ապա գրեթե անհնար կլինի նախանշել այն ճյուղային կամ ոլորտային քաղաքականությունը, որը կա և հստակ իրականացվում է: Եվ մյուս կողմից պարզապես կարելի է հետևություն անել, որ նման քաղաքականություն չկա, և տնտեսությունը զարգանում է իր իսկ օրենքներով, առանց պետականորեն մշակված և հստակ ուղղորդված մեխանիզմների:

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

ՅՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄԸ՝ ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԸ

Արտահանման և տնտեսական աճի փոխկապվածությունն ապացուցված է տնտեսագիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչների կողմից: Արտահանումը, հատկապես փոքր տնտեսություն ունեցող երկրներում, ձեռնարկատերերին հնարավորություն է տալիս օգտվել մասշտաբի էֆեկտից և ապահովել արտադրության առավել մեծ ծավալ, ինչն էլ ընդհանուր տնտեսության համար նշանակում է տնտեսական աճի բարձր տեմպեր:

Արտահանման և տնտեսական աճի միջև կապը կարելի է դիտարկել այն տեսանկյունից, որ արտահանման աճի արդյունքում տնտեսություն է ներհոսում լրացուցիչ օտարերկրյա արժույթ, ինչն էլ, մասնավորապես, հնարավորություն է տալիս արտերկրից միջանկյալ հումք և մեքենա-սարքավորումներ ներմուծել ու արտադրության մեջ օգտագործելով նպաստել տնտեսական աճին: Բացի այդ, արտահանման աճը, ի վերջո կարող է հանգեցնել միջազգային հանրության կողմից տվյալ երկրի ճանաչման, ինչն էլ կարող է նպաստել հետագայում օտարերկրյա ներդրումների ծավալների մեծացման, հետևաբար և՛ տնտեսական աճի:

Սակայն, այս ամենով հանդերձ, արտահանումը տարբեր երկրներում տարբեր չափով է նպաստում տնտեսական աճին: Տվյալ հետազոտության ներքո մենք կփորձենք բացահայտել Հայաստանում տնտեսական աճին արտահանման ազդեցության գործակիցը: Այդ նպատակով կառուցենք արտահանումից և ՕՈՒՆ-ից ՀՆԱ-ի կախվածությունը բնութագրող մոդել:

Մոդելների կառուցման նպատակով օգտագործել ենք 1998-2010թթ. ՀՀ եռամսյակային տվյալները. ՀՆԱ՝ շուկայական գներով, արտահայտված ԱՄՆ դոլարով (մոդելում՝ GDP), արտահանում՝ շուկայական գներով (մոդելում՝ Export), արտահայտված ԱՄՆ դոլարով,

ՕՈՒՆ՝ արտահայտված ԱՄՆ դոլարով (մոդելում՝ FDI): Տվյալների աղբյուրը ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներն են: Դիտարկումների թիվը կազմել է 52, ընտրվել է գծային մոդել: Մոդելի գնահատումը կատարվել է փոքրագույն քառակուսիների մեթոդով (ՓԶՄ)՝ օգտագործելով Eviews 4 ծրագրային փաթեթը:

Ստուգենք օգտագործվող ժամանակային շարքերի ստացիոնարությունը¹, օգտագործելով Ընդլայնված՝ Դիկկի-Ֆուլլերի Միավոր արմատ թեստը՝ աղյուսակ 1, 2., 3.

Աղյուսակ 1

Ընդլայնված՝ Դիկկի-Ֆուլլերի Միավոր արմատ թեստի արդյունքները ՀՆԱ-ի համար

ADF Test Statistic	-2.2	1% Critical Value*	-3.57
		5% Critical Value	-2.9
		10% Critical Value	-2.6
* MacKinnon critical values for rejection of hypothesis of a unit root.			

Աղյուսակ 1-ից երևում է, որ ADF Test Statistic > 5% Critical Value, ինչը վկայում է, որ ՀՆԱ-ի ժամանակային շարքը ստացիոնար չէ (շարքը համարվում է ստացիոնար, երբ ADF Test Statistic < 5% Critical Value):

Աղյուսակ 2

Ընդլայնված՝ Դիկկի-Ֆուլլերի Միավոր արմատ թեստի արդյունքները արտահանման համար

ADF Test Statistic	-1.1	1% Critical Value*	-3.57
		5% Critical Value	-2.92
		10% Critical Value	-2.6
- Տնտեսության յուրաքանչյուր ճյուղի «կանաչացումը» պետք է ընթանա խելամիտ եղանակներով: Այս տեսակետը խիստ կարևորվում է առավելապես ՀՀ-ում, որը հարուստ չէ բնական ռեսուրսներով: Այս մոտեցումը պահանջում է լայնածավալ գիտահետազոտական աշխատանքների իրականացում, այսինքն՝ յուրաքանչյուր ոլորտի «կանաչացումից» առաջ հարկավոր է փնտրել հնարավոր բարձր արդյունավետություն ունեցող մոտեցումները, որոնց կիրառումը կնպաստի տնտեսական նոր համակարգին անցումը կատարել առավել նպատակահարմար ձևով: Այս տեսանկյունից կարևորվում է հանրապետությունում, առավել ևս ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, կանաչ տնտեսության էությունը և դրան անցման հիմնախնդիրների լուսաբանման օպտիմալ մոտեցումների մշակմանը նպատակաուղղված գիտագործնական հետազոտությունների

լայն դաշտի ձևավորումը և ստացված լուծումների իրականացման կոնկրետ ծրագրերի մշակման և իրագործման խնդիրների հետազոտությունը:

- Տնտեսության «կանաչացման» գործում առանձնակի ուշադրության է արժանի փոքր և միջին ձեռնարկատիրության ներգրավվածությունը: ՀՀ-ում, մասնավորապես, նպատակահարմար կլինի Grameen Energy ընկերության փորձի օգտագործումը¹:

Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, աղքատության հաղթահարման, հասարակության միջին խավի ձևավորման և երկրում տնտեսական, սոցիալական ու քաղաքական կայունության ապահովման գործում, ՀՀ կառավարությունը ՓՄՁ ոլորտի զարգացումը համարում է երկրի տնտեսության գերակա ուղղություններից մեկը: Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ու ռազմավարությունը պետք է ուղղված լինի ՀՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման գործընթացներում ՓՄՁ սուբյեկտների գործունեության և զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովմանը և արդյունքում՝ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և երկրում հասարակության միջին խավի ձևավորմանը²:

Հետագա հետազոտությունների և հրապարակվելիք հոդվածների միջոցով հնարավոր կլինի ավելի մանրամասնորեն անդրադառնալ վերը նշված խնդիրներից յուրաքանչյուրի լուծմանը, սակայն արդեն այս մակարդակում պարզ է դառնում, որ ՀՀ տնտեսության համար նոր տնտեսական համակարգին անցումով բացվում են տնտեսական աճի ապահովման լրացուցիչ աղբյուրներ:

Տարբեր ոլորտների «կանաչացումը» ենթադրում է այդ ոլորտներից յուրաքանչյուրի առանձնահատկությունների հաշվառմամբ մշակված և կոնկրետ հիմնավորված միջոցառումների իրականացում:

Հայաստանի Հանրապետության տարածքի բնական պայմանները և ռեսուրսները հանդիսանում են նրա տնտեսության զարգացման կարևորագույն նախադրյալը, որի ճիշտ և խնայողաբար օգտագործումից է կախված հանրապետության բնակչության նյութական պահանջարկի բավարարումը և բարեկեցիկ կյանքի ապահովումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության անցումը կենտրոնացված պլանավորումից դեպի շուկայական տնտեսական հարաբերություններ կոչված էր կարճատև, միջին և երկարատև հեռանկարում բարելավել երկրի ոչ միայն տնտեսական վիճակը, այլև նպաստել նրա բնական միջավայրի էկոլոգիական իրավիճակի կայունացմանը:

Շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունն իր հերթին ենթադրում է տնտեսական գործունեության ակտիվության նոր որակի ապահովում, նպաստում է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, մասնավորապես, էկոլոգիական ուղղվածության ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը: Այսպիսով՝ հաստատվում է այն դրույթը, որ տնտեսության զարգացումն անհրաժեշտ պայման է գերակա էկոլոգիական հիմնահարցերի լուծման համար: Ավելին, էկոլոգիական բարեկեցությունը գտնվում է փոխկապակցվածության մեջ տնտեսական զարգացվածության հետ, և նրանց համաչափության ապահովումը ներկայումս գնահատվում է որպես հասարակական բարեկեցության կարևոր երաշխիք³:

Բնապահպանության հիմնախնդիրները սերտորեն կապված են սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման հետ, որը պայմանավորված է մարդու և բնական միջավայրի փոխներգործության գործընթացների ուժեղացմամբ, այդ գործընթացների ազդեցության բարձրացմամբ մարդու, ինչպես նաև նրա կենցաղի վրա:

Մարդկանց տնտեսական վարքագծի վերլուծությունը՝ «homo economicus» մոդելի շրջանակներում, ենթադրում է «մարդու ռացիոնալ վարքագիծ» կանխադրույթի օգտագործումը:

¹ Եղիազարյան Բ., Բաբայան Է., Թերզյան Հ., «Կանաչ տնտեսության» անցման անհրաժեշտությունը և արդյունավետ ուղիների մշակման ու իրագործման հիմնախնդիրները // «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածու-1(13)), -Եր., «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2012:

² Ղազարյան Ս.Գ., Ղազարյան Է.Ս., Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում // գրքույկ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2012, 176 էջ:

³ Բաբայան Է.Ս., Բնօգտագործման և բնապահպանության տնտեսագիտական հիմնախնդիրները ՀՀ-ում // գրքույկ, «ԱԱԱԱ» հրատ., Եր., 2006, 76 էջ:

Դրա հիմքում ընկած է օգտագործվող սահմանափակ ռեսուրսների և հնարավորությունների պայմաններում նվազագույն ծախսերով նպատակադրված արդյունք ստանալու ձգտումը:

Բնական ռեսուրսների օգտագործման առանձնահատկություններից է դրանց սահմանափակությունը և վատնողական օգտագործման անթույլատրելիությունը, որն էլ ծնում է տնտեսական և էկոլոգիական շահերի հակասություն: Ընդհանրապես շրջակա միջավայրի պահպանումը կարող է ապահովվել տարբեր տնտեսական սուբյեկտների փոխներգործության համակարգի առկայության դեպքում, որն օգտագործում է էկոհամակարգի բազմաթիվ տարրեր: Սակայն, իրականում տնտեսական-էկոլոգիական շահերի ձևավորման ընթացքում լուրջ դժվարություններ են առաջանում: Այստեղ առաջացող հակասությունների լուծման համար կարևոր նշանակություն ունեն բուն տնտեսական շահերի համակարգում առաջացող հակասությունները, իսկ դրանց լուծումն իր հերթին պայմանավորված է սեփականատիրական հարաբերություններով:

Չնայած բնապահպանական հիմնախնդիրները ներազդում են մարդկանց առողջության վրա, այնուամենայնիվ, առողջապահական առաջնային հիմնախնդիրները Հայաստանում, ինչպես և աշխարհի շատ մասերում, պայմանավորված են տնտեսական գործոններով և ապրելակերպով: Առողջապահական հիմնախնդիրները սերտորեն առնչվում են սոցիալ-տնտեսական իրադրության հետ և հաճախ դժվար է ապրելակերպով պայմանավորված հիմնախնդիրները տարանջատել բնապահպան (ինչպիսիք են հողի և ջրի աղտոտումը) հիմնախնդիրներից, որոնց նկատմամբ առավել զգայուն են բնակչության ցածր և միջին վաստակ ունեցող խավերը:

Բնօգտագործման տնտեսական արդյունավետության բարձրացումը ներկայումս կապում են բնառեսուրսային համակարգի գնահատման հետ, ընդգրկելով նշված գործընթացը երկրի ազգային հարստության գնահատման համակարգում: Մասնագետները գտնում են, որ անհրաժեշտ է հատակեցնել տնտեսական զարգացման ցուցանիշները՝ իրականացնելով «կանաչ» հաշվեգրման հայեցակարգը, որն ուղղված է էկոլոգիական գործոնների հաշվառմանը՝ ազգային հաշիվներում: Այս մոտեցումն անմիջապես գրավեց մասնագետների ուշադրությունը՝ սկիզբ դնելով մի շարք գիտական ուսումնասիրությունների կատարմանը, որոնք հիմնավորում էին էկոլոգատնտեսական հաշվառման համակարգի ներդրման նպատակահարմարությունը: Անկախ ստացված եզրակացություններից, նման համակարգի ներդրումը պետք է կատարվի բավականին «զուսպ»՝ հաշվի առնելով տվյալ երկրի իրավական, գիտամեթոդական, նյութատեխնիկական և տեղեկատվական ապահովվածության աստիճանը:

Գիտական հետազոտություններից հայտնի է, որ բնօգտագործման արդյունավետության բարձրացման նախնական պայման է հանդիսանում տնտեսական զարգացման էկոլոգիզացիան և դրա հետ կապված էկոլոգիական քաղաքականության իրականացումը: Այստեղ առավել կարևոր է բնօգտագործման և բնապահպանության հիմնախնդիրների փոխներգործության օպտիմալացումը, որը հաճախ անտեսվում է ինչպես էկոլոգների, այնպես էլ տնտեսագետների կողմից: *Բնօգտագործման տնտեսական արդյունավետությունը կբարձրանա, եթե գիտակա- նորեն հիմնավորված լինեն արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները և հատակ գործի հարկադրման ու հսկողության պետական համակարգը:* Բնօգտագործման տնտեսական արդյունավետության հիմնախնդիրները բավականին լավ ուսումնասիրված են մի շարք գիտական աշխատանքներում, որոնք հնարավորություն են տալիս գնահատել կապիտալ ներդրումների, այդ թվում նաև բնապահպանական միջոցառումների տնտեսական արդյունավետությունը: Հիմնական գիտամեթոդական մոտեցումներն ընդգրկում են ծախսերի և արդյունավետության հարաբերակցության վերլուծությունը և գնահատումը: Այս վերլուծու- թյունը հնարավորություն ստեղծեց բաժանել տնտեսական գործունեության նախագծերն ըստ արդյունավետության չափանիշների: Սակայն, նախագծերի նման դասակարգումը դեռևս հարցի լուծում չէր, քանի որ «ծախսեր-օգուտներ» վերլուծությունը կատարվում էր առանց ժամանակի գործոնի հաշվառման: Բացի դա, տարբեր գիտամեթոդական մոտեցումներում հաճախ նկատվում էր ծախսեր, օգուտներ, եկամուտներ, արդյունավետություն (արդյունք- արդյունավետություն) հասկացությունների ոչ միանշանակ սահմանմանը, ինչը ոչ ճշգրիտ հաշվարկների և ժամանակի գործոնի տնտեսման պատճառով հիմք էր ստեղծում թերի՝ գիտականորեն ոչ լիովին հիմնավորված տնտեսական որոշումների ընդունմանը:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ բնապահպանական միջոցառումների արդյունավետության բարձրացման կարևոր երաշխիք է հանդիսանում բնապահպանական ծախսերի ֆինանսավորման օպտիմալացումը տնտեսական մեխանիզմների ներդրմամբ և ծախսերի բաշխման գիտականորեն հիմնավորված մոտեցումների օգտագործման հետ: Նման մոտեցումը նախադրյալներ է ստեղծում բնապահպանական ծախսերի ու բնապահպանական միջոցառումների համատեղելիության և գործողությունների հստակեցման համար:

Կենսատրոսի, նրա կենսագործունեությունն ապահովող էկոհամակարգերի և բնական պաշարների պահպանումը ժամանակակից գլոբալ հիմնահարցերից է: Պատահական չէ, որ էկոլոգիապես անվտանգ տնտեսական զարգացումը ներկայումս զարգացած և զարգացող երկրների պետական քաղաքականության առաջնայնություններից է: Այնուհաստ է նաև, որ շրջակա միջավայրի պահպանության և տնտեսական զարգացման հիմնահարցերն անբաժանելի են և ունեն ռազմավարական նշանակություն գլոբալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում¹: Հաշվի պետք է առնվի նաև, որ շրջակա միջավայրի պահպանության հիմնահարցերի արդյունավետ լուծման գործում նախապատվությունը տրվում է պետական մասնակցությանը և էկոլոգիական անվտանգության ապահովմանը:

Շրջակա միջավայրի վիճակի կանխատեսումը սերտորեն առնչվում է սոցիալական զարգացման բաժնին: Դա պայմանավորված է մարդու և բնական միջավայրի փոխհարաբերության ամրապնդմամբ, այդ գործընթացների ազդեցության բարձրացմամբ մարդու օրգանիզմի, նրա կյանքի որակի և ապրելակերպի վրա: Կանխատեսումը պայմանավորված է շրջակա միջավայրի պահպանման, վերականգնման և բարելավման անհրաժեշտությամբ, որը ենթադրում է հիմնախնդրի նկատմամբ լուրջ ուշադրություն կառավարման բոլոր մակարդակներում, այդ թվում նաև տեղական ինքնակառավարման մարմիններում:

Առաջարկվող լուծումների հիմնավորման գործընթացը իրականացվելու է հասարակության բազմակողմանի գիտակցված գործունեության հիմնարար սկզբունքի հենքի վրա: Այս տեսանկյունից կարևոր ենք համարում էկոնոմետրիկ մոդելավորման և օպտիմիզացիոն մեթոդների կիրառությունը: Էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ հնարավոր կլինի ստանալ կախվածություններ այնպիսի ցուցանիշների միջև, որոնք բնութագրում են շրջակա միջավայրը բնորոշող գործոնները, իսկ օպտիմիզացիոն մեթոդների օգնությամբ կարելի է ուսումնասիրել շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից տնտեսական զարգացման օպտիմալ ուղիները: Նշված խնդիրների տեսանկյունից ՀՀ պայմանների համար նշանակալի հետաքրքրություն է ներկայացնում էներգիայի օպտիմալ օգտագործման այնպիսի մոդելի մշակումը, որում հաշվի են առնվելու նաև շրջակա միջավայրի խնդիրները: Նմանատիպ խնդիրների մշակմանն է վերաբերում մաթեմատիկական ծրագրավորման ամենադինամիկ տեսություններից մեկը՝ օպտիմալ կառավարման խնդիրների հետազոտության և բարձր հիմնավորվածությամբ լուծումների ստացման տեսանկյունից²: Վերջինը մեծ կիրառություն է ստացել աշխարհում՝ տարբեր խնդիրների լուծումներ մոդելավորելիս:

Կարծում ենք, առավել հիմնավոր կարող է համարվել էկոնոմետրիկ մեթոդների և օպտիմալ կառավարման խնդիրների համատեղ դիտարկումը, ինչը թույլ կտա ստանալ դիտարկվող խնդիրների առավել հիմնավորված լուծումներ: Այս տեսանկյունից առաջարկվում է դիտարկել մի խնդրի օրինակ, որը վերաբերում է ՀՀ էներգետիկ ոլորտին և վերջինիս հետ կապված շրջակա միջավայրի խնդիրներին ու պահպանությանը: Այդ խնդիրը ոչ միայն կիրառելի է էներգետիկայի ոլորտում, այլ համապատասխան փոփոխականների և սահմանափակումների փոփոխությունների արդյունքում իր օգտագործումը կարող է գտնել նաև տնտեսության այլ ճյուղերում: Խնդրի համառոտ նկարագիրը ներկայացնում ենք ստորև.

Նշանակենք $E = E(t)$ – ով որոշակի տեսակի էներգիայի ծավալը, $V = V(t)$ – ով այդ էներգիայի ծախսը, իսկ $P = P(t)$ – ով աղտոտվածության մեծությունը ժամանակի t պահին,

¹ Лукьянченков Н.Н., Потравный И.М. Экономика и организация природопользования –М.: Тройка, 2000, -456с. Экология третьего тысячелетия // Экономика и жизнь. Московский выпуск. – 1993. -№1, с.2-10.

² Ногин В.Д. Введение в оптимальное управление. Учебно-методическое пособие.-СПб:Изд-во “Ютас”,2008г.,стр-29-90.

որտեղ $t = \overline{1992, 2011}$: Այսինքն՝ առաջարկվող մոդելը ուսումնասիրվում է 1992-2011թթ. կտրվածքով:

Էներգիայի օգտագործումը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի աղտոտվածության, այդ պարագայում, եթե ընդունենք, որ աղտոտվածության արագությունը ուղիղ համեմատական է էներգիայի ծախսի արագությանը, ապա կունենանք.

$$\frac{dP}{dt} = \alpha V, \alpha > 0 \quad (1)$$

որտեղ՝ $\frac{dP}{dt}$ -ն աղտոտվածության արագությունն է, α -ն պարամետր է:

Ը-ով նշանակենք այն գործունեության մակարդակը, որն ուղղված է շրջակա միջավայրի պահպանությանը: Այդ մակարդակը ուղիղ համեմատականորեն կարող է իջեցնել աղտոտվածությունը, ինչը կարելի է ներկայացնել հետևյալ հավասարմամբ.

$$\frac{dP}{dt} = -\beta A, \beta > 0 \quad (2)$$

որտեղ՝ β -ն պարամետր է:

Պարզ է, որ հնարավոր է ինքնամաքրման գործընթացների առկայություն, որի արդյունքում աղտոտվածությունը նվազում է էքսպոնենցիալ ձևով, այդ փաստը կարելի է տալ ստորև բերված բանաձևի միջոցով.

$$\frac{dP}{dt} = -\delta P, \delta > 0 \quad (3)$$

որտեղ՝ δ - ն պարամետր է:

Համադրելով (1), (2) և (3) բանաձևերը՝ կունենանք հետևյալ ամբողջական հավասարումը.

$$\frac{dP}{dt} = \alpha V - \beta A - \delta P, \quad \alpha > 0, \beta > 0, \delta > 0 \quad (4)$$

Իրականացնելիք միջոցառումները, կապված շրջակա միջավայրի պահպանության հետ, կարող են ևս օգտագործել որոշակի ծավալի էներգիա, որը կարելի է արտահայտել ստորև ներկայացված հավասարման օգնությամբ.

$$\frac{dE}{dt} = -V - A \quad (5)$$

որտեղ՝ $\frac{dE}{dt}$ -ն էներգիայի ծավալների փոփոխությունն է:

Որպես կառավարվող փոփոխականներ նպատակահարմար է ընդունել V -ն և A -ն: Իսկ, որպես իրավիճակային փոփոխականներ՝ P -ն և E -ն: Վերջիններիս նաև անվանում են ֆազային փոփոխականներ, որոնք նկարագրում են դիտարվող համակարգը (էներգետիկ):

Խնդիրը ամբողջական ներկայացնելու նպատակով ներմուծենք հասարակական բարեկեցության ֆունկցիան՝ $U = U(C(V), P)$, որը կախված է մի կողմից էներգիայի օգտագործումից ստացվող օգուտներից, իսկ մյուս կողմից աղտոտվածության մեծությունից: Հասարակական բարեկեցության ֆունկցիան օժտված է որոշակի մաթեմատիկական հատկություններով.

$$U'_c > 0, U'_p < 0, U''_{pp} < 0, U''_{cc} < 0,$$

որտեղ՝ U'_c, U''_{cc} -ն բարեկեցության ֆունկցիայի առաջին և երկրորդ կարգի ածանցյալներն են ըստ $C(V)$ -ի, որն իր հերթին ցույց է տալիս այն դրական արդյունքը, որը հնարավոր է ստանալ էներգիայի օգտագործմամբ: $U'_p < 0, U''_{pp} < 0$ -ն բարեկեցության ֆունկցիայի առաջին և երկրորդ կարգի ածանցյալներն են ըստ աղտոտման մակարդակի:

Տնտեսության կառավարման որակը առաջարկվում է գնահատել հետևյալ ինտեգրալային ֆունկցիայի օգնությամբ.

$$\int_{1992}^{2011} U(C(V(t)), P(t)) dt$$

Ինտեգրալային ֆունկցիան իրենից ներկայացնում է դիտարկվող տարիների բարեկեցությունների ընդհանուր գումարը: Պահանջվում է որպեսզի այն լինի առավելագույնը, նշված սահմանափակումների պայմաններում:

Այսպիսով, ստանում ենք կառավարման խնդիր երկու ֆազային և կառավարվող փոփոխականներով, որը կարելի է ներկայացնել հետևյալ ընդհանուր տեսքով.

$$\int_{1992}^{2011} U(C(V(t)), P(t)) dt \rightarrow \max \quad (6)$$

$$\begin{cases} \frac{dP}{dt} = \alpha V - \beta A - \delta P \\ \frac{dE}{dt} = -V - A \end{cases} \quad (7)$$

$$P(1992) = P_0 > 0, P(2011) \geq 0 \quad (8)$$

$$E(1992) = E_0 > 0, E(2011) \geq 0 \quad (9)$$

$$V(t) > 0, 0 \leq A(t) \leq \bar{A}, t = \overline{1992, 2011} \quad (10)$$

որտեղ՝ $P(1992) = P_0, E(1992) = E_0$ -ն համապատասխան փոփոխականների սկզբնական արժեքներն են, որոնք համապատասխանում են դիտարկվող ժամանակահատվածի սկզբին: Էներգիայի ծախսի արագությունը՝ V -ն, պետք է լինի դրական, իսկ A մեծությունը բացի՝ դրական լինելուց, պետք է չանցնի որոշակի անցումային մակարդակից՝ \bar{A} , որի առկայությունը պայմանավորված է իրական տնտեսական հնարավորություններով:

Լուծելով (6)-(10) օպտիմալ կառավարման խնդիրը՝ ստանում ենք հնարավոր լուծումներ կախված α, β, δ պարամետրերից: Այդ պարամետրերը գնահատելու նպատակով առաջարկվում է (4) հավասարման համապատասխան ձևափոխման միջոցով ստանալ էկոնոմետրիկ մոդել:

Տնտեսագիտությունում ընդունված է հետևյալ առնչությունը.

$$\frac{dP}{dt} \sim P(t) - P(t-1) \quad (11)$$

որտեղ՝ $P(t-1)$ -ը աղտոտվածության մակարդակն է ժամանակի $t-1$ -րդ պահին: Օգտագործելով (11) առնչությունը և (4) մոդելը՝ կունենանք հետևյալ հավասարումը.

$$P(t) - P(t-1) = \alpha V - \beta A - \delta P(t) \quad (12)$$

(12) հավասարման միջոցով կարելի է գրել ստորև ներկայացված շեղումներով էկոնոմետրիկ մոդելը.

$$p(t) = c_1 v(t) + c_2 a(t) + c_3 p(t-1) + \varepsilon(t), \quad (13)$$

որտեղ՝

$p(t) = P(t) - \bar{P}, v(t) = V(t) - \bar{V}, a(t) = A(t) - \bar{A}$ -երը $P(t), V(t)$ և $A(t)$ համապատասխան փոփոխականների շեղումներն են վերջիններիս ընտրանքի միջիններից:

$c_1 = \frac{\alpha}{1+\delta}, c_2 = -\frac{\beta}{1+\delta}, c_3 = \frac{1}{1+\delta}$ - մոդելի անհայտ պարամետրերն են,

$\varepsilon(t)$ - ն մոդելի սխալն է ժամանակի t պահին,

Այսպիսով, գնահատելով առաջարկվող (13) մոդելը, կստանանք անհայտ պարամետրերի գնահատականները, որոնց միջոցով այնուհետև հնարավոր կլինի ներկայացնել խնդրի լուծման վերջնական արդյունքները: Վերջիններս ցույց են տալիս թե դիտարկվող ժամանակահատվածում ինչպես կարելի է ստանալ բարեկեցության առավելագույն մակարդակ՝ կառավարելով էներգիայի սպառման ծավալները, իսկ իրականացվող բնապահպանական միջոցառումների որոշակի մեծության դեպքում պահպանել աղտոտվածության մակարդակ, որն ավելին չէ, քան վերջինիս նախորդ ժամանակների մեծությունը:

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՏԻՄ-ԵՐԻՆ**

Երկրում ժողովրդավարական կառավարման համակարգի հիմնումը հետապնդում է այնպիսի համամարդկային արժեքների ձևավորում և զարգացում, ինչպիսիք են բնակչության առաջընթացի, նրանց ազատության ու արժանապատվության ապահովումը, ժողովրդավարության ընդլայնումն ու խորոցումը: Այդ խնդիրների լուծման լավագույն ճանապարհը ժողովրդավարական կարևորագույն ինստիտուտների ուժեղացումն է, որոնց շարքում իր ուրույն և առաջնահերթ նշանակություն ունեցողներից է հավասարակշռված համակարգի առկայությունը՝ հիմնված իշխանությունների տարանջատման վրա: Գործնականում ասվածը վերաբերում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի միջև գործառույթների վերաբաշխմանը, պետական լիազորությունների ապակենտրոնացմանը՝ բավարար և անհրաժեշտ պայմաններ ստեղծելով հանրային կառավարման գործում տեղական ինքնակառավարման մարմինների տեղն ու ակտիվ դերակատարումն ապահովելու նպատակով:

Տեղական ինքնակառավարումը ի գորու է ծառայել ժողովրդին, եթե նրա հիմնարար սկզբունքների շրջանակներում առաջացած ՏԻՄ-երի իրավասությունները և լիազորությունները ներդաշնակ են ժողովրդավարական սկզբունքներին: Արևմտյան զարգացած և անցումային երկրների ապակենտրոնացման փորձը վկայում է, որ այդպիսի սկզբունքներ գործում են միայն ժողովրդավարական ճանապարհով ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգում¹:

Ժողովրդավարական երկրներում տեղական ինքնակառավարման համակարգի տարբեր մոդելների ուսումնասիրության արդյունքները հանգում են այն կարծիքին, որ դրանք ձևավորվել են ելնելով մի շարք հիմնարար մոտեցումներից: Դրանցից կարևորագույնը կարելի է համարել պետական լիազորությունների մի մասի պարտադիր փոխանցումն այնպիսի համակարգին, որտեղ այդ լիազորությունների իրականացումը տնտեսապես և տարածական առումով ավելի արդյունավետ ու վերահսկելի է և ենթարկվում է օպերատիվ կառավարման: Իսկ որպես նշված մոտեցման արդարացում հարկ է ընդունել այն հանգամանքը, որ ՏԻՄ-երն առավել քաջատեղյակ են համայնքային խնդիրներին, ռեսուրսային ապահովվածությանը, բնակչության նախապատվություններին, արագ են արձագանքում ցանկացած փոփոխություններին ու միտումներին և իրենց կողմից վարվող քաղաքականության համար հաշվետու են համայնքի բնակչության առջև:

Գործնականում դա նշանակում է, որ կան մի շարք տեղական նշանակության խնդիրներ, որոնց լուծման իրավասությունները ցանկալի է փոխանցել դրանց ավելի լավատեղյակ, մարդկանց հոգսերին ավելի մոտ կանգնած, քաղաքական և տնտեսական համակարգերում որոշումների կայացման և համայնքի զարգացման քաղաքականության իրականացման ընթացքում բնակչության կողմից անմիջապես վերահսկվող և նրանց առջև հաշվետու իշխանության ապակենտրոնացված մարմիններին: Տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող շատ գիտնականների կողմից ապացուցված է, որ ապակենտրոնացումը բնութագրվում է որպես այնպիսի բազմաչափ երևույթ կամ գործընթաց, որի ստեղծման և գոյության նախապայմաններն են ապակենտրոնացված լիազորությունները, ինքնավարությունը և հաշվետվողականությունը:

Մյուս կողմից, կառավարման համակարգի ապակենտրոնացումն իր էությանը հանգում է պետական շինարարության և նոր հասարակարգի ձևավորման գործընթացների իրականացմանը և բարեփոխումներին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են քաղաքական համա-

¹ “Effektive Democratic Government at Local Regional Level”: Proceedings of the Second south Eastern Europe Regional Ministerial Conference, Skopje 8-9, November 2006, <http://Igi.osi.hu/publications/2007/374/SEE complete.pdf>.

կարգը, պետական կառավարումը և տնտեսությունը, ինչպես նաև շուկայական տնտեսության նոր ինստիտուտների ձևավորումը: Բարեփոխումների շարքում հատուկ տեղ է գրավում նաև տեղական ինքնակառավարման նոր համակարգի ներդրումը՝ տեղական մակարդակում կառավարման նոր մարմինների ստեղծման միջոցով, որոնք ունեն իրենց վերապահված լիազորությունների շրջանակը՝ համապատասխան ֆինանսական աղբյուրներով:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրմանը սկիզբ է դրվել ապակենտրոնացմանն ուղղված բարեփոխումներին: Անցած 15 տարիների փորձը թույլ է տալիս պնդել, որ այս համակարգն անցել է ինստիտուցիոնալ զարգացման փուլը, որն արտահայտված է տեղական ինքնակառավարման ոլորտի փոխհարաբերությունները կարգավորող մի շարք միջազգային պարտավորությունների, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ: Այդ ժամանակահատվածում մշակվեցին և ներդրվեցին տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մեխանիզմներ, իրականացվեցին նրանց կարողությունների ամրապնդմանն ուղղված միջոցառումներ, շարունակվեցին օրենսդրության արդիականացման և լրամշակման աշխատանքները, իսկ առանձին ոլորտներում գրանցվեցին նաև ապակենտրոնացման լուրջ արդյունքներ:

Սակայն տեղական ինքնակառավարման համակարգում առկա են մի շարք խնդիրներ ու բացթողումներ, որոնք անհրաժեշտ է լուծել համակարգի կայուն զարգացումն ապահովելու համար: Անցած բարեփոխումների ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ ապակենտրոնացման խորացմանն ուղղված գործընթացներում կան որոշ խոչընդոտներ: Մասնավորապես՝ Հայաստանում ՏԻՄ-երի սահմանումը տրված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում՝ ըստ որի նրա լիազորությունները բնութագրվում են որպես պետության կողմից պատվիրակված և սեփական լիազորություններ¹: Դրանք էլ իրենց հերթին՝ ելնելով տեղական ինքնակառավարման մակարդակում լիազորությունների իրականացման խնդրից, կարող են բաժանվել պարտադիրի և կամավորի: Սեփական լիազորությունները ֆինանսավորվում են տեղական բյուջեի միջոցների հաշվին՝ օրենքով կամ կառավարության կողմից սահմանված կարգով, մինչդեռ մինչ այժմ ոչ դրանց ֆինանսավորման միասնական կարգը, և ոչ էլ իրականացման պայմաններն ու չափանիշները դեռևս հստակեցված չեն: Այդ է պատճառներից մեկը, որ երբեմն կամ պարբերաբար առաջանում են անկանոն ֆինանսավորման երևույթներ, իսկ առանձին դեպքերում արձանագրվում են լիազորությունների իրական ծավալների և ֆինանսական ապահովվածության միջև խզումներ:

Ի տարբերություն Հայաստանի, Ռուսաստանի Դաշնությունում այդ հարցերը որոշակիորեն կարգավորված են, որը թույլ է տալիս պատկերացում կազմել տարբեր բնագավառներում կատարված ծախսերի հասցեականության մասին: Այսպես, Ռուսաստանում ՏԻՄ-երի պատվիրակված լիազորությունները կազմում են ծախսերի (լիազորությունների) ընդհանուր ծավալի զգալի մասը ոչ միայն իրենց նշանակությամբ (մասնավորապես՝ ուսուցիչների աշխատավարձը), այլև ֆինանսավորման բացարձակ թվերով (այն կազմում է լիազորությունների ավելի քան 30 %-ը): Ուստի, պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման դեպքում դրանց իրականացման հստակ չափորոշիչների և նորմատիվների սահմանման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

Պատվիրակված լիազորությունների առավելություններն են՝

- ռացիոնալ և արդյունավետ որոշումների կայացումը ՏԻՄ-երի կողմից.
- որոշումների կայացման ճկունության ապահովումը.
- որոշումների կայացման ընթացքում ինքնուրույնության և նախաձեռնության դրսևորումը.
- որոշումների կայացման ունակությունների զարգացումը:

Կառավարման ապակենտրոնացումն ուղղորդվում է մի շարք բարեփոխումներով, որոնք գլխավորապես իրականացվում են երեք հիմնական ուղղություններով, դրանք են՝ տեղական ինքնակառավարումը, ժողովրդավարացումը և բյուջետավարումը:

Ապակենտրոնացման շնորհիվ ձևավորվում են հանրային կառավարման և բյուջետային համակարգերը, հստակեցվում են փոխհարաբերությունները և լիազորությունների բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև: Ապակենտրոնացման գործընթացը և ՏԻՄ-երի

¹ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10:

ինքնուրույնությունը դրսևորվում է ապակենտրոնացման վարչական, քաղաքական, տնտեսական և հարկաբյուջետային ձևերում: Վարչական ապակենտրոնացումը նախատեսում է պետական գործառնությունների որոշ մասի իրականացման իրավասության ձեռքբերում ՏԻՄ-երի կողմից:

Ինչ վերաբերում է քաղաքական ապակենտրոնացմանը, ապա այն ենթադրում է համայնքի բյուջետավարման, ֆինանսական կառավարման, ինչպես նաև համայնքի զարգացմանը և հարկային քաղաքականությանն առնչվող որոշումների ընդունման լիազորությունների փոխանցում ՏԻՄ-երին:

Տնտեսական ապակենտրոնացման արդյունքում ՏԻՄ-երը ձեռք են բերում համայնքային տնտեսության կառավարման և համապատասխան որոշումների կայացման իրավասություններ: Հայտնի է, որ համայնքների տնտեսական գործունեության իրականացման հիմքը համայնքի սեփականությունն է: Ապակենտրոնացման գործընթացի կարևորագույն քայլերից մեկն էլ հենց պետական սեփականության որոշակի հատվածի փոխանցումն է համայնքներին, որի հիմնական նպատակն է անմիջապես տեղերում դրանց կառավարման գործառնությունների կազմակերպումն ու առավել արդյունավետ իրականացումը:

Չնսենացնելով կառավարման բոլոր ոլորտներում իրականացվող ազատականացման գործընթացի դերը երկրի ժողովրդավարության հաստատման գործում, պետք է ընդունել հարկաբյուջետային բնագավառի բարեփոխումների բացառիկ նշանակությունը երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացումն ապահովելու խնդրում: Հետևաբար, առանձնակի ուշադրության է արժանի հարկաբյուջետային ապակենտրոնացումը, որն ապահովում է սեփական միջոցների ձևավորման և օգտագործման իրավասության ձեռքբերման երաշխիքները: Այն ենթադրում է պետական և տեղական ֆինանսների տարանջատում, դրանց կառավարման գործում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների հստակ սահմանում, տեղական ֆինանսների ձևավորման և օգտագործման լիազորությունների փոխանցում ՏԻՄ-երին: Պետք է հիշատակել նաև, որ համայնքների ֆինանսաբյուջետային ինքնուրույնության երաշխիքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև ժողովրդավարացման ճանապարհին զգալի հաջողությունների հասած երկրների փորձը, հարկ է փաստել, որ լիարժեք ապակենտրոնացումը և գործընթացից առավելագույն օգուտի ակնկալիքի արդարացումը հնարավոր է միայն ապակենտրոնացման բոլոր ձևերի միաժամանակյա և համընթաց դրսևորման պայմաններում:

Տեղական ինքնակառավարման համակարգի կայացումը մեծապես պայմանավորված է հարկաբյուջետային ապակենտրոնացման գործընթացի ձեռքբերումներով կամ գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծումով: Հարկաբյուջետային ապակենտրոնացման աստիճանով են որոշվում ՏԻՄ-երի ֆինանսական ինքնուրույնության և անկախության սահմանները և, ընդհանուր առմամբ՝ համայնքային ծառայությունների մատուցման ֆինանսական ապահովվածության շրջանակները և մակարդակը: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երի լիազորությունների ֆինանսավորման ապահովման միջոցը համայնքի բյուջեն է, որը բյուջետային համակարգի անբաժան և ինքնուրույն օղակն է:

Հարկաբյուջետային ապակենտրոնացումը հետապնդում է հստակ և տնտեսապես հիմնավորված նպատակներ: Այս գործընթացը պետք է միտված լինի ֆինանսական ոլորտում ՏԻՄ-երի դերի բարձրացմանը և ինքնուրույն ու սեփական պատասխանատվությամբ գործելու իրավունքի վերապահմանը: Այս տեսանկյունից պետք է արձանագրել, որ իրականում տեղական ինքնակառավարման անկախությանը բնորոշ են որոշակի սահմանափակումներ՝ կապված ՏԻՄ-երի իրավասությունների շրջանակների սահմանման, իշխանության պետական մարմինների կողմից ՏԻՄ-երի գործունեության վերահսկողության իրականացման և միջամտության, սոցիալ-տնտեսական և քաղաքական բնույթի տարբեր գործոնների առկայության հետ:

Ապակենտրոնացման, այդ թվում՝ հարկաբյուջետային ապակենտրոնացման գործընթացները հանրապետությունում մեկնարկել են 1996 թվականին: Սակայն նոր ձևավորված ՏԻՄ-երը սկզբնական շրջանում հասկանալի պատճառներով չէին կարող իրականացնել տեղական ինքնակառավարման համակարգի առջև օրենսդրությամբ ամրագրված գործա-

ռույթները, մասնավորապես՝ տեղական բյուջեների ամրակցված հողի հարկի և գույքահարկի հավաքագրումը: ՏԻՄ-երի իրավասությունների շրջանակներն այս ուղղությամբ ընդլայնվել են 2003 թվականից հետո՝ 2004 թվականից որպես գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառող մարմիններ ճանաչվեցին նախ Երևանի թաղային համայնքները, իսկ 2005 թվականից սկսած՝ նաև քաղաքային համայնքները: Իսկ ՏԻՄ-երը ճանաչվեցին որպես հարկային մարմինների հետ հողի հարկի վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշվառող մարմիններ 2007 թվականի երկրորդ կիսամյակից սկսած՝ ՀՀ կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունումից հետո¹:

Սակայն նշված որոշումների կիրարկման պրակտիկան ցույց տվեց, որ ցանկալի արդյունքներ ձեռք չբերվեցին, քանի որ հարկերի հաշվառման և գանձման լիազորությունների ապակենտրոնացումը տարածվեց միայն խոշոր՝ հիմնականում Երևանի թաղային և առանձին խոշոր քաղաքային և գյուղական համայնքների վրա: Դա հիմնականում պայմանավորված էր անհրաժեշտ հնարավորությունների, նյութատեխնիկական բազայի և համապատասխան կադրերի բացակայությամբ: Հարկազանձման և վարչարարական լիազորությունների ապակենտրոնացման արդյունավետությունը զգալի չափով կախված է նաև ըստ հարկերի տեսակների՝ դրանց գանձման գործառույթն իրականացնող իշխանությունների մարմինների ճիշտ ընտրության հանգամանքից:

Արևմտյան անցումային երկրներում ապակենտրոնացման գործընթացները և կառուցվածքային բարեփոխումներն ընթանում են երկրում ժողովրդավարության ամրապնդման և տեղական իշխանությունների դերի ու պատասխանատվության աստիճանական բարձրացման ուղիով: Այն երկրներում, որտեղ տեղական իշխանությունները նպաստում են հանրության հետ կապերի զարգացմանը և դրսևորում են հանրության պահանջներին, համայնքի իրավիճակային փոփոխություններին արագ արձագանքելու ու իրենց գործունեությունը դեպի հասարակական շահերը նպատակաուղղելու պատրաստակամություն, տեղական ժողովրդավարությունը, որպես կանոն, ունենում է ավելի ամուր հիմքեր և հետագա զարգացման հեռանկարներ²:

Հանդիսանալով կառավարման ինքնուրույն և ժողովրդին մոտ կանգնած իշխանության օղակ, ՏԻՄ-երի մշտական հոգաժողության առարկան պետք է լինեն նախ և առաջ այնպիսի հարցերը, որոնք փոխկապակցված են համայնքի զարգացման և ժողովրդի կենսապահովման հիմնախնդիրների հետ:

Ապակենտրոնացումը կարող է արդարացված համարվել այն դեպքում, երբ ՏԻՄ-երին փոխանցված լիազորությունների ֆինանսավորման անհրաժեշտ մակարդակը համապատասխանում է համայնքների ֆինանսական ինքնուրույնության և կարողությունների մակարդակին: Սակայն վերջին տարիներին հանրապետությանը բնորոշ է համայնքների լիազորությունների թերի ֆինանսավորման խնդիրների առկայությունը, որը հանգեցնում է լիազորությունների անհամաչափ բաշխվածությանը:

Ապակենտրոնացման և լիազորությունների աստիճանական փոխանցման սցենարի հաջող զարգացումները մեծապես պայմանավորված են այնպիսի առանցքային նշանակություն ունեցող խնդրի լուծմամբ, որը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ ապակենտրոնացվող լիազորությունների ծավալը չպետք է գերազանցի դրանց իրականացմանն ուղղվող ֆինանսական միջոցները: Նշվածը հատկապես արդիական է ոչ այնքան ապակենտրոնացման սկզբնական փուլին, երբ ֆինանսական ապահովվածության հարցում հաճախ կարող են առաջանալ անկայունության երևույթներ, այլ դրան հաջորդող փուլերին, որոնց ընթացքում ստեղծվում են նախադրյալներ տեղական ինքնակառավարման համակարգի կայացման և համայնքների բարեկեցության բարձրացման հիմնախնդիրների հաջող լուծման համար:

Անկախ ապակենտրոնացման փորձից և արդյունքներից՝ բոլոր երկրներում ՏԻՄ-երի համար գերագույնն ու ամենաէականը եղել և մնում է համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ցանկալի տեմպերի ապահովումը և ՏԻՄ-երին վստահության քվե տված մարդ-

¹ ՀՀ կառավարության 10.03.2003 թվականի «Հողի հարկի մասին» և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 192-Ն որոշում:

² “Public Perception of Local Governments”, Edited by P. Swianiewicz, Local Government and Public Service Reform Initiative, Open Society Institute-Budapest, OSI/LGI, 2001, p. 240.

կանց կենսամակարդակի հետևողականորեն բարձրացումը, որին մեր կարծիքով, հնարավոր չէ հասնել տարերայնորեն ձևավորվող և իրականացվող գործողություններով: Դա է պատճառը, որ իշխանության բոլոր մակարդակներում անվերապահորեն ընդունվել է նշված խնդիրների լուծման ծրագրավորման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը:

ԱՐՄԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Մ Գ Ա Ա Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԶԵՎՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԻՅՈՒՄ

Հայաստանի բոլոր համայնքներն ունեն սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր՝ անկախ բնակչության թվաքանակից, տարածքի մեծությունից և նրա ֆինանսական հնարավորություններից: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նման ծրագրերը համայնքի քառամյա զարգացման ծրագրի տեսքով մշակվում են համայնքի ղեկավարի կողմից և ներկայացվում նորընտիր ավագանու հաստատմանը¹: Ինչ վերաբերում է այդ ծրագրերի բովանդակությանը, ապա գործող օրենսդրությամբ սահմանված չեն որևէ պահանջներ, որոնք թույլ կտան գնահատել ծրագրային դրույթների համապատասխանությունը բնակչության պահանջմունքներին և կենսական շահերին, նախանշված միջոցառումների ռեսուրսային ապահովվածության մակարդակը և, ի վերջո, դրանց իրագործելիության աստիճանը:

Այդ է պատճառը, որ համայնքների քառամյա զարգացման ծրագրերը որոշ դեպքերում հնարավոր չէ օբյեկտիվորեն դիտարկել որպես պլանավորման հաջող մշակված փաստաթուղթ: Հաճախ՝ մասնավոր փոքրաթիվ համայնքներում, որտեղ աշխատակազմը հնարավորություն չի տալիս ունենալ համապատասխան մասնագետներ, զարգացման ծրագիրը կազմվում է որպես ձևական և ղեկավարտիվ ցանկությունների համախումբ, որը ներկայացվում է իբրև քառամյա ծրագիր: Թեև հիշատակված օրենքով ամրագրված է ավագանու կողմից ծրագրում փոփոխությունների կատարման իրավասությունը, սակայն գործնականում տեղական ինքնակառավարման մարմինների ծրագրերը սահմանված ժամկետում անփոփոխ գոյատևելուց հետո, հաջորդ չորս տարիների համար գրեթե նույն տեսքով ընդունվում են որպես նոր զարգացման ծրագիր:

Այդ երևույթը մասամբ համայնքների մասին համապարփակ տեղեկատվական բազաների բացակայության և դրանք հավաքելու դժվարության արդյունք է, մինչդեռ տեղեկատվական բանկը տեղական ինքնակառավարման մարմիններին կարող է ծառայել հեռանկարային և ընթացիկ նպատակների համադրման, ռազմավարական և ընթացիկ պլանավորման կազմակերպման, համայնքային քաղաքականության մշակման ու վերահսկողության, ըստ իրավիճակի՝ որոշումների վերանայման ու ռեսուրսների վերաբաշխման, բյուջեի տարբերակների կազմման, կատարված աշխատանքների արդյունավետության գնահատման համար: Ի դեպ, Հայաստանում տեղական ինքնակառավարման մակարդակով իրականացվող բյուջետային քաղաքականությունը որոշակի ընդհանրություններ ունի մի շարք զարգացած երկրների համապատասխան քաղաքականության հետ, որոնք վերաբերում են ոչ միայն տեղական բյուջեների ձևավորման աղբյուր հանդիսացող եկամտահարկերին, դրանց կառուցվածքին, ծախսային ուղղություններին ու ծախսման կարգին, այլև ընդհանուր առմամբ տեղական բյուջեների ձևավորման հիմնական սկզբունքներին²:

Բյուջետային գործընթացին վերաբերող օրենսդրական դաշտը հանրապետությունում բավականաչափ հստակ է սահմանում ինչպես գործողություններն ու ժամկետները, այնպես

¹ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 53:

² Վ. Հարությունյան, Ա. Թամազյան, Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2008, էջ 190:

ել գործընթացի մասնակիցներին: Սակայն փոքր համայնքներում տարբեր պատճառներով դեռևս չեն իրականացվում պահանջվող անհրաժեշտ քայլերից շատերը, այն է՝ գործընթացի կազմակերպման նախապատրաստում, ակնկալվող եկամուտների աղբյուրների և ծավալների որոշում, նախատեսվող ծախսերի հիմնական ուղղությունների ձևավորում, բյուջեի քննարկում: Վերջինիս շնորհիվ է, որ իրականացվում է ֆինանսական հնարավորությունների և հայտերի համատեղելիության ստուգում, բյուջեի վերջնական նախագծի կազմում, հրապարակայնության ապահովում և հաստատում, բյուջեի կատարում, վերջինիս վերահսկում և գնահատում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքի ղեկավարը տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս պետք է հաշվի առնի համայնքի բնակչության կենսական շահերը, համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, ինչպես նաև առկա ռեսուրսները¹: Նույնիսկ այն պայմաններում, երբ ավագանին, որպես կանոն, անվերապահորեն ընդունում է համայնքի ղեկավարի յուրաքանչյուր առաջարկություն, կարելի է արձանագրել բյուջեների եկամտային և ծախսային հոդվածների չհիմնավորված ուռճացումներ կամ նվազեցումներ՝ համայնքի ղեկավարի կողմից ինքնուրույնաբար կատարվող վերաբաշխումների ծավալների և չափաքանակների ավելացման, ինչպես նաև բյուջեում չհիմնավորված, քառամյա ծրագրով չնախատեսված ծախսերի ներառման կամ մուտքերի գծով ցուցանիշների արհեստականորեն պակասեցման նպատակով, որը հանգեցնում է բյուջեի իրատեսականության մակարդակի նվազեցմանը:

Տարբեր միջազգային և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների՝ մասնավորապես՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս ձևավորել կարծիք այն մասին, որ համայնքների բնակչության միայն մի փոքր հատվածն է տեղյակ ոչ միայն տեղական բյուջեից, այլև քառամյա զարգացման ծրագրերից²: Ուստի, համայնքների բնակչությունը պատշաճ կերպով իրազեկված չէ իր համայնքի զարգացման հեռանկարների մասին, մարդիկ չգիտեն, թե իրենց վստահության քվեն ստացած տեղական ինքնակառավարման մարմիններն ինչպես են իրագործելու նախընտրական խոստումները կամ ծախսելու բյուջետային միջոցները: Յաճախ իրազեկությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ այս կարգի տեղեկությունները բանավոր են ներկայացվում: Հիշյալ փաստաթղթերից լավատեղյակ բնակչության մեծ մասն ավագանու անդամների ընկերները կամ բարեկամներն են, իսկ բնակչության խիստ սահմանափակ մասն է, որ կարող է որպես տեղեկատվության աղբյուր նշել հեռուստատեսությունը, տեղական մամուլի միջոցները և ռադիոն:

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին բնակչության իրազեկվածության բարձրացման լավագույն միջոց կարող է ծառայել նրա մասնակցությունը այդպիսի ծրագրերի մշակմանը և քննարկմանը: Թեև ՀՀ օրենսդրությամբ լիովին հստակեցված չեն հասարակության մասնակցության ձևերը ծրագրերի և բյուջեների կազմման գործընթացին, սակայն չկան նաև բացառումներ մասնակցության որոշ ձևերի մասով:

Այսուհանդերձ, համայնքի զարգացման ծրագրերի և բյուջեների քննարկման հանրային լսումներին բնակչության մասնակցությունը աստիճանաբար ակտիվանում է: Նշենք, սակայն, որ այս գործընթացների հիմնական խթանիչները միջազգային կառույցներն են: Մասնավորապես, 2008 թվականին Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի աջակցությամբ իրականացված «Տեղյակ լինելու իրավունք» ծրագրի³ շրջանակներում թվով 4 քաղաքային (Արարատ, Իջևան, Կապան և Բյուրեղավան) և 6 գյուղական (Աղավնաձոր, Լճաշեն, Արենի, Գետափ, Ջրաշեն, Նոր Գյուղ) համայնքներում տեղադրվել են թվով 46 տեղեկատվական ցուցատախտակներ⁴, համայնքի բյուջեի, բյուջեի կատարման մասին հաշվետվությունների, ավագանու նիստերի և նրա գործունեությանը վերաբերող այլ կարևոր տեղեկատվությունը հասարակությանը հասու դարձնելու նպատակով: Սակայն արդյունք-

¹ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 53:

² Աղբյուրը՝ www.region.am, Ամփոփ տեղեկատվություն հանրապետության համայնքներում առկա հանրային իրազեկման միջոցների վերաբերյալ, 2008 թ.:

³ Ծրագիրը սկսվել է 2007 թ.:

⁴ Աղբյուրը՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ:

ները գոհացուցիչ չէին, քանի որ մի շարք դեպքերում այդ ցուցատախտակները չօգտագործվեցին ըստ նպատակի¹:

Նմանատիպ ծրագրեր իրականացվում են նաև USAID-ի, Oxfam բրիտանական կազմակերպության հայկական գրասենյակի, GTZ-ի և շատ այլ միջազգային կառույցների կողմից: Ընդ որում, նրանց փորձագետների կողմից իրականացված մի շարք հետազոտությունների ամփոփ արդյունքները հնարավորություն են տալիս պարզելու, թե որքանով և որ աղբյուրներից է բնակչությունը տեղյակ տեղական իշխանությունների որոշումներին և մասնակցում են արդյոք մարդիկ ավագանու նիստերին և տեղական իշխանությունների կողմից կազմակերպվող հանրային լսումներին: Եվ եթե ցածր է մարդկանց ակտիվությունը նշված հարցերում, ապա կարևոր է պարզել դրա հիմնական պատճառները:

ՀՀ-ում տեղական բյուջեները պետք է ձևավորվեն օրենսդրությամբ սահմանված սկզբունքների հիման վրա, մինչդեռ կատարված դիտարկումները դեռևս թույլ չեն տալիս պնդել, որ այդ սկզբունքներն անվերապահորեն կիրառվում են: Թերևս բացառության կարգով կարելի է նշել բյուջեի հաշվեկշռվածության սկզբունքը, որն ընկած է բոլոր բյուջեների ձևավորման հիմքում և պայմանավորված է իշխանության հանրապետական մարմինների կողմից պարտադիր և հստակ վերահսկողության իրականացմամբ:

Ի տարբերություն տարեկան բյուջեների, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված և համայնքի բնակչության կենսական շահերից բխող այս կամ այն հիմնախնդրի լուծման համար պահանջվող ֆինանսական միջոցները չեն պլանավորվում: Դա բացատրվում է ընտրությունների ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր չմշակելու և չներկայացնելու հանգամանքով, որն ունի օբյեկտիվ պատճառներ: Նախ, համայնքի բնակչության շրջանում չի ձևավորվում նման ծրագրերի նկատմամբ անհրաժեշտ պահանջարկ, իսկ իշխանության մարմինները, իրենց հերթին, բավարար միջոցներ չեն ձեռնարկում վերջինս ձևավորելու ու իրագործման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար:

Այսպիսով, ՀՀ բնակչության շրջանում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի նկատմամբ բավարար պահանջարկի ձևավորումը կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների առաջնահերթ խնդիրն է, թեև քիչ կարևոր չէ նաև արդեն ընտրված թաղապետերին և համայնքապետերին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրել պարտավորություն՝ կապված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատման նպատակով ներկայացնելու հետ: Սակայն տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե արդեն հայտնի այն դրույթին, որ ծրագիրը պետք է հաստատվի համայնքի ավագանու կողմից, այլ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը նպատակահարմար է ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

Գտնում ենք, որ այն հնարավորություն կստեղծի ամբողջացնել ոչ միայն համայնքների և մարզերի զարգացման, այլև հանրապետական նշանակության խնդիրները, որոնք կընկնեն Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման քառամյա ծրագրի հիմքում: Փաստորեն, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերի մշակման աշխատանքները մարզերի և հանրապետության համար կարող են արդյունավետ ընթանալ, եթե դրանք համընկնում են հանրապետության պետական բյուջեի մշակման գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական և մարզերի զարգացման ծրագրերի մշակման ժամկետների հետ:

Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը՝ հանդիսանալով համայնքի հիմնախնդիրների լուծումն արտացոլող ամբողջական փաստաթուղթ, ենթակա է հրապարակման: Սրա արդյունքում համայնքի բնակիչները ճշգրիտ պատկերացում կկազմեն համայնքի առկա հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն կունենան արտահայտել իրենց վերաբերմունքը տվյալ հարցի շուրջ:

Հայտնի է, որ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեների կազմման և հաստատման գործառույթներն ու գործընթացները, ինչպես նաև դրանց մասնակիցները տարբեր են: Այսպես, համայնքների տարեկան բյուջեները արտացոլում

¹ Աղբյուրը՝ <http://www.foi.am/am/rcontent/16/1449>:

են համայնքի կարիքներից և շահերից բխող խնդիրների լուծման ֆինանսական ապահովվածության հիմնական ցուցանիշները և հաստատվում են համայնքի ավագանիների կողմից, իսկ պետական բյուջեն՝ ՀՀ ազգային ժողովի կողմից: Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը հաստատվում են առանձին դեպքերում և կոնկրետ համայնքների կողմից՝ առանց ծրագրային խնդիրների լուծման համար պահանջվող ֆինանսավորման ծավալների պլանավորման:

Ընդ որում, հանրապետությունում գործող կարգը պահանջում է, որ համայնքի ղեկավարն ամեն տարի հերթական պլանային տարվա բյուջեի նախագիծը մշակելիս դրա հիմքում դնի համայնքի զարգացման քառամյա ծրագրի մասը կազմող տարեկան զարգացման ծրագիրը: Այս պահանջը կատարվում է հետևյալ կերպ. արդեն կազմված ծրագիրը նորից չի վերանայվում, այլ ելնելով նախորդ տարվա կատարման արդյունքներից ճշտվում է միայն պլանային բյուջետային տարվա բյուջետային ծրագիրը: Սա նշանակում է, որ համայնքում քառամյա ծրագրերը կազմվելու են ոչ թե ընդամենը մեկ անգամ չորս տարվա կտրվածքով, այլ ամեն տարի հաջորդ չորս տարիների համար՝ առանձնացնելով առաջին տարվա առաջադրանքը:

Այդ մոտեցումը ռացիոնալ է այն տեսանկյունից, որ ուշադրության կենտրոն է մղվում տարեկան զարգացման ծրագիրը, և բոլոր ջանքերն ուղղվում են դրա հիմնավորված տարբերակի մշակմանը: Պլանավորման նման կիրառումը օգտակար է ինչպես գործող տեղական ինքնակառավարման մարմիններին՝ խնդիրները ժամկետի մեջ ճիշտ տեսնելու և լուծելու առումով, այնպես էլ նրանց հաջորդներին, որոնք դատարկ տեղից չեն սկսելու իրենց աշխատանքները:

Բացի նշվածից, համայնքների բյուջեները հաճախ կազմվում և համայնքի ավագանու քննարկմանն ու հաստատմանն են ներկայացվում հանրապետական բյուջեից կատարվող դոտացիոն հատկացումների ծավալները ճշտելուց հետո՝ համայնքների բյուջեների հաշվեկշռվածությունն ապահովելու նպատակով: Դա ևս մեկ անգամ հաստատում է այն կարծիքը, որ համայնքների զարգացման ծրագրերի ֆինանսական ապահովվածության խնդիրները մեծապես կախված են հատկացվող դոտացիաներից, առանց որոնց համայնքի ֆինանսական միջոցները խիստ անբավարար են ծրագրային խնդիրների լուծման համար: Հետևաբար, ստեղծված իրավիճակում չի ապահովվում ոչ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի, ոչ էլ համայնքային բյուջեների ձևավորման հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Որպես բացառություն կարելի է նշել ընդամենը առանձին համայնքներ, որոնց եկամուտների և ծախսերի վերաբերյալ խոշորացված թվերը հրապարակվում են որոշ զանգվածային լրատվամիջոցների կողմից:

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքի շուրջ իրականացված բազմաթիվ հետազոտությունների արդյունքները վկայում են, որ Հայաստանի անկախության անցած տարիները եղել են համակարգի ձևավորման և կայացման, դրա հետագա կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման ժամանակահատված: Միաժամանակ, դեռևս հնարավոր չէ կատարված աշխատանքները բավարար համարել, քանի որ հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը պայմանավորող շատ գործոններ ուղղակիորեն կապված են տարածքային կառավարման գործում գոյություն ունեցող հիմնախնդիրների, մասնավորապես՝ համայնքների անհամաչափ զարգացման հետ: Դա է պատճառը, որ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերի արագացման, այդ ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացման հարցերը մշտապես գտնվում են օրենսդիր և գործադիր մարմինների, հասարակական կազմակերպությունների և գիտական հետազոտություններ իրականացնողների ուշադրության ներքո: Ուստի, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ձևավորմանն առնչվող այնպիսի խնդիրն, ինչպիսին նշված ծրագրերի ձևավորման գործընթացի հրապարակայնությունն է, պետք է դիտարկել որպես դրանց մշակման և իրականացման գործում բնակչության ակտիվ մասնակցությունն ապահովելու գործուն միջոց:

ՆՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.

ԻՆՏԵՐՆԵՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման գործում բավականին բազմա-
կողմ մոտեցումներ են ցուցաբերվել աշխարհի տարբեր զարգացած երկրներում, քանի որ
հենց զարգացած երկրներում է կենտրոնացված էլեկտրոնային առևտրի հիմնական ծավալը:
Իրավիճակի լուծման ուղիների փնտրտուքի ժամանակ մասնագետները ստիպված էին ոչ
միայն պարզաբանել գործունեության նոր տեսակի հետ առաջ եկած հասկացությունների
սահմանման, այլև հարկման իրավական կարգավորման ավանդական մոտեցումների
վերանայման և փոփոխման անհրաժեշտությունը:

Էլեկտրոնային առևտրի միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ
տարբեր երկրներ դրա կարգավորման հիմքում փորձում են ամրագրել և ապա ողջ աշ-
խարհում տարածել հատկապես այնպիսի մոտեցումներ, որոնք ձեռնտու են սեփական
երկրին և առավելագույնս կնպաստեն երկրի գանձարան առավել մեծ ծավալով հարկային
եկամուտների ներհոսքին: Նման հնարավորությունը պայմանավորված է այն հանգամանքով,
որ ինտերնետ առևտրի մասնակիցները կարող են լինել տարբեր երկրների ռեզիդենտներ, և
շատ դժվար է միանշանակ պատասխանել այն հարցին, թե որ երկրում ինչպիսի հարկատե-
սակներ պետք է վճարվեն: Արդեն իսկ ակնհայտ է «ինտերնետ-արտահանողների» և
«ինտերնետ ներմուծողների» շահերի միջև հասունացող կոնֆլիկտը, որի պատճառը հար-
կային բազայի համար պայքարն է:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործունեության հարկման առանձ-
նահատկություններն առաջին հերթին կապված են գործարքի մասնակիցների շարքում
«արտասահմանյան գործունի» առկայության հետ, ինչը նշանակում է, որ միևնույն գործարքը
կարող է միաժամանակ ենթարկվել մի քանի պետությունների հարկային համակարգի
ազդեցությանը: Այդ պատճառով նման գործունեության հարկման մեխանիզմների մշակման
ժամանակ չափազանց կարևոր է տարբեր պետություններում նման մեխանիզմների փոխ-
համաձայնեցվածության խնդիրը:

1998թ. Օտտավայում տեղի ունեցած ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զար-
գացման կազմակերպություն) նախարարական կոնֆերանսի ժամանակ, ՏՀԶԿ հարկային
կոմիտեի «Էլեկտրոնային առևտուր. հարկման շրջանակային պայմաններ» զեկույցում¹
հայտարարվում է, որ պետությունները ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային
գործունեության հարկման ռազմավարության մշակման ժամանակ պետք է հիմնվեն
ձեռնարկատիրական գործունեության այլ տեսակների հարկման նույն սկզբունքների վրա:
Ներկայումս գրեթե բոլոր պետությունները ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի
վերաբերյալ հարկային վարչարարության մեխանիզմներ մշակելիս հիմնվում են հենց այս
մոտեցման վրա²:

Էլեկտրոնային առևտրի հարկման օրենսդրության կարևորագույն կենտրոններից մեկը
Եվրոմիությունն է: Ինչպես և ԱՄՆ-ում՝ ԵՄ երկրները բավականին վաղ գիտակցեցին
էլեկտրոնային առևտրի հարկման հնարավոր դժվարությունները, և արդեն 1995թ. սկսվում են
այս ոլորտի վերաբերյալ քննարկումները: Եվրոմիության անդամ երկրների հարկային
մարմինների հիմնական մտահոգությունը նոր տեխնոլոգիաների տված հնարավորություն-

¹ Electronic Commerce: Taxation Framework Conditions. The OECD Ministerial Conference Report. - OECD Committee on Fiscal Affairs. - 1998. - [http://www.oecd.org/pdf/MOOOO 15000/MOOO15517.pdf].

² Ильичев С.К. Особенности налогообложения в сфере электронной коммерции. М. : Маркет ДС, 2004. с 22.

ներն էին, որոնք հնարավորություն էին ստեղծում «թաքցնել» հարկման բազան: Այդ պատճառով ոլորտի կարգավորման առաջին նախաձեռնությունները բավականին խիստ էին, ընդհուպ մինչև տվյալների փոխանցման հարկման համակարգերի ներդրումը¹: Եվրոպական տեսակետից՝ այստեղ չէր կարող խոսք գնալ էլեկտրոնային առևտրի համար արտոնությունների սահմանման մասին²:

Սակայն նման հարկատեսակների ներդրման առաջարկները մերժվեցին, իսկ 1998թ. Օտտավայում ՏՀԶԿ հարկային կոմիտեի «Էլեկտրոնային առևտուր. հարկման շրջանակային պայմանները» զեկույցի հրապարակումից հետո³ ԵՄ անդամ երկրները համաձայնեցին ՏՀԶԿ տեսակետի հետ, որի համաձայն էլեկտրոնային առևտրի հարկումը պետք է իրականացնել նույն այն սկզբունքներով, որոնցով իրականացվում է այլ տեսակի ձեռնարկատիրական գործունեության հարկումը:

Մեր նախորդ հրապարակումներում անդրադարձել ենք էլեկտրոնային առևտրի հարկման ամերիկյան փորձին⁴: ԵՄ անդամ երկրների օրենսդրության «հարմարեցման» գործընթացը, ինչպես և ԱՄՆ-ում, սկսվեց անուղղակի հարկերից, այսինքն ավելացված արժեքի հարկից: Ի տարբերություն ԱՄՆ-ի, այստեղ դժվարություններն ավելի քիչ էին, որովհետև ԵՄ անդամ երկրների ԱԱՀ օրենսդրությունը հիմնականում միանման է, բացի հարկի դրույքաչափի մեծությունից:

Ավանդական առևտրի ժամանակ ԱԱՀ, ինչպես և ԱՄՆ-ի շրջանառության հարկը, պետք է հաշվարկվի և բյուջե փոխանցվի հարկային գործակալի, այսինքն վաճառողի կողմից, սակայն մատակարարներից ապրանքի ձեռքբերման ժամանակ վճարված ԱԱՀ-ն ենթակա է հաշվանցման: Արտասահմանից ներմուծման ժամանակ ներկրողը ԱԱՀ-ն վճարում է իր երկրում՝ հիմք ընդունելով ներմուծված ապրանքի մաքսային արժեքը: Արտահանման ժամանակ ԱԱՀ դրույքաչափը զրոյական է, իսկ արտահանողը իրավունք ունի փոխհատուցում ստանալ մատակարարներին վճարված ԱԱՀ-ի համար: Ընդ որում ապրանքները ԱԱՀ-ով հարկվում են գնորդի գտնվելու վայրով, իսկ ծառայությունները՝ վաճառողի գտնվելու վայրով:

Սակայն էլեկտրոնային առևտրի հարկման ժամանակ տարիներով փորձված այս հստակ համակարգը թույլ կողմեր ցույց տվեց: Խնդիրներն առաջին հերթին ի հայտ եկան վերջնական սպառողին ծառայություններ մատուցելու ժամանակ: Եվրոպական կազմակերպությունները, որոնք նման ծառայություններ էին մատուցում, ստիպված էին ինչպես ԵՄ տարածքում, այնպես էլ նրա տարածքից դուրս վաճառվող ծառայությունների համար ԱԱՀ հաշվարկել և վճարել, այն դեպքում, երբ նրանց արտասահմանյան մրցակիցները, որոնք նման ծառայություններ էին մատուցում ԵՄ ռեզիդենտներին, այդ հարկատեսակով չէին հարկվում:

Այս բացթողումը վերացնելու նպատակով 2002թ. մայիսի 7-ին ընդունվեց ԵՄ 2002/38/EC դիրեկտիվը⁵, համաձայն որի 2003թ. հուլիսի 1-ից բավականին փոփոխվեցին ԱԱՀ վճարման կանոնները: Հիմնական փոփոխությունն այն էր, որ «էլեկտրոնային ծառայությունները» և «էլեկտրոնային տեսքով առաքվող ապրանքները» ԱԱՀ-ով հարկվում են ըստ գնորդի գտնվելու վայրի: Միաժամանակ, եվրոպական վաճառողները, որոնք նման ծառայություններ են արտահանում ԵՄ սահմաններից դուրս, պարտավոր չեն ԱԱՀ վճարել, իսկ արտասահմանյան ընկերությունները, որոնք նման ծառայություններ են մատուցում ԵՄ ռեզիդենտներին, ընդհակառակը, պարտավոր են վճարել այդ հարկը: Այս դիրեկտիվով կարգավորված գործարքներն ու տնտեսաիրավական հետևանքները բերված են աղյուսակ 1-ում

¹ Building the European Information Society for Us All: First Reflections of the High Level Group of Experts: Interim Report, - Brussels, Belgium: European Commission, Directorate-General V for Employment, Industrial Relations and Social Affairs, - 1996, - [<http://meritbbs.unimaas.nl/publications/2-hleg.pdf>].

² Towards a European Research Area: Science, Technology and Innovation. Key Figures 2003-2004. - Luxembourg, 2003. p 48.

³ Electronic Commerce: Taxation Framework Conditions, The OECD Ministerial Conference Report, - 1998, - [<http://www.oecd.org/pdf/M000015000/M000015517.pdf>].

⁴ Խաչատրյան Ն.Կ., Էլեկտրոնային առևտրի հարկման ամերիկյան փորձը: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր). գիրք 2 / Պատ. Խմբագիր՝ Վ.Լ. Հարությունյան: - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 325-329:

⁵ Council Directive 2002/38/EC of May 7, 2002 amending and amending temporarily Directive 77/388/EEC as regards the value added tax arrangements applicable to radio and television broadcasting services and certain electronically supplied services. - [http://193.178.200.58/eservices_intemet/common/Directive_GB.pdf].

2002/38/EC դիրեկտիվի ընդունումից հետո ԱԱՀ վճարման սկզբունքները

Գնորդի կարգավիճակը	Գործարքի առարկան	Իրացման սխեման	ԱԱՀ վճարողը	ԱԱՀ վճարման տեղը	ԱԱՀ հաշվանցման իրավունք
Առևտրային կազմակերպություն	ապրանք և ծառայություն	Ներմուծում ԵՄ	Գնորդ	Գնորդի երկրում	Առկա է
	ապրանք	ԵՄ-ից արտահանում	Չի վճարվում	Չի վճարվում	Առկա է
	ծառայություն	ԵՄ-ից արտահանում	Չի վճարվում	Չի վճարվում	Առկա չէ
	ապրանք և ծառայություն	Վաճառք ԵՄ-ում	Վաճառող	Վաճառողի երկրում	Առկա է
Վերջնական սպառող	ապրանք	Ներմուծում ԵՄ	Գնորդ	Գնորդի երկրում	Առկա չէ
	ապրանք	ԵՄ-ից արտահանում	Չի վճարվում	Չի վճարվում	Առկա է
	ապրանք	Վաճառք ԵՄ-ում	Վաճառող	Վաճառողի երկրում	Առկա է
	ծառայություն	Ներմուծում ԵՄ	Վաճառող	Գնորդի երկրում	Առկա չէ
	ծառայություն	ԵՄ-ից արտահանում	Չի վճարվում	Չի վճարվում	Առկա չէ
	ծառայություն	Վաճառք ԵՄ-ում	Վաճառող	Վաճառողի երկրում	Առկա է

Դիրեկտիվը «Էլեկտրոնային ծառայության» և «Էլեկտրոնային տեսքով առաքվող ապրանքի» սահմանում չի տալիս, սակայն հավելվածում բերում է նման ապրանքների և ծառայությունների օրինակներ: Մասնավորապես, դրանցից են.

- Վեբ կայքերի պատրաստում, տեղակայում, ծրագրային ապահովման և մեքենասարքավորումների հեռակա կառավարում,
- ծրագրային ապահովման իրացում և թարմացում,
- գրաֆիկական պատկերների, տեքստերի և տեղեկատվության իրացում, ինչպես նաև տվյալների շտեմարանների մուտքի ապահովում,
- երաժշտական ստեղծագործությունների, ֆիլմերի և խաղերի իրացում, ինչպես նաև քաղաքական, մշակութային, սպորտային, գիտական կամ զվարճալի հաղորդումների դիտման տրամադրում,
- հեռակա կրթության մատուցում:

Բացի այդ, հավելվածը սահմանում է, որ գնորդի և վաճառողի կողմից գործարքի կնքման բանակցությունների վարման և գործարքի կնքման ժամանակ էլեկտրոնային հեռահաղորդակցության միջոցների օգտագործումը դեռևս բավարար հիմք չէ գործարքը էլեկտրոնային ծառայությունների շարքին դասելու համար:

Միևնույն ժամանակ ֆիզիկական ապրանքների էլեկտրոնային վաճառքը (գրքեր, CD-ձայնասկավառակներ, ձայնա-տեսաժապավեններ և այլ ֆիզիկական ապրանքներ), իրավաբանական և ֆինանսական խորհրդատվական, ինչպես նաև հեռակա դասավանդման ծառայությունների չեն ընկնում Դիրեկտիվի գործողության սահմաններում, քանի որ այդպիսի գործունեության «Էլեկտրոնային բաղադրիչը» ներկայացված է միայն հաղորդակցման միջոցով:

Ինչպես ցույց տվեց փորձը, էլեկտրոնային ծառայությունների նման սահմանումը խնդիրներ առաջացրեց այս կամ այն գործունեության տեսակը էլեկտրոնային ծառայությունների շարքին դասելու համար, այդ պատճառով 2003թ. հրապարակվեցին նոր մեկնաբանություններ, որոնք ավելի կոնկրետ չափորոշիչներ էին սահմանում ծառայությունների այս կամ այն տեսակը էլեկտրոնային հաղորդակցության միջոցով մատուցվողների շարքին դասելու

համար¹: Այսպես, նախ նման ծառայությունները պետք է մատուցվեն ինտերնետի կամ այլ համակարգչային ցանցերի միջոցով, և երկրորդ, իրենց բնույթով այդ ծառայությունները սերտորեն պետք է կապված լինեն տեղեկատվական տեխնոլոգիաների հետ, ինչը նշանակում է, որ առանց նման տեխնոլոգիաների դրանք գոյություն ունենալ չեն կարող: Հետևաբար, բոլոր տեղեկատվական ապրանքները, որոնք մատակարարվում են համակարգչային ցանցերի միջոցով, հանդես են գալիս որպես ծառայություններ, և ոչ թե ապրանքներ:

Այդպիսով, ԵՄ ռեզիդենտ հանդիսացող կազմակերպությունները էլեկտրոնային ծառայություններ մատուցելիս ԱԱՀ-ն վճարում են իրենց ռեզիդենտության երկրում՝ այդ երկրում գործող դրույքաչափով: Այս դեպքում ցածր ԱԱՀ դրույքաչափով ԵՄ անդամ երկրների ռեզիդենտ ընկերությունները բարձր դրույքաչափով երկրների վաճառողների նկատմամբ մրցակցային առավելություններ են ձեռք բերում: Օրինակ՝ Լյուքսեմբուրգից Շվեյցարիա ապրանքի վաճառքը կհարկվի 15% դրույքաչափով (ԱԱՀ-ի դրույքաչափը Լյուքսեմբուրգում), այլ ոչ թե 25% դրույքաչափով (ԱԱՀ-ի դրույքաչափը Շվեյցարիայում)²: «Սովորական» (ոչ էլեկտրոնային) ապրանքների առաքման դեպքում այդ առավելությունը կարող է հասցվել գրոյի՝ հաշվի առնելով զգալի տրանսպորտային ծախսերը:

Միևնույն ժամանակ, արտասահմանյան երկրների ռեզիդենտները ԵՄ ռեզիդենտներին վաճառք իրականացնելու համար պետք է հարկային հաշվառման կանգնեն ԵՄ անդամ ցանկացած երկրում, իսկ ԱԱՀ հաշվարկեն գնորդի ռեզիդենտության երկրում գործող դրույքաչափով: Այս դեպքում վաճառողի հաշվառման երկրի հարկային մարմինները հավաքագրում են հարկերը և ապա բաշխում գնորդների ռեզիդենտության երկրների միջև: Տրամաբանական է ենթադրել, ոչ եվրոպական վաճառող ընկերությունները կնախընտրեն չկանգնել հարկային հաշվառման ԵՄ որևէ երկրում, այլ ձևավորել դուստր ընկերություն ցածր հարկային դրույքաչափերով եվրոպական երկրում, օրինակ՝ Լյուքսեմբուրգում, որտեղ ԱԱՀ դրույքաչափը կազմում է 15%: Դա հնարավորություն կտա նրանց օգտագործել այդ երկրի ԱԱՀ դրույքաչափը ամբողջ ԵՄ տարածքում վաճառքների համար:

Բացի ԵՄ անդամ տարբեր երկրների մրցակցային անհավասար պայմաններից՝ ԵՄ գործող համակարգն այլ թերություններ էլ ունի: Օրինակ՝ իրական կյանքում վերահսկել արտասահմանյան վաճառողների կողմից հաշվառման կանգնելն ու ԱԱՀ վճարելը գործնականում եթե ոչ անհնար, ապա չափազանց բարդ է: Նշված օրինագծերի ընդունման հակառակորդները նշում էին, որ նման նորամուծություններից հետո բազմաթիվ խոշոր ինտերնետ խանութներ կլքեն եվրոպական շուկան, սակայն հետագա կյանքը ցույց տվեց, որ համենայն դեպս խոշոր առևտրային ընկերությունները բարեխղճորեն հաշվառման կանգնեցին և սկսեցին ԱԱՀ վճարել: Ամեն դեպքում, մանր առևտրային խանութների առումով խնդիրներն առկա են:

Մյուս թերություններից է այն, որ կապված որոշ երկրներում արտահանման ԱԱՀ-ով հարկման օրենսդրական պահանջի հետ, այդ երկրների ինտերնետ առևտրով զբաղվողները կրկնակի հարկման են ենթարկվում: Հարկ է նշել նաև, որ նոր օրենսդրությունում առկա է գնորդի ռեզիդենտության երկիրը պարզելու հստակ մեխանիզմների բացակայության խնդիր:

ԵՄ գործող հարկային համակարգի էլեկտրոնային առևտրին առնչվող մյուս կարևոր բաղադրիչները շահութահարկն ու եկամտահարկն են: ԵՄ հարկային համակարգի բնութագրիչներից մեկն այն է, որ գոյություն չունի միասնական դիրեկտիվ, որը կկարգավորի այս հարկատեսակների սկզբունքները, և յուրաքանչյուր պետություն ինքնուրույն է սահմանում նման կանոններ: Ինչպես և ԱՄՆ-ում, այստեղ ևս հարկման ենթակա է ամբողջ աշխարհում ստացված շահույթը, իսկ հարկման դրույքաչափը տարբեր երկրներում մեծ տարբերություններ ունի: Արտասահմանյան ընկերության մշտական ներկայացուցչությունը հարկվում է ճիշտ

¹ Electronically supplied services: a guide to interpretation. - 2003. - [http://customs.hmrc.gov.uk/channelsPortalWebApp/channelsPortalWebApp.portal?_nfpb=true&_pageLabel=pageOnlineService_ShowContent&id=HMCE_CL_000907&propertyType=document].

² Тедеев А.А., Правовые проблемы налогообложения в странах Европейского союза налогом на добавленную стоимость российских организаций — субъектов электронной внешнеэкономической деятельности // Налоги и налогообложение. 2004. № 12. с 46.

այնպես, ինչպես տեղական ընկերությունը, իսկ մշտական ներկայացուցչության սահմանման հարցում գրեթե բոլոր ԵՄ երկրները ընդունում են ՏՀԶԿ տեսակետը:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, ԱՄՆ-ը և ԵՄ-ն ի սկզբանե տարբեր խնդիրներ էին դրել էլեկտրոնային ձեռնարկատիրության հարկման ուղիների մշակման գործում: Եթե ԱՄՆ-ի մոտեցումն ուղղված էր այս ոլորտի համաշխարհային առաջատարի դիրքերը պահպանելուն, ապա ԵՄ հիմնական մտահոգությունը հարկման բազայի կրճատման դեմ պայքարն էր: Ամեն դեպքում, չնայած էլեկտրոնային առևտրի երկու կարևորագույն կենտրոնների հիմնական խնդիրների պայմաններում նրանք երկուսն էլ ընտրեցին ձեռնարկատիրության այս տեսակի հարկման չդիսկրիմինացման տարբերակը, որի հիմնական սկզբունքն այն էր, որ ձեռնարկատիրության այս տեսակը պետք է ունենա նույն հնարավորությունները, ինչ որ ձեռնարկատիրական գործունեության ավանդական եղանակները: Բացի այդ, երկու կենտրոններն էլ հիմնականում ընդունել են ՏՀԶԿ սկզբունքներն ու եկամուտների դասակարգման մոտեցումները, ինչպես նաև մշտական ներկայացուցչության սահմանման մոտեցումները:

Սակայն պետք չէ եզրակացնել, որ այս կենտրոնում ընթացող գործընթացները միանման են: Ամեն դեպքում, ԱՄՆ-ում առկա է անուղղակի հարկային օրենսդրության ըստ նահանգների խիստ տարբերակված համակարգեր, և ԱՄՆ-ի հիմնական խնդիրն այդ տարբերությունների վերացումն է: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ-ը մեծապես մտահոգված է երկրի ներսում կատարվող էլեկտրոնային գործարքների կարգավորման խնդիրներով, այն դեպքում, երբ ԵՄ մոտեցումներն ուղղված են բոլոր, այդ թվում արտասահմանյան առևտրային գործընկերների հետ հարաբերությունների կարգավորմանը:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման համընդհանուր հայեցակարգի հաստատումը լուրջ ազդեցություն կարող է ունենալ այն երկրների վրա, որոնք չունենալով ոլորտի համաշխարհային քաղաքականության վրա ազդելու հնարավորություն՝ ներգրավված են ինտերնետի միջոցով իրականացվող ձեռնարկատիրության ամենատարբեր ոլորտներում: Ավելին, նույնիսկ ոլորտի բավականին խոշոր խաղացողներն են դժգոհություն հայտնում հաստատված իրողությունների անընդունելիության և խաղի կանոնների փոփոխման անհրաժեշտության մասին, քանզի ազգային տնտեսությունները լուրջ եկամուտներ են կորցնում: Մասնավորապես՝ Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզին իր նախընտրական ելույթներում բազմիցս նշում է «Google Inc.» ընկերությանը Ֆրանսիայի տարածքում մատուցած ինտերնետ ծառայություններից, այդ թվում Ֆրանսիայի օգտատերերին ցուցադրած գովազդային վահանակներից հարկեր վճարելու խիստ անհրաժեշտության մասին: Բնականաբար, Հայաստանի տեսանկյունից նման մոտեցումը առավել շահեկան է, քանզի մեր երկիրը դեռևս հանդես է գալիս որպես «ինտերնետ ծառայություններ ներմուծող»: Այսինքն՝ ըստ ծառայություն ստացողի գտնվելու վայրի հարկման սկզբունքի ներդրումը լրացուցիչ հարկային եկամուտներ կարող է ապահովել պետական գանձարանին՝ առանց ազգային տնտեսությանը լրացուցիչ հարկային բեռ պարտադրելու:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«Էլեկտրոնային կառավարությունը» պետական իշխանության մարմինների գործունեության կազմակերպման նոր ձև է, որը տեղեկատվական-կոմունիկացիոն տեխնոլոգիաների շնորհիվ ապահովում է կազմակերպություններին և քաղաքացիներին մատուցվող պետական ծառայությունների օպերատիվության և հարմարավետության որակական նոր մակարդակ, ինչպես նաև ապահովում է տեղեկատվություն պետական մարմինների գործունեության արդյունքների մասին:

«Էլեկտրոնային կառավարություն» ստեղծել նեղ իմաստով նշանակում է պետական համակարգում ստեղծել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, որը հիմնադ կլինի ամբողջ երկրի մասշտաբով կառավարական բոլոր գործընթացների ավտոմատացման վրա, որի նպատակը կլինի պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և սոցիալական կոմունիկացիաների ծախսերի կրճատումը հասարակության յուրաքանչյուր անդամի համար¹:

Էլեկտրոնային կառավարման պատմության արմատները հասնում են մինչև 1970-ականները, սակայն իրական ուրվագծեր այն ստացավ միայն 2000-ականների սկզբներին: Դրա իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները ստեղծվեցին 1990-ականների առաջին կեսերին Համացանցի բուռն զարգացման և 1990-ականների երկրորդ կեսերին անհատ ձեռնարկատիրության նոր ոլորտների՝ էլեկտրոնային առևտրի և էլեկտրոնային բիզնեսի ստեղծման շնորհիվ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը պետական կառավարման համակարգերում մի շարք երկրներում իր սահուն ընթացքն էր ունենում արդեն 1990-ականներին, սակայն շուտով պարզվեց, որ էլեկտրոնային կառավարությունը ոչ թե նոր տեխնոլոգիա է, այլ մի ամբողջ հայեցակարգ, որը պահանջում է համակարգային վերափոխումներ և պետական կառավարման համակարգում նոր մոդելների ներդրում:

Էլեկտրոնային կառավարության ծրագրերի մշակողները հիմնականում հետապնդում էին նմանատիպ նպատակներ: Դրանք են.

1. պետական ծառայությունների կողմնորոշումը դեպի քաղաքացիների պահանջումները,
2. պետության և դրա ծառայությունների հասանելիության ապահովում,
3. պետական ծառայությունների հասանելիության մասով սոցիալական հավասարության իրագործում,
4. տեղեկատվության ավելի արդյունավետ օգտագործում,
5. էլեկտրոնային բիզնեսի զարգացում և շուկայական սկզբունքների հիման վրա նորարարությունների խթանում²:

Էլեկտրոնային կառավարությունը տեղեկատվական հասարակության կարևորագույն քաղաքացիներից է, անցումը որին սկսվեց տնտեսապես ավելի զարգացած երկրներում: Սակայն միջազգային հասարակությունում չկա համընդհանուր ընդունված ռազմավարական նպատակ: Առանձին երկրների քաղաքական էլիտաները տարբեր կերպ են պատկերացնում այն, ինչն էլ իր արտացոլումն է գտնում տարբեր նախագծերի մշակման մեջ:

Օրինակ, ԱՄՆ-ի համար հասարակությունը գլոբալացման գործընթացներն ավարտող մեխանիզմներն են, որի արդյունքը կլինի երկրագնդի մասշտաբով տնտեսական և քաղաքական իշխանությունների օրինականացումը, որը հիմնված կլինի ԱՄՆ-ի վերազգային կորպորացիաներում: Սրա հետ կապված ամերիկյան ծրագրերում ավելի շատ ուշադրություն է դարձվում էլեկտրոնային առևտրի զարգացմանը, ինչպես այլ երկրների և տարածաշրջան-

¹ Информационные технологии в государственном и муниципальном управлении: учебное пособие / М.А. Абросимова.- М.: КНОРУС, 2011.-256с. Стр. 38.

² Пронкин С. В., Петрунина О. Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие / С. В. Пронкин, О. Е. Петрунина. – 3-е изд., доп. И перераб. – М.: КДУ, 2007. – 496с. Стр. 459.

ների, այնպես էլ պետական և մասնավոր հատվածներում ամերիկյան նորարարությունների առաջխաղացմանը:

Եվրոպական Միության համար տեղեկատվական հասարակությունն առաջին հերթին Եվրոպայի բազմազգ հարստության պահպանման միջոց է: Այդ իսկ պատճառով էլ էլեկտրոնային կառավարությունների եվրոպական ծրագրերն ուղղված են անհատի խնդիրների լուծմանը և պետական ծառայությունների հասանելիության ապահովմանը բոլոր քաղաքացիների համար:

Ճապոնիայում էլեկտրոնային կառավարության կառուցումը նպատակ ունի ամրապնդել հասարակության տարբեր շերտերի միջև կապերը, որն ընկալվում է որպես միասնական կորպորացիա: Այդ իսկ պատճառով ճապոնական նախագծերը ենթադրում են պետության, հասարակության և բիզնեսի միջև հավասարակշռության հաստատում, ինչպես նաև միջազգային ասպարեզում երկրի մրցունակության բարձրացում:

Էլեկտրոնային կառավարության ընդհանուր հայեցակարգը, ինչպես նաև հիմնական սկզբունքները, ստացել են էլեկտրոնային կառավարման ճարտարապետություն անվանումը: Այն երկրներում, որտեղ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը պետական կառավարման մեջ ընթանում էր ավելի ակտիվորեն, ստեղծվեցին հատուկ ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու էին համապետական մակարդակում էլեկտրոնային կառավարման ճարտարապետության մշակման համար (Դաշնային ճարտարապետության մշակման նախագծի կառավարման գրասենյակը ԱՄՆ-ում` Federal Enterprise Architecture Project Management Office):

Այս մարմինների կողմից մշակված նախագծերն, իհարկե, ունեն տարբերություններ, սակայն, որպես կանոն, ունեն հետևյալ բաղադրիչները:

- Պետական գործառույթների ճարտարապետություն: Այս բաղադրիչը հարկավոր չէ ստեղծել 0-ից: Սակայն դրա ինտեգրումը «էլեկտրոնային կառավարման» ճարտարապետության մեջ պահանջում է դրա էլեկտրոնային վերակառուցում, ինչն իր արտացոլումն ստացավ պետական նոր կառավարման ոճով արված վարչական մի շարք բարեփոխումներում:
- Ծառայությունների ճարտարապետություն: Սա իր մեջ ներառում է գործառույթային մեխանիզմներ, որոնց օգնությամբ տեղի է ունենում պետական գործառույթների էլեկտրոնայնացումը` պորտալներ, սերվերներ, կիոսկներ և այլն:
- Տվյալների ճարտարապետություն: Սա իր մեջ ներառում է էլեկտրոնային փաստաթղթերի, բազաների կառավարման համակարգերի և այլնի ստանդարտների մշակում:
- Տեխնոլոգիական ճարտարապետություն: Մրա տակ հասկացվում է տեխնոլոգիական տարբեր ստանդարտների և արձանագրությունների, օրինակ, ծրագրային ապահովում, կոմունիկացիաներ և այլն: Այն երկրներում, որոնք առաջատար են նկարագրված հայեցակարգի իրագործման գործընթացում, արդեն մշակվել են ստանդարտների համակարգեր տեղեկատվական մոդելների տեսքով (SAGA` Գերմանիայում, e-GIF` Մեծ Բրիտանիայում, TRM` ԱՄՆ-ում):

Մեծ Բրիտանիայում մշակվել է էլեկտրոնային կառավարության ճարտարապետության մի հետաքրքիր մեթոդ, որի հիմնական բաղադրիչներն են.

1. Կառավարական պաշտպանված ինստիտուտներ, որը թույլ է տալիս պետական տարբեր մարմինների միջև իրականացնել փոխգործողություններ անվտանգ ռեժիմով:
2. Կառավարական կենտրոնական ukonline.gov.com կայքը, որը քաղաքացիներին ապահովում է մուտք դեպի պետական տեղեկատվություն և ծառայություններ: Պորտալի կառուցվածքը չի կրկնում պետական ապարատի կառուցվածքը` տեղեկատվությունն այնտեղ տեղակայված է փնտրման հարմարավետության սկզբունքով:
3. Կառավարական gateway.gov.com կայքը, որն իրենից ներկայացնում է մի բլոկ, որն իր մեջ միավորում է տեղեկատվական տարբեր համակարգեր և իրականացնում է փոխգործակցություն համակարգի մյուս երկու բաղադրատարրերի միջև: Մուտքն ունի հնարավորություն աստիճանաբար ավելացնել մատուցվող ծառայությունները և ապահովում է օգտվողների և պետական մարմինների միջև գործարքների անվտանգ իրականացում:

Պետական ապարատի աշխատակիցների աշխատանքը հեշտացնելու և օգնելու նպատակով թողարկվում են հատուկ ուղեցույցներ:

Էլեկտրոնային կառավարության մոդելը, որի վրա սկսեցին հիմնվել երկրների մեծամասնությունում դրա մշակողները, վերցված էր մենեջմենթից և ենթադրում էր սոցիալական տարբեր շերտերի ներկայացումը «սթեյքհոլդերների» խմբերի տեսքով, որոնց միջև փոխհարաբերությունները ներկայացվում էին բիզնեսում արդեն փորձարկված սխեմայով:

Ա. «Պետությունից պետություն» (government to government) կամ «e-վարչարարություն»: Այս սխեման նկարագրում է ներքին պետական-վարչական համակարգերի հատվածը: Երբեմն այն հասկացվում է ավելի լայն իմաստով, և այդ դեպքում սխեման բաղկացած է 2 մասից՝ ինքնին պետությունից պետություն հասկացությունը նկարագրում է միջկառավարական, միջպետական և միջշրջանային կապերը, մինչդեռ «պետությունից աշխատակից» (government to employee) իրենից ներկայացնում է պետական հատվածի ներքին գործընթացների հեշտացում և արդյունավետության բարձրացում:

Բ. «Պետությունից բիզնեսին» (government to business) կամ «e-հասարակություն»: Այս սխեման նկարագրում է ծառայությունների այն հատվածը, որը մատուցում է պետությունը բիզնեսին: Պետական նոր կառավարման բարեփոխողները այս հատվածը տեսնում էին ոչ միայն միակողմանի (government to business, բայց ոչ business to government), այլ նաև նախատեսում էին տարատեսակ գործընթացների արագացում, էժանացում և հեշտացում, որոնք ավելի անհրաժեշտ են պետությանը՝ ձեռնարկատիրական գործունեությունը վերահսկելու համար: Պետության և բիզնեսի փոխգործակցության ևս մեկ ձև դարձավ համացանցի միջոցով կատարվող գնումները:

Գ. «Պետությունից քաղաքացիներին» (government to citizen) կամ «e-քաղաքացիներ» և «e-ծառայություններ», որը նկարագրում է պետության և քաղաքացիների միջև փոխհարաբերությունները: Էլեկտրոնային կառավարության հայեցակարգը ենթադրում է պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների ոչ միայն արագացում և հեշտացում (նախորդ սխեմայի նման), այլև ժողովրդավարական գործընթացներում քաղաքացիների մասնակցության ընդլայնում¹:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետություն Էլեկտրոնային կառավարման նոր համակարգին, որն իրականացվում է Մալբերի (Mulberry) ծրագրով, պետք է նշենք, որ այն կոչված է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, և երաշխիք է թափանցիկ կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար: Անցումն Էլեկտրոնային կառավարման համակարգին ենթադրում է, որ պետական ծառայությունները կմատուցվեն համացանցի միջոցով: Դա նվազագույնի կհասցնի պետական ծառայողի և քաղաքացու շփումը և, ինչպես արդեն նշեցինք, էապես կկրճատի կոռուպցիոն ռիսկերը:

Այս համակարգի ներդրման գործընթացն արդեն 6 տարի է ինչ սկսվել է, այդ ժամանակահատվածում պետական գերատեսչությունների 4000 աշխատակիցների վերապատրաստումը և տեխնիկական ապահովումը, ինչպես նաև համընդհանուր ցանցային համակարգի ստեղծման աշխատանքները միասին արժեցել են շուրջ 700000 դոլարին համարժեք դրամ, ֆինանսական աջակցությունն իրականացրել է Համաշխարհային բանկը²:

Էլեկտրոնային կառավարման պետական համակարգի ներդրումը Հայաստանի կառավարության գերակա ուղղություններից է: Դեռ հինգ տարի առաջ երկրում համացանցի հասանելիությունը և արագությունները ցածր էին, գները՝ բարձր: Երրորդ օպերատորի դաշտ մտնելուց հետո («ԱրմենՏել» ՓԲԸ, «FiberNet», այնուհետև՝ GNCAIfa) իրավիճակը կտրուկ փոխվեց. մրցակցությունը մեծացավ, բոլոր երեք օպերատորները երկրով մեկ սկսեցին մատչելի ծառայություններ առաջարկել: 2011թ. երկրորդ կեսի դրությամբ հանրապետության 30 քաղաք ծածկված է օպտիկամանրաթելային համացանցով, մինչ այդ այն հասանելի էր 3-4 քաղաքների համար: Միաժամանակ ավելացավ լայնաշերտ համացանց օգտագործողների թիվը. 2008-ին՝ 30.000, 2009-ին՝ 70.000, 2010-ին՝ 173.000, իսկ 2011-ի երկրորդ եռամսյակում

¹ Пронкин С. В., Петрунина О. Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие / С. В. Пронкин, О. Е. Петрунина. – 3-е изд., доп. И перераб. – М.: КДУ, 2007. – 496с. Стр. 462.

² <http://www.mta.gov.am>

օգտագործողների թիվն արդեն 262.000 էր, կանխատեսվում էր՝ մինչև տարեվերջ 400.000 թիվն իրատեսական կլինի, ըստ էության, ամեն երկրորդ ընտանիք¹:

Կառավարության համար ստեղծվել է ներքին պաշտպանված ցանցի (VPN -Virtual Private Network) հիման վրա սեփական համակարգը, որը զարգանում է փուլ առ փուլ: Սկզբում միասնական համակարգին միացել էին միայն նախարարությունները, այնուհետև միացան 10 մարզպետարաններն ու մնացած գերատեսչությունները, պետտեղիստրի տարած-բային բոլոր կետերը: Միացման փուլում են սոցիալական ծառայությունների և ԶԱԿԳ ստորաբաժանումները:

Ներկայումս ավելի քան 40 գերատեսչություններ աշխատում են փաստաթղթաշրջանա-ռության միասնական համակարգով: Մուտքագրված յուրաքանչյուր փաստաթուղթ թվայնաց-վում է ընդհանուր բաժնում և միանգամից ուղարկվում արխիվ:

Դեռևս 2002թ. ընդունվել է «Էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքը: 1996թ.-ից ֆինանսական փոխանցումների համար կիրառվող էլեկտրոնային ստորագրությունները, բանկերից բացի, ոչ մի տեղ կիրառելի չէին: 2008թ. ստեղծվեց կենտրոն, որն սկսեց էլեկտրոնային ստորագրություն տրամադրել, և 2011թ. դրությամբ թողարկվել է ավելի քան 6500 ստորագրություն, որից 300-ը պատկանում է պետական պաշտոնյաներին, իսկ մնացածը՝ ձեռնարկությունների աշխատակիցներին, ովքեր հարկային հաշվետվություններ են ներկա-յացնում էլեկտրոնային տեսքով (e-filing): Էլեկտրոնային ստորագրության արժեքն առաջին տարվա համար 15.000 դրամ է, իսկ յուրաքանչյուր հաջորդ տարվա համար՝ 5.000 դրամ:

Այսօր բոլոր ընկերություններն ունեն հնարավորություն հարկային հաշվետվությունները ներկայացնել էլեկտրոնային տեսքով՝ առանց գրասենյակից դուրս գալու: Հարկային մարմին-ները ստեղծել են կայք, որն ընդունում է այդ հաշվետվությունները: 2011թ. տվյալներով 5400 ընկերություն հարկային հաշվետվություն ներկայացնում է էլեկտրոնային ճանապարհով²:

ՀՀ կառավարությունը ներդրել է լիցենզավորման տարբեր տեսակների համար հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգ: Հայտատուն պետք է միայն մեկ անգամ այցելի գերատեսչություն և ստանա լիցենզիա, իսկ եթե նա ունի էլեկտրոնային ստորագրություն, ապա էլեկտրոնային լիցենզիան կարող է ստանալ անձնական էլեկտրոնային փոստին՝ պետական մարմին ֆիզիկապես չայցելելով. այդ ֆայլը, օրենսդրության համաձայն, ունի իրավաբանական ուժ: Այս ձևաչափով լիցենզիաներ տրամադրում են պետական գրեթե բոլոր կառույցները, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի և ևս մի քանի լիցենզիաներ, որոնք վերաբերում են ատոմային էներգետիկայի, գենքի առևտրի ոլորտներին:

Կառավարության նախաձեռնությունների շարքում է Ազգային պատկերասրահի ֆոնդերի թվայնացումը, ինչպես նաև ոստիկանության հետ համատեղ ավտոտրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառումից հանելու համակարգի գործարկումը:

Պետք է նշել, որ Հայաստանն էլեկտրոնային կառավարման մակարդակով արդեն առաջ է անցել շատ երկրներից: Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային կառա-վարման ներդրման գործընթացը դեռ շարունակվում է: Ցանկանալով ՀՀ քաղաքացիներին տալ հնարավորություն ավելի մատչելի և արագ տեղեկատվություն ստանալու հնարավորություն՝ առաջարկում ենք օգտվել միջազգային փորձից և ստեղծել մեկ միասնական պետական տեղեկատվական կայք՝ զարգացնելով e-gov.am կայքը (վերցնել Մեծ Բրիտանիայի օրինակը): Կայքում տեղակայել ինչպես ՀՀ օրենքները, իրավական նորմերը, այնպես էլ ստեղծել հատուկ բաժին, որտեղ քաղաքացիները կկարողանան օն-line կարգով հղել իրենց հուզող հարցերը և որակավորված մասնագետների կողմից ստանալ պատասխան կարճ ժամկետներում (րոպե-ների ընթացքում): Կարծում ենք, որ մեր հասարակությունն ունի նման կայքի կարիքը, և այն կապահովի հետադարձ կապ: Կայքի աշխատանքը կլինի թափանցիկ և իր լուսն կունենա ժողովրդավարական հանրապետության կայացման գործընթացում:

¹ <http://www.gov.am>

² <http://www.gov.am>

**ՃԳՆԱԺԱՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
 ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**

Հայաստանում ճգնաժամը մի քանի փոխանցման ուղիների միջոցով է իր բացասական ազդեցությունը թողել տնային տնտեսությունների վրա (ճգնաժամի սոցիալական ազդեցություն): ՀՀ-ում ճգնաժամի սոցիալական ազդեցության տարածման փոխանցման ուղիները նկարագրել են հիմնականում 2 միջազգային կառույց¹, ինչպես նաև Վ. Խաչատրյանը և Ա. Մակարյանը (2011թ.)²: Եվ չնայած, Համաշխարհային բանկը 2010թ. մայիսին հրապարակած իր զեկույցում ուշադրության չի արժանացրել «գների փոփոխության և փոխարժեքի ճշգրտման» ճգնաժամի փոխանցման ուղուն՝ հաշվի առնելով գների կայունացումը 2009թ. մարտի փոխարժեքի կտրուկ տատանումից հետո³, սակայն տարբեր գների ինդեքսների փոփոխությունները 2010-2011թթ.⁴ ազդեցին տնային տնտեսությունների ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունների ընտրության վրա: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է դիտարկել տնային տնտեսությունների որդեգրած ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունները՝ գնահատելու ճգնաժամի երկարաժամկետ սոցիալական ազդեցությունը: Այս հոդվածում դիտարկվում են «գների» փոխանցման ուղու հետ կապված գյուղական համայնքներում տնային տնտեսությունների կողմից որդեգրած ճգնաժամի հաղթահարման չորս ռազմավարությունները (ջեռուցում, պարտք պարենային խանութին, սննդամթերքի սպառում և փոխարինում էժան ապրանքներով)՝ գնահատելու համար ճգնաժամի երկարաժամկետ ազդեցությունները 2008-2011թթ. (սեպտեմբեր) ժամանակահատվածում:

ՀՀ տասը մարզերի 14 գյուղական համայնքում 107 տնային տնտեսությունների հարցում է անցկացվել: Չնայած նրան, որ հարցումը չի կարող համարվել ներկայացուցչական (վստահության միջակայք՝ 95%, սահմանային սխալի գործակից՝ 9.47%), սակայն հարցման արդյունքները հնարավորություն տվեցին պարզելու հիմնական միտումները՝ պարզելու ճգնաժամի հիմնական ազդեցությունը գյուղաբնակ տնային տնտեսությունների վրա: Ընտրանքի բնութագրիչները մոտ են ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակվող վիճակագրական տվյալներին (տե՛ս աղյուսակ 1): Հարցերն ընդգրկում էին չորս տարի ժամանակահատված՝ ճգնաժամի երկարաժամկետ ազդեցությունը դիտարկելու համար: Համեմատություններ անելու համար հարցվող տնային տնտեսությունները պետք է համեմատեին 2011թ. սեպտեմբերը նախորդ ժամանակաշրջանի սեպտեմբերի հետ: Հարցումները իրականացվել են 2011թ. հոկտեմբերի առաջին կեսին⁵:

¹ The World Bank, (2010) ARMENIA: The 2008–09 Global Economic Crisis, Policy, Responses, and Household Coping Strategies, Report No. 55011-AM, Human Development Sector Unit, Europe and Central Asia Region, pp. 6-16, http://siteresources.worldbank.org/ARMENIAEXTN/Resources/Global_Economic_Crisis_Policy_2008_09.pdf (last accessed: March 29, 2012), UNWFP/VAM Food Security Analysis (2009) Rapid Assessment of the Impact of the Global Financial Crisis in Armenia, Yereavan: WFP Armenia, pp. 12-18, (45p), <http://home.wfp.org/stellent/groups/public/documents/ena/wfp205566.pdf> (last accessed: March 29, 2012)

² Վ. Խաչատրյան, Ա. Մակարյան և «Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան» հիմնադրամ, (2011թ.) «Ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի վրա՝ սոցիալական ազդեցություն», Երևան, էջ 8-33, զեկույցը պատրաստվել է «Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան» հիմնադրամի դրամաշնորհի միջոցով:

³ The World Bank, (2010) ARMENIA: The 2008–09 Global Economic Crisis, Policy, Responses, and Household Coping Strategies, Report No. 55011-AM, Human Development Sector Unit, Europe and Central Asia Region, p.6, http://siteresources.worldbank.org/ARMENIAEXTN/Resources/Global_Economic_Crisis_Policy_2008_09.pdf (last accessed: March 29, 2012),

⁴ ՍԳԻ-ն 2010թ. և 2011թ. համապատասխանաբար կազմել է 108.2 և 107.7, մինչդեռ պարենի գների ինդեքսները՝ 109.4 և 112.3 համապատասխանաբար, ոչ-պարենային ապրանքների գների ինդեքսը՝ 109.6 և 103.4 համապատասխանաբար:

⁵ Ներկայացված հարցման արդյունքները և վեկույցի որոշ մասը կատարվել է Նորվեգիայի արտաքին հարաբերությունների ինստիտուտի կողմից իրականացվող “Regional Competence-Building for Think-Tanks in the South Caucasus and Central Asia” ծրագրի շրջանակում:

Ընտրանքի բնութագրիչներ և ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալներ

Ընտրանքի նկարագիր	Ընտրանք	ՀՀ ԱՎԾ (2009թ.)
Միջին տնային տնտեսության չափ (անդամների քանակ)	4.2	4.2
6 և ավել անդամ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը ընդհանուրի մեջ	25.2%	25.3%
1, 2 և 3 անդամ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը ընդհանուրի մեջ	41.1%	38.5%

Աղբյուր՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2010թ., ՀՀ ԱՎԾ, էջ 26:

2008թ. հարցված տնային տնտեսությունների մոտ 47%-ը նշել է, որ իրենց գումարը նույնիսկ չէր բավարարում սնունդ գնելու համար (տե՛ս աղյուսակ 2), այդ իսկ պատճառով ճգնաժամը չէր կարող հանգեցնել աղքատության մակարդակի կտրուկ աճի գյուղական բնակավայրերում՝ հաշվի առնելով նաև այն, որ կառավարությանը ավելացրեց սոցիալական ուղղվածության ծախսերը: Սոցիալական նպաստները և կենսաթոշակները 2008թ. կազմել են 208.0 մլրդ դրամ, իսկ ճգնաժամի տարում՝ 240.2 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ.՝ 244.0 մլրդ դրամ: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների վրա կատարվող ծախսերը 2008թ. կազմել են 8.7 մլրդ դրամ, 2009թ.՝ 10.6 մլրդ դրամ, մինչդեռ 2010թ.՝ 31.2 մլրդ դրամ: Կրթության վրա կատարվող ծախսերը 2008թ. կազմել են շուրջ 100.0 մլրդ դրամ, 2009թ.՝ 105.8 մլրդ դրամ, իսկ արդեն 2010թ.՝ 95.3 մլրդ դրամ: Առողջապահության ուղղվող ծախսերը 2008թ. կազմել են 48.4 մլրդ դրամ, 2009 և 2010թթ.՝ շուրջ 52.6 մլրդ դրամ: Այդ իսկ պատճառով 2009թ. գյուղական բնակավայրերում, աղքատության մակարդակը աճեց 7.4 տոկոսային կետով՝ հասնելով 34.9%, իսկ արդեն 2010թ. աղքատության մակարդակը կազմեց 36.0%: Դճնաժամը սահմանափակեց գյուղաբնակ տնային տնտեսությունների հնարավորությունները՝ ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունների ընտրության գործում: 2011թ. հոկտեմբերին, ըստ հարցման արդյունքների, տնային տնտեսությունների ճնշող մեծամասնությունը (91.8%) հնարավորություն չունեին գնել միջին որակի ապրանքներ և վճարել լրացուցիչ ծառայությունների համար: Այդ իսկ պատճառով 2011թ. հոկտեմբերին հարցված տնային տնտեսությունների 91.3%-ը, (տե՛ս աղյուսակ 3) կամ դեռ ճգնաժամի մեջ է եղել (35.6%) կամ իրենց համար ճգնաժամի վերջը դեռ չէր երևում (27.9%), կամ էլ նրանք գտնում էին, որ դեռևս ճգնաժամի մեջ ենք, և դրանից դուրս գալու ակնկալիքներ չկան (27.9%):

Գյուղաբնակ տնային տնտեսությունների ֆինանսական վիճակի նկարագիր

	(%)			
Տնային տնտեսությունների ֆինանսական վիճակի նկարագիր (N=98) ¹	2008	2009	2010	2011
Մեր գումարը նույնիսկ չի բավարարում սննդի համար	46.94	46.94	47.96	47.96
Մեր գումարը բավարարում է միայն սննդի համար	22.45	22.45	20.41	20.41
Մեր գումարը բավարարում է սննդի և կոմունալ ծախսերի համար	23.47	24.49	25.51	23.47
Մեր գումարը բավարարում է սննդի, կոմունալ ծախսերի և միջին որակի հագուստ և կոշիկ գնելու համար	6.12	4.08	4.08	6.12
Մեր գումարը բավարար է կենցաղային տեխնիկա և այլ թանկարժեք իրեր գնելու համար	1.02	2.04	2.04	2.04
Մենք կարող ենք գնել գրեթե ամեն ինչ, ինչ ցանկանանք	0	0	0	0

Գյուղաբնակ տնային տնտեսությունների ճգնաժամի հաղթահարումը (N=104)

	(%)
Մեր տնային տնտեսությունը դեռ ճգնաժամի մեջ է	35.6
Մեր տնային տնտեսության պարագայում ճգնաժամի վերջը դեռ չի երևում	27.9
Մեր տնային տնտեսությունը դեռ ճգնաժամի մեջ է և դրա վերջը չի երևում	27.9
Մեր տնային տնտեսությունը մոտ է ճգնաժամի հաղթահարմանը	3.8
Մեր տնային տնտեսությունը հաղթահարել է ճգնաժամը	4.8

¹ Այս հարցը վերցվել է ՀՀ կյանքի որակի հետազոտության համար մշակված հարցաշարից: Աղբյուր՝ http://www.gov.am/u_files/file/documents/3.pdf (վերջին այցելություն՝ 29 մարտի, 2012թ.):

Եթե տնտեսության վիճակը վատանա (հատկապես Եվրոգոտում հնարավոր պարտքային ճգնաժամի հետևանքով), ապա դա ուղղակիորեն կազդի տնային տնտեսությունների կողմից որդեգրվող ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունների վրա: Իսկ գների հետագա աճը կսահմանափակի ճգնաժամի հաղթահարման ռազմավարություններից որևէ մեկի ընտրության հնարավորությունը:

Ձեռնուցում: 2008թ. հարցվող տնային տնտեսությունների մոտ 62%-ը նշել էր, որ ունեցել է բնական գազ, սակայն նրանցից ոչ բոլորն են ջեռուցել իրենց տները գազով, 2007/2008-2008/2009 ջեռուցման սեզոնին (տե՛ս աղյուսակ 4): Հետագա ֆինանսական վիճակի վատթարացումը, ինչպես նաև գազի սակագների բարձրացումը, 2009թ. ապրիլին հանգեցրեցին նրան, որ տնային տնտեսություններն անցնեն այլընտրանքային ջեռուցման տարբերակների: 2009/2010-2010/2011թթ. առավել տարածված և մատչելի տարբերակն էր փայտով բնակարանների տաքացումը (պատասխանողերի մոտ 78%):

Աղյուսակ 4

Գյուղաբնակ տնային տնտեսությունների ջեռուցման տարբերակները

	2007/2008 ջեռուցման շրջան (N=101)	2008/2009 ջեռուցման շրջան (N=96)	2009/2010 ջեռուցման շրջան (N=97)	2010/2011 ջեռուցման շրջան (N=97)
Բնական գազով	22.8%	15.3%	9.2%	10.1%
Էլեկտրականությամբ	2.0%	4.1%	3.1%	2.0%
Փայտով	63.4%	69.4%	77.6%	77.8%
Քարածխով		1.0%		
Գոմաղբով	9.9%	8.2%	8.2%	8.1%
Անվաղողով	2.0%	2.0%	2.0%	2.0%

Նշում՝ N-ը ներկայացնում է այն տնային տնտեսությունների քանակը, որոնք ջեռուցման մեկ տարբերակից էին օգտվում յուրաքանչյուր ջեռուցման շրջանում:

Պարտք տեղական մթերային խանութին: «... Շատ փոքր խանութներ, մասնավորապես ՀՀ գյուղական բնակավայրերում, կանգնած են այն խնդրի առաջ, որ ավելի ու ավելի շատ ընտանիքներ ստիպված են գնել, սնունդ և այլ հիմնական պարագաներ պարտքով»: Հետագոտվող ժամանակաշրջանի ընթացքում, հարցված տնային տնտեսությունների մոտ 70%-ը պարտքեր էր ունեցել տեղական մթերային խանութներին (տե՛ս աղյուսակ 5): Պարտք վերցնելու հիմնական պատճառը պարզապես գոյատևելն էր (պատասխանողների մոտ 70%), որին հաջորդել է լրացուցիչ պարտքերից խուսափելը: Ծգնաժամը նաև ազդել է տնային տնտեսությունների պարտքերը մարելու կարողության վրա: Եթե 2008թ. պարտք ունեցող տնային տնտեսությունների մոտ 60%-ը կարողացել են վճարել իրենց պարտքերն ամեն ամիս, ապա հետագա տարիների ընթացքում, հետզհետե այդ քանակը նվազել է: Եթե խանութների տերերը դադարեցնեն պարտքով սննդամթերքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների տրամադրումը, ապա դա կսահմանափակի ճգնաժամի հաղթահարման ռազմավարությունների ընտրությունը, ինչն էլ կարող է թերսնուցման պատճառ հանդիսանալ: Հարկ է նշել, որ թեև մեկ տնային տնտեսության հաշվով պարտքի անվանական միջին գումարը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում անընդհատ աճել էր (տե՛ս աղյուսակ 5), սակայն այդ գումարի իրական գնողունակությունը նվազել է համեմատած գների ինդեքսների հետ²: Իսկ սա նշանակում է, որ թեև պարտքի գումարի անվանակ արժեքը մեծանում է, բայց ձեռք բերված սննդի կամ այլ ոչ-պարենային ապրանքների քանակը կրճատվել է՝ բացառելով այն հանգամանքը, որ տնային տնտեսությունները կարող էին փոխարինել ապրանքներն ավելի էժանով՝ նույն սպառման մակարդակը պահպանելու համար: 2009թ. գյուղաբնակ

¹ UNWFP/VAM Food Security Analysis (2009) Rapid Assessment of the Impact of the Global Financial Crisis in Armenia, Yereavan: WFP Armenia, p. 33, (45 p.).
<http://home.wfp.org/stellent/groups/public/documents/ena/wfp205566.pdf> (last accessed: March 29, 2012)

² ՍԳԻ-ն 2010թ. և 2011թ. համապատասխանաբար կազմել է 108.2 և 107.7, մինչդեռ պարենի գների ինդեքսները՝ 109.4 և 112.3 համապատասխանաբար, ոչ-պարենային ապրանքների գների ինդեքսը՝ 109.6 և 103.4 համապատասխանաբար:

տնային տնտեսության մեկ առկա անդամի հաշվով միջին ամսական իրական ծախսերը սննդամթերքի վրա կրճատվել էին 4.5%-ով նախորդ տարվա նկատմամբ, իսկ արդեն 2010թ.՝ 1.6%-ով 2009թ. նկատմամբ:

Աղյուսակ 5

Գյուղաբնակ տնային տնտեսությունների պարտքը մթերային խանութներին

	2008	2009	2010	2011
Պարտքի առկայությունը տեղական մթերային խանութներին	N=107 70.1%	N=107 70.1%	N=107 70.1%	N=107 70.1%
Տնային տնտեսության համար պարտքի դերը	N=75	N=75	N=75	N=73
Հնարավորություն տվեց որոշակի կարիքները բավարարել	30.7%	25.3%	25.3%	25.3%
Հնարավորություն տվեց ընտանիքին գոյատևել	68.0%	72.0%	72.0%	69.3%
Հնարավորություն տվեց խուսափել լրացուցիչ պարտքերից	10.7%	13.3%	13.3%	14.7%
Մեկ տնային տնտեսության հաշվով պարտքի միջին ամսական չափ	N=67 34,716	N=71 36,338	N=74 38,432	N=75 39,013
Նախորդ ժամանակաշրջանի փոփոխությունը (անվանական աճ)		4.7%	5.8%	1.5%
Պարտքի մարման հաճախականություն	N=70	N=71	N=72	N=71
Ամեն ամիս	60.0%	57.7%	52.8%	52.1%
2-3 ամիսը մեկ	25.7%	26.8%	26.4%	25.4%
4-5 ամիսը մեկ	8.6%	8.5%	12.5%	7.0%
6 և ավել ամիսը մեկ	1.4%	4.2%	4.2%	1.4%
Տնային տնտեսությունը դեռ չի մարել	2.9%	2.8%	4.2%	14.1%

Սննդամթերքի սպառում: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ տնային տնտեսությունների մեծամասնությունը չի կարող իրեն թույլ տալ միջին որակի ապրանքներ ձեռքբերել և լրացուցիչ ծառայություններից օգտվել (տե՛ս աղյուսակ 2): Սա նշանակում է, որ սպառողական ծախսերի մեծ մասը սննդամթերքի գնման և կոմունալ ծառայությունների վճարների վրա էին ծախսում: Գյուղական բնակավայրերում 2010թ. մեկ առկա տնային տնտեսության անդամի հաշվով իրական միջին ամսական ծախսերի մոտ 57%-ը բաժին էր ընկնում սննդամթերքին, սակայն այդ գումարի գնողունակության առումով տնային տնտեսություններն այդ գումարով ավելի քիչ ապրանք կարող էին գնել 2010թ.: 2009 և 2010թթ. նախորդ տարվա նկատմամբ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական իրական դրամական եկամուտներն աճել են (2.8% և 1.0%), սակայն գյուղմթերքի վաճառքից ստացվող իրական եկամուտների անկումը 2010թ. կազմել է մոտ -37%՝ նախորդ տարվա նկատմամբ, իսկ, ընդհանուր առմամբ իրական եկամուտների աճը պայմանավորված է եղել այլ եկամտի աղբյուրներից ստացվող իրական եկամուտների աճով: Մյուս կողմից, գյուղաբնակ տնային տնտեսությունները, հազիվ թե կարողանային պահպանել 2009թ. սպառման մակարդակը 2010թ., եթե գյուղմթերքի վաճառքից ստացվող եկամուտը տնային տնտեսության հիմնական աղբյուրը լիներ: Իսկ եթե հաշվի առնենք, որ պարենի ինդեքսը 2011թ. 112.3 եղել, ապա միայն իրական եկամուտների համապատասխան աճը կկարողանար ապահովել առնվազն 2010թ. սպառման մակարդակը: Հետևաբար՝ գյուղական տնային տնտեսությունները կփորձեին փոխարինել էժան ապրանքներով՝ ինչ-որ չափով պահպանելին սպառման մակարդակը 2011թ.: Հարցված տնային տնտեսությունները 2011թ. հոկտեմբերին նշել էին, որ գյուղատնտեսական արտադրանքի և պարենային ապրանքների վրա կատարվող ծախսերը (անվանական) սկսել էին զգալիորեն աճել են 2010թ. ի վեր, սակայն, միջինում սպառման մակարդակին որոշակի կրճատման միտում էր արձանագրվել հարցված տնային տնտեսությունների մոտ: Մոտավորապես տնային տնտեսությունների 58%-ն նշել էր, որ իրենց ծախսերը սննդամթերքի և գյուղատնտեսական ապրանքների վրա 2011թ. սեպտեմբերին ավելացել են 2010թ. սեպտեմբերի նկատմամբ: Սպառման ծախսերի աճի առումով, հարցվող տնային տնտեսությունների 84%-ը ավելացրել էր ծախսերը հացի վրա, մինչդեռ սպառման մակարդակի աճ էր գրանցվել 17% հարցված տնային տնտեսությունների մոտ: 2011թ. սեպտեմբերին 2010թ. նկատմամբ հարցված տնային տնտեսությունների զգալի մասը կրճատել էին մսի, մսամթերքի և թռչնամսի սպառումը (համապատասխանաբար՝ 60, 60.2 և 49.5%): Սպառված

աննդամթերքի էներգետիկայի օրեկան մեդիանայի արժեքը (2146 կկալ/օր) գյուղական համայնքներում մեկ շնչի հաշվով 2010թ. փոքր-ինչ գերազանցել էր նվազագույն շեմային արժեքին՝ 2100 կկալ/օր: Գյուղական բնակչության տոկոսը, որն 2100 կկալ/օր քիչ էր սպառում, 2010թ. ավելացել էր 7.9 տոկոսային կետով 2009թ. նկատմամբ (հասնելով 46.4%), իսկ գյուղական բնակչության 29.2%-ը հիմնականում սպառում էր հաց և կարտոֆիլ՝ (աննդամթերքի մասնաբաժնի մոտ 70%): Հարցման արդյունքներից կարելի է ենթադրել, որ 2011թ. գյուղական բնակչության մասնաբաժինը, որը սպառել է 2100 կկալ/օր քիչ, հնարավոր է աճել է 2010թ. նկատմամբ:

Փոխարինումն ավելի էժան ապրանքներով: Ինչպես և ակնկալվում էր, տնային տնտեսությունները փոխարինել էին պարենային ապրանքներն ավելի էժան ապրանքներով (տե՛ս աղյուսակ 6): 2008թ. նկատմամբ 2011թ. հոկտեմբերին հարցվող տնային տնտեսությունների տոկոսը, որը փոխարինում էր ավելի էժան ապրանքներով, աճել էր շուրջ 13 տոկոսային կետով: Նույն միտումը նկատվել էր կոշիկի և հագուստի սպառման կտրվածքով: Մակայն, հարցված տնային տնտեսությունների տոկոսը, որը փոխարինել էր թանկ դեղամիջոցներն ավելի էժանով, հիմնականում նույն մակարդակի վրա էր մնացել:

Աղյուսակ 6

Գյուղաբնակ տնային տնտեսությունների ավելի էժան ապրանքներով փոխարինումը

Ապրանքի տեսակ	2008			2010			2011		
	2008	2010	2011	2008	2010	2011	2008	2010	2011
Սննդամթերք (N= 97, 97, 99)	57.73	69.07	70.71	60.92	70.11	71.91	48.28	47.73	50.00
Հագուստ, կոշիկ (N=87, 87, 89)	60.92	70.11	71.91	48.28	47.73	50.00			
Դեղամիջոցներ (N=87, 88, 88)	48.28	47.73	50.00						

Չնայած նրան, որ կառավարությունն ավելացրել էր սոցիալական ուղղվածության ծախսերը, «զներ» ճգնաժամի փոխանցման ուղին ընդհանուր առմամբ բացասաբար է ազդել գյուղաբնակ տնային տնտեսությունների վրա 2010-2011թթ.: Հատկապես 2010թ. գյուղամթերքի ստացվող իրական եկամուտների կրճատումը (որպես եկամտի հիմնական աղբյուր)՝ սահմանափակել է տնային տնտեսությունների ճգնաժամի հաղթահարման ռազմավարության ընտրության հնարավորությունը: Եվ խիստ կասկածելի է թե ինչ տեղի կունենա ապագայում՝ մնան միտումները շարունակվելու դեպքում:

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՆՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ.

ՆՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ.

ԻՆՏԵՐՆԵՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Ինտերնետի միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության առաջացումը և հետագա ընդլայնումը, նպաստելով սպառողների հարմարավետությանը և քիզնեսի տրանսակցիոն ծախսերի նվազմանը, առաջացրեց բազմաթիվ տեսական և գործնական խնդիրներ: Պարզվեց, ավանդական ձեռնարկատիրության համար ստեղծված իրավական մեխանիզմները կիրառելի չեն ինտերնետում ծագող քիզնես հարաբերությունների կարգավորման համար: Նման դժվարություններն առաջացան իրավունքի միաժամանակ մի քանի բաժիններում՝ քաղաքացիական, ֆինանսական, հարկային և այլն:

Պետական ֆինանսների տեսանկյունից կարգավորման կարիք ունեցող բազմաթիվ հիմնախնդիրներից առավել կարևորը ինտերնետի միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեության, այդ թվում նաև առևտրի հարկման վերաբերյալ իրավական և տնտեսական հիմնախնդիրների լուծումն է, մասնավորապես, եթե հաշվի առնենք, որ աշխարհում մասն եղանակով ավելի ու ավելի շատ գործարքներ են իրականացվում, իսկ շրջանառվող ֆինանսական միջոցները բավականին կայուն բարձր տեմպեր ունեն: Հարկման իրավական կարգավորումը, եթե հաշվի չառնի ոլորտի տեխնիկական և տնտեսական առանձնահատկությունները, հնարավորություն կտա գործարարներին այնպես կազմակերպել գործունեությունը, որպեսզի հնարավոր լինի թաքցնել իրական շրջանառությունները, գործարքի բովանդակությունը և, հետևաբար, խուսափել հարկեր վճարելուց:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման հետ կապված հիմնախնդիրների ծագման պատճառներից կարևորագույնը, թերևս, այն է, որ հաճախ մասն եղանակով գործարքի մասնակիցները տարբեր երկրներից են, իսկ երբեմն ընդհանրապես անհնար է լինում պարզել գործարքի մասնակիցների աշխարհագրական պատկանելիությունը կամ ինքնությունը, ինչը թույլ չի տալիս հարկային մարմիններին տնտեսական գործունեության նկատմամբ կիրառել հարկային արդյունավետ վարչարարություն: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ վաճառված ապրանքը կարող է լինել ոչ նյութական և դրա՝ մաքսային սահմանը հատելու փաստը և ըստ այդմ հսկողություն իրականացնելը նույնպես խիստ դժվար է: Դեռ ավելին, գոյություն չունի հստակ մեխանիզմ որևէ համակարգչային ծրագրի և էլեկտրոնային տեսքով ներկայացվող ապրանքի մաքսային արժեքի որոշման համար: Համակարգչային ծրագրի արժեքը հարյուրավոր, նույնիսկ հազարավոր անգամ կարող է գերազանցել նյութական կրիչի, օրինակ, լազերային սկավառակի արժեքը: Նման հանգամանքը դժվարացնում է արտահանման և ներմուծման մաքսային կարգավորումը, քանի որ արտահանման ժամանակ միշտ խթան կա ներկայացնելու ավելի մաքսային արժեքը, իսկ ներմուծման ժամանակ՝ պակաս:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման արդյունավետ մեխանիզմի ձևավորումը առաջին հերթին պետք է հիմնված լինի այս ոլորտում հարկման հիմնախնդիրների վերացման հնարավորությունների բացահայտման վրա: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման հիմնախնդիրները պայմանավորված են.

- տնտեսվարողի և հաճախորդների աշխարհագրական տեղաբաշխմամբ,
- էլեկտրոնային վճարային համակարգերի կիրառմամբ,
- վաճառվող ապրանքի բնույթով,
- վճարման այլընտրանքային ձևերով,
- միջնորդների շրջանցմամբ,
- նոր տիպի ապրանքների ի հայտ գալու հետ,
- ձեռնարկատիրական գործունեության վարման ժամանակ երրորդ կողմի մասնագիտացված ծառայություններից օգտվելու հանգամանքով,
- գլոբալ շուկայում վաճառքներ իրականացնելու հնարավորությամբ,
- աշխատուժի նկատմամբ ներկայացվող նոր պահանջներով,
- առևտրային գործարքների փաստաթղթային ուղեկցման կազմակերպման համար նոր տեխնոլոգիաների կիրառմամբ,
- մրցակցության սրման հետ կապված և այլն:

Դիտարկենք ներկայացված գործոններն առանձին-առանձին:

Տնտեսվարողի և հաճախորդների աշխարհագրական տեղաբաշխմամբ պայմանավորված հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբը պայմանավորված է այն հանգամանքով, որ տնտեսվարողները հնարավորություն են ստանում վաճառքներ իրականացնել ոչ միայն իրենց գտնվելու կամ գործունեության վայրում: Արդյունքում, տնտեսվարողները, փոխանակ տարբեր վայրերում ֆիզիկական ներկայությունների՝ խանութների, տաղավարների հիմնման փոխարեն վաճառքն իրականացնում են միայն մեկ տեղից՝ ինտերնետային կայքից: Դեռ ավելին, ինտերնետի միջոցով իրականացվող առևտուրը սպասարկող սերվերները նույնիսկ

կարող են գտնվել բոլորովին այլ վայրերում, քան տնտեսվարողի գործունեության վայրն է, ինչը հնարավորություն է տալիս դրանք տեղաբաշխել հարկային ռեժիմի տեսակետից առավել մեղմ գոտիներում: Միաժամանակ, նվազում են նաև մի քանի վայրերում (խանութներում) ապրանքների պահուստի ձևավորման և կառավարման խնդիրները: Արդյունքում տնտեսվարողները հնարավորություն են ստանում նվազեցնել գործառնական ծախսերը, ֆիզիկական ներկայության հետ կապված միջոցները և դրանց ձեռքբերման ծախսերը, ինչպես նաև հնարավորություն են ստանում կառավարելու հարկային վճարումները՝ բիզնեսի վարման տարբեր միջոցները տեղափոխելով հարկման տեսակետից ավելի բարենպաստ վայրեր:

Պետության կողմից վարվող հարկային քաղաքականության տեսակետից դա նշանակում է, որ պետական համակարգը ավելի քիչ հնարավորություններ է ունենում խստացնելու հարկային օրենսդրությունը, քանի որ նման դեպքում ինտերնետի միջոցով առևտուրը իրականացնողները պարզապես կլքեն խստացված հարկային ռեժիմով տարածքները՝ հաստատվելով ավելի մեղմ հարկային ռեժիմներում: Արդյունքում կարող է ձևավորվել այնպիսի իրավիճակ, երբ տարբեր հարկային իրավասությունները (երկրները) կսկսեն մրցակցել ձեռնարկատիրության այս տեսակով զբաղվող տնտեսվարողներին գրավելու համար (պատահական չէ, որ ներկայումս ինտերնետի միջոցով առևտուր իրականացնող կազմակերպությունները հաճախ նախընտրում են գրանցվել իրական վաճառքների իրականացման վայրից տարբեր երկրներում, այդ թվում նաև օֆշորային երկրներում): Սրա հետևանքով նվազում է խիստ հարկային ռեժիմ ունեցող երկրներում առևտրի նման տեսակով իրականացվող գործարքների հարկման բազան, ինչն էլ հանգեցնում է հարկային մուտքերի կրճատմանը: Ընդ որում, հարկման դրույքաչափերի ավելացումը, այսինքն՝ հարկային ռեժիմի հետագա խստացումը կարող է էլ ավելի նվազեցնել հարկային մուտքերը:

Այս հիմնախնդրի լուծման նպատակով ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի վերաբերյալ հարկային օրենսդրության մշակման ժամանակ պետք է հաշվի առնել այլ երկրներում գործող դրույքաչափերը, որպեսզի տեղական կազմակերպությունները շահագրգռված չլինեն բիզնեսը տեղափոխել այլ երկրներ, բացի այդ մեղմ հարկային ռեժիմը կարող է գրավել այլ երկրներում գործող կազմակերպություններին վերագրանցվել Հայաստանում և գործունեություն իրականացնել որպես արտասահմանում գործունեություն ծավալող հայկական ընկերություն:

Էլեկտրոնային վճարային համակարգերի կիրառմամբ պայմանավորված հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբը պայմանավորված է անանուն վճարային համակարգերով վճարումներ իրականացնելու հետ, երբ վաճառվող ապրանքը առաքվում է էլեկտրոնային տեսքով, իսկ վճարումը կատարվում է էլեկտրոնային փողերով: Արդյունքում տնտեսվարողները հնարավորություն են ստանում իրականացնել առևտրային գործարքը միայն մեկ համակարգչի (սերվերի) միջոցով, որը կարող է գտնվել աշխարհի ցանկացած երկրում:

Հարկային քաղաքականություն իրականացնողների տեսանկյունից դա նշանակում է, որ հարկային համակարգը չի կարողանում արձանագրել վճարման իրականացման փաստը, ինչը իր հերթին նշանակում է, որ կորչում է գործարքը վերահսկելու հետքը:

Վաճառվող ապրանքի բնույթով պայմանավորված հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբը պայմանավորված է թվային տեսքով ներկայացված ապրանքների վաճառքով: Տնտեսվարողների տեսանկյունից սա նշանակում է ապրանքների պահեստավորման և առաքման ծախսերի կրճատում: Միաժամանակ տարբեր երկրներում թվային տեսքով ներկայացվող ապրանքների հարկման տարբեր մոտեցումների արդյունքում տնտեսվարողները հնարավորություն են ստանում կառավարել հարկային վճարումները, քանի որ որոշ երկրներում նման տեսքով ներկայացված ապրանքների վաճառքը ընդհանրապես չի հարկվում:

Հարկային քաղաքականություն իրականացնողները թվային տեսքով ներկայացված ապրանքների վաճառքի վերահսկման և հարկման գործում ներկայումս ամենաշատ խնդիրների են հանդիպում: Նախ՝ քանի որ այս դեպքում, ըստ էության, ապրանքային պահեստները բացակայում են, և փաստացի վաճառված թվային ապրանքի թվաքանակը որոշելը գործնականում անհնար է: Միաժամանակ բացակայում են նաև մշտական ներկայացուցչությունները, ինչը նույնպես խոչընդոտում է հարկային վերահսկողություն իրականացնելուն:

Հարկ է նշել, որ սահմանափակ թվով երկրներում թվային տեսքով ներկայացված ապրանքների վաճառքի հարկման խստացումը միանշանակ հանգեցնելու է նման վաճառքով զբաղվող ընկերությունների արտագաղթի դեպի այնպիսի հարկային իրավասություններով երկրներ, որտեղ այս տիպի ապրանքների վաճառքը չի հարկվում, կամ հարկվում է առավել մեղմ ռեժիմով:

Վճարման այլընտրանքային ձևերով պայմանավորված հիմնախնդիրներ: Նման հիմնախնդիրներ առաջանում են այն դեպքում, երբ ապրանքների կամ ծառայությունների վաճառքն իրականացվում է «բարտերային» փոխանակման միջոցով: Օրինակ, շատ դեպքերում կայքերում տեղակայված գովազդային տարածքները ոչ թե վաճառվում են, այլ «փոխանակվում» այսինքն՝ «Ա» կայքի գովազդը ցուցադրվում է «Բ» կայքում, իսկ «Բ» կայքի գովազդը՝ «Ա» կայքում: Մյուս կողմից, քիչ չեն այնպիսի կայքերը, որտեղ ապրանքի գնագոյացումը իրականացվում է բավականին բարդ ալգորիթմներով՝ սկսած մի քանի ապրանքատեսակ գնելու դեպքում զեղչերի և նվերների տրամադրումից մինչև «աճուրդային» եղանակով գնագոյացումը:

Հարկման տեսակետից այստեղ առաջ է գալիս գովազդային տարածքի փոխանակման արժեքային գնահատման խնդիր՝ այն հարկման բազայի մեջ ընդգրկելու նպատակով: Նման գնահատումը չափազանց դժվար է, քանի որ ներկայումս գոյություն չունի նման հաշվարկի ընդունված մեթոդաբանություն: Միաժամանակ, քանի որ այս դեպքում գովազդային գործակալություն գոյություն չունի, հարկային վերահսկողության «հսկիչ կետերը» հասցվում են նվազագույնի, ինչն էլ դժվարացնում է նման գործարքների բացահայտման հնարավորությունը: Մյուս կողմից, յուրաքանչյուր առևտրային գործարքի դեպքում յուրահատուկ գնագոյացման մեխանիզմի կիրառումը հանգեցնում է նրան, որ հարկային մարմինները չեն կարողանում հստակ գնահատել կայքի իրական հասույթը:

Միջնորդների շրջանցմամբ պայմանավորված հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբը պայմանավորված է առևտրային գործարքում միջնորդ օղակների նվազման հետ: Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի պարագայում սովորաբար արտադրողը անմիջական կապի մեջ է գտնվում սպառողի հետ, որի արդյունքում միջնորդների թիվը հասցվում է 0-ի: Չեռնարկատերերի տեսակետից սա սպահովում է գործառնական ծախսերի նվազեցում, մրցակցային դիրքի ամրապնդում, տարբեր վայրերում մշտական ներկայացուցչություն ունենալու պարտավորությունից խուսափում և այլն:

Հարկային համակարգի տեսակետից միջնորդների թվի նվազումը նշանակում է հարկահավաքման «միջանցիկ կետերի» թվի նվազում, ինչը իր հերթին հանգեցնում է հարկային հսկիչ կետերի կորստի: Նման հիմնախնդիրների լուծումը թաքնված է, մի կողմից, ակցիզային հարկերի կիրառման, իսկ մյուս կողմից՝ հարկերի վճարման պարտավորությունը վերջնական սպառողներին փոխանցելու մեջ: Դա նշանակում է, որ սպառողները պետք է հանդես գան որպես հարկային գործակալներ: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ում նման փորձի ներդրումը ցույց տվեց, որ այն գործնականում հանդիպում է շատ դժվարությունների:

Նոր տիպի ապրանքների ի հայտ գալու հետ պայմանավորված հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբը պայմանավորված է մինչև վերջին տասնամյակները գոյություն չունեցող ոչ նյութական ակտիվների ի հայտ գալու հետ: Խոսքը վերաբերում է դոմեն անուններին և կայքերին: Դոմեն անուններն, ըստ էության, համարժեք են ապրանքային նշաններին և վերջիններինս նմանությամբ չեն կրկնվում և պատկանում են միայն մեկ անձի: Կայքերը իրենց էությամբ փոքր-ինչ այլ բնույթ ունեն և կարող են ներկայացվել որպես կազմակերպության հիմնական միջոցներ: Եվ իրոք որոշ դոմեն անունների արժեքը կարող է հասնել մինչև մի քանի միլիոն ԱՄՆ դոլարի: Օրինակ՝ հայտնի է, որ «Loans.com» դոմեն անունը 2000թ վաճառվել է 3 մլն ԱՄՆ դոլարով, իսկ «business.com» դոմեն անունը՝ 1999թ.՝ 7.5 մլն ԱՄՆ դոլարով¹:

Ե՛վ ձեռնարկությունների, և՛ հարկային մարմինների տեսանկյունից նման բարձր արժեք ունեցող ոչ նյութական ակտիվները լուրջ խնդիրներ կարող են առաջացնել: Նախ՝ ձեռնարկությունները հակված են ուռճացնել սեփական ոչ նյութական ակտիվների իրական արժեքը՝

¹ The Associated Press, “Loans.com Domain Name Sells for \$3 Million,” New York Times, Technology Section, January 31, 2000.

դրանք ամորտիզացնելու և հետևաբար հարկային պարտավորությունները նվազեցնելու նպատակով: Մյուս կողմից հարկային մարմինները պետք է թույլ չտան նման քաղաքականության իրականացումը: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ որոշ դոմեն անուններն իրոք նման բարձր արժեք ունենալու ներուժ ունեն, քանի որ ձեռնարկատիրության ոլորտին համապատասխանող դոմեն անունը լավագույն գովազդային գործիքներից մեկն է և հաճախորդներ ներգրավելու մեծ հնարավորություններ ունի: Բացի այդ, այն կայքերի արժեքը, որոնք արդեն իսկ ունեն հաճախորդների հսկա բանակ (Google.com, Yahoo.com և այլն), չի կարող որոշվել միայն կայքերը սպասարկող սերվերների և ծրագրային ապահովման արժեքով: Չուր չէ, որ նշված կայքերի և դոմեն անունների շուկայական գները որոշվում են տասնյակ և, նույնիսկ, հարյուրավոր մլն դոլարներով:

Այս հիմնախնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է, նախ, հստակ սահմանել, թե նշված ոչ նյութական ակտիվները ինչ կարգավիճակով կարող են ներառվել կազմակերպությունների հաշվեկշիռներում, ինչ եղանակով է կարելի իրականացնել դրանց ամորտիզացիան, ինչպես նաև մշակել կայքի արժեքի գնահատման մեթոդաբանություն:

Ձեռնարկատիրական գործունեության վարման ժամանակ երրորդ կողմի մասնագիտացված ծառայություններից օգտվելու հետևանքով առաջացած հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբը պայմանավորված է ինտերնետի միջոցով առևտուր իրականացնող կազմակերպությունների առանձին գործառույթները 3-րդ, այդ թվում օտարերկրյա կողմին պատվիրման հետ: Նման գործառույթների թվին են պատկանում կայքերի նախագծումն ու պատրաստումը, սպասարկումը, վեբ հյուրընկալումը, պատվերների հսկման և մատակարարման, վճարային քարտերով փոխանցումների իրականացման գործառույթները: Հարկային հիմնախնդիրների առաջացումը պայմանավորված է այն հարցի պարզաբանմամբ, թե արդյոք նման դեպքում 3-րդ կողմը հանդես է գալիս որպես ներկայացուցչություն, գործակալ, թե պարզապես ծառայություններ մատուցող, քանի որ յուրաքանչյուր դեպքում տարբեր է հարկային մարմինների առաջ պարտավորությունների չափաբաժինը:

Այս հիմնախնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, թե նման ծառայությունները որ դեպքում են ներկայանում որպես ներկայացուցչություն, գործակալություն կամ պայմանագրային ծառայություններ: Խնդիրը դժվարանում է նաև այն հանգամանքով, որ հաճախ նման մասնագիտացված ծառայությունները մատուցվում են ոչ ռեզիդենտների կողմից, ինչի արդյունքում թե տեղական, և թե օտարերկրյա հարկային մարմինների համար կորչում են հարկային վերահսկողություն «հսկիչ կետերը»:

Գլոբալ շուկայում վաճառքներ իրականացնելու հնարավորությամբ պայմանավորված հիմնախնդիրներ: Ինտերնետի միջոցով առևտրի իրականացումը թույլ է տալիս նույնիսկ փոքր կազմակերպություններին առևտուր իրականացնել գլոբալ շուկայում: Դա հանգեցնում է նրան, որ փոքր, առանց համապատասխան մասնագետների և ֆինանսական միջոցների ընկերությունները բախվում են միջպետական հարկային բարդ և խճճված օրենսդրությունները հասկանալու և օրինական գործունեություն ծավալելու խնդրին: Միաժամանակ, հարկային մարմինները ստիպված են լինում վերահսկել բազմաթիվ փոքր ծավալներով միջազգային առևտուր իրականացնող կազմակերպություններ: Դրա հետևանքով հարկային մարմինների սահմանափակ մարդկային և ժամանակային ռեսուրսներն օգտագործման արդյունքում ստացված լրացուցիչ հարկային մուտքերը հաճախ բավարար չեն լինում նման ծախսումները փոխհատուցելու համար, հետևաբար նման վերահսկողությունը դառնում է ոչ արդյունավետ:

Նման խնդրից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել միջազգային առևտրի նվազագույն շեմ, որը անցնելու դեպքում միայն կազմակերպությունները պարտավոր կլինեն համապատասխան հաշվետվություններ և հաշվարկներ ներկայացնել:

Աշխատուժի նկատմամբ ներկայացվող նոր պահանջներով պայմանավորված հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբը պայմանավորված է ինտերնետի միջոցով իրականացվող առևտրով զբաղվող ընկերություններում աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջներով, ինչը հնարավորություն է տալիս հեռահար աշխատատեղեր ստեղծել: Նման հնարավորությունը թույլ է տալիս առանց գրանցման աշխատողներ ունենալ, որոնք աշխա-

տում են տնից՝ ինտերնետին միացված համակարգով¹: Ընդ որում, նման աշխատակիցները կարող են նույնիսկ գտնվել Հայաստանից դուրս, աշխատել արտաժամյա և այլն: Նման իրավիճակը հնարավորություն է տալիս ոչ միայն անպատիժ խախտել աշխատանքային օրենսդրությունը, այլև խուսափել եկամտահարկ և սոց. վճարներ վճարելուց:

Առևտրային գործարքների փաստաթղթային ուղեկցման ժամանակ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ պայմանավորված հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբն առաջանում է այն պատճառով, որ ինտերնետի միջոցով առևտրի իրականացման ժամանակ առևտրային կազմակերպություններն օգտագործում են փակ տեղեկատվական համակարգեր: Դա, իհարկե, թույլ է տալիս ոչ միայն բարձրացնել կազմակերպության արդյունավետությունը, այլև հաճախորդին առաջարկել «անհատականացված» ծառայություններ՝ հաշվի առնելով նրա նախասիրությունները, ճաշակը, տարիքը և այլն²: Սակայն, մյուս կողմից, հարկային մարմինների համար նման տեղեկատվական համակարգերը փակ են, և հարկային մարմինները հնարավորություն չեն ունենում բացահայտել և հարկել նման փակ տեղեկատվական համակարգերով իրականացվող գործարքները:

Մրցակցության սրման հետ կապված հիմնախնդիրներ: Հիմնախնդիրների այս խումբը ավելի ընդհանուր բնույթ ունի, քան նախորդ նկարագրվածները: Բանն այն է, որ վերջին տարիներին նոր տեխնոլոգիաների ներդրմանը և ակտիվ կիրառմանը զուգահեռ կտրուկ սրվել է մրցակցությունը ոչ միայն ազգային, այլև միջազգային մակարդակում: Դրա արդյունքում կարող է ձևավորվել այնպիսի իրավիճակ, որի դեպքում կնվազեն ոչ միայն հարկվող կազմակերպությունների քանակը, այլև՝ հարկման բազան, քանի որ մրցակցության հետևանքը միշտ էլ շահութաբերության նվազումն է: Նման իրավիճակը կարող է հանգեցնել նրան, որ ավելանա անուղղակի հարկերի դերը պետական բյուջեի ձևավորման գործում:

Հիմնախնդիրներն ունեն ընդհանուր բնույթ և բնորոշ են բոլոր երկրներում գործող կազմակերպություններին, որոնք ինտերնետի միջոցով առևտուր են իրականացնում: Միաժամանակ, հարկ է նշել, որ Հայաստանի պայմաններում այս հիմնախնդիրներից ոչ բոլորն են, որ իրական վտանգ են ներկայացնում հարկային եկամուտների նվազեցման տեսանկյունից: Սակայն դա չի նշանակում, որ նման վտանգներ Հայաստանում երբեք չեն ծագի. ավելին, կարելի է պնդել, որ դրանց՝ Հայաստանում ի հայտ գալը միայն ժամանակի խնդիր է:

ՍՈՒՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՏՊՏՏ, տ. գ. թ., դոցենտ

ԱԼԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Տ Գ Ա Ա Մ. Լոթսանյանի սևիվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՑԱՆՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Ցանցային տնտեսության ֆինանսատնտեսական հրամայականը զգալի չափով պայմանավորված է ֆինանսատնտեսական գլոբալացման, գլոբալ մրցակցության և տնտեսական տրանսֆորմացիայի անկասելի գործընթացներով:

XX դարի 80-ական թվականներին համաշխարհային տնտեսությունը թևակոխեց զարգացման գլոբալ փուլ, որի առանցքը ֆինանսական գլոբալացումն էր՝ ֆինանսական շուկաների և ֆինանսական ներդրումների ոլորտի աննախադեպ զարգացումը: 2007-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հավաստեց, որ գլոբալացումը և ֆինանսական գլոբալացումը այլևս իրողություն է, որ ֆինանսական շուկաները դուրս են եկել ավանդական արդյունաբերական տնտեսության շրջանակներից դառնալով զարգացման ինքնուրույն և ահագնացող գործոն: Միավլած չենք լինի, եթե ասենք, որ «արտադրողական

¹ “For Better or Worse, IT’s Influence Over Our Daily Lives Will Only Grow”, Executive Edge, June/July 1999, p. 15.

² David Coursey, “Behind Amazon’s preferential pricing,” Yahoo! News, 9/11/00.

ուժեր – արտադրական հարաբերություններ» անտոգոնիստական հակասությունը ներկայումս իր տեղը զիջել է «ֆինանսական շուկաներ – տնտեսություն» փոխհարաբերությունների ներդաշնակման անհրաժեշտությանը: Այդ պայմաններում խնդիրը ոչ այնքան ֆինանսական շուկաների զարգացման չափավորումն է և կարգավորման խստացումը, որքան ֆինանսական շուկաների պահանջներին բավարարող տնտեսության նոր ձևերի և մեխանիզմների փնտրտուքը:

Ժամանակակից տնտեսությունը անհնար է պատկերացնել նաև առանց գլոբալ մրցակցության, երբ մրցակցությունը դուրս է գալիս նեղ ազգային շրջանակներից՝ վերափոխվելով ընկերությունների, պետությունների և տարածաշրջանների մրցակցության: Գլոբալ մրցակցությունը լուրջ պահանջներ է ներկայացնում ընկերությունների և տնտեսությունների ճկունությանը, անընդհատ փոխվող շուկայական կոնյունկտուրային արագ արձագանքելու կարողությանը: Ակնհայտ է, որ ուղղահայաց կապերը և կառուցվածքները բավարար չափով ճկուն չեն շուկայական փոփոխություններին արագ արձագանքելու համար:

Ժամանակակից տնտեսությունը նաև համակարգային փոփոխությունների կամ տրանսֆորմացիայի տնտեսություն է: Այսինքն, տեղի է ունենում գործող տնտեսական հարաբերությունների փոխակերպում (տրանսֆորմացիա) դեպի որակապես նոր համակարգ, որի արդյունքում անցում է կատարվում դեպի տնտեսական հարաբերությունների նոր տեսակ: Այս տեսանկյունից՝ ներկայումս նմանատիպ տրանսֆորմացիոն երևույթներ են նկատվում նաև զարգացած տնտեսություններում, որտեղ, սակայն, անցումը կատարվում է ոչ թե սոցիալ-խստականից դեպի շուկայական հարաբերություններ, այլ՝ շուկայական հարաբերություններից դեպի ցանցային:

Դիտարկելով զարգացած երկրներում տնտեսության արդի տրանսֆորմացիոն զարգացումները՝ կարելի է առանձնացնել հետևյալ հանգրվանային գործընթացները, որոնք շուկայական հարաբերությունների վերոնշյալ տրանսֆորմացիայի «շարժիչ ուժերն» են:

1. **Սպառողի առանցքային դերի հաստատումը**, որն ի հայտ եկավ XX դարի վերջին տասնամյակների ընթացքում, երբ բարիքների գերարտադրության պատճառով սպառողը առաջին անգամ հնարավորություն ստացավ ընտրություն կատարել հսկայական տեսականուց, իսկ արտադրողները սպառողների համար պայքարի բարձր մրցակցային միջավայրում, ստիպված են շարունակաբար բարձրացնել արտադրանքի որակը և սպասարկումը: Բարիքների զանգվածային արտադրությունը իր տեղը զիջում է յուրաքանչյուր սպառողական խմբի պահանջմունքներին համապատասխանող բարիքների արտադրությանը:

2. **Ներդրողների ազդեցիվ պահվածքը**, որի հիմքում բնակչության, հատկապես միջին խավի, եկամուտների շարունակական աճն էր, ներդրումային ակտիվների անընդհատ համալրվող տեսականին, հոգուտ ռիսկի նախապատվության՝ ռիսկ-եկամտաբերություն հարաբերակցության փոփոխությունը: Ներդրողների ազդեցիվ պահվածքը զգալի չափով պայմանավորված էր նաև 1980-1990-ական թվականներին արժեթղթերի գների խիստ դրական դինամիկայով, այլ կերպ ասած, «ցուլի շուկայի» գերակայությամբ:

3. **Արտադրության ոլորտում փոփոխությունների ինտենսիվության աճը**, երբ արտադրողն է արագ արձագանքում ռեսուրսների գների և որակի փոփոխությանը՝ փոխելով իր արտադրության կազմակերպման վայրը, ծավալները, գինը և այլն: Ինտենսիվ փոփոխությունների միջավայրում փոխվում է նաև վերաբերմունքը մարդկային ռեսուրսների և տեխնոլոգիաների նկատմամբ: Փոփոխություններին արձագանքելու համար անհրաժեշտություն է առաջանում կայացնելու անհապաղ և ռացիոնալ որոշումներ, իսկ հարկ եղած դեպքում՝ փոփոխել դրանք նվազագույն կորուստներով: Արդյունքում՝ նախկինում բարձր գնահատվող երկարաժամկետ, ստատիկ տեխնոլոգիաները փոխարինվում են կարճաժամկետ, ճկուն և նվազ նյութատար տեխնոլոգիաներով:

Այս ամենի արդյունքում տնտեսական գործընթացներում ավելի ու ավելի է մեծանում տնտեսական տարբեր ֆունկցիաներ կատարող սուբյեկտների մասնակցությունը և նշանակալիությունը: Իսկ ինտենսիվացող փոփոխություններին ճշգրիտ արձագանքելու համար տնտեսական սուբյեկտները անընդհատ ստանում, մշակում և փոխանակում են տեղեկատվություն: Արդյունքում, նոր տնտեսության առանցքային տարրերն են դառնում տնտեսական սուբյեկտը (տնտեսական որոշումներ կայացնող միավորը) և տեղեկատվությունը: Գտնվելով մեկ համակարգում՝ այս երկու տարրերի համատեղ գործողությունը ստիպում է, որ ուղղակի,

թե անուղղակի, միևնույն տնտեսական համակարգում գործող բոլոր սուբյեկտները անընդհատ փոխադարձ կապեր հաստատեն՝ տեղեկատվության փոխանակման նպատակով: Վերջինիս արդյունքում էլ առաջ են գալիս տնտեսական սուբյեկտների համագործակցային ցանցեր և/կամ կլաստերներ: Տնտեսական համակարգը սկսում է առաջնորդվել տնտեսական սուբյեկտների ցանցային համագործակցության միասնական նպատակով:

Նման համակարգը, երբ տնտեսական սուբյեկտները համագործակցում են ճկուն կապերով, և դրանց միացյալ գործունեության շնորհիվ առաջ է շարժվում ամբողջ տնտեսությունը, բնորոշվում է, որպես **ցանցային տնտեսություն**:

Ցանցային տնտեսությունը այսօր առավել արագ տարածվում է զարգացած երկրներում, որտեղ տնտեսությունն արդեն թևակոխել է հետիմդուստրիալ զարգացման փուլը: Ցանցային գաղափարախոսությունը միավորում է մրցակցության և համագործակցության նախկինում անհամատեղելի թվացող հասկացությունները: Մասնավորապես, ցանցային գաղափարախոսության համաձայն, տնտեսական համագործակցության հիմնական շարժառիթները (անորոշության միևնույնացում, սիներգետիկ և ցանցային էֆեկտների յուրացում, միացյալ ջանքերով ռեսուրսատար տեխնոլոգիաների մշակում, ձեռնհասությունների բաշխում և այլն) ամփոփվում են շուկայում մրցակցային առավելություն ձեռք բերելու նպատակի մեջ¹: Այսինքն, ոչ թե խաթարվում է շուկայական մրցակցության գաղափարը՝ վերածվելով համընդհանուր համագործակցության, այլ ուղղակի փոխվում է մրցակցող սուբյեկտը: Եթե նախկինում ձեռնարկությունն էր մրցակցության ամենաստորին մակարդակում գործող տարրը, ապա այսօր մրցակցությունը տեղի է ունենում ձեռնարկությունների համագործակցային ցանցերի միջև:

Արդյունքում շուկայական մրցակցությունը մեկ մակարդակով վեր է բարձրանում՝ դուրս գալով անհատական ձեռնարկությունների հարթությունից: Հետևաբար, պատեհ է պնդել, որ գլոբալ շուկայական տնտեսությունը, պահպանելով մրցակցության հիմնարար գաղափարները, ենթարկվում է տրանսֆորմացիոն գործընթացների, նախ և առաջ, տնտեսության ցանցայնացման, որից չեն կարող խուսափել նաև զարգացող երկրները, այդ թվում Հայաստանը:

Նման համատեքստում դիտարկելով ՀՀ տնտեսության զարգացման ընթացքը՝ առաջ է գալիս տնտեսության **եռափուլ անցման** գաղափարը.

1. Համակարգային տրանսֆորմացիայի փուլ՝ անցում սոցիալիստական կարգերից դեպի ազատ շուկա տնտեսակարգ,
2. Ռեֆորմացիայի փուլ՝ անցում դեպի զարգացած և կատարելագործված շուկայական հարաբերություններ (հետիմդուստրիալ),
3. Ցանցային տրանսֆորմացիա՝ անցում զուտ մրցակցային շուկայից դեպի ցանցային հարաբերություններ վերարտադրող համակարգի:

Վերոնշյալ երեք փուլերը ունեն հաջորդական բնույթ: Բնականոն զարգացման դեպքում դրանցից մեկի իրականացումը հնարավոր է միայն նախորդի կայացման դեպքում:

Բարեբախտաբար, Հայաստանը արդեն անցել է *տրանսֆորմացիայի* առաջին փուլը: Մակայն դեռևս վաղ է նույնը ասել *ռեֆորմացիայի* փուլի մասին, քանի որ բարեփոխումները դեռևս թերի են և ակնկալվող արդյունքները չեն տվել: 2007 թվականին Հայաստանում շրջանառության մեջ դրվեց «երկրորդ սերնդի բարեփոխումներ» հասկացությունը, սակայն 2008-2011թթ. ճգնաժամային տիրույթում այն «մոռացվեց»: Հայաստանում դեռևս առկա են ռեֆորմացիայի փուլի անավարտվածության խնդրահարույց երևույթներ՝ բարձր մենաշնորհային տնտեսություն, շուկայի «անգործություն», ՓՄՁ-ի ցածր դերակատարում, բարձր ստվերայնացում, տնտեսության բյուրոկրատացում և կոռուպցիա, ներկրող ձեռնարկությունների գերակայություն, արտադրության տեխնոլոգիական հետամնացություն: Նկատենք, որ ռեֆորմացիայի փուլի չափազանց երկարաձգման դեպքում Հայաստանը այլևս չի կարողանա ընդգրկվել գլոբալ տնտեսական ցանցերում՝ վերջիններիս գերհագեցման պատճառով:

Այդ իսկ պատճառով, **ՀՀ-ում եռափուլ անցման համատեքստում նկարագրված տնտեսության ռեֆորմացիոն և դեպի ցանցեր տրանսֆորմացիոն անցման փուլերը պետք է միավորվեն մեկ ընդհանուր տնտեսության արդիականացման գործընթացում:**

Տնտեսական ցանցերի ներկառուցումը պահանջում է ակտիվ հետազոտավերլուծական

¹ “The Network Economy”, Ard-Pieter de Man, *Edward Elgar*, 2004, p. 4-5.

և նախնական գնահատման աշխատանքներ: Մասնավորապես, ցանցային գաղափարախոսության՝ ՀՀ սոցիալ-տնտեսական արդի միջավայրին համապատասխանությունը ստուգելու համար անհրաժեշտ է տնտեսական որոշակի մոդելային ցանցեր փորձարկել իրական որևէ մի հատվածում: ՀՀ պարագայում, այդպիսի հարմար օրինակներ են հանդիսանում տուրիստական ցանցերը, որոնց «գործարար սիրտը» կազմում են մարզային հյուրանոցները, հյուրատները (հոսթելներ), տեսարժան և ժամանցի վայրերը: Տուրիստական ձեռնարկությունների դիտարկման պատեհությունը ՀՀ-ում, որպես հեռանկարային ցանցային մոդել, պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

- Ըստ ՄԱԿ-ի Համաշխարհային տուրիստական կազմակերպության կանխատեսումների մոտակա տասնամյակում սպասվում է զբոսաշրջության գլոբալ աճ (4-5% տարեկան)¹:
- Զբոսաշրջության զարգացմանը ՀՀ-ում ընձեռվում է պետական մակարդակով առանձնահատուկ ուշադրություն²:
- Վերջին տարիներին ՀՀ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի աճն ունի դրական դինամիկա՝ 2010թ. հասնելով 683979 մարդու (18.9% աճ՝ համեմատած նախորդ տարվա հետ)³, ինչը հիմքեր է տալիս դիտարկել զբոսաշրջության ոլորտը, որպես հեռանկարային աճող ճյուղ:
- Հայաստանում իրական գործազրկությունը 2010թ. կազմել է 28% (ըստ աշխատաշուկայի հետազոտությունների), որտեղ գործազուրկների ամենախոշոր զանգվածը կրթական կտրվածքով կազմում են թերի բարձրագույն, միջին մասնագիտական և միջնակարգ կրթությամբ բնակչությունը, իսկ սեռային կտրվածքով՝ կանայք⁴: Զբոսաշրջության զարգացումը լավագույն միջոցներից մեկն է վերոնշյալ խնդրի լուծման համար, քանի որ զբոսաշրջության զարգացումն առաջ է բերում մեծաքանակ նոր աշխատատեղեր փոքր և միջին ձեռնարկություններում՝ ներգրավելով կանանց ու երիտասարդների լայն զանգվածներ և առաջարկելով վերապատրաստման և արագ մասնագիտացման լայն հնարավորություններ⁵:
- Զբոսաշրջության ոլորտի զարգացումը սակավ բնական ռեսուրսներ ունեցող զարգացող երկրների համար ապահովում է եկամտային վերաբաշխում ոչ միայն վերագրային մակարդակով (զբոսաշրջիկների միջոցով ֆինանսական միջոցները հարուստ երկրներից հոսում են դեպի ավելի աղքատ տարածաշրջաններ), այլ նաև՝ ներագրային մակարդակով՝ ապահովելով հեռավոր տարածաշրջաններում գործարար ակտիվության առկայություն և նպաստելով տարածաշրջանային համաչափ զարգացմանը⁶, ինչը բավականին արդիական խնդիր է ՀՀ-ում:
- ՀՀ-ում զբոսաշրջության զարգացումը մեծապես կնպաստի նաև ՓՄՁ ոլորտի զարգացմանը, քանի որ այն ապահովում է մուլտիպլիկատիվ էֆեկտ, քանզի զբոսաշրջությունը խիստ կապված է և խթանում է մի շարք այլ ոլորտներին՝ տարադրամի փոխանակում, հանրային սնունդ, գվարճանքների ծառայություն, տրանսպորտային ծառայություններ, տեղական մանրածախ ապրանքների (մասնավորապես հուշանվերների) արտադրություն և վաճառք, ուղեցույցերի տպագրություն և այլն⁷:
- Ըստ զբոսաշրջության հարցերը քննարկող վեր-կայքերի տվյալների՝ մոտակա տասնամյակում մեծ տարածում է գտնելու «ոչ ստանդարտ գործոնների հաշվին հայտնի դարձած» զբոսավայրերի այցելությունները: Օրինակ՝ նախկինում անհայտ քաղաքը

¹ <http://www.breakingtravelnews.com/news/article/global-tourism-to-rebound-strongly-in-2010/>

² «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ», ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Երևան, 2008, էջ 2-3 (<http://www.mineconomy.am/upload/file/pdfs/CONCEPTFinal.pdf>):

³ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հրատարակվող ՀՀ զբոսաշրջության վիճակագրական տվյալներ (http://www.mineconomy.am/upload/file/axyusak_.pdf):

⁴ «Զբոսաշրջության կարգավորման 2010թ. պետական ծրագրի կատարման արդյունքները», ՀՀ զբոսաշրջության պետական ծառայություն, 2011թ., էջ 4-9:

⁵ “Tourism and sustainable development: the global importance of tourism”, *World Travel and Tourism Organization, International Hotel and Restaurant Association*, New York, 1999, p. 1.

⁶ Sharpley R., “Tourism development and the environment: Beyond sustainability?”, *Tourism, Environment and Development series (University of Central Lancashire), Earthscan*, UK-USA, 2009, p. 14-16.

⁷ Stynes J. D., “Economic impacts of tourism: a handbook for tourism professionals”, *prepared by Tourism Research Laboratory at the University of Illinois at Urbana-Champaign*, USA, 1997, p. 16-17.

կամ գյուղը դառնում է զբոսաշրջության ակտիվ կենտրոն, երբ այնտեղ նկարահանվում է համաշխարհային համբավ և համակրանք ձեռք բերած ֆիլմ, դրա մասին հորինվում է երգ կամ այն քննարկվում է սոցիալական կայքերով և այլն¹: Եվ ինչպես նշվում է, այս տիպի վայրերում, ի տարբերություն հանրահայտ բարձրակարգ հյուրանոցների և ստանդարտ տեսարժան վայրերի, առավել մեծ պահանջարկ են ներկայացնում միջին որակի փոքրիկ հյուրատները և ակտիվ զբաղմունքի ու զվարճանքի բազմաթիվ տարբեր ծառայություններ առաջարկող կենտրոնները: Արդյունքում, չունենալով «տուրիստական ակտիվ անցյալ», Հայաստանն այժմ հնարավորություն ունի նորամիտ ուղիներով զարգացնել զբոսաշրջությունը՝ գրավելով գլոբալ զբոսաշրջության շուկայի որևէ մասնաբաժին:

Զբոսաշրջության զարգացման գործընթացում ցանցային մոտեցման կիրառումը առաջ է բերել իրական դրական արդյունքներ Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Կանադայում և տուրիզմի տեսանկյունից ոչ առավել հայտնի այլ վայրերում, որտեղ որոշակի փոքր տարածաշրջաններում (փոքրիկ գյուղեր, ավաններ) տարեկան զբոսաշրջիկների թիվը սկսել է հատել կես միլիոնի շեմը²:

Արդյունքում, տուրիստական ցանցերի փորձնական ներկառուցումը ՀՀ-ում ոչ միայն կարող է դառնալ գերժամանակակից տնտեսական մոդելների ներդրման նախադեպ և յուրահատուկ խթան, այն կարող է նաև իրապես նպաստել ՀՀ տնտեսության զարգացմանը և զբոսաշրջության համաշխարհային շուկայում Հայաստանի կայուն դիրքերի ամրապնդմանը:

ՇՈՂԵՐ ԳՈՂՈՍՅԱՆ

*ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.*

ՈՒՂԱԿԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Զարգացած երկրները, որոնք իրականացնում են ուղղակի մարքեթինգ, ունեն այս ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրական դաշտ: Օրենսդրությունը և փաստաթղթերը, որոնք կանոնակարգում են ուղղակի մարքեթինգի գործառնությունը, բարդ են, հակասական: Շուկայագետները, որպեսզի չխախտեն օրենքները, ուշադիր են այն ամենի նկատմամբ, ինչը վերաբերում է տվյալների բազային, գներին, նվերներին և պարգևատրումներին, մրցույթներին և վիճակախաղերին, ինչպես նաև առաջարկվող կրեդիտների տեսակներին: ՀՀ-ում խոսել այս մասին դեռևս շատ վաղ է, որովհետև համապատասխան դաշտը կարգավորող օրենսդրություն չկա, որը խոսում է այս ոլորտի թերի զարգացման մասին: Մեզ մոտ առկա են միայն այս համակարգին առնչվող առանձին օրենսդրական ակտեր:

ՀՀ-ում ցանկացած առևտրային կազմակերպություն, մասնավորապես մասնագիտացած մանրածախ առևտրում, յուրովի է ընտրում ուղղակի մարքեթինգի գործիքները: Այս առումով, շահույթ ստանալու նպատակով կարող են կիրառվել բոնուսային համակարգերը: Այսինքն՝ մանրածախ և մեծածախ առևտրով զբաղվող կազմակերպությունները, որպեսզի հասնեն շահույթի մաքսիմալացման և ոչ միայն պահպանեն իրենց կայուն հաճախորդների թիվը, այլ նաև ներգրավեն լրացուցիչ հաճախորդների, առաջարկում են տարբեր բնույթի դիսկոնտային զեղչեր, վիճակախաղերով պայմանավորված պարգևներ և առանձին խթանող համակարգերի միջոցով «մշտական այցելու» (VIP customer) պատվավոր կոչման մրցանակներ: ՀՀ-ում՝ մասնավորապես մեծածախ և մանրածախ առևտուր իրականացնող կազմակերպությունների ուղղակի մարքեթինգում կիրառվող գործիքները չեն ամրագրված տնտեսաօրենսդրական դաշտում, ավելին, կարելի է ասել՝ ժամանակակից բիզնեսում կիրառվող ուղղակի մարքեթինգի գործիքներն ու մեխանիզմները ՀՀ-ում դեռևս թերի են զարգացած: Զարգացած երկրներում

¹ <http://bedandbreakfastworldblog.wordpress.com/2010/01/05/key-trends-in-tourism-predictions-for-2010/>

² Noel Scott, Rodolfo Baggio and Chris Cooper, "Network Analysis and Tourism: From Theory to Practice", *Channel View Publications*, 2008, p. 82-86.

ուղղակի մարքեթինգի գործիքներն ու մեխանիզմները ոչ միայն լայն կիրառություն են ստանում, այլ նաև դրանք դուրս են գալիս իրենց «ավանդական» միջավայրից, ազգային սահմաններից և միանում են հեռահաղորդակցության և ինտերնետ միջավայրերին: ԵՄ երկրներում ուղղակի մարքեթինգի գործիքներն ու մեխանիզմները կարգավորվում են ինչպես ներքին օրենսդրությամբ, այնպես էլ Շվեյցարիայի «Հեռահաղորդակցության և ինտերնետ միջավայրերի մասին» օրենքով¹:

ՀՀ-ում էլեկտրոնային բիզնեսը, որպես իրավական, տնտեսական և սոցիալական կատեգորիա, դեռևս զարգացման փուլում է, ինչը խոսում է համապատասխան իրավական դաշտը կարգավորող օրենսդրության բացակայության մասին: Առկա է միայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենք², որն, ըստ էության, կրկնում է ԵՄ 1999/93/EC դիրեկտիվը: Մեր օրենքում բացակայում են «անվտանգ էլեկտրոնային ստորագրություն» և «էլեկտրոնային ստորագրության ստեղծման անվտանգ միջոցներ» հասկացություններ³: Այս օրենքը գործնականում կիրարկվում է ֆինանսական կողմ կամ հաշիվ հասկացության հետ, որը հավաստի մատնանշում է գնորդի անձնական տվյալները, սակայն մեր օրենքում բացակայում է «ֆինանսական կողմ» ասվածը, մի բան, որ չի նպաստում էլեկտրոնային բիզնեսի կայացմանը, մասնավորապես՝ էլեկտրոնային բիզնեսում ուղղակի մարքեթինգի գործիքների ներդրմանը:

Նշված օրենքի գործնական կիրառությունը թերի է, քանի որ «էլեկտրոնային առևտուր» հասկացությունը և էլեկտրոնային առևտրի շրջանառությունը ժամանակակից ֆինանսատնտեսական հարաբերությունների համակարգում կառավարության վերահսկողությունից դուրս են գտնվում: Քանի դեռ ՀՀ հարկային օրենքով ամրագրված չեն էլեկտրոնային բիզնեսի հարկման առանձնահատկությունները, այս ոլորտը զարգացման հեռանկարներ չի ունենա:

Թեև աշխարհում պայքար է մղվում հայտնի ապրանքային նշանի, ապրանքային անվանումների նույնականացման համար, միևնույն է՝ խախտումների դեմ պայքարը դեռևս շարունակում է մնալ որպես պետությունների հիմնական խնդիրը: ՀՀ սուպերմարքեթներում հանդիպում են հայտնի ապրանք արտադրողների ֆիրմային ապրանքատեսակի անվանումներ, որոնք շփոթմունք են առաջացնում սպառողների շրջանում, այլ կերպ ասած՝ սպառողը մի կողմից բախվում է «Հովանոցային գովազդի» հետ⁴, իսկ մյուս կողմից՝ տնտեսավարողների կողմից խախտվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք⁵: Վերջինիս 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկված ապրանքների նկատմամբ. համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Սակայն զարգացած երկրներում ընկերությունները, որոնք դիմում են ուղղակի մարքեթինգի օգնությանը աշխատում են լիովին գերծ մնալ մնան գործողություններից: Թեև «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով արգելվում է մնան գովազդը, սակայն դա դեռևս ՀՀ-ում առկա է, ինչը խոչընդոտում է ուղղակի մարքեթինգի ոլորտի զարգացմանը: Արդյունքում ի հայտ են գալիս մի շարք հիմնախնդիրներ.

- կապված տվյալ ապրանքի նկատմամբ սպառողի անհավատարմության դրսևորումների հետ,
- որոշ ընկերություններ մնան ձևով ստանում են գերշահույթ և կարճ ժամանակում կորցնում իրենց դիրքերը շուկայում,
- նվազում է տվյալ ապրանքատեսակի գծով պահանջմունքի անհատականացման հավանականությունը,
- սպառողների հետ հարաբերությունները սկսում են կրել «ակնթարթային» բնույթ:

¹ Price Water House Coopers Report “New Territory E-business: We can solve our tax and legal problems. 2008. pp. 10-15.

² «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենք: ՀՕ-40-Ն, ՀՀ ՊՏ 2005.01.26/7(379), հոդ. 114:

³ Եվրախորհրդի և Եվրախորհրդարանի 1999թ. դեկտեմբերի 13-ին ընդունված ԵՄ 1999/93/EC դիրեկտիվը «Էլեկտրոնային ստորագրության մասին»:

⁴ «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-156-Ն, ՀՀ ՊՏ 2007.05 16/25(459), հոդ. 600:

⁵ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2000.12.15/30 (128) ՀՕ-112:

Տնտեսական օրենսդրության համատեքստում սույն երկու օրենքները և դրանցից բխող առանձին հոդվածներ, կարծում ենք՝ պետք է միմյանց լրացնեն, այլ ոչ թե առաջացնեն լուրջ հակասություններ, ինչը սահմանափակում է ուղղակի մարքեթինգի զարգացումը ՀՀ-ում:

ԵՄ երկրներից, օրինակ՝ Ֆրանսիայում հստակ կարգավորվում են փոստային վաճառքները, որին համապատասխան հոդվածի 2-րդ կետում (պարտադրվող գնումների մասին) նշված է. «Քրեական օրենսգրքի R40-12 հոդվածը սահմանում է քրեական պատիժ այն անձանց նկատմամբ, ովքեր որևէ ապրանք ուղարկում են հասցեատիրոջն, առանց վերջինիս նախնական համաձայնության, որտեղ նշված է նաև ապրանքի գինը»¹: Այլ կերպ ասած՝ օրենքը գործում է, եթե ուղարկվող ապրանքը չի ուղարկվել պատվերով, և եթե ուղեկից նամակում հասցեատիրոջը չի առաջարկվում ընտրություն՝ վճարել ապրանքի դիմաց, կամ այն հետ ուղարկել: Նման օրենք ՀՀ-ում չկա, ավելին՝ առաքվող ապրանքը հետ ուղարկելու հնարավորությունը բացակայում է՝ պատվիրել ես, պետք է անպայման գնես: Շատ հաճախ ընկերություններն իրենց գովազդի ժամանակ հրապարակում են գովազդվող ապրանքի գները, որը ԵՄ երկրներում կարգավորվում է օրենսդրությամբ: «Փոստային վաճառքների մասին» օրենքի 1-ին հոդվածում սահմանված է. «Ցանկացած գովազդի գին սպառողի համար պետք է պարունակի ամբողջական այն արժեքը, որը պետք է վճարի ապրանքի գնորդը: Ցանկացած ապրանք կամ ծառայություն, որ պատվիրվել է որոշակի շրջանում, որոնց վերաբերում են գովազդի գները կամ դրանց նվազեցումը, պետք է ձեռք բերվեն այն գնով, որը տվյալ պահին նշվել է գովազդում»²: Համեմատության համար նշենք, որ ՀՀ-ում «Telemarket tv»-ին, որն իրականացնում է մի շարք ապրանքների վաճառք հեռուստացույցով, այնուհետև այդ վաճառքն ուղեկցվում է փոստային առաքմամբ: ՀՀ-ում չկա օրենք, որը կարգավորի սույն ոլորտին առնչվող գնային համակարգը: Օրինակ՝ հաճախորդը հեռախոսով պատվիրել է ապրանք «Telemarket tv»-ին: Ընկերությունը տեղիսացման համար գանձում է որոշակի գումար, որի մասին չի նշվում գովազդում: Ավելին՝ էլեկտրական սարքի պատվիրման դեպքում ընկերությունը չի տրամադրում սարքի համար համապատասխան մարտկոցը, որի մասին ևս ոչինչ չի ասվում գովազդում: Սակայն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի բ) կետում նշված է. «Արգելվում է այն գովազդը, որում խախտվում է գովազդի հավաստիությունը, որը վերաբերում է գովազդի հրապարակման պահին ապրանքի արժեքին և գնին»³: Մեզ մոտ, հատկապես այս օրենքի շրջանակներում, խախտումներ են նկատվում: Օրինակ՝ զբոսաշրջային գործակալությունը գովազդում է որևէ շրջագայություն և հրապարակում է դրա արժեքը, իսկ սպառողները ցանկություն են հայտնում (հիմնականում հեռախոսով) ամրագրել և պատվիրել տոմսերը, սակայն տոմսերի ձեռքբերման ժամանակ նրանց ներկայացվում է մեկ այլ գին: Այլ կերպ ասած՝ օրենքը խոչընդոտում է այս համակարգի կայացմանը: Կարծում ենք՝ դա պետք է հստակեցվի, և նշվի հետևյալ դրույթը, որ սպառողը պետք է ձեռք բերի տվյալ ապրանքը այն գնով, որը նշված է գովազդում: ԵՄ երկրներում կիրառվող փոստային վաճառքների մասին վերը նշված օրենքի 6-րդ հոդվածում ամրագրված է. «Արգելվում է գովազդում հայտարարել գների նվազեցման կամ արտոնությունների մասին, որոնք չեն կարող տրամադրվել ցանկացած ապրանքի գնորդի կամ պատվիրատուի»: Սա իրավահավասար պայմաններ է ապահովում բացառապես բոլոր սպառողական խմբերի համար:

Օրինակ՝ շատ հաճախ ավիաընկերություններն առաջարկում են հատուկ զեղչային պայմաններով ավիատոմսեր՝ հանդես գալով անհատական առաջարկներով: Սակայն մեզանում տուրիստական գործակալությունները մեծ մասամբ հենց իրենք են այդ տոմսերը ձեռք բերում, այդ մասին տեղյակ չպահելով մշտական սպառողներին և որոշ ժամանակ անց բավական բարձր գներով դրանք վերավաճառում այլ հաճախորդների: Արդյունքում՝ ավիաընկերությունը կորցնում է իր մշտական սպառողներին, իսկ տուրիստական գործակալությունը ստանում է լրացուցիչ շահույթներ և ձեռք բերում պատահական գնորդներ:

ՀՀ-ում ուղղակի մարքեթինգ վերջին շրջանում սկսել են իրականացնել հիմնականում ֆրանչայզիզով աշխատող ֆիրմաները: Ֆրանչայզիզը գործարարության մեթոդ է: Հայաստանում այն հիմնականում ներկայացված է դիստրիբյուտորային ընկերությունների տեսքով,

¹ Ксардель Д., “Прямой маркетинг”, 4-ое издание, пер. с франц, под ред. С.Г.Бужук, -СПб: “Нева” 2004, с. 113.

² Ксардель Д., “Прямой маркетинг”, 4-ое издание, пер. с франц, под ред. С.Г.Бужук, -СПб: “Нева” 2004, с.114.

³ «Գովազդի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ԱԺՏ 1996/10 ՀՕ-55 հոդ. 7:

նշենք սակայն, որ ոչ բոլոր դիստրիբյուտորներն են ֆրանչայզինգով աշխատում: Ֆրանչայզինգի դեպքում բիզնեսի սեփականատերն այլ ընկերությանը որոշակի պայմաններով թույլատրում է օգտվել իր բրենդից, փոխանցում է բիզնեսի վարման իր տեխնոլոգիաները¹:

Երևանում բացված օրինական ֆրանչայզինգների շարքում են «MaxMara»-ն, «Max&Co»-ն, «MEXX»-ը, «Motivi»-ն, «Next»-ը, «Stefano Ricci»-ն և այլն: Վերջինիս մայր ֆիրման՝ ֆրենչայզերն, իր գնային քաղաքականության մեջ կիրառում է «բացարձակ գեղչերի բացակայություն» հասկացությունը: Այսինքն՝ եթե Stefano Ricci-ի պոտենցիալ գնորդը օգտվում է այդ խանութների ցանցից, ուրեմն ֆինանսապես ապահովված է, և վերջինիս նկատմամբ կիրառել գեղչային համակարգ, նշանակում է չհարգել գնորդի ֆինանսական կայունությունը: Մա ևս ընկերության կողմից կիրառվող յուրահատուկ ուղղակի մարքեթինգ է՝ ուղղված պոտենցիալ սպառողներին:

Վերը նշված ընկերությունները մեր երկրում ներկայացված են ֆրանչայզինգային պայմանագրերով, ինչը մի շարք առավելություններ է ապահովում թե՛ խանութատերերին, թե՛ հայ սպառողներին: Մասնավորապես՝ կարող են Երևանում գնել նույն հագուստը, ինչը, ասենք, Լոնդոնում: Եվ, ընդհանրապես, խանութ-սրահներում ամեն ինչ՝ թե՛ հատակը, թե՛ կահույքը, թե՛ ջահերը այնպիսին են, ինչպես աշխարհում նույն սպրանքանիշի ցանկացած այլ խանութ-սրահում:

Երևանում հագուստի ֆիրմային խանութների զգալի մասը՝ «Mango», «Stefanel», «Orchestra», «Cop.Copine», «Olsen», «Nugat» և այլ խանութներ, նույնպես աշխատում են ֆրանչայզինգով: Մա ևս նպաստում է ուղղակի մարքեթինգի կայացմանն ու զարգացմանը, քանի որ ֆրանչայզերը հիմնականում կիրառում է արտասահմանյան փորձը մեր երկրում՝ ֆրանչայզի միջոցով:

Ֆրանչայզինգային պայմանագրերը համեմատաբար քիչ են սննդի ոլորտում: Մա բացատրվում է նրանով, որ սննդի արտադրության և վաճառքի նկատմամբ անհրաժեշտ է որակի ամենօրյա հսկողություն, որն առայժմ լիովին լուծելի չէ:

Հարկ է նշել, որ ֆրանչայզինգային հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլատվություն» վերտառությամբ 53-րդ գլխով, մինչդեռ ֆրանչայզինգային համակարգի զարգացման համար անհրաժեշտ է ընդարձակ օրենսդրական բազա և պայմաններ: Այդ թվում՝

- սպրանքների իրացման ավանդական մեխանիզմները կիրառող ֆրանչայզինգային համակարգերի միջև իրական մրցակցության պայմաններ,
- ֆրանչայզինգային համակարգի մասնակիցների կողմից օրենսդրական ակտերի կիրառման հարմարություն,
- վերահսկող մարմինների համար ֆրանչայզինգային համակարգի և դրա տարրերի թափանցիկություն:

Այս երեք նպատակները սերտորեն փոխկապակցված են, դրանց ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել օրենսդրական ակտերի համակարգ, ինչը կներառի ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, հարկային օրենսդրությունը, ինչու չէ նաև համապատասխան անվամբ ստեղծվի «Ֆրանչայզինգի մասին» ՀՀ օրենք, որը ևս կընդգրկի:

Օրենսդրական բազայի ստեղծումը կապահովի ֆրանչայզերների ներթափանցումը ՀՀ, ինչը կնպաստի ուղղակի մարքեթինգի գործիքների ու մեխանիզմների կիրառմանը, ինչպես նաև այս ոլորտում արտասահմանյան փորձի ներդրմանը:

Այսպիսով՝ ֆրանչայզինգը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման գործիք է, որը կարող է մեծ առաջընթաց ապահովել Հայաստանում ուղղակի մարքեթինգի զարգացման համար:

ԵՄ երկրներում գործարարության ոլորտում հեռախոսային մարքեթինգի իրավասությունների շրջանակն ավելի լիբերալ (ազատական) է: Ամբողջ Եվրոպայում Գերմանիան այն

¹ “Микроэкономика: практический подход”, (Managerial Economics) / учебник-2-ое изд, испр./ под ред. А.Г.Грязновой и А.Ю.Юданова/ -М: КНОРУС, 2005, с. 595.

միակ երկիրն է, որտեղ գործարարության ոլորտում հեռախոսային մարքեթինգի գործառնության վերաբերյալ գոյություն ունեն սահմանափակումներ¹:

Ուղղակի մարքեթինգի իրականացման և զարգացման համար կարևոր է տվյալների բազայի առկայությունը: ՀՀ-ում տվյալների հետ կապված գործում է միայն 2002թ. ընդունված «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը², որը սահմանում է պատասխանատվություն օրենքի պահանջների խախտման համար, սակայն չի սահմանում անձնական տվյալների պաշտպանության երաշխիքներ, որը բացասաբար է անդրադառնում էլեկտրոնային վաճառքի իրականացման վրա: Օրենքի 11-րդ հոդվածով սահմանված է նաև սուբյեկտին տրամադրվող տեղեկատվությունը, սակայն օրենքում նշված չէ առևտրային նպատակով դրա օգտագործման մասին, քանի որ սույն օրենքը չի սահմանում շահույթ հետապնդող կազմակերպությունների կողմից տվյալների բազայի մշակումը: Կարծում ենք օրենքի 7-րդ հոդվածում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ՝ ավելացնելով շահույթ հետապնդող կազմակերպությունների մասը: Եվրամիության շատ երկրներում տվյալների բազային վերաբերող օրենսդրությանը զուգահեռ գոյություն ունեն մասնագիտական էթիկայի կոդեքսներ, որոնց պետք է հետևեն այն ձեռնարկությունները, որոնք կիրառում են ուղղակի մարքեթինգի տեխնոլոգիաներ: Այսպես՝ օրինակ, փոստային առևտրով զբաղվող ձեռնարկությունները պարտավոր են հավաքել և պահպանել հավաստի տեղեկություններ սպառողների մասին, որոնք անհրաժեշտ են միայն առևտրային գործունեության համար: Ի դեպ, անունը, ազգանունը և հասցեն չեն համարվում անձնական, կոնֆիդենցիալ տեղեկատվություն (ինչը չի կարելի ասել ՀՀ կազմակերպությունների համար, որոնք գաղտնի են պահում այդ տեղեկությունները): Ձեռնարկությունները պարտավորվում են նաև խիստ վերահսկել առաջարկվող տվյալների բազայի ծագումը, չտարածել գաղտնի բնույթի տեղեկություններ և նախապես համոզվել, որ դրանց օգտագործումը չի հակասում մասնագիտական էթիկայի կոդեքսին: Կարծում ենք՝ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն անհրաժեշտ է լրամշակել՝ հիմնվելով վերը նշված սկզբունքների վրա:

ԵՄ երկրներում օրենքով կարգավորվում է նաև վիճակախաղերի, մրցույթների, խաղերի կազմակերպումը: Այսպես, օրինակ՝ Ֆրանսիայում վիճակախաղերի մասին օրենքը սահմանում է, որ այն անձինք և նրանց ընտանիքի անդամները, ովքեր համարվում են միջոցառման կազմակերպիչներ կամ կազմակերպիչ ընկերության ներկայացուցիչներ, չեն կարող հավակնել հաղթանակի և շահույթի: «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է վիճակախաղերի կազմակերպման և անցկացման կանոնակարգը³: Սակայն մեր օրենքում բացակայում է վերը նշված պայմանը, մի բան, որ պետք է շտկել, որպեսզի ստեղծվեն իրավահավասար պայմաններ յուրաքանչյուր սպառողի համար, ինչը կնպաստի ուղղակի մարքեթինգային միջավայրի զարգացմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ուղղակի մարքեթինգի ոլորտին առնչվող իրավական ակտերը, տեսնում ենք, որ կատարելագործման անհրաժեշտություն է զգացվում մի շարք օրենքներում, որոնցում առկա են բացթողումներ, որոնք հնարավորություն չեն ընձեռում ստեղծելու այն իրավական դաշտը, որն անհրաժեշտ է հետագա զարգացումների համար: Մյուս կողմից՝ բարեփոխումներ շատ դեպքերում արվում են՝ ելնելով որոշ խմբերի անձնական շահերից, իսկ դա ավելի է մեծացնում անհավասարակշռությունն իրավական համակարգում: Հետևաբար՝ անհրաժեշտ է սահմանել «խաղի ընդհանուր կանոններ», սկզբունքայնություն ցուցաբերել, քանի որ շատ պետությունների հաջողություններն այս ոլորտում պայմանավորված են օրենսդրությամբ արդյունավետ մեխանիզմներ ներդնելով:

¹ Цехетбауэр Э., "Большое руководство, как осуществлять успешный директ маркетинг": Пер. с нем. -М: АО "Ипурэксперт" 2002, с. 101-103.

² «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենք, ՀՕ -422-Ն, ՀՀՊՏ 2002.11.14/49(222) հոդ.1149:

³ «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2004/2 (301), 14.01.04 ՀՕ-3-Ն:

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ԱՐՈՆՅ

ՏՊԾՏ (պոլիտեխնիկ), ասիստենտ
Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն, Կ. Գ. Թ.

ՊԼՈՒԲԱԼԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄ

1990-ական թվականներին շրջանառության մեջ է մտել «գլոբալիզացիա» հասկացությունը, արագորեն ստանալով համընդհանուր ընդունելություն: Այն իր մեջ ներառում է դարի և հազարամյակի ավարտի հետ կապված դարաշրջանային փոփոխությունների, աշխարհում տեղի ունեցող գործընթացների ընկալումն արտացոլող մի ամբողջ հարացույց (պարադիգմա), մի հասկացություն, որը կատարվող բարդ գործընթացների համախմբության կարճ մատնանշումն է, «սեղմելով» աշխարհը ժամանակի և տարածության պայմանական հասկացությունների մեջ:

Գլոբալիզացիան - աշխարհը միասնական հատկանիշներով օժտված մեկ համակարգ դարձնելու պատմական գործընթացն է: Մարդկությունը վաղուց է շարժվում դեպի արդի գլոբալացումը: Դա նախկին միտումների անխուսափելի հետևանքն է, որոնք նախորդ դարաշրջաններում ունեին բնականոն բնույթ, իսկ արդի փուլի զարգացման բազմաթիվ առանձնահատկությունների ու ռիթմի հետ կապված դիտարկվում է որպես «նոր երևույթ», վերջինս առնչելով հասարակական կացության բազմաթիվ ոլորտների հետ: Տրվում են բնորոշումներ, գլոբալացման պրոցեսների վերաբերյալ տեսությունը համադրում իրականությանը, փորձելով համաշխարհային շարժումների մեջ գտնել երկրների տեղը ու պահվածքը¹:

Գոյություն ունեն գլոբալացման գործընթացի տեսական բազմաթիվ մեկնաբանություններ: Օրինակ, Ի. Վալենշտայնն առաջարկում է «աշխարհ-համակարգային մոդելը», համաձայն որի գլոբալացումը հիմնականում աշխատանքի միջազգային բաժնման վրա հիմնված տնտեսական երևույթ է: Համաձայն աշխարհում աշխատանքի բաժանման ձևավորված համակարգի նախանշվեցին տնտեսական կորիզի, կիսաշրջագծի և շրջագծի հստակ կառուցվածքային բաժանումները որպես միասնական համակարգ, որում չլուծվող հակասությունների առկայությունը կհանգեցնի նրա վերափոխմանը համաշխարհային սոցիալիզմի:

Համաձայն Է. Հիդդենսի, գլոբալացումը անքակտելիորեն կապված է արդիականացման հետ և ունի երկու տեսանկյուն՝ տնտեսական (միջապետական հարաբերությունների տնտեսական համակարգման գործընթացները) և մշակութային (գիտակցության համաշխարհային մշակույթի ձևավորումը):

Ըստ հունգարացի գիտնական Մ. Շիմանի, այդ գործընթացի հիմնական հետևանքը, պետությունների փոխկախվածության խորացման հետ մեկտեղ, դարձել է շուկաների տարածական ու ինտիտուցիոնալ ինտեգրումը: Միջազգայնացումը ծառայում է որպես խթան հետագա տնտեսական առաջընթացի համար և իրենից ներկայացնում է դրական երևույթ այն չափով, որ չափով որ նպաստում է նյութական և մտավոր արժեքների միջազգային փոխանակման ընդլայնմանը:

Սակայն հարկ է նշել, որ գլոբալացման շատ արդյունքներ նպաստավոր են միայն երկրների առանձին խմբերի համար, քանի որ այն սերտորեն կապված է տրանսազգայնացման գործընթացի հետ, որի արդյունքում արտադրանքի սպառման, արտահանման, ներմուծման և երկրի եկամուտների մի որոշակի քանակություն գտնվում է կախվածության մեջ միջազգային կենտրոնների որոշումներից: Որպես առաջատար ուժեր այստեղ հանդես են գալիս տրանսազգային կորպորացիաները, որոնք լինելով միջազգայնացման գործընթացների արդյունք, միաժամանակ այդ պրոցեսները խթանող «գործող անձիք» են: Եվ իրոք, ժամանակակից աշխարհում գործում են այնպիսի հզոր տնտեսական ուժեր, որոնք հազիվ թե գլոբալացման

¹ Մարինյան Ռ.Ն., Արդի հայ տնտեսագիտության տեսություն: Մեմագրություն, Եր.: «Ճարտարագետ», 2007. 240էջ:

նշանակության գործընթացները թողնեին տարերայնության կամքին: Այդպիսիք ամերիկյան տնտեսագետ Ստիգլիցը համարում է տրանսազգային տնտեսական ու ֆինանսական կազմակերպությունները: Բացակայում է բոլոր ժողովուրդների համար պատասխանատու համաշխարհային կառավարության կառույցը, որը կարող է գուցորդել գլոբալացման պրոցեսները ազգային հետ, սակայն «Դրա փոխարեն մենք ունենք համակարգ, որը կարելի է անվանել գլոբալ կառավարում առանց գլոբալ կառավարության, այնպիսին, որում մի խումբ հաստատություններ՝ Համաշխարհային բանկը, ՄՎՖ, ՀԱԿ-ը և մի խումբ խաղացողներ՝ ֆինանսների, ներքին և արտաքին առևտրի նախարարությունները, սերտորեն կապված են ֆինանսական և առևտրական շահերով, իշխում են արենայում, բայց միաժամանակ նրանց որոշումներով շոշափվող հսկայական մեծամասնությունը գրեթե մնում է համր: Հասել է համաշխարհային տնտեսական կարգը կառավարող որոշ կանոնների փոխելու, միջազգային մակարդակում որոշումների ընդունման ընթացակարգը վերանայելու ժամանակը»¹:

Գլոբալացման արդյունքներում սահմանները դառնում են ավելի թափանցիկ տնտեսական, մշակութային և նույնիսկ քաղաքական գործունեության համար: Տեղական և տրանսազգային ցանցեր՝ արդյունաբերական կորպորացիաները, համացանցը, ուսանողական և մասնագիտական կադրերի փոխանակումը, ծառայությունների ոլորտը, «կանաչների» կազմակերպությունները և մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված շարժումները նպաստում են իսկապես գլոբալ մշակութային և տնտեսական համակարգերի ստեղծմանը: Այդ գործոնների ազդեցության տակ փոխվել են աշխարհի տարածական, տարածքային և գաղափարական բաժանման XX դարի համար ավանդական ընկալումները: Գլոբալիզացիան իր հետ բերում է նոր աշխարհաքաղաքականության ձևավորում և աշխարհի նոր տեսլականի, որը ավելի ու ավելի է ձեռք բերում մեկ ամբողջության կերպար:

Գլոբալացումը դա ոչ միայն միջազգայնացման գործընթացի շարունակությունն է, այլ համաշխարհային տնտեսության մեջ հովանավորչական քաղաքականության չվերածվող որակապես այլ գործընթաց:

Գլոբալ գիտակցությունը կարող է խրախուսել մասնակիցներին գլոբալացման որոշ ասպեկտներ ընդունել, իսկ ընդդեմ որոշ ասպեկտների՝ բողոքել:

Չովացուցիչ ընկալիքների, մուլտիմեդիայի տեխնոլոգիաների կամ պարզապես աշխարհիկ մշակույթի մերժման ձևով գլոբալացմանը դիմադրությունը հաճախ կրում է հակաամերիկյան կամ հակաարևմտյան կողմնորոշում: Մյուս մասնակիցները դեմ են գլոբալիզացմանը, որովհետև նրանք ընկալում են այն որպես «կապիտալի անսահման կուտակում»: Բայց գլոբալացման անընդունելիությունը կարող է պայմանավորված լինել նաև այնպիսի զգացումով, որ հիբրիդային մշակույթը դուրս է մղելու կամ վարկաբեկելու է ավանդական հանգումները ու բարքերը:

Այսպիսով, «գլոբալ» ֆենոմենի միասնական ընկալում գոյություն չունի: Գլոբալիզացիայից հնարավոր չէ թաքնվել: Գլոբալ գործընթացները առավել ազդեցիկ են դառնում տեղականների հանդեպ և, չնայած ակնհայտ դիմադրությանը, նույնիսկ առավել արմատական ռեժիմները ստիպված են այս կամ այն չափով նույնականացվել գլոբալ համակարգի հետ:

Գլոբալացման զարգացման դինամիկան կարելի է մանրամասն ուսումնասիրել միայն այն պայմանով, որ ուսումնասիրման ընթացքում հարկ է բացառել մակրո և միկրո մակարդակներում առկա պայմանական տարբերությունները, և մարդկային գործունեության ձևերից և ոչ մեկը մյուսների հանդեպ չի համարվի գերակա, առաջնային: Սակայն գործնականում շատ ավելի տարածված է գլոբալացման երևույթի հանդեպ միատարր մոտեցում: Օրինակ, շատ տնտեսագետներ և մենեջմենթի տեսաբաններ գլոբալացումը դիտարկում են որպես ժամանակակից նեոլիբերալիզմի գաղափարախոսության պտուղ: Նման դիրքորոշումը անտեսում է գլոբալիզացիայի մշակութային և տեխնոլոգիական փոփոխությունների առկայությունը, իսկ հարակից քաղաքական խնդիրները համարում է երկրորդական: Այս դեպքում, գլոբալացման գաղափարը հանգում է որպես առևտրային և ֆինանսական միասնական համաշխարհային համակարգի ձևավորման պարզ գործընթացի, որը դրսևորվում է հարուստ

¹ Джозеф Стиглиц, Глобализация: тревожные тенденции, М. 2003г., с. 41.

պետությունների, մուլտիազգային կորպորացիաների և միջազգային կարգավորող ինստիտուտների միջև տարատեսակ կոալիցիաների ձևավորման մեջ:

Գլոբալացումը փոփոխություններ է բերում ոչ միայն հասարակության կազմակերպման, այլև գիտակցության մեջ: Եթե հետևենք այս գաղափարին, ապա հարկ է նշել, որ գլոբալացումը միայն ներկայիս պատմական պահին չի պատկանում: Այն հարկ է համարել համաշխարհային կապիտալիստական համակարգի էվոլյուցիոն փոփոխության գործընթացի կարևորագույն օղակներից մեկը:

Պատմական իմաստով գլոբալացման ավելի լայն ըմբռնում են ցուցաբերում որոշ ռուս հեղինակներ: Այսպիսով, Գ. Դիլիգենսկին նշում է, որ «Գլոբալացիայի երևույթը սկզբունքորեն բացարձակապես նոր չէ: Այն գոյություն է ունեցել տարբեր ձևերով, զարգացել է մարդկության պատմության տարբեր փուլերում»: Այս տեսակետից ամբողջ մարդկության պատմությունը իրենից ներկայացնում է աճող գլոբալիզացիայի մի աստիճանական գործընթաց:

Ըստ Է. Ազրոյանցի, գլոբալիզացիան պատմական գործընթացի բուն նպատակն է: Նրա դիմամիկան պայմանավորված է ինտեգրման և ապահովագրման միտումների հակամարտությամբ: Գլոբալացման ներկա փուլը կարելի է բնորոշել որպես միջազգայնացման փուլ²:

Գլոբալացման տարբերությունները հազիվ թե կարելի է հանգեցնել լոկ նրա մասշտաբների չափումներին: Իրականում հիմնական տարբերությունն այն է, որ XX դարի վերջում գլոբալիզացիան ընդունել է ոչ տարածքային բնույթ: Եթե XIX դարում կապիտալիզմի գլոբալ զարգացումը դրսևորվել է հիմնականում նրա տարածքային ընդլայնման մեջ, գաղութային համակարգի զարգացման մեջ, հումքի և կապիտալի արտահանման մեջ, ապա ներկայումս գլոբալացումը ավելի շատ ստանում է տնտեսական, տեղեկատվական և մշակութային բնույթ:

Սակայն, «առանց սահմանների գլոբալ կապիտալիզմի» գաղափարը, ըստ որոշ ժամանակակից հեղինակների, մեծապես իրենից միֆ է ներկայացնում: Օրինակ, Պ. Հերստը և Գ. Թոմսոնը կարծում են, որ գլոբալացման գաղափարը նեոլիբերալիզմի գաղափարախոսության արդյունք է, որը պնդում է պետական հսկողության «էրոզիայի» անխուսափելիությունը և գլոբալ ազատ շուկայի անհրաժեշտությունը: Նրանք պնդում են, որ ժամանակակից գլոբալացումը, իրականում ընդամենը միջազգային առևտրի ակտիվացում է, որը հիմնականում սահմանափակված է «Տնտեսական տրիադայի (եռյակի)» շրջանակներով՝ Եվրոպա, Ամերիկա և մասամբ Հարավարևելյան Ասիա:

Մեկ անգամ ևս նկատենք, որ գլոբալացումը հնարավոր չէ առանց տեխնոլոգիական նորարարությունների, առանց մենեջմենթի մակարդակում գլոբալ կապերի ձևավորման, ինչը երկրագունդը դարձնում է միասնական գործողությունների դաշտ: Գլոբալիզացիան դրսևորվում է առաջին հերթին, ըստ Մ. Կաստելսի, տեղեկատվական աշխատանքի աճող դերի մեջ՝ ի տարբերություն աշխատանքի այլ տեսակների³: Միաժամանակ գլոբալ համաշխարհային տնտեսակարգը դրսևորվում է միանգամայն նոր ուժերի ձևով՝ նոր սերնդի տեխնոլոգիական նորարարություններ և տնտեսական մրցակցություն, որը չի ճանաչում ձևավորված սահմաններ, և որի դեմ հանդես է գալիս պատմականորեն ձևավորված տնտեսական կառավարման համակարգը:

Ըստ Յա. Պետերսի, ժամանակակից ազգային պետությունը որպես կազմակերպության ստանդարտ ձև, ինքնին իրենից ներկայացնում է գլոբալիզացիայի ձև: Չնայած աշխարհը մասնատված է և բաժանված է ինքնիշխան տարածքային միավորների, դրանք իրենք գիտակցաբար կառուցած միասնական աշխարհակարգի մասն են կազմում: Ինքնիշխան պետությունները համաշխարհային տնտեսական գործընթացների գործող անձինք են և հասարակական արժեքների պահապանները: Սակայն նրանց տեղը գլոբալացման գործընթացում միանշանակ չէ: Որոշ պետությունների հզորությունը գլոբալացման շնորհիվ միայն մեծացնում է, իսկ մյուսների համար, այդ նույն ժամանակահատվածում այն հանդես է գալիս որպես թուլացնող գործոն: Օրինակ, Արևելյան Ասիայում որոշ պետություններ կարողացան

¹ Дилигенский Г.Г. Актуальные вопросы глобализации // Мировая экономика и международные отношения. 1999. №4,5.

² Азроянц Э. А. Глобализация: катастрофа или развитие? Современные тенденции мирового развития и политические амбиции. Издательский дом Новый век Москва, 2002, 464 стр

³ Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура / Пер. с англ. под науч. ред. О. И. Шкаратана. — М.: ГУ ВШЭ, 2000. — 608 с.

ներգրավել ու պահել «մոբիլ» (օտարերկրյա) կապիտալ: Խորհրդային Միության փլուզումը ցույց տվեց, որ նույնիսկ գերտերությունները չեն կարող դիմակայել գլոբալ տնտեսության հարձակմանը, իսկ երիտասարդ պետությունները, որոնց գերակշռող մասը մինչև վերջերս գաղութներ էին, սահմանափակ հնարավորությունների պատճառով էլ ավելի խոցելի են: Նույնիսկ կապիտալիստական աշխարհում մի շարք շատ հարուստ երկրներ, ինչպիսիք են Գերմանիան և Ճապոնիան, կարելի է դիտարկել որպես կիսով չափ ինքնիշխան:

Գլոբալացումը, ինչպես էլ այն գնահատես, իրենից ներկայացնում է ժամանակակից գոյության փաստը:

Գլոբալացման գաղափարը բազմադեմ և բազմակողմանի է: Նրա արժեքը գիտության համար այն է, որ կենտրոնացնում է ուշադրությունը այն գործընթացների վրա, որոնք աշխարհը վեր են ածում մի միասնական ամբողջության՝ գլոբալ համակարգի: Այսինքն, արդի գործընթացների արդյունքում համաշխարհային զարգացումը զուտ տնտեսական ինտեգրման համակարգից վերաճել է ներհյուսումների մի բարդ համակարգի, ունիվերսալ արժեքների որոշակի մեխանիզմներով, շուկաների և ֆինանսական հարաբերությունների ու մշակութային կապերի փոխազդեցությամբ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՐԶՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ.*

ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՎ (ADAPTIVE EXPECTATIONS) ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ԻՐԱԿԱՆ ՀՆԱ-Ի ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Ներդրումները ունենում են իրենց ուրույն նշանակությունը պետության զարգացման գործում՝ ազդելով երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա: Ներդրումները համարվում են ՀՆԱ-ի ամենափոփոխուն, համեմատած մյուս 3 բաղադրիչների հետ, տարրը: Այդ փոփոխականությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Ներդրումներ անել-չանելու որոշման վրա բացի տնտեսական գործոններից՝ սղաճ, գործազրկություն, տնտեսական աճ և այլն, ազդում են նաև սոցիալ-քաղաքական գործոններ՝ բնակչության թիվ, հանցագործության մակարդակ, կոռուպցիա և այլն: Այս պայմաններում հատկապես մասնավոր ներդրումների ներհոսք ապահովելը դառնում է բարդագույն գործ: Սակայն, ժամանակակից պետության հիմնական ֆունկցիաներից մեկը համարվում է ներդրումային միջոցների ներգրավման համար համապատասխան միջավայրի ստեղծումը՝ ինչպես տնտեսական, այնպես էլ այլ խելամիտ գործիքների կիրառմամբ: Ներդրումային միջավայրի բազմակողմ ուսումնասիրությունը հիմք է հանդիսանում նպատակաուղղված տնտեսական քաղաքականության իրականացման համար, որի հիմնական նպատակը պետք է լինի տնտեսության հետագա աճը ապահովող ներդրումային անհրաժեշտ միջոցների ներգրավումը: Վերջիններս հնարավորություն են տալիս իրականացնել կամ առաջ տանել ծրագրեր, որոնք իրենց հերթին ներկայիս և հետագա սերունդների բարեկեցիկ ապագան ապահովելու մեծ պոտենցիալ ունեն նույնիսկ տասնամյակներ հետո: Ներդրումային միջոցների օգնությամբ ստեղծվում է բարենպաստ սոցիալական միջավայր, որը ցանկացած սոցիալական ուղղվածությամբ երկրի կարևորագույն խնդիրներից է:

ՀՀ-ում ներդրումային միջավայրը բավականին զգայուն է: Այդ զգայունությունը նախ և առաջ կապված է արտաքին խնդիրներով՝ հակամարտության առկայություն, ոչ բարեկամական երկրներով շրջապատվածություն, տնտեսական բազմաթիվ արգելքներ, փոքր տարածք

և այլն: Հաջորդ խնդիրը կապված է ներքին իրավիճակով՝ քաղաքական անկայուն վիճակ, փոքր շուկա, կոռուպցիա, ոչ մրցունակ տնտեսություն, «խաղի կանոնների» ոչ հստակ ձևակերպումներ, վերջին ժամանակներում նաև ավելացել է ֆինանսատնտեսական ճգնաժամը, որն էլ ավելի հետ մղեց երկրի զարգացումը: Սակայն, այս բացասական կողմերին զուգահեռ ունենք զարգացած բանկային համակարգ, որը բավականին մրցունակ է: Վերջինս տնտեսության իրական հատված ներդրումային հոսքերի ավելի արագ տեղափոխման կարևոր օղակ է հանդիսանում: Այստեղ էական նշանակություն է ստանում նաև բանկային ռիսկերի կառավարման մոդելավորման հիմնախնդիրների դիտարկումը, որը իրական հատված, բանկային համակարգ և ներդրումներ կապը դարձնում է կառավարելի և հիմնավորված: Իրական հատված ներդրումային միջոցների տեղափոխման արդյունավետությունը ըմբռնելու նպատակով սույն աշխատանքում առաջարկվում է ուսումնասիրել հարմարվողական սպասումների էկոնոմետրիկ մոդել¹, որի միջոցով հնարավոր կլինի պարզել.

- իրական ՀՆԱ-ի վրա տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ ժամանակահատվածի իրական ներդրումների ծավալի ազդեցությունը,
- տնտեսվարող սուբյեկտների սպասումների գործակցի չափը:

Վերը նշված կետերի պատասխանները գտնելու նպատակով դիտարկենք հետևյալ ոչ գծային էկոնոմետրիկ մոդելը.

$$RGDP_t = \alpha \cdot R\overline{INV}_{t+1}^\beta - \varepsilon_t \quad (1)$$

որտեղ

$RGDP_t$ – t փաստացի իրական ՀՆԱ-ն է՝ t -րդ եռամսյակում,

$R\overline{INV}_{t+1}$ - t -րդ եռամսյակում՝ տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ $t+1$ -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալն է,

ε_t -ն մոդելի սխալն է:

(1) էկոնոմետրիկ մոդելը, որը դիտարկվում է 2005թ. առաջին եռամսյակից մինչև 2010թ. չորրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում², գնահատելու համար անհրաժեշտ է ունենալ տնտեսվարողների կողմից սպասվելիք ներդրումների ծավալի վիճակագրական ցուցանիշները, որոնք գործնականում բարդ է գնահատել: Առաջարկենք մոդելի գնահատման մի մեթոդ, որի օգնությամբ հնարավոր կլինի շրջանցել նշված դժվարությունը: Հարմարվողական սպասումների (adaptive expectations) պարագայում անընդհատ տեղի է ունենում տնտեսվարողների սպասումների ճշգրտում, որը կատարվում է հիմնվելով ներդրումների և ՀՆԱ-ի փաստացի վիճակագրության վրա: Եթե տվյալ ցուցանիշի (մեր դեպքում իրական ներդրումների) փաստացի արժեքը ավել է եղել սպասվածից, ապա հաջորդ ժամանակահատվածում սպասվող ներդրումները ուղղվում են դեպի ավելացման կողմը և հակառակը: Տնտեսվարողների սպասումների ճշգրտման գործակցի մեծությունը պետք է համապատասխանի փաստացի և սպասվող ներդրումների մեծությունների տարբերությանը: Հարմարվողական սպասումների մոտեցումը կարելի է նկարագրել հետևյալ արտահայտության օգնությամբ.

$$(\ln R\overline{INV}_{t+1} - \ln R\overline{INV}_t) = (1 - \varphi)(\ln RINV_t - \ln R\overline{INV}_t), 0 \leq \varphi < 1 \quad (2)$$

որտեղ՝

$\ln R\overline{INV}_t$ -ն փաստացի իրական ներդրումների ծավալներն են t -րդ եռամսյակում լոգարիթմված վիճակում,

$\ln R\overline{INV}_t$ -ը $t-1$ -րդ եռամսյակում՝ տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ t -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալն է լոգարիթմված վիճակում,

$\ln R\overline{INV}_{t+1}$ -ը t -րդ եռամսյակում՝ տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ $t+1$ -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալն է լոգարիթմված վիճակում,

φ – n տնտեսվարողների սպասումների ճշգրտման գործակցին է:

(2) արտահայտությունից կունենանք՝

$$\ln R\overline{INV}_{t+1} = \varphi \ln R\overline{INV}_t + (1 - \varphi) \ln RINV_t \quad (3)$$

¹ Я.Р.Магнус, П.К. Кагышев, А.А. Пересецкий, Эконометрика, издательство ‘Дело’, Москва 2004, ст. 266-275.

² ՀՀ ԿԲ 2005-2010թթ. եռամսյակային տվյալներ, <http://www.cba.am/>.

(3) բանաձևը ունի տնտեսագիտական էական իմաստ. տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ $t+1$ -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալի մեծությունը հանդիսանում է տվյալ պահի փաստացի և $t-1$ -րդ եռամսյակում՝ տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ՝ t -րդ եռամսյակի իրական ներդրումների ծավալների կշռված միջինը:

Ներկայացնելով (1) մոդելը գծայնացված վիճակում, որին կարելի է անվանել հարմարվողական սպասումներով մոդել՝

$$\ln RGDP_t = a + \beta \ln RIN\bar{V}_{t+1} + \ln \varepsilon_t \quad (4)$$

որտեղ՝

$\ln RGDP_t$ -ն փաստացի իրական ՀՆԱ-ն է t -րդ եռամսյակում լոգարիթմված վիճակում,

$a = \ln \alpha$ -ն մոդելի անհայտ պարամետրն է,

$\ln \varepsilon_t$ -ն մոդելի սխալն է լոգարիթմված վիճակում:

Այնուհետև համադրելով (4) էկոնոմետրիկ մոդելը (3) արտահայտության հետ և իրականացնելով պարզագույն մաթեմատիկական գործողություններ՝ կունենանք.

$$\ln RGDP_t = a + \beta \varphi \ln RIN\bar{V}_t + \beta(1 - \varphi) \ln RINV_t + \ln \varepsilon_t \quad (5)$$

Ստացված մոդելից հանելով $\ln RGDP_{t-1}$ -ի համար գրված (5) մոդելը, բազմապատկված $(1 - \varphi)$ գործակցով՝ կստանանք գնահատման համար անհրաժեշտ հետևյալ ավոռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդելը.

$$\ln RGDP_t = a\varphi + \beta\varphi \ln RINV_t + (1 - \varphi) \ln RGDP_{t-1} + \gamma_t \quad (6)$$

որտեղ՝

$\gamma_t = \ln \varepsilon_t - (1 - \varphi) \ln \varepsilon_{t-1}$ -ն ձևավորված էկոնոմետրիկ մոդելի սխալն է:

(6) մոդելը փոքրագույն քառակուսիների եղանակով¹ գնահատելուց հետո կստանանք հետևյալ արդյունքները.

$$\ln \widehat{RGDP}_t = 10.44 + 0.39 \ln RIN\bar{V}_t + 0.11 \ln RGDP_{t-1} \quad (7)$$

(7) մոդելը լավ որակի է. դրա մասին են վկայում դետերմինացիայի գործակցի արժեքը՝ 0.98, ստացված գործակիցների ստանդարտ սխալների փոքր արժեքները՝ համապատասխանաբար 0.642, 0.011, 0.028, բոլոր գործակիցների գրո լինելու հավանականության գրոյին մոտ արժեքը:

(7) մոդելի օգնությամբ կարելի է տալ հետևյալ համակարգը.

$$\begin{cases} a\varphi = 10.44 \\ \beta\varphi = 0.39 \\ (1 - \varphi) = 0.11 \end{cases} \quad (8)$$

Լուծելով գործակիցների (8) համակարգը կունենանք անհայտ պարամետրերի հետևյալ վերջնական գնահատականները.

$$\begin{cases} a = \ln \alpha = 11.7 \\ \beta = 0.43 \\ \varphi = 0.89 \end{cases} \quad (9)$$

Օգտագործելով (9) համակարգում ստացված արդյունքները՝ կստանանք վերջնական գնահատված մոդելը.

$$\ln \widehat{RGDP}_t = 11.7 + 0.43 \ln RIN\bar{V}_{t+1} \quad (10)$$

որտեղ՝

$\ln \widehat{RGDP}_t$ -ն t -րդ եռամսյակում իրական ՀՆԱ-ի ծավալի կանխատեսվող (գնահատված) մեծությունն է լոգարիթմված վիճակում:

(10) մոդելի օգնությամբ հնարավոր է պատասխանել ներկայացված աշխատանքի սկզբում հիշատակված հարցերին.

1. Ստացված արդյունքներից կարելի է եզրակացնել, որ սպասումների գործակցի՝ $\varphi = 0.89$, արժեքը նշան է այն բանի, որ տնտեսվարողների սպասումները մեծ հավանականությամբ իրատեսական են:

¹ Я.Р.Магнус, П.К.Катышев, А.А.Пересецкий, Эконометрика, издательство “Дело”, Москва 2004, ст. 69-71.

2. Տնտեսվարողների կողմից սպասվելիք հաջորդ ժամանակահատվածի իրական ներդրումների ծավալը ($\ln RINV_{t+1}$) 1%-ով ավելացնելիս իրական ՀՆԱ-ի ծավալները աճում են 43%-ով:
3. Ազատ անդամի մեծությունը ($\alpha = \ln \alpha = 11.7$) ցույց է տալիս իրական ՀՆԱ-ի ծավալը, որը ստացվում է հաջորդ ժամանակահատվածի սպասվելիք իրական ներդրումներից անկախ:

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
ԳԻՐՔ 1**

Հրատ. խմբագիրներ՝

Ա. Հովակիմյան, Ա. Սահակյան

Նյութերի հավաքագրող՝

Ա. Զատիկյան

Համակարգչային ձևավորումը՝

Մ. Համբարձումյանի

ՀՀ ԳԱԱ Մ. Քոբանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ
Հասցեն՝ 0037, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փ. 15

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60×84 1/8:
Ծավալը՝ 35.5 պայմ. տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100 օրինակ:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում: